

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Եր գրականության պատմության մեջ, մանաւանդ պետական նեցուկէ զուրկ միջավայրի մեջ լոյս տեսնող պարբերաթերթի մը համար, վաթսուն տարին երկար ժամանակ է: *Բազինի* 60 տարին այդ պատմության բախտորոշ ժամանակահատուածի մը կը գուգադիպի, երբ մեր ժողովուրդը վերընձիւղած էր միջին արեւելեան բարեբեր պայմաններու մեջ ու գրականության անդաստանը կ'ապրէր ծաղկումի գեղեցիկ օրեր, որոնք կը յատկանշուէին քիչ մը ամեն տեղ, մանաւանդ Պէյրուսի մեջ, գրական ու հասարակական բազմաթիւ պարբերականներու երեւումով: Այդ բոլորի կողքին կային նաեւ Եւրոպա ու Ամերիկա հաստատուած գրագետներու ամբողջ սերունդ մը եւ Հայաստանի երիտասարդ գրողներու արտադրանքը՝ խորհրդային կարգերու դէմ հակադրության որոշակի արեւելումով:

Անոնք որոնք մօտէն հետեւած են *Բազինի* թիւերուն, կրնան վկայել թէ տարիներու ընթացքին անիկա սփիւռքահայ մտաւորականութիւնը համախմբելու հիմնարար դեր ունեցած է, միաժամանակ կամուրջ մը հանդիսանալով Սփիւռքի եւ հայրենի գրողներուն միջեւ: Վաթսունամեայ իր երթի ընթացքին, իբրեւ հայերէնով մտածող եւ ստեղծագործող մտքի հանդէս, *Բազին* յաջողած է իրականացնել հիմնադիր խմբագրական կազմի երազը, ստեղծելով այն խանդավառ բեմը, ուր վաւերական գրողներէն սկսեալ մինչեւ երիտասարդ խոստմնալից ուժերը՝ բոլորը կրցած են անկաշկանդ արտայայտել իրենց ստեղծագործական եռանդը եւ նոր էջ մը բանալ սփիւռքի գրականության պատմության մեջ:

Բազինի վաթսունամեակին նուիրուած այս յոբելէնական հատորը չի յաւակնիր ամսագրի ամբողջական դիմագիծը տալու, ոչ ալ կազմուած է ծաղկաբաղի սկզբունքներու հիմամբ: Ընտրութիւնը կատարած ենք «60 տարի, 60 անուն» բնաբանով, եւ ի մի բերած ենք գրողներ, որոնք իրենց արծարծած նիւթերով, հարցադրումներով, մտահոգութիւններով եւ լեզուամտածողութեամբ կը ներկայացնեն թէ սփիւռքեան ինքնութեան զանազան երեսները եւ թէ անոր զարգացումը: Այս գտումի աշխատանքը հետաքրքրական էր այն իմաստով, որ վաթսուն տարի մէկտեղուած գրականության հաշուեկշիռը յստակօրէն ցոյց կու տայ, որ Սփիւռքի շարժունակութիւնը եւ բազմալեզու կացութիւնը ժամանակի եւ վայրի փոփոխութեան հետ կը շրջէ նաեւ հայկական ինքնութեան սահմանագծերը, այդ ինքնութիւնը արտայայտող գրականութիւնն ալ լրգունգէն եւ գաղափարախօսութենէն արձակելով եւ տեղադրելով զայն մտածումի շրջարկի մը մեջ: Նոյնն է նաեւ լեզուի պարագան: Հաւանաբար այս պատճառով է, որ միտք եւ լեզու հայելացումի դեր կը կատարեն եւ զիրար կը ցոլացնեն:

Ընտրանի մը, ահաւասիկ, որ կը փորձէ ոչ միայն ժամանակահատուած մը ներկայացնել, այլ նաեւ արծարծել լեզուի, գրականության ու ինքնութեան մատուցած զանազան կարելիութիւնները մեր ապրած կեանքի երկայնքին, անցած ու ներկայ անուններու զուգորդումով՝ բաց ձգելու համար ճամբան դէպի ապագան:

Բազին 60 ԱՄԵԱԿ

2023

ԿԱ. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	1
Կարո Սասունի «ԱԶԱՏԱՄԱՐՏ»Ի ՍԵՐՈՒՆԴԸ	7
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ	21
Մինաս Թեյլեյան ԱՊԱԺԱՍ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ	26
Գուրգեն Մխիթարեան ԶՐՈՅՑ՝ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ	34
ՊԱՏԱՍԽԱՆ՝ «ԲԱԳԻՆ»Ի ՀԱՐՑԱՐԱՆԻՆ Բենիամին Թաշեան ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ...	39
Բարգեն Փափազեան ՆՈՐ ԵԱՄԲԱՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒԲԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ	44
Տիգրան Ոսկունի ԱՆՅՐԱԺԵՇՏ ԴԱՐՁԱԿԷՏԸ	49
Նիկողոս Սարաֆեան «ՆՈՐ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐ ՊԷՏՔ ԵՆ ՄԵԶԻ»	52
Կարո Փոլատեան ԶՐՈՅՑ՝ ԲԱՆԱՍՏԵՂԸ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՀԵՏ	66
Արամ Հայկազ ՄԵՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ. Յ. ՕՇԱԿԱՆ	80

Խմբագիր | Սոնիա Զիլեճեան-Աճեմեան
Փոխխմբագիր | Վարդան Մատթեոսեան
Գործավար | Նայիրի Ադամեան
Գրաշարներ | Անի Փեղիվանեան և Նայիրի Ադամեան
Ձեռաւորում և Էջադրում | Անոյշ Ակներեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Անոյշ Ակներեան
Մարուշ Երամեան
Վիգեն Թիւֆէնքճեան
Յակոբ Կիլլիւճեան
Աւետիս Հաճեան
Շաղիկ Մկրտիչեան

Արամ Պաչեան
Կարեն Զալլաթեան
Սեւան Տէյիրմենճեան
Խաչիկ Տէր Ղուկասեան
Միրևա Տուզճեան
Յարութիւն Զիրքճեան



Կողքի նկար՝ Կարեն Պետրոսյանի. Detail, “Layers (between construction and destruction)”
 «Շերտեր (կառուցման եւ ասպակառուցման միջեւ)»
 140 x 183 cm, oil, acrylic, enamel, collage on canvas

Նշան Պեշկյաշևան ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ.....	86
Մուշեղ Իշխան ՊԱՐԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՒԹԻՒՆ.....	88
Յակոբ Պալեան ՀԱՄԱՍՏԵՂ՝ ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԱԼԻ ՎԿԱՅԱՐԱՆ.....	91
Համաստեղ ՀԱՐՕՆ ՈՒ ԿԱՐՕՆ.....	103
Եղուարդ Պոյաճեան ՍԱՐԱՀԱՐԹԻ ԴԱՇՏԱՍՈՒԿԸ.....	109
ԲԱՂՁԱՆՔ.....	112
Պողոս Մնայեան ԲԱՆԱՍՏԵՂԸ.....	113
ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԱԲԱՆԴՈՒԹԻՒՆ.....	128
Կարո Մեհեան ԿԻՍԱՓԱԿ ԴՐԱՆ ԵՏԵԻ.....	135
Ա. Արփինե ՈՒՐՈՒԱՆԿԱՐ.....	141
Ժիրայր Աթարեան «ԱՅՍՏԵՂՈՒԱՆԸ ՍՈՒՏԱԿԱՆ Է, ՍՈՒՏԱԿԱՆ».....	147
Փանոս ճերանեան ԲԱՌԵՐ ԱՆՐՁԱԳԻԾ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՀԱՄԱՐ.....	156
ԾՈՃՐԱԿԴԻ ՎԵՐ.....	158

**Հրատարակութիւն՝
 Համազգայինի Կեդրոնական վարչութեան**

Հասցէ՝
 Պուրճ Համուտ
 Շաղգոյեան կեդրոն, Բ. յարկ
 E-mail: pakin@hamazkayin.com
 Հեռ. 00961 1 241072

Ցրուումի կեդրոն՝
 Համազգայինի Գրատարած,
 Շաղգոյեան կեդրոն,
 Պուրճ Համուտ

Տպագրութիւն՝
 Համազգայինի
 «Վահէ Սեթեան» տպարանի

Հեռ. (01) 241263/4
 Ֆաքս. (01) 260329
 Փոստարկը. 80 1096 Պուրճ Համուտ
 E-mail: print@hamazkayin.com

Յակոբ Մանուկեան ՆԱԽԱԴՐՈՅԹ	159
ՈՐՈՆՈՒՄ	162
Արա Արծրունի ԴԵՂԻՆ ԼՈՅՍԸ	164
Կարո Արմենեան ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ	168
ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆ	171
Էլջո Սարաճեան ԴԱՐՁԻԴ	172
Ազնիւ Գարայլեբեան ԽՈՒՆԿ ՈՒ ԱՐՑՈՒՆՔ	173
Նազ Տէր Սարգիսեան ՓՈՂՈՅԸ	175
Պետրոս Յերեան ԱՐԳԱՆԴ	180
ԲԱՌԸ	181
ԼՈԳԱՆՔ	183
Յ. Գեղարդ ՄԱՆՈՒԿ	184
Գեորգ Արեւեան ՊԷՅՐՈՒԹ (Հատուած)	187
Սարգիս Կիրակոսեան ԱՔՈՒԱՄԱՐԻՆԱ	194
ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ՝ ՊԷՅՐՈՒԹ ԻՇԽԱՆՈՒՅԻՒՆ	196
Նուպար Չարխուտեան ԲԱԺԱՆՄԱՆ ԳԻՃԸ	204
Խոսրով Ասոյեան ՄԵՆԱԿԵԱՑ ՈՒ ԼՈՒՌ	210
ԳԻՆՈՎԻ ՕՐԱՏԵՏՐ	212
Սեդա Գրիգորեան ՎԵՐԱԴԱՐՁ	214
Խաչիկ Տէր Ղուկասեան ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՅԱՆԳՐՈՒԲԱՆԻ ՄԸ	216
Րաֆֆի Աճեմեան Պ.՝ ՍԻՐԵԼԻՍ	221
Սոնիա Սանան ՔԱՂԱՔ	227
Յարութիւն Պերպլերեան ԼԵՌՆԱՅԻՆ ԿԱՅԱՆ	237
ՈՂԻՍԵԻՍԻՆ ՅԵՏ	239
ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՅԵՐՈՍԸ՝ ԵՐԵՔ ԳՈՐԾԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ	240
Վազգէն Շուշանեան ՏԵՆԴԵՐ (Հատուած)	257
Վիզէն Թիւֆէսբեան ՎԱՉԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՄԵՐԿ ԴԵՄՔԸ	261
Յարութիւն Քիւրքեան ՇԱԲԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ՝ ԲԱՅԱՐՁԱԿ ՄԵՐԺՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԻՆ	268
ԲԱՆԵՐԸ ԿԸ ՄԵՌՆԻՆ	274

Անոյշ Ակներեան ԿԱՊՈՅՏ ԳԻՇԵՐ.....	279
Սազօ Արեան ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ.....	286
Աբրահամ Ալիքեան ԲԱՌԱՇԽԱՐՅ.....	292
Գեորգ Թեմիզեան ՏԵՂ ՄԸ ԼԵՉՈՒԻՆ ԵՒ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԻՋԵՒ.....	294
Վարդան Մատթեոսեան, Սեւան Տէյիքմենճեան ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ.....	297
Վարդան Մատթեոսեան ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑ՝ ԻԱ. ԴԱՐՈՒ ԴԻՏԱՆԿԻԼԵՆ.....	315
Յակոբ Կարապետեան ՈՎ ԱՍԱՑ ՔԱՂԱՔՆԵՐԸ ՉԵՆ ՄԵՌՆՈՒՄ.....	319
Շուշիկ Տասնապետեան ԼՈՒՄՆԱՅԻՆ.....	328
ԻՂՁ.....	328
ՍՓԻԻՌԷ.....	329
Վեհանոյշ Թեքեան ՄՈՒԽԻՐԷ ԾԱՌ (<i>Հատուած</i>).....	330
Մարուշ Երամեան ՏՈՒՆ.....	337
ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ.....	341
Կորիւն Շահինեան ԳԱՂԹԱԿԱՅԱՆ.....	344
Յակոբ Կիլլիւճեան ԱՉԳ.....	347
Վահէ Օշական ԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ.....	350
ԻՆՔՆՈՒԹԻՒՆ.....	356
Գրիգոր Շահինեան ԴԻՄԱՊԱՏԿԵՐ ՎԱՅԷ ՕՇԱԿԱՆԻ.....	359
Կարէն Զալլաթեան ՎԱՅԷ ՕՇԱԿԱՆԻ ԱՆՅԵԹԵԹԻ ԱՐՁԱԿԸ.....	366
Գրիգոր Պըլտեան ԷՐ.....	370
ԱՐՄԱՏԱԽԻԼ.....	374
Չարեհ Որբունի ՄՈՆԻԷ ԿԱՄ ԱՍՖԱԼԹ ԵՐԿՈՒ.....	382
Հրայր Անմահունի ԳԱՂՏՆԱՉԵՐԾՈՒՄ.....	388
Դալար Շահինեան ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԲԱՂՁԱՆՔ ՍՓԻԻՌԷԻ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ.....	398
Մարկ Նշանեան ՎԷՊ, ՍԵՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ.....	402
Կարօ Յովհաննէսեան Ի ԽՆԴԻՐ ԱՉԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ (ԵՐԿՈՒ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ).....	415



Ա. ՏԱՐԻ 1 1962

Բազմիս անդամների թիվը

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»Ի ՍԵՐՈՒՆԴԸ



զատության յորձանքին հետ «Ազատամարտ»ը հայկական լեռներին փոխադրուեցաւ Պոլիս:

Սահմանադրութեան շրջանը, որ անակնկալ երեւոյթ մը եղաւ 1908 յուլիսին, սուլթանական երեսուն տարիներու բռնակալութեան օրերէն ետքը, զետնատարած եւ ստրկացած ժողովուրդը ոտքի կը հանէր ազատութեան խանդավառութեամբ: Ոչ մէկ տեղ թերեւս այնքան քաղցր չէ հնչած ազատութիւն բառը, որքան արձագանգ գտաւ ան, Կարմիր Սուլթանի տիրապետութեան տակ տուայտող ամբողջ երկրամասին մէջ :

Որքան բուռն ու արիւնոտ եղած էր բռնակալութեան լուծը, նոյնքան խանդավառ եղաւ ազատութեան պոռթկումը:

Ազատութեան շղթայազերծումը տարերային բնոյթ մը ստացաւ մէկ քանի օրուան ընթացքին, ու բազմութիւնները առանց դասակարգի խտրութեան բեմ նետուեցան իրենց ազատութիւնը պոռալու աշխարհին, անդենական աշխարհէն վերադարձողի մը, անյուսալի մահէ մը յետոյ յարութիւն առած մարդու հրճուանքով, բեմերը ողողուեցան ազատութիւն, արդարութիւն եւ եղբայրութիւն քարոզող նշանաբաններով:

Բեմի վրայ էին թուրքը, հայը, յոյնը, արաբը, մակեդոնացին, եղբայրացած ազատութեան գինովութեամբ: Բեմերու վրայ կ'երեւէին գինուորականը, Հայ յեղափոխականը, կրօնական մոլեռանդութեան ներկայացուցիչ շէյխերն ու մոլլաները, գրագետն ու մտաւորականը, բանտերէն եւ շղթաներէն ազատուածները, որոնք սահմանադրութեան այս իրականութիւնը շնորհող առաջամարտիկներն էին եւ կը յարգուէին բոլորէն: Նոյն խանդավառութեամբ բնութեան գիրկը նետուած էին գիւղացիները, բանուորները ու արհեստաւորները, նոր կեանքի մը խանդավառութիւնը ապրելու համար:

Այս ընդհանուր խանդավառութիւնը հին արիւնոտ բարբերու դուռը փակած էր: Իսկ նոր կեանքը անսովոր ալիքով կ'ընթանար ու ամեն մարդ նոր աշխարհ եկածի պէս, անսովոր կեանք մը կ'ապրէր:

Գինովութեան շրջան մըն էր, որ ամիսներ տեւեց: Փակ բերանները բացուած էին, կաշկանդուած լեզուները կը շարժէին եւ ունկնդիր բազմութիւնները խելայեղ ուրախութեամբ կը լսէին ազատութեան խօսքը:

Սահմանադրութեան այս ազատութիւնը տեղահան կ'ըներ շատերը մէկ տեղէն միւսը փոխադրուելու, աւելի լայն հորիզոններու մէջ նետուելու, կարծես իրենց

միջավայրը բանտ մը ըլլար ու այդ բանտէն ազատուիլը շնորհ մը կ'ըլլար բոլորին, որոնք տասնեակ տարիներով չէին համարձակած իրենց տեղէն շարժելու:

Տեղաշարժի այս հոսանքին մէջ առաջին տեղը կը գրաւէին պատանիներն ու երիտասարդները, որոնք հեռաւոր նահանգներէն կը խուժէին դէպի Պոլիս, մայրաքաղաքը՝ ազատութեան ու նաեւ մտաւորական շարժման:

Ուշագրաւ էր հայկական նահանգներէն դէպի Պոլիս տեղաշարժող հայ պատանիներու հւ երիտասարդներու խուռնեամբ բազմութիւնը, որ Պոլիս կը հասնէր ուսում ստանալու եւ եւրոպական շունչին հետ հաղորդուելու: Այդ երիտասարդներու երազանքը իրականութիւն կը դառնար եւ անոնք առանց կշռելու պայմանները կը նետուէին դէպի Պոլիս, լայն հորիզոնի մը վրայ իրենց հասակը կոթողելու համար: Միջոցներ ունէին թէ ոչ, ոեւէ մէկը հաշուի չէր առնէր: Ու ահա, Վանէն, Էրզրումէն, Տարսուսէն, Տիգրանակերտէն ու Սեբաստիայէն, Խարբերդէն եւ Կիլիկիայէն բազմութիւն մը նոր սերունդի ափ կ'ամներ Պոլիս:

Այս պատանիները ու երիտասարդները կը մտնէին Պոլիս, իրենց տարագներով ու բարբերով: Երազանքը ունէին ու երկրի բոյրը կը բերէին իրենց հետ: Բեմերը դեռ կը շարունակէին խանդավառ ճամբերը, ու հասարակական կեանքը ամենօրեայ վերիվայրումի ենթակայ էր, միշտ ազատութեան ծաւալուն շարժումներով:

Յեռաւոր նահանգներէ եկած պատանիներն ու երիտասարդները առաջին իսկ օրերէն կը դիմէին դէպի Կեդրոնական կամ Պերպերեան վարժարանը, ուրիշները կը մտնէին իրաւաբանական եւ բժշկական համալսարանները: Բարձրագոյն կրթութեան անհուն ծարաւն էր, որ թարմ սերունդի այս բազմութիւնը կը նետէր միջազգային այդ կեդրոնը: Հայկական գաւառներէն տարօրինակ հոսանք մը զգացումներու եւ բարբերու կը բերէր իր հետ, Պոլսոյ հայ կեանքը գունաւորելու աստիճան:

Սասնոյ բարձունքներէն գլորած ժայռի կտորի մը պէս ես ալ կը նետուէի հեղեղատին մէջ ու հազիւ թէ սահմանադրական առաջին ամիսը բոլորած, ինքզինքս կը գտնէի Պոլսոյ խաներուն մէջ ու լեռնական հովիւի մը գաւազանը կը պտտոցնէի պատմական Բիւզանդիոնի պողոտաներուն վրայ:

Աշխարհը ոտքի տակ առնող այս երիտասարդներուն համար անկարելին անծանօթ էր, ու անոնք իրար կը գտնէին Պոլսոյ հին խաներուն մէջ, ուր ժամանակին իրենց հայրերն ու մեծ պապերը *ղարիս*ներու բազմութիւնը կը կազմէին որպէս բեռնակիր:

Նոր դաս մըն էր որ հասակը կը ցուցադրէր քաղքենի Պոլսոյ մէջ, հայկական նահանգներու նորահաս մտաւորականի տիպարով, բոլորովին հակապատկերը բեռնակիր *ղարիս*ին:

Ու Կեդրոնական վարժարանի լայն սրահը հաւաքատաղին կը դառնար տարագիր այս նոր սերունդին, Կեդրոնականը վերածելով մտաւորական օճախի մը...

Ես այլ այդ բազմութեան հետ կը մտնէի Կեդրոնական վարժարանի սրահը, ուր կը կազմուէր բացառիկ դասարան մը այս նորայայտ ու նորածէլ *դարիպ*ներուն համար:

Կեդրոնականի անկիւնէն աչքս կը բանայի Պոլսոյ հայոց մտաւորական ընտրանիին վրայ, ու հող առաջին օրերուն, մեր դիմացի ամպիոնին վրայ կը տեսնէինք վարժարանի տեսուչ Հինդլեանը, կոկիկ, բարի, անթերի մանկավարժ, ու մանաւանդ այս հասակաւոր նոր աշակերտները ըմբռնող ներթափանց հոգի մը: Ֆրանսերէն դասերը ինքը ստանձնած էր եւ մեծ համբերութեամբ կ'օժանդակէր զաւառներէն ժամանած այս տղոց, որպէսզի իրենց թերիները լրացնեն եւ շարունակեն ճամբան դէպի բարձրագոյն ուսում:


Այդ դասարանին մէջ հաւաքուողներէն շատերը աւարտած էին Մշոյ Մուրատ Մխիթարեանը կամ Վանի կեդրոնականը, ոմանք Սանասարեանի վերջին դասարաններէն կամ Խարբերդի վարժարաններէն կու գային, ուրիշներ կային որ մէկ երկու տարի ուսուցչութիւն ըրած էին Հայաստանի այս կամ այն նահանգին մէջ, ու հիմա լրջութեամբ խոնարհած էին գրասեղաններուն եւ հեւքով կը հետեւէին գիրենք հետաքրքրող դասերուն: Անհաւասար կրթութեան տէր այս բազմութիւնը Հայաստանի շունչը բերած էր իր հետ եւ գերագոյն ճիգ մը կ'ընէր երկար ճանապարհը կտրել անցնելու, որքան կարելի էր կատարեալ, որքան կարելի էր շուտ:

Կեդրոնական վարժարանի ուսուցչական կազմը եւ վերին դասարաններու աշակերտները կը պատկառէին այս դասարանէն:

Դասարանական առաջին շաբաթն անցած էր, երթ տեսուչը յայտարարեց թէ հայերէն լեզուի եւ շարադրութեան դասախօսը, Մեյքոն Կիւրճեան, յաջորդ օրը իր դասախօսութեան պիտի սկսի: Ոմանք գիտէին թէ նոր եկող ուսուցիչը՝ Հրանդ, գրական անունով յայտնի մտաւորական մըն է, ոմանք բացարձակ անտեղեակութեամբ կը դիմաւորէին հայերէնի ուսուցիչը:

Ու յաջորդ օր Հրանդ հեւքով կը մտնէր դասարան եւ առանց բեմը գրաւելու, կը դառնար դասարանին.

– Դուք, Հայաստանի տղանք, բարով էք եկեր մեր այս մայրաքաղաքը, ես Արարատի ձիւնի մէկ շերտը եւ Մշոյ դաշտի Մեղրագետի մէկ կաթիլ ջուրը այս քաղաքին հետ չեմ փոխեր... Դուք Հայաստանը բերած էք ձեր հետ, Վասպուրականն ու Տարօնը կը շնչեն հոս, ու դուք հին *դարիպ*ներու զաւակներ. դուք Ս. Մեսրոպի



թոռներն էք, յոյսը ամենելով այս կեդրոնէն ու տարածելու զայն Հայաստանի խաւարակոռ անկիւնները...

Հայաշունչ դաս մը եղաւ մեր առաջին հանդիպումը, բայց մեզմէ շատերը արդէն զարմացած էին Հրանդի առաջին մուտքին, հաստատելով թէ նոր ուսուցիչը առաջին օրերուն խաներու այցելող այն Հայն էր, որ ամենէն առաջ հետաքրքրուած էր զաւանդներէն հասնող այս պատանիներով: Առաջին օրէն Հրանդը եւ այս դասարանը իրար ձուլուած ամբողջութիւն մը եղան:

Հրանդ մեծամարմին եւ թիկնեղ Հայաստանցի մըն էր, տարիքը առած, բայց աշխոյժ դասախօս մը, որ հայրական բարեացակամութեան հետ, Հայաստանի շունչով կը շէնցներ այս *դարիս* տղոց սիրտը: Անմիջական ու հարազատ էր իր խօսքը, բնորոշումը, կամ վերլուծումը: Ու աշակերտները եռանդով գործի լծուած էին, կարծես մէկ տարիէն հնգամեակ մը գրաւելու համար:

Հրանդ, սահմանադրութեան խանդավառ տարիներուն, բարեկամը ու ընկերը եղաւ Հայաստանցի ուսանողներուն, ուսուցչի եւ հովանաւորի ինքնանուէր իր պարտականութեանց ընթացքին:

Երր Հրանդ որպէս պատուիրակ մեկնեցաւ Էջմիածին կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու, իր դասերը ստանձնեց Ինտրան, խորհրդաւոր մեհեանի մը վերածելով մեր դասարանը: *Միտք* այս գրագետը երբ ամպիոնը կը գրաւէր, հոգեշունչ մթնոլորտ մը կը ստեղծուէր դասարանին մէջ, ու անոր պուտտայական դէմքէն քրիստոնէական միւռոնը կը կաթէր:

Հրանդի անմիջականութիւնն ու հարազատութիւնը չունէր Ինտրան, բայց հայերէն լեզուի այլազանութիւնը ճշգրիտ իմաստով գործածելու եւ ամէն բառին եւ նախադասութեան բնորոշիչ իմաստաւորութիւն մը տալու կատարելութիւնն ունէր իր վերլուծումներու ընթացքին: Թափանցում եւ վերլուծում էր անոր դասը, ու այդ պահերուն, հասարակ բառերն ու պարզ նախադասութիւնները իմացական գունաւորում կը ստանային, կամ հակառակ պարագային, կը մերկանային իրենց շքեղութիւններէն եւ իրենց թերութիւններով ակնբախ կը դառնային:

Նոյն բծախնդիր վերլուծումը կը տեսնէինք մանաւանդ շարադրութեան դասերուն ընթացքին: Մէկ կամ երկու աշակերտ կը հրաւիրուէին կարդալու իրենց շարադրութիւնները, որոնք իր ուշադրութիւնը գրաւած էին: Ինտրայի դիտողութիւններն ու գնահատանքները, ամբողջ դասարանը սրբագրելու եւ նոր ճիզի մղելու բնոյթը կը ստանային:

Շատ գգայուն էր, երր խօսք կ'ըլլար *Ներաշխարհի* մասին: Ինտրայի այդ թոյլ կողմը գիտէին աշակերտները եւ չէին կրնար դիմանալ չարաճճիութիւն մը ընելու իրենց բաղձանքին: Օր մը աշակերտներէն մէկը խնդրեց Ինտրայէն որ խօսի իր գրած գիրքի մասին, ու զիս մատնանշելով՝

– Այդ գրքի մասին անընդհատ կը խօսի մեր այս դասընկերը, կ'ուզենք ակէին լսել ձեզմէ:

Ակնյայտնի հետաքրքրությունները աչքերը յառեց իմ վրաս.

– Ինչ, դու՛ն կարդացա՞մ ես *Ներաշխարհը...* Ո՛ր, ինչպե՛ս, ո՞ր գալառէն ես:

– Սասունցի եմ, բայց ձեր գիրքը կարդացած եմ հրատարակուած տարին, Տիգրանակերտ եղած միջոցիս:

– Ուրեմն մինչեւ այդ տեղուանքը գացած է *Ներաշխարհը*, ես կը կարծէի թէ այդ գիրքը փակուած կը մնայ Պոլսոյ գրախանութներուն մէջ: Տարի ու կէս անցած է հրատարակութեան թուականէս, ու միայն 35 օրինակ ծախուած է...

Ինտրան լռեց պահ մը: Աղօթքէն սփոփուած մարդու մը հրճուանքը կար անոր մթաստուէր աչքերուն մէջ:

– *Ներաշխարհը* թողունք ներաշխարհի ունեցողներու հետաքրքրութեան, ու մեր սովորական դասը շարունակենք...

Լռելեայն մտերմութիւն մը կը զգայի մեր դասախօսի զարմանքներուն եւ նայուածքին մէջ: Այդ օրէն ետք, շատ յաճախ շարադրութիւնս կարդացի դասարանին մէջ, ու լսեցի Ինտրայի դիտողութիւններն ու թափանցող խօսքերը:

«Նոճաստանէն» ներշնչուած *միսթիքը* սիրուած էր դասարանէն ու դասապահը կ'անցըներ խորհրդաւոր լռութեամբ, կարծես պատարագի մը ներկայ եղած ըլլային բոլորն ալ: Մինչ Յրանդի դասերը Հայաստանաշունչ էին, ու աշակերտները խանդավառութեամբ կը մասնակցէին անոր զեղումներուն, դասի սահմաններէն դուրս ելած:

* * *

Զեմ կրնար չիշատակել Կուրտիկեանը, թուրքերէնի դասախօսը, որ միեւնոյն ժամանակ թուրք յայտնի գրագէտներու ուսուցիչը եղած էր եւ ամբողջ թուրք մտաւորականութեան համար անոր մէկ խօսքը լեզուական անվերաբննելի պատգամ մըն էր: Քրմական լրջութիւն մը ունէր եւ անոր լեզուական բծախնդիր խստութիւնը կարգապահութեան կարօտ այս դասարանին հաճելի կը թըլէր, մանաւանդ տարիքով մեծերուն, որոնք աճապարանքի մէջ էին բան մը աւելի սորվելու:

Կոպիտ սխալները շտկած վայրկեաններուն, թուրքերէնի հետ գրաբար հայերէնի նախադասութիւն մը կ'ընդելուզէր, ժպիտի շոգ մը աչքերուն ինչ որ կը նշանակէր թէ դասարանն ալ կրնայ փոքրիկ ծիծաղ մը ունենայ, պարզապէս անոր համար որ Կուրտիկեանէն հազուադէպօրէն հայերէն բառ մը լսուած էր դասարանին մէջ: Պարսկերէնի, արաբերէնի եւ թուրքերէնի լեզուագէտ մեր դասախօսը հմուտ էր գրաբար հայերէնին եւ սիրուած ու յարգուած դէմք մըն էր Հայ ազգային եւ մտաւորական շրջանակին մէջ:

* * *

Կեդրոնականի մեր նշանաւոր դասարանը, որ տարեվերջին, 1909ին պիտի ցըրլէր զանազան համալսարաններ, դասերէն դուրս, անհանդարտ ապրումներ կը դրսեւորէր:

Երբ ուսանողներս կը հաւաքուէինք վերին ամփիթատրոնին մէջ, դպրոցական սովորական խնդիրները կը մոռնայինք, եւ ճաշերը իրարու կը յաջորդէին: Վանէն եկած երիտասարդները առաջին գծի վրայ կու գային, ափ ի բերան թողնելով պոլսեցի ուսանողները, որոնք ալ վարժուած էին հրապարակային ճաշեր լսելու, բայց ճաշերու կարողութիւնը չունէին: Միայն Յ. Ճ. Սիրունին, որ այդ տարին պիտի աւարտէր Կեդրոնականը եւ արդէն բանաստեղծութեան փոքրիկ հատոր մը լոյս ընծայած էր, ղեկավարի իր դերէն չէր հրաժարեր եւ երբեմն ալ մրցման կ'ելլէր գաւառներէն եկող ճառագիտներուն հետ, սակայն առանց հռետորական շնորհի:

Մեր դասարանի հետաքրքրական ձեռնարկներէն մէկը եղաւ խմորատիպ երկչաքաթաթերթի մը հրատարակութիւնը: Անունը դրինք «Չարթօնք»: Այդ օրերու եռուն կեանքը բնորոշող բառ մըն էր Չարթօնքը այս երիտասարդներուն համար: Խմորատիպ թերթ հանելու մասնագէտները վանեցիներն էին: Վանի մէջ արդէն գաղտնի հրատարակութիւններ ընելու վարժուած էին: Անոնք Այգեստանի մէջ լոյս ընծայած էին «Նոր սերունդ» ամսաթերթը եւ այդ անունով կը կոչուէին *նոր սերնդականներ*:

«Չարթօնք»ի խմբագրական կազմին կը մասնակցէին Գուրգէն Միսիթարեան, Մանուկ Ասլանեան, Լեւոն Մոզեան, Արտաշէս Ֆերահեան եւ տողերս գրողը: «Չարթօնք»ի միայն վեց թիւեր լոյս աշխարհ եկան: Ու ամէն թիւ որ լոյս կը տեսնէր, իրարանցում մը կ'առաջացնէր դպրոցին մէջ: Մեզմէ գոհ էին միայն հայերէնի ուսուցիչները: Գոհ էր նաեւ բարեհամբոյր տնօրէնը՝ Յինդլեանը, որ սակայն քանի մը անգամ խմբագրական մարմինը սաստեց, անիշխանական մեր արտայայտութիւնները մատնանշելով: Բայց այդ օրերուն հայկական նահանգներէն եկող երիտասարդները խրատներ մտիկ ընելու տրամադրութիւն չունէին: Բռնապետութեան երկաթեայ կաշկանդումներէն ձերբազատուելէ յետոյ, ազատութեան ըմբռնումը սահման չունէր իրենց համար: Տարին հազիւ լրացած, այս արտակարգ դասարանի տղոց մեծ մասը կ'արձանագրուէր զանազան համալսարաններու դասընթացքներուն եւ աղմըկայից ուսանողական կեանքի հորիզոններէն կը հետեւէին Պոլսոյ մտաւորական կեանքին:

* * *

1909ին լոյս կը տեսնէր «Ազատամարտ» օրաթերթը Ռուբէն Չարդարեանի խմբագրապետութեամբ:

Գրագէտներու եւ մտաւորականներու փաղանգ մը կը բոլորուէր նոր խօսք բերող այս թերթին շուրջ: «Ազատամարտ»ի շնորհալից երեւումով ազատութեան իսկական բանբերը բեմ կու գար եւ հրապարակագրական կեանքը կը յեղաշրջէր արմատապէս: «Ազատամարտ»ի խմբագրական կազմին կը մասնակցէին Յ. Շահրիկեան, Ռ. Դարբինեան, Լիպարիտ, Գեղամ Բարսեղեան, Յամբարձումեան, Սիրունի: Թերթին կ'աշխատակցէին Արտաշէս Յարութիւնեան, Չապէլ Եսայեան, Սիամանթօ, Դանիէլ Վարուժան, Յակոբ Քիւֆէճեան, Վռամեան, Ակնունի,

Չաւարեան, Գ. Խաժակ, որոնք արդէն Պոլիս կը գտնուէին եւ ամենօրեայ ժամադրավայր ունէին «Ազատամարտ»ի խմբագրատունը:

Ռուսական բանտերէն եւ հալածանքներէն ազատուող մտաւորականները շունչ կ'առնէին Պոլիս: Ա. Ահարոնեան, Ա. Իսահակեան, Վ. Մինախորեան, Արամ Մանուկեան... եւ այլ բազմաթիւ գործիչներ ու մտաւորականներ պիտի երեւնային Պոլսոյ բեմերուն վրայ, համահայկական մթնոլորտ մը ստեղծելով ու խանդավառելով բազմութիւնները, որոնք յագեցած չէին նորաշունչ ճառերէն: Հայկական նահանգներէն եւ ներքին գաւառներէն Պոլիս խուժող երիտասարդութիւնը այս խանդավառ մթնոլորտին մէջ բարձրախօսի դերը կը կատարէր:

«Ազատամարտ»ի լոյս տեսած օրերուն, Ռոստոմի, Չաւարեանի եւ Ռ. Դարբինեանի նախաձեռնութեամբ կը կազմուէր Հ.Յ.Դ. Ուսանողական Միութիւնը: Կեդրոնական վարժարանը փոխանցման կայան մըն էր 1908ին: Այժմ երիտասարդութիւնը արդէն արձանագրուած էր համալսարաններու դասընթացքներուն, ու հոն կը փոխադրէր իր խանդավառութիւնը, ազատութեան գաղափարը աւելի լայն շրջանակի մէջ տարածելու համար:

Գիտութեան եւ զարգացման այդ կայաններէն, աւելի գիտակից ու աւելի կըշռադատող, մեր հայեացքը կը դարձնէինք դէպի հայ եւ թուրք մտաւորական աշխարհը: Ու առաջին օրերէն, իրաւաբանական համալսարանի բեմին վրայ մեր դիմացը կը գտնենք Գրիգոր Չօհրապը որպէս պատժական օրէնքի եւ փիլիսոփայութեան դասախօս, համալսարանի ամբողջ ուսանողութիւնը առինքնող:

Գրագէտ Չօհրապէն տարբեր անձնաւորութիւն մը կը տեսնենք բեմին վրայ: Գիտուն, իր ստանձնած նիւթին հմուտ ու բազմակողմանի զարգացման տէր դասախօսն էր որ յաղթական արշաւի մը կը վերածէր իր դասախօսութեան պահերը: Հռետոր էր ու տիրական բեմին վրայ: Այդպէս էր նաեւ Օսմանեան *փառլամենտի* բեմէն, ուր ամենէն շատ ուշադրութեամբ կ'ունկնդրուէր անուանի հայ երեսփոխանը: Շաբաթը երեք պահ ունէր պատժական օրէնքի այս դասախօսը: Այդ պահերուն միւս դասարանները գրեթէ կը դատարկուէին եւ ուսանողութիւնը կը խուժէր մեր դասարանը ուր հազիւ եօթը հարիւր հոգիի տեղ կար, ու ահա անցքերը եւ պատուհանները խճողուած էին ուսանողներով, որոնք իրենց միւս դասերը լքած՝ Չօհրապը կ'ուզէին լսել:

Մենք հպարտ էինք Չօհրապով, ու բնաւ չհիասթափուեցանք անկէ: Ամեն տեղ, գրական, հասարակական եւ քաղաքական իր ելոյթներու ընթացքին Չօհրապ փայլեցաւ իր սրամտութիւններով, իմաստութեամբ եւ պատրաստաբանութեամբ, միշտ ինքնայատուկ, եւ միշտ նորութեամբ գունաւոր:

Համալսարանէն դուրս ուսանողութեան կեդրոնատեղին «Ազատամարտ»ի վարի սրահն էր: Խոռոչներամ բազմութեամբ մենք հոն էինք ու մեզի կու գային միանալ նաեւ միջնակարգ վարժարաններու երկսեռ աշակերտները: Դասախօսութիւն, վէճ ու վիճաբանութիւն իրարու կը յաջորդէին, աղմկալից ելոյթներով: Վերի յարկերը խռովքի կը մատնուէին: «Ազատամարտ»ի խմբագրական սենեակ-

ները, ակելի վերը Յ.Յ.Դ. Բիւրոյի խորհրդաւոր գրասենեակը ուսանողներու այս խռովիչ ուժականութենէն երբեմն կը նեղուէին: Ու ահա վար կ'իջնէր Պանք Օթոմանի Յրաչը, հլ սաստ մը կ'ուղղէր մեզի:

– Եթէ այս անկանոն ընթացքը շարունակէք, ակումբը ուսանողներէն պիտի առնենք եւ առանձին մարմինի մը պիտի յանձնենք:

Առանց պատասխանի սպասելու վեր կ'ելլէր:

Պահ մը լռութիւն: Ու մենք կը վերսկսէինք վիճաբանութիւնները, ակելի կըրքոտ, ակելի բարձրադադակ: Ու ահա Չաւարեանի շուքը կը նշմարէինք աստիճաններուն գլուխը: Սրահը խոր լռութեան կը մատնուէր: Յոյս ունէինք որ մեր բոլորիս պաշտելի առաքեալը կ'անցնի կ'երթայ: Բայց այդպէս չեղաւ: Մտաւ սրահ եւ տեղ գրաւեց մեր մէջ:

– Ինչի՞ շուք էք վիճում, ես էլ ուզում եմ մասնակցել ձեր քննած հարցերին... իրարու երես կը նայինք բոլորս ալ շուարած: Բազմաթիւ խնդիրներ մէկը միւսին խառնուած մեզ մեր հանդարտ հունէն հանած են: Բանի մը կցկտուր խօսքեր ըրինք այն խնդիրներու շուք, որոնք տաք վիճաբանութեան դուռ բացած էին: Չաւարեան ուշադրութեամբ մտիկ ընելէ ետք, դարձաւ մեզի:

– Ապա, չէք անդրադառնում թէ նման խնդիրների շուք գոռում գոչումներով չեն խօսում: Դուք նորահաս սերունդն էք հլ մեր յոյսը ձեր վրայ է դրուած: Ով որ վեր է ելնում այս աստիճաններից, մեզ յայտնում է թէ վարը կռիւ եւ տուր ու տըմբոց կայ: Վերջ տուէք այդ բոլորին ու լծուեցէք ակելի լուրջ գործերի, մենք ձեզանից շատ բան ենք սպասում..

Գուրգուրանք ու սաստ կար Չաւարեանի խօսքին մէջ: Մենք բոլորս գլխիկոր էինք:

Մեկնած պահուն ըսաւ.

– Կարծեմ խօսքս հասկանալի է բոլորիդ:

Այդ միջադէպէն ետք, մեր ուսանողական սրահը հանդարտ շրջան մը բոլորեց: Չաւարեանի բարոյական հեղինակութիւնը երիտասարդական ամէն ձեւի ըմբոստութիւն մեղմելու ուժն ունէր:

* * *

Ժամանակի ընթացքին ճառախօսութիւնները կը նուազէին, ու լուրջ դասախօսութիւններու եւ ինքնագարգացման շրջան մը կը բացուէր: Յ.Յ.Դ. Ուսանողական Միութիւնը ձեռնարկած էր «Երկունք» ամսագրի հրատարակութեան: Մենք ուսանողներս, զարմանալի մեծամտութեամբ, ալ չէինք հաւնէր «Ազատամարտ»ը եւ ոչ ալ «Ազատամարտ Շաբաթաթերթ»ը: Մեր խօսքը կ'ուզէինք լսելի ընել: Ու «Երկունք»ը կը դառնար Պոլսոյ, Եւրոպայի եւ Պէրթութի Ուսանողական Միութիւններու օրգանը: Ու ժամադրավայրը անուանի գրողներուն: Դ. Վարուժանը «Երկունք»ի էջերէն կը սկսէր իր «Յացին երգը»: Երիտասարդութեան այս բեմը քառողական ուժ մը ունէր, հոն կ'երեւէին Գեղամ Բարսեղեան, Վահրամ Թաթուլ, Ահարոն, ու ապա Սիամանթօ:

«Երկունք»ը տարածուն ամսաթերթ մըն էր եւ ունէր երկու հազար հինգ հարիւր բաժանորդներ, խանդավառ ուսանողներէ եւ միջնակարգ վարժարաններու աշակերտներէն բաղկացած: Կարծես թէ կեդրոնականի մէջ լոյս ընծայուած «Չարթօնք» խմորատիպին շարունակութիւնն էր «Երկունք»ը, բայց աւելի հատուն եւ աւելի լայն հորիզոնով: Խմբագրական կազմի մէջ էին Գ. Մխիթարեան, Լ. Մոզեսեան, Յմայեակ Մանուկեան, Արտաշէս Վանարեան եւ տողերս գրողը:

Մեր ազատ դասախօսութիւններուն կը մասնակցէին Ռ. Դարբինեան, Լ. Նազարեանց, Գ. Խաժակ, Յ. Շահրիկեան որոնք ընկերաբանական, գիտական եւ տնտեսագիտական խնամուած վերլուծումներ կ'ընէին եւ կը նպաստէին ուսանողներու ինքնագարգացման:

Գրական ասուլիսի շարք մըն ալ կար Եսայեան վարժարանի սրահին մէջ: Յ. Ճ. Սիրունին եռանդուն կազմակերպիչն էր այդ դասախօսական շարքին: Գրիգոր Չօհրապ, Ռ. Չարդարեան, Դ. Վարուժան, Շ. Մխսաբեան, Գ. Խաժակ, Չ. Եսայեան եւ Սիպիլ իրենց մասնակցութիւնը կը բերէին գրական այս շարժումին:

Ուսանողները ականջի ծայրով միայն մտիկ կ'ընէին գրական այս ասուլիսները, հակառակ անոր որ մեծանուն հեղինակներն էին պատգամախօսները: Երիտասարդութիւնը բռնկուն հետաքրքրութեամբ կը հետեւէր ընկերաբանական, իմաստասիրական շարժումին եւ խանդավառ էր ընկերվարական մտածողութեամբ: Գրականութիւնը, այդ օրերուն, պարզ ծաղկազարդում մը կը թուէր այս նորահասներուն աչքին: Երիտասարդական տուրք, որ նոյնն է ամէն տեղ եւ ամէն ժամանակաշրջանի:

* * *

«Ազատամարտ»ի խմբագրատունը ամբողջական Յայաստան մըն էր: Մտաւորական ընտրանին հոն էր Արեւելեան ու Արեւմտեան Յայաստանէն, գրագետն ու ընկերաբանը, հռետորն ու քննադատը հոն կը մտնէին ազատ հայրենիքի սեմէն անցնելու պէս: Յոն, վերի յարկի սենեակներուն մէջ կը խոկար Յ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն: Չաւարեանի եւ Ռոստոմի բարոյական ծանրութիւնը կը հովանաւորէր մտքի ու գրչի այս հաստատութիւնը: Ակնունին, Արմեն Գարոն, Յրաչ Թիրեաբեան, Վռամեան եւ ուրիշ պատասխանատու վարիչներ այդ առանձնութեան մէջ քաշուած կը մնային:

Միջին յարկը գրաւած էր «Ազատամարտ»ի քրմապետ Ռ. Չարդարեան, բարեհաճ, բայց միշտ քրմական լրջութեամբ: Անոր գրական եւ հրապարակագրական հեղինակութիւնը տիրական էր, ու անոր գործածած լեզուն շքեղութեամբ կը փայլէր: Պոլսոյ հին թերթերը գունատ շարունակութիւնն էին տխուր անցեալին: Խմբագրապետին գործակիցներն ու աշխատակիցները նոյնքան հեղինակաւոր դէմքեր էին եւ բժախնդիր՝ իմացական եւ լեզուական կատարելութեան եւ թերթին բարոյական նկարագրին:

«Ազատամարտ»ի ճառագայթումը գրական եւ մտաւորական վերածնունդ մըն էր այնքան ատեն բռնութեան տակ կքած Յայութեան նոր կեանքին մէջ:

Յոն կը տողանցէին Սիամանթօ, Ա.Ահարոնեան, Ա. Իսահակեան, Ա. Յարութիւնեան, Խաժակ, Չ. Եսայեան, Դ. Վարուժան եւ այլ երիտասարդ գրողներ: Ահարոնեանը հայ գրականութեան թուխ Արամագոն էր, ինչպէս բնորոշած էր Չ. Եսայեան Մասիսի այս գաւակը, երբ Մետեիսի բանտէն կ'ազատուէր ու օր մըն ալ կը յայտնուէր Պոլսոյ հորիզոնին վրայ: Երիտասարդութիւնը մտիկ կ'ըներ Ահարոնեանը որպէս պատգամախօս, կենալով յարգելի հեռաւորութեան մը վրայ:

Սիամանթոն, արձանային գեղեցկութեամբ ու միեւնոյն ժամանակ արձանային անայլալուծութեամբ կ'անցներ դէպի վերին յարկերը: Մեծապաշտ էր ու երիտասարդները կ'անտեսէր: Ողբերգական եւ հերոսական քարացած մտածում մը կար անոր ճակատին ու անժպիտ դէմքին վրայ: Ուղղակի կը մտնէր Չարդարեանի սենեակը, շոյլ գնահատանք մը ընելու անոր մէկ գեղեցիկ նախադասութեան ամթիւ, կամ պոռթկալու այն արտայայտութիւններուն դէմ, որոնք լոյս տեսած էին դեղին մամուլին մէջ: Ու առանց ժամանակ կորսնցնելու վերի խորհրդաւոր սենեակը կ'ելլէր, ուր խոնարհ պատանի մը կը դառնար, եւ մեհենական աղօթողի մը կերպարանքը կը ստանար: Յոն էր Չաւարեան...ու Սիամանթոն կ'ապրէր այն հին օրերը երբ հանդիպած էր Քրիստափորին եւ Չաւարեանին, ու անոնց շունչին տակ դարձած էր դիւցազուններուն անուանի դիւցազներգակը:

Միւս գրագետներն ու մտաւորականները վերի այցելութիւններէն ետք կ'իջնէին ուսանողներու ժխորայից ակումբը: Ապագան էր որ կը բոցավառէր այդ սրահին մէջ, ու ակնյայտ էր թէ մտաւորականութեան այս ընտրանին, գորովայից աչք մը կը պահէր նոր սերունդի այս յորձանուտին վրայ:

Դ. Վարուժան, Ահարոն եւ Գ. Բարսեղեան միշտ ուսանողութեան հետն էին՝ պատանեկան խանդավառութեամբ: Մենք այս բանաստեղծները կը սիրէինք, բայց զանոնք ծեր կը նկատէինք, քանի որ անուանի գրագետներ էին: Մինչդեռ հետագային պիտի հաստատէինք թէ անոնք միայն հինգ-տասը տարուան տարբերութիւն ունէին եռուն ուսանողներէն: Անոնք ու անոնցմէ մեծերը հաճոյքով կ'ընկերանային ուսանողներու ջրվիժուն կեանքին, հայ նորագատ ապրումներուն հաղորդակից ըլլալու համար:

* * *

Դասախօսութիւն ու թատրոն, վիճաբանական հանդիպումներ՝ հոսանքէ հոսանք, ու կուսակցական եւ բանուորական կազմակերպական աշխատանքներ՝ բաւարար չափով չէին սպառէր կենսունակութիւնը այս ուսանողութեան: Անոնք ամէն տեղ էին եւ բոլոր շարժումներուն մասնակից:

Աւելին, կիրականօրեայ պտոյտներ կը սարքէինք դէպի Չամլճայի կամ Ֆրէնկի լերան բարձունքները: Կերուխում, երգ ու պար, սէր ու սիրերգութիւն՝ աւանդական պատկերը կու տային Յայաստանի վանքերուն վրայ կատարուած ուխտագնացութեանց: Գաւառացի այս ուսանողները ձանձրացած եւրոպական պարերէն, հոգելին Յայաստանը կը վերապրէին:

Պանդուխտի սփոփանք, որուն յօժարական կը մասնակցէին պոլսեցի մեր ընկերներն ու ընկերուհիները:

Դ. Վարուժան շատ յաճախ այս հաւաքականութեան հետն էր լեռնային պտոյտներու ընթացքին: Հրանդ երբ լսէր եւ տեղը գիտնար այս խնճոյքներուն (որոնք համեստ էին, ուսանողական քսակի համեստութեամբ), ճարը կը գտնէր պահ մը ապրելու իր սիրած խանդավառ *ղարիայ*ներուն հետ:

Օր մը, երբ ուսանողները հաւաքուած էին Ֆրէնկի լեռան ծառերուն տակ, ու հայկական պարեր կը պարէին, պարգօտին մէջ առնելով Դ. Վարուժանը եւ ուրիշ քանի մը երիտասարդ գրողներ, հեռուէն, զարմանքով լսեցինք թմբուկի եւ զուռնայի ձայնը... Մեքոն Կիւրճեանն էր: Թաղէ թաղ խանէ խան պտտած էր ու գտած հայաստանցի զուռնաճին եւ թմբկահարը ու իր հետ առած եկած էր ուրախացնելու Հայաստանցի ուսանողները:

Ու ահա պարգօտը կը լայննար, խանդավառութեամբ շղթայի մէջ կ'առնէին Հրանդը եւ իր հետ բերած արտակարգ *օռքէսթրը*: Հրանդ կ'անցնէր պարգօտին գլուխը, ու Հայաստանցի տղաք խելայեղօրէն գետինը կը դոփէին նկուն շարժումներով:

Բայց Հրանդ դժգոհ էր: Թմբուկը իր ուզածին պէս շրջապատը չէր դողդացըներ:

– Տղաք, դուք պարը շարունակեցէք, ըսաւ, ու հեռացաւ պարգօտէն, հանեց իր բաճկոնը, առաւ թմբուկը, անցուց ուսէն եւ կեցաւ պարգօտին կեդրոնը: Ու թմբուկը Հրանդի զարկերուն տակ հնչեց համաչափ ու բարձր արձագանգներով: Պարը ինքն իր վրայ գալարուեցաւ, համաչափ եւ ճկուն շարժումները թմբուկի արձագանգներուն հետ թռիչք ստացան, ու տղաքը պահ մը հոգեպէս փոխադրուեցան Մշոյ Սուլթան Ս. Կարապետի բարձունքներուն վրայ:

Այդ օր, երեք սերունդներ միացած էին Վոսփորի ափին բարձրացած այս բլուրին վրայ:

* * *

Պալքանեան պատերազմը փոթորկայի անակնկալներու շրջան մը դարձաւ: Հիւանդ Մարդը կ'անդամահատուէր, այս անգամ. Օսմանեան Կայսրութեան ծոցէն ազատած պալքանեան չորս պետութիւններու կողմէ: Թուրքիան ջախջախիչ պարտութիւն կրած էր եւ ընդամենը երկու ամսուան ընթացքին կորսնցուցած էր եւրոպական Թուրքիոյ եօթը նահանգները:

Ու ահա, Հայկական Հարցը կրկին կու գար սեղանի վրայ, եւ 1913ին լուծուլ կը ստանար այն իմաստով, որ հայկական եօթը նահանգները երկու շրջաններու, բաժնուած՝ կը դրուէին եւրոպացի երկու յիազօր քննիչներու հսկողութեան տակ, ինքնավար Հայաստանին ճամբայ մը բանալով:

Հայ Ժողովուրդը միակամ էր ու խանդավառ:

Ազատութեան նոր հորիզոններ կը բացուէին արդէն կազդուրուած Հայութեան առջեւ: 1913ին, կը տօնուէին հայ գրերու գիւտի հազար հինգհարիւր եւ

տպագրութեան հինգհարիւր ամեակները: Կովկասէն մինչեւ Պոլիս, հայկական նահանգներէն մինչեւ հեռաւոր գաղութները հայ մշակոյթի փառատօնը, ազգային խորունկ հպարտութեամբ, կը հնչէր բեմէ բեմ:

Պոլսոյ մէջ ուսանողները կը ստանձնէին նախաձեռնութիւնը եւ Հայ ընտրանին կը հաւաքէին Փռթի Շանի թատրոնը եւ ընդարձակ պարտէզը Ս. Մեսրոպի գիւտը փառաբանելու, փառք մը որ Հայութիւնը հազար հինգ հարիւր տարիներէ ի վեր արժանաւորապէս կը կրէր, մշակոյթի վերելքի իր ճամբուն վրայ:

Ակնունին բեմէն բազմութիւնները կ'ոգեւորէր հայ անցեալով, ու սրահը կը դողդար խելայեղ ծափերու տակ:

Հանդէսը կը վերջանար հոգեպարար մթնոլորտի մէջ, ու երբ հասարակութիւնը կը դատարկէր սրահն ու պարտէզը, ոստիկանութիւնը կը մտնէր Փռթի Շան, հանդէսին կարգադրիչները որոնելու: Գալուստ էյնէթեան տոմսերու եւ այլ թուղթերու տրցակները ձեռքը, կը ձերբակալուի ոստիկաններէն եւ կ'առաջնորդուի դէպի իր բնակարանը, երեւի խուզարկութեան մը համար: Բերայի շիտակին վրայ կը հանդիպիմ Գալուստին, որուն կ'ընկերակցին երկու ոստիկաններ:

Գալուստ երբ եղելութիւնը ինծի յայտնեց, աւելցուց թէ տունը ապրանք կայ... Ես ոստիկաններուն ներկայացայ որպէս կարգադիր յանձնախումբի նախագահը եւ ըսի թէ այս մարդը (Գալուստը մատնանշելով) պարզ ծառայ մըն է, մուտքի տոմսերը ծախելու:

– Ուրեմն, դուք հրամմեցէք ոստիկանատուն մեզի փոքրիկ լուսաբանութիւն մը տալու, այս մարդը կրնայ երթալ:

Ու Գալուստ, ազատ շունչ մը առնելով, կը հեռանայ վտանգաւոր ցանցէն: Երբ դէպի ոստիկանատուն կ'երթայի, դիմացի մայթերէն կ'անցնէին մեր ուսանող ընկերները՝ Հրաչ Փափագեան, Լ. Մոզեան, Պօղոս Տէր Պօղոսեան եւ Հայկ Գալմեան (հնչակեան): Անոնք մօտեցան մեզի եւ ոստիկաններէն իմացան թէ բացատրութիւն կը պահանջուի հանդէսի կազմակերպիչներէն, ու առանց այլեւայլի ինծի հետ մտան ոստիկանատուն: Մենք պատրաստուած էինք ծանր դիտողութիւն ընելու ոստիկանապետին, որ թոյլ կու տայ անհանգստացնելու քաղաքացիները մշակութային այսպիսի հանդէսի մը առթիւ:

Մեզի սպասման սենեակը մտցուցին: Երկու ժամ անցաւ ու ոստիկանապետը չերեւցաւ: Դրան վրայ խումբ մը ոստիկաններ կը հսկէին, ու մեր հարցումներուն կը պատասխանէին.

– Հիմա, քիչ մը յետոյ...

Կես գիշերն անցած էր, երբ մեզ հրաւիրեցին իրենց հետեւի.

– Կեդրոնը պիտի երթաք հարցաքննուելու...

Վար իջանք եւ մեզ մտցուցին գոց կառքերու մէջ: Չինուած ոստիկաններով շրջապատուած՝ ինքզինքնիս գտանք Պոլսոյ կեդրոնական բանտի երկաթեայ դարպասներուն առջեւ: Մեզ վար իջեցուցին եւ հրմշտկելով ներս հրեցին: Բանտի ոստիկանները մեզ առաջնորդեցին բազմաթիւ անցքերէ, միշտ դէպի վարե-

րը, ու զնտան մը նետեցին, ուր գողեր, մարդասպաններ եւ վտանգաւոր շղթայակիրներ տարածուած էին խոնաւ պատերուն տակ եւ զնտանին կեդրոնը:

Խաւարը կ'իջներ մեր վրայ, ու ոչ ոք գիտէր մեր տեղը:

Յինգ օր այդ զնտանի ոջիլներուն մէջ մնացինք:

Յինգերորդ օրը միայն կրցանք «Ազատամարտ» առնել ցրուիչէն, որ մեզի հաղորդեց թէ Ակնունին, Չօիրապը եւ Վարզգեսը դիմում կատարած են մեր ազատման համար:

Յոյսի նշոյլ մըն էր այդ լուրը, բայց այս յուսաբեր «Ազատամարտ»ը տխրութեամբ կը համակէր մեր սիրտը: Թերթը ամբողջութեամբ սեւ շրջագծերու մէջ առնուած տեսանք, որ մեզի կը գուժէր Ս. Չաւարեանի մահը...

Բանտը մոռցանք եւ խորունկ վիշտով խոնարհեցանք այն անփոխարինելի կորուստին վրայ, որ մեզ սուգի կը մատներ:

Կէս գիշերն անցած էր, ու մենք անքուն էինք: Խոնաւ զնտանի դուռը ճմինչով բացուեցաւ: Երկու ոստիկաններ մեզի մօտեցան եւ հրաւիրեցին իրենց հետեւելու: Բանտի երկաթեայ դռները մեր առջեւ բացուած էին: Գոց ու մռայլ կառք մը մեզի կը սպասէր: Թխմուեցանք կառքին մէջ եւ զինեալ ոստիկանները մեկնելու հրամանը տուին:

Կախաղանի դատապարտուածները փոխադրելու բեմադրութիւնը կատարեալ էր: Մատնուած էինք անորոշ մտահոգութեան մը:

Չինուորական ատեանի ընդարձակ բակին մէջ կեցուցին կառքը ու մեզ առաջնորդեցին սպասասրահ մը, զինեալ պահակներու շարքի մը առջեւէն: Պատերազմի շրջան էր ու Թուրքիան ստիպուած էր պարտութեան դաշինքներ ստորագրել: Կատաղութիւն մը կար թուրքերու դէմքին վրայ, ու այդ կատաղութեան արիւնտոտ հայեացքը ուղղուած էր հայերու դէմ: Այդ վերաբերմունքը կը զգայինք ամէն քայլափոխի:

Ժամ մը սպասեցինք, անորոշ մտմտութներով: Մեր ժամանման մասին ներսի խորհրդաւոր սենեակը զեկուցում ստացած էր: Մուտքը ու ելքը սպաներուն ու ոստիկանապետերուն աւելի քան մռայլ կը դարձներ այն դուռը որ մեզ ներս պիտի առներ:

Վերջապէս, կէս գիշերէն ետք, ժամը երեքին մեզ ներս հրաւիրեցին: Ընդարձակ սրահ մը: Պատերազմական ատեանի ամպիոնը բազմած էին Էնվէր փաշան, Ճեմալ փաշան եւ Պետրի պէյը, քովի սեղանները գրաւած էին քանի մը քարտուղարներ, խոնարհած թուղթերուն, մռայլ դէմքերով: Բաւական հեռաւորութեան վրայ աթոռներ շարուած էին ամպիոնի դիմացը, երեւի հարցաքննուածներուն համար: Մենք առաջացանք մինչեւ աթոռները, բարեւեցինք եւ կանգնած մնացինք: Մեզի չառաջարկեցին որ նստինք ու անմիջապէս խօսքը մեզի ուղղելով, Ճեմալ փաշան ըսաւ.

– Դուք Իրաւաբանական Յամալսարանի մեր ուսանողներն էք, մենք կը կարծէինք թէ դուք հաւատարիմ քաղաքացիներ էք եւ կը պատրաստուիք այս երկ-



Պ. Սևապետան Տոն-Թանգարան

Չախեն աջ՝ Կարո Սասունի, Մուշեղ Իշխան եւ Պողոս Սևապետան

րի գաւառապետները եւ դատաւորները դառնալու, մինչդեռ դուք հայկական թագաւորութիւն կ'ուզէք եղեր: Ձեր սարքած հանդէսի ընթացքին Յայ հին թագաւորներու նկարները ցըրւած էք, չէք գիտեր թէ թուրք ժողովուրդը որքան կըրնայ գրգռուիլ այդ ընթացքէն:

Մեր ընկերներէն մէկը, ընտիր թուրքերէնով յայտնեց թէ մենք միշտ հաւատարիմ եղած ենք, եւ թէ

այդ նկարները գրավաճառներու եւ թերթ ծախողներու շահադիտական արարք մը ըլլալու է, որմէ մենք ուսանողներս երբեք տեղեկութիւն չենք ունեցած: Եւ մալ փաշան, Էնվեր փաշան եւ Պէտրի պէյը թթուած դէմքով մեզի կը նայէին, եւ անոնց աչքերուն մէջ աւելի մեծ սպառնալիք կար, քան խօսքերուն: Եւ մալ փաշան կրկին խօսքը մեզի ուղղեց.

– Ականջնիդ լաւ բացէք, թուրք ժողովուրդը մոլեռանդ ազգասեր եւ կրօնասեր է, մի գրգռէք անոր զայրոյթը որ կրնայ արիւնալի ջարդերով վերջանալ: Պետութիւնը չի կրնար այդ զայրոյթը զսպել... Յիմա կրնաք երթալ:

Խոնարհութիւն մը ըրինք եւ դուրս եկանք սրահէն: Ոստիկան մը մեզի ընկերացաւ մինչեւ դուրսի դուռը: Արշալոյսը բացուելու վրայ էր: Կառք մը գտանք եւ ելանք Բերա:

Նոյն օրը գտանք Ակնունին եւ Վարդգէսը «Ազատամարտ»ի վերին յարկը եւ եղելութիւնը հաղորդեցինք անոնց:

Եւ մալ փաշան մեր միջոցաւ ամբողջ Յայութեան ուղղած էր իր խօսքը:

(Թիւ 4, 1965, հատուած)

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԳՐԱԿԱՆ ՅԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Որք ուշադիր ակնարկ մը նետենք վերջին տաս-տասնհինգ տարիներու հայ նորահաս սերունդի մտաւոր զարգացման վրայ, ուշագրաւ երեւոյթ մը, բնորոշիչ եւ տարօրինակ միեւնոյն ժամանակ, մեզ խորհրդածութեան կը մղէ, այս պահուս, երբ ուրախութեամբ կը դիմաւորենք քանի մը նորահաս գրողներ իրենց խոստմնայից ամառին քայլերուն մէջ:

Քիչ է անոնց թիւը: Արդէն գրականութեան եւ արուեստի նուիրեալները իրենց քանակովը չէ որ կշիռ կը ստանան հոծ զանգուածներու բաղդատմամբ: Սակայն այդ քիչը Սփիւռքահայ կեանքին մէջ զգալի է մանաւանդ այն պատճառով որ ցրուած կեանք մը վիճակուած է հայութեան: Փոքրաթիւ խմբաւորում մը, նորահաս գրողներու, գրական շարժումի մը մղիչ ուժը կրնայ հանդիսանալ:

Եթէ համախմբումը, մեր պայմաններու բերումով անկարելի է, գոնէ Մերձաւոր Արեւելքի հայաշատ կեդրոններուն մէջ կարելի է յուսալ նոր սերունդի շարքերէն ամառացած երիտասարդ գրողներու խմբաւորում մը, որ նոր ժամանակներու հոգեկան խռովքը արտայայտէր եւ ստեղծէր գրական մթնոլորտ մը, ջերմ ու ծաղկուն:

Դեպի հայ գրականութիւնը խուժող երիտասարդութիւն մը շատ յաճախ դիմաւորած ենք անցած կէս դարու ընթացքին: Սակայն վերջին երկու տասնեակ տարիներուն գրական եւ մտաւորական կեանքի նուիրողներու թիւը պակասած է, հակառակ այն իրողութեան որ միջնակարգ կրթութիւնը եւ համալսարանական մասնագիտութիւնը տասնապատիկ յաւելում մը կ'արձանագրեն այսօր:

Այս արտակարգ երեւոյթը լուրջ քննութեան մը կը կարօտի:

Երեսուն տարի ամառ մէկ միջնակարգ ունէր Պէյրութի հոծ գաղութը, այն ալ նորահաստատ Յայ Ճեմարանն էր: Վերջին տասնհինգ տարիներուն այս գաղութը 7-8 միջնակարգ հայ վարժարաններ ունեցաւ:

Յայ միջնակարգ վարժարաններէն երիտասարդներու հոծ բազմութիւն մը աւելցած է հայ համայնքին վրայ: Անոնց մեծ մասն ալ կրցած է համալսարանական կրթութիւն ստանալ, սակայն այդ թիւի համեմատութեամբ հայ գրողներու եւ միաւորականներու զանգուածի մը գոյութիւնը զգալի չէ: Իրապէս այդ պատրաստուած զանգուածը գոյութիւն ունի, բայց մտաւորական եւ գրական ստեղծագործութիւններէն եւ

ապրումներին հրաժարած կը թուի: Որով, կեանքի կրկեսին մէջ նետուած այդ հաւաքականութիւնը կը գործէ ու կ'ապրի, առանց մտաւորական եւ գրական անուն ունենալու: Քիչերուն վիճակուած է այդ մթնոլորտէն դուրս գալ եւ անվարձ թռիչք մը կատարել դէպի գրական երջանկութիւնը, որ հայ կեանքին մէջ ուրիշ նշանակութիւն մը չունի, եթէ ոչ անհատին հոգեկան բաւարարութիւնը:

Տխուր այս պատկերին միւս երեսը յոյսէն անելի՝ լաւատեսութեան կը տանի մեզ: Մեր ուշադրութիւնը երբ դարձ-

Անցած հարիւր տարիներու ընթացքին հայկական ոչ մէկ միջավայրի մէջ այսքան աշակերտական (միջնակարգ) թերթեր լոյս տեսած են: Այսօր միայն Պէյրութի մէջ լոյս կը տեսնեն ՏԱՄՆ ԵՒ ՄԷԿ պարբերաթերթեր:

ցական պատանիներուն կը դարձնենք, ոգեւորիչ երեւոյթ մը մեզ կը դնէ պըտղաբեր այգիներու առջեւ: Եւ իրօք, հայ պատանեկութիւնը խանդավառ նորածիլ սերունդ մըն է մեր բազմաթիւ նախակրթարաններուն եւ մանաւանդ միջնակարգ վարժարաններուն մէջ: Կ'ապրի հայ գրականութեամբ եւ ազգային ոգիով: Հպարտ է հայ անուանի գրագէտներով եւ կայծկլտուն աչքերով վաղուան հորիզոնը կը չափէ՝ գրագէտներուն կրտսերագոյնը ըլլալու համար: Այս ներքին ապրումի ամենէն փայլուն ապացոյցը աշակերտական այն թերթերն են, որոնք վերջին տասը տարիներու ուշագրաւ իրողութիւնը կը կազմեն:

Անցած հարիւր տարիներու ընթացքին հայկական ոչ մէկ միջավայրի մէջ այսքան աշակերտական (միջնակարգ) թերթեր լոյս տեսած են: Այսօր միայն Պէյրութի մէջ լոյս կը տեսնեն ՏԱՄՆ ԵՒ ՄԷԿ պարբերաթերթեր: Ասոնցմէ ամենն է հինը Հայ ճեմարանի *Չահակիրն* Է, որ մօտ 22 տարուան կեանք ունի: Յիշենք *Գլաձորը* (Անթիլիասի Դպրեվանք), *Շիւեր* (Հալեպ, Քարեն Եփփէի ճեմարան), *Վերելք* (Մխիթարեան վարժարան), *Հորհրդն* (Յովակիմեան վարժարան), *Նաւասարդ* (Հայկազեան Գոլէճ), *Կանթեղ*, *Նուիրում*, *Սիփան*, *Հունձք*, *Խաչքում*, եւ *Ճրագ* թերթերը:

Այս պարբերականները կանոնաւորաբար լոյս կը տեսնեն տարիներէ ի վեր: Անոնցմէ ոմանք մէկ-երկու տասնամեակի կեանք ունին: Այս երեւոյթը կրկնակի պահանջի մը արդիւնքն է: Եթէ առաջին պատճառը դաստիարակչական մտահոգութենէն կը բխի, վերէն՝ ուսուցչական կազմէն թելադրուած, երկրորդ պատճառը ստուգապէս կրնանք ըսել թէ պատանի աշակերտութեան մը հոգեկան խանդավառութենէն կը պոռթկայ, գրականութեան այգիէն ներս ցատկելու, պտղաբերումի անհուն բաղձանքով: Պատանի սերունդի այս խանդավառ ձգտումին շնորհիւ է որ այդ պարբերականները տեւաբար լոյս կը տեսնեն: Խմբագրական կազմերը երկու-երեք տարիներու կեանք ունին միայն: Ասոնք կ'անցնին ընթացիկ աշխարհին, բայց անոնց կը յաջորդեն նոր խմբակներ, նոր ոգեւորութեամբ, միշտ թարմ ծաղիկ մը կամ կանաչ տերեւ մը ոռոգելու պատանեկան գրական ածուին մէջ:

Չարմանալին, ու նաեւ մտահոգիչը սակայն, այն իրողութիւնն է, որ ընթացիկ աշխարհին անցած պատանիներն ու երիտասարդները, բացի քանի մը բացառիկներէն, լռութեան մշուշին մէջ կը կորսուին անծպտուն: Ո՛ր կը մաշի անոնց պատանեկան խանդավառութիւնը. ինչ գորաւոր պատճառներ կան, դուրսը, կեանքին մէջ, որոնք հոգեկան, գրական եւ մտաւորական կրակը կը մարեն ու մոխիր կը ցանեն ժամանակակից սերունդին վրայ:

Ահա հարցեր, դուք ըսե՛ք՝ պատկերներ ու հակապատկերներ, որոնք լուսաբանութեան կը կարօտին:

Պատասխանները վերելի հարցադրութեան շատերու համար պարզ են, բայց վերջին խօսքը չեն:

Աթոմական այս դարուն նորահաս երիտասարդութիւնը մասնագիտութեան կը ձգտի: Ու մասնագէտը գոնէ համալսարանական կրթութիւն մը ըստացած ըլլալու է: Ապա, համալսարան մտնելու համար... *պագայորիան* անցնելը անհրաժեշտութիւն մըն է: Կամաց կամաց կը հասնին միջնակարգ վարժարանի վերջին երկու դասարաններուն, ուր պատանին կը թեւակոխէ երիտասարդական առաջին տարիները: Ու այդ փոխանցման տարիներուն փոթորիկի կը բռնուի: *Պագայորիայի* մղձաւանջը կը սկսի: Հայ գրականութեան եռանդը, ակամայ, կը կոտորակի, կը նահանջէ: *Պագայորիան* ստացողը նոր վագրի մը մէջ է, այլեւս գլուխ քերելու ժամանակ չունի: Այնչոյն թեան մատնուած աշակերտը մէկ երկու տարի կը կորսնցնէ՝ ճամբայ մը գտնելու: Փոխանցման այս երկու երեք տարիներ

րուն գրական եւ մտաւորական յատկութիւնները ծալլուած՝ մէկ կողմ դրուած են, լաւագոյն օրերուն սպասելով:

Սպասուած օրերը միշտ կ'ուշանան: Մասնագէտներն ու համալսարանականները խուռներամ բազմութիւն կը դառնան: Բայց այս բազմութիւնը գուրկ է գրական եւ մտաւորական գործօն կեանքէն:

Ներկայ աշխարհը ամբողջովին բռնուած է մասնագիտութեան բաղձանքէն: Կեանքի յառաջդիմութեան անհրաժեշտութիւններէն բխած հրամայական պահանջն է որ ներգրաւած է նորահաս սերունդը: Ներկայ դարու իրողութիւնն է որ կը հաստատենք:

Սակայն, կազմակերպուած աշխարհի եւ ցիրուցան հայութեան միջեւ մեծ տարբերութիւն մը կայ: Կազմա-

Ո՛ր կը մաշի անոնց պատանեկան խանդավառութիւնը. ինչ գորաւոր պատճառներ կան, դուրսը, կեանքին մէջ, որոնք հոգեկան, գրական եւ մտաւորական կրակը կը մարեն ու մոխիր կը ցանեն ժամանակակից սերունդին վրայ:

կերպուած աշխարհի մասնագէտները գիտական, գրական, մտաւորական եւ ուսումնասիրական ստեղծագործական աշխատանքներու նուիրուելու հնարաւորութիւն եւ միջավայր ունին, որով նիւթականին հետ՝ հոգեկան մեծ բաւարարութիւն կը ստանան: Մինչդեռ հայ մասնագէտը միայն նիւթական բաւարարութիւն մը ունի: Շատերը ատոնցմէ կրնան ինքնաբաւութեամբ գո-

հանալ: Սակայն առանց ստեղծագործ արժեքի՝ հոգեկան պարապը պիտի տե-
ւէ, ու ձանձրոյթն է որ այդ պարապը
պիտի լեցնէ:

Գրական յատկութեամբ օժտուած-
ներու թիւը միշտ սահմանափակ եղած
է: Ազգէ ազգ անշուշտ տարբերութիւն-
ներ կան, սակայն ընտրեալներու կամ
ընդունակներու քանակը համրանքի
ենթակայ է:

**... այսօր, հակառակ մասնագիտական
վազքին, գրական եւ մտաւորական
կեանքը ճոխութեամբ կը թաւալի անհա-
շիւ հրատարակութիւններով:
Մենք, Հայերս, այս արշաւին մէջ կարծես
թէ մեր ուղին կորսնցուցած ենք:**

Փոքրագոյն տոկոսը որ գրականու-
թեան պիտի նուիրուի մեծ ու կազմա-
կերպուած ազգի մը ծոցին մէջ, ինքնին
մեծ քանակ մըն է: Ու այսօր, հակառակ
մասնագիտական վազքին, գրական եւ
մտաւորական կեանքը ճոխութեամբ
կը թաւալի անհաշիւ հրատարակու-
թիւններով:

Մենք, Հայերս, այս արշաւին մէջ կար-
ծես թէ մեր ուղին կորսնցուցած ենք:

Հայութեան հիմնական յատկանիշ-
ներէն մէկը եղած է իր հոգեկան ուժը,
որ արտայայտուած է գրականու-
թեամբ, արուեստներով, ճարտարապե-
տութեամբ եւ տոկոսն հաւատքով:

Արդ, Հայ Նոր Սերունդին համար
գրականութիւնն ու մտաւորական գոր-
ծունէութիւնը հոգեկան ազատ ասպա-
րէզ մըն են: Այդպէս եղած է անցեալին
մէջ, այդպէս պէտք է ըլլայ մանաւանդ

այս ժամանակաշրջանին, երբ հայ մար-
դը իր սովորական կեանքէն զատ՝ հո-
գեղէն ուժի պէտք ունի,–համաշխար-
հային յորձանուտներուն մէջ շնչահեղծ
չըլլալու համար:

Ազգապահպանման պարտադիր
գիտակցութիւնը չէ որ գիս կը մղէ ըս-
թափման այս քանի մը խօսքերը ուղ-
ղելու նոր սերունդին, այլ գրականու-
թեան ատակ մարդու ներքին անսահ-
ման բաւարարութեան թելադրանքն է
որ կ'ընեն: Գրական ստեղծագործու-
թիւնը հոգեկան երջանկութիւն մըն է,
իսկ գրականութիւնը անհրաժեշտ սը-
նունդ մըն է ընթերցող հասարակու-
թեան համար: Անհատական եւ հաւա-
քական ապրումի հոգեկան այս հարըս-
տութիւնը վատնելու չենք մոլոր ու
շուարուն ճամբաներու վրայ:

Քառորդ դարէ ի վեր ուշադրու-
թեամբ հետեւած են նորահաս սերուն-
դի ծաղկումին եւ քայլերուն: Երբեմն
ուրախութիւնն ունեցած են ցեղային
հանճարի կայծերը նշմարել օտար ա-
փերուն վրայ նետուած հայ պատանի-
ներուն մէջ: Հոգեկան ապրումի արտա-
յայտութիւնները, ծաղկուն պատանի-
ներուն, շատ յաճախ գիս համոզած են
թէ անոնք իրենց արիւնին մէջ կը կրեն
բաբախումը մեր դարաւոր մշակոյթին
եւ թէ հայ տաղանդի ժառանգական ա-
ւիշն ունին:

Բայց ամօրեայ պայմանները, գրա-
կան խանդավառ մթնոլորտի մը եւ
մշակութային ապրումներով ամլցուն
միջավայրի մը պակասը ընդունակու-
թիւնները կը խամրեցնեն: Մանաւանդ
երբ միջավայրը գերազանցապէս նիւ-
թական շահերու, շահաբեր մասնագի-

տուրքիւններու, ճոխ կեանքի մը ետեւէն վազելու մրցադաշտ մը դարձած է, բոլորովին գրաւող մթնոլորտ մը, ամեւօրեայ հակազդեցութիւններով:

Գրականութեան եւ արուեստի սիրահար որքան պատանիներ արեւահար եղած են այս հեւքոտ միջավայրերուն մէջ: Յաշիւը չկայ: Ըսենք նաեւ հաշուակալն ալ չկայ:

Տասը տարի առաջ տաղանդաւոր պատանիները, այսօր ճարպիկ մասնագէտներ են, արդէն տասը տարիներու երիտասարդութիւն մը մաշեցուցած: Բացառիկները միայն շարունակեցին ուխտեալը մնալ «Տիրոջ Այգի»ին:

Անտաղանդ շատերը միշտ թուղթ մրոտեցին, հայ գրականութիւնը մաշած քուրջի վերածելու համար:

Քննութեան առնուած այս բոլոր պարագաները նկատի ունենալով, նորէն յոյսով կը վերադառնամ խանդավառ պատանեկութեան, կ'ապաւինիմ անոր թարմ երակին: Այդ պատանիներէն պիտի առաջանայ գրականութեան եւ արուեստի դրօշակիր սերունդը: Իրենցմէ տասը տարիով հեռացած երիտասարդութիւնը ուրիշ աստուծոյ կը ծառայէ: Բացառիկները թերեւս օր մը վերադարձ մը կատարեն, բայց անոնք յառաջապահը չեն կրնար ըլլալ: Անոնք կարաւանի քովէն պիտի քալեն առանց դրօշակի:

Նորահաս պատանեկութիւնն է որ կրնայ գալիք գրական սերունդին պատմական ճակատագիր մը տալ, պայմանաւ սակայն որ շարունակէ գրականութեան եւ արուեստին բացուիլ միջնակարգ վարժարանները աւարտելէն ետքն ալ, առանց ընդհատումի:

Փոխանցման տարիներն են 16-20 տարեկան հասակը: Մտահոգութեան տարիներ են միջնակարգ վարժարանի վերջին դասարանը եւ անոր յաջորդող տարիները: Եթէ տաղանդ եւ ընդունակութիւն ունեցող տղաներն ու աղջիկները շարունակեն այն գրական եւ մտաւորական աշխատանքները, որ կը կատարեն տասնմէկ աշակերտական թերթերը խմբագրելով, անկասկած անոնք այլեւս պիտի չհրաժարին գրական-հոգեկան ապրումներէն, եւ մեծ բաւարարութեամբ պիտի շարունակեն ստեղծագործել համաձայն իրենց ներքին դրդումներուն:

Մտքի եւ գրչի տեւական վարժութիւնը հոգեկան պահանջ դառնալէն ետք, գրական եւ մտաւորական սերունդը ինքնին պատրաստ է:

Նոր եկող ամէն սերունդ ինքը կը

Նորահաս պատանեկութիւնն է որ կրնայ գալիք գրական սերունդին պատմական ճակատագիր մը տալ, պայմանաւ սակայն որ շարունակէ գրականութեան եւ արուեստին բացուիլ միջնակարգ վարժարանները աւարտելէն ետքն ալ, առանց ընդհատումի:

կերտէ իր պատմական ճակատագիրը:

Հայ միջնակարգ վարժարանները գերազանցապէս այս նպատակին պիտի ձգտին:

Քառուղիները լայն բացուած՝ կը սպասեն անոնց որ պիտի գան հայ գրական անդաստանը ծաղկեցնելու:

(Թիւ 11, 1962)

ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

ԱՊԱԺԱՍ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ...

Գոյութեան իրաւունք ունի, Արտասահմանեան հայ կեանքի մէջ, «գրական շարժում» բացատրութիւնը—իբրեւ համապատասխան երեւոյթ կամ իրագործում:

Հարցական է:

Անձնապէս չենք հաւատար, թէ այդ «շարժում»ը կայ—որովհետեւ՝ բառին ետեւ պարտաւոր ենք փնտռելու գաղութ թէ գաղութ հաստատելի *իմացական պահանջներու, հետաքրքրութեան եւ գործօն դերակատարութեան փաստը*: Եւ ցաւագին իրողութիւնը այն է, միշտ մեր անձնական կարծիքով, որ լուծութեամբ սահմանափակ գօտիներու—մեր ժողովուրդը իմացական «ծարաւ» չզգար, մեր գրագէտներն ու մտաւորականութիւնը կը կազմեն բջիջային «դասակարգ» մը, եւ, ինչ որ *հիմնականն է «շարժում»ի մը փաստական գոյութեան հաւատալու համար, հոգեկան ու մտաւոր որեւէ մնայուն կապ չկայ անհատ գրագէտին եւ պանգուած ժողովուրդին միջեւ*:

Որք է հայ գրականութիւնը՝ շատ աւելի ողբերգականօրէն մերկ ու ցամաք է հայ իրականութիւնը: —Մինակ է հայ գրագէտը, գրեթէ շնչահեղձ է իր ներաշխարհին մէջ. լքումի եւ անգոր խռովքի մը մտրակումով կ'ապրի հետըզհետէ աւելի խոր կը զգայ, թէ անարձագանգ տազնապանք մըն է իր երկունքը: Անօրեան այնքան ամլացու-

ցիչ չափերով չի ճնշեր հաւանօրէն իր մտքին եւ հոգիին վրայ, որքան այն իրատես ու առարկայական անդրադարձումը՝ թէ *իր ետեւ չունի «շարժում» մը հիմնաւորող հասարակաց, զոնէ միջին տարողութեամբ հետաքրքրութիւնը մեր ժողովուրդի*: Կայ «մատուցումը»,— փոյթ չէ թէ յարաբերական չափով մը. սակայն չկայ «խնդրանքը»,—զոնէ այն չափով՝ որ գրագէտը կարենար ձերբազատուիլ առանձին մնացած ըլլալու լկիչ տպաւորութենէն:

Մեր գրականութեան վերջին հարիւրամեակի պատմութիւնը ի յայտ կը բերէ յանուն իմացական արժանապատուութեան եւ մտաւոր կեանքի առկայութեան յայտարարուած լուռ բայց սրտառու *սլայքար* մը—Հայ մտքի եւ հոգիի գոյատեւման ոգորում մը:

Հաւանաբար քիչեր միայն հաստատած ըլլան, հարիւր տարիներու այդ տեւողութեան մէջ՝ գործերէն, գրի ու բառի վերածուած ապրումներէն, երբեմն ողջունուած սակայն հասարակ ուրացուած իրագործումներէն մեզի փոխանցուած խռովքը հայ գրագէտին ու բանաստեղծին: Իսկ այդ քիչերը վստահօրէն լրիւ ըմբռնած են՝ թէ ինչ գնով ինքզինք եւ իր վաստակը մեր ժողովուրդին *սպարտադրելու* քաջութիւնը —եւ յաջողութիւնը—ունեցած է ամէն մէկ քերթող կամ արձակագիր, ամէն մէկ մտքի մշակ կամ հոգիի սերմանող:

Եթե 1870-1940ական թուականներ ստեղծագործող գրական սերունդները ակօս մը ձգեցին իրենց ետին ու պատմութիւն մը շինեցին, 1940-1960ական քսանամեակի նորագոյնները, աւելի քան նախորդները խորունկ ապրելով եւ տառապագին երկունքով մը թուղթին փոխանցելով հանդերձ իրենց հոգեկան ու մտաւոր տագնապանքը, բախտը չունեցան լսուելու կամ փընտռուելու. ո՛չ անշուշտ փառքի–եւ մեծարանքի պատուանդանի մը վրայ պահուելու, բայց գոնէ անպատասխան եւ անարձագանգ չմնալու համար:

Անուագն բարեմտութիւն է–եթէ ոչ ցամաք եւ անպատասխանատու դատում–«արժէք»ի հարց լուզել այս պարագային:

Ճիշդ պիտի չըլլար գրական ընդհանուր լճացումը բացատրել հայ գրագէտներու կամ բանաստեղծներու որակական անշքացումով, կամ այն հապճեպ եզրակացութեամբ՝ թէ անոնք չեն կրցած ... «ժամանակին շունչը» դառնալ եւ իրենց գործին կշիռովը կախարդել բազմութիւնները:

Ըսենք այստեղ իսկ.- Որքան ալ համեստ եւ անշուք ըլլայ վերջին տասնամեակներու հայ գրական բերքը, իր կոչումին եւ իմացական արժանապատուութեան մէջ անդաւաճան մնացած է հայ գրագէտը: Մղած է, ու այսօր ալ տակաւին կը մղէ–զարմանալի կենսունակութեամբ մը, ու գրեթէ հիացումի արժանի յամառութեամբ մը–«անկարելի պատերազմը» իմացական ու հոգեկան կեանքի մը, խեղդիչ ու հաշմող անտարբերութեան մէջ, ներքին սուզումներէ եւ՝ որոնումներէ խոյս տուող

առարկայապաշտական արշաւի մը մէջ, օրը օրին ապրելու նիւթապաշտական դաւանանքի մը ջլատիչ, սիրտ ու հոգի բզկտող մթնոլորտին մէջ, ու տակաւին վիճակներու եւ երեւոյթներու մէջ՝ որոնք կը մղեն մեզ երբեմն հաւատալու, թէ Յայութիւնը հրաժարած է

Ճիշդ պիտի չըլլար գրական ընդհանուր լճացումը բացատրել հայ գրագէտներու կամ բանաստեղծներու որակական անշքացումով, կամ այն հապճեպ եզրակացութեամբ՝ թէ անոնք չեն կրցած ... «ժամանակին շունչը» դառնալ եւ իրենց գործին կշիռովը կախարդել բազմութիւնները:

զինք կեցուցանող, զինք պատուհասներու եւ քանդիչ փոթորիկներու դէմ անխորտակ դարձնող ներանձնական ուժէն–մշակոյթի ոգիէն:

Աննախընթաց տագնապը, զոր կ'ապրինք «իմացական շարժում»ի կամ «գրական կենսունակութեան» մը չգոյութեան ճամբով–հետեւանք է մանաւանդ կեանքի այն նոր պայմաններուն, որոնք վիճակուեցան Յայութեան՝ մասամբ մեր իսկ ցեղային ինքնագոհութեան, ու առաւելապէս աշխարհաբաղաքական-ընկերային տնտեսական-հոգեբանական ազդակներու բերումով:

Մեր ժողովուրդի «ցեղային» ո՞ր «ինքնագոհութեան» մէջ պիտի փընտռենք *մասնակի* պատճառը՝ ներկայ ժամանակներու գրական շարժումի եթերային գոյութեան:

Պիտի փնտռենք կրաւորականութեան եւ ենթակայութեան այն հոգեվի-

ճակին մեջ, որ Հայոց պատմութեան մեջ նոյնքան բրտօրէն ցայտուն է, որքան ըմբոստութեան եւ անկախութեան ոգին, որքան յեղափոխական եւ թմբիրամերժ խառնուածքը:

Չենք երթար ետ, թուականներէն ու պատմական դարաշրջաններէն վրկայութիւններ բերելու համար մեր այս

Մենք շա՛տ կը սիրենք խօսիլ մեր գոյութեան խիզախ մարտնչումներուն մասին... Չենք խօսիր սակայն ստրկամտական այն վիճակներուն ու նո՛յնքան իրական այն կրաւորականութեան մասին՝ որոնք դարձ դար արիւն ու ոսկոր դարձած են հայ մարդուն մէջ...

հաստատումին: Կ'արձանագրենք պարզապէս, որ հայ հոգիի բնորոշ գիծերէն մէկը եղած է նաեւ ինքնագոհութեան զգացումը—ֆիզիքական գոյութեան մը ապա հովութեամբ ապրելու դաւանանքը, հետեւանք՝ նոյնքան պատմական այն միւս իրողութեան, որ մըշտական գաղթականութիւնն է, յաւիտենական որբութիւնը եւ գրկանքը, ողբերգական ամանձնութիւնը՝ անբարոյ աշխարհի մը մէջ:

Մենք շատ կը սիրենք խօսիլ մեր գոյութեան խիզախ մարտնչումներուն մասին, ստրկական կեանքի դէմ խրոխտ ծառայումներուն մասին, օտար կամ թըշնամի լուծերու դէմ հրաշալի խոյանքներուն մասին—որոնք իրողութիւններ են:

Չենք խօսիր սակայն ստրկամտական այն վիճակներուն ու նոյնքան իրական այն կրաւորականութեան մա-

սին՝ որոնք դարձ դար արիւն ու ոսկոր դարձած են հայ մարդուն մէջ, ու այսօր ալ, տակաւին, կա՛ն ու կը մնան՝ շատերու համար իբրեւ հանգանակ կեանքի եւ ֆիզիքական ապահովութեան:

Հաւաքական գոյութեան որեւէ անկիւնադարձի, կամ կեանքի ու մահուան որեւէ հարցականի առջեւ: Հայութեան այս երկու եւ նոյնքան իրական նկարագրային գիծերը շեշտօրէն ի յայտ են եկած: —Եւ եթէ այսօր «ընդ հոլը եւ ընդ ջուրը» անցնելու տագնապանքը չէ փորձաքարը ազգային մեր կամքին, *անժխտելիօրէն իմացական աղքատացումի եւ մտաւոր սնանկութեան վտանգն է*, զոր դժբախտաբար կ'անտեսենք կամ կասկածի կ'ենթարկենք, պարզապէս» մռայլ հեռանկարի մը դէմ զինուելու, զայն քաջօրէն ու մշակոյթի տէր ժողովուրդի մը վայել առուգութեամբ դիմակալելու *ներքին-ենթակայական անպօրութեամբ*:

Մեր հաստատումը միակ ու ամբողջական պատճառը չէ անշուշտ մեր ժողովուրդի իմացական կամ գրական պահանջներու ցամաքումին: Սակայն, ամենէն խորունկ ու իրական աղբիւրներէն մէկն է:

Կարելի չէ ժխտել այն փա՛ստը, որ՝ ծագէ ծագ ու հեւասպառ վագրով իր առօրեան ապա հովելու հնհնուքը ապրող մեր ժողովուրդը, սերունդէ սերունդ կը տժգունի մտքի ու հոգիի իր ծարաւին մէջ, *կ'առկայականայ*, օրէ օր կը գոհանայ «հացիւ», իր ինքնութիւնը երկրային սնունդներու հետամտութեան մէջ միայն արժեւորելու իթանունով մը—տարբեր խօսքով՝ պարպուելով հետզհետէ Հայութեան առհաւական

հոգեպաշտութենէն, օտարանալով իմացական ու մտաւոր այն ներքին իրականութիւններուն՝ որոնք իր մէջ ազգային գոյատեւումի մը իսկութիւնը կ'ամրացնէին, եւ զինք անխաթար կը պահէին՝ իբրեւ *Հայաստանեայց* ժողովուրդ, բառին ամենէն հարազատ ու ամբողջական առումովը: «Կլիմայ» մըն էր Հայկ. Արտասահմանը, մինչեւ 1940-ական թուականները, ցեղին բոլոր յաւերժական ձգտումներովը, ներքին պահանջներովը, դէպի պատմական ակունք հոսող յորձանքներովը, հետեւաբար՝ նաեւ՝ ինքնագոյ հաւաքականութիւն մը մնալու գրեթէ բնագոյական պայքարներովը: Ձեռնթափութեան եւ դասալքութեան յաճախանքը, մտքերու եւ հոգիներու մէջ, թոյն էր եւ վանելի տրամադրութիւն: Հաշտ չէինք «պատշաճելու» այն իրատեսութեան հետ, որ իմաստութիւն հռչակուած է այսօր: Կը պատուաստուէինք, առանց մեր ինքնութիւնը վրայ տալու: Կը ներդաշնակուէինք, առանց մեր հոգեկան անկախութիւնը զին վճարելու: Այսօր, ո՛չ միայն մեր ուժէն ու կամքէն վեր, ճակատագրական եւ անյադրահարելի ազդակներու բերումով է, որ կ'ընկրկինք եւ կը դանդաչենք, այլեւ՝ որոշապէս «մտածուած», գիտակցական, *հաշուուած ենթակայութեամբ մը*.— Մտաւոր ամեն լարում եւ հոգեկան ամեն սուզում վանելով, մերժելով իմացական եւ գրական ամեն ճիգ—մեղանչում պիտի չըլլար ըսել՝ «հրաժարելով Հայութենէ»:

Ընկերային դաստիարակութեան տէր ու մշակութային ժառանգութեան մը պահպանումին կոչուած ռեւէ ժողովուրդ—ինչպիսին է Հայը, կը հաւա-

տանք մենք պարտաւորութիւնը ունի, պատասխանատուութիւնը պէտք է զգայ, նոյնիսկ դժխեմ պայմաններու մէջ եւ անժխտելի բացասական պարագաներու տակ, *անտէր ու որբ չձգելու գրական եւ իմացական կեանքի իր մշակները*: Հանապազօրեայ հացին չափ չենք ըսեր, սակայն այդ հացի կողքին՝ որոշ տեղ տալով մտքի ու հոգիի սնունդին, որքան ալ վտիտ կամ համեստ ըլլայ տրուածը, որքան ալ ծանր եւ անմարսելի թուի ան իրեն՝ ժամանակի, ընկալչութեան կամ ընտանութեան տեսակէտով: Կը թօշնի, կը քայքայուի ու կը փոշիանայ՝ այն ժողովուրդը, որ կը մերժէ *գիտակցական ճիգը*՝ մարգըլելու մտքով ու հոգիով, ճանչնալու անհատական ու ցեղային իր ներաշխարհը, իր մտաւորականութեան տագնապանքն ու ապրումները, ու տակաւին բոլոր այն անանուն եւ անծանօթ խռովքները՝ որոնց արձագանգելու կոչումը ունին իր մեծ թէ խոնարհ գաւակները:

Պարզ կը դառնամ, բոլոր այս արագ հաստատումներու ընդմէջէն, ախտաճանաչումի այն փորձը, զոր կ'ուզենք ընել: Բաւարար յստակութեամբ ի յայտ կու գայ *դարմանելի* բաժինը իմացականօրէն ու գրականօրէն ցամաք այն իրականութեան, զոր կը պարզէ հայ կեանքը, Հայութեամբ հոծ ու հայօրէն կարենալ ապրուի ի վիճակի շրջաններու մէջ առնուազն:

Հաւանական շփոթանքները փարատին հաւանօրէն, եթէ աւելցնենք նաեւ հետեւեալը.—Մենք անոնցմէ ենք, որոնք կը հաւատան՝ թէ դրական եւ իմացական շարժումները, որքան պա-

հանջի նոյնքան եւ *մասնաւոր ճիգի* ու *վարժութեան* կը կարօտին: *Շարաւր* չէ միայն, որ մեզ ատակ կը դարձնէ որբութենէ փրկելու հայ գրագէտն ու մտաւորականը, այլեւ *պատասխանատուութեան* *ւզացումը*. այն խոր գիտակցու-

...դրական եւ իմացական շարժումները, որքան պահանջի նոյնքան եւ մասնաւոր ճիգի ու վարժութեան կը կարօտին: ...գրագէտը չէ միայն, որ գրական շարժում կը ստեղծէ, այլեւ ու մանաւանդ՝ ընթերցողը, ընթերցող զանգուածներու հետաքրքրութիւնը եւ հետեւողականութիւնը: *Անկարելի է արժէքներու յայտնաբերումը եւ անոնց տաղանդին ու խոստումներուն լրիւ պտղաբերումը, որքան աստէն որ գրագէտը իր բարոյական հեղինակութեան տակ պահող ժողովուրդը մը չունինք:*

թիւնը, թէ գրագէտը չէ միայն, որ գրական շարժում կը ստեղծէ, այլեւ ու մանաւանդ՝ ընթերցողը, ընթերցող զանգուածներու հետաքրքրութիւնը եւ հետեւողականութիւնը: *Անկարելի է արժէքներու յայտնաբերումը եւ անոնց տաղանդին ու խոստումներուն լրիւ պտղաբերումը, որքան աստէն որ գրագէտը իր բարոյական հեղինակութեան տակ պահող ժողովուրդը մը չունինք:* Բացառիկ երեւոյթ է անհատական քաջութեամբ եւ անձնական անխորտակ խառնուածքով հայ գրագէտներ ողջունել Արտասահմանեան հայ իրականութեան մէջ: Հաւանօրէն տարբեր ըլլար պատկերը, եթէ հայրենի հողը ըլլար մեր ոտքերուն տակ, կամ՝ 1890-1913ի քառորդ դարու Պոլսահայութիւնը ըլլար մեր շուրջ, ընկերային, մտաւոր ու քաղաքական իր մթնոլորտով:

Եթէ կ'ուզենք դրական շարժում եւ իմացական ընդհանուր կենցաղ ստեղծել այսօրուան Սփիւռքին մէջ, պիտի ը-

նենք այդ ճիգը, պիտի յօժարինք այդ վարժութեան, գրագէտին ու հանրութեան միջեւ հոգեկան այս անմիջական կապը պիտի *գոյաւորենք* անպայման:

* * *

Հիմնովին տարբեր են աշխարհաբաղաքական, ընկերային, տնտեսական եւ հոգեբանական այն բոլոր ազդակները, որոնց կ'ակնարկէինք քիչ անդին, գրական ու իմացական շարժումի մը չգոյութեան իբրեւ հիմնական պատճառ ցոյց տալով՝ մեր կամքէն անկախ, ճակատագրական վերիվայրումներ, որոնց ենթակայ կը մնայ տարասփիւռ Հայութիւնը:

Ո՛չ ոք կրնայ ժխտել ժողովուրդի մը *ընկերային* ընդհանուր կեցութեան ուղղակի եւ ուժեղ անդրադարձումը՝ անոր իմացական կեանքին մէջ: Այս տեսակետով, մենք մեր մտաւոր կեանքի ամենէն մաշյլ մէկ շրջանն է որ կ'ապրինք:

Ու չենք կարծեր, որ գտնուի ոեւէ հայ մարդ, որ անգիտանայ՝ թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս եւ տակաւին ի՞նչ աննպաստ շրջափոխութիւններով յղի եղան մեր ժամանակները, Հայկական Արտասահմանի բոլոր հորիզոններուն տակ:

Համախումբ ու կազմակերպ մեր գաղութները, քաղաքական եւ տնտեսական անակնկալ վիճակներու բերումով, իսկ Արեւմտեան գօտիներու յարարերաբար կայուն ու ապահով շրջազօին մէջ ապրող մեր ժողովուրդը՝ իրեն վիճակուած ընկերային շատ աւելի դաւադիր պայմաններու հետեւանքով, կը պարզեն գրական ու իմացական ճիգերու համար գրեթէ ողբերգական իրավիճակ մը: Ձուլումի երախները փա-



*Ա. շարք, նստած ձախեն աջ՝ Եղուարդ Պոյաճեան, Շաւարշ Միսաքեան, Յակոբ Օշական:
Բ. շարք, ձախեն աջ՝ Մինաս Թէօլէօլեան, Անդրանիկ Շառուկեան, Արմէն Անոյշ (Մարաշլեան):*

կել–կը թուի անկարելի փորձ ու նոյնիսկ ծիծաղելի յանդգնութիւն: Խորթացումի եւ օտարացման զառիթափերը վերածել գէթ փրկութեան կածաններու՝ համագոր կը թուի ցնորքի եւ ինքնախաբութեան:

Բոյներ շիներ Էինք, ու «կ’երգէինք»: Խորշակը եկաւ ու քանդեց զանոնք:

Նոր բոյներ շինելու յամառութիւնը ցոյց կու տանք, եւ ճիգը կ’ընենք վերըստին երգելու:

Անկարելի այս նոր «պատերազմը» մղելով հանդերձ, սակայն, չենք կրնար յանձնուիլ ապահով յաղթանակի մը երազին:

Հայութիւնը, իր պատմութեան ամենէն խաւար եւ անկարելի շրջաններուն մէջ իսկ՝ լոյսի եւ կեանքի օճախներ վառել Է լեռնային կածաններու վրայ կամ անապատներու մէջ: Տատանել Է՝ բայց չԷ ընկղմել:

Այսօր, սակայն, անհամեմատօրէն ծանր Է տագնապը՝ գոր կ’ապրի, որովհետեւ *Հայութեան Էստարթերու անարիւնութիւն մը վարակած Է իր ներաշխարհը:*

Աշխարհի ամենէն հզօր բռնատիրութիւններն իսկ չկրցան մեզ մեր ինքնութեան մէջ խորտակել–սակայն աշխարհի ամենէն հզօր ազատականներ

րը՝ մեր մէջ կրցան սնունդ ու աւիշ տալ անձնատուութեան ախտին, ստորադասութեան պատուհասիչ զգացումին, ու սեփական փառքերը օտար հարըստութիւններուն զոհելու «իրաւ տեսական» համակերպումին:

Յոս, այս աղիտայի իրողութեան մէջ, մենք գրեթէ անզօր դարձած ենք այսօր:

...չուզեցինք ու չկրցանք հայ գրագէտին եւ մտաւորականին համար ստեղծել այն ենթահողը՝ որ կարելի պիտի դարձնէր տանելի եւ մարդկօրէն հանդուրժելի պայմաններու մէջ լրիւ նուիրուիլ ստեղծագործ աշխատանքի եւ ծառայել ամբողջական գրականութեան:

Ու թէեւ զինաթափ չըլլալու գերագոյն փորձը կ'ուզենք ընել ազգովին, չենք յաջողիր սակայն խորտակելու թումբերը, որովհետեւ տարբեր նոր սէրեր, տարբեր նոր պահանջներ, տարբեր նոր փառքեր, տարբեր նոր ձգտումներ, տարբեր նոր տկարութիւններ եւ հիւանդագին հակամիտութիւններ մեզ մղած են մշակութային եւ իմացական ամեն կռուան երկրորդելու՝ շատ անելի աժան ու դիրին նուաճումներու...

Կրնամք հերքել այն հաստատումը՝ թէ մենք, այսօր, անելի «տիրացում» հաւաքականութիւն ենք, քան «ազգ» եւ ընկերային գիտակցութեան տէր ժողովուրդ:

Կրնամք ժխտել այն փաստը, որ՝ հանրային մեր կեանքի բոլոր մարգերուն մէջ, նուազ կամ առաւել չափով կայմակերպուեցանք, սակայն լուրջ որեւէ փորձ չըրինք կայմակերպելու ի-

մացական եւ մշակութային մեր կեանքը:

Պատասխանատուութենէ խուսափող, մեղապարտ հոգեբանութեան տէր մարդոց ծիծաղելի արդարացում է ըսել, թէ «հայ մտաւորականութիւն, հայ գրագէտ եւ բանաստեղծ արժանի չեղան իրենց կոչումին» ... Մինչ իրականութիւնը այն է, որ մենք, իբրեւ Հայութիւն, չուզեցինք ու չկրցանք հայ գրագէտին եւ մտաւորականին համար ստեղծել այն ենթահողը՝ որ կարելի պիտի դարձնէր տանելի եւ մարդկօրէն հանդուրժելի պայմաններու մէջ լրիւ նուիրուիլ ստեղծագործ աշխատանքի եւ ծառայել ամբողջական գրականութեան:

Հարիւրաւոր աղօթատեղիներ կառուցեց Հայութիւնը. վարժարաններ շինեց. ակումբներ եւ մարզադաշտեր բացաւ. հաճոյքի ու ժամանցի վայրեր ապահովեց...:

Սակայն՝ չկրցաւ տնտեսապէս ապահով եւ լրիւ չափով ձեռնտու որեւէ Հրատարակչական հիմնել, որպէսզի հայ գրագէտը ապաւէն մը գտնէր իր գործերը ո՛չ միայն հրատարակուած տեսնելու, այլեւ տարածելու զանոնք, վաճառելու այնպէս՝ ինչպէս վայել է Մշակոյթի եւ Գրականութեան ճակատագիրը ազգովին հովանաւորող հաւաքականութիւններու:

Օ՛, գիտենք, գիտենք...

Պէտքէն ու Իրանէն մինչեւ Արեւմտեան ափեր «հատարակչականներ» հաստատուած են, մէկուն ու միւսին անձնական նախաձեռնութեամբ: –Եթէ անոնք ալ չըլլային, հաւանօրէն ցարդ ծամէինք այսօր...

Մեր խօսքը տպագրող հրատարա-

կիչներու մասին չէ, այլ Հրատարակչական Հաստատութիւններու կամ Հաստատութեան մը, որ ի վիճակի պիտի ըլլար երկրէ երկիր ու գաղութէ գաղութ ցանց հիւսելու, հայ գիրքը հասցնելու հայկական երդիքներու, ի հարկին շըրջուն գործիչներով *սպահովելու ընթերցող հասարակութեան մը գոյատրումը*, առանց ակնկալելու՝ որ... ինք, հայ մտաւորականը, աղերսարկու դառնայ կամ «խնդրանք» որոնէ ծագէ ծագ, յաճախ նաեւ նուաստացուցիչ վերաբերումի առարկայ դառնալով:

Կրնամք ուրանալ, թէ չգտնուեցաւ հայ մեծահարուստ մը, որ ասպարէզ իջներ ու *պայման դներ* իր կէս կամ մէկ միլիոնը միմիայն ու բացառապէս յատկացնելու՝ *հայ գրագէտը եւ հայ մտաւորականը նիւթապէս ինքնասպահ դարձընելու գնով գրական երկունքի եւ աշխատանքի լծելու նպատակին:*

Հապա ի՞նչ ըսել Պարոնեաններուն, Օտեաններուն, Վարուժաններուն, ու այն «բիւրք բիւրոց»ին, որ տաժանագին պայմաններու մէջ եւ յաճախ պատառ մը հացի կարօտ՝ ստեղծագործեցին, ծառայեցին Հայութեան ու մեռան բաց կոպերով... պիտի ըսեն հիմա՝ մեզմէ աղէկները...

...Անշուշտ առանց անդրադառնալու, թէ անոնք, այդ սերունդները, նորագոյններէն շատ աւելի բախտաւոր էին, ու կեանքը եւ ստեղծագործական պայ-

մանները անհամեմատօրէն տարբեր պահանջներով կը զարգանային այդ օրերուն:

Հիմա, ամէն ինչ ըսելու հարկը չենք տեսներ: Եւ կը կարծենք, թէ գրական պատմաշրջաններու տարրական ճանաչում մը բաւ է, այս կարգի փաստաբանութիւններ ժամանակավրէպ եւ անտեղի հիմնաւորում նկատելու համար:

Մէկն ու միւսը մեղադրելու նպատակով չէ, որ ըրինք այս հաստատումը: Այլ պարզապէս ըսելու համար, թէ մենք, հայ ժողովուրդ, ամէն տեղ՝ ամէն բան լաւ սերտելով հանդերձ, գրական եւ իմացական շարժում ստեղծելու նախատարերքը կամայ-ակամայ անտեսեցինք, ու այսօր միայն, երբ ջուրը ջաղացքն է տարած, մետասաներորդ վայրկեանի ճիգը կ'ընենք ջախջախը փրկելու...:

* * *

Շա՛տ յոռետես եղան մեր խորհրդածութիւնները:

Ուրիշներ կրնան աւելի լաւատես ըլլալ: Մենք այսպէս կը տեսնենք՝ այսպէս կը հաւատանք:

Եւ պատրաստ ենք Լացի Պատ երթալու եւ քաւելու մեր սխալը, եթէ մէկը կարենայ համոզել մեզ՝ որ մեր ակնոցը սեւ է...

(Թիւ 2, 1968)

ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ԶՐՈՅՑ՝ ՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Քարելի է ըսել, թե ընդհանուր դժգոհություն կայ Սփիւռքի գրականության մասին:

Կան շատեր, որոնք ընդունելով հանդերձ մեր անհատ գրողներու նըլաճումներն ու յաջողությունները, գոհ չեն երբեք մեր գրականության ընդհանուր վիճակէն:

Անշուշտ ունինք շնորհալի եւ տաղանդաւոր գրողներ, մէկէ աւելի: Սակայն, չենք կրնար մատնանշել գրական գործ մը, որ թուական բանար: Այսօր ապրող սերունդը, որ հին փորձառութիւնը չունի, կը մտածէ միշտ Չօիրապներու եւ Բաշալեաններու մասին եւ կը փնտռէ անոնց գործերուն առաջ բերած ցնցումները, կամ կը մտածէ Մեծարենցի մը, Սիւսանթոյի կամ Վարուժանի հատորներուն մասին եւ մըլտաւորականութեան անվերապահ գրնահատութեան, նոյնիսկ հիացումին վրայ:

Իսկ երէկուան նոր սերունդը, որ արդէն միջին սերունդ դարձած է այսօր, քիչ անգամ կ'անդրադառնայ հին գրողներուն եւ անոնց ապրած շրջանին տիրող մթնոլորտին, եւ կը փնտռէ զգայացունց նոր գործեր, որոնք յեղաշրջէին մեր գրականութիւնը:

Ան, անդրադառնալով օտար, ֆրանսական եւ անգլեւամերիկեան գրական

գործերուն, կը պահանջէ իրաւամբ, որ հայ գրագէտներն ալ ատոնց հաւասար գործեր տան մեր ժողովուրդին: Չէ որ տաղանդը մենաշնորհ չէ որեւէ ժողովուրդի:

Բարերար է այս դժգոհութիւնը, որովհետեւ ամբողջական գոհունակութիւն մը, խաղաղ ու անդորր, հոգեկան ու իմացական լիճեր պիտի կազմէր, առանց փոթորիկի: Մինչ այլքն ու ալեկոծութիւնը անհրաժեշտ են, անդունդներու կարգին բարձունքներ ալ ճանչնալու, ունենալու համար:

Այսօր, առհասարակ, գլուխ-գործոցներ կը փնտռենք եւ չունինք: Անշուշտ, ունինք գործեր, որոնք ուշադրութիւն կը գրաւեն, սակայն, չունինք գործ մը, որ համազգային ուշադրութեան, հետաքրքրութեան առարկայ դառնար, գործ մը՝ որ անպատճառ ունենալ ուզէինք, փնտռէինք եւ չզրտնէինք, կամ դժուարութեամբ ձեռք բերէինք:

Ատեն մը մեծ ուշադրութիւն գրաւեց Շահան Շահնուրի գործը, «Նահանջը առանց երգի», բայց շրջանի մը միայն կը պատկանէր ան, եւ հեղինակին յաջորդ գործերը չբացին նոր հորիզոններ: Համաստեղի գիւղական կեանքէն քաղուած պատմութիւնները, կորսուած կեանքի մը բաբախուն ու հա-

րագատ պատկերացումով, ուշադրութեան առարկայ եղան: Երկար ատեն՝ «Գիւղը» եւ «Անձրեւ»ը պահեցին իրենց հմայքը, քաղքենի դարձած մեր ժողովուրդին համար, որ կը յիշէ միշտ հայ կորսուած գիւղերուն քաղցրութիւնները: Սակայն, իր յաջորդական գործերը յաւելեալ հմայք մը չբերին, հակառակ անոր որ «Սպիտակ ձիաւոր»ի Ա. հատորին մէջ մասնաւորաբար, ստորագրեց ան Էջեր, ուր հայ կեանքը կը յորդի եւ ուր իր պատկերալից ոճը կը հասնի իր լրումին: Համաստեղ մնաց հայ գիւղին արուեստագէտ պատկերացնողը:

Ուրիշներ, Վահէ Հայկ, Բ. Նուրիկեան եւայլն, նոյն աշխարհէն, յաջողութիւններ արձանագրեցին եւ ուշագրաւ դարձան լեզուի, կեանքի եւ պատկերներու կենդանութեամբ, սակայն չբացին նոր թուականներ:

Հակառակ այս բոլորին, սակայն, Թլկատինցին, Չարդարեանը եւ Հրանդը–Կիւրճեանը–պահեցին իրենց անունն ու հմայքը, չնայելով որ անոնց գործերուն մէջ չեն պակսիր գորշ Էջեր:

Օշական, իր կարգին, գիւղէն տըլած իր պատկերներով եւ յետոյ, մանաւանդ իր «Մնացորդաց»ով, ընդգրկեց հայ կեանքը, լայն գիծերով, իր տագնապներով ու վիշտերով, հոգեկան խորունկ զգացումներով ու վերլուծումներով, սակայն իր լեզուական դժուարութիւններուն պատճառով քիչերու հեղինակը դարձաւ: Անտեսուեցաւ «Մնացորդաց»ը, եւ փնտռուեցան միայն գիւղական պատկերները, իրենց ընտանութեան, պարզութեան եւ պսպրղուն գոյներուն համար: Մինչդէռ «Մնացորդաց»ը սահմանուած էր ըլլալու

գլուխգործոց մը, եթէ ամբողջանար եւ զիջուէին կարգ մը խորհրդածական Էջեր, թէեւ շատ արժէքաւոր իրենք իրենց մէջ:

... չունինք գործ մը, որ համազգային ուշադրութեան, հետաքրքրութեան առարկայ դառնար, գործ մը՝ որ անպատճառ ունենայ ուզէինք, փնտռէինք եւ չգտնէինք, կամ դժուարութեամբ ձեռք բերէինք:

Կ. Չարեան իր գրութիւններով, պսպրղուն ոճով ուստումներ փորձեց եւ յաճախ զարմացուց իր ընթերցողները: Սակայն, մինչեւ իսկ իր գլխաւոր գործովը՝ «Նաւը լերան վրայ», չյաջողեցաւ հայ ժողովուրդին փնտռած հեղինակը դառնալ:

Կան անշուշտ ուրիշներ ալ, ինչպէս Վիգէն Գլակ, որուն կարգ մը պատմըլածքները գեղարուեստական արժէքի հասան. Յ. Մնձուրի, որ դարձեալ հայ գիւղը եւ խոնարհ մարդիկը տուաւ, իր միամիտ ու հաճելի պատմումներով, ձմեռ զիշերներու յատուկ:

Արամ Հայկազ, իր պատերազմի ու պայքարի յուշերով, գրականութեան սահմաններէն ներս մտաւ ու պատուաւոր տեղ գրաւեց, որովհետեւ իր յուշերուն մէջ գիտցաւ ոչ միայն իր, այլեւ իր ժողովուրդին վիշտն ու պայքարը պատկերացնել պարզ ու հաստատ գիծերով, արցունք ու ծիծաղ իրար խառնելով յաճախ: Իր յուշերուն մէջ թէ առանձին պատմութեան ընթացքին, իր ներկայացուցած դէմքերը մասնականութեան վրայ, որ պիտի փնտռուի միշտ:



Չախեն աջ՝ Երուսաղի Պոյաճեան, Վահէ Օշական, Գուրգէն Մխիթարեան եւ Պողոս Սևապետան

Կարելի է նոր անուններ յիշել դեռ, ինչպէս Շ. Նարդուհին՝ իր հեքիաթներով, Չարդարեանը՝ իր պատմուածքներով, Նշան Պէշիկթաշլեանը իր երգիծական դէմքերով, Կ. Փօլատեանը իր «Կը հրաժարիմ Յայութենէն» գիրքով, Կ. Մեհեանը, Եդ. Պոյաճեանը, եւ այլն: Կարելի չէ բոլոր անունները յիշել, չմեղադրուելու համար «կողմնակալութեամբ» սակայն, կարելի է ըսել, որ եթէ ոչ տրուած կեանքով ու կառոյցով, գոնէ լեզուով ու ոճով, Սփիւռքի գրականութիւնը նուաճումներ արձանագրած է, երէկուան հետ բաղդատելով: Ամալութեան մէջ չէ քերթողութիւնը, ոչ ալ աղբատ, սակայն քանի մը անուններ միայն կան, որոնք փորձած են հայ ժողովուրդի սիրտը գտնել եւ անոր բարա-

խումները տալ, ինչպէս Մ. Իշխան, Ա. Շառուկեան, Վահէ-Վահեան, Բ. Թօփալեան, Ս. Սահակեան, Քաջարենց, եւ այլն, որոնք սակայն իրենց առաջին գործերուն կը պարտին իրենց անունն ու հմայքը:

Ուսումնասիրական եւ քննադատական հատորները, Օշականէն սկըսած մինչեւ Կ. Սասունի, Յայր Գանաշեան եւ մանաւանդ Մ. Թէօլէօլեան, պատկերացուցած են եղածը միայն, առանց փորձելու նոր ակօսներ բանալու ստեղծագործ աշխատանքի, որ պիտի գայ ապահովաբար վաղը, խորացնելով Օշականի բացած ճամբան: Այդ ուղղութեամբ գնահատելի են Սևապետանի եւ Շահինեանի քայլերը: Մեր ներկայ գրական սերունդը, որ խառն է հիներով եւ

նորերով, մեր գրականության դանդաղումը, չըսելու համար տեղքայլը կը բացատրե տիրող ընդհանուր կացությանամբ—ցրուած հայութիւն, հայրենիքի հեռաւորութիւն, անստոյգ ապագայ եւ այս բոլորին կարգին քննադատութեան պակասը:

Կրնանք ըսել թէ այս բոլորը դեր ունին մեր գրականութեան զարգացման մէջ, սակայն, չըսենք աւելորդ, բայց անգոհացուցիչ բացատրութիւն մըն է, որ կը տրուի, որովհետեւ եթէ հայրենիքը հեռու է, կայ անոր կարօտը, խոր զգացումը հայրենիքի, որ մշտավառ կանթեղի մը նման կախուած է հայ հոգիներուն մէջ: Վարուժան եւ Մեծարենց նման հայրենիք չունէին, ինչ որ մենք ունինք:

Ցրուած է հայ ժողովուրդը, բայց կայ վերջապէս հայ ժողովուրդը, իր վիշտով, բաղձանքներով, տաղանդով ու ուսումներով, որոնք հարուստ ատաղձ են գրականութեան համար: Անըստուգութիւնը մեզի յատուկ չէ միայն, այլ կարելի է ըսել բոլոր ժողովուրդներուն: Ո՞վ կրնայ վստահութիւն ունենալ վաղուան վրայ:

Քննադատութեամբ պակասը: Այո, գորաւոր ազդակ մըն է քննադատութիւնը, եթէ միայն գիրքերու վրայ չհակի ան ու նոր հորիզոններ բանալ գիտնայ:

Գրականութիւն ու քննադատութիւն ստեղծելու համար, պիտի գիտնանք մթնոլորտ ստեղծել: Եւ յետոյ, երբ քննադատութեան մասին կը խօսինք, կը թուի թէ սխալ կը հասկնանք, շփոթելով զայն գրադատութեան հետ: Քըննադատութիւնը դատումի եւ արուեստի բխում մըն է, ինչպէս վէպը կամ

քերթուածը, ուր դատումէն աւելի տիրականը զգացումն է: Միայն դասաւորում մը ըրած ենք, քննադատութիւնը հեռացնելով բուն գրականութեան սահմաններէն. մինչ գրականութիւններուն գրականութիւնն է ան:

Քննադատութիւնը մեր մէջ, քիչ անգամ եղած է իր դերին մէջ, որ ստեղծագործական դեր մըն է: Կայ տարբերութիւն Ա. Յարութիւնեանի դիմաստւելներուն եւ քերթուածներուն միջեւ, կամ քննադատ Օշականի եւ վիպագիր Օշականի միջեւ, որոնք իրարու հետ մրցակցութեան մէջ են:

Նոյն պատկերը կայ միջազգային կեանքին մէջ: Ո՞վ աւելի հետաքրքրա-

Միայն դասաւորում մը ըրած ենք, քննադատութիւնը հեռացնելով բուն գրականութեան սահմաններէն. մինչ ան գրականութիւններուն գրականութիւնն է:

կան է, Պալզամբ մը թէ Սէնթ Պէօլ մը կամ Րէմի տէ Կուրմօն մը, նկատի ունենալով այս վերջիններուն քննադատական գործերը: Անտրէ Մօրուա, տեսակցութեան մը ընթացքին, կը պնդէր թէ նոյնքան արժէքաւոր ու յաւերժական են Սէնթ Պէօլի դէմքերը, որքան Պալզամբի գծած դէմքերը: Անշուշտ, մեկուն մէջ դատողութիւնը տիրական է, միւսին մէջ աւելի կեանքը, սակայն երկուքն ալ, հաւասարապէս արուեստի եւ ստեղծագործական շունչով կ'ապրին: Դէմքի մը պատկերացումն ու վերլուծումը նուաճ նշանակութիւն ունին, քան «Քուզին Պէթ»ի մը ստեղծումը:

Կրնանք ճիշդ նկատել այն կարծիքը՝ թէ երկուքն ալ զոյգ կ'ընթանան.

գրական որեւէ սեռ-վէպ, բանաստեղծութիւն թէ քննադատութիւն-արժէքի կը հասնի գրողին տաղանդին դրոշմով, ստեղծագործ շունչով, արուեստի ըմ-

...կը կարծուի թէ քննադատութիւնը կրնայ գրականութիւն ստեղծել: Այո, կրնայ նոր հորիզոններ բանալ, սակայն չի կրնար ներշնչումի եւ արուեստի տարրեր տալ գրողին կամ ժողովուրդին:

բըռնումով, թերեւս այն միակ տարբերութեամբ, այն որ քննադատութեան մէջ կրնան «փուշ»եր ըլլալ, որոնք կը վիրաւորեն ոչ միայն հեղինակները, այլ եւ նոյնիսկ ընթերցողները:

Ունինք Մեծարենցներ, Սիամանթոներ, Վարուժաններ ու Չօհրապետ եւ կ'ունենանք ատոնց արժանավայել քննադատական գրականութիւն, որուն խորքով կը կազմուին գրական արժէքաւոր ստեղծագործութիւնները:

Հայ գրականութեան զարգացման պայմանները՝ նոյնն են ինչ որ բոլոր միւս ժողովուրդներուն համար: Հայ գրողը պիտի տայ իր շրջապատը, իր ժողովուրդը՝ իր առօրեայ կեանքին մէջէն, անոր յաւերժական բաղձանքները արձանագրելով...

Մեր մէջ, դժբախտաբար, կը կարծուի թէ քննադատութիւնը կրնայ գրականութիւն ստեղծել: Այո, կրնայ նոր հորիզոններ բանալ, սակայն չի կրնար ներշնչումի եւ արուեստի տարրեր տալ գրողին կամ ժողովուրդին:

Այսօր հարուստ են մեր գրականութեան բոլոր ճիւղերը: Իրական քննադատ ունենալու համար պիտի փընտռենք նոյնքան իրական, անվիճելի գրագետ ու բանաստեղծ: Եւ արդէն քննադատութիւնը եկած է գրախօսին հետ, որ քանի մը գիծ միայն կրնայ տալ գրութե մը, եթէ բարեխիղճ է:

Հայ գրականութեան զարգացման պայմանները՝ նոյնն են ինչ որ բոլոր միւս ժողովուրդներուն համար: Հայ գրողը պիտի տայ իր շրջապատը, իր ժողովուրդը՝ իր առօրեայ կեանքին մէջէն, անոր յաւերժական բաղձանքները արձանագրելով եւ պիտի տայ հաւատքով ու տառապանքով: Քննադատը կը բաժնէ հայ գրողին ճակատագիրը: Հետեւաբար, կը մնայ որ հայ ժողովուրդը բառնայ իր սիրտն ու միտքը՝ հայ գրականութիւնը փնտռելու համար, գրական հետաքրքրութիւն ու մթնոլորտ ստեղծելով:

Այս ստեղծումին մէջ, գրողները, բոլորը, կոչուած են իրենց դերը կատարելու: Ամէն սերունդ իր մտահոգութիւնները, բաղձանքները եւ զանոնք լուծելու միջոցները ունի:

Ապրող սերունդը ինչ կը մտածէ այս մասին:

Տժգոյն են մեր օրերը, եւ հոգեկան ու իմացական արժէքները չունին անցեալի փայլուն հրապոյրը: Պիտի գիտնամք ստեղծել զանոնք. կը հաւատամ, եթէ հայ գրողները ձեռք տան հայ ժողովուրդին եւ մշակոյթի բարձունքները առաջնորդեն զայն:

(Թիւ 1, 1962)

ՊԱՏԱՍԽԱՆՆԻ «ԲԱԳԻՆ»Ի ՀԱՐՑԱՐԱՆԻՆ

ԲԵՆԻԱՄԻՆ ԹԱՇԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑՈՒՄ. Քաղաքականությունը, իբրև եղելություն ու նաև մեր քաղաքակրթության մեկ երեսը, ի՞նչ չափով կը հետաքրքրե ձեզ: Դուք գրագետը պատասխանատու կը նկատե՞ք աշխարհի քաղաքական արդի կացությունն համար:

ՊԱՏԱՍԽԱՆՆԻ. Քաղաքականությունը զիս կը հետաքրքրե իբրև «եղելություն», բայց ոչ՝ իբրև «մեր քաղաքակրթության մեկ երեսը»: Քաղաքականությունը չէ, որ քաղաքակրթություն կը ստեղծե. ընդհակառակն, քաղաքակրթությունն է, որ քաղաքականություն կը ստեղծե: Ո՛րքան ժողովուրդները քաղաքակրթուին, այնքան կը շեշտուի քաղաքական գիծը իրենց մեջ: Անքաղաքակիրթ ժողովուրդները մեկ քաղաքականություն ունին, զոր կրնանք կոչել «հացի խնդիր»:

Ես գրագետը պատասխանատու չեմ նկատեր աշխարհի քաղաքական ոչ ներկայ, ոչ անցեալ, ոչ ալ ապագայ կացության համար:

Շէյքսպիրը չէր որ ստեղծեց Բրիտ. կայսրությունը, եւ Պայրընը չէր, որ այս կայսրությունը վերածեց հասարակապետության (քամընուելթ):

Ենթադրենք, որ ես ալ գրագետ եմ, —բայց ենթադրենք միայն: Թե՛ Հայաստանի, թե՛ Արտասահմանի եւ թե՛ աշխարհի այս կամ այն մասին մեջ գեշ կամ աղէկ գործեր կը կատարուին: Ես մասնակից չեմ, ոչ ալ խորհրդակից եմ «գեշ»ին, ինչպէս «աղէկ»ին ալ: Ինչո՞ւ ուրեմն ես զիս պատասխանատու պիտի նկատեմ կատարուած գործերուն եւ ստեղծուած կացության համար:

Սակայն, *նիւթական* պատասխանատուութենէն վեր՝ կայ բարոյական պատասխանատուութիւնը: Կամ պատասխանատուութիւնս նիւթական չէ, *բարոյական* է: Աղէկ գործերը չգնահատեցի, գեշ գործերը չպարսաւեցի: Գնա-

Գնահատելով կամ պարսաւելով՝ ես քաղաքականությունը ըրած չեմ ըլլար, բայց արթուն եւ զգաստ պահած կ'ըլլամ քաղաքագետները եւ նպաստած՝ քաղաքական կացության մը...

հատելով կամ պարսաւելով՝ ես քաղաքականությունը ըրած չեմ ըլլար, բայց արթուն եւ զգաստ պահած կ'ըլլամ քաղաքագետները եւ նպաստած՝ քաղաքական կացության մը, որ, իբրև «ագ-

զային եղելութիւն», պետք է շահագրգռեալ զիս:

Գրականութիւնն ու քաղաքականութիւնը գործունէութեան անջատ կալաւածներ կը նկատուի:

Այո... գրականութիւնը տարբեր բան է, քաղաքականութիւնը՝ տարբեր, ինչպէս որ տարբեր բաներ են նկարչութիւնը եւ երաժշտութիւնը (թէեւ երկուքն ալ արուեստ են): Կրնամք պահանջել, որ նկարիչը նաեւ երաժիշտ ըլլայ: Ո՛չ, չենք կրնար: Ինչո՞ւ ուրեմն պիտի պահանջենք, որ գրագետը նաեւ քաղաքագետ ըլլայ:

Վահան Թէքէեան եւ Վահան Տէրեան... ինչ որ ըրին, ըսին ու գրեցին իբրեւ քաղաքացի, իրենց հետ մեռաւ, իսկ ինչ որ ըրին, ըսին ու գրեցին իբրեւ պոետ, կը մնայ անկորնչելի:

Բայց կան դպրութեան սպասարկուներ, որոնք կամովին կը միացնեն այս երկուքը, — գրականութիւնն ու քաղաքականութիւնը: Ո՛չ միայն կը միացնեն կամ կը նոյնացնեն, այլեւ առաջնութիւնը կու տան քաղաքականութեան: Գրականութիւնը, — կ'ըսեն, *պարտիական* է, ինչ որ մօտաւորապէս կը նշանակել ըսել՝ գրականութիւնը քաղաքականութիւն է կամ քաղաքականութիւնը գրականութիւն է:

Ես դեմ եմ այս տեսակետին: Ատեն մը Սմբատ Շահագիզները կ'ըսէին. — *Նախ՝ քաղաքացի, ապա միայն՝ պոետ*: Անկէ կը շահի «քաղաքացի»ն, բայց կը տուժէ գրագետը: Ինծի կը թուի, թէ

պետք է շրջել այս նշանախօսքը գրագետներուն համար եւ ըսել. — *Նախ՝ պոետ, ապա միայն քաղաքացի*:

Վահան Թէքէեան եւ Վահան Տէրեան մասնակից էին իրենց շրջանի քաղաքական կեանքին, այսինքն՝ քաղաքականութիւն կ'ընէին: Ինչ որ ըրին, ըսին ու գրեցին իբրեւ քաղաքացի, իրենց հետ մեռաւ, իսկ ինչ որ ըրին, ըսին ու գրեցին իբրեւ պոետ, կը մնայ անկորնչելի:

Երկու Վահանները գրականութեան պատմութեան անցան ոչ թէ իբրեւ քաղաքացի, այլ իբրեւ բանաստեղծ ու գրագետ: Քաղաքացին մոռցուեցաւ, սակայն չմոռցուեցաւ բանաստեղծը:

Երբ մէկը վէպ մը գրէ՝ քաղաքական տեսակետ մը պաշտպանելու համար, իր վէպը զուտ գրականութիւն չէ, անզուտ գրականութիւն է, թէ՛ զ: Զկամն արդէն *ռոման ա թէպէր*, ինչպէս Էմիլ Զոլայի «Արգասաւորութիւն»ը եւ կարգ մը այլ վէպեր:

Կարելի է ներկայիս ամբողջովին ապաքաղաքական գրականութիւն մը մշակել: Կրնայ գրագետը ինքզինքն ու իր գործը հեռու պահել աշխարհը հետաքրքրող քաղաքական հարցերէն: Պէտք է գրագետը ինքզինք հեռու պահէ քաղաքականութենէն: Պէտք է, որ իր գործը հեռու պահէ քաղաքականութենէն ու անոր ազդեցութիւններէն:

Այս երրորդ հարցումին մեջ կան չորս տարբեր հարցումներ: Բոլորին ալ կըրնամ պատասխանել մէկ հաստատականով. — Այո:

Այր, կարելի է ամբողջովին ապա-
քաղաքական գրականություն մը մշա-
կել: Այր, գրագետը կրնայ ինքզինք եւ
իր գործը հեռու պահել քաղաքակա-
նությունէ եւ քաղաքական ազդեցու-
թիւններէ:

Պետրոս Դուրեան, Տիրան Չրաք-
եան, Միսաք Մեծարենց, Մատթէոս
Չարիֆեան ապաքաղաքական գրա-
կանություն մշակած են, իրենք զիրենք
եւ իրենց գործը հեռու պահած են քա-
ղաքականությունէ եւ քաղաքական ազ-
դեցություններէ: Աւելի բան մը պիտի ըլ-
լային, աւել լի պիտի շահէին իրենք եւ ի-
րենց գործը, եթէ այսպէս չընէին: Չեմ
կարծեր:

Չօպանեան, Թէքեան, Տէրեան,
Չարենց քաղաքականություն ըրած են,
քաղաքական շեշտ հետաքրքրություն-
ներ ունեցած են, իրենք զիրենք հեռու
պահած չեն քաղաքականությունէ եւ
քաղաքական ազդեցություններէ: Ինչ
կը մնայ իրենցմէ քաղաքական գծով,
ՈՉԻՆՉ: Իրենց արժէքը անոր մէջ չէ,
որ քաղաքականություն ըրած են, այլ
անոր մէջ է, որ ապաքաղաքական գրա-
կանություն մը մշակած են: *Պոեմ ա թէպ*
կամ *ռոման ա թէպ* գրած չեն, գրակա-
նության մէջ քաղաքականություն մըտ-
ցուցած չեն, յոռեգոյն պարագային՝ կըր-
ցած են քաղաքականությունը գրակա-
նացնել եւ ոչ թէ գրականությունը քա-
ղաքականացնել:

***Պէտք է արդէօք գրագետը անձնա-
պէս քաղաքական գործօն դեր մը կա-
տարէ, թէ ոչ պէտք է բացարձակա-
պէս հեռու մնայ քաղաքական գոր-
ծունէութենէ: Կայ արդէօք այս երկու-***

***քին համադրութեան կարելիութիւն,
միջին ճամբայ:***

Գրագետը անկասկած կրնայ—եւ իրա-
ւունք ունի—անձնապէս քաղաքական
գործօն դեր մը կատարել: Լամարթին
պետական դէմք էր, կառավարութեան
եւ սահմանադիր ու օրէնսդիր ժողով-
ներու անդամ էր, Վիկտոր Յիւլիօ երես-
փոխան էր: Փոլ Բլօտել՝ դեսպան: Մե-
րիններէն Գրիգոր Չօհրապ խորհրդա-
րանի անդամ էր, Յրանտ Ասատուր դա-
տաւոր էր, Նիկոլ Աղբալեան նախա-
րար էր, Լեւոն Շանթ քաղաքական
բնոյթ ունեցող պաշտօններ վարած է:

Ասիկա այսպէս ըլլալով հանդերձ,
Լամարթին կը յիշուի իբրեւ բանաս-
տեղծ, Յիւլիօ վիպագիր կը մնայ, Բլօտել՝
բանաստեղծ, Չօհրապ՝ նորավիպա-
գիր, եւ այլն:

Կրնանք ըսել, որ եթէ քաղաքական
գործօն դեր մը չկատարէին, այս մար-
դիկը կրնային իրենց տուածէն աւելի
բան մը տալ, իրենց եղածէն աւելի բան
մը ըլլալ: Բարեբախտությունը հոն է, որ
գրականութեան մէջ քաղաքականու-
թիւն չորին, այս երկուքը իրարու հետ
չփոթեցին, *ռոման ա թէպ* կամ *պոեմ ա
թէպ* չգրեցին:

Պիտի ըսէք հաւանաբար,— հապա
Չարենցը, որ խելագարուած ամբոխնե-
րու մասին *պոեմա* գրեց: Բայց Չարեն-
ցը բանաստեղծ է «Ես իմ անոյշ...»ով:
«Խելագարուած ամբոխներ»ն ալ գրա-
կանություն է անշուշտ, բայց *ա թէպ*
գրականություն է, բան մը պակաս է,
բանով մը պակաս է «Ես իմ անոյշ...»էն:

Ըսենք, իբրեւ լրացում, որ գրակա-
նության եւ գրողին մէջ նախապայմա-

նը տաղանդն է: Չարենց ուներ այս նախապայմանը, որուն հպատակ են թէ՛ «Խելագարուած ամբոխներ»ը եւ թէ՛ «Ես իմ անոյշ...»ը:

Ինչո՞վ կը տարբերի հայ գրագետը եւրոպացի գրագետէն: Կո՞նք քաղաքակրթական դեր մը կամ պարտականութիւն մը հայ գրագետին համար, հայ սպորտի քաղաքական պայքարին մէջ:

Յայ գրագետը ո՞չ մէկ բանով կը տարբերի եւրոպացի գրագետէն, թէ՛ իբրեւ արժէք, թէ՛ իբրեւ արուեստի մարդ: Կրնայ առարկուիլ, թէ եւրոպացի գրագետը ինքնապահ է, ապրուստի հոգ չունի, իր գրած վէպը, թատերախաղը կամ բանաստեղծութիւնները հրատարակող եւ սպառող հրատարակչական տուններ կան:

Այս առարկութիւնը, գոնէ իր ամբողջութեան մէջ, ճիշդ չէ: Ֆրանսացի բանաստեղծ մը՝ Լէոն Տէօպէլ տարիներ առաջ անձնասպան եղաւ, որովհետեւ անօթի էր, անտուն եւ անօթեւան:

Յայաստանի մէջ հայ գրագետը պետական պաշտօնեայ է. իբրեւ հեղինակ՝ կը վարձատրուի այնքան, որքան անհրաժեշտ է համեստ, երբեմն նոյնիսկ... անհամեստ ապրուստ մը ապա-

Գրագետը անհատական «ես» մըն է, կուսակցութիւնը հաւաքական «ես» մըն է, աւելի ճիշդ՝ «մենք» մըն է:

հովելու համար:

Եւրոպացի գրագետը չունի այս առաւելութիւնը եւ կ'ապրի ո՞չ այնքան իր գրածով, որքան կողմնակի պաշտօն մը

վարելով կամ ուրիշ աշխատանք մը կատարելով (բացառութիւններ կան անշուշտ, սակայն բացառութիւնը կանոն չէ):

Յայ ազգի քաղաքական պայքարին մէջ գրագետն ալ դեր մը եւ պարտականութիւն մը կատարելու կոչուած է անկասկած: Այս դերը պետք է կատարէ թէ՛ իբրեւ գրագետ, թէ՛ իբրեւ հայ: Իբրեւ գրագետ՝ ծառայելով հայ մշակոյթին (հայ մշակոյթին ծառայելն ալ իւրատեսակ քաղաքականութիւն է), իբրեւ հայ՝ ծառայելով հայ դատին (Յայ դատին ծառայելն ալ իւրատեսակ գրականութիւն է):

Կարճ մը գրագետներ այն համոզումը ունին, որ եթէ կուսակցութեան մը անդամագրուին, կաշկանդած կ'ըլլան իրենց ապատրութիւնը, որով չեն կրնար ծառայել իրենց կոչումին: Ինչ է ձեր կարծիքը:

Բնաւ անպատեհութիւն մը չկայ, որ հայ գրագետն ալ անդամագրուի որեւէ կուսակցութեան, համաձայն իր համոզումներուն եւ այն գաղափարականին, որուն կը հաւատայ եւ որուն բաժնեկից է կամ կուսակից: Ես շարքային դաշնակցական եմ, բայց ասիկա պատճառ մը չէ, որ չկարենամ ծառայել իմ կոչումիս եւ կամ կաշկանդուած ըզգամ իմ ազատութիւնս:

Գրագետը անհատական «ես» մըն է, կուսակցութիւնը հաւաքական «ես» մըն է, աւելի ճիշդ՝ «մենք» մըն է: Իբրեւ անհատ՝ մեր ուժերը սահմանափակ են, իբրեւ կուսակցութիւն՝ անսահմանափակ են: Ինչ որ չեմ կրնար ընել իբ-

րեւ անձ, կրնամ ընել իբրեւ կուսակցութիւն կամ կուսակցութեան մը պատկանելով:

Կուսակցութիւնը շղթայ մըն է, անհատը օղակ մըն է միայն: Աւելի լաւ է շղթային մաս կազմել, քան առանձին օղակ մը ըլլալ:

Անդամագրուելով այս կամ այն կուսակցութեան, կաշկանդած չենք ըլլար մեր ազատութիւնը: Ես այն կարծիքը ունիմ, որ ազատութիւնը սանձարձակութիւն չէ: Կուսակցութիւնը ապահովագրութիւն մըն է սանձարձակութեան դէմ: Աւելի լաւ է հաւաքական պատասխանատուութիւններ ստանձնել, քան անհատական: Ուստի աւելի լաւ է կուսակցական ըլլալ, քան չըլլալ:

Խորհրդային աշխարհին մէջ կուսակցութիւնը կ'իշխէ. այդ աշխարհէն դուրս՝ կուսակցութիւնը կը ծառայէ: Մեր ժողովուրդը, ինչպէս ամէն քաղաքակիրթ ժողովուրդ, իշխողներու պէտք

Մեր ժողովուրդը, ինչպէս ամէն քաղաքակիրթ ժողովուրդ, իշխողներու պէտք չունի, ծառայողներու պէտք ունի:

չունի, ծառայողներու պէտք ունի: Բայց ասիկա բարդ խնդիր է. ուրիշ առիթով մը թերեւս անդրադառնամ այս հարցին: Առ այժմ՝ այսքան:

(Թիւ 2, 1963)

ԲԱԲԳԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՆՈՐ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒՔԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Զախամարդէն մինչեւ այսօր-
 ւան մարդը՝ հոյովոյթով, փո-
 փոխում, յեղաշրջումներ, յե-
 դափոխութիւններ, պահպանում
 ձեռք բերուածի, պահպանողակնու-
 թիւն, դասականի փնտռումը, դասա-
 կանի արհամարհանք, նորի ծարաւ,
 փնտռումը նոր ճամբաներու՝ արդիւնք
 են մարդկային մտքի առջեւ շարունակ
 բարձրացող ու միշտ նոր հարցումնե-
 րուն, մարդկային հոգիին արձանագ-
 րած նորանոր թռիչքներուն ու ներսու-
 գումներուն:

Փնտռումը բրբ տեղի կ'ունենայ
 որպէս արուեստական ճիգ, արդիւնք
 ինքնատիպ երեւալու մարմաջի, ամլու-
 թեան սերմը իր հետ կը բերէ: Երբ իրօք
 չգոհացած ներաշխարհի մը արդիւնքն
 է, երբ արտայայտութեան միջոցները
 անբաւարար կը թուին արուեստագե-
 տին, իր միտքն ու ապրումները արտա-
 յայտելու համար, այն ժամանակ է որ
 նորի փնտռումը կը տանի իրական
 նորութեան, արժէքին:

Արուեստագէտը, ծնունդ իր դա-
 րուն, ժամանակին՝ ժամանակներու ըմ-
 բընումներու փոփոխութեանց հետ
 կը բալէ, կ'ըլլայ արտայայտիչը անոնց,
 առաջինը նորը տեսնողներուն մէջ, նո-

րի պահանջը բիւրեղացնողներուն մէջ:

Գրեթէ ամէն քառորդ դար, արուես-
 տագէտներու նոր սերունդ մը կու գայ
 ըմբոստանալու գոյութիւն ունեցող ար-
 տայայտութեան ձեւերուն դէմ, գործած-
 ւած նիւթերուն դէմ, եւ կը յաւակնի ամ-
 բողջովին նոր ճշմարտութիւններ բե-
 րել աշխարհին, ամբողջովին անկոխ,
 նոր ճամբաներով: Բերուած ճշմար-
 տութիւնները երբեք չեն ըլլար ամբող-
 ջովին նոր, ոչ ալ արտայայտութեան
 միջոցներն ու գործածուած նիւթերը:
 Սակայն կը պարունակեն իրենց մէջ
 բաւարար նորութիւն, առնուազն ար-
 տայայտութեան ձեւերուն մէջ, գոհա-
 ցընելու համար ծարաւը, փնտռումը
 աւելի հարազատ արտայայտութիւն-
 ներու: Մաս մը, բերուած նորութիւննե-
 րէն, կը տանի ժամանակի քամին, ծան-
 րը կը մնայ, որպէս դարաշրջանի մը
 արտայայտութիւնը, սերունդի մը ճըշ-
 մարտութիւնը:

Թատերական գրականութիւնը ա-
 մենէն աւելի ենթակայ է նման փնտռու-
 տումներու, քանի որ գրքէն դուրս գա-
 լով, արտայայտուածը կը դառնայ հան-
 րամատչելի (կամ հակառակը) բեմի
 չորս պատերուն մէջ, լուսարձակնե-
 րուն տակ, եւ հանրութեան նիւթական

ու բարոյական գնահատանքին անզեղ-
չելի կարիքը ունի, կարենալ գոյատեւե-
լու ու զարգանալու համար: Իսկ հան-
րութիւնը յարատեւ փոփոխութեանց
այն կաթսան է, որուն մէջ կ'ապրի թա-
տերագիրը, որուն մաս կը կազմէ, ո-
րուն ներքին պահանջները գտնելու,
պարզելու, բեմ հանելու պարտակա-
նութիւնը ունի նոյն ատեն, քանի որ
ինք մէկ մասնիկն է այդ իրականու-
թեան:

Վերջին հարիւրամեակը կը յատ-
կանշուի արագութեամբը ընկերային,
քաղաքական եւ տնտեսական փոփո-
խութիւններուն, որոնց ենթարկուեցաւ
մարդկութիւնը:

Տեղի ունեցող յեղաշրջումներուն
հետեւանքով առաջացած հոգեկան ու
մտային հաւասարակշռուած գոյավի-
ճակի խախտումը, չլուծուած հարցում-
ներու շղթայ մը, երբեմն խառնարան մը
հանեցին գրագէտին, ընթերցողին, հան-
դիսատեսին դիմաց:

Երկու համաշխարհային պատե-
րազմները խորտակեցին դարերէ ի վեր
կանգուն մնացած հաւատքի, բարոյա-
կանի, գաղափարականի, յուշարձան
դարձած տաճարները: Անոնց տեղ կա-
ռուցուած նիւթական աշտարակները,
երկնաքեր շէնքերը, այդքան ալ չդիմա-
ցան:

Նիւթը, շօշափելին, նիւթական ա-
ռաւելութիւնները չկրցան գոհացնել
մարդկութեան ծարաւը: Նիւթականի
բարելաւման անունով մղուեցան ընկե-
րային պայքարներ, առաջացան յեղա-
փոխութիւններ, սակայն մինչեւ անգամ
երբ տնտեսական պայմանները բարե-
լաւուեցան (Եւրոպա, Ամերիկա), ներ-

քին տառապանքը չմեղմացաւ, փըն-
տըռտուքը չդադրեցաւ:

Ֆրէժոյտ ազատագրեց սեռը: Սեռը
գերեվարեց նոր սերունդները: Ազա-
տագրուած հաճոյքը, չտուաւ զսպուած
հաճոյքին բաւարարութիւնը. ծարաւը
դարձաւ պապակ. նոր սերունդներուն
փնտռտուքը կը նմանի այլեւս անա-
պատի մէկ կորսուածին ջուրի ակի մը
կրթոտ փնտռտուքին:

Ամէն ինչ որ հին էր, դարերէն կու
գար, խորտակուեցաւ: Տեղը դրուած ա-
մէն նոր սահմանում, տեսութիւն, փիլի-
սոփայութիւն, տասնամեակ մը հագիւ
դիմացաւ: Քսաներորդ դարը յատկա-
նշուեցաւ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՄԲ, անա-
պահովութեան զգացումով, չյագեցող
պապակով, մշտական փնտռտուքով:

Տասնամեակները չեն բաւեր առա-
ջացնելու համար բաւարար չափով
հաստատուն եւ բաւարար թուող մար-
դոց կողմէ ընդունելի նոր փիլիսոփա-
յութիւն մը, նոր բարոյական մը, վար-
ելիակերպի նոր չափանիշներ: Որով, ի-
րարու յաջորդող տասնամեակները,
պատմութեան կ'անցնին որպէս խռո-
վայոյզ տասնամեակներ, փնտռտուքի,
վերայարմարեցման, հաւասարակշռու-
թեան մը վերահաստատման տասնա-
մեակներ:

Արդի երիտասարդութիւնը, մտա-
ւորականութիւնը, արուեստագէտներն
ու գրագէտները մանաւանդ, սուր կեր-
պով կը զգան այդ եռացող վիճակը,
կ'արձագանգեն անոր, կը փնտռեն ճամ-
բան, միջոցը, ձեւը, որ պիտի գոհացնէ
մարդկութեան մեծ մասը:

Այդ փնտռտուքը իր արձագանգը
ունի նաեւ թատերական գրականու-

թեան մէջ: Ոչ մէկ երկիր այնքան սիրահար չէ արուեստի ու գրականութեան նորանոր շարժումներու, որքան Ֆրանսան: Կը բաւէ յիշատակումը միայն իրերայաջորդ գրական դպրոցներուն՝ դասականութիւն, վիպապաշտութիւն, *Պառնասեան*ներ, իրապաշտներ, բնապաշտներ, խորհրդապաշտներ, տպաւորապաշտներ, *քիւպիս*ներ, *իւնսնիս*ներ, գերիւրապաշտներ, գոյապաշտներ, անդրադառնալու համար գրական յաջորդական դպրոցներու յաւիտենական ոլորապտոյտին, եւ անոնց դասական հայրենիքին Ֆրանսան ըլլալուն:

Ֆրանսայէն կու գայ նաեւ թատերական գրականութեան մէկ նոր ճամբաներու պահանջը, ու դեռ անձեւ խառնարանէն դուրս կը բերուին որոշ գիծեր, որոշ ուղղութիւն՝ որուն կարծես թէ պիտի հետեւին եւրոպական (եւ նաեւ ամերիկեան) թատերական գրականութիւնը:

Ֆրանսացի արդի թատերագիրները կը հաստատեն նախ հետեւեալ իրողութիւնները: Յիսուն տարի առաջ էր որ դեռ կը հաւատային «արուեստը արուեստի համար» ասացուածքին, եւ «արուեստը արուեստագետին համար» սահմանումին. այսօր, արուեստագետը այլեւս անփոխարինելի չէ, աշխարհը այնքան հարուստ է բազմազան եւ այլազան գործունէութիւններով, որ մարդկութեան արուեստի ծարաւը կը յագենայ այն, յաճախ ոչ արուեստի գործերով (*սինեմա*, լուսանկարչական ցուցահանդէսներ, երաժշտական սկաւառակներ, հեռատեսիլ, *ռատիօ* եւ այլն):

Եթէ այսօր թատրոնները գոցուին, հաւանաբար ցաւող չգտնուի, կամ քիչեր միայն:

Յաջողութեան ապահովութիւնը ունեցող, լաւ կառուցուած թատերակ գոյութիւն չունի այլեւս: Երեկուան տիպար թատերակները թատերասրահները չեն լեցնէր այլեւս, վաղուան համար գրուած թատերակը՝ նոյնպէս:

Կ'անցնինք անկայունութեան շրջան մը, եւ երկու հաստատուն շրջաններ իրար միացնելու համար (երեկը եւ վաղը) արուեստագետը պետք է քայլէ այսօր անդունդներու վրայ, պրկուած պարանի մը վկայէն:

Անցնող տասնամեակներու ընթացքին հոյակապ պատրանաթափութիւն մը առաջացած է. այսօր կասկածելի կը թուին, հանրութեան եւ մտաւորականութեան նոյնիսկ, աշխարհի բոլոր «իզմ»երը, եւ խաբկանքներով լի շաղակրատութիւնը:

Ամէն ինչ որոշ ու յստակ էր երեկ, եւ անձնաւորութիւն մը ունէր անուն մը եւ այդ անունին կապուած որոշ յատկութիւններ: Որով բառերու գործածութիւնը իմաստ մը ունէր, կը ծառայէր բացատրելու զգայնութիւն մը, մտածում մը, պատրանք մը նոյնիսկ: Այսօր, կը նշմարուի արդէն, թէ բառերը չեն արտայայտեր լրիւ իրականութիւնը: Այսօր կ'անդրադառնանք արդէն, թէ աթոռ մը աթոռ չէ, դիմագիծ մը դիմագիծ մը չէ, թէ ՆԻԻԹԸ ԿԸ ԲԱՂԱԴԴՐՈՒԻ ԵԻ ԿԸ ՏԱՐԲԱՂԱԴԴՐՈՒԻ ԱՄԷՆ ԲՈՊԷ, ԱՆԴԱԴԱՐ, որով ՎԵՐԱՑԱԿԱՆԸ ԿՐՆԱՑ ԱԲԵԼԻ ՄՕՏ ԸԼԼԱԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, քան անմիջական նկարումը տեսնուածին:

Մինչև անգամ խառնուածքներն ու տիպարները հարցական կը դառնան այսօր. ինչ ենք մենք, ո՞վ ենք մենք, ինչ կը ներկայացնէ անհատը, ինչպէ՞ս սահմանել զայն. չէ՞ որ մենք նոյն ատեն ձայն ենք, մտածում ենք, բառեր ենք, լռութիւններ՝ արծագանգներ, յիշողութիւններ, յիշատակներ, ներաշխարհի ցարդ չնշմարուած մղումներ, ժառանգաբար ստացած աննշմարելի ու անչափելի կարելիութիւններ...

Եւ դեռ կայ այն իրողութիւնը, որ մենք ամէն բոլոր փոփոխման մէջ ենք, երբեք նոյնը չենք, խորքին մէջ, ընդհանուր ձեւով միայն նոյնը մնալով հանդերձ:

Բոլոր ճշմարտութիւնները յարաբերական են այլեւս, ինչո՞ւ շարունակել հաստատունի ու մնայունի մտասէլեռումով ապրիլ:

Այս բոլոր հաստատումները կատարելէ, հարցականները դնելէ ետք, նոր ճամբաներու համար խարխափումներ տեղի կ'ունենան, կարենալ գտնելու համար ներկայ ըմբռնողութեան ամենահարազատ արտայայտութեան ձեւը, միջոցը, թատրոնի բեմերուն վրայ:

Առաջին հաստատումը որ կը կատարուի արդի թատերագիրներուն կողմէ, թատրոնի կոչումին կը վերաբերի: Հեռատեսիլն ու սինեման յղիացուցած ըլլալով հանդիսատեսները, կեանքի առօրեայ դէպքերէն բխող տրամներով կամ կատակերգութեամբ, թատրոնին պարտականութիւնը դարձած է հանրութեան դիմաց ցուցահանել այն խոր իրականութիւնները, որոնք առօրեայ կեանքին մէջ, սովորական գործունէու-

թեան մը ընթացքին երեւան չեն գար, ըլլալով հանդերձ բուն մղիչ պատճառները մեր շարժումներուն, ապրումներուն, մտածումներուն:

Թատրոնը ուրեմն, ըստ նոր ըմբռնումներուն, պէտք է դառնայ մտաւոր որոշ պատրաստութեան տէր հասարակութեան մը արուեստի վայելքին տունը, ճշմարտութեանց փնտռտուքի վայրը (յարաբերական միշտ): Հարցը ենթագիտակցականի փնտռտուքի մասին չէ, այդ ուղղութեամբ գրուած բազմաթիւ թատերակներ կան արդէն, եւ անոնք ալ սկսած են անբաւարար համարուիլ: Ենթագիտակցականի փրկուողութիւնը դարձեալ որոշ քարացում

Հեռատեսիլն ու սինեման յղիացուցած ըլլալով հանդիսատեսները, կեանքի առօրեայ դէպքերէն բխող տրամներով կամ կատակերգութեամբ, թատրոնին պարտականութիւնը դարձած է հանրութեան դիմաց ցուցահանել այն խոր իրականութիւնները, որոնք առօրեայ կեանքին մէջ, սովորական գործունէութեան մը ընթացքին երեւան չեն գար, ըլլալով հանդերձ բուն մղիչ պատճառները մեր շարժումներուն, ապրումներուն, մտածումներուն:

կը պարունակէ իր մէջ. որոշ անշարժութիւն, մինչ մարդը յարափոփոխ վիճակ մը կ'ապրի: Աւելի խորը պահուածի փնտռտուքն է, որ պէտք է նիւթ ըլլայ արդի թատերական գրականութեան:

Երկրորդ պահանջը՝ բառերեն ձերբազատուելու պահանջն է. բառերը, կ'ըսեն նորերը, այլևս ոչինչ կը փոխանցեն, իմաստագրկուած են մեծ մասով, անբաւարար յաճախ (քանի որ բառերը, գոյութիւն ունեցող բառերը՝

Պէտք չէ սարսափիլ յանպատրաստից արտայայտութիւններէ, հեղինակը դէպի հոս պէտք է առաջնորդէ դերասանները: Բեմին վրայ չորս հոգիի ներկայութիւնը ինքնին տրամ մըն է, տրամ մը կ'առաջացնէ ու աւելի մօտ է առօրեայի յարափոփոխ իրականութեան...

ծնունդն են հին դարերուն, երբ ներաշխարհի գիտութիւնը, գոյութեան անդրադարձումը անգամ, այսբան առաջացած չէր, ուր մնաց ներաշխարհէն անդին գտնուող, աւելի խոր ենթաշխարհը մարդուն):

Մէկդի պէտք է թողուլ, կ'ըսեն, նաեւ *Էնթրիկը*, անձնաւորութիւնները, ոճը, եւ մանաւանդ ԿԱՊԱԿԻՑ ԿԱՌՈՅՑԸ:

Պէտք չէ սարսափիլ յանպատրաստից արտայայտութիւններէ, հեղինակը դէպի հոս պէտք է առաջնորդէ դերասանները: Բեմին վրայ չորս հոգիի ներկայութիւնը ինքնին տրամ մըն է, տրամ մը կ'առաջացնէ ու աւելի մօտ է առօրեայի յարափոփոխ իրականութեան, երբ կաշկանդուած չըլլայ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ, ԿԱՊԱԿԻՑ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՆ պահանջներուն հե-

տեւանքով, բառերուն կաղապարումովը, այլ պահուի տեսակ մը հոսուն, յարափոփոխ վիճակի մէջ: «Շարժումին եւ անկանոնութեան մէջ է, որ նոր կարգ ու կանոնը կարելի պիտի ըլլայ գտնել» (Փեթեր Պրոլք): «Թատրոնները լեցուն պահելու համար, արդի հասարակութեան պահանջները գոհացնելու համար, պէտք է բեմին վրայ ներկայացուի կեանքէն աւելի ուժեղ բան մը, ատիկա պիտի տայ ցանկութիւնը կըրկին գալու թատրոն: Սակայն եթէ տանք վերանցական (*թրանսանտան*) բան մը, փորձ մը, պիտի առաջացնենք պահանջը՝ վերադառնալու թատրոնին: Պէտք է մոլութեան վերածուի թատրոնը, հանդիսատեսին համար» (Փ. Պրոլք):

Այս բոլորը դեռ փնտռտուք է, եւ՝ եւրոպական մտաւորականութեան համար: Մեր կեանքը չէ անցած եւրոպական կեանքի փուլերէն, եւ անբնական պիտի ըլլար մեզի համար (գէթ մեծամասնութեանը համար, մտքի հարցերով զբաղողներուն) յայտարարել թէ վերը յիշուած մօտեցումը մեր սպասածն ալ է, մեր փնտռածն ալ է: Սակայն անհրաժեշտ է կատարել ճիգ մը, ըմբռնելու համար ինչուններն ու ինչպէսները, եւրոպական գրականութեան փնտռտուքներուն, քանի որ կըրնայ վաղուան թատերագրութիւնը ըլլալ այն՝ որ այսօր դեռ սաղմնային վիճակի մը մէջ է:

(Թիւ 9, 1962)

ՏԻԳՐԱՆ ՈՍԿՈՒՆԻ

ԱՆՅՐԱԺԵՇՏ ԴԱՐՁԱԿԵՏԸ

Մագնամա: Այո:

Սա տասնամեակը՝ որ անցավ, չունի իր նախընթացը: Մտաւոր ճիգի պակաս, թե՛ զգացումներու շփոթ–ինչ կ’ուզէք ըսէք, պիտի չկրնաք բուն բառը գտնել:

Տագնապը, որուն մասին կ’ուզենք խօսիլ, գրականութեան մէկ ճիւղին կը պատկանի առաւելաբար–հիմնականներէն մէկուն.

Վէպին:

Վրանաբաղաբները պատմութեան անցած են: Սերունդ մը փոխուած է, Մնացորդացը դարձած անցեայ, ու, տակաւին, հայ գրողը (չենք համարձակիր ըսել՝ հայ վիպասանը) իր ազգային ու մարդկային զգացումներուն շրջանակը չէ ընդլայնած: Պատմութեան անդին չէ կրցած անցնիլ, ու ինչ որ տրւած է իբրեւ վէպ՝ վիպային յուշագրութիւն է կարծես միայն:

Սխալ ըմբռնուած ազգայնամոլութիւն մը տակաւին վեճի կը տանի մեզ, *տոկմաթիք* խնդիրներու շուրջ, որոնք ուրիշներու համար լուծուած կը թուին ըլլալ:

Ձեռով ազգայինի ու խորքով միջազգայինի տարագր, որ այնքան մեկան հոսեցուց յիսունական թուականներուն, հիմա թէեւ չի զբաղեցներ մեզ, բայց տակաւին ներկայ է իւրաքանչիւր գրողի մտքին մէջ:

Չենք ժխտեր իրաւունքը հայ գրողին, մեր կեանքը փոթորկող հարցերուն մէջ ապրելու, ընդհակառակն: Բայց կ’ակնկալենք, որ այդ հարցերուն ոլորապտոյտներէն դուրս, վե՛ր, փորձէ գտնել մարդկային գիծը որ, իր տաղանդին նպաստով, պիտի կրնայ ճապարհութենէ փրկել մեր վէպը:

Այս պարագային, Էականը վիպայինը չէ, այլ կեանքը: Կեանքը մարդուն, որ ազգային ու ընկերային բոլոր տարագներէն դուրս, նախ մարդ է, յետոյ ըլլալու համար... Ինչ որ կ’ուզէք:

Ամբողջ սերունդ մը, 30-40, խանդավառուեցաւ Շուշանեանով: Յափըշտակութեամբ ապրեցաւ անոր վճիտ

Չենք ժխտեր իրաւունքը հայ գրողին, մեր կեանքը փոթորկող հարցերուն մէջ ապրելու, ընդհակառակն: Բայց կ’ակնկալենք, որ այդ հարցերուն ոլորապտոյտներէն դուրս, վե՛ր, փորձէ գտնել մարդկային գիծը որ, իր տաղանդին նպաստով, պիտի կրնայ ճապարհութենէ փրկել մեր վէպը:

լեզուին եւ շքեղ պատկերներուն կախարդանքը: Բարձի գիրք դարձան իր գործերը, ու այսօր ալ, նոյն հետաքրքրութեամբ կը կարդացուին: Բայց, փորձենք գտնել վէպը, նոյնիսկ «Օրերը գեղեցիկ չեն»ի մէջ, պիտի չգտնէք: Ռոտվիտեւ, Շուշանեանին կը պակսեր

հիմնականը՝ *թեքնիքը*, որ ամուր եւ տոկուն կառոյց մը պիտի տար իր գործին: Սկսած ու վերջացնելը չգիտցող գրողի մը տպաւորութիւնը կը ձգէ ան,

Վիպասանը այն է, որ կը հետեւի ժամանակի ոգիին: Կը քայլէ քաղաքակրթութեան հետ. ետ չի մնար պայքարի ճամբաներուն վրայ, մտածումներու եւ զգացումներու յորձանքին մէջէն, կը բռնէ կեանքին տիրական գիծը, ներքին ինքնատիպ կշռոյթով մը, որ իր ոճն է:

հեղեղ մը զգացումներու, որ ջրանցքներու կը կարօտի, մեր գրական անդաստանը ջրելու համար:

Դեմը՝ Շահնուր: Չունի Շուշանեանի լեզուն եւ ուժգնութիւնը: Բայց փոխարէնը՝ ունի *թեքնիքը*: Իր գործը, անդիմադրելի մղումով մը, կը դիմէ վախճանին: Ապրումի *ափոթեոյ* մըն է «Նահանջը առանց երգի»ի վերջին էջը: Իր «Հայր մեր»ը մոռցած *փիւսով*:

Վէպը կը պահանջէ *մեթոտիկ* աշխատանք եւ յստակ աշխարհահայեացք: Վիպասանը պիտի ունենայ գորաւոր երեւակայութիւն եւ կառուցանելու ձիրք—երկու յատկութիւններ, որոնք տարապայմանօրէն պակսեցան մեր ժամանակակից վիպագրութեան:

Վիպասանը այն է, որ կը հետեւի ժամանակի ոգիին: Կը քայլէ քաղաքակրթութեան հետ. ետ չի մնար պայքարի ճամբաներուն վրայ, մտածումներու եւ զգացումներու յորձանքին մէջէն, կը բռնէ կեանքին տիրական գիծը, ներքին ինքնատիպ կշռոյթով մը, որ իր ոճն է: Ան ոեւէ մէկէն աւելի հաղորդ է

իր ժամանակի ընկերային, քաղաքական, փիլիսոփայական գաղափարներուն, ընկալչութեամբ մը, որ պիտի արդիւնաւորուի իր մասնագիտական զարգացումին արդիւնք եղող վէպին ընդհանուր յաջողութեան մէջ:

Ոչ ոք իրաւունք ունի խորթ աչքով նայելու այն մտորումներուն, որոնց խռովքը կ'ապրի արդի վէպը, գլխաւորաբար Ֆրանսայի մէջ: Վէպին դասական ըմբռնումէն դուրս, զարտուղի ճամբաներու վրայ նետուած քայլերը կենսունակութեան նշան մը ըլլալով, գրական քննադատին կը մնայ հաւնիլ կամ չհաւնիլ, բայց երբեք՝ ժխտել:

Արդի մարդուն ապրած տագնապներուն հանդէպ, ժամանակի մը մէջ, ուր արժէքներու ընդհանուր վերիվայրում մը նկատելի է երկրէ երկիր՝ արդիւնք գիտական հսկայաքայլ յառաջդիմութիւններու, վիպասանը, որ կեանքին գերզգայուն ապրողն է, չի կրնար անտարբեր մնալ:

Արագութեան դարն է այս դարը, ու գրական ըմբռնումներն ու ճաշակները տասնամեակներով չեն փոխուիր, այլ տարիներով: Ինչ որ նոր էր երէկ, հին է այսօր: Ինչ որ նոր է այսօր, վաղը պիտի ըլլայ հին: Գամիւ, Մալրօ, Սարթը՝ երէկ յառաջապահն էին ֆրանսական վէպին, այսօր արդէն դասական կը նկատուին: Ու այսպէս՝ շարունակ, այնքան աւտեն որ խելացնոր արշաւի մը մէջ է մարդկութիւնը, գիտութեան հետզհետէ բացուող խորհուրդներուն մէջ, ինքզինք գտնելու եւ իր ճակատագիրը ճշդելու ճիգով:

Այս կացութեան մէջ, ինչ կրնայ ըլլալ կեցուածքը հայ գրողին, որ կ'ուզէ

մշակել գրականության վիպային ճիւղը:

Յին սերունդը տուած է իր տալիքը, ու ականջները խցած նոր ձայներուն՝ ինքնագոհ երանութեամբ մը:

Միջին սերունդը, այն՝ որ երեսունական թուականներէն ետք սկսաւ գրել, փորձած է՝ ու ձախողած, գեղեցիկ բացառութիւններով:

Կը մնայ նորը, որ տակաւին տրամադրելի է, անդամնայիօրէն չէ մտած ճամբու մը մէջ, ուրկէ ետ դարձը՝ կը պահանջէ կամքի ու տաղանդի հագլազիւտ նպաստ մը:

Պիտի գա՞ն այդ նորերը: Անուններ չունինք տակաւին, ոչ ալ պիտի ուզենք փնտռել: Պիտի յայտնուին անոնք՝ անակնկալօրէն, երբեք չսպասուած պահու մը, ինչպէս եղած են բոլոր մեծ գրագետները, առաջին իսկ թափով: Պիտի տան նոր շունչով, նոր հորիզոններով, անհրաժեշտ դարձակէտի մը նախաքայլերը առնելու համար: Դարձակէտ՝ որ կը բխի կեանքէն, արդի կեանքէն, անոր անտեղիտայի պահանջներէն:

Ու եթէ օր մը հանդիպինք այդ նորերուն, պիտի ըլլայ անսահման մեր խանդավառութիւնը՝ հայ ստեղծագործ

հանճարի այդ ծլարձակումներուն առջեւ:

Առանց ուրանայու հինը, հինին պատուանդանը, մեր զգայարանքները տրամադիր են ընկալելու նորին թարմութիւնը, անկեղծ խօսքը, անկրկնելի գեղեցկութիւնը:

Եթէ անոնք բանան իրենց սեփա-

Պիտի գա՞ն այդ նորերը: [...] Պիտի յայտնուին անոնք՝ անակնկալօրէն, երբեք չսպասուած պահու մը, ինչպէս եղած են բոլոր մեծ գրագետները, առաջին իսկ թափով:

կան զգայարանքները, իրենց հոգին՝ միջազգային գրականութիւնը յուզող նոր ապրումներուն, եթէ անոնք մեր կեանքին կաղապարով ընդգրկեն համարողկայինը, որ ազգայինէն վեր, մարդուն յատկանիչն է, յոյսով կրնանք նայիլ ապագային ու «ներկայ» պատասխանել նոր ժամանակներու ոգին:

(Թիւ 2, 1962)

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

«ՆՈՐ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ ՄԵԶԻ»

*Գ*երկայ գրությունը դասախոսության մը պատճենն է որ Նիկողոս Սարաֆեան (1902-1972) տուած է Պրիւքսէլ, 1955ի փետրուարին: Սարաֆեանի արխիւին մէջ պահպանուած է հրատիրագիր մը, գրուած Պելճիքայի Հայ ուսանողական միութեան կողմէ (24 յունուար 1955) որ կապմակերպիչ մարմինն եղած է այս հանդէսին: Դասախոսության մասին Գրիգոր Շահինեան ակնարկութիւն մը ունի իր Վերաբաղ (Հատընտիր Յուշեր) հատորին մէջ, Պէյրութ 2004 (Էջ 230) եւ որ պատկերացում մը կու տայ այդ մշակութային եւ ընկերական ձեռնարկներու շրջարկէն:

Սարաֆեան իր խօսքը գրած է ամբողջութեամբ, 25 թուագրուած էջերու վրայ, կարծէք մէկ շունչով: Կատարած է որոշ ջնջումներ, թերեւս ալ վերագրած որոշ մասեր: Ակներեւ է գրութեան հասցնեալ բնոյթը, որ բանաւոր խօսքին նեցուկի դեր կը կատարէ, ուստի իբրեւ այդ՝ սեւագրութեան մը տպատրոսութիւնը կը ձգէ: Թերեւս ասոր համար Սարաֆեան գրութիւնը չէ տպած ինծի ծանօթ թերթերու մէջ: Պահպանուած է սակայն արխիւին մէջ (այժմ՝ Անթիլիաս):

Այս հրատարակութեան համար նկատի առած եմ բնագիրը ինչպէս որ է, պահած անոր շատ կարճ պարբերութիւնները, ինչպէս նաեւ գրագետին կետադրութիւնը, իր բնորոշ բութերու առատութեամբ: Վերջին էջին մէջ Սարաֆեան ջնջած է նախավերջին պարբերութիւնը, բայց քանի որ ատիկա անհրաժեշտ անցում մը կը թուի ասարտական տողին եւ վերծանումի որեւէ հարց չի ստեղծեր, ես ինծի թոյլ տուի պայն վերականգնել, պետեղելով սակայն ուղղանկիւն փակագծի մէջ: Նոյն ձեւով նշած եմ մի քանի բառի յաւելում, որոնք գրչի ակնյայտ վրէպներ են: Իսկ երբ հեղինակը չէ ջնջած քանի մը տող որոնք գուցէ իրենց տեղերը չեն, փոփոխութեան չեմ ձեռնարկած, պարզապէս պետեղած եմ նոյնանման փակագծի մէջ:

Բնագիրը խորագիր չունի: Հոս դրուածը պայմանական բնոյթ կը կրէ անշուշտ: Եթերը կու գան մասամբ լուսարանել ակնարկութիւններ կամ ճշդել յիշուած անուններ եւ ամբողջական ըլլալու յաւակնութիւն չունին:

Գ. Պ.

Միրելի հայրենակիցներ,
 և սիրելի ուսանողներ,

Եկած եմ խօսելու համար ձեզի՝ մեր մշակոյթին մասին: Ասկէ աւելի կարելոր
 նիւթ չեմ տեսներ՝ երբ քով քովի կու գանք օտարութեան մէջ:

Պատկեր մը տպաւորուած է մէջս՝ մանկութենէս ի վեր: Սեւ Ծովի ափին, Պոլկարիոյ և Ռումանիոյ քաղաքներուն մէջ, շատ պանդուխտներ կային: Անոնք, գաղթողները, եթէ իրենց ծանր աշխատանքէն վերջ, քով քովի կու գային, սրճարանի մը անկիւնը, հայրենական երգեր կ'երգէին յաճախ: Հայրենիքն ու հարազատները կը յիշէին իրենց գաւառական այդ երգերը երգելով, կը յուզուէին, կ'ոգեւորուէին, կը միսիթարուէին այդ երգերով:

Օտարութեան մէջ, մեր ժողովուրդը միշտ փնտռած է իր Հայրենիքը և իր աւանդութիւններով ապրած է միշտ: Թախիծով կը ժայթքէր հայրենասիրութիւնը՝ անցած ճամբաներու վրայ: Հայրենիք վերադառնալու հաւատք մը կը բարձրաւար յուզումներուն խորէն:

Առօրեայ կեանքին մէջ, աշխատանքը, վազքը հացին ետեւէն, հոգերը կը մղեն մեզ ապրիլ մեր ինքնութենէն տարբեր հոգերով: Բայց պահեր կան ուր մեր ուզած կեանքն ու մեր ինքնութիւնը կը փնտռենք: Պահանջք մըն է ասիկա: Եւ ահա, հրաշքի պէս բան մը տեղի կ'ունենայ երբ քով քովի կու գանք և մեր աւանդութիւնները կ'ոգեկոչենք: Երբեմն ժողովրդական պարզ երգ մը, իր անբացատրելի կախարդանքով, մեր հայութեան, մեր ինքնութեան կը մօտեցնէ մեզ: Պարզ, անկեղծ տաղ մը կը բանայ մեր մէջ կուտակուած յուզումներուն դռները:

Նման պահանջ մըն է որ մեզ իրարու կը մօտեցնէ այսօր՝ Եւրոպայի և Ամերիկայի մեծ քաղաքներուն մէջ: Կ'ապրինք շատ անգամ հայութենէն հեռու: Չենք լսեր մեր լեզուն յաճախ: Բայց հայութեան կարօտ մը կայ շատերու մէջ: Եւ մեր հայութիւնը զգալու, զայն պահելու ներքին պահանջով մըն է որ կը մօտենանք իրարու:

Ու մեր ազգային ոգին, մեր ներքին ինքնութեան մօտենալու լաւագոյն միջոցը մեր մշակոյթն է:

Մեզի կեանք տուող աւիշ մըն է մեր մշակոյթը:

Մեծ է իր կարելորութիւնը, ինչպէս կը տեսնէք: Անով է որ մեր ժողովուրդը կրցած է ապրիլ զարհուրելի դարերն ի վեր և ահով է որ պիտի կրնանք ապրիլ դարձեալ այս մեծ քաղաքներուն մէջ՝ ուր ձուլումն է որ կը սպառնայ այս անգամ մեզի:

Մեր մշակոյթը կ'առնէ աւելի մեծ նշանակութիւն մը՝ օտարութեան մէջ, երբ կը պակսին հողն ու հաւաքական կեանքն ալ: Մեր մշակոյթով է միայն որ պիտի կրնանք ոտքի պահել ջարդէն, աքսորէն, օտարութենէն և հիասթափութիւններէն յոգնած հայ ոգին: Որովհետեւ ան արտայայտութիւնն է մեր ժողովուրդին ոգեկան գեղեցկութիւններուն և ոգեկան գեղեցկութիւններն են որ կ'ապրեցնեն մեզ առաւելապէս:



Լուսանկարի կեդրոնը՝ երկրորդ շարք՝ Նիկողոս Սարաֆեան, Պոլսոյ Կեդրոնական վարժարանի ուսանող

Camus¹ տեղ մը կ'ըսէ թէ արուեստագետներն են որ պիտի կրնան փրկել մարդկութիւնը՝ որուն խաթարումը կը մատնանշէ աշխարհի ամէն կողմ: Չեմ գիտեր թէ որքան հաւանական է այս պատգամը: Չեմ գիտեր թէ Գեղեցկութիւնը պիտի կրնայ օր մը յաջողիլ աշխարհ մը կերտել: Բայց որոշ է թէ մեծ դեր մը վիճակուած է այսօր, արտասահմանի մէջ, մեր գրողներուն եւ մեր մամուլին:

Ահա, սիրելի հայրենակիցներ, նիւթ մը որ կը խօսի մեր մտքին ու սրտին եւ մտքով ու սրտով պէտք է մօտենանք անոր: Այլ խօսքով, պէտք է ճանչնանք

մեր ժողովուրդը եւ սիրենք զայն: Ու ճանչնալու համար զայն պէտք է որ սրտով մօտենանք անոր: Եւ սրտով մօտենալու համար անոր, պէտք է որ ճանչնանք զայն:

* * *

Բազմաթիւ հարցերու առջեւ ենք անշուշտ, երբ կը խօսինք մեր մշակոյթին մասին: Կ'ուզենք ամենէն առաջ գիտնալ թէ ինչ կը ներկայացնէ ան: Ի՞նչ ենք մենք իբրեւ ժողովուրդ: Բոլորս ալ առաւել կամ նուազ չափով կը հարցնենք մենք մեզի թէ ինչ կը ներկայացնէ հայութիւնը աշխարհի վրայ՝ ուր այնքան մեծ ժողովուրդներ կան, մեծ քաղաքակրթութիւններ: Բոլորս ալ պզտիկ կը զգանք մեզ՝ այս մեծութիւններուն առջեւ: Եւ սակայն, բոլորս ալ որոշ մեծութիւն մը կը տեսնենք մեր պզտիկ ժողովուրդին մէջ: Մեծ կը տեսնենք զայն՝ նայելով անոր տոկոսնութեան, անոր անսպառ յոյսին, ապրելու եւ մեծնալու կորովին: Մեծ կը տեսնենք զայն՝ երբ նկատի կ'առնենք իր մեծ սերը յոյսին, իր եկեղեցիին, իր լեզուին:

Այս եւ այս հարցերու պատասխանն է որ պէտք է տանք ամենէն առաջ, փոխանակ խօսելու մեր արուեստներուն վրայ: Կարելորդ այս է, ըստ իս:

Ուրիշներ խօսած են եւ կը խօսին միշտ մեր Գողթան երգիչներուն, Աստուածաշունչի թարգմանութեան, մեր լեզուին, մեր մանրանկարչութեան, մեր երաժշտութեան եւ ճարտարապետութեան վրայ: Իմ փափաքս է ընդհանուր նայուածք մը նետել այս բոլորին վրայ, գոհացում տալու համար մեր առջեւ դրուած հարցերուն:

* * *

Գիտէք թէ երկու հոսանքներ կան այսօր: Մէկը կը փառաւորէ մեր մշակոյթը, միւսը դժգոհ է անկէ: Աղէտէն ի վեր որ մեր ժողովուրդը նետեց զանազան երկիրներ,

կ'աճին այս հոսանքներն ալ մեծ համեմատութեամբ: Մէկը երկինք կը բարձրացընէ մեր մշակոյթը, միւսը կը ստորադասէ գայն:

Տարիներ առաջ, մեր ընկերներէն մէկը, վէպով մը, ցայտուն դիմագիծ մը տըլաւ այդ դժգոհութեան: Նահանջի մէջ ենք՝ պոռաց, կորսուած ենք, ընելիք չունինք այլեւս եւ լաւ է որ ձուլուինք օր առաջ, անհետանանք իսկոյն՝ փոխանակ քաշքոտուելու: Այս խօսքերը ընողը, տաղանդաւոր գրող բայց դառնացած հոգի, ծաղրեց մեր ժողովուրդը եւ մեր պատմութիւնը, սկսեալ մեր թագաւորներէն: Հեզնեց մեր եկեղեցին ու մեր արուեստները: Եւ ըսելէ վերջ այս բոլորը, լռեց ու հեռացաւ մենէ²: Սկսաւ ֆրանսերէն գրել:

Ոմանք գայթակղեցան: Բայց, կը յիշեմ, ոմանք գնահատական տողեր գրեցին եւ յիշեալ վէպը հող գտաւ ոչ միայն արտասահմանի մէջ, այլեւ Հայաստանի մէջ: Հող գտաւ, որովհետեւ արժէքաւոր գործ մըն էր անշուշտ, բայց հող գտաւ նաեւ անոր համար որ շատեր գաղութները կորսուած կը նկատէին արդէն անկէ քսան տարիներ առաջ:

Հոս, սիրելի հայրենակիցներ, թոյլ տուէք որ փակագիծ մը բանամ, շատ յատկանշական: Շահնուր, յիշեալ վէպին հեղինակը, որուն մէկ էջը կարդացուեցաւ ձեզի, մեր ամենէն տաղանդաւոր գրողներէն մէկն է անկասկած: Ցաւ է մեզի համար անոր հեռացումը մեր գրականութենէն: Մօտէն գիտեմ որ շատ մը գրելիքներ ունէր ան տակաւին: Շատ մը ձեռագիրներ պատռեց, երբ կռնակ դարձուց մեր ժողովուրդին:

Իսկ իր հեռանալուն գլխաւոր պատճառը մեր մշակոյթին հանդէպ ունեցած իր դժգոհութիւնը չէր: Իր դառնութիւնը մեծ եղաւ այն օրէն երբ աջէն ու ձախէն յարձակումներ եղան իր վրայ՝ անտաղանդ մարդոց կողմէ շատ անգամ³: Ինք ալ սուր գրիչ ունէր: Ինք ալ յարձակեցաւ: Բայց, ի վերջոյ, կը կարծեմ, թէ աւելորդ տեսաւ գրականութիւն ընել մեր մէջ: Ապերախտութիւն տեսաւ շուրջը եւ գլուխը առաւ-հեռացաւ:

Շատ արդար էր իր դառնութեան մէջ. որովհետեւ մեծ գնահատանք մը գտաւ իր շուրջ, եւ, գիտնալով թէ հիւանդ է, շատեր օգնեցին իրեն իր քաշուելէն վերջ ալ⁴:

Շատ արդարացի չեմ գտներ իր դառնացումը, բայց երեւոյթ մը կայ՝ արժէքաւորը խեղդելու, բարձրացողները տապալելու ձգտում մը: Բայց մեր մէջ յարձակումներ կ'ըլլան իրական արժէքներու դէմ, նոյնիսկ անոնց կողմէ որ օրն ի բուն ազգ եւ մշակոյթ կը փառաբանեն: Օտարներու մէջ ալ կը տեսնենք նման յարձակումներ, բայց շատ աւելի վնասակար են անոնք մեր մէջ: Փակելով այս փակագիծը կը շարունակեմ. Եհիշդ է որ նահանջականութիւն մը կայ շատերուն մօտ: Շատեր գոհ չեն ժողովուրդէն եւ մեր մշակոյթէն: Շատեր ունենալով հանդերձ ազգային զգացումներ, յոռետես եւ յուսահատ ալ մասնաւորապէս արտասահմանէն: Քայքայում կը տեսնեն:

Անուրանալի է այս: Նահանջը:

Եւ սակայն եղած է եւ կայ միշտ տարբեր հոսանք մը, որուն համար մեր երկիրը դրախտավայր մըն է եւ մեր լեզուն Աստուծոյ գործած լեզուն: Ներշնչեալ ձայներ կը պոռան յաճախ թէ մենք տուեր ենք մեծ մշակոյթ մը, ունեցեր ենք մեր ոսկեդարը, մեր զարթօնքը եւ խելացի արուեստագէտ, տոկուն, անմահ ժողովուրդ ենք, չենք մեռնիր երբեք: Կ'ըսեն թէ յաւիտենական է մեր մշակոյթը եւ մեր յաւիտենական փառքն է ան, կրնայ մրցիլ մեծ ժողովուրդներու մեծ մշակոյթներուն հետ: Մեծ է հայ հանճարը, կ'ըսեն:

Կը տեսնենք իսկոյն թէ երկու ծայրայեղութիւններու առջեւ ենք: Որոշ ճշմարտութիւններ կու տան երկուքն ալ: Բայց երկու հոսանքներն ալ չափազանցութիւններու մէջ են, ուրացումներ կ'ընեն, աւերներ կը գործեն, նպաստներ բերելով հանդերձ: Եւ ազգային դժբախտութեան մը արդիւնքն են երկուքն ալ: Մէկը տեղի կու տայ: Միւսը կը ծառանայ տոկալու համար:

Ըստ իս, պէտք է կենալ այս երկու հոսանքներու մէջտեղը, ճգրիտ դատաստան մը ընելու համար:

* * *

Դժգոհները հանճար չեն տեսներ մեր ժողովուրդին մէջ: Չեն տեսներ ազգային ինքնուրոյնութիւն իսկ մշակոյթին մէջ: Օշական չէր խնայեր մինչեւ իսկ մեր ոսկեդարը, որով այնքան հպարտ ենք: Կը հաստատել լեզուին, ոճին գոյութիւնը, բայց օտար ազդեցութիւններ կը տեսներ⁵: Ուրիշներ աւելի մեծ համեմատութիւն մը կու տան այս ազդեցութիւններուն: Բիւզանդիոնին կը վերագրեն մեր մշակոյթին աճումը, բիւզանդականութիւն կը տեսնեն նոյնիսկ մեր գրաբարին մէջ: Բիւզանդական ազդեցութիւն՝ նաեւ մեր հին մանրանկարչութեան մէջ: Ոմանք խանդավառ չեն նոյնիսկ մեր ճարտարապետութեամբ՝ հակառակ օտարներու գնահատանքին:

Վերջերս երաժիշտ մը [կը] ձգտել հաստատել թէ ազգային ինքնութիւնը շատ քիչ է երաժշտութեան մէջ ալ, արաբական եւ այլ ազդեցութիւններ կը տեսներ:

Բանիմաց մտաւորական մը կը գանգատել օր մը. «Չեմ գիտեր թէ իրապէս հարուստ է մեր աշխարհաբարը, կ'ըսեր, բայց կ'անճրկինք երբ թարգմանել կ'ուզենք ֆրանսերէն գրութիւն մը, իմաստասիրական երկ մը մանաւանդ: Կը պակսին բառերը»:

Կը պակսին նաեւ գաղափարները՝ երբ աչք մը նետենք մեր ամբողջ մատենագրութեան վրայ: Վերջերս, պզտիկ գիրք մը ինկաւ ձեռքս՝ որուն խորագիրն է Histoire des idées françaises⁶: Խորհեցայ պահ մը թէ կարելի [է] նման գիրք մը գրել նաեւ դարերու ընթացքին հայ ժողովուրդի արտայայտած գաղափարներուն մասին: Կարելի էր ի հարկէ, բայց մեծ բան մը չէր կրնար ըլլալ: Կրօնական ու քաղաքական քանի գաղափարներէ գատ՝ ոչինչ գրեթէ իմաստասիրական կամ գեղագիտական գետնի վրայ, մինչ գաղափարներու անսահման առատութիւն մը

կը տեսնենք սկսեալ Rabelais-էն⁷, Montaigne-էն⁸ մինչեւ Camus եւ Sartre⁹ ֆրանսական գրականութեան մէջ: Մեր մշակոյթը չի կրնար գոհացում տալ շատերուն, այս գետնի վրայ:

Ու կը տեսնենք առաւելապէս ինքն իր վրայ կծկուած ժողովուրդ մը, մեկուսացած՝ իր եկեղեցիով, լեզուով եւ գիրով: Եւ ստորագագացութիւն մը, օտարամոլութիւն մը նոյն ատեն կը տեսնենք այս մեկուսացման մէջ: Մեր մտաւորականները զգուշացած են միշտ շփման մէջ մտնելէ օտար մտաւորականներու հետ: Ունեցած են անոնց մեծութեան առջեւ ճգմուելու վախ մը: Կամ ստորագագացութիւն մը ցոյց տուած են երբ մօտեցած են անոնց:

Պատկերը տխուր կ'երեւայ երբ կը նայինք արտասահմանեան արդի գրականութեան: Միջակութիւններ կը ծաւալին: Վերջերս «հայեցի» գրականութեան պահանջ մը ձեւաւորուեցաւ: Այսինքն՝ տալ գրականութիւն մը՝ որ բխի հայուն սրտէն եւ խօսի հայուն: Լաւ մտածում մը՝ անշուշտ: Բայց գրականութիւնը, ազգայնական այս դրօշակին տակ լճացում մը կը մատնէ դարձեալ, կը սահմանափակէ մեր մշակոյթը, կը մերժէ ամէն նորութիւն: Գրականութիւն եւ արուեստը, այսպէս, ազգայնացումով, քիչ անգամ կրնան վեր գալ միջակութենէն: Աժան եւ յորդառատ ազգայնականութիւն մըն է որ կը տեսնենք յաճախ: Ազգային զգացումները շահագործողներ է որ կը տեսնենք շատ անգամ հրապարակի վրայ:

Եւ այդ գրականութիւնը կը գոհանայ սահմանափակ իր հորիզոններով, առանց մօտենալու աշխարհը յուզող հարցերուն: Ջաղացք մըն է որ կը դառնայ անցեալին պէս: Կան տաղանդներ, անշուշտ, բայց շատեր յիսուն տարի ետ մնացած են կարծէք: Ոչ միայն չենք տեսներ միջազգային հարցերը մեր արդի գրականութեան մէջ, այլեւ անոնք որ մերն են, այսինքն՝ մեր ազգային մեծ աղէտը քննելու, վերլուծելու, սխալները ճշտելու, նոր ուղիներ բանալու հոգերը:

Բոլորիս ալ փափաքն է որ մեր գրականութիւնը ըլլայ «հայեցի», բայց ոչ այսպէս, այլ բարձր մակարդակով, ինչ որ չենք տեսներ:

Կը տեսնենք դիւրամարս գրականութիւն մը եւ վէճեր ու կռիւներ կը լսենք յաճախ, բառեր եւ բառեր:

Դժգոհները իրաւունք ունին մասամբ: Քայքայման շրջան մը կ'ապրինք: Եւ օտարութիւնը չէ միայն որ կը ցնցէ մեզ, այլ նաեւ հովը՝ որ կու գայ հայրենիքէն եւ բաժան բաժան կը բերէ¹⁰ մեզ՝ արտասահմանի մէջ: Կասկած չկայ թէ, մնալով հանդերձ ազգային տուեալներու վրայ, տարբեր ըմբռնում մը ունին մշակոյթին մասին՝ մեր եղբայրները հայրենիքին մէջ: Եւ այդ ըմբռնումը, յեղաշրջումի արդիւնք, տարածուած մասամբ նաեւ արտասահմանի մէջ, կը ջլատէ ուժերը:

Դժգոհները իրաւունք ունին տակաւին երբ կ'ըսեն թէ ասպարէզ չկայ մեր իրականութեան մէջ եւ կը պակսին մշակոյթ մը ծաղկեցնելու նիւթական եւ բարոյական պայմանները, գրողներուն եւ արուեստագէտներուն շուրջ:

Դժգոհները կ'աւելցնեն թէ մեր ժողովուրդը ետ մնացած է:

Դժգոհները կ'աւելցնեն տակաւին թէ օտար մեծ ժողովուրդները կարելորութիւն տուած չունին մեզի: Չեն հետաքրքրուիր մեր մշակոյթով: Եւ եթէ ումանք կը գնահատեն մեր ճարտարապետութիւնը, ուրիշներ արհամարհանքով կը նային մեզի:

Ահա, սիրելի հայրենակիցներ, արդարացի դժգոհութիւններ:

Բայց կը կարծեմ թէ իրաւունք չունինք այսքան ստորագնահատելու մեզ:

Անշուշտ Յայաստանը Յելլադա մը չէ եղած, ոչ ալ Եգիպտոս մը: Արձան մը չէ եկած մեր հողերուն խորէն, համաշխարհային արժէք մը տալու համար մեր մշակոյթին: Ո՛չ Պղատոն ունինք եւ ոչ ալ Սոփոկլէս: Պզտիկ կը տեսնենք մեզ՝ անշուշտ երբ նկատի կ'առնենք Շեքսպիր մը, Կէօթէ մը, Յիւկօ մը, Վալերի մը¹¹, Ռեմպօ մը¹²:

Եւ սակայն ձայն մը կ'ըսէ մեզի մեր ներսէն թէ անարդար պիտի ըլլայինք եթէ այս անկիւնէն միայն նայէինք մեր մշակոյթին: Ինչպէ՞ս կրնանք բաղդատել մեզ՝ օտար ժողովուրդներու հետ, որ քաղաքական անկախութիւն մը վայելած են դարերով, մինչ դարերով, բոլոր փոթորիկները անցած են մեր ժողովուրդին վրայէն:

Ումանք պիտի ըսեն անշուշտ թէ, եթէ խելացի եւ քաջ ժողովուրդ ըլլայինք, հաւանաբար այդ փոթորիկները չհալածէին մեզ: Կրնայ ըլլալ: Բայց բաց դուռ մը պէտք է ձգել նաեւ հոս: Պէտք է խորհիլ աշխարհագրական մեր աննպաստ դիրքին՝ որ կը բացատրէ մեր շատ մը տկարութիւնները: Պէտք է խորհիլ մեր քրիստոնէական կրօնքին որ, մէկ կողմէ մեզ հայ պահեց դարերու ընթացքին, բայց միւս կողմէ, պատճառ դարձաւ շատ մը կոտորածներու:

Պէտք է խորհիլ թէ մեծ պետութիւնները երբեք համաձայն չեղան իրարու հետ, երբ մենք օգնութեան աղաղակներ կ'արձակէինք, իրենց կը դիմէինք այնքան հաւատքով:

Գալով ազդեցութիւններուն, այս ազդեցութիւնները կը տեսնենք նաեւ օտար մեծ մշակոյթներու մէջ նաեւ: Ֆրանսական ամբողջ մշակոյթը հիմնուած է յունականին եւ լատինականին վրայ: Յունարէնի եւ լատիններէնի խառնուրդ մըն է մեծ մասամբ ֆրանսական լեզուն իսկ: Մշակոյթ չկայ առանց օտար ազդեցութեան: Բոլոր մշակոյթներն ալ պարտական են իրարու:

Կասկած չկայ թէ այդ ազդեցութիւնները պիտի ըլլային մեծ՝ երբ քաղաքականապէս ենթակայ էինք մերթ Բիւզանդիոնին եւ մերթ Պարսկաստանին: Աւելի վերջը, այդ ազդեցութիւնները պիտի ըլլային ռուսականն ու ֆրանսականը՝ Թիֆլիսի եւ Պոլսոյ կեդրոններուն մէջ: Բայց մեր մշակոյթը ծաղկած է շնորհիլ այդ ազդեցութիւններուն: Եւ ազդուելով հանդերձ, անուրանալի է որոշ ինքնութիւնը՝ որ մեր ժողովուրդը դրած է իր մշակոյթին մէջ:

Ընդունակ ենք առնելու եւ ձգտումը ունինք համամարդկային բան մը տալու: Եւ այդ համամարդկայինը ներկայ է որոշ չափով մեր մշակոյթին մէջ:

Ազդող եղած ենք, բայց մարտող եւ իւրացնող՝ նոյն ատեն: Չարմացած եմ միշտ մեր պզտիկ ժողովուրդին վրայ որ իր մէջ ձուլած է բացմաթիւ ցեղեր:

Իրաւունք չունինք այդքան վար գարնելու մեր մշակոյթը, երբ նկատի կ'առնենք ժողովուրդը՝ իր դարաւոր ծանր պայմաններով: Եւ որքան ալ դժգոհ ըլլանք, իրաւունք չունինք մանաւանդ հեռանալու մեր հայութենէն: Ընդհակառակն, այս օրերուն է որ աւելի եւ աւելի պետք է կառչած մնանք մեր ժողովուրդին եւ անոր մշակոյթին: Իրաւունք չունիք այդքան յոռետես ըլլալու: Ձուլուին, անհետանան հաւանաբար շատ մը գաղութներ, բայց կայ ու կը մնայ հայրենիքը եւ Սուրիա ու Լիբանան, երկրորդ հայրենիքի մը պէս, կրնան ապրիլ տակաւին երկար ատեն, շնորհիւ իրենց հոծ զանգուածին եւ իրենց դպրոցներուն:

Մեր դժգոհութեան դէմ կրնանք դնել շատ մը գոհացուցիչ տուեալներ: Մեր լեզուն՝ ամենէն առաջ գրաբարը, իրապէս զմայլելի, առնական, հզօր, թանձր ու սրբատաշ՝ ինչպէս պատերն են մեր եկեղեցիներուն: Աշխարհաբարը նաեւ, արեւմտահայերէնը, որ Վարուժանէն ի վեր, երթալով կը գեղեցկանայ: Իսկ հոն, Յայաստանի մէջ, ուր այդ լեզուն կը խաթարուի մասամբ օտար բառերով, հոն, սիրելի հայրենակիցներ, պետք է ըսել թէ ունինք այսօր այն ինչ որ չենք ունեցած դարերէ ի վեր, համալսարան մը՝ հայերէն լեզուով:

Ունինք մեր երգերը, պարգ, բարի, տխուր, այնքան հարազատ, այնքան հայկական որ կը խռովեն, կը յուզեն, կը գրաւեն մեզ իսկոյն երբ կը լսենք զանոնք:

Կրնանք հպարտանալ տակաւին մեր ճարտարապետութիւնով, որ, իր կարգին, ազդեցութիւն ձգած է, կ'ըսեն, Բիւզանդիոնի եւ Եւրոպայի վրայ:

Անվերապահ հիացումով կրնանք նայիլ մեր եկեղեցական երաժշտութեան, որ զարմացուցած է զիս յաճախ: Բաղդատեցէք զայն լատին երգեցողութեան հետ եւ մեծ տարբերութիւն մը պիտի տեսնէք իսկոյն: Լատինականին մէջ, ձայները վերացական են միայն, երկնային, աւելի իմացական քան թէ զգացական: Մտածումի խաղաղութիւն, երանութեան հասած մարդու հոգեվիճակը մը կ'արտայայտեն: Մերը, առաւելապէս աշխարհիկ, կեանքին կարօտով, ապրելու սէրով, տառապագին ծաւալում մըն է դէպի երկինք, խորապէս խռովիչ, բաբախուն եւ գեղեցիկ: Կը ծաւալի հեծեծանքներով եւ յաղթանակներով կը վերջանայ միշտ, պէթովենեան երաժշտութեան մը պէս: Տառապած, ճգմուած՝ բայց ապրիլ ուզող, լոյսն ու բնութիւնը սիրող, միշտ յուսացող ժողովուրդի մը խրոխտ երգեցողութիւնն է: Մեծութիւն մըն է:

Եթէ կանգ առնենք հոս պահ մը, եթէ նայինք մեր կրօնական երգերուն եւ հեթանոսական շրջանէն մնացած բանաստեղծութիւններուն, կը տեսնենք գլխաւոր նկարագիրը մեր մշակոյթին:

Կը տեսնենք արեւին, լոյսին, բնութեան սերը: Կենսապաշտ մշակոյթի մը առջեւ ենք, ինչպէս նկատել տուած են ոմանք: Այս կենսապաշտութիւնն է որ կը տեսնենք նոյնիսկ մեր եկեղեցական երգերուն մէջ, մահուան, ունայնութեան գաղափարին հետ: Արեւին լոյսն ու գերբնական լոյսը ներկայ են միասնաբար, եւ

այլափոխաբար, այսինքն՝ արեւը գերբնական լոյսն է եւ գերբնական լոյսը այլեւս:

Ահա քրիստոնէութիւն մը՝ ենթարկուած մեր ազգային նկարագրին, ինքնատրպութիւն մը, իմացական խորք մը:

Յայ իմացականութիւնը պահած է իր ինքնութիւնը երբ այդ տարբեր ազդեցութիւնները կը սպառնային խեղդել զինք: Պահած է իր ինքնութիւնը իսլամ աշխարհին առջեւ: Ռոմվիտտեւ, հայ հոգին նկատի առած է ամենէն առաջ իր գոյութիւնը: Եւ իր մշակոյթը կերտած է համաձայն ատոր: Ըմբռնելի է թէ ինչո՞ւ մինչեւ այսօր ալ հայեցի գրականութիւն մը կը պահանջուի: Կ'ուզուի ցեղին գոյութեան պահպանման յատուկ գրականութիւն մը, շատ աշխարհիկ՝ յաճախ, չըսելու համար իրապաշտ:

Դարերու խորէն, աշուղներու շրջանէն եկող կենսապաշտ նոյն գիծն է կարծէք որ կը շարունակուի այսօր, մանաւանդ մեր գրականութեան արեւելեան հատուածին մէջ այնքան հայկական թէեւ նուազ գեղագիտական նաեւ:

Աւելի շատ է արուեստին տրուած կարեւորութիւնը արեւմտեան հատուածին մէջ: Բայց հոս իսկ, արտասահմանի մէջ անգամ, մեծ մշակոյթներու շուքին տակ, մեր գրականութիւնը կ'աճի առաւելապէս այդ ականդական գիծով:

Ու կ'ըմբռնէք անշուշտ առաւելութիւնն ու տկարութիւնը այդ գիծին:

Մեր մշակոյթը, երկար քունէ մը վերջ, կ'արթննայ առասպելապէս հայրենասիրական նպատակներով: Կը դառնայ յեղափոխութեան գործիքը: Կը ծաղկի գաւառի գրականութիւն մը: Միշտ ազգային ոգին է որ կը տիրապետէ: Մեր ազգին գոյութիւնն է որ նկատի կ'առնէ:

Եւ սակայն, կը յայտնուին արուեստագետներ այլ: Եւ Պետրոս Դուրեանէն մինչեւ Մեծարեոց, Վարուժանէն մինչեւ Թէքէեան, մինչեւ մեր օրերը, եղած են եւ կան միջազգային արուեստներուն հետ քալող արուեստագետ հոգիներ:

Կ'անցնիմ այս բոլորին վրայէն արագօրէն ցոյց տալու համար թէ կայ ազգային մշակոյթ մը եւ մեր ժողովուրդը սիրած է զայն: Եթէ արուեստներու պաշտամունքը չենք ունեցած ինչպէս ունեցած են հին յոյները իրենց Ապոլոնով, մենք սիրած ու պաշտպանած ենք մեր մշակոյթը մեր գոյութեան համար իսկ: Ու գլուխընդամենն ամիրաներ որ չեն խնայած իրենց դրամը եկեղեցիներ եւ դպրոցներ կերտելու համար:

Կայ այդ մշակոյթը, որ կը ձգտի լոյսին, կեանքին, ուրախութեան եւ երջանկութեան, կը ձգտի համամարդկային եղբայրութեան, մինչ իր արմատները կ'ոռոգուին ցեղին արիւնով, հերոսներու, նահատակներու, մտաւորականներու արիւնով: Բազմաթիւ առաքեալներ եկած ու անցած են դարերն ի վեր:

Կայ այդ մշակոյթը երբ կը նայինք Վենետիկին: Կայ մշակոյթը երբ կը նայինք հրատարակուող գիրքերուն, այնքան առատ: Գաղութներուն մէջ կը տեսնենք հարիւրէն աւելի թերթեր եւ պարբերաթերթեր, հանդեսներ: Ստեղծագործ ժողովուրդի մը առջեւ ենք անկասկած:

Կ'անցնիմ այս բոլորին վրայեն արագօրէն, ցոյց տալու համար թէ կայ ազգային մշակոյթ մը եւ այդ մշակոյթը կը քալէ շարունակ, հակառակ միշտ ծանր պայմաններուն:

Այս է մեր համոզումը՝ երբ Հայաստանէն եկող գիրքերուն կը նայինք—բանահիւսութիւն, ուսումնասիրութիւն, վէպ, բանաստեղծութիւն աճումի մէջ են շարունակ: Անուրանալի արժէքներու առջեւ ենք:

Եւ ազգային արժէքներու տարածումը կը տեսնենք միջազգային ճակատներու վրայ: Հայ երաժիշտներ, հայ երգիչներ, նկարիչներ, գրողներ տեղ կը գրաւեն հետզհետէ օտար դիրքերու վրայ:

Յառաջդիմութիւն մը կրնանք հաստատել նաեւ արտասահմանեան մեր մշակոյթին մէջ, հակառակ առատ թշուառութիւններու: Արձակիւն եւ բանաստեղծութեան որակին բարձրացումը կը հաստատենք ոմանց մէջ:

Չանազան դպրոցներէ անցած է ֆրանսական բանաստեղծութիւնը: Այդ դպրոցները չենք տեսներ անշուշտ մեր բանաստեղծութեան մէջ: Աղքատ ենք գեղագիտական որոնումներով եւ մեր ժողովուրդը կը մերժէ կարծէք նորութիւնները: Իրապաշտ՝ իր խորքին մէջ, այսինքն՝ աշխարհիկ, կը մերժէ այն ինչ որ հեռու է անմիջական կեանքէն: Բայց եւ այնպէս ժողովուրդ մըն է որ տուած է անհամար բանաստեղծներ եւ բանաստեղծութիւնը իր գլխաւոր երակն է կարծէք:

Իրաւունք չունինք այդքան ստորագնահատելու մեր մշակոյթը ինչպէս կը տեսնուի, տոկացող, աշխատող, տառապանքէն եւ յուսահատութենէն միշտ վեր ձգտող, իր աւերակները միշտ վերականգնող, ստեղծագործող ժողովուրդի մը առջեւ ենք:

Կայ այդ մշակոյթը, բայց անբաւարար է: Այս է որ կը զարնէ մեր աչքին այսօր երբ Եւրոպայի մէջ կ'ապրինք:

Ահա ուր կը հասնինք երբ կը խորհինք: Չենք կրնար ուրանալ մեր մշակոյթը: Չենք կրնար հաշտուիլ նահանջի գաղափարին հետ այ: Եւ եթէ անխուսափելի է ձգտումը, մեր անհետացումը այս հողերուն վրայ, մեր մէջ կռուելու փափաք մը կը զգանք: Նահանջենք, կ'ըսենք, բայց զոնէ կռուելով նահանջենք:

Եւ սակայն, նահանջելէ աւելի, մեծ մշակոյթի պահանջն ու կարօտը կը զգանք: Ահա մեր երիտասարդներուն ողբերգութիւնը, անոնց որ օտար համալսարաններ կը յաճախեն:

Անշուշտ լուծում չունի աս ողբերգութիւնը: Բայց եւ այնպէս, ըսելիքս այս էր, սիրելի երիտասարդներ: Պէտք է կառչած մնալ միշտ մեր մշակոյթին եւ եթէ կարելի է՝ բարձրացնել զայն: Եթէ նոյնիսկ անհետանանք տարիներու ընթացքին, լաւ է որ քաղենք ամեն ինչ որ կարելի է քաղել օտար մեծութիւններէն եւ ժառանգել զայն Հայաստանին, որ պիտի ապրի անկասկած: Եւ մեր, ձեր ձգած այդ իմացական ժառանգութիւնը կրնայ օգտակար ըլլալ մեր գալիք եղբայրներուն:

Պէտք է պահել մեր հայութիւնը օտարութեան մէջ եւ բարձրացնել մշակոյթը՝ որքան որ կարելի է:

Ահա, սիրելի՛ երիտասարդներ, այն ինչ որ կը սպասուի ձե՛ն:

* * *

Մեծ դժուարություններու առջեւ ենք անշուշտ:

Օտարութիւնը ամենէն մեծ դժբախտութիւն է անշուշտ: Բայց կարելի է օգտուել այս դժբախտութենէն: Քսանէն աւելի տարիներ առաջ, կը գրէի տեղ մը. «Օտարութիւնը դժբախտութիւն մըն է որ կրնայ օգտակար ըլլալ նաեւ»¹³: Այսինքն, միջոցներ կու տայ զարգանալու: Բարիք մըն է իմացական գետնի վրայ:

Ժիտ¹⁴ խօսելով Պառէսի «Արմատախիլներ»ուն վրայ, կը խորհի թէ մտաւորականը աւելի մեծ կ'ըլլայ օտարութեան մէջ: Պայքարն է որ կը մեծցնէ մարդը: Ըստ Ժիտին, հովը որքան ուժգին փչէ, առագաստը այնքան աւելի կ'ուռի¹⁵: Ընդհակառակն, շատ շուտ կը խամրին անոնք որ արմատուած կը մնան:

Շատ ճիշդ չէ անշուշտ այս դատողութիւնը: Անհրաժեշտ է հայրենիքը: Անհրաժեշտ է համախումբ ժողովուրդը: Ասոնց շնորհիւ է որ մեծ դէմքեր երեւան կու գան: Ժիտ ինք իսկ, մեծ բան կը պարտի Ֆրանսային:

Բայց եւ այնպէս որոշ ճշմարտութիւն մը կայ ըսածին մէջ:

Երբ կը նայինք մեր ժողովուրդին, կը տեսնէք թէ ան դարերու ընթացքին, օտարութեան մէջ ապրելու, տոկալու եւ նոյնիսկ դիրքի հասնելու կարողութիւն ցոյց տուած է միշտ: Չէ վախճած արմատախիլ ապրելէն: Եւ հարկ կը տեսնեմ յիշելու հոս թէ Ֆրանսացի եւ այլ ժողովուրդներէ աւելի հայը եղած է թափառող, որոնող այլազան հորիզոններու վրայ, աշխարհի զանազան եւ հեռաւոր մասերուն վրայ: Կը կարծեմ թէ հոյակապ էջեր կարելի է գրել զանազան գաղութներու վրայ, ինչպէս օրինակ Յնդկաստանի գաղութը: Հայրենասիրութիւն, ազգային ոգին վառ պահելու եւ մշակոյթը շարունակելու, հայրենիքը ազատագրելու խանդավառ աշխատանք մը պիտի տեսնենք գաղութներու այդ պատմութեան մէջ: Օտար պայմաններու յարմարելու, օտար հողերու վրայ արմատուելու եւ նոյն ատեն արմատախիլ ժողովուրդի մը հոգեբանութիւնը, հայրենաբաղձութիւն մը պահելու փրկարար ոգին պիտի տեսնենք, եւ հայրենասիրութիւն մը միշտ հագուագիւտ առաքինութիւն է:

Բայց, հակառակ այս բոլորին, այս տոկունութեան եւ քարէն հաց հանող կամքին, գաղութներ անհետացած են: Որոշապէս կը տեսնուի թէ անհրաժեշտ է կապ պահել միշտ հայրենիքին հետ: Պէտք է պահենք այդ կապը:

Կարելի է հետեւաբար յառաջդիմել օտարութեան մէջ՝ պահելով այդ կապը, պահելով ավանդութիւններն ու լեզուն մանաւանդ: Կարելի է կազմակերպուած աշխատանք մը տանելով, այն ինչ որ կը պակսի մեր գաղութներուն մէջ: Մտաւորականութեան այդ անկազմակերպութիւնը աղետաւոր եղած է մեզի: Մտաւորականներն են որ ժողովուրդ մը ժողովուրդ կ'ընեն եւ մեր մտաւորականները քիչ անգամ լծուած են հաւաքական համերաշխ աշխատանքի մը՝ դպրոցներ բանալու եւ մշակոյթ տարածելու համար:

Մեծ դժուարություններ առջեւ էք եւ մեծ զոհողություններ կը պահանջուին ձեռն: Պէտք է որ սիրով տանիք այդ բոլորը յանուն մեր մշակոյթին:

Պէտք է օգտուիլ մեր առջեւ բացուած օտար, հարուստ հորիզոններէ եւ մնալ հայ՝ նոյն ատեն: Չարգանալով է որ կրնանք տոկալ մեծ մշակոյթներուն առջեւ:

Աւելորդ չ'ըլլար եթէ իմ երիտասարդութիւնս յիշեմ պահ մը ձեզի: Առաւելապէս օտար դաստիարակութեամբ մեծցած, երբ Փարիզ եկայ քսան տարեկանիս¹⁶, տարուած օտար լոյսերով, կ'անտեսէի մեր ժողովուրդն ու մեր մշակոյթը: Բայց հետզհետէ, մօտեցայ անոնց: Մօտեցայ մտքով եւ սրտով:

Թափառելէ վերջ արուեստի ծայրագոյն սահմաններուն վրայ, ես զիս զգայուն գտայ յանկարծ մեր ժողովրդական երգերուն առջեւ: Մօտեցայ մեր պատմութեան եւ իմ իրական ինքնութիւնս գտայ մօտենալով անոր: Մեր ժողովուրդը տեսայ բարձր կարգ մը առաքինութիւններով:

Կը մտադրեմ որ, սիրելի երիտասարդներ, ուսանողներ, հասկնաք, աւելի հայանաք օտար համալսարաններու մէջ: Եւ մեծցնէք այդ հայութիւնը: Պարտադրէք զայն օտար աշխարհին, որ այնքան ալ շլացուցիչ պէտք չէ ըլլայ ձեր աչքին, մանաւանդ երբ ամբողջ աշխարհը տագնապի մէջ է եւ ցնցումի մէջ են շատ մը քաղաքակրթութիւններ, սնանկութեան մը առջեւ են:

Այս ցնցումները կը տեսնենք մենք երեսուն տարիներէ ի վեր: Ֆրանսական գրականութեան մօտէն հետեւողները կը տեսնեն թէ փլած են շատ մը հաւատքներ, լոյսեր, երազներ, որոնց վրայ հիմնուած էր քաղաքակրթութիւն մը: Այդ քաղաքակրթութիւնը, բիրտ ուժին եւ նիւթին վրայ հիմնուած, եկած հասած է անելի մը առջեւ: Զայբայում մըն ալ կայ օտար հորիզոններու վրայ ալ:

Չեմ երկարեր: Բաւական է զիտնալ թէ պէտք չէ շլանալ ի վերջոյ մեծ քաղաքակրթութիւններէն: Այլ հպարտութեամբ նայիլ նոյնիսկ, հայու աչքով նայիլ, այսինքն՝ մեծ քաղաքակրթութիւններէն խաբուած, բայց իր խորքին մէջ իրաւացի, իր ազգային դատին մէջ արդար հայու աչքով՝ անիրաւուած ժողովուրդի մը աչքով: Այս հպարտութիւնն իսկ կը մեծցնէ մեզ, որքան ալ թշուառ ըլլանք:

[Ամբողջ աշխարհը իր քաղաքակրթութեան տագնապին մէջ է, երբ շատ մը մեծ երկիրներ իրենց խեղճութիւններով կ'երեւան:]

Ձենէ ոմանք ստիպուին թերեւս օր մը օտար լեզուով արտայայտուելու կամ օտար ասպարեզներու մէջ փայլելու: Անխուսափելի կ'երեւայ այս օտարացումը: Բայց կրնաք միշտ հայ մնալ, ինչպէս է Մարոյեան մը, որ գրելով հանդերձ ամերիկեան լեզուով, հպարտ է իր հայութեամբ, եւ իր հայութիւնը կը պոռայ աշխարհին: Եւ, միջազգային գետնի վրայ, մեր ժողովուրդը վարկ կը շահի անկասկած Մարոյեանով եւ նմաններով:

Անուրանալի է այս վաստակը, բայց եւ այնպէս լաւագոյն է կառչած մնալ մեր լեզուին: Եւ ինձի կը թուի թէ շատ աւելի լրիւ է արուեստագէտը երբ իր լեզուով կ'արտայայտուի: Եւ մեր լեզուն է որ ամէն բանէ աւելի կը սպասէ մեր գոյութեան պահպանումին, մեր յառաջդիմութեան: Հոս է մեծութիւնը Սահակին եւ

Մտերոպին: Ողնայար մը տուին անոնք մեր ժողովուրդին՝ տալով մեզի հայերէն տառերը:

Չանացէք կառչած մնալ այս տառերուն, որքան ալ զարգանաք:

Հայ մնալը ամենէն դժուար բաներէն մէկն է այսօր, օտարութեան մէջ: Հայ մշակոյթին լծուիլը շատ անելի դժուար: Չոհողութիւն եւ հերոսութիւն կը պահանջէ եւ շատեր տրամադիր չեն այդ զոհողութիւնը ընելու: Իրենց կեանքին կը մտածեն, իրենց հանգիստին կը խորհին:

Բայց պիտի ընէք այդ զոհողութիւնը: Մօտեցէք մեր ժողովուրդին եւ մշակոյթին: Կարդացէք անոր տառապագին պատմութիւնը: Խորհեցէք ինկած անհամար հերոսներուն: Պիտի տեսնէք թէ պէտք է զոհաբերուիլ մեր ժողովուրդին վերջնական յաղթանակին համար:

Ու կը վերջացնեմ, սիրելի հայրենակիցներ: Կը վերջացնեմ ականդական պատմութիւնով մը: Կ'ըսուի թէ մեր Տրդատ թագաւորը ամէն տեսակ չարչարանքները տուած է Գրիգոր Լուսաւորիչին եւ Լուսաւորիչը չէ մեռած: Կենդանի մնացած է միշտ, հակառակ զարհուրելի չարչարանքներուն: Ապրած եւ տարածած է իր լոյսը:

Շատեր յիշած են այս պատմութիւնը, ցոյց տալու համար կենսունակութիւնն ու անմահութիւնը մեր ժողովուրդին՝ որ վերապրած է շարունակ: Արդարեւ, ճշմարտութիւն մը կայ: Չափազանցուած է պատմութիւնը: Բայց մեծ ճշմարտութիւն մը կայ, երբ կը նայինք մեր ժողովուրդի պատմութեան [մէջ] իր մշտնջենական յարութեան:

[Փակելէ առաջ սակայն՝ ուրիշ մեկնութիւն մըն ալ տալ Լուսաւորիչին, սուրբին վերագրուած այդ հրաշքին: Կարելի է տեսնել անոր մէջ ճակատագիրը անոնց որ լոյսը կը տարածեն: Անոնք, մեր մշակոյթին ծառայող արուեստագետները, բանաստեղծները, լոյսը կու տան հակառակ ամէն տառապանքի: Մեր մշակոյթը կը պարտինք այս նուիրեալներուն:]

Նոր նուիրեալներ պէտք են մեզի:

ՅՐՈՒՄՆԵՐ:

1 Նկատի ունի անշուշտ վիպասան, թատերագիր եւ մտածող Albert Camus (1913-1960): Ցղումը գտանելի չէ եղած ինծի:

2 Սարաֆեան «Շահան Շահնուր» խորագիրը կրող յօդուած մը գրած է Փարիզի «Ամրոց» թերթին մէջ, 1934-ին, ուր խնդրոյ առարկայ կը դարձնէ *Նահանջը առանց երգի* վեպը եւ *Յարալէվներու դաւանանքիւնը*, տես *Տեսարանները, մարդիկ եւ ես*, Երեւան 1994, էջ 36-44: Երկու գրողներու միջեւ եղած է նամակագրութիւն, սկսեալ «Մենք»-ի օրերէն, մինչեւ Շահնուրի ֆրանսերէն բանաստեղծութիւններու առաջին գրքի հրատարակութիւնը: Շահնուրի նամակներէն մէկ հատը լոյս տեսած է *Նամականիին* մէջ, հատոր Գ, Վաթըրթաուն, 2006, հրատ. Գ. Քէօսէեան, էջ 117-119:

3 Հոս տեղը չէ մանրամասնութիւններ ոգեկոչելու: Ակնարկութիւնը կ'երթայ Ազատ եւ Հրաշ Զարդարեան եղբայրներու ֆիզիքական յարձակումին, ապա նաեւ Չօպանեանի ելոյթներուն «Անահիտ»-ի մէջ, 1937-ին, որուն կը հակադարձէր Շահնուր «Ապագայ»-ի մէջ:

4 Շահնուրի վեպին, *Նահանջը առանց երգի*ի ստեղծած աղմուկէն անդին Սարաֆեան նկատի ունի

անշուշտ այն երկար գրչապայքարը որ տեղի ունեցաւ Փարիզի տղոց շրջապատին մէջ իսկ մինչեւ 1938: Սարաֆեանի դասախօսութեան օրերուն տակաւին Շահնուր չէր կատարած իր վերադարձը, որուն մասին ընթերցողը կը յղեմ ի միջի այլոց Արփիկ Միսաքեանի յօդուածին, «Որպէս վկայութիւն», *Միրտ սրտի*, Փարիզ 1995, էջ 185-193:

5 Սարաֆեան նկատի ունի հաւանաբար Յակոբ Օշականի *Գրականութեան համար* յօդուածաշարքը, լոյս տեսած նախապէս «Չուարթնոց»ի մէջ (1929-1930), յետագային առանձին հատորով եւ նոյն խորագիրով Երեւան 1997, Գր. Յակոբեանի աշխատասիրութեամբ: Տես նաեւ *Անգղիկ կտուցիւն տակ*, Պէյրուժ 2008, էջ 101-140:

6 *Ֆրանսական գաղափարներու պատմութիւն*: Յեղինակը անծանօթ է ինծի:

7 Ժ2. դարու վիպասանն է, *Կարկանդակայի* հեղինակը (1483-1553):

8 Միշէլ դը Մոնտէյն (1533-1592), *Essais*-ներու հեղինակ (Փորձեր):

9 Ժան-Փոլ Սարտր (1905-1980): Սարաֆեան առհասարակ նկատի ունի գոյապաշտութեան տեսաբանը եւ ոչ գրողն ու թատերագիրը:

10 Բնագիրը այսպէս է, գուցէ վրիպակ է եւ կարդալու է «կ'ընէ»:

11 Paul Valéry (1871-1945), բանաստեղծ, մտածող, Սարաֆեանի կանոնաւոր յղումներէն մին:

12 Arthur Rimbaud (1854-1891).

13 Ակնարկութիւն հաւանաբար «Ազգայինն ու միջազգայինը գրականութեան մէջ» բանավեճին առթիւ գրուած «Աքաղաղները կ'երգեն» գրութեան, լոյս տեսած «Չուարթնոց»ի մէջ 1929-ին: Սարաֆեանի չակերտած նախադասութիւնը տառացի արտագրութիւնն չէ, գուցէ յիշողութեամբ վերարտադրուած է: Յօդուածին մէջ կը կարդանք. «Այս սերունդը պետք է գիտնայ բացառիկ բախտը որ ազգային դժբախտութիւնը տուաւ իրեն՝ գաղթը», տես *Տեսարանները, Մարդիկ եւ ես*, Երեւան 1994, էջ 21-22: Այս ամենի մասին տես *Ֆրանսահայ գրականութիւն 1922-1972, Նոյնէն Այլը*, Խաչենց-Փրինթինֆօ-Անտարես, Երեւան 2017:

14 Սարաֆեան նկատի ունի Անդրէ Ժիտի (1869-1951) բանավեճի Մօրիս Պամեսի հետ (1862-1923), այս վերջինիս *Les déracinés (Արմատախիւները 1894)* վեպին մէջ յայտնուող ազգայնապաշտ գաղափարախօսութեան: Շահեկան է գիտնալ որ վեպին գլխաւոր հերոսուհին է Աստիւն Արաւեսանը, որ կը խորհրդանշէ յանկուցիչ եւ դատապարտելի Արեւելքը, ըստ Պամեսի: Բանավեճը կը սկսի վեպին առթիւ գրուած Ժիտի յօդուածով, “A propos des “Déracinés” de Maurice Barrès”, André Gide, *Essais critiques*, Pléiade Paris 1999. Կ'արժէ կարդալ այս մասին Սարաֆեանի «Արմատ նետել» էջը, լոյս տեսած նախապէս «Յառաջ»ի մէջ, 1953-ին, տես *Վէնսկնի անսրտը*, Փարիզ 1988, էջ 150-155:

15 Ա. Ժիտ կը գրէ. «plus le vent du dehors s'élevé et plus se nécessite une forte envergure», նշուած հատոր էջ 7: Սարաֆեանի ամբողջ այս պարբերութիւնը միջգրութենական կապեր ունի Ժիտի յօդուածին հետ:

16 Սարաֆեան Փարիզ հաստատուած է 1923-ին, ծնած էր 1902-ին եւ ոչ անշուշտ 1905-ին, ինչպէս կը գրուի հոս-հոն:

(Թիւ 3, 2018)

ԿԱՐՕ ՓՕԼԱՏԵԱՆ

ԶՐՈՅՑ՝ ԲԱՆԱՍՏԵՐԾ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՅԵՏ

*Մ*րձակագիրներով աւելի հարուստ Սփիւռքի մեր գրականութեան ամենէն ինքնատիպ եւ ամենէն վաւերական բանաստեղծն է Նիկողոս Սարաֆեան:

Ծնած է Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ 1902, ապրիլ 14ին, Չասկի օր մը:

Այս տարի իր ծննդեան վաթսունամեակն է ուրեմն: Քառասնամեակը նաեւ իր գրական գործունէութեան: Արդարեւ, իր առաջին քերթուածները լոյս տեսած են 1922ին, Վահան Թէքէեանի «Ժողովուրդի ձայն»ին մէջ, Պոլիս:

Այս յիշեցումները ո՛չ մէկ հրաւեր կամ առաջարկ կը ներկայացնեն, մեծարանքի կամ այդ կարգի ցուցական որեւէ արարքի:

Ոչ մէկ մտածում աւելի խորթ է այս ինքնատիպ ու ինքնաբաւ, ամբոխէն հեռու ասորոյ բանաստեղծին:

Այս թուականները յիշեցի պարզապէս աւելի շեշտելու համար այն բացառիկ պարագան, որ կը ներկայացնէ բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանը, Սփիւռքի բանաստեղծութեամբ հետաքրքրուող պոուզագրին համար, որ եւ եմ:

Ըսել կ'ուզեմ, որ չէի կրնար աւելի որակաւոր ներկայացուցիչ ընտրել, խօսելու համար Սփիւռքի բանաստեղծութեան մասին: Քանի մը տարի առաջ, «Ո՛ր է Սփիւռքի բանաստեղծութիւնը» ընդհանուր խորագրին տակ, այս մասին հարցումներ ուղղած եւ պատասխաններ արձանագրած էի Ահարոնի, Կ. Չարեանի, Բ. Թօփալեանի, Գ. Ճիլմէճեանի, Յ. Կոստանդեանի եւ ուրիշներու հետ: Խոստացած նաեւ, մեր գրականութեան համար կենսական նշանակութիւն ունեցող այս հարցին ուսումնասիրութիւնը շարունակել Նիկողոս Սարաֆեանով: Կը յարգեմ ահա խոստումն: Այնքան աւելի մեծ ուրախութեամբ, որ ան տեղի կ'ունենայ «Բագին»ի մէջ:

Այս մասին քիչ յետոյ, բանաստեղծին հետ, դեմ դիմաց:

Ինչո՞ւ բացառիկ պարագայ մը կոչեցի Նիկողոս Սարաֆեանը:

Սփիւռքի գրականութեան տռամը որովհետեւ, իր ամենալայն եւ ամենասուր հանգամանքներովը, գոյութիւն ունի Սարաֆեանի մէջ: Մարդկայինը, ազգայինը, իմացականը:

Մեզի կը թուի թէ Վ. Շուշանեանի եւ Շ. Շահնուրի հետ՝ Սարաֆեան աւելի խորապէս ասորեցաւ այդ ողբերգութիւնը:

Մեր սերունդին միւս երէց անդամները, բոլորն ալ տաղանդաւոր, մասնակից ու դերակատար ըլլալով հանդերձ, մինչեւ իրենց կոկորդը մխրճուած ըլլալով հան-

դերձ այդ նոյն տոռամին մէջ, տարբեր կեցուածք ունեցան: Տարբեր եղան անոնց հակապդեցութիւնները: Անոնցմէ իւրաքանչիւրը մօտեցաւ ողբերգութեան, ըստ իր աշխարհայեացքին, իր նկարագրին: Համաստեղ՝ իր հանդարտ բարութեամբ, Նարդունի՝ իր սկեպտիկ ժպիտով յաճախ, Բ. Թօփալեան՝ փիլիսոփայօրէն, ՊԷ-շիկթաշլեան եւ Արամ Հայկապ՝ իրենց ծիծաղով: ՄԷԿն իր բարձրաձայն, միւսն իր նուրբ, մելանուշ ժպիտով: Եւ դեռ ուրիշներ՝ ուրիշ վահաններով պաշտպանուած, մԷԿն իր եաստիութեան, միւսները, մեծամտութեան ետին:

Անոնք նոյն «խենթութեամբ» չնետեցան կրկէս, ուստի եւ նուազ վերք ըստացան:

Ամենածանր վիրաւորները հանդիսացան Շուշանեանն ու Շահնուրը, անկասկած: Ու նաեւ Ն. Սարաֆեանը:

Մինչ առաջին երկուքը հեռացած են արդէն բեմէն, Շուշանեան իր վաղաժամ մահով: Շահնուր՝ անողոք հիւանդութեան մը, ու նաեւ, թերեւս ակելի դժուար բացատրելի պատճառներով, Սարաֆեան կը շարունակէ:

Պատնէշին վրայ է միշտ, ամուր կանգնած: Տոսմին ամենէն տոկուն հերոսը կը թուի ըլլալ ան, կառուցուած ըմբիշի մը պէս: Վաթսունին կը շարունակէ ցուցադրել բառասունի եռանդ եւ ուժ: Եւ այն, թէ ֆիզիքական եւ թէ ստեղծագործական մարտերուն մէջ հաւասարապէս:

Տարօրինակը սակայն, ու նոյն ատեն վմայելին այն է, որ այս հուժկու մարմնին մէջ կ'սպորի գերզգայուն էակ մը: Ամենէն գերզգայունը, որուն երբեւիցէ հանդիպած եմ ես ամբողջ կեանքիս ընթացքին: Վճիտ ու բարդ, կասկածամիտ ու սիրտը բաց միանգամայն: Երբեք խորամանկ, միշտ խորաթափանց, ու երբեմն, պինաթափ ընելու աստիճան պարզամտօրէն բարի: Հաւանաբար չէ ստեղծուած արտաքին աշխարհին համար, կ'սպորի ինքն իր մէջ: Անոր մէջ իմացական ներքին պայթարը հասած է սորաւորագոյն չափերու:

Քառասուն տարի է ան ինքզինք կը վերլուծէ, ինքզինք կը պեղէ:

Եւ ան, այդպէս, ինքն իրմէ միշտ դժգոհ, բարդոյթներէ տառապող, շեքսպիրեան մոայլ հերոսի մը կը նմանի, բայց որ կը յառաջանայ անյողողող, գլուխը բարձր բռնած: Մոայլ հերոսի մը, որ գիտէ թէ ո՛ր կ'երթայ, ինչ կը փնտռէ, ինչ կ'ուզէ:

Ստեղծագործութեան տենղը, իր ներքին աստանան (սօն տեմօն տը լա բրեւափոն) կը չարչարէ պինք գիշեր ցերեկ, կը կրծէ սիրտը, կ'արիւնէ ուղեղը, թոյլ չտա-

Ինչո՞ւ բացառիկ պարագայ մը կոչեցի Նիկողոս Սարաֆեանը: Սփիւռքի գրականութեան տոամը որովհետեւ, իր ամենալայն եւ ամենասուր հանգամանքներովը, գոյութիւն ունի Սարաֆեանի մէջ: Մարդկայինը, ազգայինը, իմացականը:

Վճիտ ու բարդ, կասկածամիտ ու սիրտը բաց միանգամայն: Երբեք խորամանկ, միշտ խորաթափանց, ու երբեմն, պինաթափ ընելու աստիճան պարզամտօրէն բարի:

լով որ ան ապրի խաղաղ, ըլլայ ուրախ, երջանիկ, ուրիշ մարդոց նման:

Ստեղծագործական խոելա հոգեվիճակ մը, պիտի ըսուի, բացառիկ խառնուրածք մը, տաղանդ եւ ըսելիք ունեցող արուեստագետի մը համար: Ճիշդ է: Ճիշդ է ու նաեւ ահռելի: Սպառիչ՝ այդ մշտատեւ մենամարտը, իր շուրջ եւ իր մէջ թաւալող մթին, ամեհի ուժերուն դեմ:

Իրաւ է որ ճշմարիտ քանաստեղծութիւն մը միշտ ալ հապուազիւտ իմացական պտուղն է ներքին այդ ահաւոր պայքարին:

Սարաֆեան իրաւ քանաստեղծը մեպի կ'ընծայաբերէ այդ եպակի պտուղը: Հայ քերթողութեան ամենէն աչքառու յաղթանակներէն մէկը, շահուած օտար հողի վրայ, ամենէն դժուարին պայմաններու տակ:

Ատով իսկ աւելի արժէքաւոր:

Իր առաջին քերթուածները ամփոփուած են «Անջրպետի մը գրաւումը» հատորին մէջ, լոյս տեսած միայն 1928ին: Անոնց մեծամասնութիւնը սակայն գրուած է աւելի կանուխ, 1922-1926 թուականներուն:

Սարաֆեանի գործը ուստի Սփիւռքի առաջին կարեւոր քերթողական մատենան է:

Ու չէ՞ք կարծեր որ այդ խորագիրը ինքնին աւելի քան թելադրական է:

Բոլորովին նոր քանաստեղծութեան մը ծնունդը կ'աւետէ ան, նոր «Անջրպետի մը գրաւումը», ի նպաստ եւ ի շահ հայ քերթողութեան:

Եւ այն, Սփիւռքի կապմաւորման տարիներուն իսկ:

Սարաֆեան իրաւ քանաստեղծը մեզի կ'ընծայաբերէ...: Հայ քերթողութեան ամենէն աչքառու յաղթանակներէն մէկը, շահուած օտար հողի վրայ, ամենէն դժուարին պայմաններու տակ:

Հատորները, որոնք յաջորդեցին այս առաջինին, «14»ը (1933) «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն»ը (1939), «Միջնաբերդ»ը (1946) եւ անկէ ի վեր գրուած բազմաթիւ քերթուածներ, ու որոնք հատորներու չեն վերածուած տակաւին, կու գան վճռապէս հաս-

տաստելու թէ 1919ին սկսուած թռիչքը պատկուած է յաղթանակով: Երբ բարձունքներու ի խնդիր ճամբայ ելած «Սաւառնորդ»ը, ինչպէս կը սիրէր կոչել պայն Օշական, հասած է իր նպատակակէտին, աւարտած՝ նախատեսուած այդ «անջրպետին գրաւումը»:

Ու այսօր, հրճուանք եւ հպարտութիւն է մեպի դիտել հայ քերթողութեան դրօշը, որ կը ծածանի ահա՛ նոր բարձունքի մը վրայ: Հայ մտքին այդ յաղթական դրօշը, բազմաձայ ու բազմագոյն, ծիածանուած մարդկային հոգիին բոլոր նրբերանգներովը:

Իմ մտքիս մէջ այս «լրոյց»ը երկու գլխաւոր նպատակ ունի: Առաջին՝ պատմել քանաստեղծին այդ խռովայոյց, հերոսական թռիչքը: Երկրորդ՝ մօտէն ծանօթանալ այդ նոր «անջրպետ»ին, քանաստեղծ Սարաֆեանի միջոցով հայ քերթողութեան «սպգայնացուցած» այդ հրաշալի կարուածը: Նախ քան այդ, հարկ է թե-

րեւս ակնարկ մը նետել բանաստեղծին կեանքին վրայ: Միշտ ալ հետաքրքրական է այդ:

Ուստի առաջին հարցումս.

– Սիրելի Սարաֆեան, ըսիր որ ծընած ես Վառնա, 1902ին: Ո՞ր եւ ինչպէ՞ս անցուցած ես մանկութիւնդ, պատանեկութիւնդ: Ինչպէ՞ս տեղի ունեցած է մտաւորական կազմութիւնդ: Ինչ ազդեցութիւններ կրած ես եւ ինչ յիշատակներ կը պահես այդ հեռաւոր տարիներէն:

– Մինչեւ տասներկու տարեկանս մնացած եմ ծնողացս մօտ, որոնք Պուլկարիա հաստատուած էին: Հայրս հացագործ էր: Ունէր շատ մը ձիեր, որոնցմով իր եփած հացը կը բաժնուէր շրջակայ բնակչութեան: Ընդարձակ կալուած մըն էր մեր ունեցածը: Անկէ մտնողն ու ելողը յայտնի չէր: Տարօրինակ մարդիկ էին ձիապանները: Մանկութիւնս անցած է այդ քիչ մը առասպելական միջավայրին մէջ: Բնական է դպրոց կ'երթայի: Բայց յաճախ կը տեսնէին զիս ձիու մը քամակին: Իսօլ արշաւներ պուլկարական բնութեան մէջ:

– Կը սկսիմ հասկնալ թէ ինչո՞ւ ...

– Այո՛, քաջառողջ մանուկ մը, շընչած լեռներու մաքուր օդը: 1914ին զիս դրկեցին մեծ եղբօրս քով, որ Ռուսաստան հաստատուած էր: Երկու տարի մնացի Օտեսա, Ռոստով:

– Հոն դպրոց գացի՞ր:

– Ո՛չ, երկու տարի կօշկակարի աշակերտ եղայ, մինչեւ տասնչորս տարեկանս:

– Կօշկակարութի՞ն, բայց ինչո՞ւ ...

– Յետոյ վերադարձայ Վառնա, ծընողքիս մօտ: Պատերազմը շղթայազեր-

ծըրած էր արդէն երկու տարիէ ի վեր: Ամեն կողմ կրակ: Կ'այրէ՛ր աշխարհը: Ծնողքս զիս դարձեալ դպրոց դրին, Ֆրէրներու մօտ:

– Ֆրանսերէնդ ուրեմն հո՞ն սորվեցար:

– Այո՛, ու դասարանին առաջինը հանդիսանալով միշտ: Բաւական ֆրանսերէն եւ հայերէն գիտէի արդէն, երբ զինադադարին ընտանեօք փոխադրուեցանք Պոլիս: Սկսայ յաճախել Կեդրոնական:

– Թէքէեանը հո՞ն ճանչցար:

– Այո՛, իբրեւ ուսուցիչ: Առաջին ուսանաւորներս ան տեսած է, քաջալերած, հրատարակած: Միշտ ալ արթուն աշակերտ մը եղած եմ, եւ բոլոր դասերուս մէջ: Սիրուած՝ ուսուցիչներէս, ընկերներէս: Խելօք, բարի ուսանող մը, երագներու մէջ կորսուած յաճախ: Շատեր օգտագործած են այդ բարութիւնս, զիս յաճախ միամիտի մը տեղ դրած: Նոյնիսկ աւելի ուշ, գրական ընկերներս շարունակած են զիս նկատել...

– Չե՞ս ուզեր որ այդ մասին խօսինք քիչ մը յետոյ...: Կեդրոնականը ակարտեցի՞ր:

– Ո՛չ բոլորովին: Վեց ամիս մնացած էր, բայց մեզ վկայականի արժանի դատեցին ու տուին: Ամեն ինչ տակն ու վրայ եղած էր արդէն ու անգամ մը եւս մեր շունչը Պալքանները առինք: Բախտը ունեցայ 1923ի գարունն ու ամառը անցընելու դարձեալ Թէքէեանի հետ: Գիշեր ցերեկ միասին էինք, բանաս-

տեղծութիւն հոլովելով:

Ապա Ֆրանսա, 1923ի աշնան: Շուտով քառասուն տարի պիտի ընէ:

– Բանաստեղծի կոչումը ուրեմն կը պարտիս թէքէտանին:

– Թերեւս, եթէ կ'ուզես: Թէքէտանը չճանչցած սկսած էի գրել արդէն:

– Չե՞ս կարծեր որ որոշ ազդեցութիւններ կրած ես «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս»ի հեղինակէն:

– Յա՛...

– Միայն լեզուի տեսակետով: Երկուքիդ ալ գործածածը նոյն հայերէնն է, մաքուր, զտուած, գիտական ճշգրտութեամբ յաճախ, նոյնիսկ քիչ մը չոր: Բայց չունիք նոյն ոճը, չէք կրեր մանաւանդ նոյն հոգին: Սիրոյ բանաստեղծն է Թէքէտան առաւելապէս: Կինն է առանցքը անոր քերթուածներուն, որոշ տեսակի կին մը, ա՛ն որ չի կենար, կու գայ ու կ'անցնի, շոյանք ու վերք տալով...: Դուն գրեթէ չես մօտեցած այդ նիւթին: Իմացական է քու բանաստեղծ տեղծութիւնդ:

– Այո՛, կը մտածեմ թէ ճիշդ է բնորոշումը, Փօլատեան:

– Ունիս առանձնայատուկ ոճ մը ու յետոյ տարբեր են տազնապներդ, կեանքդ, ամէն ինչ...

– Այո՛, այո՛, ամէն ինչ տարբեր:

– Ի՞նչ կը մտածես գործիդ մասին, Սարաֆեան:

– Ինչպէ՛ս... Ե՛ս...

– Ըստ քեզի ի՞նչ կը բերես հայ բանաստեղծութեան:

– Անսպասելի հարցում մը. չե՞ս կարծեր որ պէտք է շրջել զայն, ես ընեմ հարցումը եւ դուն տաս պատասխանը:

– Մեր զրոյցին ընթացքին իմ պա-

տասխանս արձանագրուած է, եւ դեռ ուրիշ առիթ ալ պիտի ներկայանայ, բայց հետաքրքրական է իմանալ քո՛ւ կարծիքդ:

– Ի՞նչ կ'ուզես որ ըսեմ, ի՞նչպէս կրնամ... Քանի մը մտածումներ արտայայտած եմ թերեւս, ուրիշներէն տարբեր ձեւով մը: Ա՛յսքան, ուրիշ ոչի՛նչ: Առնուազն մեծամտութիւն է, ըստ իս, չըսելու համար յիմարութիւն, կարծել որ նոր բան մը կը բերենք աշխարհին ու մարդոց: Ամէն ինչ գտնուած է արդէն, ըսուած: Արտայայտուած՝ հազար ու մէկ ձեւով, բոլոր լեզուներով, դարերէ ի վեր: Կեանքի գլխաւոր հարցերուն, եղելութիւններուն դիմաց նոյն հակազդեցութիւնները կ'ունենան մարդիկ: Սիրոյ, տառապանքի, մահուան դիմաց՝ իմ եւ քու մտածումները գրեթէ նոյնն են:

– Քեզի համաձայն եմ եւ չե՛մ, սիրելի Սարաֆեան: Նախ այդ եղելութիւնները երբեք նոյնը չեն, նոյն ձեւով տեղի չեն ունենար: Կը տարբերին ժամանակաշրջանէ ժամանակաշրջան, ընկերութենէ ընկերութիւն, մարդէ մարդ: Սէրը, կեանքը, տառապանքը, մահը անլուծելի առեղծուածներ են, ու այդպէս ալ պիտի մնան: Մարդոց համար անսպաս նիւթ խորհրդածութեան, վերլուծումի, ապրումի: Բայց մենք կը զգանք, կ'ապրինք տարբեր ձեւով: Կ'արտայայտենք մանաւանդ տարբեր եղանակով, ըստ մեր ներքին Էութեան: Արտայայտութեան այս տարբերութիւնն իսկ կը բաւէ, որ մարդիկ զանազանուին իրարմէ, Նարեկացին՝ Շնորհալիէն, Քուչակը՝ Սայաթ-Նովայէն, Վարուժանը՝ Չարենցէն, Սիամանթօն՝

Մեծարենցեն: Նոյնիսկ Մեծարենցը՝ Վ. Տերեանեն: Եւ դեռ ասոնք նոյն աղբիւրէն ջուր կը խմեն, նոյն լեզուով կը գրեն: Հասա մնացածները...: Ինչեւիցէ, ձգենք այս խնդիրը, եթէ կ'ուզես: Ուրիշ հարցում մը, Սարաֆեան, ինչո՞ւ կը գրես:

– Օ՛, հետզհետէ աւելի բարդ... Ինչո՞ւ կը գրեն... ո՞վ կրնայ ըսել թէ ինչո՞ւ կը գրէ: Նախ ճշդեմ թէ արտաքին աշխարհը զիս չի՛ հետաքրքրեր: Ներքին աշխարհն է, ներքին յոյզերն ու մտածումներն են, որ զիս իրենց կը քաշեն: Ու կը մտածեմ թէ քերթուածներուս մէջ կ'ուզեմ անոնցմէ ոմանք բռնել, հաստատել, բանտարկել, եթէ կը նախընտրես ու յետոյ զանոնք յանձնել...

– Յաւիտենականութեան...

– Օ՛, մեծ բառ մըն է յաւիտենականութիւնը, ըսենք գայիք մարդերուն, մեր յաջորդներուն: Բայց կը կարծեմ թէ ամէն արուեստագէտի՛ խոստովանած թէ գաղտնի փափաքը ա՛յդ է:

– Գիտեմ, ու պէտք է որ այդպէս ըլլայ:

– Ահաւոր է սակայն ստեղծագործութեան տռամը: Կը նախանձիմ անոնց, որոնք մտածումի մը մէկ երեսը կը տեսնեն միայն, մի՛ միայն լուսաւոր երեսը: Ինծի համար ամէն ինչ բազմաթիւ երեսներ ունի: Քառս մըն է մեր ներաշխարհը: Պէտք է բարձրանալ յոյսին, խարխափելով, արիւնելով: Չըտլած վիճակի մէջ չենք գտներ երբեք մեր մտածումները: Մեր զգացումները գորդեան հանգոյցներու կը նմանին յաճախ: Ինչպէս չենք գտներ հողին մէջ ոսկին՝ գտուած, կամ ադամանդը՝ տաշուած, վերջնական ձեւի վերած-

ւած: Այդպէս են մեր մտածումներն ու զգացումները: Մե՛նք է որ պիտի գրտենք, տաշենք, ձեւաւորենք, գեղեցկացնենք:

– Շատ լաւ ձեւով սահմանեցիր բանաստեղծութիւնդ: Օգտուելով առիթէն, կը փափաքիմ քեզի ուղղելիք հարցումներէս մէկը այստեղ զետեղել: Բնականօրէն հասանք անոր:

– Ի՞նչ է այդ հարցումը:

– Ի՞նչ եղաւ հակազդեցութիւնդ, երբ յանկարծ դուն զքեզ գտար ֆրանսական ծովածաւալ մշակոյթին դիմաց:

– Ա՛յդ հարցումին կը սպասէի: Սիրով կը պատասխանեմ եւ անմիջապէս: Առաջնակարգ կարեւորութիւն ունի ան մեր սերունդին գրականութեան հետ, ուստի իմ գրածներուս հետ: Մեր ազգային դժբախտութեանց կողքին, կատարեալ *տռամ* մը նաեւ այդ մէկը, իմացական *տռամ*ը: Կը նմանեինք լուրդորդներու, որոնք վարժուած են իրենց պարտեզներու փոքր աւազաններուն մէջ լողալ միայն եւ որ յանկարծ կը նետուին հսկայ ովկիանոսի մը փըրփրաղէզ ալիքներուն մէջ: Քիչ մնաց խեղդուէինք:

– Խեղդուողներ ալ եղան:

– Անխուսափելի էր: Բայց պէտք չէ կարծել որ միայն իմացական էր *տռամ*ը: Մարդկայինը, ազգայինը, աշխարհի բոլոր խռովքները թափեցան մեր վրայ: Սահմուկած էինք, շփոթած: Տարագիրներ էինք, ջարդերէն ազատած որբեր՝ շատերս:

Նախ կար կեանքը: Հարկ էր ապրիլ: Նետուած էինք լաբիրինթոսի մը մէջ, մինակ, վիրաւոր, վիրաւոր մեր ազգային արժանապատուութեան մէջ:

Պանդուխտներ էինք, մեր սիրելիներեն զատուած, տխուր: Ու մեր շուրջ լոյս էր, ուրախութիւն, վայելք: Հարկ էր չարաչար աշխատիլ, ապահովելու համար մեր կեանքը, ապրելու համար մարդկօրէն: Ու քառասուն տարի է կ'աշխատիմ ես, Փօլատեան, առանց կանգ առնելու, յաճախ օրական տասը տասներկու ժամ: Աշխատած եմ ու գրած: Մինակս շինած եմ բոյս, հասած որոշ ապահովութեան մը: Իմ աշխատանքովս, ճակտի քրտինքովս: Եւ ես հայ բանաստեղծ եմ...: Ու կեանքը աւանդ, միշտ չժպտեցաւ ինծի, տագնապներ ունեցայ: Վիշտեր ու ցաւեր անպակաս են կեանքէն: Ոչ ոք զիս հասկցաւ, ոչ ոք ինծի ձեռք երկարեց: Եւ ոչ ոք, կը հասկընամ, ոչ ոք կրնայ խմել իմ դառնութեան բաժակէս: Բայց ինչո՞ւ կը պատմեմ այս բոլորը քեզի, քու հետաքրքրութիւններդ գրականութեան կը վերաբերին:

– Կարելի՞ է բաժնել կեանքը գրականութենէն:

– Ո՛չ, ի հարկէ: Գալով բանաստեղծութեան. ... Այս մարզին մէջ նոյնքան խոր էր շփոթութիւնը, խզումը: Անկարելի էր ինծի համար երգել հին ձեռով: Բոլորովին նոր կեանք մըն էր, նոր զգայնութիւններ, նոր աշխարհ մը: Վարուժան, Թէքէեան կ'արձագանգէին դեռ մեր մէջ, հայութիւնը ամբողջական ձեռով ներկայ էր մեր հոգիներուն մէջ: Բայց կեանքի, արուեստի նոր ըմբռնումներ դրուած էին մեր դիմաց: Գերիորապաշտները կ'աղմկէին, կը քանդէին ամեն ինչ: Պոտըլէրը զիս գրաւած էր արդէն, Մալարմէն...: Կարդացի Վալտերին: Նոր արուեստի մը քրմապետներն

էին: Ի՞նչպէս կարելի էր հին ձեռով հայերէն քերթուածներ գրել, զանոնք կարդալէ ետք:

– Այո՛, դժուար էր: Եթէ կը յիշես, սիրելի Սարաֆեան, փորձած եմ վերլուծել այդ տռամը, Փարիզահայ բանաստեղծներուն նուիրուած նախորդ գրոյցի մը մէջ: 1923ին երբ Փարիզ հասաք, դո՛ւն, ընկերներդ, գտաք բանաստեղծութեան ըմբռնում մը, որ հիմնովին կերպարանափոխուած էր: Վարուժանի, Թէքէեանի վարպետները, Հիւկօ, Վերլէն, Սամէն, շատոնց դադրած էին ֆրանսացի բանաստեղծները ներշնչելէ, հրապարակէն քշուած էին, «զլխատուած»: Ծիծաղելի էր այլեւս զգացումներով յորդուն, երաժշտութեամբ միայն հարուստ քերթուածներ գրել: Քերթուածի մը յօրինումը կը հպատակէր շատ աւելի բարդ օրէնքներու: Երգ մը չէր ան այլեւս, ո՛չ մեղեդի եւ ոչ իսկ լոկ մտածում: Ճարտարապետական բարդ կառոյց մը, որուն յօրինումին կը մասնակցէին մեր բոլոր ուժերը, մեր գիտակցութեան ու նաեւ անգիտակցութեան մէջ պահուած ուժերը: Ամփոփելու համար ըսենք որ քերթուած մը այլեւս չէր կրնար սրտածնական ըլլայ, այլ միայն հոգեծնական, իմացական: Եւ դո՛ւն, Սարաֆեան, ըմբռնեցիր այս, առաջին օրէն: Հո՛ւ է քու արժէքդ: Փարիզահայ քու միւս ընկերներուդ հետ, դո՛ւն էիր որ նոր ածու մը բացիր, նոր ակօս, «նոր անջրպետ»՝ հայ քերթողութեան համար:

– Այո՛, թերե՛ւս...

– Վստահ եմ. վստահ նաեւ որ դո՛ւն ալ վստահ ես...

– Թերե՛ւս, թերեւս նոր բան մը ա-

Լեյցուցի մեր նախորդ սերունդի ժառանգութեան վրայ:

– Անպայման, սիրելի բանաստեղծ: Այստեղ ուրիշ հարցում մըն ալ կ'ուզեմ ուղղել քեզի. հարցում, որուն պատասխանը տուիր արդէն:

– Չեմ հասկնար, ի՞նչ ըսել կ'ուզես: Եւ ո՞րն է այդ հարցումը:

– Քիչ մը առաջ ընդարձակ գրութիւն մը կարդացիր ինձի, արձակ: Հարցումն ծնաւ անկէ: Ահաւասիկ. ի՞նչ կը մտածես, Սարաֆեան, Հայութեան մասին, մեր մշակոյթին մասին: Ուրիշ ձեւով մըն ալ դնեմ հարցը.– Ի՞նչ է հայկական ոգին. ինչո՞վ կը տարբերինք ուրիշներէն: Նոյն ձեւով կը տեսնենք աշխարհը թէ ունինք մեզի յատուկ, տարբեր նայուածք մը:

– Հասկցա՛յ, ո՞ր հատուածին կ'ակնարկես. ա՛ն եւ ընդօրինակէ:

– Շնորհակալ եմ, դուն ալ զի՛ս հասկըցար: Ուրեմն վերոյիշեալ հարցումիս՝ ահա՛ քու պատասխանդ.

Մենութիւն՝ աշխարհի մէկ ծայրին վրայ: Կտրուած կապեր: Ո՛չ հայրենիք, ոչ սպգ: Մենութիւն՝ տարիներու ճիգերէ ետք:

Անօգուտ այդ ճիգերն ու վաստակը: Խլուած՝ ճիգին եւ վաստակին ուրախութիւնն իսկ:

Եւ սակայն, ոչ մէկ կապ կտրուած է իրականին մէջ, ոչ ալ զանոնք կտրելու փափաք: Ազգութիւնը շատ աւելի պզալի է այս մենութեան մէջ, ծովուն առջեւ: Օտարութիւնը, կտրուած կապերը շատ աւելի ցայտուն կը դարձնեն ինքնութիւնը: Եթէ մոռնանք իսկ պայն, մեր երեսին կը պարնեն մեր ինքնութիւնը:

Շատ աւելի ցայտուն է, եւ մեզ՝ իմացական ու պագական խորութեան տանող պորութիւն է մեր Հայութիւնը:

Այլ ապգերու վաւակներ կրնան աւելի խելացի, պարզացած եւ խոր ըլլալ, բայց չեն կրնար տեսնել այն ինչ որ կը տեսնենք մենք՝ աշխարհին նայելով, չեն կրնար տալ այն, ինչ որ կու տանք մեր հայութեամբ:

Չեն կտրած կապերը եւ ո՛չ մէկ փափաք կտրելու: Այլ զանոնք աւելի եւ աւելի տարածելու կամք:

Ոչ որ կրնայ արհամարհել աշխարհը՝ մեզի պէս եւ գեղեցիկ ու մարդկային աշխարհի մը կարօտը պզալ նոյն ատեն: Ոչ որ կրնայ արարչութեան սեւեւել նայուածքը մեզի պէս:

Աւելի ընդարձակ են ներքին հորիզոնները: Տեսողութիւնը աւելի մեծ, մինչ մեր բոլոր տեսածները կ'երեւան մեզի՝ խախուռ, փոփոխական եւ մեծ խռովք է մեր մէջ:

Սպառում բայց աճում է նաեւ՝ նոյն ատեն:

– Այս իսկապէս գեղեցիկ արձակը զիս փոխադրեց տասնհինգ տարի ետ: Նոր ծանօթացած էինք իրարու, կը յիշե՞ս, Սարաֆեան: Մեծամտութիւն չըլլա՞ր արդեօք իմ կողմէս, եթէ ըսեմ որ ձեւով մը ինձի կը պարտիս զայն:

– Ի՞նչ բան քեզի կը պարտիմ... չեմ հասկնար...

– Այդ հրաշալի արձակդ:

– Կրնայ ըլլալ, բայց դա՛րձեալ չեմ հասկնար:

– Կը յիշե՞ս որքա՛ն ետեւեդ ինկայ արձակ գրութիւններ առնելու համար քեզմէ, «Արեւմուտք»ի մէջ տպելու, երբ ժամանակ մը կը գրադէի այդ թերթով: Կը յիշեմ նոյնիսկ որ օր մը բռնեցիր զիս Ռիւ Ռիշէի անկիւնը եւ տարօրինակ դէմքով մը հարցուցիր. «Փօլատեա՛ն, իսկապէս այդքան կը սիրե՞ս արձակս, որ շարունակ կը պահանջես...»:

Խանդավառ արտայայտութիւնս թեւ չփարատեց կասկածը, բայց բարեբախտաբար, շարունակեցիր նոյն ուղղութեամբ: Կատարեալ արուեստի գործեր են եւ ես շատ բարձր կը գնահատեմ «Վենսէի անտառը», «Մանուկ Դուինեանը», «Մեծն Տիգրան կամ Լոյսի Սատանան», ու նաեւ ուրիշներ:

– Կը կարծե՞ս որ անոնք, Փօլատեա՛ն...

– Կրկին պիտի սկսինք վիճիլ... Բայց դուն իմ պահանջիս գոհացում չտուիր:

– Եթե իսկապես լաւ են, ա՛յդ պարագային միայն կ'ուզեմ պարտական ըլլալ քեզի: Որովհետեւ յիշեցումդ ճիշդ է, դուն պնդեցիր ամենէն աւելի:

– Օր մը թերեւս զիս յիշեն Յայոց գրականութեան մէջ, ա՛յս խոստովանութեանդ առնչութեամբ...

– Չե՛ս կարծեր որ դարձեալ կը չափազանցես:

– Լա՛ւ, այդպէս թող ըլլայ: Ապագան կը ճշդէ: Գրուածքի մը կեանքը, Սարաֆեան, շատ տարօրինակ է: Դուն ալ, ես ալ չենք գիտեր թէ ապագայ սերունդները ի՞նչ պիտի պահեն մեզմէ: Ինծի կը թուի թէ քերթուածներուդ կողքին, արձակդ պիտի մտնէ Յայոց գրականութեան մէջ ու գրաւէ տեղ մը, որուն մասին զաղափար չունիս ու չես կրնար ունենալ: Բայց եթէ կ'ուզես, դարձնենք այս էջն ալ:

– Դարձնե՛նք, բայց ինչի՞ մասին կ'ուզես շարունակենք խօսիլ տակաւին:

– Քու մասիդ:

– Ի՞նչ մասիս. ... Բայց վերջ ունի՞ այդ, յետոյ, չի՞ բաւեր: Ի՞նչ կ'ուզես գիտնալ ինձմէ, որ դեռ չես գիտեր:

– Ի՞նչ է կարծիքդ արդի համաշխարհային գրականութեան մասին: Ո՞ր հասած ենք: Քառասուն տարուան փորձերը ո՞ր հասցուցին քեզ: Ինչի՞ կը հաւատաս:

– Այո՛, հասկցա՛յ...: Կը հաւատամ յեղաշրջումի մեծ օրէնքին: Յեղաշրջումով նիւթը կը փոխակերպուի լոյսի, իմացականութեան: Տիեզերքի միակ մեծ հրաշքը այս է: Այդ յեղաշրջումին մաս կը կազմեն պայթարն ու տառապանքը:

Վալերի կը կարծէ թէ անգլուխ է տիեզերքը ու ամէն ինչ կ'աճի ինքնաբերաբար, բոյս, կենդանի, մարդ: Համաձայն չեմ, չեմ կրնար ըմբռնել տիեզերքը այդ ձեւով: Չեմ կրնար մանաւանդ համաձայն ըլլալ Սարթրին, Քամիւին: Անտրրամաբանական, *սպսիւրտ* կը գտնեն տիեզերքը, մարդը, մարդկային կեանքը: Աւելի ճիշդ չէ՞ ենթադրել որ մենք չենք հասկնար: Ո՛չ թէ տիեզերքն է *սպսիւրտը*, այլ մենք...: Չենք հասկընար շատ մը բաներ, բարութիւն, չարութիւն: Նոյն բանն են սակայն, նոյն իրողութեան երկու երեսները: Ինչպէս են տառապանքն ու ուրախութիւնը: Մեծ տառապանքներէ միայն կրնանք հասնիլ իրական ուրախութեան: Հարցուր *միսթիքներուն*: Հա՛, կը հարցնէիր, Փօլատեան, թէ ո՞ր եմ հասած ես: Կը կարծեմ թէ հասած եմ տեղ մը, ուրկէ ամէն ինչ կը դիտեմ ա՛յ, տարբեր աչքերով: Կը տխրիմ մտածելով թէ ինչո՞ւ յաճախ զբաղած եմ երկրորդական խնդիրներով, պզտիկ վեճերով ժամանակ վատնած: Կ'ամընամ շատ մը արարքներէս, ըսածներէս, գրածներէս: Հաւանաբար այդ տկարութիւններն ալ մաս կը կազմեն կեանքին: Հարկ է յաճախ սայթաքիլ, պայծառութեան հասնելէ առաջ: 1950ին էր որ յանկարծ այդ քառասային վիճակը վերջ գտաւ ու ես հասայ պայծառութեան:

– Ուրախ եմ լսելով այդ լաւատես մտածումներդ:

– Լաւատե՛ս, թերեւս բոլորովին ճիշդ չէ բառը: Հասունութեան մը, աշխարհ(հա)իմացումի մը, որ լաւատեսութիւն չէ՛ անպայման: Կրցա՛յ բացատրել արդեօք, ու գոհացուցի՞ քեզ:

– Այո՛:

– Եթե կ'ուզես հոս ալ վերջացնենք մեր գրոյցը:

– Չենք կրնար, քանի մը ուրիշ հարցումներ ունիմ տակաւին: Ինչ կը մտածես արդի գրականութեան մասին, Յայաստան եւ արտասահման:

– Հասկնալի է որ Յայաստանի մէջ գրուած բանաստեղծութիւնը չի գոհացներ զիս: Չի գոհացներ նաեւ զիս Սփիւռքը: Չկրցանք անկախ գրականութիւն ստեղծել՝ իմաստութիւնը չունեցանք հաւաքական աշխատանքի լծուելու: Բանաստեղծներ, գրողներ ունեցանք, բայց գրականութիւն չստեղծեցինք:

– Քանի որ հոս հասանք, կ'ուզե՞ս քիչ մըն ալ խօսիլ «Յարդգող»ի, «Մենք»ի շրջանի մասին: Ինչո՞ւ ա՛յդքան կարճ տեւեց այդ հրաշալի շարժումը:

– Խառնաշփոթ շրջան մըն էր եւ իրարու հետ շաղախուող տարրեր չէինք: Ամէն մէկս տեսակ մը, Շուշանեանը, Շահնուրը, միւսները...: Նարդունին, գոր կը սիրեմ, կրնար վճռական դեր կատարել, ըլլալ մեր ղեկավարը, բայց չեղաւ: Չեմ կրնար մեղադրել զինք: Հակամարտ, զիրար չհանդուրժող ուժեր էին: Շուշանեանը, կրակ ու բոց կտրած, ոզի ի բռին նետուեցաւ քաղաքական կրկէս, Շահնուրը հեռացաւ, ուրիշ ձեւով մը: Ես, քանի մը ուրիշներու հետ, ամենէն անկեղծն էի, ամենէն հեզը: Ոչ ոքի չարութիւն չեմ ըրած, չեմ ցանկացած: Բայց շատեր ելան դէմս, վիրաւորեցին, զիս միամիտի մը տեղ դնելով:

– Եւ կամ ալ նախանձելով:

– Թերե՛ւս ... Ամէն պարագայի բարութիւն, խոնարհութիւն՝ տկարութիւն

չեն նշանակեր: Ամէն գրող իր եսը ունի: Ոչ ոքէ պակաս խելացի եմ: Խելք եւ խորամանկութիւն նոյն բաները չեն: Իմ մէջս կայ հպարտ մարդ մը ու նաեւ տղայական հոգի մը: Ամէն ճշմարիտ արուեստագետ այդպէս է: Տարր մը կայ որ դեր կը կատարէ արուեստին մէջ: Խորամանկ *պահապը* չի կրնար արուեստագետ ըլլալ: Իմ դէմքս պայծառ է, կ'ուզեմ որ ամէն մարդ զայն տեսնէ: Ես իմ պայծառ դէմքս կ'ուզեմ:

– Պայծառ կը տեսնենք դէմքդ, ամէ՛նքս ալ, կրնաս վստահ ըլլալ, Սարաֆեան:

– Շնորհակալ եմ: Գիտեմ որ դուն ալ ինծի նման ես, անկեղծօրէն բարի, բայց...

– Ձգենք ուրիշները, Սարաֆեան, ինչո՞ւ զբաղինք չարերով, քիչ մը առաջ դուն էիր ըսողը, որ հասած ես տեղ մը, ուրկէ կը դիտես աշխարհը, մարդի՛կ...

– Իրաւունք ունիս: Ուրիշ հարցո՞ւմ:

– Լման չպատասխանեցիր նախորդին: Ըսիր թէ Յայաստանը քեզ չի գոհացներ, ոչ ալ Սփիւռքը...

Աղուոր է եւ շատ յստակ:

«Չրոյց»իս նպատակներէն մէկն էր ներկայացնել գործը, բայց կարծեմ թէ շատ տարածուեցանք, եւ դեռ չենք հասած եզրակացութեան: Գիտե՞ս որ ամբողջութեամբ կրկին կարդացի գործը:

– Իրա՛ւ, եւ ի՛նչ եղաւ տպաւորութիւնդ:

– Դուն կը կարդա՞ս գրածներդ, Սարաֆեան:

– Ո՛չ, գրեթէ ո՛չ: Բայց չպատասխանեցիր հարցումիս:

– Կարդացի հաճոյքով, յուզումով: Բանաստեղծութիւն մը տասը տարին

անգամ մը պետք է վերստին կարդայ, հաստատելու համար թե կը հիննայ ան եւ կամ ալ կը փոխուի՞նք արդեօք մենք:

Ո՛չ մէկը, ոչ միւսը այս պարագային: Աւելի մեծ գեղեցկութիւններ գտայ, զոր չէի տեսած տասը տարի առաջ: Կատարեալ է «14»ը, ու չեմ կարծեր որ սլ մոռնամ զայն.

«Կարելի չէ քեզ մոռնայ, ո՛վ արիւն...»: Ան կը հնչէ մեր ականջին, հաւաքական երգումի մը պէս:

– Սփիւռքին հետ եմ ես, սիրտս տկարներուն հետ է: Կը ճգնուի մեր ժողովուրդը: Չեմ կրնար բաժնուիլ անկէ: Տառապած է, ջարդուած, ի՛նչպէս չըլլալ անոր հետ: Կ’ուզես քերթուած մը կարդամ քեզի: Անցեալ ամառ գրեցի ու դեռ անտիպ է: Եթէ կ’ուզես արտագրէ միայն սա չորս տողը, մտածումս կու տայ.

*Մերթ կը տեսնեն «խեղդամահ հայրենիքիս աչքին պէս»
Լուսինն՝ ու մերթ հայրենիք մը նոր ու վառ կը յիշեն:
Յին կարօտներ կը հանեն զիս մերթ ընդ մերթ՝ նորին դէմ,
Եւ նորերուն առջև՝ զիս հիներով խեղճ կը պզտնու:*

– Չիս գրաւեց սակայն ամենէն ավելի «Միջնաբերդ»ի Յրահաւը: Յրաշալի քերթուածաշարք մըն է, ծայրէ ի ծայր գեղեցիկ: Չէի ըմբռնիւնս ան հաճոյքով: Ամբողջութեամբ ներկայ ես հոն, Սարաֆեան, մտածումներովդ, ինքնատիպ արուեստովդ:

Մտիկ ըրէ զիս վայրկեան մը.

*Յրէջը մեռաւ
Յրէշտակ մը փող հնչեցուց:
Եւ այդ հրէշտակը թռչուն մըն էր հսկայական:
Անոր անունն էր Յրահաւ:
Յրէշին արեամբ կապմունեցաւ լիճ մը կարմիր:
Եւ այդ լիճին մէջ կղզի մ’էր թռչունը մեծ,
Կղզի մը՝ որք ոճիրներու,*

*Եւ ովսախս նոյն ատեն:
Կը շառայլէր արմաւենոյ մը նման:
Եւ նա մ’էր ան, ապատութեան հովերէն
Ուռած փարթամ առագաստով:
Իր անունն էր Մտածում:*

Ու սա քանի մը տողը, բարձունքին հասած մարդուն աղօթքը.

*Եւ մարդն յոգնած՝ սարսափահար՝ աղերսեց սէր,
կանչեց, պոռաց
Անոր, որ տերն էր ցաւերուն տարածութեան այդ
անասիման,
Ուր ան լքուած կը պզար ինքզինք: Պատմեց տանջանքն
իր բարձրացման,
Ան խնդրեց գուր ու բարութիւն, աղաղակեց սրտով
մ’այրած:
–Մարդացեալ Տէր, մարդացոր պիս, մարդկային Լոյս,
Մարդո՛ց Աստուած...*

Ու վերջին քերթուածը մանաւանդ, այդ մեծ, իմացական պոեմին վերջաբանը, կատարեալ ամեն տեսակէտով: Թոյլ տուր կարդամ ու վերջացնեմ.

*Ուպեցի միշտ որ դուն գաս, Գեղեցկութիւն՝ ուղեղէս
Ծընունդ առած, հրակեցի, եւ յուսացի ես նրման
Անոր որ հողն ատենեց ծովերէն վերջ անասիման,
Գաս եւ ինծի բերկրութիւն, անդորրութիւն մը բաշխես:
Գաս մահիճիս քով՝ անձայն, քայլովն այգի մը վրսեմ,
Չիս հաւատքով, բարութեամբ, գեղեցկութեամբ ոռոգես:
Ըզգամ թէ չեմ խաբուած ես նախընտրելով քեզ կեանքէս,
Բերես շնորհներս իմ, որոնց տարիներով կը սպասեմ:
Բայց եթէ դուն, սրբութիւն իրագործման, ինծի՝ իմ
Գոհացումիս հետ պիտի տաս ամլացում մը եւ ես,
Նրման անոր որ հասաւ, պիտի ընդմիշտ կրկրիմ
Քենէ, ինէ, ըլլալու քաղցրութենէս, ծարաւէս,
Բիւրեղացած, խաղաղած՝ պիտի փակեմ սպազաս,
Լաւ է որ միշտ ուշանաս, ըսպասեմ, զիս խրոշովես,
Չըզան, քանի որ իմ մէջս այդպէս է լոկ որ կաս...:*

– Ի՞նչպես կը գտնես գրածդ, Սարաֆեան:

– Իրաւունք ունիս, ես ալ չէի գիտեր թէ ա՛յդքան գեղեցիկ էր, կը թուի թէ ես չեմ գրած...

– Դո՛ւն ես գրած, ու այսպիսի քերթըւածներով է որ կը շարունակես, կը ճոխացնես արեւմտահայ բանաստեղծութիւնը: Արժանաւոր քուրմն ես այն բագինին, գոր հիմնեցին արեւմտահայ քերթողները, իրենց տաղանդով, իրենց արիւննով ոռոգեցին զայն: Ու ըրին այնպէ՛ս, որ ան դառնայ հայ բազմածալ ու լուսաշող հանճարին մէկ նոր կողողը: Դուն, Սարաֆեան, օրինաւոր ժառանգորդն ես, պահապանն ու շարունակողը արեւմտահայ այդ մեծ շարժումին:

Սփիւռքը երկար ատեն մոռցաւ որ տներն էր այդ գանձին եւ թէ պարտաւոր էր զայն պահել, շարունակել, ճոխացնել:

Տասնեակ տարիներ թափուր մնացած բագինը: Ցանցառ թիւով ուխտաւորներ միայն այցելեցին անոր: Ան չը դարձաւ ուխտատեղի, հաւաքական ճիգի, ներշնչման ու ստեղծագործութեան աղբիւր:

Բայց ահա որ նորեր, հայորդիներ, հաւատաւոր ու շքեղ, շքեղ իրենց հալութեամբ, ձեռք կ'առնեն ջահը, կը լուսաւորեն թողթուած բագինը ու կը կանչեն մեզ կոչունքի, հոգեկան եւ իմացական հարսնիքի:

Պարտաւոր ենք պատասխանել հրաւերին, բոլորս, անո՛նք որոնք տա-

ղանդ ունին, անոնք որոնք հաւատք ունին, դո՛ւն, ես, բոլորս:

Մեր փրկութիւնն է, մեր կեանքին իմաստը: Պէտք է համախմբուինք: ԸՍփիւռքի բոլոր մեկուսացած, կեղորոնախոյս ուժերը պէտք է համախմբուին, բոլոր գետերն ու գետակները պէտք է հոսին դէպի հո՛ւն, դէպի մեր իմացական աւազանը:

Այնպէս չէ՛, սիրելի բանաստեղծ, համաձայն չեմ ինձի:




– Ի՞նչպէս կրնամ համաձայն չըլլալ, ի՞նչպէս կրնամ չհրճուիլ...


– Ուստի սօտթենք մեր թեւերը, մէկդի նետենք տարիներէ ի վեր մեր կրած յուսահատութեան ցնցոտիները, մերկանանք մեր անիմաստ ու ամուլ վեճերէն եւ վճռաբար նետուինք այդ կենարար ջուրերուն մէջ, լողանք ասիւ ասիւ, իրարու ձեռքէ բռնած, իրարմով երջանիկ:

Ու թոյլ տուր ինձի, սիրելի Սարաֆեան, որ իբրեւ եզրակացութիւն այս «գրոյց»ին, քու եւ իմ կողմէս, ողջունեմ «Բագին»ի շուրջ հաւաքուած մեր եղբայրները, եւ ըսեմ թէ իրենց հետ ենք մենք, հոգիով, սրտով, թէ արեւմտահայ միտքը, լեզուն, գրականութիւնը մեր ալ «կրօնքն է»:





Անով կ'իմաստաւորուի Սփիւռքի մեր հաւաքական կեանքը, անով կ'իմաստաւորուին մեզմէ իւրաքանչիւրին ճիգերն ու վաստակը:

(Թիւ 3, 1963)





ՔՐԵՆՆԻՆ Կ. ՆՈՐ 1944 ՆՈՎԵՄԲ. ԲԻՈ 12



ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ՄԵՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ. 3. ՕՇԱԿԱՆ

1921ին, երբ Պոլսոյ Կեդրոնականի մէջ ուսանող էի, իմ ալ միւսին եղաւ ան: Իրմէ առաջ, 1920ին, մեր շարադրութեան ուսուցիչն էր պր. Լ. Թաշճեանը, որ յունաց հին պատմութեան եւ հայերէնի ընթերցանութեան դասերն ալ կ'աւանդէր միաժամանակ: 1921ի սկիզբն էր, որ դասարանին մէջ շշուկ մը տարածուեցաւ, թէ պր. Թաշճեանի տեղ՝ շարադրութեան դասերու ուսուցիչ պիտի ունենանք «Ազատամարտ»ի մէջ պատմուածքներ եւ «Հարթենք»ներ գրող Յ. Օշականը, որ այդ օրերուն, մեր գրական հրապարակին վրայ, ամենէն շատ խօսուած, դատուած, դատապարտուած հաւնուած ու հալածուած անունն էր: Չմոռնամ ըսելու, որ այդ տարին մեր դասաժամերու ցուցակին մէջ «Շարադրութիւն» դասը փոխարինուած էր «Գրականութիւն» դասով, ինչ որ ակնյայտ կ'ուտար ուսուցչական կազմի մէջ տեղի ունեցող փոփոխութեան մասին շրջող զրոյցներուն: Իրաւ այ, երբ հասաւ դասի առաջին հինգշաբթին, հանդարտ ու ամուր քայլերով մեծ մարդ մը մտաւ դասարան, անցաւ ուսուցչական սեղանին ետեւ, աչքերը մեր վրայ պտրտցուց անգամ մը ու ըսաւ.

– Բարի լոյս, տղա՛ք նստեցէք:

Ինքն ալ նստաւ: Աթոռը, որուն վրայ դրաւ ան իր մտեղ ու խոշոր մարմինը, ճարճատեց ու սպառնաց փլիյ, բայց, ի մեծ յուսախաբութիւն մեզի, միտքը փոխեց ու որոշեց տոկայ:

– Ձեզմէ ով որ բան մը գրած ունի, թող ոտքի ելլէ ու կարդայ, ըսաւ ան՝ խօսքը ընդհանուրիս ուղղելով:

Բարտիներու ծառաստանի մը վրայէն հովը անցածի պէս շշուկ մը մտաւ դասարանին մէջ. ոչ ոք կը յանդգնէր առաջինը ըլլալու, ու ամէն մարդ, քովինին կ'ըսէր, որ ինք ելլէ ու կարդայ:

– Աղէկ, հասկցանք,– կը միջամտէ Օշական, հարկ չկայ իրար անցնելու ու մատով ցոյց տալով խոշորկեկ տղայ մը կ'ըսէ.

– Դուն ե՛լ կարդա՛ տեսնեմ, մենծ տղայ:

Ու մինչ «մենծ աղան» կը կարդայ, ան կը ծամածռէ իր դէմքը ու հիասթափման նշաններ ցոյց կու տայ (մեզի այնպէս կը թուի):

– Կը բաւէ,– կ'ըսէ ան վերջապէս՝ խօսքը կարդացողին ուղղելով, ու անմիջապէս յետոյ՝ մեզի տղա՛ք, մտիկ ըրէք, ձեզի բանի մը ընդհանուր խորհուրդներ տամ. լաւ մտիկ ըրէք, որ կարենաք օգտուիլ անոնցմէ:

Ու կը դնէ թեւերը սեղանին վրայ, մատները կը հիւսէ իրարու, եւ թեթեւ մը առաջ, ու արմուկներուն վրայ հակած կը սկսի խօսիլ:

– Մոռցէ՛ք մինչեւ հիմա ձեր գիտցածը ու գրեցէ՛ք ձեր ապրած ու տեսած միջավայրէն, ձեր յուզումներէն, ձեր կեանքէն: Ձեզմէ ուզուածը՝ այդ ապրումներուն կարելի իրաւութիւնն է, հարազատութիւնը, համոզկերութիւնը: Նիւթերու ընտրութեան մէջ կը ձգեմ ձեզ ազատ, գրեցէ՛ք ինչ բանի մասին որ կ'ուզէք ու կը խորհիք թէ կրնաք: Սկսեցէ՛ք արտաքին աշխարհէն, ձեր շրջապատէն, անշունչ իրերէն, մարդերու արտաքիններէն, ու ասոնք թող առաջնորդեն ձեզ մարդոց ու ձեր ներքին աշխարհներուն: Ձեր շարադրութիւնը թող մինակ քերականութիւն չըլլայ, ոչ ալ ածականներու շեղակոյտ: Հոգի դնել ջանացէք անոր մէջ: Դրէք ձեր անձէն ու անձնականութենէն մասնիկներ, երեսիկներ: Շարադրութիւնը միակն է, որ ձեզի պատեհութիւն կու տայ ձեր եսը ցուցադրելու, օգտուեցէ՛ք այդ պատեհութենէն:

«Սորվեցէ՛ք դիտել. նայիլը տեսնել չէ. տեսնելը՝ ուրիշին նայուածքէն խուսափածը, ուրիշին տեսնել չկրցածը բռնելն է. ահա այդ խուսափածը, թաքնուածը տեսնել եւ ճշգրտօրէն նկարագրելը գրականութիւն ընել ըսել է, արուեստ ըսել է: Եղծարիտ արուեստը, ցանցառ վիճակներ վերարտադրելուն մէջ կը կայանայ... Ու երբ կը վերարտադրէք, այսինքն՝ երբ կը նկարագրէք ամէն բան, մա՛նաւանդ մէկ տեսակի բան մի՛ դիզէք իրարու վրայ, տարտղնեցէ՛ք, քիչ մը կեանք, քիչ մը շարժում, քիչ մը սիրտ, քիչ մը խռովք եւ քիչ մըն ալ՝ նկարագրական, որ... եթէ աստոնցմէ մէկէն կամ միւսէն ձանձրոյթ յառաջացնելու վտանգը գլուխ վերցնէ՛՛ ճրգմըլի:

«Գրեցէ՛ք ձեր հայրենի երկրէն, իր դաշտերէն, մարդերէն, անուշութիւններէն, կարօտներէն: Ձեր դէմքերէն կը կռահեմ, որ շատ գաւառացիներ կան ձեր մէջ, բախտաւորներ, որոնք մեծ հայրիկներ ու մեծ մայրիկներ, պապեր են ճանչցած. հարս ու կեսրոջ վէճերու եւ գզուըրտութիւններու են ունկնդրած. թող գրեն անոնց մասին: Ամէն գեղ ունի իր խենթը, իրապէս պակասաւոր խենթը, նաեւ չակերտըլած խենթը, որ միշտ ալ, աղուոր տիպ մըն է, յանդուգն, կտրիճ, *դասպատայի*, սիրւած: Սիրուած մա՛նաւանդ աղջիկներէն, որոնց միշտ ալ կ'արգիլուի անոնց հարսը դառնալ... Հաւատարիմ մնացէ՛ք նախատենչերուն: Իրապաշտ արուեստը, ամենէն առաջ, պարկեշտ ու հաւատարիմ գծագրութիւն մըն է, ուր գոյներու խտացումը չափազանցութեան չի տարուիր ու ներքին կեանքին հանդէպ կը պահէ իր լրջութիւնն ու հարազատութիւնը: Այսօր այսքան»:

Իր մեկնումէն ետք, իր մէջ քառուսունէ աւելի աշակերտ համրող դասարանին կարծիքը շուկային մէջ Օշականի մասին տիրող կարծիքէն բնաւ տարբեր չէր:

* * *

Ամեն հինգշաբթի, դասասկիզբը ծանուցող զանգակեն հինգ վայրկեան առաջ, անպատրաստները կ'աճապարեին ապաստանիլ դասարանի հեռաւոր ու անմատչելի անկիւնները, մինչ ուրիշներ, գրածնին կարդալու մարմաջով, կը գրաւէին անոնց լքած դիրքերը, աղմկելով, կռուելով, իրար հրելով:

Խաղաղութիւնը ետ կու գար դասարան, երբ դուռը բացուելով ներս կը մըտներ եթէ ոչ կլորիկ, գէթ գիրուկ ու ամրակազմ մարդ մը, բարի դէմքով ու հաստատ քալուածքով:

Դուրսի աշխարհը Օշական անունով կը ճանչնար զինք, մենք՝ «Մենծ աղա»: Ուսուցչական սեղանին առջեւ «բարի լուս» մը կը նետէր ոտքի վրայ սպասող տղոց ու ժպտող աչքերը պտըտցնելով անոնց վրայ, որ ցաւագնօրէն կը ճարճատէր, խօսք կ'ուղղէր առաջին տղուն.

– Ել նայիմ, «մենծ փիլիսոփայ», ո՛ւրտեղացի ես:

– Մշեցի:

– Մուշը կը յիշե՛ս. քանի՞ տարի է անկէ հեռանալը:

– Վեց տարի:

– Քաղաքէ՞ն ես:

– Ո՛չ, գիւղէն:

– *Յէլէ* ատոր գեղ ըսէ: Ձեզի խրատ՝ բոլոր անոնք, որոնք զաւառացի են, թո՛ղ *գիւղի* տեղ *գեղ* գործածեն: Կարդա՛:

– «*Վերջապոյսի պատկերներ*»...

– Ա՛յ, ի՛նչ շողշողուն վերնագիր է. քալէ՛:

– «*Իրիկուն է. հորիզոնին վրայ արեւը մահին կը մօտենայ մինչ նուաղկոտ ու մաշած ցոլքեր կը վէտվէտին՝ ճերմակ ամպերու խառնիխուռն գեղմին մէջ ոսկեւո...*»

– *Ճանրմ*, – կ'ընդմիջէ Օշական, – տղան *թամ* բանաստեղծ է: Ես ձեզի ըսած չե՛մ, որ պարզ գրէք, առանց զարդի: Գրականութիւն ըրած ըլլալու համար մի գրէք. աշխատեցէք պարզ ու բնական ըլլալ. մի տարուիք *շիք* բառերու հրապոյրէն: Շարունակէ՛:

– «... *ծելով անհունի մէջ նիհար քաղուկներու պէս նետուող, մահիկաւոր միւնարթթներու երկար սիլուէթները եւ հեռաւոր հորիզոններու կապոյտին մէջ գծագրըւող նոճիներու ստուերախիտ պուրակները, որոնց մէջ...*»

– Կեցի՛ր, – կ'ընդմիջէ Օշական, – ես շարունակեմ, հաւանաբար թռչնոց խումբեր եւ անոնց կապած քաղցր դայլայլիկներ ունիս:

– Այո՛, միւսիւ:

– Գետինն անցնին այդ բոլորն ալ, նոճիներն ալ, թռչուններն ալ, պուրակն ալ:

Յիմա անցիր տեղդ եւ աշխատէ չմոռնալ խրատներս:

– Միւսիւ, վերջը պարզ գրած եմ:

– Սկի՛զբը ինչու այնպէս է. սա նախաբա՛նն է. քալէ՛, տեսնենք:

Խեղճ տղան թաշկինակը կ'անցընէ ճակտին վրայէն ու քանի մը հատուած

ցատկելով՝ կը սկսի կարդայ. «Գլխարկս գըլուխս կը դնեմ ու հացիս ծրարը առած...»

– Կը բաւէ, անցի՛ր տեղդ,– կը սրտնեղի Օշական,– գլխարկը ոտքերնիս չենք դնէր, ոչ ալ կրնանք ուտել. յետոյ, վերջալոյսին հացիդ ծրարով ո՛ւր կ'երթաս: Այս սովորական ու անկապները մեզի մի պատմեր. ամէն մարդու տեսածը ու լսածը մեզ չի շահագրգռեր: Աշխատէ նոր ու չլուած բաներ ըսել. եթէ չես կրնար տեսնել զանոնք, գէթ նոր ձեւ մը գտիր, մա՛նաւանդ գրէ տեսած ու ապրած միջավայրէդ. այլապէս անօգուտ է այն ազատութիւնը, զոր ես ձեզի կու տամ նիւթերու ընտրութեան մէջ: Բարեբախտ ես, որ Մուշի պէս տեղ մըն ես ծնած: *Քեպայայ* դարձուցած չէ՞ք հոն: Կրնաս հրամցնել մեզի անոր բերնի ջուր վազցնող գոյնը, հոտը, բրինձով լեցուած դառը կամ հընդկահաւի մը արքայական զիստը: Ասոնք բացառիկ բաներ են: Հացիդ ծրարը իր երկու կուտ ձիթապտուղով մի բանար մեր առջեւ վերջալոյսներու տակ, լսեցի՛ր: Անցի՛ր տեղդ եւ մի մոռնար խրատներս: Չեմ ըսեր, թէ բոլորովին պարապ է գրածդ. հոն քանի մը յաջողած պատկերներ կան, բայց կորած են ընդհանուր շփոթին մէջ: Յաջորդը թո՛ղ գայ:

Դեղնած ու ճղլած տղայ մը կը բաժնուի սեղաններէն ու, տետրակը ձեռքը՝ կը սպասէ հարցաքննութեան:

- Դո՛ւն ուրտեղացի ես:
- Գու՛մ-Գափուլցի:
- Կարդա՛:
- «Պայլքճիները»...
- *Թան* գլխուն գարկիր. *հայտէ՛*՝ նայինք:

Ձկնորսներու առօրեայ կեանքէն առնուած հասարակ նկարագրական մըն է աս տղունը, զոր կարդաց առանց ընդմիջուելու:

– Ինձի նայէ, տղա՛ս,– կը խօսի Օշական,– գրածիդ մէջ ինչ որ գետնին վրայ է, կարելի է յաջողուած համարել, բայց քու ձկնորսդ թուղթով շինուած է, հոգի չունի: Յաճախ բառ մը, խօսք մը փրցուած անոր բերնէն, կամ հոն դրուած, շատ աւելի բան կ'ըսեն մեզի, քան ամբողջ հատուածներ ու էջեր: Չե՛ս լսած, անոնք *թոհաճ* խօսքեր ունին: Օրինակ, «հայտէ՛, գնա՛, դուն ատ ձուկը չես կրնար ուտել, փշոտ է»: Սուղ ձուկերու գնորդ ելլող աղքատ յաճախորդներու կ'ըսեն ատանկ բաներ: Յաջորդը գայ:



ԱՆ ԻՐԱՆԸ

Օշականի ծաղրանկարը՝ Տիրան Աճեմեանի

Այս վերջինը գալառացի մըն է, որ գիւղի մը պատկերը կը վրծինէ քանի մը հարուածով. կը նկարագրէ աղբիւրին գիշերուան երգը ձմեռ ժամանակ:

Չգայուն տղայ մը ըլլալու է: Բառերը, կարծես հնչին ու կարկաչ դարձած կը հասնին մեր ականջներուն, եւ կարծես մենք կը տեսնենք ձիւնապատ դաշտին մէջէն իր ուղին գծող առուին խաղաղ ու ջինջ ջուրերը:

Կ'աշխատինք կարդալ ուսուցիչին դէմքը, որ ամփոփուած է. անոր աչքերը տարօրինակ ու անանուն բան մը ունին իրենց մէջ, որ կարելի չէ նկարագրել՝ կարծես ան ճիգ կ'ընէ մտաբերելու տեսարան մը ու անոր կապուած հնչին մը, որ կը փախի մտքէն եւ որ ըսուած է անգամ մը, այնտեղ, հեռուն, գեղի պարտեզներուն խաղաղ կիսախաւարին մէջ, հին ու երջանիկ օրերուն:

Երբ ընթերցողին ձայնը կը կտրի, ան յաջորդ մը կանչելէ առաջ, իր չհատնող «բայց»երէն եւ առարկութիւններէն հատ մը երկուք ալ ասոր կու տայ՝ իր «աղէկ էր»ի գնահատումին պոչին փակցուած:

Չանգը կը փակելը վէճը: Աղմուկը գլուխ կը վերցնէր դասարանին մէջ եւ խառնակութիւնը ծայր կու տար:

– Կեցէ՛ք, դեռ հոս եմ,– դիտել կու տար Օշական ու կը պատրաստուէր մեկնելու:

– Միւսիւ, տետրակները չէ՞ք տանիր սրբագրելու,– կը հարցնէր անհամարձակ պոլսեցի մը:

– Մինչեւ հիմա ըրածնիս ի՞նչ էր:

– Ուղղագրական սխալները ըսել կ'ուզեմ:

– Ըսէք տնօրէնին, ձեզի քերականութեան ուսուցիչ մը թող յատկացնէ: Ես գրականութեան դաս տալու կու գամ:

* * *

Ու իր օրով սորվեցանք սիրել գրականութիւնը: Չորրորդ դասարանը, որ դպրոցի ամենէն հրաքորք, անառակ, անհանդարտ ու անզուսպ կարգն էր, սարէն բերուած մատաղ ձիւն մը պէս ընտելացաւ ու սանձուեցաւ: Դեռ մինչեւ հիմա ալ չեմ կրընար վճռել, թէ սերը գրականութենէն սկսելով տարածուեցաւ ուսուցիչին վրայ, թէ՛ հակառակը, բայց որն ալ որ եղած ըլլայ, իրողութիւնը այն է, որ տղաքը սկըսան կենդանի հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի գրականութիւնը. յառաջացող տարւոյն հետ, անպատրաստներն ու դասարանի հեռաւոր մասերն ապաստանողները պակսեցան, ու գտանք, որ անհամբերութեամբ կը սպասէինք հինգշաբթիին՝ գրականութեան դասը ըմբռնելու համար: Ֆրանսերէն գիտցողները սկսան Ֆլոպեր ու Ալֆրետ տը Միւսէ կարդայ, որովհետեւ միւսին շատ կը հաւնէր անոնց – Չապէլ Եսայեանը փնտռուած հեղինակ դարձաւ, որովհետեւ միւսին կ'ըսէր, որ «մեր ամենէն վաւերական կին գրողն է ան» Վարուժան, Տէրեան, Մեծարեց, Դուրեան այժմոնին առած հայկական Ողիմպոս փոխադրուեցան, ո-

րովհետեւ միւսին կը հաւնէր անոնց, ու շատ մը տղաք, իրենց մասնագիտական դասընթացքը փոխեցին, որովհետեւ միւսին գրելու շնորհ գտած էր իրենց մէջ:

Ու երբ այս տողերուն հեղինակը «մնաք բարի» կ'ըսէր միւսիւին, ան մէկ պատուէր տուաւ՝ «Ուր ալ երթաս, մենձ աղա, գրականութիւնը չմոռնաս»: Չմոռցայ, վարպետ, ու ահա գրական գործունէութեանդ 40ամեակին առթիւ խոր ակնածանքով կը սեղմեմ բեղմնաւոր աջդ ու կ'ըսեմ.

– Շնորհակալութիւն եւ ապրէ երկար, վարպե՛տ, ապրէ երկար:

(Թիւ 10, 1977)

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

*Մ*իրան Աճեմեանի քրոթիները, յաճախ, կես օրուան մեջ, մինչեւ գիշեր, կ'արձակեն յատկանշական ճիւղեր, գիծերը կը տեղափոխուին ու կը նստին՝ գրաւելով իրենց տեղերը, ոմանք կը բարակնան, իսկ ուրիշ գիծեր ալ կ'ուժովնան. կը շարունակուի ձեւափոխութիւնը մինչեւ ոճաւորում, մինչեւ կատարելագործութիւն ու կը ծնի ծաղրանկարը: Երբ դեմք մը, ձերբակալուած է, իւրացուած, կլլուած ու մարսուած իրմէ եւ նետուած իր երեւակայութեան գանձարանին մէջ, ալ իր բեհեղգերուզեան հրամանին ներքեւ է: Այդ դեմքը, ըլլայ նոյնիսկ առիւծի, գայլի կամ շան, կը դառնայ կրկեսի կենդանի ու ծաղրանկարիչին հրահանգին համաձայն՝ կը ցատկէ, կը թաւալի, կը նահանջէ, կը յարձակի, կը վիրաւորուի, կը խօսի *քոնփոսիսիոն*ի մը մէջ:

Տիրան Աճեմեան ունի կրակէ արագութիւն: Սատանան դանդաղաշարժ չի կրնար ըլլալ: Երգիծանքը, գիրով ու քարով, եւ ծաղրանկարը իր գիծով ու գոյնով, դժոխքի արւեստներ են եւ սաղայելի մասնագիտութիւններ, որոնք կը գործադրուին կայծակնարագ:

Երգիծագիրներն ու ծաղրանկարիչները շուտ ու սուր շարժողներ են: Այդ ասպարէզներուն մէջ անտաղանդներ ալ սուր կլլողներ են, որոնք անկարող խոցելու, ձախաւեր անպարարութեամբ կը վիրաւորեն իրենց որովայնը, զալարուելով փորացաւէ:

Եւ Տիրան Աճեմեան, որ կը բաժնուի մենէ՝ քանի մը շաբաթէն, կազմեց ժողովածոյ մը, փարիզահայ մտաւորականներէն: Օր մը, կէսօրէ առաջ, Բալուէան գրատունը եւ օր մըն ալ, կէսօրէ յետոյ, Պարսամեան գրատունը վերածեց աշխատանոցի: Ու թանգարան մտան Պարսամեան Մկրտիչ, Բալուէան Յրանդ, Գոլյումեան Մեսրոպ, Նարդունի Շաւարշ, Մեսումենց Աւետիս, Խանէտանեան Արշալիր, Փօլատեան Կարօ, Թօփալեան Բիւզանդ, Մելիքեան Վաղարշակ, Աճեմեան Գեղամ, Ադդէ քահանայ եւ Զօպանեան Արշակ:

Երգիծանքը թէեւ իր սրախօսութեան ամենակարողութեամբ կը մտնէ մարդուն մէջին մէջը, աղիքները դուրս թափելու աստիճան, սակայն, կը խնայէ դեմքին: Ծաղրանկարը, առաւելապէս, կը հարուածէ գլուխը, մասնաւորապէս անխընայ ըլլալով մարդկային դեմքին տգեղութեան հանդէպ: Իր առաւել անգթութիւնը ակամայ է, Ծաղրանկարչութիւնը, բոլոր հրեշտակները տապալած, կը ճանկէ ճիւղին կամ ճանճին մէկ անգեղ մասէն ու կը նահատակէ զայն, պատանքելով թուղթին վրայ: Վայն անոնց, որ երկար բան մը ունին (քիթ, ականջ), կամ շատ պզտիկ բան մը (աչք, ճակատ) կամ շատ հաստ բան մը (շրթ-

թունք, մորթ)։ ՄԷկ խօսքով՝ խուսափիլ չկայ հարուածէն։

Ծաղրանկարչութիւնը սատանային պարզ ու պայծառ դիմանկարչութիւնն է։ Կ'արժէ որ ամէն մարդ տեսնէ ինքզինքը, սատանային աչքով։ Մարդու սեփական աչքերը կը ստեն։ Մարդկային մեքենաներն անգամ մասնակից են ստախօսութեան։ Քաջութիւնն ու անկեղծութիւնը սատանային ապրանքներն են։ Բաց հոգիով մեղանչելը դժուարին առաքինութիւն է. դժուարին՝ սրբութեան չափ։


Ինչքան անպատեհութիւններու առաջքը պիտի առնուած ըլլային, եթէ մարդիկ իրենց ծաղրանկարը կախէին, իրենց սենեակին պատէն, նայելով այդ պատկերին եւ թոյլ տալով որ բոլորը դիտեն։ Հրաշալի բան պիտի չըլլմը, եթէ ամէն մարդ իր ալպոմը ունենար, ծաղրանկարներու ալպոմը, փոխանակ ունենալու լուսանկարներու առաւել կամ նուազ խաբուսիկ հաւաքածոն։ Չմայելի բան մը պիտի չըլլմը, եթէ ամուսնութեան թեկնածուները, ինչպէս նաեւ սիրահարեալները, փոխանակէին իրենց ծաղրանկարները։

Մարդիկ կը դժուարանան ինքզինքնին ճանչնալ ծաղրանկարին մէջ։ Կը վարժուին սակայն, երբ մանաւանդ բարեկամները կը վաւերացնեն նմանութիւնը։

Ծաղրանկարը արուեստն է չափազանցութեան մը, որ ամէնուն չափը կու տայ։ Իր չափազանցութիւնը միջոց է եւ ոչ նպատակ։ Իր չափազանցութիւնը թռիչք մըն է, ընդգրկելու համար ենթակային տիրութեան կենսական տարածութիւնը ու մէջէն գրաւելու համար միջնաբերդը։ Սատանային յարձակումն է ան, օդային, գըլխիվայր, յաղթահարող, շանթային։ Եւ մարդու մը իրական պատկերը իր ծաղրանկարն է։

Տիրան Աճեմեան, այս բարի, խորադէտ, այս անուշ ու տաք արուեստագէտը, այս հրեշտակապետը ծաղրանկարչութեան տաղանդաւոր սատանան է։

Իսկ մենք իր գոհերը եւ հիացողները։



Մ. Իշխանի ծաղրանկարը՝ Տիրան Աճեմեանի

Փարիզ
(Թիւ 11, 1978)

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ

ՊԱՐԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՒԹԻՒՆ

Զ ախակրթարանի աշակերտ Էինք: Հայերենի մեր ուսուցիչը օր մը շարադրութեան համար մեզի տուաւ հետեւեալ նիւթը. «Գիւղը թէ քաղաքը»: Առանց վայրկեան մը վարանելու ես ընտրեցի գիւղը եւ գրեցի շարադրութիւն մը որ մասնաւոր գնահատանքի արժանացաւ:

Մինչեւ այսօր տակաւին կը յիշեմ այն գոյները, գիծերը եւ զգացումի ջերմութիւնը, որոնց շնորհիւ յաջողեցայ նահապետական հայ գիւղի մը պատկերը նկարել եւ հոն ապրելու անփոխարինելի քաղցրութիւնը պատմել: Ուսուցիչս վկայեց թէ կենդանի էր գիւղի իմ պատկերացումս եւ իրական ապրումէ կը բխէին իմ զգացումներս:

Ես գիւղ չէի ճանչցած սակայն: Գիւղի եւ գիւղացիի կեանքին ծանօթ չէի անձնական փորձով: Ուրկէ՞ կու գար ինծի գիւղին այս խորունկ սերը: Ինչ հրաշքով հոգիս լեցուած էր նախիրներու բառաչով եւ երդիկներէն բարձրացող թոնիրի ծուխերուն խնկանման կախարդանքով:

Գիւղի ամբողջական ապրումս կը պարտէի Համաստեղին:

Համաստեղի քանի մը պատմուածքները բաւական եղած էին որ ես անդառնայիօրէն սիրահարիմ հայ գիւղերու աղքատիկ, պարզունակ եւ չարքաշ կեանքին, ինչպէս եւ հայ մշակներու բարի, միամիտ եւ տառապած հոգիներուն:

Շարադրութիւնս բանագողութիւն մըն էր անկասկած: Համաստեղի ներշնչած տեսանելի եւ ոգեղէն աշխարհներու հարստութենէն մասնիկ մը թոցուցած էի պատանեկան իմ խանդավառութեանս մէջ եւ զայն հրամցուցած նախակրթարանի իմ ուսուցիչիս:

Այնուհետեւ Համաստեղի գիւղն ու տիպարները շարունակեցին իմ մէջ ապրիլ միշտ նոյնքան տիրական գոյներով, նոյնքան պայծառ ու կենդանի: Բազմաթիւ ամիթներ ներկայացան իր «Գիւղն» ու «Անձրեւը» կրկին ու կրկին կարդալու, դասարանային վերլուծումներու ենթարկելու եւ ամէն անգամ ալ զգացած հաճոյքս աճեցաւ եւ խանդավառութիւնս նորոգուեցաւ:

Այս չէ միթէ արուեստի ճշմարիտ գործերուն անվիճելի արժէքը: Դիմանալ ժամանակի ակերներուն, շրջանի մը եւ միջավայրի մը բաբախուն սիրտը դառնալ եւ սրտի մը զարկերուն ջերմութիւնը փոխանցել բոլոր սերունդներուն:

Ոմանք կը սիրեն «գաւառի գրականութեան» ներկայացուցիչ կամ «գիւղագիր» կոչել Համաստեղը, հաւատարիմ մնալով գրական հին տարագի մը. ուրիշներ սահմանափակ եւ անճիշդ կը գտնեն այս բնորոշումը: Կարելորդ անուններն ու տարագները չեն անշուշտ, այլ մեր մշակոյթին ժառանգ ձգուած գործը:

Յամաստեղ մեծարժեք գործի մը հեղինակն է, մեծ արուեստագետ մը, գտարիւն գրագետ մը:

Կէս դարէ ի վեր կանգուն է ահա մեր գրականութեան պատնէշին վրայ, վեճերէ հեռու, աղմուկներէ խոյս տալով, ինքն իր մէջ խորասոյգ եւ ունկնդիր լոկ իր ներքին ձայնին, վերստեղծելու համար կեանքն ու աշխարհը արուեստի դիւթական գոյներով, երբեմն իբրեւ պատմուածք, երբեմն իբրեւ լայնաշունչ վէպ եւ երբեմն ալ արձակ կամ չափածոյ բանաստեղծութիւն:

Կարելի է վիճիլ Յամաստեղի փորձած գրական բազմաթիւ սեռերու համեմատական յաջողութեան շուրջ, բայց կարելի չէ չխոստովանիլ թէ ամենուն մէջ ալ ներկայ է ինք, այսինքն ներկայ է ցորենի արտերուն վրայ փռուած արեւուն բարութեամբ եւ պայծառութեամբ յի հոգի մը, որ մարդուն, կենդանիին, բնութեան եւ իրերուն հանդէպ հաւասարապէս զգայուն է եւ գիտէ թրթռալ համապարփակ յուզումովը անոնց բոլոր վիշտերուն եւ ուրախութեանց:

Բանաստեղծի այս խոր զգայնութիւնը, հոգիի այս բնական բարութիւնը եւ կեանքին ու մարդոց հանդէպ յորդող այս անսպառ սէրն է որ կը գունաւորեն եւ կը կենդանացնեն Յամաստեղի գծած պատկերները, ըլլան անոնք գիւղէն առնըլած թէ քաղաքէն:

Յամաստեղի գրականութիւնը միայն ժպիտ ու լոյս չէ:

Տառապանք, վիշտ, արցունք շատ կան իր պատմուածքներուն մէջ, որովհետեւ կեանքը ինքը շաղուած է այդ դառնութիւններով, բայց մենք հոն չենք գըտներ կեանքը սեւ անէծքի վերածող թոյն ու ժահիր, ամօթ ու գարշանք, մեղք ու ոճիր: Յամաստեղի ստեղծած տիպարներուն ցաւն անգամ համակրելի է, համակող ու սրտառուչ, առանց երբեք ընդվզեցուցիչ եւ ըմբոստացնող դառնալու: Երբ կը կարդանք իր գործերը, կը կապուինք անոնց մէջ գործող անձերուն, բարեկամ ու մտերիմ կը դառնանք անոնց հետ, կ'ուզենք բաժնեկից ըլլալ ոչ միայն անոնց յոյսերուն ու երազներուն, այլեւ անոնց տառապանքին եւ դժբախտութեան:

Յամաստեղի արուեստին գլխաւոր յատկանիշներէն մէկն է այս հաղորդականութիւնը:

Ճշմարիտ արուեստը կը յաջողի մեզ փոխադրել իր սեւեռած աշխարհին մէջ, հոգեպէս քաղաքացի դարձնել անոր դրօշին եւ սիրոյ ու կարօտի հազար թելերով մեզ կապել հոն նկարագրուած վայրերուն, անձերուն ու անցքերուն հետ: Արդ, ով որ կարդացած է Յամաստեղը, հեռաւոր Ամերիկայի թէ Մերձաւոր Արեւելքի երկինքներուն տակ, կարօտով պիտի փնտռէ հայրենի գիւղին արտերն ու այգիները, կալն ու կուտը, վարն ու ցանքը եւ գունագեղ շինականները: Ծնորհիւ Յամաստեղի գրչին՝ արեւմտահայ գիւղերու կեանքը տարտամ յիշողութիւն մը չէ այլեւս կամ անցեալի Էջերը զարդարող ծանօթագրութիւն, այլ կենդանի ապրում եւ անթառամ տեսիլք:

Իր Տափան Մարգարները, Փիլիկ աղբարներն ու Կար Ամունները իրենց ներքին ապրումներով ու տառապանքով մարդ են նախ, մարդկայինը կը մարմնա-

ւորեն եւ ընդհանրական արժէք ունին, սակայն անոնք իրենց զգալու, գործելու եւ արտայայտուելու կերպով հայ շինականի տիպարները կը ներկայացնեն: Առանց քարոզչութեան տրուած այս հայկականութիւնը, որ տոհմային դրոշմ մը ունի միշտ եւ հարազատի մտերմութիւն, Համաստեղի տիպարները կ'օժտու ինքնուրոյն դիմագիծով: Մենք կը սիրենք զանոնք, որովհետեւ անմիջապէս կը զգանք թէ մեր արիւնէն են, մեր լեզուն կը խօսին, մեր սրտէն կը խօսին:

Դասական բոլոր մեծ գրողներուն նման Համաստեղ պարզութիւնը հասցուցած է այնպիսի հիւթեղ եւ կենսալից լիութեան մը, որ ընթերցողը բնութեան եւ բնականութեան ամօքէ կը գտնէ ինքզինք տեւաբար: Գրական ոչ մէկ շողշողուն զարդարանք, ոճային ոչ մէկ անսովոր դարձուածք: Գեղջկական աղբիւրներու պէս յստակ լեզու մը, որ գիտէ բառերը գործածել տնտեսութեամբ, խտացնելով, պատկերաւորելով: Այն հեղինակներէն է, որոնց համար բառերը միջոց են եւ ոչ թէ նպատակ, խորութիւնը պարզութեան մէջ է եւ ոչ թէ մթասօղ արտայայտութեանց մշուշին ներքեւ: Համաստեղ ժամանակ չունի «գրականութիւն ընելու», որովհետեւ կեանքի նկարիչն է, լեցուած մշտավառ անցեալի հոծ ապրումներով եւ տառապահար ներկայի մակընթաց յոյզերով: Իր շունչով կենդանացած մարդիկն ու միջավայրը այնքան իրական են, տեսանելի, գրեթէ շօշափելի, որ բառերու ներկայութիւնը չենք զգար իսկ, ինչպէս կնոջ մը գրաւիչ աչքերուն ամօքէ կը մոռնանք զարդն ու հանդերձանքը:

Արուեստի մարզին մէջ զուցէ ամենէն դժուար բանն է նուաճել կեանքը այս բնականութեամբ եւ հասնիլ ձեւի կատարելութեան՝ այս պարզութեամբ:

Եիշդ է որ Համաստեղ մեր գրականութեան մէջ յեղաշրջող նորութիւններ չբերաւ, արուեստի յեղափոխութիւն մը չառաջացուց, նոր հորիզոններ չբացաւ, բայց ան մեր գրականութեան բերաւ տոկուն եւ ինքնայատուկ խառնուածք մը: Պատմութեան էջերէն վայրագ բռնահարուածով խլուած ու փոշիի վերածուած մեր բնաշխարհը վերապրեցուց, կարելի է ըսել՝ վերաշինեց քար առ քար, գերան առ գերան, ոսկեղէն մուրճի մը ստեղծագործ հարուածներով:

Որքան ալ կարօտաբաղձութեան խորունկ թախիծով դողդղան իր «Գիւղ»ին ծառերն ու հասկերը, որքան ալ արցունքի վիշտով տեղան իր «Անձրեւ»ին ջերմ կաթիլները, Համաստեղ կը մնայ միշտ այն լաւատես հեղինակը, որ կը հաւատայ կեանքին, կը հաւատայ անցեալի յարութեան, կը հաւատայ ազնիւ ու գեղեցիկ արժէքներու յաղթանակին եւ արարչական լայն ժպիտով գիտէ ընդգրկել բովանդակ կեանքն ու մարդիկը:

(Թիւ 1, 1966)

ՅԱԿՈՒՐ ՊԱԼԵԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂ՝ ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԱԿԼԻ ՎԿԱՅԱՐԱՆ

Տայ գրականությունը մեր ժողովուրդի լինելության վկայարանն է: Հայ գրողները ընդհանրապես եկած են գաւառէն, բերելով հայաշխարհի շունչն ու շնչառութիւնը, ժողովուրդի երակը, հող- հայրենիի զգացողութիւնը: Այդպէս էր մօտաւոր անցեալին, է նաեւ այսօր, քանի որ հողին եւ մարդուն միջեւ կայ ամուսնական կապ: Համաստեղ Յակոբ Մնձուրի եւ մեր անմիջական ժամանակակիցները Մկրտիչ Մարկոսեան կամ Հրանտ Մաթեւոսեան կը յատկանշուին բնաշխարհէն ստացուած հարստութեամբ:

Համաստեղի մասին չի խօսուիր, զայն բանտարկած ենք դասագրքերու մէջ, մինչդեռ անոր գործը արմատախիլ զանգաածներուն համար անցեալի եւ հայրենի հողի հետ հաղորդուելու միջոց է, գրականութիւն՝ ի հարկէ, բայց նաեւ՝ քաղաքականութիւն, այս բառին ազնիւ իմաստով, ոչ կարգախօս: Արմատներ, որպէսզի հայրենասիրութիւն եւ յանձնառութիւններ օտար եւ պղտոր ջուրներով չսընանին: Համաստեղի գրականութեան ծանօթացումը, կը բերէ ազգային որակ, պատկերներով, տիպարներով, լեզուով: Պատառի կը վերածուի այն հայաշխարհը որ կայ, գոր չենք տեսած, մեծ մրրիկը զայն ընկղմած է: Ան ճշմարիտ յիշողութիւնը կը բերէ: Յակոբ Մնձուրի իր ժողովուրդի եւ իր ապրած ողբերգութիւնը վարագործի ետին պահելով, աշխարհի մը սոսկ պատմիչը ըլլալու փորձով ապրեցաւ, դառնալով արեւմտահայ ժողովուրդի, մարդոց եւ բարքերու սեւեռումի գրագետը: Իսկ Մկրտիչ Մարկոսեան խորշակէն ճողոպրած մնացորդացի վկան է, անպաճոյճ, հարագատ, թափանցող: Մեր ազգի պատմութիւնը հասկնալու համար, ուսումնասիրութիւններ եւ դասագրքեր անբաւարար են, որքան ալ մասնագիտական ըլլան, հայերէն թէ օտար լեզուներով: Իսկական պատմութիւնը, որ ըմբռնում է, ոգեկանութիւն, տեսիլք եւ հեռանկար, կու գայ գրականութեան ճամբով: Առանց անոր, պատմութիւնը ժամանակագրութեան եւ թուականներու կուտակում է: Գիւղացիներու ապրումի խորքը կը գտնուի Մկրտիչ Խրիմեանի յաւերժաշէտ խօսքը, երբ *Պասիկ կ'ըսէ Թոռնիկին որ հողը պէտք է կեանքի եւ մահուան օրը*, կը պատգամէ որ ան *անհող չմնայ*, նախապայման՝ որպէսզի *մեր գիւղի լուսնկան ալ, բոլոր գիւղի լուսնկաներուն պէս, եկեղեցիի գմբէթէն չհեռանայ*:

Քաղաքները, մանաւանդ մեծերը, նոյնիսկ սեփական երկրի բնակիչները կը վերածեն աշխարհաբաղաբացի: Սփիւռքի հայերը անխուսափելիօրէն փոքրա-

մասնութիւններ են, յաճախ չնչին, անոնք կը դառնան աշխարհաբաղաբացի, կ'այլասերին, ընդհանրապէս մարդ, արուեստագետ, գրող, աշխատաւոր, յաճախ տխուր *ընկանթէններ* են, չափանիշները կը նոյնանան, մարդիկ կը նմանին իրարու: Փարիզ բնակողները փարիզցի են, նոյնն է պարագան Նիւ Եորքի, Մոսկուայի, Լոնտոնի, Պուէնոս Այրեսի, մեր օրերուն նոյնիսկ Պէյրութի, Յալէպի, Թեհրանի: Այդպէս եղած են Պոլիսը եւ Թիֆլիսը, ի հարկէ տարբեր պայմաններով եւ իւրա-յատկութիւններով: Մեծ քաղաքներու մէջ գրականութեան վրայ կ'ազդեն գեղա-գիտութիւնը, տեսութիւնները, ի հեճուկս բնականութեան, *հողին եւ ժողովուրդի երակին*: Գաւառի մէջ կը տիրէ բնութիւնը, մարդիկ ներկայ են իրենց այլազանու-թեամբ, զիրար այդպէս կը ճանչնան: Գիւղին մէջ ծառեր չկան, այլ կան նշենի, ըն-կուզենի, նոնենի, բարտի, կաղնի: Համաստեղէն կէս դար ետք այդպէս է Մկրտիչ Մարկոսեան: Գիւղագիրներու խօսքն ու բանը չեն բաղդատուիր ֆրանսացի, ռուս, անգլիացի կամ ամերիկացի այս կամ այն մեծանուն գրողներու ստեղծա-գործութեան: Անոնք վարձու գրականութիւն չեն մշակեր, չեն բեմադրեր կապկը-լած հոգեվիճակներ: Անոնց մօտ կեանքը, իրականութիւնը, բնութիւնը, հարազատ են ու ճոխ, վաւերական յատուկ, ուր մարդու գաղափարը կը մարմ-նաւորուի մարդոցմով, յատակ անուններով, եւ ոչ հարթուած ու անգոյն ընդհան-րացումներով: Արձակագիր թէ բանաստեղծ, չեն գրեր տպաբանակի կամ դասագրքի արժեչափերով, գրքունակ եւ կրկնող ըլլալու վտանգէն զերծ են: Ի-րենց երանգապնակը գեղակազմ հատորներու մէջ չի գտնուիր, իրենց գաղա-փարները գրական դպրոցներու դասակարգումէն չեն բխիր: Իրենց բաղդատու-թեան եզրը ոչ Պալգաքն է ոչ Կոկոլը, ոչ Ժան-Փոլ Սարթրը եւ ոչ Ժորժ Քոնշոնը, այլ՝ ժողովուրդը իր ողջախոհութեամբ, բնութիւնը՝ իր ոչ-երեւակայական երանգ-ներով եւ ճոխութեամբ, բանաւոր կերպով սերունդէ սերունդ փոխանցուող հա-րազատ երգն ու տաղը, ասութիւններն ու առածները:

Իտալիայի Փերչենո գիւղացի Համբարձում Կելենեան ծնած է աւելի քան դար մը առաջ, 1895ին: Այդ տարիներուն, հայկական գաւառներու խուլ անկիւն-ներն անգամ օժտուած էին հայ դպրոցներով: Հայ ուսուցիչները հանդիսացան հայ նահանգներու մշակութային, ազգային եւ քաղաքական զարթօնքի ներուժը, որ արդէն հասունցած էր երբ կը ծնէր ապագայ գրողը: Կ'աւարտէ իր գիւղի նա-խակրթարանը, կը յաճախէ Մեզրէի Կեդրոնական վարժարանը 1911ին: Տասնը-վեց տարեկանին կը դառնայ ուսուցիչ, չափահաս, հասուն: Տարբեր էր ժամանա-կը: 1913ին կը մեկնի Ամերիկա: Ինչպէս շատեր: Հետեւաբար ականատես պիտի չըլլայ հայաշխարհի աւերման:

Այս բացակայութիւնը հասկնալի կը դարձնէ որ իր գրականութիւնը ըլլայ պատկերը իր մէջ դրոշմուած յիշատակներու գիւղը, ընկերային կեանքը, տպա-ւորութիւնները, դէմքերը: Անոնց անհարթութիւնները կը կորսուին ժամանակի եւ հեռաւորութեան բերումով, կը մնայ գեղեցիկը, տեղի կ'ունենայ իտեալակա-նացամբ: Ինչպէս կ'ըսեն շարժանկարի արուեստին մէջ, *նկարի վրայ կանգառում*,

arrêt sur l'image: Հայ գիւղը դրախտ չէր Ի. դարու առաջին տասնամեակին: Համաստեղ դրախտ կորուսեալի յառաջացուցած զգացումով կը զգեստաւորէ տիպարները, շրջապատը, կացութիւնները, գեղանկարիչի պէս: Կրնանք ըսել որ դիական սիրոյ աշխարհ մը, դիտուած հեռուէն, չխաթարուած պատանիի յուշժառանգութեան յատուկ լուսաւորումով: Իր հայրենի գիւղէն պոկուած հագիւ երիտասարդ տղան, Ամերիկայի մէջ, երկնուղէշ բարտիներու սլացքին փոխարէն կը գտնէ երկնաքերեր, ուր լոյսը ստուեր է, արտը՝ գործարան: Համաստեղ մշակած է իր *գաղտնի պարտէպը*, քանի որ Փերչենճի բնութեան եւ մեծ քաղաքներու խառնարանին միջեւ խրամատ կար: Ինչպէ՛ս չգեղեցկանար գիւղը, ուր մարդիկ կ'ապրէին իրենց թերութիւններով եւ մարդկային շնորհներով, ճարտարարուեստական քաղաքի կեանքէն տարբեր, աւելի ճիշդ՝ անտեղեակ, տեսակ մը անմեղութեամբ, նախնականութեամբ, կուսութեամբ: Փերչենճի տղան կը դառնայ Համաստեղ, միացնելով իր եւ եղբայրներու անունները. Համբարձում, Աստուր, Եղիա:

Այս ապրումներուն մասին կը խօսի իր ինքնակենսագրութեան մէջ մահուան տարին գրուած. «Ծնած եմ 1895ին, Խարբերդի Փերչենճ գիւղին մէջ... Իմ մանկական եւ պատանեկան աշխարհը գիւղը եղած է իր հեռաւոր լեռներու սահմաններով, իր քարաշէն մեծկակ եկեղեցիներով, իր դպրոցով, իր հոգերով եւ աշխատանքներով, իր սուրբերով, որոնք գիւղի սահմաններէն ներս կ'ապրէին: Չարմանալի մտերմութիւն մը կար սուրբերու, աստղերու եւ գիւղացիներու միջեւ, ես հիմա կը տարուիմ ըսելու, որ այդ գիւղի երկինքը ուրիշ էր, ուրիշ էին նաեւ գիւղացիները»: *Երկինքը ուրիշ էր, ուրիշ էին մարդիկ*, հաստատում՝ որ դարձաւ առաջնորդող զիծը Համաստեղի գրականութեան: Հոն եւս մարդիկ կային, եւ ան կը յիշէ «գիւղի աղջիկները, որոնք կը ջերմացնէին ու թեւ կու տային պատանեկան մեր առաջին երեւակայութեան»:

Հայ դպրոցը պիտի ընդլայնէ պատանիի հոգեկան աշխարհը: Կը գրէ որ Մեգրէի երկրորդական վարժարանին մէջ իր «հորիզոնը այլեւս հեռաւոր կապոյտ լեռներ չէին, այլ հայ գրականութիւնը, որ կու գար Կովկասէն ու Պոլսէն»: Կը յիշատակէ Վարուժան, Սիամանթօ, Բաֆֆի, Ահարոնեան, Իսահակեան եւ «մեր Խարբերդի մեծ վարպետ Թլկատինցին եւ փափկաճաշակ Չարդարեանը»: Կը սկսի կազմաւորուիլ պատանիին միտքը, մեծերու ընթերցումով կը զարգանայ ճաշակը:

Ամերիկա գաղթած երիտասարդը կ'ուսանի, կ'աշխատի, կը ծանօթանայ, եւ կը գրէ: Նոր Աշխարհի չափերն ու չափանիշները չեն խամրեցներ զինք: Երախտաշատ «Հայրենիք» ամսագիրը, ինչպէս շատերու, կ'ըլլայ նաեւ իր բեմը: 1924ին լոյս կը տեսնէ «Գիւղը», պատմուածքներու հատոր մը, 1929ին լոյս կը տեսնէ «Անձրեւը», ուր կրկին ամփոփուած են պատմուածքներ: Արդէն ճանչցուած գրող է Համաստեղ: Կը հրատարակէ բազմաթիւ այլ գործեր, ինչպէս երկհատոր «Սպիտակ ձիաւորը», ապա, իրարու կը յաջորդեն «Քաջ Նազար եւ 13 պատմուածք»:

ներ», «Աղօթարան»ը, «Այծետոմար»ը, «Առաջին սերը»: Ինչպես ճակատագիրն է նաեւ այլ գրողներու, բազմաթիւ պատմուածքներ եւ վիպակներ կան թերթերու եւ պարբերականներու մէջ, ինչպէս «Սրբազան կատակերգութիւն» եւ «Հայաստանի լեռներու սրնգահարը» թատերական-երաժշտական երկ մը, որ լոյս տեսած է Հայաստան, նոյնանուն հատորին մէջ, ուր ամփոփուած են գրողի գործերուն մէկ մասը: Խարբերողի Փերչենը գիւղ մըն է, ուրիշ գիւղերու պէս, բայց Համաստեղի տիպարներով եւ մթնոլորտով կը դառնայ Հայաշխարհ, ընդհանրապէս Աշխարհ: Տիպարներ կեանք կու տան այդ աշխարհին, անոնք կը կոչուին *Տափան Մարգար*, աւանդապահ *Կարօ Մարուպ*, սիրահարներ՝ *Մարուշ եւ Մուրատ*, անկրկնի քանդակուած *Գանձակ Պարսամ*, *Թորիկ Պետո*՝ որուն սերը գրական համամարդկային նուաճում է: Հեղինակին կենսագրութիւնը կը լուսաբանէ մասամբ գործը, անոր վերլուծումը չի փոխարիներ ընթերցումը: Համաստեղով կը գտնենք հայոց յափշտակուած հայրենիքը, մակերեսային եւ քարտեւագրական պատկերներէ անդին, վերակենդանացած՝ յաւերժաթեան համար:

Իր գրականութիւնը ինքնատիպ է բազմաթիւ պատճառներով: Յորդող կարօտ ունի, ըսելիքը շատ, այս պատճառներով երեւութապէս իմաստուն խորացումներու չ'երթար, կը մնայ թելադրականի սահմանին վրայ, բառերու կուտակումով չի սպառեր ինքզինք եւ իր տիպարները: Ուրուագծումները կը պահեն խորհուրդները:

«Գիւղը» պատմուածքներու հատորը կը բացուի *Տափան Մարգարով*, գիւղացին՝ ընդելուզուած հողին, անասուններուն, գիւղի կեանքին: Հողն է սնուցիչ, տիեզերք՝ իր գոմէշներով, կենդանիներով, որոնք գուրգուրանքի առարկայ են, մեկնակէտ, հարազատ: Մարգար երբեք այնքան գեղեցիկ խօսքեր չ'է ըսած իր կին Թամարին:

Համաստեղ ուրուագիծերու նկարիչն է:

Դուք տեսած էք խրտուիլակները արտերուն: Յարդով ու ցախով լեցւած խրտուիլակներն այլանդակ, գինովի զանազան ձեւերով-մէկուն հասակն ինքն իր վրայ փլած. ուրիշ մը կարծես գինետունէն նոր ելած՝ մէջքը ծուռ, այլեւս անկարող քալելու աւելի ուրիշ մը գինետուն նոր մտնողի դիրքին մէջ, ոտքերը փարտ, թեւերը վեր բռնած, իր մէկ ուսին հետ ծռած է նաեւ գլխարկը. խրտուիլակները, թգուկ, փայտերուն կռթնած խրտուիլակներն հաշմանդամ, սմբած կամ ուռած փորերով, ծալուած ոտքերով, կախադանէն դեռ նոր վար առնուած ոճրագործի մը լիկած մարմնով: Սակայն էն գեղեցիկը մեր այգիի քովի պարտիզպանին խրտուիլակն էր: Հասակը երկար, թեւերը լայն-լայն, բացած անապատի Յիսուսի պէս առանձին կ'աղօթէր կարծես—սո՛վ կար, թէ արտերուն ջուրն էր ցամքեր: Արթիստը պարտիզպանն էր: Տնկած էր երկար խաչաձեւ ձող մը, հագցուցած էր զգգուած շալվար մը, կապած էր գօտի մը ծալ-ծալ: Թեւերուն, կրնակին անցուցած էր այծի մագերէ շինուած, հինցած, շատ հինցած ա-

պա մը: Գլխուն տեղ դրած էր պարապ դղում մը, շինած էր քիթ, փորած էր բերան, ակռաներուն տեղ տեղաւորած էր արտերուն մէջ նետուած ու ճերմկած իշու մը ծնօտին ակռաները, իսկ աչքերու տեղ դրած երկու թաւ-շագոյն չորցած սալորներ: Օ՛, ինչ այլանդակ էր, ճիշդ ու ճիշդ քիթը մաշած ու աչքերը դուրս ինկած չինական կուռք մը: Ամեն աշունի պարտիզպանը, երբ իր գործը լմննար, էն վերջը իր ուսին կը նստեր խրտուիլակն ու տուն կը մտնէր: Ամեն Գարունի, երբ լայն ճակատներով փոքրիկ գառնուկները դուրս կ'ելլէին իրենց փոքրիկ տոտիկներով հողին պորտը դրոշմելու պարտիզպանը կը շալկէր իր խրտուիլակն ու պարտէզ կ'իջներ: Խրտուիլակը հոն էր, միշտ անշարժ, հեքիաթի այն ճգնաւորին պէս, որուն ավերուն մէջ, կ'ըսեն թէ, թռչունները իրենց բոյնը դրած էին: Օր մը սակայն տեսայ խրտուիլակը կը քայլէր:

(«Գիւղը», Տափան Մարգար)

Շարժանկարի արուեստագէտները, այս նկարագրութեան մէջ, պիտի տեսնեն իրենց յատուկ մօտեցումները.

«... Թումբին վրայէն կը քայլէր յաղթ հասակովը, ուսերը լայն ու ծուռ, յարդ լեցւած»... «Այս անգամ ուսին աւելցուցած էր միայն բահ մը»... «Այդ մեր գեղին Տափան Մարգարն է», կ'ըսէ մայրը:... «Անդին երկու արտ հեռու, կապոյտ պաստառին վրայ գծագրուած, ամպի կտոր մը անութին տակ, կ'երեւէր Տափան Մարգարին նկարը հսկայ»: (Նոյն)

Համաստեղ քանի մը բառով կը դաջէ գիւղը, մարդիկն ու ժամանակը.

Կ'անցնէին տարիներ: Տափան Մարգար միեւնոյն էր, երկու զոմէշներով, միշտ բահն ուսին, կարծես միեւնոյն ձեւով եւ միեւնոյն տարագով ծնած ըլլար: ... «Ան հոն արտերուն մէջ էր միշտ, քարերը կը հաւաքէր, նոյնիսկ կոշկոռ հողերը ձեռքով կը փշրէր, տեսակ մը փայփայանք արտերուն...»

(Նոյն)

Տափան Մարգար հողն էր: Բայց կար գիւղը, ինքնատիպ թատերական հրապարակ մը, յունական *ակորան*, իր դաշտերով, հերկով, եզներով, դրացիներով, կազ ու կռիւէ խուսափող ամօթխած կիներով, պզտիկ վաշխառուններով: «Անձրեւը» գրքին մէջ, համանուն պատմուածքը այս մթնոլորտը կը բեմականացնէ: Քաղաքաբնակին անհանգստութիւն պատճառող անձրեւը *նսկի* է գեղացիին համար: Անձրեւը որ կ'իջնէ, խաղաղութիւն արտերուն եւ... *Գանձակ Պարսամին* ու *Թորիկ Ղուկասին*: Համաստեղ ունի իւրայտուկ արուեստը: Քանի մը բառով կերպարներ ոտքի կը հանէ, կացութիւններու հոգեբանական բարդութիւնը ու լարումը կը ներկայացնէ: Գանձակ Պարսամ, Թորիկ Ղուկաս, միւսները, ծերացած զոմէշը, արեւուն տակ երաշտէ տքացող արտերը: Գանձակ Պարսամ եւ Թորիկ Ղուկաս աւանդական տամայի ընկերներ են, մինչեւ այն ատեն որ դրամը չէր սանեցուցած յարաբերութիւնները:

«Գանձակ Պարսամ եւ Թորիկ Ղուկաս իրարու շատ լաւ բարեկամներ էին: Օր չէր անցներ, որ իրարու մօտ չգային ու տամա խաղալու հաճոյքը չապրէին: Թորիկ Ղուկաս հպարտ էր Գանձակ Պարսամի պէս բարեկամ մը ունենալուն համար: Թորիկ Ղուկաս միւս ընճապէրներուն պէս շատ զբաղուած չէր: Գիշերը ցերեկին խառնելու չափ գործ չունէր: Ունէր երեք արտ, երկու եգ, մէկ կին եւ մէկ աչք.- ահա բոլորը: Ամէն անգամ որ արտին մէջ թումք մը շինէր կամ կաւառ մը շտկէր, միտքը կ'իյնար Գանձակ Պարսամը, խանութին զովութիւնն ու տաման: Տամային քարերը աչք, քիթ, բերան կ'ամնէին: Թորիկ Ղուկաս կը սրբէր քրտինքը, բահը ուսին կը նետէր եւ ուղիղ գիւղ կու գար»:

(«Անձրեւը»)

Թորիկ Ղուկաս կանգնած է գիւղացիի ողբերգութեան առջեւ: Իր եզը, *Տիք-քոն*, ծեր է:

... ախտո գնաց եզները դուրս հանելու համար: Թորիկ Ղուկասի ուշադրութիւնը Տիքքոյի վրայ էր թէ ինչպէ՛ս կը շարժէր գլուխը ինչպէ՛ս կը բռններ ոտքերն ինչպէ՛ս կը դնէր: Տան դռնէն դուրս հանած պահուն, ոտքը սեմին դպաւ ու քիչ մնաց ամբողջ մարմնով գետին իյնար: Տիքքոն փողոցին մէջտեղ կեցած էր. գոց դեղնագոյն մորթով, կարծես տախտակներով շինուած Ուստա Չաքարի ձեռագործն ըլլար»... «Չորս կողմէն ընճապէրներ լուծքի կ'երթային, իրարու ձայն կու տային, ուրախ էին ուրախ: Միայն Թորիկ Ղուկասի սիրտն էր մուկ ծերացած Տիքքոյի աչքերուն պէս: Խէրով-բարով այս տարի իր գործը գլխէր...

– Մաքօ, հէյ Մաքօ, գետինը մտնես,- սրտնեղած պոռաց իր կնոջ: Յայտէ ալ ինչի՞ կը սպասես: Արեւը պորտի վրա՞յ գայ: Երեք սրհաթ է՝ հացին ծրարը կը կապես:

– Մէրս, քորս, ինչ երեք սրհաթ, տահա եզներուդ սամիները չես կապեր,- տրտնջաց կինը, հացին ծրարը տալով:

– Էս նեղութեանս ատենը լեզուդ կարճ կ'ընե՛ս, թէ չէ...

Պոռպոռոռի ու հայիոյութիւններու տեղի չգալու համար՝ կինը լեզուն իրեն քաշեց: Ամօթ չէ՞ դրացիներուն առջեւ:

(Նոյն)

Փուլ կու գայ եզը եւ Թորիկ կը դիմէ Գանձակ Պարսամին:

– Բարեւ Ղուկաս, Էսպէս շուտ...

– Չես հարցներ, թէ ի՞նչ հալի եմ.- պատասխանեց, արօրը ուսէն վար առնելով ու պատն ի վեր երկնցնելով: Էսօր Տիքքոն, մեծ եզը, արօրին տակ ինկաւ: Էհ, ինտոր, ինտոր ընես գարունի ատեն, մէկ եզով ինտոր ընես: Որ էջ մը ունենայի՝ Տողանին հետ կը լծէի, մինչեւ կալ որ ձգէի՝ ալ Աստուած ողորմած է...

– Յոգ մի ըներ, Ղուկաս, ջանդ սաղ թող կենայ, եկ սանկ տամա մը խաղանք:

Թորիկ Ղակաս ոչ տուն երթալու սիրտ ուներ, ոչ ալ տամա խաղալու: Գանձակ Պարսամ մէկ կողմէն կը շարէր տամային քարերը...

Թորիկ Ղակաս կ'ուզէր առանձին խօսիլ Պարսամին՝ քանի ծերուկը չէր եկեր:

– Վերցուր քարդ, հիմա, մէկ երկու...

– Պարսամ. խօսեցաւ վերջապէս Ղուկաս,- քեզի որ չըսեմ, ալ որո՞ւ ըսեմ. իշտէ կ'երեւայ հալս: Էս տարի բամբակներէն քան դուրս չեկաւ: Պարսամ տամայի վրայ կը նայէր հաշիւներ կ'ընէր միեւնոյն ատեն ականջին մէկը Թորիկ Ղուկասին ծռած:

– Պարսամ, որ կրնաս ձեռք մը երկնցուր ինձի, ճահիլ եզ մը առնեմ: Յինգ ոսկի փոխ դրամ որ տաս, ես քեզի կալին Էվէլն Էվէլոք կը վճարեմ: Թորիկ Ղուկաս լուրջ էր: Ահա թէ ինչո՞ւ Գանձակ Պարսամի դէմքին խաղաղութիւնը սփրուեցաւ յանկարծ:

(Եոյն)

Յամաստեղ կը ճանչնայ մարդիկը, կը քանդակէ զանոնք արագօրէն, իրենց նկարագրային իւրայատկութիւններով: Գանձակ Պարսամ հինգ ոսկին կու տայ, վկայով եւ սէնդով, քանի որ *«ինչ կ'ըլլի՝ ինչ չըլլի, ֆախաթ, մարդ ըսածդ հուճ կաթ կերած է»*: Տոկոսով կու տայ դրամը: *«Իշու ականջներով լեցուն ոսկիներուն հինգ հատը միայն, ականայ յիշեցին վկաները...»* (տոյն) : Կենսատու անձրեւը չի գար, արտերը ծարաւ են, մտահոգ է Գանձակ Պարսամ՝ իր դրամին համար: Երկու բարեկամները ալ տամա չեն խաղար: Եւ կը սկսի տազնապեցնող սպասու-մը.

Շաբաթէն աւելի էր որ անձրեւ չէր եկած: Այդ այն ժամանակն է, երբ կը սկսին ցորենները բողբերուն մէջ հասկեր կապել: Ոմանք բողբերնին պատռած արեւ ելած էին, ինչպէս նկատած էր Թորիկ Ղուկաս: Անձրեւը կ'ուշանար: Գիւղացիներուն երեսներուն վրայ թեթեւ ծռութիւն մը կար: Անձրեւը կ'ուշանար: Այդ բոլորին մէջ էն շատ մտահոգուողը Թորիկ Ղուկասն էր: Ինչպէ՞ս չմտահոգուէր:

(Եոյն)

Գիւղը մղձաւանջ կ'ապրի: Պարսամ եւ Ղուկաս երկնքէն անցնող ամպի կտորները կը գննեն: Յամաստեղի ոսպնետակին ընդմէջէն ամպի ծուէնը կ'ըլլայ բանաստեղծութիւն եւ գծանկար:

Թորիկ Ղուկաս, սովորականին պէս, այդ օրն ալ ձեռքը ճակատին վրայ հովանի բռնած՝ երկնքի վրայ ամպի կտոր փնտռեց ու գտաւ այլուխի չափ փոքրիկ կտոր մը՝ Մարգարենց ուռիներուն վրայ բացուած: Դրացի Ակոբն ալ արտէն նոյնպէս կը դիտէր միեւնոյն ամպի կտորը, որ փռուած այծի փոստի կը նմանէր: Թորիկ Ղուկաս, բահը ուսին, մօտեցաւ դրացի Ակոբին:

– Երկար ատեն է. Էդ ամպը Էդ տեղ է:

- Ես էլ քիչ առաջ տեսայ:
- Հեղ մը արագիլները վար գային...

Երկու ռենճալերները կը դիտէին բաց գոյն ամպի կտորը, որ հետզհետէ սկիւռի ձեւ կ'առնէր: Տեսան, որ պոչը բաժնուեցաւ յետոյ մէջքը կիսուեցաւ, գլուխը կտրուեցաւ ու չբացաւ, չբացաւ...:

(Նոյն)

Կը նուազի ջրաղացին ջուրը: Գիւղը մտահոգ է: Վերջապէս կը հասնի անձրեւաբեր ամպը, որ խաղաղութիւն կը բերէ դաշտերուն եւ հոգիներուն:

Թորիկ Ղուկաս սովորականին պէս վեր նայեցաւ ու տեսաւ Յողարի վրայ ամպի կտոր մը: Այդ կտորը գորշ մթութիւն մը ունէր, որ արտին վրայ բացուած էր մագաղաթունակ աւետարանի մը նման: Շատ չանցաւ, կարծես հով մը աւետարանին հազար էջերը թափեց ու գոցեց կապոյտն ու արեւ:

(Նոյն)

Համաստեղ կը նկարէ՝ ինքնատիպ վրձինով: Գիւղին մէջ հարսանիք է: Ղուկաս կը վերագտնէ Պարսամը:

- Պարսամ, Պարսամ, ա՛յ, երեք պուտ, երեք պուտ անձրեւ ինկաւ վրաս, տես, տես, երկու խոշոր պուտեր ձեռքիս վրայ. որ կ'ըսէի. չէիր հաւատար. տես անձրեւը, ձեռքիս վրայ: Ալ եզներս չպիտի ծախեմ:

... Թորիկ Ղուկաս կը դիտէր կուշտ կուշտ ու կ'ուզէր դուրս ելլել անձրեւին տակ: Անձրեւն աւելի սաստկացաւ կաթիլները քարերուն վրայ վրայ թափուող մարգարիտէ հատիկներ ըլլային կարծես: Տանիքին ճրթթոնները սկսան վար՝ փողոցի քարերուն վրայ թափիլ յորդ ու ուրախ աղմուկով:

- Ղուկաս,– խօսեցաւ Պարսամ,– եկ տամա մը խաղանք վաղուց է, որ խաղցած չենք...:

(Նոյն)

Քանի մը բռռ, եւ կը խտանայ կեանքը ինչպէս որ է: Խաղաղութեան անձրեւն է՝ արտերուն, գիւղին եւ հոգիներուն վրայ: Այս Համաստեղի գիւղն է, իր բնական-տեղական գոյներով, երանգներով, առանց յաւելեալ ճիգի, ոչ պատկերներ շինելու, ոչ բռռեր փնտռելու: Այս արդէն մեծ գրողի յատկանիշ է:

Հեռուն մնացած գիւղը անսպառ հարստութիւն է, յիշողութիւն՝ զոր կը պեղէ Համաստեղ, բնութեան գեղեցկութիւն, մարդկայնութիւն, սէր, առաքինութիւններ: Բայց չ'անգիտանար միջավայրը, նորը, ճարտարարուեստական քաղաքակրթութիւնը, ուր հայ մարդիկ, երբ Արեւելքէն կու գան, դիմաշրջումներ կ'ունենան: Յասմիկը կ'ըլլայ ճեսիքա, ուրիշներ՝ Մայքըլ եւ Պապ–որ կապ չունի մեր թագաւորի անուան հետ: Գիւղագիր, բայց նաեւ արուեստագետ, ան անտարբեր չէ շրջապատի կեանքին հանդէպ: «Պուպրիկը» պատմուածքը նմուշ մըն է

այդ գծով: Բանուկորը, ինչպես գիւղացին, հականիշն է վատասերած դրամատերերու, անոնց ամբարտաւանութեան, անոնց ամբարտաւան կիներուն: Բանուկոր Թովմաս, հարուստի մը տան պարտեզէն «գտնուած, աղբի մեջէն առնուած» պուպրիկը՝ իր աղջկան ընկերներէն տրուած, կը վերադարձնէ, բայց կ'արժանանայ վատ վերաբերումի, փոխան գնահատանքի: Իր աղջկան կը խոստանայ պուպրիկ մը գնել Ծնունդին:

Ծնունդին Յելենան աղուկ պուպրիկ մը պիտի ունենար, Միլէին պէս: Ա՛խ թէ Ծնունդ գար... Յորաքոյրը շատ լաւ կը հասկնար Յելենային ցաւը ու ուզեց անոր համար բուրջէ փոքրիկ պուպրիկ մը շինել, մինչեւ որ Ծնունդը գար:.. Պուպրիկի սերը իր մէջ արթնալէն ի վեր Յելենան այլեւս ժօզէֆին եւ Մայքին հետ չխաղաց, անոնց հետ պարտեզ չգնաց:.. Բուրջէ պուպրիկը հոգի չունէր, թելերը միշտ կը փրթէին: Ծիծաղ չունէր, աչքեր չունէր: Օր մը ալ բարկացած զայն փողոց նետեց ու սպասեց, մինչեւ որ Ծնունդը գար:

«Գիւղը»

Երբ քաղաքը կը գուարճանայ եւ Ծնունդ կը տօնէ, Բանուկոր Թովմաս կ'աշխատի մինչեւ ուշ ատեն: Ապա կը գուարճանայ իր ձեռով, կը խմէ:

Բանուկոր Թովմասն ալ գինետան ալլուքին հետ միասին դուրս ինկաւ:.. Ձիւնը հանդարտ կը տեղար ու քաղաքին մէջ ժխորը տակաւին դադրած չէր:.. Բանուկոր Թովմաս՝ լապտերի մը ձողին կոթնած, տուն երթալու համար, թրամվէյի կը սպասէր: Թերեւս մոռնար Յելենայի Ծնունդի նուէրը, եթէ ցուցափեղկէ մը կախուած պուպրիկներ չտեսներ:

(Նոյն)

Հայր է Բանուկոր Թովմաս: Պիտի գնէ Պուպրիկը: Կր գնէ քառուկէ շինուած պուպրիկ մը, «որ մէկ կողմի վրայ ինկած՝ կը խնդար ու կը դիտէր կապոյտ կապոյտ աչքերով»: Վաճառողին կ'ըսէ.

– Ձուլարանատիրոջ պուպրիկն ալ էսպէս էր. շարունակեց դրամը տալով ու պուպրիկն անութին տակ տեղաւորելով: Չէ, չէ, էն աւելի լաւն էր, շատ սուղ պուպրիկ էր: Դուն տեսնելու էիր, պարոն խանութպան. էնպէս կին... Դէ՛հ, դժոխք, դժոխք - Բանուկոր Թովմաս բարկացաւ յանկարծ:

(Նոյն)

Վերադարձի ճամբուն վրայ, Թովմաս կը շարունակէ իր գինովի գառանցանքը. «Դժոխք, դժոխք...»: Կը հասնի տուն:

– Յելենա, այ՛ն անիծուած աղջիկ, պոռաց, երերալէն դուռը բանալով: Յելենան դողաց փոթորիկէն ցնցուող թափի մը պէս:
– Մինչեւ հիմա ինչո՞ւ էս ճրագը կը վառես, այ՛ն անիծուած աղջիկ, էս դրամ է, կ'երթայ, դրամ: Ո՞րտեղէն էս դրամը: Ես ձուլարան չունիմ, ձուլարանի տեր չեմ, կը պոռար բարկացած:..

– Ըստ, ըստ, ինչո՞ւ չպառկեցար, մինչեւ հիմա ճրագն ինչո՞ւ վառուած պահեցիր:

– Պուպրիկին կը սպասէի,- խօսեցաւ Յելենան արցունքներուն մէջէն:

– Պուպրիկին հա՞: Առ քեզի պուպրիկ:

Բանուոր Թովմաս կատղած շան մը պէս ցնցուեցաւ, պուպրիկը ճմրտեց իր կոշտ ձեռքին մէջ ու վառարան նետեց:

Յելենան ճչաց ու գետին ինկաւ: ... Քաուչուէ պուպրիկը կը վառէր կանաչ բոցով մը, կը վառէ իր ժպիտով, կապոյտ կապոյտ աչքերով: Ամբողջ տունը քաուչուի հոտ մը բռնած էր կարծես հոտն ըլլար մարդկային դիակի մը, հեղձուցիչ ու ոճրային: ... Հագիւ ժամ մը անցած էր, երբ բանուոր Թովմաս արթնցաւ, իր կօշիկները հանելու համար: Տեսաւ, որ մոռցուած կազէ լամբարը կը մարմրէր պատերուն վրայ ստուերներ խաղցնելով: Յելենան ալ գետինը պառկած, քնացեր էր: Արցունքերը տակաւին չորցած չէին աչքերէն:

– Յելենան,- ձայն տուաւ հայրական շեշտով մը- արթնցիր, Յելենա, ե՛ր, աղուոր աղջիկս, վաղը Ծնունդ է առանց աղօթքի մի պառկիր, արթնցիր արթնցիր...:

(Եոյն)

Կոշտ, կոպիտ, մարդկային Թովմաս, գործարաններու Տափան Մարգարը...

Բայց Համաստեղի Էռթիւնը հայ հողն է, հայ ու հողը, ոչ տեսութիւն հողը քաղաքական ճառերու, այլ հողը՝ կեանք եւ բոյր, գիւղացիներ՝ քաղաքներու խաթարումէն եւ արուեստականացումէն գերծ մնացած, ինչ որ կը շեշտէ անոնց մարդկային շնորհները: Ան չի չարչարեր բառերը, անոնք վարժապետական բացատրութեան հեւքի մէջ չեն: Կը թելադրեն: Հեզասահ են: Կարիք չկայ վերադարձ ընելու, թաքուն գաղափարներ գտնելու համար: Ոճ մը՝ իր տիպարներուն պէս թափանցիկ: Առաքինի գրագէտ մը, որ ճիգ չ'ընէր տպաւորելու, անպայման յուզելու: Բառ մը, գիծ մը, կը բաւեն մթնոլորտ ստեղծելու:

«Սպիտակ ձիաւոր» երկհատոր վեպը պատեկերացումն է հայ ազատագրական շարժման: Պայքար՝ իրաւունքի համար՝ հողին վրայ: Տիպարները ապրած դէմքեր են բայց գիրքը յուշագրութիւն չէ: Համաստեղ պատմաբան չէ, այլ ամենայն ազատութեամբ վեպ կը գրէ, այդպէս կը վարուի իր կերպարներուն հետ:

«Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական թատերական երկ է: Օրին, երաժշտութիւնը յօրինած է Ալան Յովհաննէս: Համաստեղ կ'ըսէ՝ *«Նուէր ամերիկահայութեան, որ ծերացաւ աչքերուն մէջ բռնած կարօտը երկրին, որ ասրեցաւ ու երապով դարձուց իր կեանքն իրական»*: Ինչպէս ինք: Բանաստեղծական յուզումով կը նկարագրուի տուայտանքը Ամերիկա նոր հաստատուածներու, որոնք չեն կպած նոր միջավայրին եւ առօրեային, կ'աշխատին, բայց իրենց հոգին այլ տեղ է: Կը լսեն *Նահշուրնակ* կամ *Լալեպար*... Երկիրը, որուն մասին կը խօսուի *Էրզրոն* է, Վիզէն Խեչումեանի *հող-հայրենին*: Չրոյցը կը խորանայ, իրականութեան եւ անիրականի սահանին վրայ:

Մարգար.— Որ եղպես է, ուրիշ բան չի կրնար ըլլալ, Մարթա, ջանս: Մենք շատ անգամ կ'իյնանք էս տեսակ երազներու մէջ: Երկիրը, Ամերիկա շատ անգամ իրար կը խառնուին:

Գրիգոր.— Մարգար, սա ձեռքս բռնէ՝ տեսնեմ: Բռնէ, ժիր բռնէ: Այ եղպես, ու սեղմէ ցաւցնելու աստիճան:

Մարգար.— Կը սեղմէ ցաւցնելու աստիճան — էս ինչի՞ համար է:

Գրիգոր.— Կրնայ ըլլալ որ արթննամ եղ ցաւով:

Մարգար.— Բայց եթէ երազ տեսնողը դուն չես:

Գրիգոր.— Էդ էլ ճիշդ է: Ինձի էնպէս կը թուայ, որ էս երազ տեսնողը Մարթոն է: Անկողնին մէջ քնացած հանգիստ՝ էս երազները կը տեսնէ: Մենք այն ատեն կ'ազատուինք, երբ արթնայ Մարթոն:

Մարգար.— Երբեք, Գրիգոր, ինձ ալ կը թուայ, որ մենք բոլորս ալ Մարթոյի երազին մէջ կը չարչարուինք: Ուրիշ մէկը չէր կրնար այծեմարդը տեսնել:

Մարթա.— Թէ որ եղպես է, մենք ազատում չունինք: Ան չի քնանար: Ան արթուն է, ան կախարդին հետ է..

Մարգար.— Գրիգոր, աղքերս, դուն կեցիր Էստեղ: Մարթան գնաց: Թէ որ Մարթոյին ձենը եղբան մօտ է, ուրեմն մօտ են հայրենի լեռները: Ես երազիս մէջ շատ եմ թռչեր: Կրնայ ըլլալ որ թռչելով հասնինք:

Գրիգոր.— Բայց պիտի թափառիք, շատ պիտի թափառիք: Էդ ձենին որբան մօտենաք, Էնքան ալ ան պիտի հեռանայ: Մարգար կը մեկնի — Մինչեւ Էն տեղ, մինչեւ հայրենի լեռները..

Գրիգոր.— Չէ, Մարիամ, դուն Էստեղ կեցիր, գեթ երազներուս մէջ զիս հանգիստ կը ձգես: Որ պանքային մարդը գայ, ըսէ, որ Գրիգորը ճորճը չկայ: Ըսէ, որ գնաց, կորսուեցաւ իր երազներուն մէջ: — Չալոն ետեւէն: Սրինգին ձայնը կը դադրի...:

(Երջան)

Երբ կը դադրի սրինգին ձայնը, հայկական ձայնը...

Չամաստեղ ազգային բովանդակութեամբ գրականութիւն մշակած է, առանց քաղաքական ճառի: Չգացումները թափանցող են, առանց թանձր յուզումներու: Այս բոլորէն անկախ, ան արուեստագետ է, բառերով կը նկատէ եւ նկարին մէջ կը կախէ հայու հոգին, աշխարհ մը՝ ուր ժամանակը կանգ առած է մարդոց չարութեան հետեւանքով:

«Մեր գիւղի լուսնկան ալ, բոլոր գիւղի լուսնկաներու պէս, եկեղեցիի զմբէթէն չէր հեռանար, շատ անգամ անոր վրայ կ'իյնար, հոն կը հանգչէր: Չալոյին դունչը, հիւսիս երկարող մազնիսի մը պէս, այն կողմն էր միշտ. կը կաղկանձէր ու կ'ոռնար պղինձի պէս արձագանգուող քարայրներու ձայնով:

(«Չալօ»)

Էրզիր մը կար որ չկայ: Ժամանակակից Մկրտիչ Մարկոսեանի մօր յիշողութեան մէջ, ամբօրէն նստած *պէրէքէթ* ունեցող Տիգրանակերտին պէս: Փերչենճը: Ինչպէս Դրախտ Կորուսեալի բոլոր գիւղերն ու քաղաքները:

Գիւղագիրները, Յամաստեղ, Մնձուրի, Մկրտիչ Մարկոսեան, եւ իրենցմէ առաջ Խրիմեան եւ Թլկատինցի, հողի հետ կորսուող եւ կորսուած Արիանի թելը գտնելու եւ պահելու հրաւերներ են: Առանց հողի ապրումին գրականութիւնը տարաշխարհիկ բոյս է, ինչպէս քաղաքականութիւնը բեւեռային գօտիի մէջ տընկըւած արմաւենի, բախտաւոր պարագային տարաշխարհիկ բոյս, կակտենի, *քաքթիւս*, մանր քաղքենիներու դահլիճները զարդարող:

Ինքնութիւն վերանուաճելու եւ պահելու ցանկութիւն ունեցող հայուն համար Յամաստեղ ոսկեղէն դոռն է, Ըսենք. *Ազգի ոգիի* հայելին է գրականութիւնը:

(Թիւ 2, 2005)

ՀԱՄԱՍՏԵՂ

ՀԱՐՕՆ ՈՒ ԿԱՐՕՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՅՑԷ ՄԸ ԱՌՆՈՒՄԾ)

*Մ*յո օր Ս. Բարթողիմեոս վանքին օրն էր: Լերան քարերուն չափ հին օրերուն, չգիտես ո՞ր տեղէն, Սուրբը իր լայն մօրուսը հովին տուած, հեղուղ աստղի մը պէս իջած էր Քարկապան լեռան կողքին: Վանքին քարէ պատերը բորբոս կապած՝ ժանգոտ երկայթի գոյն առած էին:

Այդ մօտաւոր ու հեռաւոր գիւղերէն ուխտի կ'երթային տօնական նաշխուն հագուստներով: Վանքին ներսը՝ աղօթք, խունկ-պատարագ, բուրվառ ու բշոց: Գիւղական քահանային վրայ ծիրանափառ շուրջառ, թանկագին թագ, ոսկի ու արծաթ: (Վանքը հարուստ էր եւ սակայն վանքի փոքրիկ գիւղի բնիկները աղքատ էին ու հիւանդկախ): Դուրսը հաստաբուն, դարաւոր ընկուզենիներուն տակ տօնավաճառ կար: Պագարին համար կը տանէին նուռ, սերկելիլ շնգուշէն: Արմաւի չափ խոշոր չամիչ Պեսնիէն: Կը տանէին գազպէ, նապաղ շաքար, գորգ ու կապերտ իսկ Կիւրինէն՝ լաչակ ու շալ: Կը տանէին ձի ու ջորի, էծ ու աքլոր, լոր ու կաքաւ՝ վանդակներուն մէջ փակուած:

Այդ առաւօտ շատ կանուխ ճամբայ ինկաւ Էբուկենց Կարօն իր կովը վաճառ տանելու: Ճիւս կով էր վրան փաթ իստակ: Ամեն իրիկուն, նախիրէն դարձին՝ կ'անցնէր գեղի փողոցէն մեծ ուրով, հորթին կարօտը գեղեցիկ աչքերուն մէջ:

Էբուկենց Կարոյին վիճակը լաւ էր: Կովը ժմնցուցած էր երեք ընծիւղ եւ մէկ կով, որ առաջին ծինը ունեցած էր եւ այնքան նման իր մօրը:

Կարօն գիրուկ էր: Հագուստ կապուստը, շալ ու շալվարը առանձին փարթաւմութիւն մը կու տային: Ծաղկաւեր դէմքը բողկի մը չափ առողջ էր ու կլոր՝ ունէր լեցուն պէխ, թաւ յօնքեր եւ հորթի աչքեր: Երեք մեծ բողղ գինին իրեն չէր բաւեր ամբողջ տարին եւ խելք կը հասցնէր թէ՛ եկեղեցիին եւ թէ՛ գիւղական դպրոցին:

Արեւը դեռ նոր ծայր կու տար աքաղաղի փետուրներու գոյնգոյն ճաղերով: Պարզկայ միջոցին մէջ դեռ կը հնչէին իրենց գիւղի աքաղաղներու հատ հատ պղնձեղէն ձայները հեռուէն եկող սայլերու ծանր ճողոցներուն հետ: Արշալոյսն էր, որ կարծես նաշխուն գործուած մետաքսի մը պէս, կը փաթթուէր սայլերու ծանր գլաններուն:

Երբ գիւղէն դուրս, դէպի վանք տանող գլխաւոր ճամբուն մէջ մտաւ Էբուկենց Կարօն, տեսաւ ուխտաւորներ, թէ՛ ձիաւոր թէ՛ ոտաւոր: Իրմէ շատ կանուխ, մօտ ու հեռու գիւղերէն ճամբայ ելլողներն էին: Մէկն իր ետեւէն այծ մը կը քաշէր: Կ'անցնէր փեղիվաններու խումբ մը Մշու կողմերէն նաշխուած թելլեկներով

ու ծանր պարանը փոքր էշի մը բեռցուցած: Նոյնիսկ շատ կանուխ ճամբայ ելած էր արջ խաղցնող Մէշետտի Յասանը, ծանօթ՝ բոլոր գիւղերուն: Այդ անցորդներուն մէջ Էթուկենց Կարօն էր մինակ, կ'ըսես կովին կնդակով կը քայլէր: Մժեղներու շոգ ձանձրոյթին մէջ հեղ մը ետեւ նայեցաւ: *Հըմ*: Կանգ առաւ կարճ պահ մը: Հեռուէն եկողը ան էր – Հարօն, որ նոյն ճամբուն մէջ մտած էր արագիւի երկու բարակ սրունքներով: Հեռուէն գլուխը աւելի փոքր կ'երեւէր եւ կարծես հո՛վ մը որ անցնէր թելի մը պէս պիտի շարժէր անոր հասակը: Գուցէ այդպէս կ'երեւէր որովհետեւ միջոցին մէջ սկսած էր ամառուան շոգը: Հարօն գեղին խեղկատակն էր, հաճելի բոլորին համար եւ միշտ ալ հետը կ'իյնային: Ինքը չէր վիրաւորուէր անոնց երբեմն անհամ կատակներէն, եւ ո՛չ ալ անոնք կը վիրաւորուէին Հարոյի լեզուի սուր խայթոցներէն: Բարակ շրթներուն վրայ ունէր միշտ ալ զաւեշտի բարակ ժպիտ մը: Օր մ'օրանց անոր մականունը տուած չէին, ինք ալ պէտք ունեցած չէր իր մականունին: Հարօն էր եւ այդ անունը այնքան յարմար որքան անոր բարակ սրունքները եւ նոյնքան բարակ քիթը եւ անոր քառասուն կարկտանով շալվարը եւ՝ մանր պճլտուն աչքերը: Աչքեր որ կ'ըսես, մէկը միշտ գոց էր թէեւ պատճառ մը չկար գոց ըլլալու: Հարոյին համար մէկ աչքն ալ կը բաւէր գիւղին եւ մարդոց վրայ նայելու: Եթէ երկու աչքով նայէր գուցէ դժբախտ զգար: Հարօն դժբախտ չէր: Այդ էր աշխարհի կարգը:

Գիւղացիները ըսելիք, լսելիք կ'ունենային երբ Սանդքարի հրապարակը կը հաւաքուէին իրիկուան ճաշէն վերջ իրենց յոգնութիւնն առնելու եւ կը սպասէին որ Հարօն գար: Ան որ կու գար առաջին անգամ իր ձեռքը կ'երկարէր մօտիկ մարդուն *թուրունի քրասային, ճղարա* մը փաթթելու:

– Հարօ, երբ պիտ բանաս էտ մէկ աչքդ:

– Էն ատեն երբ աշխարհի գործը կարգին ըլլայ:

Չարին մէկը անհամ կատակ մը ըրած էր օր մը: Հարոյին տրուած սիկարէթին մէջ վառօղի հատիկներ դրած էր եւ նոյնիսկ խանձած անոր վար ձգուած պէխերը: (Հարօն իր պէխերը միշտ ալ պահած էր իր չունեւորի անցուկ սահմաններուն մէջ եւ օր մըն ալ մտածած չէր վեր առնել ինչպէս Էթուկենց Կարոյի պէխերն էին): Ծխախոտին հետ խառնած վառօղի հրավառութենէն յետոյ՝ Հարօն պէխերը սրբած, մի քանի անգամ իր մէկ աչքը թարթած՝ ժպտացեր էր ներկաներուն հետ եւ բաժնած այդ անհամ կատակը: Էհ, նոյն գիւղացիներն էին, որ զինք յաճախ աշխատանքի կը կանչէին ըլլայ կալի ըլլայ կուտի, այգեփորի, ջրաղացքը աղօն տանելու ու բազմազան գործերու համար: Եւ այդ գործերով էր որ իր տունին հաց ու փիլաւ կը հասցնէր:

– Բարեւ, Հարօ, ձայն տուաւ Կարօն եւ դանդաղեցաւ որ Հարօն իրեն հասներ: Ես ալ ըսի Էս ո՞վ է կու գայ – *լէսգ լէսգ*: Մտքէս ըսի՝ Օվականենց կտուրի արագիւն է ելեր վանքը ուխտի կ'երթայ: Է՛հ, գիտե՛ս ա, արագիւները Երուսաղէմի հետ կապ ունեցող թռչուններ են: Չըլլա՛յ, Հարօ, խնդրանք ունիս Ս. Բարթողիմէոսին:

– Ի՛նչ խնդրանք, աղա Կարօ, կաթ տուող կովին երեսին որ նայիս, արդէն յայտնի է: Էդ սուրբերը, մեղայ Աստուած, քու կովին երեսն ալ չունին: Քու կովին երեսը որ տեսնես՝ *պիթուն* առատութիւն է: Աստուած զիս որ *Չիւկիւրտ* ըրած է ըսել է բան մը կայ սխալ: Էդ սխալը իմ մէջ է թէ Էնոր՝ ես ալ չգիտեմ: Չան կ'ընեմ իմ *սուրաթն* ալ Աստուծոյ կերպարանքով ստեղծուած է: Ալ հասկցիր աշխարհի բանը:

Հարօն իր ուսին ձգած էր ոտքերը կապած երեք աքաղաղ Ս. Բարթողիմէոսի պագարին տանելու: Տան մէջ պակաս էր թէ ադ, թէ օճառ եւ թէ լուցկի:

– Էհ, ինչ ընենք, աղա Կարօ, ես քեզի պէս ունեւոր որ ըլլայի... Էդ պագարին կո՞վ մը կը տանէի: Կարօն ուզեց փոխել գրոյցը: Նկատեց, որ Հարօն կրնար խայթել զինք իր նետի պէս բարակ ժպտելով:

– Հարօ, հիմա քանի՞ զաւակ ունիս:

– Հինգ զաւակ, աղա Կարօ, մէկն ալ ճամբան բռներ կու գայ:

– Նորէ՛ն, հարցուց Կարօն, Էնպէս զարմանքով, որ Հարոյին պէս աղքատ մարդիկ Էդքան զաւակ չպէտք է ունենան: Ըսել է Վարդերին գոգնոցը նորէ՛ն վեր բարձրացեր է: Կարոյի այդ խօսքերուն մէջ թաքուն բան մը կար: Հակառակ որ Հարօն աղքատ էր եւ սակայն, ունէր լայն կողերով, պսպղուն մարմնով կին մը:

– Է ի՛նչ ընենք, աղա Կարօ, չունեւորի հալ է: Երազ չվառենք – ձեթը խնայենք ըսելով՝ Վարդերին հետ կանուխ անկողին կ'երթանք:

Այս գրոյցներու ընթացքին Կարօն երկարեց իր ծխատուփը Երուսաղէմի սատափ բանուածքով: Հարօն սիկարէթը փաթած ատեն հիացումով կը դիտեր Կարոյի կովը, որ կ'ըսես խուճազ հագած, խանումի պէս կը քայլէր եւ մժեղներու պարս մը անոր գլխին շուրջ կը դառնար: Հարօն մի քանի անգամ ուզեց իր հիացումը յայտնել եւ սակայն ուսին ձգուած երեք աքաղաղներու կրկնոցը զինք կը հեռացնէի իր ըսելիքներէն:

– Ի՛նչ խաս կով ունիս, աղա Կարօ. մեղք որ պագար կը տանիս, որ դրամ ունենայի. ... որ Էդ կովն ինձի ըլլար, Վարդերը տասը զաւակ ալ ունենար հոգ չէի ըներ: Խօսեցաւ Հարօն սիկարէթի թուղթը թրջելով:

Այդ պահուն Կարոյին աչքերուն մէջէն կ'ըսես թրթուրի պէս կանաչ դել մը ելաւ ու մտաւ թանձր յօնքերուն մէջ: Ուզեց լաւ կատակ մը խաղալ Հարոյի գլխին՝ օգտուելով անոր տկարութենէն: Այնքան անկեղծ տկարութիւն մը կար անոր ձայնին մէջ երբ ըսաւ, «Եթէ Էդ կովն իմն ըլլար»...

Կարօն կեցուց կովը հոն, ուր ճամբին մօտ հաստ ուռնի մը կար զով շուքով, ուր կենդանիները ամառուան շոգին՝ հանգիստ կ'առնեն դանդաղ որոճումով:

– Հարօ, կը տեսնես Էդ մեծ *կոռուիք*: Խօսեցաւ Կարօն մատով ցոյց տալով լայն ու կլոր *կոռուի* մը որ երէկ ուշ ատեն, գուցէ վերջալոյսին՝ կուշտ փորով գոմէջ մը թրքած էր եւ տակաւին անոր շուրջ մրջիւններ եւ բզեզներ հաւաքուած չէին:

– Հա, թեմամ կշկուր մը *Ճըվէլէկի* թոնիրին համար, խօսեցաւ Հարօն ու առանց գիտնալու թէ ի՛նչ ըսել կ'ուզէր Կարօն:

– Հարս, որ եղ բոլորը ուտես, Էս կովը քեզի հալալ:

Հարոն զարմացած դիտեց աղա Կարոյին դեմքը: Իրեն այնպես թուեցաւ, որ աջ աչքին ծանր կոպը վեր պիտի վերնար յանկարծ:

– Ըսել կ'ուզես... Հարոյի ձայնին մէջ այնքան օտար բան մը կար, որ արդէն զգաց: Եղածը կատակի սահմաններէ դուրս պիտի գար: Ինչքա՛ն պետք ունէր կովի մը: Հարոն հեղ մը նայեցաւ *կոռոպի*ին եւ պահ մը երեւակայեց, որ կովը իրն էր եւ կապը բռնած իր տունէն ներս պիտի մտնէր: Տան մէջ աման *թէնճիթ* կաթով պիտի լեցուէին – մածուն, *չէքելիք* պանիր, կարագ. իսկ փոքրիկները ջուրի տեղ թան պիտի խմէին:

Կարոն իր այդ խաղով կ'ուզէր հոտ բեմ մը սարքել Սանդեարին շուրջ հաւաքուող գիւղացի հանդիսականներուն երբ հրապարակը մտնէր Հարոն:

Էբուկենց Կարոյին մէջ վախ մը սողոսկեցաւ յանկարծ, ճիշդ մողեսի մը պէս: Գեղին խեղկատակը, Հարոն, այդքան վճռական եւ ուժեղ կամքով տեսած չէր եւ արդէն սկսած էր գործի... Կարոն իր խոշոր աչքերը բաց դիտեց: Եթէ լմնցներ Էդ բոլորը... տեսաւ Հարոյին դեմքին գոյնը հետզհետէ կը փոխուէր, թթուն դրուած երկար վարունգի գոյն առաւ դեռ կեսին չհասած: Կարոն կաւէ շինուած արձանի մը գոհ երեւոյթ առաւ երբ Հարոն «վայ փորս» ըսաւ ու երկու ձեռքերով փորը բռնած գետին պառկեցաւ: «Կըրթ, կըրթ» կ'ըսես ամբողջ փորը դուրս պիտի գար:

Էբուկենց Կարոն շահած էր գրաւը:

– Այ, ալ չեմ կրնար, Կարո: «Վայ փորս»... Աստուած որ խելք չէ տուեր, ի՛նչ ընեն մարդիկ, խօսեցաւ Կարոն, դայրտոցի, եկեղեցիի խելք հասցնողի հով մը բռնած ճակատին եւ ուզեց կովին հետ ճամբայ ելլել Հարոն իր հային ձգած:

– Ոչինչ, Հարո, կը մոռնաս երբ քիչ մ'աւելի խելք ունենատ, աւելցուց Կարոն ու չզիացաւ թէ Հարոն ինչպէս յանկարծակի, մէկ ձեռքով փորը բռնած հասաւ վայրի կենդանիի մը պէս ու բռնեց կովին կապը այնքան ժիր, որ կարծես այլի մագիլներ ըլլային:

– Ո՛ր, Կարո, Էս կովին կէսը իմն է,– պոռաց Հարոն եւ բարկութենէն սկսաւ կակազել:

– Բայց դուն չի թեմամցուցիր, Հարո:

– Իմն է կովին կէսը, Կարո: Ես կերած եմ կէսն Էդ կոռոպիին: Չէ՛ որ ամբողջը կ'արժէր *թեմամ* կով մը...

– Ի՛նչ կ'ուզես, որ ընենք,– Հարո: Կովը կէս չենք կրնար կիսել: Կարոյի այդ խօսքերուն մէջ դեռ թաքնուած կատակը կար.

– Կարո, Կարո, դուն իմ լէշին վրայէն կ'անցընես Էս կովը:

Կարոն ի գուր փորձեց կովին կապը ազատել Հարոյի մագիլներէն: Կարոն աւելի վախցաւ երբ տեսաւ Հարոյի փակ աչքը բացուած էր յանկարծ: Այնքան ուժեղ էր զայրոյթը: Հարոն ու Կարոն բռնած կովին կապը, իրենց զայրոյթէն կրնային քարանալ կովին հետ երբ հեռուէն տեսան ձիաւոր մը, սալտակ հագած, խոճայի ծանր փաթոցով:

– Այ, եղ խոճային հարցնենք, խօսեցաւ Կարօն:

– Հարցնենք. ըսաւ Հարօն այնքան վստահ որ իրն էր իրաւունքը:

Խոճան՝ պարսիկ էր: Կանգ առաւ ձիով երբ տեսաւ երկու մարդոց դէմքերուն վրայ փոթորիկ մը կար, իսկ կովը իր գլուխը կը չանչէր ճանճերը վանելու համար:

– Խոճա Էֆէնտի:

– Մահրասայա:

– Հալ-հեքիաթ...

– Ես կերած եմ կէսը...

– Բայց ամբողջը կերած չէ:

Եւ արդէն խոճային խօսք չէին ձգեր վիճելով երբ խոճան խօսեցաւ 40 օր լռած անապատականի մը պէս, իր սպիտակ մօրուքի պատկանելիութիւնով:

– Ամօթ է, *հէմշէրհներ*: Այլահի դատաստանը կայ: Եթէ ամբողջը կով մը կ'արժէ, կէսը *հէլպէթ* կէս կով է. խօսեցաւ խոճան եւ արդէն Հարօն այնքան գոհ մնաց, որ աջ աչքին կոպը նորէն վար իջաւ:

– Կովն ինչպէ՛ս կ'իսենք, խոճա Էֆէնտի:

– Կովը կ'իսելու պէտք չկայ, *հէմշէրհ*, թէ որ կ'ուզես թեմամցնել քու կովը դուն ալ էն միւս կէսը կեր:

Այդ մէկը անակնկալ էր թէ՛ Կարոյին եւ թէ՛ Հարոյին համար, եւ արդէն Հարոյի բարակ շրթունքներուն վրայ խեղկատակի բարակ ժպիտը կեցաւ:

– Ես համաձայն եմ, խոճա Էֆէնտի: Թէ որ մնացածն ալ Կարօն ուտէ այն ատեն *արըշ-պարըշ* ճամբայ կ'իյնանք:

– Իսկ դո՛ւն, հարցուց խոճան Կարոյին: Կարօն շատ ուշ համաձայնեցաւ. դեռ զայրոյթ կար անոր աչքերուն մէջ: Է՛հ, ոչինչ, մի քանի անգամ ալ ինք «կըրթ կըրթ» կ'ընէ եւ արդէն տէր կ'ըլլայ իր կովին:

Խոճա Էֆէնտին հսկեց, որ կատարուէր Այլահին օրէնքը՝ եւ արդէն սկսաւ կրթկրթալ Կարօն. փորին մէջ կ'ըսես երկրաշարժ էր մտեր ու «վայ փորս» ըսաւ ու գետին պառկեցաւ:

– Բան չկայ, Կարօ, որ մեծնաս, որ խելք ունենաս կ'անցնին եղ բոլորը: Հարօն լուծած էր իր վրէժը Կարոյի նոյն բառերով. բայց որ դեռ ուտելիք կար:

– Տահա կովին ոտքերը, գլուխը իմն է, Կարօ: Իմ կովի ոտքերով ճամբայ չես կրնար ելլել, խօսեցաւ Հարօն միեւնոյն ատեն խոճային նայելով: Այս անգամ իր բարակ ժպիտին մէջ անգուրթ բան մը կար. անգուրթ էր Այլահի դատաստանը որ խոճային հուլունքի նման աչքերուն մէջ կարծրացած էր: Խոճան գոհ դէմքով նոյնքան գոհ մօրուսով ճամբայ ինկաւ: Բարի գործ մը կատարած էր այդ օր: Կատարուած արդարութենէն գոհ էր նաեւ Հարօն եւ այդ պահուն միայն յիշեց, որ ինք ոտքերէն կապուած երեք աքաղաղներ ունէր ուսին ձգած՝ վանքին պագարը տանելու: Վախը փորին՝ փնտռեց աքաղաղները ու գտաւ չորացած առուի մը մէջ: Աքաղաղները այդ իրարանցումին մէջ անկիւն մը մոռցուած, կրկնալով ձէն ձէնի, կապուած ոտքերնին ազատելու ճիգով հեռացեր ու ինկեր էին չորացած ա-

ռուին մեջ: Հարօն իր աքաղաղները ուսերուն նետած ճամբայ ինկաւ: Թոյլ էին ոտքերը – «կըրթ, կըրթ»: Կարօն եւս դժուարութեամբ ինքզինք հաւաքեց կովին հետ ճամբայ իյնալու եւ արդէն պիտի ուշանային պազարին համար:

Հարօն առջեւն ինկած կը քալէր իր լենգ սրունքներով: Արդէն մինակ՝ երբ իր ետեւէն լսեց Կարոյին ձայնը:

– Հարօ:

– Ի՞նչ կայ, Կարօ:

– Էս առաւօտ մենք հանդիպեցանք Էս ճամբուն վրայ: Դուն ուսիդ ձգած Էդ հաւերն ունէիր իսկ ես իմ կովը

– Շատ բարի – Շատ բարի, Կարօ, կրկնեց Հարօն:

– Հիմա ալ, Հարօ, ես իմ կովն ունիմ դուն ալ ուսիդ ձգած Էդ հաւերը – Էդ ալ բարի:

– Էդ ալ բարի, – կրկնեց Հարօն:

– Բայց աղբերս, մենք ինչո՞ւ կերանք Էդ թրիքը:

(Թիւ 10, 1963)

ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

ՍԱՐԱՅԱՐԹԻ ԴԱՇՏԱՍՈՒԿԸ

*Մ*շնանամուտի իրիկուններեն մեկը իր ցուրտ ստուերներուն զանգուածը կ'իջեցնէր բարձրաւանդակի հարթավայր գետնի մը խոզաններուն վրայ, երբ ես տեսայ մուկը, որ իր ծակէն քիչ մը հեռու, կը խոյանար բոլոր այն սնունդներուն դէմ, որոնք առաւել զօրութիւն մը եւ տեւականութիւն պիտի ապահովէին իր կեանքին:

Անօթի եւ հզօր մուկ մը: Գորշ հողերու գոյնով, գորշ իրիկուններու գոյնով: Ապրելու ուժեղ կամքով մը մտած էր կեանքին մէջ ու մեծցած: Իր չնչին ծաւալին մէջ կուտակուած էր ուտելիւ անսպառ եռանդ մը, յաղթական ախորժակ մը: Իր գորշ, գրեթէ անփայլ մորթը՝ ապրելու մնայլ ազդարարութիւն մը թուեցաւ ինծի, ուղղուած՝ կեանքին դէմ եւ անոր բազմաբովանդակ շրջապատին:

Կամակոր էր, պինդ, սրտնեղ: Սոսկալի արագութեամբ՝ կերաւ միջատ մը: Աննկարագրելի փոյթով մը՝ սուր քիթը մխրճեց սատկած դօդօշի մը փորոտիքին մէջ: Ականջները տնկած, անհաւատալիօրէն զգայուն ամեն մանր շարժումի, ուշադրութեան եւ գոյատեւելու հզօր կամքի մը մէջ ձուլուած՝ խոզանի թանձր արմատ մը կը տեղափոխէր յետոյ դէպի իր ծակը:

Սիրեցի՜ այդ մուկը, ինքզինք ապրելու գորշ ջերմութեան մը, գրեթէ կրակի մը վերածած ըլլալուն համար: Որովհետեւ սեպտեմբերի իրիկունը կը ծաւալէր անսահման հարթավայրին վրայ, եւ այդ փոքրիկ կենդանին՝ կեանքի հրալիր, այլ սեւ գնդակի մը պէս կը թաւալէր իր գոյութեան ապաստանարանին շուրջ՝ սուր քիթը մխրճած կեանքին ուղղակի սրտին մէջ:

Պիրկ էր, կրթոտ, յարաշարժ: Հոգը չէր՝ թէ պայծառ լուսնկաներ կան աշխարհի վրայ: Հոգը չէր՝ թէ ջուրերը նաեւ գեղեցիկ են, եւ աշնան իրիկունները սարահարթներու վրայ՝ զմայլելի եւ տրտում: Դեղին ու ցուրտ խոզաններուն գիրկը նետուած՝ ջղայնացած անօթութիւնն էր ան, անօթութեան վսեմ բարկութիւնը: Բայց մա՛նաւանդ, անպայմանօրէ՛ն ապրելու կրթոտ ազդարարութիւն մըն էր Պեքաայի դաշտին այդ մուկը:

Կը թրթռար մարմինը, կը ճառագայթէր ուժ եւ ճարտարութիւն: Իր գորշ մորթին տակ մուկի միսէ աւելի, բնութեան շքեղ մէկ թիւրիմացութեամբը, ան ունէր կարծես կատուի միս, իր բուն թշնամիին իսկ միսէն: Որով վայել էր, որ ան կատուի՜ կտոր մը ըլլար, քան ամայի գետիններու վրայ թափառող թշուառ մուկի մը պզտիկ զանգուածը:

Բայց այդ մուկը տիեզերքին վեհագոյն բնագոյն էր անշուշտ, աշնան իրիկ-լան այդ խորունկ անօթութեան եւ անապահովութեան մէջ, ապրելու վերջնական ազդարարութիւն մը ըլլալուն:

Աստուած զինք ստեղծած էր մանր եւ դրած... Անհունին մէջ: Երկու հարիւր կրամ միս ու ոսկորի մէջ՝ կեանքին խելացի ու խորհրդաւոր Արարիչը պատրաստած էր անսահմանութիւնը իր բոլոր երկնականարներով: Եւ Պեքաայի մուկը մանր ժանիքներով կը մաքաւէր ահա, իր տեսակին պահպանութեանը համար:

Ճարպիկ էր, ճկուն, գեղեցիկ: Հոյակապ ու հերոսական: Իր աննշան մարմնի ծաւալին մէջ խտացած, տարօրինակ փայլ ու կարծրութիւն առած ըլլալու էր ուտելու, անօթի չմեռնելու անսպառ եռանդ մը, անկարելիոր բնագոյ մը: Լափող ախորժակի մը սեւ կորիզն էր այդ մուկը՝ մուլթ, մուլթ:

Կատաղի էր: Կրնար իր կեանքին պահպանութեան համար, եթէ հարկ ըլլար ստոր, ամբողջ երկրագունտը կրծել այդ գորշ, գէր, կայտառ ու կորովի մուկը: Մարմնով մուկ՝ բայց առի՛ւծ մը կը թուէր ապրելու իր տենդով:

Գորշ էր, գէր, վայրագ: Ու կրնար վախնալ անշուշտ: Իր մորթին սահմանէն դուրս՝ ամէն ինչ օտար էր, ամէն ինչ թշնամի, ամէն ինչ դժուարութիւն: Իր մորթին գորշ ստեղծերէն դուրս՝ անմիջապէս կը սկսէր տարածուիլ ընդդէմ իրեն, Չարին անողորմ աստուածութիւնը, որ կրնար ամէն բոլոր կերը ընել զինք օձի մը, կատուի մը, իրմէ զօրաւոր որեւէ ուրիշի մը: Իր ապահովութեան սահմաններն էին հետեւաբար պոչի ծայր մը, քիթի ծայր մը, ոտքերու եւ ականջի ծայրեր: Ասոնցմէ դուրս կար եւ ասոնցմէ շա՛տ զօրաւոր աշխարհը կար, սնունդ՝ գոր հարկ էր ամէն օր շահիլ, վտանգելով ինքզինք: Ու թերեւս ապրելու այդ տարօրինակ առեղծուածին համար, ան, բարձր հարթավայրերու խոնարհ դաշտամուկը, կատողած էր տակաւ, զօրացած ներքնապէս եւ, ի վերջոյ, սեփական վախին վրայ հաստատած ու պարզած անկախութեան դրօշակ մը: Մեծ ուժերու դէմ զգուշաւոր եւ խորամանկ՝ այլ բացարձակ անգթութեան մը կայծակը ըրած էր ինքզինք տկարներուն հանդէպ:

Ստեղծուած էր, պիտի ապրէր: Իր վրայի մորթը կ'ուզէր ատիկա, ոսկորները կ'ուզէին ատիկա: Պիտի ապրէր՝ ընդդէմ հողին վրայ ու երկինքին մէջ գտնուող բոլոր զօրութիւններուն: Բախելով անոնց հետ: Չուզելով ընկճուիլ, պարտուիլ, մեռնիլ: Պարզ դաշտամուկ՝ ամենամեծոյի եւ վտանգաւոր խաղը պիտի խաղար ինք եւս՝ ինչպէս ճանճը, առիւծը, մարդը, փոթորիկը: Կեանքին վտանգաւոր խաղը...

Բնագոյ էր ան, արիւն եւ Անյայտութենէն նետուած կեանքի կտոր: Ու կեանքը հրաման մըն էր, եւ ինք պիտի կատարէր այդ հրամանը, նոյնքան պատուով ու վեհութեամբ, որքան փիղը, որքան վագրը, որքան իր ցեղին թշնամին, – ահարկու դաժանութեանց թագակիր կատուն:

Ըստ այդ դաժանած, վեհացած մուկին՝ տրուած կեանքը լիովին ապրելէն դուրս՝ չկար ուրիշ օրէնք: Չկար անոր հաւասար ոչ մէկ ուրիշ նուիրականութիւն:

Եւ ապրողները կ'ապրէին՝ ընդդէմ ամենուն, ընդդէմ ամեն վտանգի, ամեն արհամարհանքի:

Կեցած էր քիչ ետք ճիշդ ծակին քով, քիթը տնկած օդին մէջ, կարծես կը փիլիսոփայէր նիցչեական այս մուկը.

– Վա՛յ անոր, որուն քիթին ծայրը բաւականաչափ խորամանկութիւն չկայ, ու եղունգներուն մէջ՝ ո՛ւժ:

– Վա՛յ անոր, որուն ականջը չունի Չարիքին ծածկագրութեանց բանալին: Վա՛յ այդ տեսակ անհատին, մա՛նաւանդ ժողովուրդին:

– Վա՛յ անոր, որ հեռու է իր ապաստանարանէն, ռազմադաշտէն, հողէ՛ն: Վա՛յ այդ տեսակ անձերուն, վա՛յ այդ տեսակ ազգերուն:

Եթէ հեռու ըլլայի ապաստանարանէս, ռազմադաշտէս եւ հողէս՝ անխելք պիտի ըլլայի, պիտի վախնայի միշտ ու տկարանայի: Մանր ու վերացական մուկերու պէս պիտի ըլլայի, մանր եւ օդային ժողովուրդներու պէս:

– Մեծ ու մենաւոր մուկ մըն եմ, գրեթէ աւագակ մուկ մը: Մուկի մորթիս տակ ունիմ զիս հալածող թշնամիիս միսէն, կատուի՛ միսէն: Տեսայ, որ այդպէս պետք է: Անխելքութիւնը կ'ատեն: Անօթութիւնն ու վախն ալ: Կը սիրեմ իրիկունը, ըստւերը, տարածութիւնն ու վտանգը:

– Ուրիշ մուկերու պէս չեմ: Չանգուածներու մասնիկը չեմ, անոնց փոշին չեմ: Գերի, տկար, վատթար չեմ: Ոչ մէկ ալիւր զիս կը կաշառէ եւ ոչ մէկ շաքար կը հմայէ: Կը խնդամ ջաղացպաններուն վրայ եւ կը պժգամ շաքարավաճառներուն նենգաւոր ժպիտէն:

– Ու չեմ նաեւ այն մուկերէն, որոնք ջրանցքներու շուրջ կը տխմարանան եւ կամ ամտուան արեւին տակ, անօթի, ծարաւ, երկչոտ՝ խմբական հաւաքոյթներ կը սարքեն, ժողով եւ միթինկ կը գումարեն: Աւերակի աւրուած հոգիով մուկ մը չեմ: Ճանկ ունիմ, քիթ եւ կամք. անո՛նց կը վստահիմ: Կը սիրեմ ազատութիւնը, նաեւ լոյսը կէսօրուան եւ տարածութիւնները կեանքին:

– Թող ասկէ ետք անհատներն ու ազգերը իրենց մորթին տակ աւելի՛ գորաւոր բան մը կրեն, քան որ կրած են դարերու դժբախտութեան մէջ. թող հաւասարի իրենց մկանին զօրութիւնը թշնամի մկանին արիւնարբու զօրութեան, թող իւրացնեն թշնամիի՛ն մկանը, թշնամիի՛ն ջիղը, թշնամիի՛ն, բարկութիւնը: Եւ թող անոնց քիթին ծայրը՝ հեռաւոր հոտառութիւններն ու ճարտարութիւնը գան ու միասին բնակին:

(Թիւ 11-12, 1987)

ԲԱՂՁԱԼՔ

Մաքուր, յստակ աչքերով,
Ըլլալ տղայ՝ մը բարի,
Ունենալ սեր ու գորով՝
Հանդէպ հանճար աշխարհի...

Ամպերուն հետ սպիտակ,
Որ քաղցրօրէն, տես, կ'անցնին,
Կեանքիդ ավիէն աւերակ,
Ըլլալ ընկեր մտերիմ:

Կուրծքդ ըլլայ արծազանգ
Տերեւներու խարշափին,
Որոնք տժգոյն եւ անկեանք
Ալ կը մեկնին, կը մեկնին...

Մեռնող ամեն ծերուկի
Տալ պատասխան գթալիր,
Ծնող ամեն մանուկի՝
Օրհնութիւններ անձանձիր:

Յոյսին համար, որ կու գայ
Հեռուներէն, խորերէն՝
Այս հին կեանքին մէջ հիմա,
Վառել ճրագ մը նորէն:

(Թիւ 2, 1963)

ՊՕՂՈՍ ՄՆԱԴԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵԴԾԸ

Պուլարի Պոյաճեանի հայ գրականության մեջ մուտք գործած է բանաստեղծությամբ: Ինքնակենսագրական համառօտ ուրլազծէ մը կը տեղեկանանք, որ գրել սկըսած է շատ կանուխէն, բայց գրածները տպագրել տուած 1932էն սկսեալ: Այդ ուլ յաջորդ տարին իր հրատարակութեան տուած կտորները մեզի անծանօթ կը մնան: Հաւանաբար օրաթերթերու մէջ ըրած է իր սկիզբը՝ «Ազդակ»ի, «Յուսաբեր»ի, կամ «Յառաջ» մէջ, որոնց հաւաքածոները, դժբախտաբար, հեռու մնացին մեր հասողութեան սահմաններէն: Իր ստորագրութեան առաջին անգամ հանդիպած ենք 1935ին, «Հայրենիք» ամսագրի մէջ, «Կապոյտ քերթուած» խորագրով բանաստեղծութեան մը տակ, երբ Պոյաճեանի ուղիղ քսան տարեկան էր:


Այդ թուականին յաջորդող տասնամեակին, մինչեւ իր «Սէր եւ վիշտ» բանաստեղծական հատորին հրատարակութեան թուականը, մինչեւ 1946, «Հայրենիք» ամսագրի, «Նայիրի»ի, «Ազդակ Շաբաթօրեակ»ի եւ «Ակօս»ի մէջ բանաստեղծ Պոյաճեանի ստորագրութեամբ երեւցած են շուրջ երեսուն քերթըւածներ: Առաջին տասնամեակի ամբողջ բերքին գումարը չեն կազմեր հաւանաբար անոնք, բայց ի վիճակի են ամբողջական գաղափար մը տալու բանաստեղծին խառնուածքին, արտա-

յայտչական միջոցներուն եւ իրագործումներուն մասին:

Առաջին այս բանաստեղծութիւնները գրուած են հայ բանաստեղծութեան ծանօթ աւանդութիւններուն ազդեցութեան տակ: Գրեթէ ամենուն մէջ ընթերցողը կը հանդիպի ծանօթ դէմքերու ստուերներուն, որոնց ճնշումին տակ դժուար կ'ըլլայ կազմել երիտասարդ բանաստեղծին սեփական դիմագիծը: Իր դպրոցական ընկերները կը պատմեն, թէ զիւրէն քաղաք եկած շփոթահար պատանի մըն էր Պոյաճեան, աչքերը լայն բացած, իւրաքանչիւր երեւոյթի դիմաց ցնցուող, ճանչնալու, իւրացնելու, յարմարելու կիրքին ու հարկադրանքին տակ տուայտող անձ մը: Իրեն ծանօթ աշխարհին բոլորովին

...զիւրէն քաղաք եկած շփոթահար պատանի մըն էր Պոյաճեան, աչքերը լայն բացած, իւրաքանչիւր երեւոյթի դիմաց ցնցուող, ճանչնալու, իւրացնելու, յարմարելու կիրքին ու հարկադրանքին տակ տուայտող անձ մը:

հակադիր միջավայրի մը յարմարելու պարտադիր այս ճիգը, անշուշտ ունեցաւ իր խոր անդրադարձը պատանիի հոգիին վրայ: Փորձեց ամենուն պէս ըլլալ, չկրցաւ: Ուզեց հակազդել, ձախտ-



Եղուարդ Պոյաճեան եւ Պօղոս Սնասպեան

ղեցաւ: Մեզի կը թուի, թէ այս բախումը բեկում մը առաջացուց իր ներսը, կասկած մը՝ իր ուժերուն վրայ, եւ, ի վերջոյ, սկսաւ սիրել ամենուն սիրածը, կրկնել՝ ամենուն կրկնածը: Ու գրեց ամենուն պէս՝ յանգով, չափով, ընդունուած կաղապարներուն մէջ մտնելու փութկոտ ճապարանքով մը:

Սէր, տրտմութիւն, անձրեւ, մշուշ երգող առաջին տասնամեակի իր բանաստեղծութիւններուն մէջ՝ Պոյաճեան կը փորձէ բոլոր ձեւերը, բանաստեղծական բոլոր չափերը: Ինքզինք ըլլալու ճիգ մը չի մատներ, երկչոտութիւնը կը ղեկավարէ զինք, ուրիշին պէս կարենալ ըլլալու ապացոյց մը կ'ուզէ տալ ինքնիրեն: Այս նշմարները հաստատող ցայտուն նմոյշ մը՝ Մուսա-Տաղի մէջ ծնած ու ճեմարանէն անցած Պոյաճեանը կը գրէ.

*Աշունի ոսկեգոյն մեղեդի,
Լացում է մի երապ իմ հոգում,
Մի թախիծ հեռաւոր հեծկլտում,
Հնացած յիշատակ արեւի:*

Եօթը տուննոց քերթուածէ մը առնուած է այս քառեակը եւ առանձին օրինակ մը չէ Պոյաճեանի այդ օրերու գրականութեան մէջ: Քանի մը հատ են արեւելահայերէնով գրուած այս ոտանաւորները:

Հաւանաբար ըսուի, թէ ամօթխածութիւն մը կրնայ ըլլալ ատոր պատճառը, հասցէ կորսնցնելու ձեւ մը: Բայց ատիկա ճիշդ պիտի չըլլար, որովհետեւ այդ ոտանաւորները գրուած են ծածկանունով: Միւս ենթադրութիւնն է ճիշդը: Ուրիշին ըրածը կարենալ ընելու մղումը: Մրցումի ելած է ուրիշին հետ: Օրինակ, իր տարեկիցներէն մէկը բա-

նաստեղծութիւն մը կը գրէ, յանկարծ կը տեսնէք, որ ինք եւս նոյն խորագիրը կրող բան մը կը ստորագրէ: «Յայրենիք» ամսագրին մէջ մենք կը յիշենք գետի մը նուիրուած ոտանաւոր մը, որուն ետեւէն, ընդամենը երկու թիւ ետք, կը հոսեցնէ իր «Գետ»ը, ձօնելով զայն առաջինի հեղինակին: Այդ շրջանին այդպէս է միշտ: Աղջիկները մեծարենցեան «քոյր» են իրեն համար, բնութիւնը տերեւանական «մշուշ», ու ամբողջ կեանքը որբերու սերունդին պատկերացուցած պատկերը ունի՝ տխուր, թախծամրմունջ, սեւ:

Բայց այս բանաստեղծութիւնները ուրիշներուն հետքերը կրելու փաստերուն քովն ի վեր, կրկնելի ըլլալու իրենց տկարութիւններէն անկախ, բոլորովին անշահեկան յօրինումներ չեն: Կարելի չէ անտարբեր անցնիլ անոնց մօտէն: Իրենց լեզուական առոյգութեամբ, առանձին քառեակներու մէջ սեղմուած

Աղջիկները մեծարենցեան «քոյր» են իրեն համար, բնութիւնը տերեւանական «մշուշ», ու ամբողջ կեանքը որբերու սերունդին պատկերացուցած պատկերը ունի՝ տխուր, թախծամրմունջ, սեւ:

Վիճակներուն այլեկոծութեամբ ու պատկերներուն նորութեամբ՝ ակնկալութիւններ կը ստեղծեն: Ընթերցողը իսկոյն կը զգայ, թէ բան մը կ'եռայ Պոյանեանի տողերուն մէջ, տողերէն առաջ, տողերէն յետոյ: Կարելիութիւններ կ'ընդնշմարէ ու կը զգայ մօտալուտ յորդումի մը նախանշանները: Այդ մէկուն

կը սպասէ նաեւ ինք: Հագիւ բանի մը քերթուած ստորագրած՝ պիտի գրէր.

*Յաւատարիմ աստղի պէս,
Որ կը շողայ միշտ բարի,
Ունենալ դուն կը կարծես,
Սիրտ, մեղեդի մը վայրի:*

Յուսատու է մանաւանդ քերթուածը «Գետի մը», որ օր մը անցաւ իր աչքերուն, հոգիին ու մտածումին մէջէն.

*Որքան ծաղիկ, որքան բոյր,
որքան արեւ ասիերուդ,
Կ'ողողէ քեզ լոյսն անհուն
ու կ'ողողես դուն ճամբար,
Դուն աւշայորդ լայն երակ,
անապատին մէջ դուն գութ,
Կու տաս դուն քեզ մաս առ մաս
հողերուն գորշ ու առատ:*

*Այդ դուն նորէն ինչպէս միշտ,
մեծածաւալ ու խորունկ,
Կ'անցնիս անհուն բարութեամբ
մտածումի մը նման,
Որ ամենուն կու տայ կեանք,
կու տայ աւիշ եւ սնունդ,
Որ կ'երթայ երգ մը ինչպէս
դէպի հեռուն անասհման:*

.....
*Եւ ճակտիս գիրն ալ այդպէս,
նման գետին վեհընթաց,
Անյայտներուն ընդմէջէն, կը հնչէ
թանձր ու խռով
Ու թաւալքին մէջ իր լայն,
կ'ընէ ասիերն ամբողջ թաց,
Գուցէ վիշտով, տրտմութեամբ
կամ անանուն տենչանքով:*

Ուրիշ ոտանաւորներու առանձին տողերու մէջ զգացուող յուսատու ան-

հանդարտութեան, ինչպէս նաեւ այս իրական գետին, այս մարդկայնացած դետին, անյայտ խորշերէ եկող եւ իր փերուն հողին բանաստեղծութիւնը պայթեցնելով կրկին դէպի անյայտութիւն թաւալող այս ճակատագրակից գետին մէջ՝ արդէն տեսանելի են Պոյաճեանի խառնուածքին աւշայորդ կարելիութիւնները, որոնք, տասնամեակ մը անց, 1945ին, «Մեր եւ վիշտ» հատորին մէջ յայտնուեցան, բանաստեղծին սեփական դիմագիծը կազմելու բացայայտ յատկանիշներով:

«Մեր եւ վիշտ»ով Եղուարդ Պոյաճեան քանդեց բոլոր թումբերը, բանաստեղծական ծանօթ բոլոր՝ կաղապարները ու ազատ յորձանք մը տուաւ իր ներքին ջուրերուն: Անկոխ ճամբանե-

Պոյաճեանի խառնուածքին աւշայորդ կարելիութիւնները, 1945ին, «Մեր եւ վիշտ» հատորին մէջ յայտնուեցան, բանաստեղծին սեփական դիմագիծը կազմելու բացայայտ յատկանիշներով:

րու ուխտաւորն է հոս ու կ'երկրպագէ ինքնաբուխին, տարերայինին, ուժգին բաներու միայն: Իր Էջերուն մէջ ինքն է այլեւս, ամբողջական անհատականութիւն մը, որ զինք նախորդող նուաճումներուն հետ կապը խզած՝ կ'ըսէ իր խօսքը, առանց իր սորվածներուն կամ իրեն բան սորվեցնողներուն միջամտութեան, առանց վարպետի մը օժանդակութեան:

Արուեստի պատմութեան մէջ հազարաւոր չէ այս երեւոյթը: Դիտուած է, որ օժտուածները որ երկար ատեն թա-

փառած են հին ճամբաներու մէջ, կըրկնած են դասականը, աւանդականը, մինչեւ իրենց օրերը երկարող բոլոր հին փորձերը եւ, բախտաւոր պահու մը, հպատակելով. ներքին յայտնատեսութեան մը ցնորքին՝ թօթափած են հին լուծերը եւ հաստատած իրենց իշխանութիւնը: Այս օրէնքով իրենց ինքնութիւնը պարտադրող երկու դէմքերը կ'ապրին այսօր եւ կը կոչուին Փիքասօ եւ Փրէվէր: Մեր գրականութեան մէջ Պոյաճեան եկաւ նոյն ճամբով: Խարխափեց, արձագանգեց ատեն մը, եւ օր մըն ալ, թերեւս առանց մտածելու, իր անցեալ բերքէն դժողի եւ սեփական խառնուածքին դրողմներուն ենթակայ՝ բացաւ իր ճամբան ու բարձրացուց իր ձայնը՝ ուժեղ, արու, հնչեղ, երբեմն խռպոտ, երբեմն անկիրթ, բայց բոլոր պարագաներուն իրը, անհրաժեշտը, իրեն համար, մեզի համար, իր անհատականութեան կազմութեան համար, մեր պապական սրտերուն հաշույն:

Դժբախտ են այն գրողները, որոնք իրենց նետած առաջին քայլերով կը մտնեն ուրիշներու կաղապարներուն մէջ եւ կը վախնան շրջանակները խորտակելու յեղափոխական տրամադրութիւններու դրսեւորումներէն: Ատիկա գոհունակ մարդերու յատուկ կացութիւն մըն է, որ նոր տեսիլքներով խենթենայլու անընդունակութիւն կը նշանակէ, կը նշանակէ լճացում ու մահ: Օր մը փայլած, օր մը յոյսեր ներշնչած եւ ապա խամրած գրողներուն պարագան բացատրելու համար ուրիշ տուեալներ կը պակսին: Ուժեղ խառնուածքի մը թելադրանքով՝ մարդոց կեանքը եւ իրերուն կեանքը, սրտին գաղտնիքները եւ

տիեզերքին գաղտնիքները սերտելու բուն ու բնական տենչին փոխարեն՝ գիրքեր սերտած ու սերտողութեան պահերուն մէջ քարացած գրողներու դասակարգին կը պատկանին այս վերջինները, որոնք հանդիպելի են բոլոր գրականութիւններուն մէջ:

Պիտի չդժուարանայինք այդ դժբախտ բանաստեղծներէն մէկը հաշուել Պոյաճեանը, եթէ ամենուն պէս փորձեր առաջին իր բանաստեղծութիւնները մէկտեղել եւ հատորով մը ներկայացնել ընթերցողին: Բայց հոս եւս ուրիշներէն տարբեր վերաբերում մը ցուցաբերեց: Յանրութեան հատորով ներկայանալու ատեն, թերթերուն մէջ տրակածները թերթերուն մէջ ձգեց, օրուան ճաշակներուն ու ըմբռնումներուն հետ ներդաշնակ ինկող անոնց անտիպ անանակները դարակներուն մէջ ձգեց ու հրապարակ հանեց անսովորներուն շարքը, որ, ինչպէս ծանօթ է, իր տարերային սերէն բխեցաւ եւ կազմեց իր սաստկագոյն վիշտը:

1945ը մեզմէ հեռու թուական մը չէ ու ամէն ոք կը ճանչնայ այդ օրերուն հրապարակ իջած դէմքերը կամ ծանօթ դէմքերուն հրապարակ նետած հատորները: Ցանկի կազմութեան պարագային, անմիջապէս պիտի նկատենք, որ Պոյաճեանի «Սէր եւ վիշտ»ը հասարակաց ոչինչ ունի ժամանակակից հրատարակութիւններուն հետ: Բացարձակ արժէքին քննութիւնը առկախելով՝ պիտի ըսենք, որ երեւոյթ մըն էր այդ գրքոյկը մեր մէջ եւ իր յղացումներուն նորութեամբ ու արտայայտչական յանդգնութիւններով՝ բացառիկ խառնուածքի մը լուրը կ'աւետէր:

Այդ շրջանին, Սփիւռքի մեր գրականութիւնը իբրեւ թեմա ունի Յայրենիքի կարօտը, որբութեան վիշտը, զրկանքներու անդրադարձ ապրումները եւ անհատական ուրիշ յոյզեր: Յասար

Պոյաճեան ... բացաւ իր ճամբան ու քարձրացուց իր ձայնը՝ ուժեղ, արու, հնչեղ, երբեմն խռոպոտ, երբեմն անկիրթ, բայց բոլոր պարագաներուն իրը, անհրաժեշտը, իրեն համար, մեզի համար, իր անհատականութեան կազմութեան համար, մեր պապական սրտերուն հաշտոյն:

րակաց մթնոլորտ է ատիկա, որուն շրջանակները քանդելու առաջին խիզախումը կատարեց ինք:

Ոչ հայրենիք կայ «Սէր եւ վիշտ»ին մէջ, ոչ ազգ, ոչ ընկերութիւն եւ ոչ ալ ընթացիկ գրկանքներէ առաջացած ճիչ:

Սէրն է հատորին առանցքային նիւթը եւ սրտին ճամբաներուն կարօտներ կան, սպասման երկարատեւ ժամերը կան, յուսաբեկման պահեր կան, որոնց ընթացքին կը ծնի վիշտը ու կը խառնէ իր շուքը միւսին անապական լոյսին:

Կը գրէ անիշխանական թափով ու մտահոգ չէ ընթերցողին հաւանական հակազդեցութիւններով: Վերադարձած է ինքն իրեն, ու դարձած է լեռնային հովերուն հետ ապրած, ծովուն ծովային խռովներուն ծարաւի, Աստուծոյ հետ եւ աստուածային բաներու հետ խառնուածք շինած «Մրրկակրօն, խառնապաշտ ու մոլեռանդ երիտասարդը» ու կ'ըսէ իր խօսքը:

Աստղային, աստղածաւալ սերերու պատարագ է «Սէր եւ վիշտ»ը, խո-

րունկ կսկիծ, փոթորիկ ու բարբարոսություն. յախուռն յղացումներու ընդհանուր մթնոլորտին մէջ՝ տարօրինակ աղօթք է ան ու տարօրինակ յափշտակություն, տարօրինակ ծաղիկ, տարօրինակ գոյն, փափկություն, խորհուրդ:

Հասարակաց...շրջանակները քանդելու առաջին խիզախումը կատարեց ինք: Ոչ հայրենիք կայ «Մէր եւ վիշտ»ին մէջ, ոչ ազգ, ոչ ընկերություն եւ ոչ ալ ընթացիկ գրկանքներէ առաջացած ճիշ:

«Մէր եւ վիշտ»ի հեղինակէն տարբեր մոլորակէ մը եկած ըլլալու տպաւորութիւնը կ'առնէ ընթերցողը, առնուազն տարբեր մոլորակի մը կարօտով տոչորող էակը կը տեսնէ հոն, դէպի անհունը մեկնելու եւ անոր էութիւնը քննարկելու ճակատագրական կամքի մը ենթակայ մարդը:

Դէպի հոն պիտի դիմէ միշտ, իր տարերքը կազմած է՝

*Պատանութեան վարար ու բորբ
շրջանին,*

*Ամառ եղանակներու համագրաւ,
խոր ու վմայլագեղ*

Բանաստեղծութեան մը գիրքը:

«Դեռ այն տարիքին», պիտի ըսէ ուրիշ տեղ մը՝

*Անդամագրուեցայ Ծածուկ ու Մեծ Բանին,–
Բանաստեղծութեան
Յաճախելով անհատնում երկնաւորներու
Շքեղ հաւաքատեղին:*

Այս յաճախանքները, ծածուկ ու մեծ բաները իմանալու իղձերը պատա-

հական վիճակներ չեն Պոյաճեանի ներաշխարհին մէջ, մնայուն ալեկոծութիւններ են: Նուիրուած է վերը բաներ տանելու ու աստուածացնելու տենդի մը, երկինքէն մասեր բերելու ու կեանքը քաղցրացնելու առաքելութեան: Իր ուժերը կը դաւաճանեն իրեն հոս, ատոր համար լուսաբաղձ մուրացկանը կ'ըլլայ եւ՝

*Բախտոգիներէն, լոյսէն, աստուածներէն
Ան կը մուրայ իր տարահրաշ
Ու խոր էութեան
Բնն, ներքին, անվերածելի իսկանկարը...*

Իր էութեան իսկանկարը կամ ուրիշ էութիւններու տեսիլքը այսպէս որոնումներու պիտի մղեն զինք. պիտի երթայ, քննէ, հարցապնդէ ոգիները, մեր իրականութենէն որեւէ ձեւով անջատուող եւ երկնաւորներուն այցելութիւն տուած ամէն էակ, նոյն հետաքրքրութեամբ, կարօտակէզ նոյն սըրտով: Պիտի կանգնի մինչեւ իսկ ի քուն եղող սիրելիի մը դիմաց եւ անձկութեամբ սպասէ անոր զարթնումին եւ աւետելիք աւարին.

*Դուն ի՞նչ պիտի բերես վար
Երկնային մեծ բարձունքներու
Շքեղ աւարէն,
Ըսէ, առտու պիտի ըլլայ,
դուն ի՞նչ պիտի բերես:*

Աչքերը սեւեռած այդ «աւար»ին՝ կ'այլակերպի յաճախ եւ կ'օրհնեղգէ զայն կարելի դարձնող առաջին միջոցը՝ երազը, որ հազար կարօտ, հազար բերկրանք, հոգիի հազար սնունդ հայթայթող կենսատու ուժը պիտի ըլլայ, պիտի ըլլայ գործօն՝ երաճը, պիտի

տագնապի ու երգ դառնայ ու իբրեւ սեր պիտի ծաւալի հոգիներուն ու շըրջապատին մէջ: Երազը աւիշ է Պոյաճեանի գրականութեան մէջ, երգը՝ գործունէութիւն, ու սերը՝ հոգիներուն ու տարրերուն խորքը թափանցող ջահ, հաղորդակցութիւն:

«Սէր եւ վիշտ»ի հրատարակութենէն գրեթէ անմիջապէս ետք, Եդ. Պոյաճեան ձգեց գիւղի իր միջավայրը եւ կրկին քաղաք հաստատուեցաւ: Այս նոր իրականութեան մէջ՝ իր գրչին տակ առաջին տեղը կը գրաւէ արձակագիրը. քայլ մը աւելի առօրեային խառնուելով՝ դուրս կու գայ անխառն գրականութեան սահմաններէն եւ կը մտնէ հրապարակագրութեան մէջ: Հայեացքը յառած գրական, կրթական, գաղափարական, քաղաքական մարզերուն, հայրենիք, ազգ, մարդկութիւն, հող, արուեստ, ճշմարտութիւն հասկացողութիւններէն մղուած՝ կը նետուի պայթարի թոհուբոհին մէջ, երբեմն իր գայրոյթը պոռթկալով, երբեմն հիացումը, խոհը, առաջարկը: Այս շրջանը կը տեւէ ուղիղ մէկուկէ տասնամեակ եւ Պոյաճեան՝ երրորդ անգամ իբրեւ բանաստեղծ կը ներկայանայ ընթերցողին, «Բագին»ի էջերէն, վաթսունական թուականներէն ետք:

Ընդհանրապէս լայն կտաւի վրայ գրուած շուրջ 15 կտորներ են «Բագին» լոյս ընծայածները եւ մաս կը կազմեն «Դուն» խորագրով հրատարակելի ստուար հատորի մը: «Դուն»ը մարդն է, մարդկային տիպարներու ամբողջութիւնը:

Ըսել կ'ուզենք, այս շարքը անձի մը վկայութիւնը բերող բանաստեղծական անխառն վիճակներու սոսկական յայտ-

նութիւնը չէ, հոս այլեւս բանաստեղծութեան հերոսը դէպի Անեգրը, դէպի Անհունը, դէպի անծանօթ հորիզոնները թեւածող յախումն բանաստեղծը չէ միայն, այլ այդ բաներուն հետագօտութեան նախասահմանուած, բայց երկրի վրայ ապրող եւ երկրային բարբերու ճնշումներուն ենթակայ մարդն է, իր ամբողջական կենսագրութեամբ:

Կը թուի, թէ քիչ առաջ ուրուագրուած Պոյաճեանի եռուն առօրեան մեծապէս անդրադարձած է իր հոգիին: Խորապէս մտահոգ է հիմա: «Սէր եւ վիշտ»ով սահմանուած կոչումէն հեռու կը գտնէ մարդը, մանր, մուրթ, բոնթ, ու պայթարի կ'ելլէ «ծուռ ու բորբոս ամեն

...Անեգրը, դէպի Անհունը, դէպի անծանօթ հորիզոնները թեւածող յախումն բանաստեղծը չէ միայն, այլ այդ բաներուն հետագօտութեան նախասահմանուած, բայց երկրի վրայ ապրող եւ երկրային բարբերու ճնշումներուն ենթակայ մարդն է, իր ամբողջական կենսագրութեամբ:

բանի» դէմ, «ընդդէմ մութին, տգիտութեան ու բռնութեան»: Ու եղծուած հազար գեղեցկութիւններ թուելով, նկարագիր փոխած հազար սրբութիւններու վրայ ողբալով, հաշտութեան, լճացումի, անտարբերութեան նոյնքան վրտանգաւոր ունակութիւնները սեւագրելով՝ կ'որդեգրէ «Ոչ»ի գայրալից փիլիսոփայութիւն մը.

«Ոչ» ըսելու՝

Դատավճռի, որ վճիռ չէ,

Աղօթքներու, որ աղօթք չեն,

*Երգերու, որ վանկ են միայն,
յանգ են միայն,*

Իմաստ ունայն:

.....
*«Ոչ» ըսելու մորիկի պէս սրբող տանող,
«Ոչ» ըսելու դժոխքի պէս հրակիտող՝
Ամէն սիրոյ, որ չի սոսկալի,
Ամէն խղճի, որ չի գործեր,
Ամէն ուժի, որ չէ ուղղուած բաներու
դէմ ցուրտ ու հսկայ,*

Որ բռնութեան սեւ բռունցք է միշտ անխնայ:

Այս տրամադրութիւնը ձեւակերպւած է շարքին մաս կազմող եւ «Գիր բանաստեղծի» անունը կրող քերթուածի մը մէջ, գոր լոյս ընծայեց «Բագին»ի 1962 ապրիլի թիւով: Յաջորդ տարւան սեպտեմբերին լոյս ընծայած իր «Վայր անծանօթ, բան անծանօթ» քերթընդով, Պոյաճեան կրկին կ'անդրադառնայ որդեգրած իր այդ բուն կեցուածքին: Կը գտնէ, որ խոնարհաձայն արտասանուած «Այո»ն կործանարար եղած է մարդուն համար, մարդը շեղած է իր բուն կոչումէն եւ ըրած է գայն ստրուկ, տգէտ, տժգոյն, ունայն: Ըստ Պոյաճեանի մարդը պիտի չըլլար այսպէս, պիտի ըլլար ազատ, խորագէտ, լուսապայծառ, իմաստուն, եթէ անիկա ունկնդրէր իր հոգիին ըսուածը.

*Տեղէ անյայտ, տեղէ խորին,
Աստուածակայք տեղէ ներքին՝*

*«Ոչ» ըսել միշտ,
Մարդու կեանքին մութ պարտադրող
Ամէն, ամէն խաւար ուժի:*

«Ոչ»ի այս փիլիսոփայութիւնը, հարկ է քմահաճ կիրք մը չէ, այլ կը բխի մարդը գերագոյն կոչումի մը սահմա-

նող խորունկ համոզումէ մը: Իրմէ կ'իմանաք, որ յոռի բարքերը զարհուրելի համեմատութիւններու հասած են. սուտը, կեղծիքը, խարդախութիւնները, բռնութիւնները դաշնակցած են իրարու հետ եւ դժոխքի մը վերածած կեանքը Արարիչին պատկերով ստեղծուած եւ արարչագործելու նոյնքան խորհրդաւոր պայմաններով օժտուած բացառիկ ուժն է բանաստեղծին մըտքին մէջ մարդը եւ իր ճակատագիրը իրագործելու համար իրեն տրուած այս թանկ առիթը՝ կեա՛նքը, պէտք չէ գուր անցնի, որովհետեւ

*Եկած ենք հոս մենք իբրեւ մարդ,
Կարճ կեանքի մէջ, հողագունդի վրայ փխրուն
Աստուածափորձ կատարելու:
Մահը գրքի պէս բանալու,
Ու կարդալու, ու սերտելու.
Եկած ենք հոս արեան խորունկ ճշմարտութեամբ՝
Ապատուօթիւն, յաւերժութիւն ստեղծելու:
Դասագրքէն տիեզերքին՝
Անմահութեան խոր քննութիւն պատրաստելու:*

Այս կոչումով ու համոզումով կազմեց ան իր չափանիշը եւ անկէ յետոյ մարդոց նայեցաւ անոր տրամադրութեան համաձայն, սիրեց ու ատեց այդ չափանիշին համաձայն:

«Բագին»ի լոյս ընծայած Պոյաճեանի քերթուածներուն շարքին՝ կա՛ն կըտորներ, որոնց մէջ կատարուած ընդհանրացումները, ծանօթ փորձառութիւններու եւ մտածումներու տպաւորութիւնը կը գործեն առաջին ակնարկով: Անոնցմէ մէկն է, օրինակ, «Կինը» խորագրուած կտորը:

Իր մէկ տենչին դրա՛խտը զոհած աստուածաշնչական Եւայէն սկսեալ

մինչև մեծ բախումներու դուռ բացող Տրովադացիներու Յեղիմեն, մարգարեներու գլուխը սովորական նուէրի մը պէս ստացող ցնորապար Սալոմէն մինչև իր երագին տիրելու համար բանակներ բանակներու զարնող սիրառատ Շամիրամը, աստուածներու մայր եղող հեգահամբոյր Մարիամէն մինչև աստուածներուն սիրտը խռոված խռովարար Մագթադէնացին, ու տակաւին մինչև վերջին պալատին ու վերջին խրճիթին վերջին եւան, կինը ծանօթ է մարդոց, ամեն խաւի մարդոց, ամենուն, ու Պոյաճեանի ներկայացուցած կինը տարբեր չէ կնոջ մասին տիրող կարծիքներէն: Այսուհանդերձ քերթուածը յաջողած է նուաճել առանձին հմայք մը:

Արարչութեան լաւագոյն բանաստեղծութիւններուն մէջէն ընտրուած, արեւին, աստղերուն, լուսնին, կապոյտներուն ու ծաղիկներուն մէջէն անջատուած, այլ անոնց շողը, տրոփը, գոյնը, բոյրը, խորհուրդը իր մէջ համադրող էակն է ան, որ վիհերուն ամենէն խորունկը կ'ըլլայ մերթ ու իր վիհերուն մէջ կը նետէ մարդը, դժոխք կ'ըլլայ ու իր դժոխքին թէժ կրակներուն կեր կը դարձնէ զայն, նախընտրելի դրախտը կ'ըլլայ ու դրախտային երանութեան մը կը վերածէ կեանքը, եւ այսպէս, բոլոր պարագաներուն ու բոլոր ճամբաներուն վրայ ետեւէն կը քաշքշէ իր ձգողութեան տեւաբար ենթակայ հոգին, մղելով զայն փոխ առ փոխ ոճիրի ու վեհութեան, բարբարոսութեան ու բանաստեղծութեան, նուաստացումներու եւ աստուածացման, պատճառ դառնալով ի վերջոյ դրական ու բացասական խռովներու եւ եռուն գեղեց-

կութեան սեւ ու պայծառ զգայնութիւններու հարուստ յայտնակերպումի մը: Պոյաճեանի քերթուածէն մէկտեղուած քանի մը ասոյթներով՝

*Կինն է դժոխքը, կինն է կրակը,
Կինն է սեւ ցուրտը, կինն է զէշ բանտը,
Ամբողջ կարօտը,
Ճայրագոյն սովը.*

.....

*Կինը ...-
Յին ասութիւն, հին մոգութիւն,
Յեքիաթներու հին թովչութիւն:*

.....

*Երգ սկիսքի ու վախճանի,
Գեղեցկութեան ու կործանման
Տարօրինակ նախապատճառ:*

.....

*Կինն է խորհուրդը,
Այր մարդու կեանքին դիմաց շողացող
Մեծ արարչութեան այդ մեծ սնունդը,
Քաղցրագոյն թիւը, ու շքեղաշող իմաստուն բառը:*

Մէջբերուած այս պատկերներուն ճշմարտութիւնը, թարմութիւնը, վայելչութիւնն ու գրական միւս արժանիքները կշռելու հարկ չկայ, կ'ուզէինք ընդգծել միայն, որ մռայլ ճամբաներէն, վիհերէն ու դժոխքներէն իր հերոսուհին անցընող եւ զայն փարթամ դերի մը մէջ դնող Պոյաճեանի այս ոճը՝ կը բխի ընդհանուր կեցուածքէ մը: Այս օրինակով նայած է ան կեանքի երեւոյթներուն եւ յոյսը լքած չէ զինք:

Վերջին շարքի այս բանաստեղծութիւնները ունին արդէն հասարակաց միջավայր մը՝ իրական կեանքը, եւ անկէ բերուած եւ Պոյաճեանի Էջերուն մէջ շնչող հերոսները վէպի մը տպաւորութիւնը կը ձգեն մերթ: Հոն են մեծ

խոռոչներու, ճակատագրական կացութիւններու բոլոր մեծ ներկայացուցիչները՝ բանաստեղծը, կինը, «Մարդը նորէն», եւ բնական է, հոն պիտի ըլլար նաեւ ու հոն է այդ ամենուն չափ մտահոգիչ, խոռոչի միւս տիպարը, միւս սերը՝ նորածին մանուկը:

Այնքան դաժան բաներ տեսած, հին, մաշած, բորբոսած իրականութիւններու անթիւ անգամներ բախած, այլ մաքրութեան, արդարութեան, նոր խօսքի, մեծ սիրոյ, խոր յղացումներու կարօտով տոչորող մարդը, որ բանաստեղծ Պոյաճեանը եղաւ, նորածին մանուկի մը առաջին ճիչին ի լուր՝ վերանորոգեց իր տաճնապը եւ այս անգամ իր բոլոր փորձառութիւններն ու տենչանքները ի մի բերելով՝ կազմեց «Մարդկութեան խօսք՝ նորածինի»:

Պոյաճեանի մը ծաւալը ունի քերթուածը, ուր՝ բանաստեղծը առաւելագոյն սաստկութեամբ կ'ապրի քայքայիչ ուժերուն մղձաւանջը: «Անդիի գոյնը վրան», «Աստուծոյ բոյրը վրան, շունչը վրան», «Մարդադժոխք սա աշխարհին» մեջ եկած մանուկը, առաջին վայրկեանէն իսկ ենթակայ է աշխարհային վտանգներու: Պիտի եղծանեն իր գոյնը, պիտի ջնջեն վրայէն բոյրը: Վախ կայ, որ իր կարգին, մանուկը ըլլայ ուրիշներուն պէս, «մոռնայ բարբառն այն աշխարհին, նախակայքին, ուրիշ, ուրիշ այն գոյու թեան» եւ ամենուն պէս հաց ճչայ, ճչայ սեր, ցաւ, հող եւ ապա՝ անվերջ դիրք մուրայ, փառք, համակրութիւն, իշխանութիւն, միտք, «քիչ մը դպրոց, վկայական, օրեր դիւրին, օրեր առատ, օրեր անվիշտ.

«Դեռ եւայլն, դեռ եւայլն, դեռ եւայլն»:

Բայց պարզապէս հրաշալի է այս սովորական, անգոյն, բանաստեղծութեան մեջ երբեւիցէ մուտք չգործած եւայլններու շարքը, որ աղքատութիւններ ծածկող իր հին չարչարանքէն դուրս կու գայ ահաւասիկ, նենգութիւններ ու երկչոտութիւններ վարագուրող իր դարաւոր դիմակը վար կ'առնէ եւ պարզագոյն իր ձեւին մեջ՝ կը ստանայ թելադրական բեղմնաւոր խորք մը, երաժշտական կառոյց մը, նո՛ր քաղցրութիւն մը՝

«Դեռ եւայլն, դեռ եւայլն, դեռ եւայլն»:

Բանաստեղծին մտավախութեան մեջ՝ դող աշխարհին մեջ պզտիկ գող մը կ'աւելնայ դեռ, պզտիկ մուրացիկ մը՝ մուրացիկներու բազմութեան մեջ, հին խառնակիչներու կարգին՝ «նորածաման խառնակիչ» մը, քառսին վրայ՝ պզտիկ քառս մը, ամպակոյտերու քով՝ պզտիկ ամպ մը, բայց ատոնց համար պէտք չկար գալու, ատոնց համար արդէն միլիառ գործիչ կայ հոս, ուրիշ կարօտ մը կը տանջէ մարդկութիւնը, կը տանջուի «լոյսի համար, սիրոյ համար, վերին խոհի ու արարքի» համար: «Լաւ բան կ'ուզենք, մեր պապակն է»՝

*Եթէ իբրեւ սկիւր եկար նոր մարդկութեան,
Ճիշդ խօսքերու, ճիշդ արուեստի, ճիշդ ժպիտի,
Ապաստութեան ապստ ձայնի,
Խաղաղութեան խաղաղ խօսքի,
Բարի եկար, դուն քիւր բարի,
Փոքրիկ եղբայր, անուշ եղբայր,
Դուն անծանօթ, քաղցր եղբայր...:*

Հասնող մանուկէն առաջ՝ ուրիշներ դեր ունեցած են հարկաւ կազմուած այս չափանիշին ու պապակին մեջ:

Ընթերցողին ծանօթ չէ, ու անտիպներուն մասին ճիշդ չէ խօսք բանայ, այսուհանդերձ, մտերիմ կապերու շնորհիւ ձեռք բերուած ծանօթութեան մը վրայ կոթնելով՝ պզտիկ շեղում մը պիտի ընենք ու ըսենք, որ մարդը պատե պատ, անդունդէ անդունդ գարնող, անոր սեւ կողմերը մեծաքանակ սեւագրութեան մը ենթարկած Պոյաճեանը բացարձակ յոռետեսը չէ, մռայլ երեւոյթներով ճաշակ սնուցանելու հեշտանքին անձնատուր խառնուածքը չէ ինք, աչքերն ու հոգին չէ փակած աշխարհին դէմ, ու աշխարհը լեցնողները ցուրտ Յերովդէսներ չեն միայն, սեւ Յուդա չեն, Կայէն չեն ամէնքը, քուրջ, մատնիչ, քայքայիչներ չեն միշտ, նոյն աշխարհին մէջէն անցած էին եւ իր օրով բոլորովին բացակայ չէին միւսները, ու ինք կը պաշտէր միւսները, իր արարչագործութեամբ մարմին առած մանուկին օրինակով մեծցած մեծերը՝ մարգարէն, բանաստեղծը, գիտունը, յեղափոխականը, միջոցը խորաչափած ու տարածութեան տարածութիւններուն մէջ իշխանաբար թեւածող մեծախռով տիպարները, որոնք մէկ մէկ աստուածներու սահմաններուն մէջ խիզախեցին եւ ապա կեանքին վրայ տարածեցին իրենց աստուածային կողմերը, բաշխուող, կառուցանող կարողութիւնները, ըմբոստութեան եւ աղօթքի հզօր աւանդութիւններ կտակելով տառապած մարդկութեան:

Շարքին վերջին ու ընդարձակագոյն բանաստեղծութեան մէջ, որուն անունով կնքուած է հրատարակելի հատորին անունը եւ կը կոչուի «Դուն», գաղափարական, լեզուական, ոճական

չքեղ հանդէսի մը մէջ այս տիպարը կը ներկայացնէ Պոյաճեան, յանգելով շքեղ արդիւնքի մը:

Ընկերային տիպարներ ու հարցեր ներկայացնելու պարագային, սակայն, որքան ալ շահեկան ըլլան իր փորձառութիւնները եւ փորձ գրողի ընդհանրացումները, իր անձէն որքան ալ բան դրած ըլլայ անոնց խորքը, այնուհանդերձ, ինչպէս մատնանշեցինք «Սեր եւ

Պոյաճեանի բանաստեղծութեան մայր երակը կը մնայ մարդու իր սեփական տազնապը:

վիշտ»ին առիթով, Պոյաճեանի բանաստեղծութեան մայր երակը կը մնայ մարդու իր սեփական տազնապը: Բնագանցական շեշտ հակում մը ունի իր խառնուածքը, «տիեզերքն ու ինք տըրւած են իրարու» եւ հոգին ենթարկած «վայր անծանօթ, բան անծանօթ» խուզարկելու հզօր կիրքին՝ կը տուայտի ու կը հրճուի, կ'արիւնի ու կը ծաղկի: Անդիմադրելի տենդի մը մղումով՝ սահմանած է ինքզինք՝

*Գեղեցկութեան ու անանցի խոր որոնման,
Յմայիչի ձկնորսութեան:
Յոգիներու, ու ձայներու, ու ձեւերու,
Նաեւ լոյսի, նաեւ մութի ու կրակի
Յանքապտեղման:*

Իր խորագոյն անձը, անձին անապական Էութեան բաղկացուցիչ տարրերը այդ բոլոր կարօտներն են, որոնց ցնորքին նուիրուած՝ կը վերանայ, կ'երթայ հեռուն, կը պտտի, եւ սրտի միեւնոյն ջերմութեամբ կը հաղորդէ իր անկումներուն յուզումը՝

*Շրջած եմ ցարդ քասուիդ մէջ,
Ո՛վ Բացարձակ,
Չկանչուած լոյսի նման,
Չարտասանուած բառի նման,
Երգի նման դեռ չերգուած:*

Չկանչուած այս լոյսը շռայլ է սակայն, չարտասանուած բառը աւելի ուժականութիւն կը բովանդակէ հաւանաբար, քան արտասանուածներէն ամենէն հզօրը, ու չերգուած երգին հունչը արդէն ու քաղցրօրէն լսելի է:

Խորհուրդի մը վրայ բացուելու տազնապով դողացող այս լոյսերը, բռներն ու երգերը մինչեւ վերջ իդձ մնացին Պօյաճեանի սրտին, մինչեւ վերջ տանջեցին զինք: Մահէն տարի մը առաջ, ուրիշ բանաստեղծութեան մը մէջ դարձեալ պիտի քնարերգէր իր արգաւանդ դժգոհութիւնը.

*Գագունի գիրի մը համար,
Չձգող, հաղորդող՝
Աստուծմէ եւ մարդէն ամէն ինչ,
Տանջեցի՛, այրեցի՛,
Մէջս իմ յուսահատ մեռցուցի՝
Մեարոպի ուղեղներն անհամար.
Ներսս իմ անմեարոպ, անլելու,
Անվարպետ միշտ մնաց,
Մահացան, մահացան, մահացան,
Գերագոյն գիր ուլող
Թարգմանիչն իմ սրտի...*

«Գիրեր անծանօթ» խորագրուած այս քերթուածով չաւարտեցաւ ինքզինք ամբողջովին չյայտնակերպած մարդու իր տանջալից տրտունջքը: Առեղծուածներով, խորհուրդներով, արեգակներով ու դժոխքներով խաչաձեւած ու անոնց տակ խաչուած անդարման սրտին համար՝ կազմեց ուրիշ

«Գիրեր անծանօթ» մը, ու այս անգամ Աստուծոյ ըսաւ իր ալելուծ տխրութեան բուն պատճառը.

*Ու ես լեցուեցայ,–
Աստուած իմ, անդուլ–
Ինձմէ իսկ ծածուկ,
Քեզմէ իսկ ծածուկ,
Բացականերու խորունկ տխրութեամբ
.....
Այս երկրի վրայ
Ես բուն բաներուն բացական եղայ
ու սէրը եղայ՝
Անհունը կէտին մէջ վետեղելու
յեղաշրջական սուր ճիգը եղայ
Կաթիլ մը ես ջուր՝
Անվերջ վերջնագիր յղեցի ծովին,
եւ ովկիաններուն,
Աշխարհը ծածկող, Դուն լաւ կը յիշես,
մեծ Ջրհեղեղին:
Այս երկրին վրայ, ես մեծ խօսքերու
մեծ կայուածատեր՝
Անհուն խօսքերու չարադրուած
նամակը եղայ,
Այնքան ապրումի, այնքան տխրութեան,
այնքան տոսամի,
Ինձմէ միշտ փախչող իմ վէպըս եղայ...*

Ծածուկ բաներու եւ բանաստեղծութեան անդամագրուելէն ասդին, ամբողջ երեսո՛ւն տարի, բացականերու ունկնդիրը եւ գրուցակիցը եղաւ Պօյաճեան եւ զանոնք առարկայացնելու իր կարելիութիւններէն դժգոհ՝ տռամի մը վերածեց իր բովանդակ կեանքը: Ատոր համար անթիւ թշնամիներ ունեցաւ, թշնամացաւ Աստուծոյ հետ, ճակատագրին հետ, ոգիներուն հետ, ամենէն առաջ ինքզինք թշնամի համարեց իր բո՛ւն անձին՝

*Ես ուսիս՝ երակներուս, արիւնիս,
 ոսկորներուս ու ծուծիս
 ու պայմաններուս,
 Վասնպի բոլոր ատոնք պարսպած էին
 Անհունն ի վեր նետուելու իմ
 ամենաստակալի մոլեռանդութիւնս:*

«Մեր եւ վիշտ»ի քերթուածներէն մեկուն մէջ տարագրուած է իր ներքին կենսագրութեան այս թունդ բաժինը, որ տեւական վտանգի մը պէս պտտեցաւ հետը իր բոլոր օրերուն, բոլոր քայլերուն: Պիտի անդրադառնայ անոր յաճախ, երբեմն արձակով: Գիտակցութեան այդ առաջին զարթոնումէն ուղիղ տասնըհինգ տարի ետք, «Թուղթ զաւակներուս» խորագրեալ արձակ բանաստեղծութեան մէջ՝ այս անգամ արձակով պիտի բանայ ու պատմէ նոյն վերքը.

Ամէն վայրկեան յախտենական եւ յախտեան սիրոյ մը տեսիլքը կայ մէջս, որ կ'այրէ, կ'ուռտ, կ'անեցնէ ու կը սպառէ սիս: Յաճախ այնպէս կը թուի ինծի, որ տեսիլքները պիտի պատռեն մորթս ու ելլեն դուրս՝ կեանքի խորագոյն ճրջմարտութիւն մը պոռալու մարդոց երեսին:

Բաղձացուած այդ ճշմարտութիւնը, ի՛ր խոստովանութեամբ, երբեք մարմին չառաւ, ու տեսիլքը նորէն շարունակեց այրել իր անձը:

Վերջին օրերուն, «Բագին» մէջ, ողջուցը հրատարակութեան տուած իր վերջին քերթուածով՝ Պոյաճեան դարձեալ նոյն տազնապին կը վերադառնայ, եղածին, կատարուածին դժգոհութիւնը կը յայտնէ նորէն եւ ամբողջապէս դրսեւորուելու յոսահատ իրականութեան հակառակ, սրտառուչ, ցաւագին, ողբերգական անապարանքով մը կ'որոշէ.

*Այսուհանդերձ, ըսէ՛լ ինքզինք,
 ըսէ՛լ, ըսէ՛լ,
 Եւ ըսելով ձերբապատուի,
 Այ մաքրուի մութ խոհերէն,
 Այ մաքրուի քաղցր ու կծու
 կոյր բառերէն,
 Մրտի կրակ սա ջերմերէն:*

Այս երեւոյթին դիմաց մարդ անպայման կը տարուի հարցնել, թէ ինչ է բանաստեղծութիւնը եւ բանաստեղծներու ո՞ր դասակարգին կը պատկանի Պոյաճեան:

Ծածուկ բաներու եւ բանաստեղծութեան անդամագրուելէն ասդին, ամբողջ երեսուն տարի, բացականչելու ունկնդիրը եւ գրուցակիցը եղաւ Պոյաճեան...

Ոմանց համար ներքին երաժշտականութիւն է բանաստեղծութիւնը: Հաւաքական ապրումներ խտացնող վկայութիւն է բանաստեղծութիւնը ուրիշներուն համար:

Երրորդ ըմբռնումի մը համաձայն՝ դաստիարակչական բնոյթ մը ունի անիկա:

Պէտք է անմիջապէս ակեցնել, որ Պոյաճեանի բանաստեղծութիւնը այս սահմանումներէն դուրս կը մնայ:

Եղուարդ Պոյաճեանի համար բանաստեղծութիւնը բնագանցական վիճակ է նախ եւ յետոյ անկէ ազատագրուելու բաղձանք: Յետոյ ցնորք, մեկնում, անկում, տառապանք:

Տեսլահար մարդու այս տառապանքը կազմեց իր ուժը եւ տկարութիւնը: Իր մտածումներէն էտ մնացած եւ բառերէն առանց անցած մարդու տա-

րօրինակ վիճակ մը ապրեցաւ շարունակ, եւ հասնելու տենչին ու չկարենալ հասնելու իրականութեան առջեւ՝ Աւետարանի սգաւորներուն չափ խորունկ սուգ մը կրեց իր հոգիին:

Ուժը՝ նուաճուած բանաստեղծութիւնն է, տկարութիւնը՝ հոն նշմարուած թերութիւնը:

Եղուարդ Պոյաճեանի գրականութեան մէջ՝ քննադատները ընդգծած են երկու թերութիւններ, նոյն գաղափարին տարբերակները իրարու վրայ գումարելու թերութիւնը մէկ, եւ երկրորդ՝ կառուցումի թերութիւնը:

Պոյաճեանի համար բանաստեղծութիւնը բնագանցական վիճակ է նախ եւ յետոյ անկէ ազատագրուելու բաղձանք: Յետոյ ցնորք, մեկնում, անկում, տառապանք:

Մեզի կը թուի, թէ այս տկարութիւնները կու գան դարձեալ վերը տըրուած տեսլահար մարդու իր բուռն իրականութենէն: Ըսել կ'ուզենք միեւնոյն մտածումին շուրջ նախադասութիւններ կուտակելու դիւրութիւնը չէ այս արդիւնքին պատճառը, արդէն դիւրութեամբ քով քովի գրուած չեն անոնք, տառապանքի մը զինն են, զօրութեամբ զգացուող զօրաւոր տեսիլքին ահագնութիւնն է զինք տակնուվրայ ընողը: Տեսիլքը միշտ աւելի զօրաւոր եղած է Պոյաճեանի մօտ, քան զայն իրագործելու մարդկային իր հնարաւորութիւնները: Եւ որովհետեւ առաջին բխումին մէջ մտապատկերին ամբողջութիւնը մարմնացած չի տեսներ յաճախ, ապա ուրեմն կը շարունակէ երկունքը, կը ստեղծէ երկրորդ պատ-

կեր մը, երրորդ մը, եւ այսպէս՝ հիմնական գաղափարը նուաճուած տեսնելու փոխարէն՝ ընթերցողը հանդիսատես կ'ըլլայ անոր շուրջ դարձող պատկերներու տողանցքի մը:

Պատկերներու այս առատութիւնը, այս առաջին թերութիւնը, իր կարգին, պատճառ կը դառնայ կառուցումի թերութեան: Հարուածը հարստութենէն կու գայ ու ճիշդ ատոր համար մահացու չէ անիկա:

Արդարեւ, որքան ալ շեշտենք նըշուած թերութիւնները, արուեստի խտութեան եւ կառուցման օրէնքները որքան ալ խստացնեն մեզ, չենք կրնար սակայն հանգիստ սրտով ու ամբողջութեամբ զեղչել այդ կրկնուող ծայնները, կրկնուող գոյները, լոյսերը, կրկնուող լռութիւնները: Հեռուներուն ու խորունկներուն մէջ յաճող, այլ տակաւին չբռնուած, չսանձուած, իր ապրստամբութիւնը շարունակող գաղափարին ամբողջական լոյսը աղերսող հոգիի մը ճճը կը բերեն անոնք, անհասին համար տուայտող մարդու մը սուգը, որ կատարուած նուաճումներուն խռովքին համագօր խռովք մը ունի:

«Փորձեցի, բայց չյաջողեցայ, յանցաւորը ես չեմ», կ'ըսէ տեղ մը մեր դարուն մեծագոյն գրագէտներէն մին, Սէնթ Էկզիլիէրի:

Անծանօթին ձեռք զարկած իրան խառնուածքներուն մօտ՝ ինչ փոյթ յաջողութիւնը, երբ փոխանցած են փորձին դժնդակ համը, չգտնուած աշխարհին, լոյսին, Բանին հրապոյրը, բանաստեղծութիւնը:

Իր ողջ գրականութեան թթիւմորը դժգոհութիւնը եղաւ, դժգոհութիւնը

անհանդարտ դարձուց զինք, անհան-
դարտութիւնը պարտադրեց իրեն՝

*Շարժել անշարժութիւնը, տեղափոխել,
մղել, հանել, շրջել, քանդել
Ու վերստեղծել ամէն բան,
հոգի, երևոյթ, ըմբռնում:*

Անշարժութեան, լճացումին, քարա-
ցած ամէն բանի ի բնութենէ թշնամի
խառնուածքը եղաւ միշտ: Էսաղաղ ծո-
վուն վրայ սպիտակ փոթորիկներ բարձ-
րացուց, կայունութեան դէմ մրրիկներ
արձակեց, որեւէ համակերպումի դէմ
հանեց ապստամբ ուժ մը: Հակադրու-
թիւնը գործօն սկզբունքը դարձաւ իրեն
եւ իր էջերուն մէջ ներհակ ուժերը տե-
ւաբար իրարու բախեցան: Անդունդնե-
րուն մռայլը կայ հոն եւ բարձունքնե-
րուն վեհութիւնը, սեւին սարսափը եւ
լոյսին պաշտամունքը, կան տակաւին
վատութեան եւ ազնուութեան խորհրդ-
դանիչ դէմքերը՝ Կայէնն ու Աբելը, Յու-
դան ու Յիսուսը, Թուրքը եւ Հայը, եւ
սաստկագոյն այն միւս կացութիւննե-
րը, որոնք կը կոչուին տարագրի կսկիծ
եւ հայրենիքի սէր:

Բախումը շարժում բերաւ իր տո-
ղերուն,

Որոնումը՝ թարմութիւն,

Տագնապը՝ բոց,

Արիւնը՝ մթնոլորտ:

Սիրեց Արարիչը, Անհունը, լոյսը,
հայրենիքը, կինը, երագը, երգը ու գե-
րագանց թափով մը պաշտեց մեր լե-
զուն: Առաւ անկէ շատ բան, տուաւ
անոր շնտ բան, հասարակ բառերուն
եռուն կեանքը փոխադրեց դէպի գրա-
կանութիւն, ստեղծեց հարիւրաւոր նոր

բառեր, երբեմն նոյնիսկ չվստահեցաւ
նորաստեղծներուն, դիմեց յատուկ ա-
նուններու օժանդակութեան, մերթ Ա-
լասքա դարձուց հոգին, մերթ Սահա-
րա, Նիակարա, հասարակածային, բե-
ւեռային բաներու, խառնելով իր ոճին
մէջ անապատային, ջրվիժային, բեւե-
ռային ու հասարակածային տապ,
ցուրտ, լռութիւն, աղմուկ:

Այս յատկութիւններով եկաւ աշ-
խարհ, այսպէս տեսաւ, ըմբռնեց, ապ-
րեցաւ աշխարհը ու մեկնեցաւ՝ աշ-
խարհին կտակելով նոր հարստութիւն
մը, բանաստեղծութիւն մը, որ քնարա-
կան տարրեր ունի իր մէջ, բայց քնա-
րերգութիւն չէ, դիւցազներգական
երանգներ ունի, բայց դիւցազներգու-
թիւն չէ, պատգամական շէշտեր ունի,
բայց վարդապետական չէ, գրականու-
թեան մէջ եկող իւրաքանչիւր ճշմարի-
տի հետ յայտնուող առանձին որակ է,
պար է՝ քամիներուն ու փոթորիկնե-
րուն տարերքէն խենթեցած խելագար
պար, երաժշտութիւնն է՝ որոտումնե-
րով ու լռութիւններով կազմուած անօ-
րինակ աղմուկ, նկարչութիւն է՝ արեւ-
ներէն, կապոյտներէն, ծաղիկներէն յա-
փըշտակուած պատկերներու խօլա-
կան արշաւ:


Եղած բաներ՝ ու եղածին լոյսը բե-
րաւ մեզի Պոյանեան:

Չեղած բաներ՝ ու չեղածին լոյսը բե-
րաւ:

Ու մեկնեցաւ կեանքէն, հաստա-
տելով վերջնական ներկայութիւն մը:

(Թիւ 5, 1967)

ԱՂՔԱՏՆԵՐՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

 րկրորդ աշխարհամարտի վախճանը աւետող լուրերը հազիւ հաստատւած՝ մարդիկ, մեծն ու փոքրը, ոտքի ելան եւ Երուսաղէմի մեծ ու փոքր զանգակները չլսուած պոռթկումով լեցուցին մթնոլորտը:

Միւս բոլոր ժողովուրդներուն վերէն նայող ցեղակրօն Գերմանացին ծունկի եկած էր, ու խնդութիւն էր ամէն կողմ, տարածասփիւռ, պայթուցիկ խանդավառութիւն:

Դասերը ընդհատուեցան անմիջապէս: Փոխ տեսուչը կարգի դրաւ մեզ եւ ուղղուեցանք դէպի մայր տաճար: Չանգակներուն աւետաբեր դօղանջին ի լուր, ժողովուրդը արդէն խռնուած էր հոն:

Թափօրի մը գլուխը անցած՝ դահլիճէն վար իջաւ նաեւ պատրիարքը:

Շուտով ստեղծուեցաւ տօնական մթնոլորտ մը: Բուրվառները շարժեցան: Առաջացանք «Հրաշափառ»ին կշռոյթով: Պատրիարքը Գլխադիրին առջեւ խաչակնքեց, ծնրադրեց: Սկսանք ուրիշ շարական մը. «Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման»: Պատրիարքը աւագ խորանին առջեւ եւս աղօթեց, ապա, դառնալով ժողովուրդին՝

«Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»...

– Աշխարհի բոլոր ժողովուրդները խաղաղութիւն կը շնչեն այս պահուն,– սկսաւ պատրիարքը,– ամէն մարդ ցնծութեան մէջ է, պատմական օր է այս օրը, տառապելոց միխթարութիւն բերող օրինեալ օր»:

Ժողովուրդը լարուած ուշադրութեամբ կը հետեւէր քարոզին: Անձկութեամբ սպասած էր այդ օրուան, յոգնած էր, պէտք ունէր խաղաղութեան՝

«Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»...

Իր խօսքը աւարտելէ ետք, քարոզիչը, նոյն հանդիսաւորութեամբ, օրհնեց թշնամին հարուածող բանակները, ոգեկոչեց զոհերուն յիշատակը ու դօղանջող զանգակներուն հետ, ու տաճարին մէջ խռնուած բազմութեան մասնակցութեամբ՝

Տէր Ողորմեա, Տէր Ողորմեա,

Տուր աշխարհիս խաղաղութիւն

Աղօթքը չէինք աւարտած տակաւին, երբ անդրադարձայ, թէ Մայիս էր ամիսը ու յիշեցի ուրիշ Մայիս մը, մեր Մայիսը, Մայիս ամսու մը միահամուռ թափով դօղանջող մեր զանգակները յիշեցի, վեց հարիւր տարիներու ընթացքին առաջին անգամ զուարթօրէն լեզու ելած մեր վեց հազար զանգակներուն հրաշալուր դօղանջը, դօղանջին հետ մեր յաղթապանծ կտրիճներուն տողանցքը, ժողովրդա-

կան թափօրներն ու պլեծածան դրօշները: Բանաստեղծի մը Էջերուն մէջ հանդիպած էի անոնց, եւ բանաստեղծին ձայնագրած դօղանջներուն հետ ես այն ատեն լսած էի արիւնախանձ մեր հողերուն արթնցող շշուկը, տողանցող բանականներուն հետ տեսած՝ մեռելներուն ժպիտը, ծփացող դրօշներուն ներքեւ աւերակներէն բխած լոյսը:

Ծնրադիր *Տէր Ողորմեա* երգած պահուս՝ նոյն ձայները արձագանգեցին հոգիիս, նոյն պատկերները կրկնուեցան, բայց մեր զանգակներուն պարզեւած հպարտութեան փոխարէն՝ այս զանգակները տխրութեամբ համակեցին զիս, ընդհանուր ուրախութեան մասնակցելու թափս կոտրեցաւ մէկէն, փոխանակ աղօթելու, հայհոյելու տրամադրութիւն մը թափ առաւ սրտիս ու սրբազան տաճարին մէջ սկսայ հայհոյանքներ մռլտայ, հայհոյեցի այս յաղթանակը այնքան բուխ սրտով տօնող պատրիարքին ու վարդապետներու դասուն: Ասոնք պղտորած էին ներքին ջուրերս, մեր Մայիսին ու մայիսեան մեր կտրիճներուն հանդէպ իրենց տածած ատելութեամբ, ապերախտութեամբ, ասո՛նք՝ որ ուրիշին յաղթանակը կը փառերգեն հիմա, ուրիշին նահատակները կ'ոգեկոչեն, ասո՛նք՝ Տէր Ողորմեա, ասո՛նց՝ Տէր Ողորմեա...

Տարբեր, տարբեր մարդիկ էին ասոնք եւ մեր միջեւ հասարակաց գիծեր իրապէս չկային:

Ես ծնած էի ուրիշ մթնոլորտի մէջ, մեծցած՝ ուրիշ աղօթքով, լեցուած՝ ուրիշ աստուածներու հմայքով: Քաջայաղթ մարդոց հանդէպ յորդ սիրտ մը կը կրէի ու յորդեցայ այս տան սեմին ոտք դրած վայրկեանիս, յորդեցայ ու նոյն պահուն բան մը խորտակուեցաւ հոգիիս մէջ: Ի՛նչ գիտնայի, թէ մեր հերոսներուն յիշատակութիւնը հերետիկոսութիւն կը նկատուէր հոս: Ի՛նչ գիտնայի, թէ Դաշնակցութիւնը աւազակներու ու դաւաճաններու կազմակերպութիւն համարող մարդեր կան աշխարհի մէջ: Ի՛նծի համար տարբեր խորք, խորհուրդ ունէին անոնք, ամէն բանէ վեր դասուած ու պաշտամունքի առարկայ սուրբեր էին, սրբութիւններ. գիտակցութեանս ամբողջ շրջանին, սիրտս անոնց հաշւոյն տրոփած էր, անոնց փառքը երգած կամ պոռագած էի ամէն օր, ամէն օր ցնծութիւն, Պանք Օթօման գրաւուած է, մի ժամուան մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ, ի զէն ի վրէժ՝ ամէն օր: Գիտէի՝ որ բռնաւորներ, սուլթաններ, թալարներ եղած են մեր կեանքին մէջ, գիտէի որ անոնց դէմ հսկաներ ծառացած են, առիւծասիրտ հազար առիւծ, երկունքի բռնուած էր ամբողջ Հայութիւնը, Դաշնակցութեան ցանած սերմերը օրհնութեան պէս ծլարձակած էին սրտերուն, ձայն մը հնչած էր ու սրտերը թունդ-թունդ ելած էին, ուրիշ ձայն մը ով որ քաջ է, ինչ կը սպասէ հարցուցած էր, ու քաջերը չէին սպասած, ելած էին ոտքի, ոտքի ելլողներուն կռուեցէք տղերք ըսուած էր, ու տղերքը կռուած էին, ու տղերքը ծունկի բերած էին թշնամին, կեցցէ՛ Հայաստան, ամէն օր կեցցէ՛ Հայաստան:

Այս ապրումները, ամբողջ, վեց ամիս, ստիպողական լռութեան մը դատապարտելէ ետք, խաղաղարար այս զանգակներուն ի լուր, եւ ի տես մարդոց զը-

լարթ երեւոյթին՝ անիրաւուած, կողոպտուած պատանիի դառնութիւնս աւելի սաստկացաւ եւ *Տէր Ռոյնմէան* սառեցաւ շրթներուս:

Վերադարձանք դպրոց, միտքս չվերադարձաւ սակայն ինծի, գնաց հեռուն: Յիշեցի նախակրթարանի պատմութեան ուսուցիչս, որ անցեալ տարի, Մայիս ամսուն, իր բոլոր պահերը յատկացուց մեր անկախութիւնը կերտող կտրիճներուն ու հերոսամարտներուն: Յիշեցի իր յուզումը, յորդումը, դէպքերէն, դէմքերու անօրինակ սխրագործութիւններէն բխած իր վարակիչ ոգեւորութիւնը, արցունքները երբեմն: Առանց հացի, հագուստի, երդիքի՝ ժողովուրդ, առանց զէնքի, փամփուշտի՝ բանակ, հայրենիքի ապրումով զինուած ահարկու ամբողջութիւն, խոհի, խօսքի, բազկի մեծեր՝ Արամ, Նազարբէկեան, Անդրանիկ, Սիլիկեան, Դրօ, Փիրումեան, ուրիշ մեծագործներ, թշնամիին մահասփիւռ դժնդակներուն վրայ խոյացող մեր հրեղէն այրուծին:

Ուսուցիչը կր պատմէր, առանձին անձերու կապուած առանձին դրուագներ կը թուէր, կու տար անկրկնելի մանրամասնութիւններ եւ իր խօսած ատեն եւ նստած չէի կրնար մնալ, ամբողջ մարմինս կ'եռար, ոտքի կ'ելլէի, վազելու, բացւելու տենդ մը կը մտրակէր զիս, պռռալ կ'ուզէր սիրտս, երգել, սլանալ, հասնիլ Արարատի շուքին, համբուրել արնաթաթախ հողը, քաջերուն հետքերը, նշխարները: Այնքան կը սիրէի հերոսները, հերոսները ի պատուի էին մեր ամբողջ գիւղին մէջ, մեր գիւղին մէջ հերոսները աւագակ, հայրենադաւ, արկածախնդիր անուանող մարդեր չկային: Հոն տարբեր էր կեանքը, սրտաբուխ, արդար, Սասնոյ գլխին ամէն օր ազատութեան դրօշակ կը փայլէր մեր գիւղին մէջ, հերոսը կը մռնչէր եւ Սուլթանը կը դողդողար, մօսինը իւր նպատակին կ'ուղղուէր եւ ոռնալով վար կ'իյնար Բէօսէ Պինպաշին. ամէն գիշեր մենք մեր մէջ կ'ունենայինք արնահեղ Գէորգը, Անդրանիկ Փաշան, Սեբաստացի ընկեր Մուրատը, չորրորդ գնդի հրամանատար քաջ Բեռին, վիթխարի կտրիճ Մեպուհը, պանծալի Համագասպը, ամէնքը, կուրծքէն չորս գնդակ ստացած ու կրկին հրացան պարպող կարնեցի Գարեգինը, վերքերով լի հազար Ֆետայի, Հայաստանի փառք ու պարծանք Հազար արի:

Ինչ աղուոր էին մեր օրերը, մեր գիշերները: Չինադադարէն ետք, իմ ժառանգութեանս հակադրուած մտայնութիւնը աւելի թունաւորեց կեանքս: Մօտեցող Մայիս 28ին հետ՝ վիրաւորանքը աստիճան մը աւելի զգացի, նախօրեակին՝ աշխարհը ամբողջովին մթնցաւ: Այդ հրաշափառ օրը սովորական օր պիտի ըլլար, դպրոցը բաց:

Երեկոյեան ամէն մարդ, ամէն ինչ անհանդուժելի թուեցաւ ինծի: Բակի արեւելեան անկիւնը, ծառի մը կոթնած կը մտածէի ելքի մը մասին, երբ հեռուն նշմարեցի աւարտական դասարանի ամենէն լռակեաց, մռայլադէմ ու դաժան տղան՝ Վարագդատը: Եկաւ, կանգնեցաւ քանի մը քայլ անդին, հեղ մը խուզարկեց շուրջը եւ շտապ քայլերով դիմեց դէպի խաղավայր: Վայրկեան մը չանցած նորէն երեւցաւ, նորէն խուզարկեց շրջապատը եւ ուղղուեցաւ իմ կողմս: Տեսաւ զիս:

Կանգ առաւ դիմաց: Չախորժեցայ իր ներկայութենէն: Կռուելու տրամադրութիւն մը խմորուեցաւ մէջս յանկարծ: Հսկայ ուժ մը կուտակուեցաւ սրտիս:

– Հը՛,– սկսաւ գլուխը երերցնելէն:

«Կեցցէ՛ Հայաստան», ըսի մտքէս:

– Այս ի՛նչ բանաստեղծական մեկուսացում:

«Կեցցէ՛ Մայիս 28ը», ըսի նորէն իւրովի:

– Ինչո՞ւ լուռ, ես:

«Կեցցէ՛ Դաշնակցութիւնը», ըսի դարձեալ լռելեայն, այս անգամ ուղղակի աչքին նայելով:

– Վաղուան դասերդ պատրաստա՞ծ ես:

– Ո՛չ

– Ինչո՞ւ:

– Չեմ գիտեր, անա՛նկ:

– Ես գիտեմ:

– Ի՞նչը ,– հարցուցի խուճապի մատնուած:

– Պատճառը, տխրութեանդ պատճառը, առանձնութեանդ պատճառը:

Չխօսեցայ: Կասկածելի իր յայտնութիւնը աւելի խորացուց կասկածներս: Մէկը զիս հետապնդելու պաշտօն տուած էր իրեն արդեօք: Կարծեցի, թէ թակարդի մէջ բռնուած եմ: Սիրտս թունդ ելաւ: Արդէն չէի սիրեր այս տղան ու հաւատաբքընիչի իր դերին մէջ ուղղակի խորշանք կ'ազդէր վրաս:

– Ինչո՞ւ մեկէն լռեցիր:

– Աստուած սիրես, հանգի՛ստ ձգէ զիս,– ըսի զայրոյթ մատնող շշտով մը:

– Յիմա՛ր դաշնակ:

– Կեցցէ՛ Դաշնակցութիւնը, կեցցէ՛ Մայիս 28ը, կեցցէ՛ Հայաստան,– մոնչեցի կատաղութեամբ,– վաղը ես կը մեկնիմ, կեցցե՛ն,– կրկնեցի ու պատրաստուեցայ դիմագրաւել հաւանական ամեն հակազգեցութիւն:

– Կեցցե՛ն,– արձագանգեց յանկարծ Վարազդատ,– կեցցե՛ն,– գոռաց ու սկըսաւ որոտընդոստ ծափահարել: Հրամայեց որ ծափահարեմ նաեւ ես: Հետեւեցայ իրեն:

– Աւելի՛ ուժով, հազարներու, միլիոններո՛ւ փոխարէն, ամբողջ սրտով, ամբողջ սրտով կեցցեն:

Ապշեցայ մնացի: Ո՞վ էր այս տղան, ո՞ւր էր մինչեւ հիմա, հիմա ի՛նչ ըսել կ'ուզէր: Առեղծուածի մը առջեւ զգացի մեկէն ինքզինքս, կարծես երագի մէջ էի:

– Հետեւէ ինձի,– ըսաւ:

Իջանք խաղավայր ու կանգ առինք ծայրամասին:

– Վաղը Մայիս 28 է,– վերսկսաւ Վարազդատ:

– Այո, վաղը Մայիս 28 է,– ըսի դառնութեամբ:

– Ամեն տարի, Մայիս 28ին, ես հիւանդ կ'ըլլամ:

– Ինչո՞ւ:

- Սովորություն է:
- Հիւանդութիւնը:
- Հիւանդութիւնը:
- Չարմանալի է:
- Չարմանալի չէ՛: Անկախութեան տօնին մասնակցելու ուրիշ միջոց չկար:
- Վաղը դարձեա՛լ պիտի հիւանդանաս,– հարցուցի նորոգուած տրամադրութեամբ:
- Ո՛չ: Վաղը պիտի հոչակեմ սեփական անկախութիւնս: Այլեւս ոչ ոք կրնայ բռնանալ վրաս:
- Ինչպե՛ս:
- Մէկ ամիսէն կը մեկնիմ:
- Վարդապետ պիտի չըլլա՞մ:
- Վարդապե՛տ: Գետի՛նն անցնին բոլոր վարդապետներն ու վարդապետութիւնները, որոնք հայրենիքին համար հեղեղօրէն թափուած արեան հանդէպ երկիւղած պաշտամունք չունին, չեն ուսուցաներ: Ես կը մերժեմ անորոշ սուրբեր մեծարող ուխտերու մաս կազմել: Ուրիշ սուրբեր կը կանչեն ինձի, մեր հրասիրտ, հրաչուի քաջերը: Անոնց ընծայած պատարագս լուռ պատարագ էր ցարդ, բարձրաձայն պատարագի մը կարօտը կը տանջէ զիս հիմա:
- Վերջին բառը արտասանած պահուն, Մայիսի բովանդակ քաղցրութիւնը հաղորդող հով մը մեղեդիացաւ ծառերուն մէջ: Հովը երկրին կապեց զիս: Չգացի՛ որ վերը երկինք մը կար ու երկինքին վրայ ամպ չկար, լոյս կար, լոյս կու գար վերէն, լոյս՝ հեռուներէն: Երկար չտեսեց սակայն այս լուսողող երանութիւնը: Չեմ գիտեր ինչպէս, Վարագդատի հիւանդանալու պատմութենէն առած առաջին տպաւորութիւնս մթազնեցաւ իսկոյն: Կրաւորական այս ոճը իմ ոճս չէր: Չհամբերեցի.
- Հինգ տարի առաջ նոյն կարօտը չունէի՛ր:
- Ինչպէս թէ չունէի, ունէի՛:
- Ինչո՛ւ այն ատեն չմեկնեցար:
- Ինձմէ առաջ մեկնած բարեկամ մը արգելք եղաւ: Մեկնիլը լուծում մը չէ ըսաւ բարեկամս ու թելադրեց որ մնամ, շարունակեմ աւանդութիւնը:
- Հիւանդութեա՛ն աւանդութիւնը:
- Աղքատներուն, ծարաւներուն աւանդութիւնը: Ծերունի վանական մը տըլած էր իրեն հիւանդանալու խորհուրդը եւ ինք, չորս տարի շարունակ, Մայիս 28ը տօնած էր անկողնի մէջ: Այդպէս ըրի նաեւ ես: Եկած եմ հիմա նոյնը քեզի թելադրելու:
- Աչքերս հեռացուցի իրմէ: Երկուութիւն մը սկսաւ խռովել զիս:
- Այս պարիսպներուն մէջ,– վերսկսաւ Վարագդատ,– դեռ կարելի է հերոսներուն խունկ ծխել, բայց դուրսը դժուար է ուսուցիչ ունենալ մեծադիր մեհենականը, Հայաստանեայց այդ շռնդալից քուրմը. յետոյ մատենադարանը կայ, լայն ժամանակ, կարդա՛, բաց ջիղերդ, ընդարձակէ հորիզոնդ եւ յետոյ մտածէ

մեկնումի մասին: Այս համբերութեան համար, ապահով եղիր, հերոսները կը ներեն քեզի, մնա: Վաղը որեւէ հիւանդութիւն սարքէ ու վերջացուր: Ես գացի: Անմիջապէս առի որոշումս:

Քիչ անց, զարնուեցաւ յաջորդ օրուան հաշւոյն սերտողութեան հրաւիրող զանգը: Առանց շահագրգռութեան աչքէ անցուցի դասագրքերս ու միւսներէն կէս ժամ առաջ, գլխու սաստիկ ցաւ մը հնարելով՝ բարձրացայ ննջարան: Արագ մը բացի անկողինս ու նոր անակնկալ մը ցնցեց Էութիւնս:

Գիրքեր զետեղուած էին վերմակին տակ, ալպոմ մը, եռագոյն կողքով երգարան մը եւ Հայաստանի Հանրապետութեան մէկ տարեդարձին նուիրուած պըզտիկ հատոր մը:

Ալպոմի կողքին գնդաստեղով կցուած կարմիր ձեռագիր մը զարկաւ աչքիս: Կարդացի. «Յետեւէնադատներուն աւանդութեան ու պիտի հարստանաս: Վարապետ»:

Ինքն էր ուրեմն, նորէն ինքը:

Մէկ-մէկ թերթատեցի բոլոր ընծաները: Աստուած իմ, ամենքը հոն էին, բոլոր քաջերը, փափախաւոր, զինաւոր, ձիաւոր բոլոր պաշտելիները, նահատակները, բանաստեղծները: Որքան կարօտցած էի իրենց:

Տղաքը եկան: Պահեցի գիրքերս: Ատուռ եկեղեցի գացին: Բացի զանձերս: Յափշտակութեամբ սուզուեցայ անոնց մէջ, ընդհատուեցայ քիչ անգամ, բաղդատութիւններ ընելու փորձութեան վայրկեաններուն միայն: Երբեմն, նժարներէն մէկուն մէջ կը դնէի շարականներուն փառաբանած սուրբերը եւ միւսին մէջ՝ մեր երգերուն ոգեկոչած տղամարդերը, այլ այս սրբապղծութեան համար ինքս կ'ընդվզէի ինծի դէմ: Ինչ նզովք որ կայ՝ բոլորը ինծի, ինչ կրակ որ կայ բոլորը իմ գլխուն, ինչ փոյթ, արիւնս աւելի որոտման մեր որդիներուն հաշւոյն կը խայտար: Քարկոծուած, արիւնած, խաչուած վկաներուն համար՝ դեռ տեղ կար սրտիս մէջ, անոնց յայտնաբերած մարդկային գիծերը մերթ կը յուզէին զիս, բայց ուղղակի կ'ատէի ճգնաւոր կոչուածները, անապատականները, սիւնակեացները: Ինչպէս սիրտ կ'ընէին մարդիկ աղօթել այս ախտաւորներուն յիշատակին եւ չէին ըմբռներ սրբութիւնը այն միւսներուն, մեր ընտիրներուն, «Որք յաղթեցին անօրէն բռնաւորաց հեղմամբ արեան իւրեանց»:

Միտքս չէր ըմբռներ կատարուածը: Կը բորբոքէի, յետոյ նորէն կը վերադառնայի նկարներուն, երգերուն.

Աի, Տեսայիներ, ջան Տեսայիներ,

Ձեր մայրերը ձեզ դուրպան.

Ամբողջ օրը՝ այսպէս: Դիտեցի, կարդացի, երգեր մըմնջեցի ու լիացայ:

Երեկոյեան երեւցաւ Վարազդատ:

– Տօնակատարութիւնը լաւ անցա՞ւ,– հարցուց գուարթ տրամադրութեամբ:

– Շնորհակալ եմ,– ըսի,– շնորհակալ եմ տուած խորհուրդիդ համար, նուիրած գիրքերուդ համար, շնորհակալ եմ:

– Շնորհակալութեան պէտք չկայ, միայն թէ՛ չմոռնաս շարունակել աւանդու-
թիւնը:

Չմոռցայ: Շարունակեցի: Իմ կարգիս, չորս տարի, ամէն Մայիս 28ին, «հի-
ւանդ» պառկեցայ, իսկ հինգերորդ տարին արդէն բոլորովին բուժուած էի: Յին-
գերորդ տարին, Անդր-Նահրի Մեսրոպեան վարժարանի ընդարձակ բակին մէջ,
Եռագոյն դրօշներու ծփանքներուն տակ փոթորկող հսկայ բազմութեան մը հետ,
ազատութեան տօնին, ինքս ալ ազատօրէն փոթորկեցայ...

(Թիւ 5-6, 1968)

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ

ԿԻՍԱՓԱԿ ԴՐԱՆ ԵՏԵՒ

of ողորցի երկփեղկ դրան փակ մասին ետեւ, ձեռնահիւս սեւ շալ մը ուսերուն, կանգնած էր ան, երբ կինս ու ես իջանք մեր բնակարանին ներքին սանդուղներէն:

Դարձուց գլուխը, իր թափանցող ականարկովը չափեց-չափչփեց երկուքս եւ, կրկին նայելով դէպի դուրս՝

– Խե՞նթ են՝ ի՞նչ են, աս անձրեւին փողոց կ’ելլուի՞,– ըսաւ ինքն իրեն՝ լսելի ձայնով մը:

– Հայ է,– շնչեց կինս ինծի՝ ականարկելով կնոջ:

Մօտեցանք դրան: Անձրեւը, գոր չէինք նկատած յարկաբաժնէն իջնելէ առաջ, կասեցուց մեզ եւս դրան առջեւ:

– Պիտի սպասենք, ըսի կնոջս, եւ, ընդոտտ, քայլ մը ետեւ գացի՝ գերծ մնալու համար ջուրերէն, գորս ցայտեցուց փողոցէն սուրացող ինքնաշարժ մը:

Տիկինը, որ վաթսունի մօտ կ’երեւէր, գլուխը յանկարծ դարձուց մեզի եւ, քիչ մը շփոթ,

– *Չէիէր* հայ էք,– ըսաւ ժպտուն,– հիչ վրանիդ չդրի:

– Ինչո՞ւ,– ընդմիջեցի նոյնպէս ժպտուն,– հայու չե՞նք նմանի:

– Է՛հ, տիկինը՝ քիչ մը,– բերաւ՝ կարծէք սխալ մը պարտկելու փութկոտութեամբ:

– Իսկ ե՞ս:

– Ի՞նչ մեղքս պահեմ, դուն բնաւ չես նմանի: հայու:

Եւ, խօսքը ուղղելով կնոջս,

– Անանկ չէ՞, տիկին՛ն,– ուզեց առնել անոր հաւանութիւնը:

Յետոյ ձեռքը տարաւ գլխուն, թաշկինակովը, գոր սեղմեր էր ափին մէջ, սըրբեց թրջուած մազերը, եւ՝

– Չնեղանա՛ս, *միւսին*,– կրկին դարձաւ ինծի,– հայ ըսածդ *դայիսէ* չ’ելլեր եա...

Ամենքս ալ Աստուծոյ ստեղծածներն ենք. քիթը բերանը չէ կարելորդ, սիրտո՞վ հայ ըլլալու է մարդ:

– Ճի՞շդ է,– պատասխանեցի,– հայու նմանիլը չէ կարելորդ, ո՛չ ալ հայ ծնած ըլլալը. Այլ՝ հայ ապրիլը:

– Հապա՛,– բարձրացուց ձայնը՝ մօտենալով ինծի,– ի՞նչ աղէկ ըսիր քիթով բերնով Հայեր կան *քի* Հայութենէն բա՛ն չունին իրենց ներսիդին...: Դուն ինծի՛ հարցուր ատանկները:

– Կ’երեւի ծանօթներ շատ ունիս, ըսի,– թէեւ այս թաղը քիչ հայեր կան:

– Ես աս թաղեն չեմ: Կիրակի «սոռոգիս» օրն է. Էկայ՝ մեր գեղացիկներն մեկը տեսնելու: Ետեւի փողոցը կը բնակի:

– Պրուսայի շրջաններէ՞ն ես:

– Ինչէ՞ն հասկցար,– յանկարծ ցցեց գլուխը:

– Շալէ՛դ:

Ժպտեցաւ գոհունակ, շալը շտկեց ուսերուն վրայ գուրգուրանքով մը եւ՝

– Մօրս յիշատակն է,– ըսաւ,– հօրենական տունն էս ա՛ն մնացած է. մասունքի պէս կը դողամ վրան:

– Այո՛, յիշատակները քաղցր են:

– Աղջիկս գլօխս կ’ուտէ *թի* չգործածեմ. Փարիզի մէջ ամօթ է, կ’ըսէ. հո՛գա: Ի՛նչ *չէշիտ* ուզես կայ աստեղ...

– Ուրեմն համագիւղացիներ ալ ունիս:

– Այո՛. ատենը մէկ կու գամ, հին օրերը կը յիշենք...

– *Չէթինիխները, Թուրուխները ...*

– Ա՛տ ալ գիտէ, նայէ՛,– ոգեւորուեցաւ յանկարծ՝ խոշոր բանալով աչքերը,– մեր կողմերէն չըլլա՛ս... հը՛... Օրթագեղէ՛ն ես, թէ Սեօլեօզէն...

– Ո՛չ,– ըսի,– ջուրին միւս եզերքէն եմ:

– *Չէթինիխները*,– աւաղեց՝ շարժելով գլուխը,– տէտէներէն մնացած *վէթինիխները* ձգեցինք ու ինկանք աս դժոխքը:

– Փարիզը գեղեցիկ է:

– Ինչո՞ւս պէտք Փարիզի աղուորութիւնը: Ես քեզի բան մը ըսե՛մ. աս տեղ *վէնկինի* ու *ճահիլի* քաղաք է: *Փարսա* ունեցողը կամ *ճահիլ* Էդողը քաղաքին տէրն է. չունեցողն ալ ինծի պէս կը չարչարուի...

– Առողջութիւն ըլլայ, քոյրի՛կ,– վրայ բերի,– դրամը ամէն բան չէ:

– Է հա՛, ա՛տ ալ շիտակ է, *ամմա*, չոր առողջութիւնն ալ... ո՛ր դառնաս դրամ կ’ուզէ նե՛...

Երեսները կը փալփլէին յղկուած մարմարի նման: Եւ իր կլոր դէմքին վրայ՝ կարմիրի մը երանգները կը մատնէին անհետացած գեղեցկութիւն մը գեղջկական: Իր յարաշարժ ու կապոյտ բիբերուն փայլը ուշիմութիւն մը կ’արտայայտէր:

Անհամբեր կ’երեւէր:

– Չուշացած՝ տեղս տեղաւորուիմ, ըսի, բայց անձրեւը մէկէն սկսաւ եւ մտայ այս բաց դռնէն ներս: Վախնամ ուշանամ. քառսուն գործ ունիմ ընելիք:

– Տան գործերը երբեք չեն վերջանար,– մէջ ինկաւ կինս ,– միշտ ետեւէն պիտի վազես:

– Տանդ տիրուհին ըլլաս՝ ուրի՛շ է, տիկի՛նս, բայց մեզիպէսները...

– Տե՛ղ մը կ’աշխատիս:

– Աշխատանք՝ ըսէ, ծեծկուիլ ըսէ՝ ի՛նչ կ’ուզես ըսէ... Ժամանակին տուն-տեղ ունեցիր *տէ*, Էլիր Էկուր Էրէկուան խլէզին հրամանին տակ չարչարուէ կեցիր... Տուն ու տեղէ, մաքրութենէ հասկնայ նէ սիրտս չի ցաւիր:

- Ընտանիքի՞ քով ես:
- Այո՛. *խըզմէթքար* ըսելու տեղ՝ ալաֆրանկա անուն մը դրեր են... *յօն ա դու թէռ...*: Ի՞նչ ըսել է՝ գիտե՞մ:
- Աղէկ գէշ ընտանիքի մէջ ես վերջապէս:
- Ընտանիք ըսածդ ա՛լ... *ամա՛ն*, ի՞նչ գիտնամ... հիմակուանները...
- Ինչո՞ւ:
- *Կիւլէ* Էրիկ կնիկ են... Չեմ գիտեր՝ քաղա՛քը կ'ընէ, դրա՛մը կ'ընէ:
- Յայե՛ր են:
- Այո՛. *հէմ*՝ քիթով բերնով. հարիւր օտարին միջեւ տեսնես՝ մէկէն կ'ըսես *քի* հայ են:
- Քեզի համար առաւելութիւն մըն է ատիկա:
- Խերով բարով չըլլա՞ր:
- Ինչո՞ւ, – հետաքրքրուեցաւ կինս, – օտարին հետ աւելի դժուար է անշուշտ:
- Անոնց միմակ *սօնաթն*ին հայ է: Տղաքը ըսես՝ բան մը հայերէն չեն գիտեր:
- Տան մէջ հայերէն չե՞ն խօսիր:
- Մարերնին կը ձգէ՛: *Աքսան* կ'ունենան, կ'ըսէ... *Քա՛, կիւլէլիմ* հայերէնին *աքսան* ընելը նոր իմացայ...: Եթէ հայերէն խօսին, ֆրանսերէնը ֆրանսացիի պէս չեն կրնար խօսիլ, կ'ըսէ տիկինը, եւ տղաքը կը հեռացնէ քովէս:
- Իսկ հայրէնի՞ն:
- Գիտնա՛լ անգամ չ'ուզեր. *չէշիտ* մը Էրիկը, *չէշիտ* մը՝ կնիկը: Տղաքը ըսես՝ *մէ-մէռ, մէ-մէռ* ըսելէն վրաս կը վերնան: Արիւ՞ն է, ի՞նչ է՝ կը քաշէ *վեհեր...*
- Պահ մը լռեց: Յետոյ՝
- Ամա՛ն – վերսկսաւ, – աղէկ բան չէ ըրածս: Պիտի ըսէք *քի* հացերնին կ'ուտէ, Էտենուն կը խօսի. *ամնա*, սիրտս կ'երի: *Պագի* ես ինծի կ'ըսեմ *քի* ձգեմ՝ Էրթամ, քաշուիմ սենեակս, պատառ մը հացս ուտեմ, նե՛ տեսնեմ, նե՛ ալ լսեմ:
- Ո՞ր տեղացի են, – հետաքրքրուեցայ:
- Մեր գեղէն է Էրիկը:
- Ուրեմն կը ճանչնայիր առաջուրնէ:
- Յարկա՛ւ. կնի՛կն այ: Էրկանը հարը ամառ ձմեռ. ձին հեծած Պուրսա կ'երթար կու գար: Ծուռ Աստուրին թռն է: Աստուրեանին «եան»ը նետած՝ «*մէօ-սիւէ* Աստուր» եղած է...
- Իսկ կի՞նը:
- Օվաճըքէն է: Մարսիլիա՛ գտեր են զիրար: Անկէ հոս՝ չոր հացի մը Էտեւէն... Գիտե՛ք՝ պատերազմի ատեն աչքը *վէթ* Էդոդը բեռը շտկեց: Բաներ մըն ալ կը պատմեն. հայու մը խաղ խաղացեր են: Իրա՛ւ է, սո՛ւտ է, չար բերա՛ն է, գիտե՞մ:
- Ի՞նչ գործով կը զբաղին:
- *Թռիթոյի* գործ կ'ընեն: Իրենց *ֆապրիքան* կ'աշխատէի. տունին մէջ վստա-հեյի մէկը կ'ուզենք, ըսին՝ տուն առին զիս: *Ֆապրիքան* որ տեսնես՝ ափ ի բերան կը մնաս: Ամէն մէկ *մաքիան* քանի մը միլիոն կ'արժէ:

– Կրցեր են շահիլ ու պիտի վայելեն անշուշտ:

– Քա, թո՛ղ վայելեն, հելա՛լ ըլլայ,– մեղմացուց ձայնը,– մենակ *քի...*

– Ի՞նչ:

– Ինձի՛ նայե, *միւսիւն*,– մտերմութիւն մը դրաւ ձայնին մէջ – չտեսած մարդը մէկէն ի մէկ փարա տեսնէ նէ... Ատ *ճանապէթ* փարան չկա՛յ, տունէ մը ներս մտա՛ւ տունին համը հոտը կը փախցնէ: Շիտակը՝ ճունճուղին կաթը պակաս է տունին մէջ:

– Ուրեմն այդքան հարո՛ւստ են:

– Երմակ *պոպոպակով* աշծի՞ն կ'ուզես, *կուվէռնանտը* կ'ուզես... Գիտէք *քի* չէ՛մ ուրախանար. կ'ուրախանա՛մ. Յա՛յ են նէ. *ամնա*, երբ *չըտիրյէն* դուրս բաներ տեսնեմ...

Տեղատարափը կը շարունակուէր: Շայը կրկին շտկեց ուսերուն վրայ: Եակտեն ետեւ ըրաւ ինկող մագերուն թելերը եւ՝

– Գամուեցանք՝ մնացինք,– դժգոհեցաւ:

– Երեւի տիկինը կ'օգնէ ամուսնոյն,– ըսի,– այստեղ ամեն մարդ կ'աշխատի:

– Փո՛ւ,– քքջաց՝ բերնին տանելով թաշկինակը,– պիտի օգնէ՛... Օր մը օրանց իրարու հետ եղած ունի՞ն.. Էրիկը ի՛ր գործին, կնիկը՝ ի՛ր:

– Առանձի՛ն գործ ունի տիկինը:

– Նայէ՛ ի՞նչ հոր կը փորէ *միւսիւն*,– դարձաւ կնոջս,– ըսե՛լ պիտի տայ ամեն բան. . . Մատամը օթօ՛ ունի,– հեզնական շեշտով մը երկարեց բառը – հատ մը ունէր չհաւնեցաւ. հիմա ամերիքական մը առած է: Սէթրոյին օղը աղտոտ է, չեմ կրնար շնչել, կը խեղդուիմ, կ'ըսէ...

– Քանի որ նիւթական վիճակնին կը ներէ...

– Է՛... Կը ներէ ըսելով՝ *բանդալոնը* հագնիլ՝ լերան *թէփէնէրը* ասոր անոր հետ *ըսքի* ընելո՛ւ երթալ... Կը վայլէ՛ հայ կնկան...

– Յիմա ատոնք սովորական բաներ են,– ընդմիջեցի՝ ջանալով մեղմել վրդովումը,– աչք գոցէ՛ անցի՛ր. աղջիկդ չէ վերջապէս... Դուն հանգի՛ստ ես՝ ա՛ն նայէ:

– Լսեցի՞ր, տիկին՛ն,– կրկին դարձաւ կնոջս,– աչք գոցէ, կ'ըսէ *միւսիւն*...: Ըսել է՝ ա՛լ մոռնանք գեղ ու պատիւ, տուն ու տեղ... Յայութենեն ի՞նչ կը մնայ... Յա՛յ կ'ըսեմ Էս ատանկներուն... Օր մըն ալ ինձի չըսէ՛ քի, Մարիա՛մ, անունդ գէշ կը հնչէ, տիկիններ կու գան *ժուռ ֆիքսիս*, Մարի պիտի կոչենք քեզ... Արունս գլօխս ցատկեց մէկէն: Ինձի նայէ, տիկին Բրաբ, ըսի... Յապա՛, Բրաբ կ'ըսեմ իրեն. Բրա՛բ է նէ... Ժազի՞նս ո՛րն է... Յա՛, տիկին Բրաբ, ըսի, ես Աստուծու տուած՝ հացէն վազ կ'անցնիմ, անունէս ու մեռնես վազ չեմ անցնիր... Մարիա՛մ Էկած եմ, Մարիա՛մ ալ պիտի երթամ... Անունիս մէջ հօրս մօրս ձայները կան, ըսի, ազգիս ու արունիս ձայնը...

Երեսները շառագուներ էին: Կը հեւար: Եւ ինձի այնպէս թուեցաւ, թէ մտապատկերուած «Ժազիինը» եւ դեմս կեցող Մարիամը երկու սերունդներ էին՝ արիւնով իրարու հարազատ, բայց ըմբռնումներով ու նախասիրութիւններով իրարու հակադիր...:

– Չղժգոհեցա՛մ,– հետաքրքրուեցաւ կինս:

– Ի՞նչ տոր պիտի ղժգոհի. մի նեղուիր, Մարիամ, ըսաւ, տեղին պետք է յարմարինք... Մենք ալ, նայէ՛, մեր անունները... Աղէ՛կ էք ըրած, ըսի, գիտես *քի* Ֆրանսացին կը հաւնի՞ ատ ըրածնուդ... Անունդ կը փոխես՝ արունդ կրնա՛ս փոխել, տիկին Բրաբ, ըսի... Խորթ կը հնչէ եղեր... Յո՛գս, ըսի, *խըրսով*... Ա՛լ չհամբերեցի... *Պողչատ* կապել էրթալս էկաւ... *Խտթորդ* չմնայ *ամնա*, ըսի, Բրաբը ձգած՝ Ժագին էղած ես նէ հորդ մորդ աղջիկը ըլլալէ դադրա՞ծ ես...

– Շա՛տ լաւ ըսեր ես, ապրի՛ս, տիկին Մարիամ,– ուրախացաւ կինս:

– Հարկա՛ւ... Նայէ՛, ըսի, սա *սալոնդ* կը տեսնե՛ս: *Փառքէ* կ'ըսէք, ի՛նչ կ'ըսէք, շաբաթը մէյ մը *ճիւլայել* կու տաս եւ *քէչէին* կտորները ոտքերնուս կը դնենք *քի* չսահինք՝ չիյնանք... *իշտէ* ատանկ *ճիւլայի* վրայ են կեցած Ֆրանսայի Հայերը, ըսի, կը սահի՛նք կոր, տիկին Բրաբ, մէկիկ մէկիկ կ'իյնան կոր... Կը հասկնա՛ս, ըսի:

– Ի՞նչ պատասխանեց:

– Ի՞նչ պիտի պատասխանէ: Հայութիւնը ե՛ս պիտի փրկեմ, ըսաւ: Հայութիւնը, դուն պիտի չփրկես *ամնա*, դուն՝ քե՛զ, ես ալ զիս պիտի փրկեմ *քի* Հայութիւնը փրկած ըլլանք, ըսի:

Շունչ առաւ: Նայեցաւ դուրս: Յետոյ կրկին դարձաւ մեզի եւ ձեռքովը հպելով կնոջս թեւին,

– Մեր գրոց բրոցները եւ խօսողները հիմա բան մը ամեր՝ կ'երթան,– վերսկըսաւ հեզնական շեշտ մը ձայնին մէջ,– ո՛ր թերթը բանաս, ո՛ր ճառախօսը մտիկ ընես՝ ազգապահպանում, հայապահպանում... Ասանկի պէս բառ մը... Նոր *ի-ճատ* ըրին ատ բառն ալ: Հայը ե՛րբ ինքզինք պահելու *ճախտ* ըրած չէ: Նո՛ր է *քի* կը հատնինք: Մատ մըն էինք *պնըպա* մօրուքով վարժապետ մը բերին գեղը: Յեղափոխական է կը փսփսային: Կոկորդնիս պատռել կու տար, աւելի՛ ուժով, աւելի՛ ուժով կ'ըսէր երբ «Տէ՛ր կեցո՛ դու գհայս» կ'երգէինք: Փա՛ռք Աստուծոյ,– ղժգոհանք մը դրաւ ձայնին մէջ,– սերը պահե՛ց պահպանեց հիմա, բունը աւրըլած թռչուններու պէս, ցիր ու ցան էինք... Ու մենք մեզի կը պոռանք կոր՝ «Հա՛յ, կեցո՛ դու գհայս»...: Հապա «Հա՛յ ապրինք, եղբա՛րք»ը...: Արշակ թագաւորը պարսիկին դէմ կռուեցաւ Հայը Հայ պահելու համար: Վարդանը Աւարայրի մէջ մեռաւ՝ Հայը Հայ պահելու համար: Ս. Մեսրոպ Հայ գիրերը գտաւ՝ Հայը Հայ պահելու համար...: Ու քալէ Էկո՛ւր մինչեւ մեր օրերը... Անդրանիկ, Գեորգ Չաւուշ, դաշնակ, հնչակ... ասոնք ամենքն ալ հայութիւնը պահելու, պահպանելու համար չէին... Հայը ե՛րբ ազատած է, *միւսիւ*, ինքզինքը, իր Հայութի՛ւնը պահպանելու հոգէն... Գիտե՛ս *քի* նոր բան մը կ'ընեն կոր: Հը՞,– յանկարծ ուղիղ նայեցաւ ինծի,– դուն ալ ատ գրոց բրոցներէն չըլլա՛ս...

– Ե՛ս:

– Այո՛, խօսքդ խորաթաղ *փէք* գրաբառ է,– շեշտեց... «ո»ն,– ա՛ջ կ'ընես *ամնա*, ատ ճառերը, յօդուածները վրա՛ս գրէ... Ատոնք ամենքն ալ պարապ խօսքեր են... Բառ շա՛տ, շարեցէք իրարու, քով... հանդիպողը հիմա Հայը Հայ պահելու ելեր է

խօսքով... ճառ խօսելու տեղ՝ անուն ու լեզու փոխողները թերթերուն մեջ ծաղր ու ծանակ ըրէք *քի*, Ժազիները Բրաբ մնան, Ժաներն ալ Օհաննես...: Ի՛նչ տղոց ու աղջիկներուն ետեւէն ինկեր էք... Ձուլուողները Է՛ն առաջ մեծերն են... Տղաքը ի՛նչ յանցանք ունին... Ի՛նչ տուիք իրենց որ բան սպասէք իրենցմէ...: Ամէն բան տունէն կ'ըլլայ, ճի՛շդ է...

– Այո՛:

– Տղան Զայ շինողը մարը պապան են. Է՛ն առաջ՝ մա՛րը... Ծարիրածը մօրուց կ'ըլլայ, կ'ըսէին մեր ծերերը... *Իշտէ* Զայն ալ ատա՛նկ է: Մար մը ուզէ նէ քսան օտարին քով Զայ՛ կը մեծցնէ իր զաւակը... կաթին հետ՝ հայերէ՛նն ալ կու տայ...: *Աքսան*... Զայը ե՛րբ ուրիշ լեզուներ չէ սորվեր ու խօսեր. ասորերէ՛նը կ'ուզես, պարսկերէ՛նը կ'ուզես, արաբերէ՛նը, թուրքերէ՛նը, ֆրանսերէ՛նը, գերմաներէ՛նը... *հէմ*՝ ասորիի, պարսիկի, անգլիացիի պէս... Անմնկ է թէ չէ...: Այո չես ըսեր նէ,– սրտնեղեցաւ ինծի:

– Շատ ճիշդ է,– ըսի:

– Օրը օրին, սանկ նանկ ապրուստ մը ունեցողներէն վախ չկա՛յ, *միւսի*,– կըրկին բարձրացուց ձայնը,– ասանկներն են Զայութեան արմատը չորցնողները:

– Այո՛, մեծ մասամբ,– վրայ բերի:

Անձրելը մեղմացեր էր: Այլեւս միայն կը նժար:

Մօտեցաւ դրան: Նայեցաւ դուրս: Եւ կրկին դառնալով մեզի,

– Կը ներէ՛ք,– ըսաւ,– գլխի ցաւցուցի... Էրթամ: Մինչեւ *փորդ տը Նէոյի* ժամ մը *մեթրո* ունին: Ժամը քանի՞ն է դաւ:

– Վե՛ց,– պատասխանեցի,– եօթնին տեղդ կ'ըլլաս:

– Նայէ՛, մինչեւ *քի* անձրելը չկեցաւ՝ դուրս չելանք: Դո՛ւն, ես, մեզի պէսները կէս-գոց դրան ետեւ կեցողներն էինք: *Ճահիլը* կը կենայ: Զազար ըսէ *քի* անձրել Է՛ կը թրջուիս, մտիկ կ'ընէ՞: Կը ձուլուինք կո՛ր պոռալը ատո՛ր կը նմանի... Կրնաս նէ աս գոց դրան էտելը կեցուր տղաքն ու աղջիկները...

Ձեռքը երկարեց կնոջս: Յետոյ՝ ինծի: Ափովը կրկին շտկեց մագերը եւ ելաւ դուրս:

Ելանք նաեւ մենք:

Ամպերը ցրուեր էին եւ իրիկնադեմի մարմրուն ցոլքեր վարդի շափրակներ կը նկարէին ամպերու յամեցող ծուէններուն վրայ...:

(*Թիւ 1, 1963*)

Ա. ԱՐՓԻՆԷ

ՈՒՐՈՒՂՆԿԱՐ

Մ մեն ամառ, գոնե շաբթուան մը համար կու գամ սա պանդոկը, թէ քիչ մը արեւ ծծելու, թէ ծովու օդ շնչելու եւ թէ մանաւանդ՝ սա գեղատեսիլ լիճին դրացնութիւնը վայելելու:

Այդ տարին, եկեր էի առանց նախապէս իմաց տալու, առանց նախասիրած սենեակս ապահոված ըլլալու, եւ ուրեմն ստիպուէր էի առնել որը որ տրամադրելի էր:

Գանգատելու պատճառ մը չունեցայ սակայն, երբ գայն տեսայ: Պատուհանիս առջեւ պարտէզի ընդարձակ տարածութիւնն էր՝ իր գեղեցիկ ածուներով: Կարմիր ծաղիկներու իրար սեղմուած անհամար գլուխներ, որոնց մէջ վառող ելեկտրական կտուցները՝ խոշոր կայծոռիկներու, կամ երկինքէն թափած աստղերու պատրանքը կու տային, երբ մուտք իջնէր: Քիչ անդին, լիճը փռուած էր իր սրսքփուն ջուրերով ու իր հայելիին մէջ գրկած շուրջի ամառանոցներն ու ծառերը:

Հասեր էի ուշ ատեն ու յոգնած: Շաբաթներու հեղձուցիչ տաքը կ'երեւի հազարաւորներ ծովափի էր նետած, այնքան խճողուած էր փայտուղին եւ ես կարճ պտոյտէ մը ետք՝ գացի հանգչելու:

Յանկարծ, քունէս ընդոստ արթնցայ: Մէկը կը խռկար, կը խռկար այնքան բարձր, այնքան մօտ, կարծես սենեակիս մէջ ըլլար...

Յուսացի որ ժամանակաւոր էր այդ. թէ շուտով, մարդուկը ով որ էր քով պիտի դառնար, կամ արթննար, բայց ի գուր...

Աղմուկը իր գանազան ելեւէջներով ու սուլոցներով կը շարունակուէր. կարծես այդ բաւական չէր՝ անոր վրայ եկաւ աւելնալ կնոջ մը պզտիկ հազը, որ հակառակ յոյսերուս՝ բոլորովին անվրդով ձգեց խոնփացողը...

Եթէ այսպէս շարունակուի, ինչպէս պիտի կարենամ հանգստանայ, ըսի մտովի ու փորձեցի պատճառը փնտռել:

Իմ եւ քովի սենեակը իրար միացնող դուռ մը կար երկու կողմերէն ալ կղպուած ու դրան տակի լայն բացութեան հետեւանքով էր հաւանաբար, որ ամեն ձայն ու աղմուկ այդպէս սենեակիս մէջ ըլլալ կը թուէր:

Լուսնալու մօտ քնացեր էի ու բաւական ուշ ելայ: Մեծ եղաւ հրճուանքս, երբ պատշգամ ուղղուեցայ ու տեսայ, թէ զիս անքուն պահողներուն դուռը բաց էր ու մեկնումի պատրաստութիւն կար ներսը...

Տրամադրութիւնս բարձրացաւ: Հանգիստ, քունս խանգարող պիտի չըլլար այլեւս...

Որքան շուտ լաւատես կը դառնանք...

Խոր ու աղուոր քունով մը քնացայ այդ գիշեր. քնոտ էի ու լաւ քնացայ, բայց սենեակս կիսամուկ էր տակաւին, երբ ձայնասփիւռ մը արթնցուց զիս: Կոպերս կը մերժէին բացուիլ ու անիծեալ ձայնասփիւռը պետք եղածէն աւելի բարձր՝ իր քաղաքական լուրերով սենեակիս մէջն էր կարծես...

Յանկարծ, աչքերս լայնօրէն բացուեցան եւ ժպիտը տարածուեցաւ դէմքիս: Կարծես ճառագայթ մը ինկաւ հոգիիս մէջ ու իր ջերմութիւնը հրճուանքի այիքներով ողողեց Էութիւնս:

– Շտկէ սաւիկա, Խոսրով, շտկէ սաւիկա, դը, դը, դը կ'ընէ կոր, *Էճըսթ* ըրէ...

Օ, քաղցրութիւնը, քաղցրութիւնը մայրենի լեզուիդ, նոյնիսկ, իր աղճատուած վիճակով...

Քաղցրութիւնը, օտարութեան մէջ, օտարներու մէջ յանկարծօրէն յայտնուող արիւնակիցներուդ, ցեղակիցներուդ:

– Յէ՛,– կը հարցնէ մարդը,– Յէ՛...

Կի՛նը կը կրկնէ, յայտնի է, որ ամուսինին ականջը ծանր է ու խօսակցութիւնը կը շարունակուի աւելի բարձր:

Մտիկ կ'ընեմ, ձեռքերս գլխուս տակ ու աչքերս առաստաղին, ուր հետաքրքրական ոչինչ կայ:

– Մի՛ ածիլուիր, ճանըմ, երէկ ուշ ատեն ածիլուեցար, վաղը առտու կ'ածիլուիս... Օդին համար ինչ ըսաւ...

– Աղուոր է, աղուոր, շատ աղուոր օդ է, վաղն ալ աղուոր պիտի ըլլայ, կենամք *սճասպա*, խոպոտ ձայն մըն էր, հաւանաբար, բարի ու հաճոյակատար մարդուկ մը,– *հայտէ՛* Էլիր, Էրթանք *քոֆի* մը խմենք, մեր Արաքսին ճկ գիտէ քանիին պիտի Էլլայ,– կը լռէ պահ մը ու կ'աւելցնէ,– շիտակը բան մը ըսեմ, Էս ատ տղան երբեք չհաւնեցայ... մենք պիտի ձգենք Էրթանք, աղջիկը շաբաթ մը մինակը աստեղ...

– *Չօճուխ* չէ եա, ըրածը գիտէ:

– Ինչ գիտնամ...

– Մեղայ Տէր, սեպտեմբերին քսանմէկ տարեկան պիտի ըլլայ, խելքը գլուխը հասած աղջիկ է ալ...

– Անանկ մը ըսիր՝ գիտես *քի* քառսունմէկ տարու պիտի ըլլայ:

– Էհ, հապան... Էս ատ տարիքին քեզի երկու զաւակ տուած էի...

– Է՛, ան *վախըթը պաշխա* էր, Արաքսին ինծի համար *չօճուխ* է *տախա*...

– Մեղայ Տէր Աստուած, խենթեցմը, մարդ. Ալեքսը քսաներկուսին չամուսնացան, Վարդուհիս քսանին: Անոնց համար ատանկ բան չըսիր... Յան, Ալեքսին համար իրար անցանք, գիշեր ցորեկ *տէրտ* ըրինք, քուն չքնացանք, լացինք, ամմա, աղջիկը օտար ըլլալուն համար էր, չէ *քի* կարգուիլ ուզելուն: *Մութլախ*, Էրկուքս մինակ պիտի մնանք *տէյի* վախեղ Է...

– Ճանըմ, տղան քիչ մը աչքը բաց բան կ'երեւայ կոր, ինտոր ըսեմ, հանած վարած, աչքերը ֆըրըլ ֆըրըլ կը խաղան կոր, մեր Արաքսին մաքուր աղջիկ է, թեւերնուս տակը մեծցած աղջիկ, ինչ գիտնամ...

– Քանի որ հարկաւ ճարպիկ, աչքը բաց տղայ է. անանկ չըլլար նէ ինտո՛ր հոս պիտի գար, *հէ՛մ* գոլէճ էրթար, *հէ՛մ* աշխատեր պիտի: Աս տարի դպրոցը կը լմնցնէ. մենձ ընկերութեան մը մէջ գործը պատրաստ սեպէ: Փառք տուր *քի* հայ տղայ է, հայ մեծցած տղայ է, հայ աղջիկ կը փնտռէ...

Յան, հան, հարկաւ, հարկաւ...

Ժամանակ մը լռեցին:

– Խոսքով, սանտրս վա՛ր ինկաւ նայէ... Սըւոր տակը գնաց կարծեմ... Յան, հան, հող... Ամէն տարի աս մեր բովի սենեակը Արաքսիին կու տային, սա օրթայի դուռը բաց կը ձգէինք, իրարմէ լուր կ'ունենայինք...

Կ'ակնարկուէր սենեակիս. պատճառ եղեր էր իրենց անջատման:

Ակնարկս ինկաւ դրան ու յիշեցի Աւետիս Ահարոնեանի «Լռութիւն»ը, փորձութեան մղող բանալիի ծակը: Եւ որպէսզի Ահարոնեանի հերոսին «յանցաւոր անհամեստութիւնը» չգործեմ՝ մեր երկուստեք ապահովութեան համար, առաջին գործս եղաւ թուղթի կտորով մը խցել այդ ծակը:

– Անգին, Արաքսիին սենեակին թիւը ինչ էր...

– Տասը, դիմացի կարգին վրայ է. ձայն տալու պէտք չկայ, անիկա ուշ պառկած է, տակաւին կը քնանայ...

Լռեցի դրան բացուիլը. այն ատեն, ես ալ դուրս ելայ ու պատշգամ ուղղուեցայ:

Մարմնեղ կին մը ու ճերմակ մագերով, բարի աչքերով մարդուկ մը անցանքովէս:

Դիտեցի լիճը: Ջուրերը անհանդարտ էին հովն ու ամպերը իր հայելին փշրած, խորտակած: Բաղերն ու սագերը խմբովին իջեր էին լոգանքի, թերեւս ալ ի խընդիր կերի... Սագերը կը մխրճէին իրենց գլուխները ջուրին մէջ, մինչ բաղերը՝ պոչերնին միայն օդին՝ ինձ համար անյայտ բաներ կը փնտռէին հոն վարը:

* * *

Թիւ տասը սենեակէն Արաքսիին ելլելն ու մտնելը մէկէ աւելի անգամներ տեսեր էի արդէն: Տեսեր էի զինք՝ իր լոգանքի տարագով. տեսեր էի զինք՝ իր երեկոյեան արդուզարդով:

Փոքրակազմ, հայու խոշոր աչքերով, նուրբ ու սիրուն աղջիկ մըն էր: Բայց չէի տեսեր տակաւին իր բարեկամը, որուն նայուածքը շատ ալ վստահութիւն չէր ներշնչած աղջկան հօր, որ հաւանաբար, ամենէն առաքինի, ամենէն իտեալ ամուսինը միայն արժանի կը նկատեր անոր:

Բացառապէս աղուոր օր մըն էր: Մեղմ՝ գեփիւմ մը, ջինջ երկինք, խաղաղ ծով:

Նստեր էի փայտուղիի նստարաններէն մէկուն առանձին ու կը դիտէի վարը, աւագին վրայ արեւ ծծողները, ջուրը մտնողները, խաղացող երեխաները:

Նախորդ օրուան պէկոծ ովկիանոսը խաղաղած էր. գորշ ջուրերը մաքրուէր

Էին ու ծաւի պայծառ աչքեր յիշեցնող ջինջ կապոյտով մը փռուեր էին մեր առջեւ:

Լսողութիւնս լարեցի. հայերէն խօսակցութիւն մօտս. միջին տարիքի երկու զոյգեր էին:

– Ախ, աս ինչ աղուոր հանդիպում, մենք ալ ճիշդ հիմա ձեր խօսքը կ'ընէինք... Ինչպէս էք, նրբ եկաք, տղաքն ալ եկամծ են...

– Պզտիկը հոս է, մեծը ամիս մը առաջ ամուսնացաւ... Հապա՛, տուն տեղ եղաւ, ես ալ կեսուր եղայ...

– Հայ է, աղջիկը հայ է...

Սրտցաւ հայուն անխուսափելի հարցումը:

Չեմ լսեր պատասխանը, բայց կը տեսնեմ դիմացինը, որ գլուխը օրօրելով՝ կը յարէ.

– Հայ, հայ, ամէն տուն քանի մը հատ օտար մտեր է հիմա...

Ու կը քալեն միասին:

Աւագին վրայ խումբ մը երիտասարդ աղջիկներ ու տղաք կ'աղմկեն:

Հայերէն երգի պատառ մը ուշադրութիւնս այն կողմ կը հրաւիրէ: Աղջիկ ու տղայ իրարու ձեռքէ քաշելով ոտքի կը ցատկեն իսկոյն ու պարի եղանակը իրենց շրթներուն՝ կը վազեն ջուրը:

– Բաբայի, Գեղան,– ձեռքով կը կանչեն ետեւ մնացող զոյգը, որ կը մերժէ իրենց հետեւի:

Կը դիտեմ այս վերջինները ու իսկոյն կը ճանչնամ Արաքսին: Նուրբ, շատ նուրբ եւ շատ սիրուն: Դէմքը արեւէն կարմրած, մինչեւ ուսերը հասնող մուշ շագանակագոյն մագերը ականջներուն ետեւ, թաւշեայ մորթով ու կլոր աղուոր գիծերով:

Տղան՝ մագոտ ու մկանտ, դէմքը պրոնզի գոյն առած, խոշոր-խոշոր սեւ ու փայլուն աչքեր ու կարճ, շատ կարճ խուզուած մագեր:

Կը թուէր վերջին ծայր եռանդուն: Գրեթէ միշտ ինք էր խօսողը: Աղջիկը լուրջ ու քիչ մը մտացիր, մտախոհ ու անմեղ աչքերով կը դիտէր զայն ու երբեմն կը ժպտէր: Այն ատեն՝ ամբողջ դէմքը այնպիսի լոյսով մը կը վառէր, այնպէս կը կենդանանար, կարծես գեղեցիկ դիմանկար մըն էր, որ տղուն աչքերուն ջերմութեան տակ յանկարծ կեանքի կու գար՝ անդիմադրելի գրաւչութեամբ մը զայն կախարդելու համար...

Աղուոր, շատ աղուոր զոյգ մը, խորհեցայ ու հրճուեցայ:

Աղջիկը թեւեւ այս ավերուն վրայ ծնած, բայց աւանդապաշտ ծնողքին թեւերուն տակ մեծցած, պարկեշտ հայ աղջիկ. տղան՝ հայահոծ շրջանէ եկած, ազգային կրթութեամբ, ազգային գիտակցութեամբ թրծուած, հայութեան բոցը իր մէջ, բոց մը, որմէ հաւանաբար կայծեր պիտի իյնային սա աղջկան Էութեան մէջ, սա աղջկան, որ Արաքսի էր մկրտուած, բայց դպրոցի սեմը ոտք դրած օրէն Բաբայի էր փոխուած... Ու... երկուքը միասին պիտի կազմէին հայաբոյր աղուոր բոյն

մը, ուր հայ ձագուկներ պիտի մեծնային ու այդպիսիներով պիտի երկարածը-
ւեր կեանքը գաղութին:

Այսպէս խորհրդածեցի ես այն ատեն երջանկօրէն ու երկար մնացի նստա-
րանիս վրայ: Հորիզոնն ու ամպերը հետզհետէ մանիշակի երանգներ ստացան
ու աւագը ոսկի ցոլքեր: Քանի մը ճերմակ գբօսանաւեր կը կտրէին խաղաղ ծո-
վուն ջուրերը ու մեղմ ալիքներ կու գային դէպի ասփը քնքշօրէն սիրերգի մը քաղց-
րութեամբ, մինչ խարակներն ի վեր ջուրը կը նետուէր գուարթօրէն, սերէն
խենթեցած պատանիի մը նման:

* * *

Տարիներ են անցեր հիմա այն օրէն ասդին ու նստած եմ ես հոս կրկին: Քովս՝ բա-
րեկամուհի մը ու անոր տարեց դրացին: Կը դիտենք աւագի վրայի բազմութիւնը:
Սիրաբանող գոյգեր, արտառոց մարմիններ, խաղացող մանուկներ, աղաւնիներ
ու ճայերու երամներ:

– Աղջի՛ Արուս, տէ, էնտեղ նիստող մեր Անգինի աղջիկ Րաքսին չի՞...

– Այո՛,– կը պատասխանէ բարեկամուհիս:

Կը նայիմ ցոյց տրուած կողմը, աւագին վրայ նստող կիներուն. երեքն ալ ան-
ծանօթ են ինծի, բայց կը թուի, թէ մին տեսած եմ տեղ մը...

Կը պրպտեմ յիշողութիւնս... Մշուշ... մշուշ:

«Անգին, Րաքսի», կը կրկնեմ մտովի ու կրկին պրպտուք... Ո՛վ է...

– Ո՛րն է Րաքսին,– կը հարցնեմ:

– Գլխարկովը,– կ'ըլլայ պատասխանը:

Արաքսին... Աչքերը մարած, պզտիկցած, թարմութիւնը բոլորովին կորսուած,
կարծես միջին տարիքի կին մը եղած ըլլար...

– Ժամանակին մեզի դրացի էին,– կը շարունակէ բարեկամուհիս,– շատ սի-
րուն աղջիկ էր, շատ, որքան փոխուած է հիմա... Ամուսինէն բաժնուած, երկու
զաւակները առած՝ հեռացած է տունէն:

Կարծես քարացայ: Յիշեցի իր հայ բարեկամը, որուն հետ ալ ամուսնացաւ
անշուշտ: Յիշեցի հօրը խօսքերը, հօրը վախերը անոր նկատմամբ ու դիտեցի
Րաքսին...

Պատմեցի բարեկամուհիին անոր ու ծնողքին հանդիպիլս տարիներ առաջ:

– Մեղք եղաւ, շատ մեղք, աղուոր անուշ աղջիկ էր Րաքսին, ով ուզէր կրնար
առնել, բայց սիրտը այդ անպիտան օտարին էր տուէր ու հայրը մայրն ալ չէին
գիտեր: Համարձակութիւն ալ չունեցաւ ըսելու ու օր մըն ալ այդ տղուն հետ փա-
խաւ...

– Հայրը որ լսաւ, վրէն կաթուած իջաւ, քանի մը ամիս ետք մեռաւ,– կ'աւելցը-
նէ դրացուհին:

– Բայց հայ տղու հետ էր, երբ ես տեսայ...

– Հա՛, այո, Գեղամը: Չէ, չէ, չեղաւ անիկա. կ'երեւի փորձեց, բայց չկրցաւ մտեր-

մանալ, ինք հոս մեծցած, սիրտն ու միտքը այդ օտարին, Գեղամը անդիի կողմեն, ուսումնական հայ տղայ:

– Ես օր տեսայ, ըսեցի Էտ գործ չեղնիր...

– Որքան փոխուած է, չէ... Ո՛ր գացին, ինչ եղան անոր աղուոր աչքերը... Ամուսինը շաբաթը քանի մը օր խմած տուն կու գայ ու կը ծեծէ ալ եղեր... քաշուելիք բան է...

– Ինչ եղաւ միւսը, հայ տղան, Գեղամը ըսիր...

– Իրաւ չեմ գիտեր, վստահ եմ ան ալ Բաքսիին աղուորութեանը միայն զարնըւած էր, հոգեկան կապ մը չեմ կարծեր գոյութիւն ունէր... Անոնք հայ են անշուշտ եւ հայ ալ կը մնան, թէեւ անոնց մէջ ալ այստեղիներէն աւելի շատ ու աւելի շուտ օտարանալու մարմաջ ունեցողներ չեն պակսիր...

Կը դիտեմ ովկիանոսը, որ այնպէս ալեկոծ է, ալիքները խլացուցիչ աղմուկով ու սպառնագին վայրագ գոռոցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ ջուրը կ'եռայ աւագին վրայ: Այն աւագին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ բոյնի ուրուանըկարն էի տեսեր...

(Թիւ 3, 1970)

ԺԻՐԱՅԻՐ ԱԹԹԱՐԵԱՆ

«ԱՅՍՏԵՂՈՒԱԼԸ ՍՈՒՏԱԿԱԼ Է,
ՍՈՒՏԱԿԱԼ»

Լ
իբանան:

Երբ տակաւին գեղածիծաղ կը կոչուէր:

Երբ տակաւին Արեւելքի այդ առաջին դուռներու տարերային չես գիտեր ինչ արկածով այդպէս տեղ բռնած, կամ թէ սադայելական ուրիշ ինչ դիտումներով դրախտի նման ծպտուած անէծքի մը ծնունդ կարծէք այդ հողաշերտը կը շփոթուէր... Փարիզներու հետ, կանաչ, ժպտուն, բարեկիրթ... Չուիցերիոյ հետ: Երբ տակաւին, երբ տակաւին...

Եւ տակաւին Լիբանանի լեռները: Միջերկրականի կապոյտ, վճիտ ջուրերու այդ վերջին ափը մինչեւ իրենց փէշերը սփռած, կապոյտ, թափանցիկ մշուշներով պարուրուած լեռները եւ անոնց լանջին կատարներուն՝ պուրակներու պէս ցանաւած փայլուն, պսպղուն ամառանոց գիւղերը: Ջերմաչափի առաջին իսկ ուստումներուն հետ, ամառը դեռ Պէյրութ քաղաքը իր հեղձուցիչ թոնիրին մէջ չգրկած, պէյրութցիին ինքն ալ ուստում կատարած կ'ըլլար դէպի լեռները, հազարներով մեթր բարձրութեամբ անոնց լանջերու թառած ամառանոց գիւղերը: Անկասկած, որ պէյրութցիին հետ օդափոխութեան այդ բարձրաբերձ վայրերը փութացած կ'ըլլար իր օրերը, ժամերը, անոնց յետին պահերը մինչեւ հրճուանքով ու բերկրանքով լեցուն տեսնելու լիբանանցիին անմրցելի... հաճոյամոլութիւնը նաեւ: Եւ այլեւս երգ ու նուագ, պար ու խայտանք, երգահանդէս ու պարահանդէս, հանդէս... հանդէս անսպառ: Կեանքը կ'եռար, կը խայտար ամառանոց այդ գիւղերուն մէջ՝ ցերեկներու, գիշերներու ամբողջ երկայնքին: Պար ու նուագ, խնձոյք, խրախճանք, զուարճութիւն ու ցնձութիւն անյագ, անյագուրդ:

Այդպէս էր Լիբանան, ամառներով, ձմեռներով, բոլոր, բոլոր եղանակներով: Առակագիր Լաֆոնթէնի ճպումին երանելի անհոգութիւնը յիշեցնող պարահանդէս, երգահանդէս, տօնահանդէս Լիբանան:

Այդ տարի, կանխահաս տաքի վայրի ալիք մը պատճառ դարձած էր, որ մենք ալ բոլորին պէս աճապարենք ամառանոց բարձրանալ, գիւղի մեր տունը, սովորականէն աւելի կանուխ վերագտնելու համար մեր ամառնային ապրելակերպը: Ամառնային եղանակին պէյրութցիին դէպի լեռները տեսակ մը վաչկատունի կամաւոր գաղթը, տաքէն փախչելու, զով ու մաքուր օդը փնտռելու, օդափոխութեան եւ այլ պատրուակներու կողքին ու այդ պատրուակներէն անկախ, կեան-

քի, կենցաղի, ապրելակերպի փոփոխութեան հնարաւորութիւն մը կ'ընծայէր: Ամբողջ տարի մը քաղաքին ճնշիչ, այլեւս տրտում ու տաղտկալի ամօրեայէն ազատագրուած կ'ըլլար այսպէս պէտքերը եւ երեք ամիս, երբեմն նոյնիսկ աւելի, քաղաքին հետ կապը պահելով հանդերձ, գիւղը ապրելու, գիւղական կեանք վարելու պատրանք կ'ունենար: Եւ լեռներուն մէջ մնացած էին, կային տակաւին քաղաքակրթութեան ախտերէն դեռ բոլորովին չվարակուած, չխաթարուած անկիւններ, ուր մարդ կրնար ինքզինքին այդպէս հանդարտ ու նախնական կեանքի մը պատրանքը պարգեւել: Յամենայնդէպս, խխունջի մը պատեանին պէս ինքն իր վրայ ոլորուող ցից, ուղղաձիգ այդ լեռնային ճամբաներով իր կոնակը անգամ մը-երկուք Պէտրոս քաղաքին դարձնելէ ետք, քաղաքացին կը վերանորոգուէր կարծէք, նոր հորիզոն կը բացուէր անոր դէմ եւ տիեզերքը կը փոխուէր:

Այդ տարի, ուրեմն, Յունիսի դեռ երկրորդ կեսերուն, բարձրացած էինք ու հաստատուած գիւղ եւ յանձնուած՝ ամառնային մեր տոմարներուն: Մեր բոլորէն աւելի, բոլոր տնեցիներէն ամառ ամառնային օրացոյցին ինքզինք յանձնած էր վեց տարեկան աղջիկս: Ինքնաշարժէն հագիւ ոտքը վար դրած, ամանց ոչ մէկուն խօսքը մտիկ ընելու, թէ՛ «աղջիկս, քիչ մը սպասէ, տեղաւորուինք անգամ մը», գացած ու տան ետեւը իբրեւ մթերանոց ծառայող սենեակին մէջ գտած էր իր անձնական հեծելանիւղ ու խոյացած դուրս, դեպի դաշտերն ու պարտեզները, երկարատեւ արգելափակուած եղջերուի մը պէս: Քաղաքի շէնքերէն մէկուն հինգերորդ յարկի նեղ սահմաններուն մէջ տարի մը ամբողջ կալանաւոր մնացած բնակիչի իր կացութեան վրէժը կարծէք կը լուծէր այդպէս: Շաբաթ մը չանցած՝ աղջկանս ընկերուհի Սիլվայենք ալ եկած էին գիւղ ու տեղաւորուած մեր պարտեզին կից գտնուող իրենց բնակարանին մէջ եւ, այդպէսով, ամառնային մեր կեանքը, աղջկանս կեանքը մասնաւորաբար, ամբողջական իր ընթացքը վերագտած էր: Արեւոտ, պայծառ, բնութեան կանաչ ու հոգատար ծոցին մէջ անհոգ, անկաշկանդ ու անվախճան զբօսանքի ու զուարճութեան շրջան մըն էր, որ կը սկսէր աղջկանս ու իր ընկերուհիին՝ Սիլվային համար: Եւ այլեւս ճշուողիւն մը, բզզիւն մը մեր երկուքիս տուներու չորս բոլորտիքը: Առաւօտեան ամառնային իսկ ժամերէն մինչեւ իրիկուան վերջին սահմանը վազվզուք մը, արշաւ մը՝ մէկ տունէն միւսը ու դադար չունեցող իրարանցում մը մեր եւ Սիլվայենց պարտեզներուն մէջ: Այնքան՝ որ պարտեզները իրարմէ բաժնող ցանկապատին որոշ մէկ մասը քանդուած էր, գետնին հաւասար ճամբու վերածուած, սակայն մեզմէ ոչ մէկուն միտքէն չէր անցներ վերականգնել զայն...

Այսպէս էր սկիզբէն ի վեր: Այն սկիզբէն, երբ աղջիկս ու Սիլվան այլեւս ոտքի կանգնեցան, քայլել սկսան:

Այդ տարի, սակայն, քաղցր, լուսաւոր ամառնային այդ եղանակը իր միջօրէին հագիւ թէ հասած, աղջկանս մանկական գուարթ, անստուեր օրերուն վրայ պղտորութիւն մը, սեւ շուք մը ինկաւ: Ամերիկա երթալու, Ամերիկայէն գալու զրոյցներ իրապարակ ինկան:

Իրիկուն մը, քաղաքէն դարձիս, վազեց դէմս աղջիկս եւ մէկ շունչով.

– Ամերիկան հեռո՞ւ է, պապա...

– Յըմմ...

– Պէյրուէ՞ն ալ հեռու է...

– Ինչո՞ւ, ի՞նչ կայ, աղջիկս...

– ... Եղեր Սիլվայենք Ամերիկա պիտի երթան,— ըսաւ աղջիկս տեսակ մը անհաւատութեան, արիամարիանքի շեշտով: Եւ կարճ լռութենէ մը ետք.

– Մենք ե՞րբ կ’երթանք Ամերիկա, կ’երթանք մենք ալ, չէ՞, պապա...

Սկիզբները մրցումի պէս, մարտահրաւէր կարդալու պէս բան մըն էր Ամերիկա ճամբորդելու այս հարցը: Ինչպէ՞ս թէ Սիլվան կ’երթայ եւ ինք չի կրնար: Ամերիկան ինչ է որ, ինք եթէ ուզէ իր պապան զինք ուրտեղները կը տանի...: Սակայն շուտով կնճռոտեցան հարցերը, մթագնեցաւ աղջկանս առօրեան: Սկիզբի արհամարիտ, հպարտ կեցուածքը տեղի տուաւ, փոխուեցաւ մանուկի իր տակաւին վտիտ պատեաններուն մէջ պարունակուի, լուծուիլ չկրցող մէկ շատ թանձր անձկութեամբ: Աղջկանս առօրեային մէջ Ամերիկան դարձաւ մտասեւեռում, տեսակ մը խուլ, յամառ մտատանջութիւն: «...Սիլվայենք կ’երթան... Սիլվայենք կ’երթան... եղեր ան պիտի չգան... ինչո՞ւ պապա ինչո՞ւ Սիլվայենք...»:

Կեսօրէ ետք մը, դէպի մօտակայ բլուրները մեր կատարած սովորական պտոյտներէն մէկուն ընթացքին եւ պտոյտի ողջ տեւողութեան սա խօսակցութիւնը տեղի կ’ունենար աղջկանս ու Սիլվային միջեւ.

– Սնտուկները շինեցինք, գալ ամիս կ’երթանք...

– Ի՞նչ այսինքն, պապայիս կ’ըսեմ՝ մենք ալ կ’երթանք...

– Դուք տուներնիդ, պարտեզնիդ ծախեցի՞ք մը որ... սնտուկներնիդ շինեցի՞ք... նաւ նստելու թուղթերնիդ ամի՞ք...

– Է՛հ... ի՞նչ կայ որ... մենք ալ վերջը կը շինենք... վերջէն օթոյով կ’երթանք... պապաս մեզի օթոյով ամէն տեղ կրնայ տանիլ...

– Խե՛նթ... չ’ըլլար, օթոյով չ’ըլլար... նաւ պետք է, նա՛ւ...

– Կ’ըլլա՛յ... պապաս կը տանի՛,— կը սրդողէր աղջիկս:

– Օթօ չ’ըլլար ըսի քեզի,— կը յամառէր Սիլվան յաղթական,— Ամերիկա ծովին վրայէն կ’երթան, նաւի թուղթ պետք է ամենա...

Եւ կարծէք թէ անդրադառնալով ընկերուհիին պատճառած ցաւին եւ զայն մեղմելու մտքով՝

– Դուն հոգ մի ըներ,— կ’ըսէր Սիլվան, հի՛չ հոգ մի ըներ, դուն չես գար նե՛՝ ես նորէն կու գամ... գալ տարի շուտ մը կու գամ... գալ տարիէն չէ նե՛՝ տասը տարիէն շուտ մը կու գամ...

– Տասը տարի՞,— կը զարհուրէր աղջիկս,— ես այն ատեն ծեր կ’ըլլամ, մեծ մամա կ’ըլլամ...

– Չէ՛, ծեր չէ... շուտ մը կու գամ... Ամերիկա ֆիւզէ կայ, անոր հետ լուսին կ’երթան... ես կը նստիմ-կու գամ...

Իրիկուն մըն ալ Սիլվային մայրն ու մեծ քոյրը արդէն «մնաք բարով»ի եկան: Շուտ ընկճուած կ'երեւէին երկուքն ալ: Կարծէք յանցանք կը գործէին Լիբանանը ձգելով: Չէին ըսեր ինչ, սակայն դիւրաւ կը կռահուէր, որ բան մը պատահած պիտի ըլլար ընտանիքին մէջ, ստիպելով այսպէս, որ երկրէն հեռանան:

– Ի՞նչ ընենք,– կ'ըսէր Սիլվային մայրը ճարահատ մէկու մը շէտով,– ի՞նչ ընենք... բախտերնիս այսպէս բերաւ...

Այդ օրերուն Լիբանանը չէր ձգուէր: Անմիտներու մեծաւորը պիտի ըլլար մարդ, կամ չես գիտեր չըսուող, չխոստովանող ուրիշ ինչ պատճառէր դրդուած՝ Լիբանանէն մեկնելու համար: Յրաժարելու համար կամովին այդ այնքան կապոյտ ու հրապուրիչ երկինքէն, այնքան հրաշալի, հաճոյալի կեանքէ, կենցաղէ: Այդ օրերուն աշխարհի բոլոր Եւաներուն ամենէն հիւթեղ ու հրապուրիչ... խնձորներն անգամ դժուար թէ կարենային լիբանանեան դրախտէն ինքզինք արտաքսել տալու պատրուակ դառնալ:

Շաբաթ առտու մը, խոշոր քամիոն մը եկաւ, բեռցուց Սիլվայենց սնտուկներն ու բոլոր պայուսակները ու ելաւ-գնաց: Իրենք ալ մայրը, մեծ քոյրը, եղբայրն ու ինք, նստեցան ուրիշ ինքնաշարժ մը եւ «մնաք բարով... մնաք բարով... պայ-պայ... պայ-պայ...» ըսին, պոռագին ու ելան-գացին:

Սիլվան մեկնեցաւ: Գնաց պզտիկ, կարճատեւ պտոյտի մը երթալու պէս: Սիլվան գնաց, ինքնաշարժին պատուհանէն շուար, շմորած աղջկանս երեսին պռնայով:

– Նորէն կու գա՛մ... նորէն կու գա՛մ... շուտ մը կու գա՛մ:

Յաջորդ երկու օրերուն, իրենց կատուն գիշեր-ցերեկ մլաւեց, նստած գոց դրան դիմաց: Խեղճ կենդանին չկրցաւ երբեք գիտնալ, թէ ինչո՞ւ այդպէս տեսաբար դուռ ու պատուհան գոց կը մնային: Եւ այլեւս կարծէք ճարահատ, ցերեկ ու գիշեր, գիշերները մանաւանդ աղիողորմ մլաւիւններ արձակել սկսաւ: Երրորդ օրը ալ չկրցանք դիմանալ եւ այդ գիշեր, երբ դարձեալ գոց մնացող պատուհաններուն փեղկերու դիմաց կատուն այդպէս մլաւել սկսաւ, տեսայ, որ աղջիկս ալ մահճակալին մէջ անքուն նստեր էր...: Երբ զիս տեսաւ «Պապա,– ըսաւ,– միմին մեղք է, շատ կու լայ, Սիլվային կ'ուզէ, հաճիս, առնենք մեր տունը բերենք»: Գացինք գիշերով «Միմի, Միմի» կանչեց աղջիկս: Կատուն ճանչցաւ զինք, եկաւ մօտը եւ քսկոտուիլ սկսաւ: Առինք-բերինք մեր տունը, որդեգրեցինք զինք եւ ամրան վերջաւորութեան մեզի հետ քաղաք տարինք:

Եւ այլեւս նամակ, նամակներ... «Սիրելի ընկերուհիս...»: Առաջինը ստացանք զիւղէն մեր իջնալէն երկու թէ երեք շաբաթ ետք, երբ բոլոր դպրոցներու կարգին աղջկանս դպրոցն ալ վերաբացուած էր եւ դպրոցական մանուկներու հետ օրերն ալ հագած էին իրենց սովորական տարազը: Մէկ տարբերութեամբ, որ այլեւս Սիլվային հանդիպիլ չկար՝ զինք միասին դպրոց տանելու համար: Եւ ուրեմն, այդ օրերէն մէկուն ընթացքին, տեսնես յանկարծ պահարան մը Ամերիկայէն, աղջկանս անունը վրան մեր հասցէին ուղղուած: Պահարանին մէջ մանկական

անվարժ, անհաւասար գիրերով... «Սիրելի ընկերուհիս», եւ ամբողջ երկու էջ անհաւասար, ծուռ տառերով, բեւեռագիր կարծեք ծածուկ գրութիւն: Տեսնելու բան էր աղջկանս ուրախութիւնը: Ուրախութենէն աւելի՝ հպարտութիւնը: Ինք առանձին նամակ կը ստանար, մեծ մարդու կարգին կ'անցնէր: Չուզեց սկիզբը ոչ ոքի յանձնել, սակայն հեգելէ, անվերջ ճգնելէ, ընթերցանութեան ամբողջ իր գիտութիւնը գործ դնելէ ետք, կրցաւ վերջապէս երեւան բերել... «Սիրելի ընկերուհիս»: Մնացեալը... հետեւեալը կարդացինք.

Այն օրը Պէյրութ գացինք խոշոր նաւ մը նստեցանք նաւը վերջը մամայիս գլուխը բռնեց: Վերջը ուրիշ շատ աւելի խոշոր նաւ նստանք լողաց լողաց նաւը շատ լողաց շատ շատ քալեցինք Ամերիկա հասանք: Այստեղ գալը շատ հեռու է մէկ հատ նաւ չի բաւեր երկու հատ ալ չի բաւեր: Խոշոր նաւէն վերջ մէկ հատ օթօ ալ նստանք շատ հեռու տեղեր գացինք: Այստեղ ես դպրոց կ'երթամ անգլերէն դպրոց շատ աղուոր խոշոր դպրոց է բայց մեր դպրոցը աւելի աղուոր էր... միշտ քեզի կը մտածեմ շուտ գրէ: Ընկերուհիդ Սիլվա:

Այս նամակէն ետք, Ամերիկան դարձեալ սկսաւ աղջկանս միտքը չարչարել:

– Առի՞ր, պապա, նաւու տոմսակ առի՞ր մեզի ալ,— սկսաւ դարձեալ հարց տալ տեւաբար:

Չուզացաւ «Սիրելի ընկերուհիս» շարքին երկրորդ համարը: Մանկական նոյն անվարժ մատներով, անհաւասար ու ծուռ տողերով երկու լման էջ դարձեալ: Մասնաւոր ճիգ պէտք եղաւ դարձեալ, ծածկագիր, բեւեռագիր կարդալ կրցողի գիտութիւն նսեւ՝ «Սիրելի ընկերուհի»-իս տակը շարուած միւս տողերը կարդալու համար: Այս նամակը օրերով մեր ձեռքը մնաց: Կարդացինք, դարձեալ կարդացինք, անոր քանի մը տողերը մասնաւորաբար: Կարծեք աղջիկը չէր հաւատար եւ կամ կ'ուզէր աւելի ապահով ըլլալ Սիլվային ըսածներուն:— Դպրոց կ'երթամ, դպրոցէն կու գամ — առօրեայի իր կեանքին մէկ պատկերը տալէ ետք, Սիրելի ընկերուհին սա շատ դաժան հաստատումները կը կատարէր. «*Այստեղ հայերէն չկայ հայերէն խօսիս նէ վրասդ կը խնդան*»: Եւ քիչ մը անոյն. «*Այստեղ աղուոր չէ, ընկեր չես կրնար գտնել ամէնքն ալ ուրիշ տեսակ են: Մեր այնտեղը ինչքան աղուոր էր. շատ շատ աւելի աղուոր էր*»: Եւ, վերջապէս՝ «*Այստեղ ուրիշ տեսակ է, այստեղ հեռու է շատ շատ հեռու է այստեղ գալ չ'ըլլար: Դուն մի գար սիրելի ընկերուհիս, ես կու գամ, ես նորէն կու գամ: Մեծնամ նէ շուտ մը հոն կու գամ*»:

Սիլվային այս նամակը՝ Ամերիկայի մասին աղջկանս մէջ ծնած այդ տեսակ մը հմայքը, անդիմադրելի կանչը եթէ երբեք բոլորովին չքանդեց, բայց կարծեք թէ տկարացուց պոտորեց:

– Պապա, այդտեղ հեռու է եղեր, շատ, շատ հեռու է եղեր,— սկսաւ ըսել եւ ինչ որ աւելի նկատելի էր, երկար ատեն, գրեթէ այլեւս երբեք մեզի համար ալ «նաւի տոմսակ» առնելու խնդիր չստեղծեց:

* * *

Ամերիկայի համար եթե տակաւին «նաւի տոմսակ» գնելու փափաքներ մնացած էին աղջկանս մօտ, անոնք ալ մէկէն անեացան, չքացան Կաղանդի առթիւ Սիլվային դրկած վերջին նամակով: Հսկայ ծաւալով փայլուն, պսպղուն ամերիկեան կաղանդի քարթ մը, որուն մէջ հսկայական գիրերով «Շնորհաւոր Նոր Տարի» մը դրուած կար, «Ընկերուհիդ Սիլվա» շատ յաւակնոտ ստորագրութեամբ, որուն սակայն ընկերանար երկու լման անշուշտ էջ այդպէս, մանկական, անկարգ գրութիւն դարձեալ: Նամակին գլուխը անշուշտ բազմած էր դարձեալ անխուսափելի «Սիրելի ընկերուհիս», որմէ ետք, իրաւ է, մանուկի շատ անվարժ լեզուով ու ձեռով, սակայն խոշոր մարդու մը նոյնիսկ սիրտը բզկտել կրցող հետեւեալ տողերը.

«Կաղանդը եկաւ նորէն: Հիչ չեմ ուզեր այս տարի: Այդ իրիկունը հոն պիտի չըլլամ քանի որ ինչ ընեմ չեմ կրնար գալ: Այստեղ գիտնաս որքան հեռու է: Շատ շատ հեռու է: Ինչ աղուոր էր մեր Կաղանդ Պապան: Անիկա իրաւէն էր: Երկինքէն կու գար լոյսով շինուած կառքին մէջ: Առաջ կ'երթար ծովին այնտեղը բոլոր նաւերուն տուլիչները կը զարներ եկայ ըսելով: Անգամներ ալ կ'ուշանար շատ կը սպասէինք ինծի եւ քեզի որքան շատ նուէր կու տար: Որքան աղուոր էր: Երկինքէն էր մեր Կաղանդ Պապան»:

Այդպէս տրտուն շեշտերով հեռուն մնացած, «շատ-շատ» հեռուն մնացած այդ իրաւ Կաղանդ Պապային գովասանքը ընելէ, անոր բազում ուրիշ բարեմասնութիւնները յիշելէ յետոյ Սիլվան յանկարծ կ'ընկղմէր զինք շրջապատող տխուր իրականութեան դառնութեանը մէջ: Մանուկի իր մատները ասկէ աւելի յստակ չէին կրնար թարգմանել ու յետոյ թուղթին յանձնել հզօրագոյն, նոյնիսկ մարդոց լեզուները շղթայել կրցող այսքան հզօր վիշտ: Կ'ըսէր.

«Այստեղ չկայ մեր Կաղանդ Պապան»:

Եւ չես գիտեր ինչ միտքէ տարուած.

«Անիկա այստեղ չի գար: Փողոցներուն Կաղանդ Պապան կայ այստեղ: Փողոցները լեցուն Կաղանդ Պապա կայ այստեղ: Այստեղինը շուկայէն կու գայ խանութները կը ծախէ, փանգակ կը վարնէ»:

Եւ վերջապէս՝

«Այստեղուան Կաղանդ Պապան տուտական է. տուտական»:

Միջնարար...: Կարճ դադարէ մը, կեանքի մը գիրքին պզտիկ մէկ էջը հագիւ գրաւող ժամանակամիջոցէ մը ետք՝ հիմա բեմը կը բացուի, նոյն, միեւնոյն դերակատարներով, սակայն այս անգամ... Նիւ Եորքի «Ըմփայր Սթէյթ Պիլտինկ»ի, «Թայմզ Սքուէր»ի եւ «Ռաքֆելըր Սենթր»ի տեսարաններուն վրայ:

Ամերիկեան այս բեմին վրայ գործողութեան ձեռնարկելէ առաջ սակայն, հաւանաբար անհրաժեշտ վերաբաղ մը, վերոյիշեցում մը կատարել Լիբանանի վերջին տեսարաններուն վերջին արարէն:

Եւ ուրեմն, Սիլվային այդ Նոր Տարուան նամակը գայթակղեցուցած, ընդվզեցուցած էր կարծէք պզտիկ աղջիկս: Չէր հասկցած, թէ ինչպէս փողոցները Կա-

ղանդ Պապան կը լեցուի: Չէր ըմբռնած Կաղանդ Պապան ինչհիւ, ինչպէս զանգակ կը զարնէ: (Իրեն համար աղբահաւաքը զանգակ կը զարնէր, տուներուն զիպիւնները տանելու համար): Եւ մանաւանդ՝ Կաղանդ Պապան, ԻՐ Կաղանդ Պապան ինչպէս սուտ կ'ըլլայ, «սուտական» կ'ըլլայ:

– Կ'ըլլա՞մ, պապա, Կաղանդ Պապան կ'ըլլա՞մ, կրնա՞յ սուտական ըլլալ,– հարց տուած էր շարունակ տեսակ մը վախով...

Եւ, վերջապէս, Ամերիկայէն կարծէք այլեւս բոլորովին հիասթափ.

– Ա՛լ չերթանք պապա, այլեւս չերթանք,– ըսած, կրկնած էր:

* * *

Բայց ահաւասիկ, հիմա արդէն հոս էինք, ամերիկեան այս բեմին վրայ: «Չերթանք, չերթանք, այլեւս չերթանք» այդպէս անվերջ կրկնելով՝ մենք մեզ գտած էինք Ատլանտեանի հսկայական ջուրերուն այս վերջին ծայրը, առանց նոյնիսկ նախապէս «նաւի տոմսակ» գնած ըլլալու: Ձգած էինք Լիբանանը, երբ տակաւին «գեղածիծաղ» էր, երբ տակաւին մոնկոլական հրէշային իր դիմագիծը փայլուն, շողշողուն ու հմայիչ դիմակներու տակ պահած-նստած էր: Սիւվայէնց նման մեր ալ «բախտը այդպէս ուզած էր» եւ, տուն ու տեղ ու պարտեզ ձգած՝ հեռացած էինք կարծէք մեր կամքէն անկախ, հսկայ սխալ մը, աններելի մեղք մը գործողի հոգեվիճակով:

Դեկտեմբերի սկիզբներն էին: Առտու մըն ալ արթնցանք, տեսանք աշխարհը ամբողջ մաքրամաքուր, զգլխիչ, ճերմակ հագուած էր: Ըսին՝ այս տարի ձիւնը կանուխէն ինքզինք յայտնած էր, եւ թէ՛ այսպէսով ճերմակ *Քրիսմաճու* մը ունենալու յոյսեր շատ կան: Դուրս վազեցինք գրեթէ ամբողջ ընտանեօք: Ձիւն նետեցինք իրարու, վազեցինք, վազվզեցինք ճերմակ տարածութեան մէջ, իրարու հասակ չափեցինք: Պէյրութի մէջ ձիւնը գրաւիչ, հմայիչ պատկերի պէս բան մըն էր, Սաննինի բարձր ու հեռաւոր կատարներէն տեւաբար մեզի ժպտացող եւ որ երեխաներուն ափ մը այդպէս ձիւն կարենալ շօշափել տալու համար կը ստիպուէինք միշտ, ձմրան ցուրտին, լեռները ելլել, Տահր-Էլ-Պայտարի բարձունքները մազլցի, շատ յաճախ ալ վերադառնալ գլխիկոր, առանց ձիւնի փաթիլի մը իսկ հանդիպած ըլլալու...

Նիւ Եորքի հսկայ թաղամասերէն, հելլենական չես գիտեր ինչ հրապոյրները յիշեցնող «Ասթորիա»յի մէջ լոյս աշխարհ եկած մեր հայ բարեկամուհին (մոռցանք ըսելու, թէ մեր այստեղ հասնելէն հազիւ երկու շաբաթ ետք, երիտասարդ հայ տիկնոջ մը ծանօթանալու եւ անմիջապէս իրեն հետ բարեկամանալու հազուագիւտ բախտը ունեցած էինք), ուրեմն, այս ազնիւ բարեկամուհին, Բարի Սամարացիի դէր մը ինքզինքին տուած ըլլալու, իր հայ ծագումին տո՛ւրք մը հատուցանելու, թէ ամերիկեան անգլերէնին մլաւիւնին նմանող հնչումներուն պատճառով ծռած, ծռմռած ու քայքայուած իր հայերէնին քիչ մը ուղղութիւն տալու դիտաւորութեամբ, ստանձնած էր, ինքնամատոյց կամեցողութեամբ յանձն առած

Էր Նիւ Եորքը մեզի եւ մեզ Նիւ Եորքին ծանօթացնելու նուրբ եւ փափուկ եւ ոչ-դիւրին պաշտօնը: Բարձրացած Էինք արդէն իսկ «Ուորլտ Թրէյտ Սենթըր» երկ-ւորեակին, ապակիի եւ պեթոնի այդ քառանկիւն տգեղութեան, մարդու ձեռքով կառուցուած բարձրագոյն բուրգերուն այս իբրեւ թէ ամենէն բարձրին գոյգ գա-գաթները: Ելած Էինք արդէն իսկ «Ըմփայր Սթէյթ Պիլտինկ»ի ծայրագոյն մասը, այդ բարձունքէն տեսնելու համար դիտարժան Նիւ Եորքի համատարած գեղեց-կութիւնը: Կամուրջները, թանգարանները, կարծէք լոյսով կերտուած քնարներու պէս դէպի երկինք սլացող հսկայական կամուրջներուն տակ խեղճուկ, թշուառ մնացած, երբեմնի հզօր, բայց այլեւս առասպելի կարգ անցած կոյր փարոսները...: Տեսած Էինք այդ ամենը, ամենը եւ զմեզ հիացած, սքանչացած ցոյց տուած...: Ըրած Էինք, ցոյց տուած այնպէս, որ կարծէք երբեք, իր աւերակ վիճակին մէջ իսկ հսկայ, վեհաշուք, մարդու ձեռքով կառուցած հին թէ նորագոյն բոլոր հրաշակեր-տութիւններուն իր փառապանծ սիւներուն ու քանդակներուն բարձունքէն նայող... Պաալպէքի մը անմիջական մօտիկէն եկող չէինք մենք: Ըրած Էինք, ցոյց տուած այնպէս, որ կարծէք երբեք, բնութեան ամբողջ, համընդհանուր գեղեց-կութիւնը, ծով ու երկինք ու լեռներ, մէկ ափի մէջ հրամցուող պարզելի մը պէս իր ծոցին մէջ խտացուած, ամփոփած Լիբանան կոչուող ցամաքէ մը եկող չէինք մենք եւ որ ամէն օր, ամէն իրիկուն ահեղ, ահարկու մայրամուտներուն հրկիզու-մին ականատես եղած չէինք... Զրճուեցանք չոր ցիցի պէս մայթի մը ափին տնկը-լած «Ըմփայր Սթէյթ Պիլտինկ»ով այնպէս ցոյց տալով, որ կարծէք երբեք երկ-նասլաց ու այլապէս առինքնող «Թուր-Էյֆել»ի գագաթը չէինք բարձրացած եւ որ այնտեղէն, բազում ու բիւր անգամ... Լոյսի Քաղաքին հրաշալիքը չէինք ըմբռնի-նած:

Դեկտեմբերի սկիզբներն Էին եւ արդէն... լւլլլւլ-լւ-լւ... լւլլլւլ-լւ-լւ... օր ու ի-րիկուն, ձայնասփիւռէն եւ պատկերասփիւռէն, ամէն, ամէն ուղղութենէ, փողոց-ները, խանութները փայլուն, փայլփլուն զարդարուած են արդէն իսկ եւրոպական Ծնունդը դիմաւորելու համար: Եւ այլեւս ջղայնութիւն, զգուանք պատճառող ամերիկեան այդ Ծնունդի երգերը, յաւիտեանս կրկնուող լւլլլւլ-լւ-լւ... լւլլլւլ-լւ-լւ... կարծէք առանց այդ լւլլւլ-ներուն Ծնունդ-Չատիկ, Քրիստոս-Յիսուս կարելի չէ որ լոյս աշխարհ գան:

– Պապա,– իրիկուն մը աղջիկս, դպրոցէն դարձին,– Կաղանդ Պապան այս-տեղ շուտ կու գայ եղեր, դպրոցը ամբողջ կ'երգեն, այստեղի Կաղանդ Պապան երգելով է, երգելով...

Այդ երգեցիկ օրերէն մէկուն, ամերիկածին մեր հայ բարեկամուհին յայտնեց մեզի, որ աւանդութեան կարգ անցած սովորութեան համաձայն, այս տարի եւս, «Ռաքֆէլըր Սենթըր»ի հրապարակին վրայ, Կաղանդի հսկայ ծառ մը բերած-տըն-կած են դարձեալ, նախկին իր նմաններուն ամենէն բարձրը, զոր պիտի զարդա-րեն ու լուսաւորեն վաղը, Զինգաբթի իրիկուն: «Կ'արժէ տեսնել գայն,– ըսաւ մեր բարեկամուհին,– ուրիշ տեղերէ հազարներով մարդիկ հոս կու գան այդ ծառին

համար», եւ յանձնարարեց, որ պատրաստ ըլլանք՝ Շաբաթ իրիկուն երթայլու համար:

Գացինք Շաբաթ իրիկուն: Մեր այդ ազնիւ բարեկամուհին տարաւ զիս ու աղջիկս, աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը կարծեք ցոյց տուողի հաւատքով: Յսկայական, անծայրածիր ու, մանաւանդ անկարգ ամբոխ մը, փողոցներու ամբողջ լայնքին, երկայնքին: Մանկամարդ ու պատանի աղջիկներ ու տղաք, ձեռքերնին խմիչքի մէկական շիշ, կէս-հարբած ու կէս-արթուն վիճակով եւ աղմուկով, հրմշտուկով փողոցները կ'ողողէին: Ռատամի գործիք ունենալ պէտք էր, այսքան իրարանցումի մէջ երկու շիտակ քայլ առնելու համար: Եւ, վերջապէս, «Ռաբֆէլըր Սէնթըր»ի պզտիկ այդ հրապարակը եւ անոր գլխուն... ծամը կար, տեսանք: Ծամը հոն էր, անմրցելի բարձրութեամբ եւ լոյսերով ողողուած: Երկինքի կարծեք բոլոր աստղերը չես գիտեր ինչ հրաշքով, անկարելի, անիրական իրենց փայլով ու գոյնով եկած-տեղաւորուած են «Ռաբֆէլըր Սէնթըր»ի այդ ծամին վրայ: Եւ իր բոլորտիքը ուրախութիւն, հանդէս, հրճուանք, երգչախումբեր, երգեցողութիւն... լալլալ-լալլա... լալլալ լալլալ...:

Ծամը կար, հոն էր, երկինքէն կարծեք այստեղ իջած, լոյսով, գոյնով, հմայքով: Ամէն ինչ կար, ամէն ինչ շատ էր, ի բաց ամեալ... ի բաց ամեալ...

Տեսայ՝ պահ մը աղջկանս աչքերը գամուած-կեցած են մէկ ու միակ ուղղութեամբ, մէկ կէտի վրայ: Ես ալ աչքերս նոյն ուղղութեան դարձուցի, նկատելու համար նախ, որ մեզմէ քիչ անդին, փողոցին միւս անկիւնը, լոյսերու մէջ լողացող ամերիկեան այդ հռչակաւոր այդ վաճառատուներէն մէկը կայ եւ յետոյ, որ... Ինչ տեսնեմ աղէկ... երկու Կաղանդ Պապա, առասպելական կարմիր իրենց գըլխարկով ու հագուստով, ճերմակ, երկար մօրուքով, իրական Կաղանդ Պապա: Բայց ձեռքերնին մէկական... զանգակ, անդադար կը զանգահարեն, խանութին առջեւ: Եիշդ այնպէս ինչպէս գրած էր Սիլվան:

Աղջիկս մոռցած էր ծամը, անոր շուրջ տիրող իրարանցումը եւ իր ամբողջ եւրթեամբ տարուած կը թուէր փողոցին միւս անկիւնի անցուդարձերով: Աղջրկանս ամբողջ ուշքը այդ փողոցի անկիւնի խանութին առջեւ զանգակ զարնող Կաղանդ Պապաներուն էր: Անոնցմէ մէկը, գիրուկ, կարճուկ մէկը, տեսնենք մէկ ալ դրաւ զանգակը մէկդի ու գնաց նստեցաւ վաճառատան դրան անկիւնը, աթոռակի պէս բանի մը վրայ: Եւ յետոյ... յետոյ... մօրուքը հանեց, գլխարկը հանեց, թշուառ, ճաղատ գլուխ մը մէջտեղ բերելով՝ սկսաւ սանտուիչ մը ուտել: Իսկ աղջիկս, որ յափշտակուածի նման այդ ամբողջը կը դիտէր, ահաբեկուած ձայնով մը՝

– Պապա, պապա, տե՛ս,– ըսաւ,– սուտականները... սուտականները...

(Թիւ 11-12, 1987)

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

ԲԱՌԵՐ ԱՆՐՋԱԳԻԾ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՅԱՄԱՐ

Տայեացքդ
 միակն է, որ կը խուսափի ինձմէ,
 դրժելով խոստումը՝
 զիս տանելու
 մանուածապատ շաւիղներէն
 խոհերուս,
 ուր՝ մոռացման բնակիչները կ'ապրին
 ու կը լսուի մինչեւ իսկ,
 հեռացող թռչունի թելերէն,
 կաթկթող երեկոն փետրածայն:

Վերահաս մուրթի մատներով գծուած
 դէմքեր՝ կարծես
 նահանջող ժամերու պէս
 կ'անհետանան,
 տարիներու հեռաւորութենէն,
 շուրթերուդ վրայ՝
 կեռասենիներու ջերմութեամբ բառեր ձայնելու:

Ինչպէս,
 ծառերու կանաչ համանուագի ընդմէջէն լսուող,
 աշնան նարնջագոյն մեղեդին:

Ինչպէս,
 մայրերու ծայրածաւալ ժապաւեններու վրայ,
 ձայնագրուած ոտնաձայնը հեռացող կնկայ:

Ինչպէս,
 կէս գիշերուան անկիսելի լռութիւնը,
 երբ սիրտդ տարբեր եւ անտարբեր ժամանակներու համար
 կը բարբախէ:

Լուսամփոփի մտերմութեամբ՝ ձիւնէ՛ աղջիկ,
 այտերուդ տամուկ էջերուն վրայ,
 հազար անգամ սեւագրուած՝
 սիրոյ ամառին նախադասութեամբ քեզ կ'ոգեկոչեն...

Ռ՞վ կ'ըսէր թէ
 – ծովը ծեր է.
 անոր այիքներն համրելու համար,
 ես ամէն օր կը մանկանամ:


Ես՝ որ աչքերուդ կապոյտ երկինքներուն,
 հրաժեշտ տուած եղանակի նման,
 աշխարհին համայն թափառեցայ:

Ես՝ որ ոտնահետքեր ջնջող ճամբաներէ,
 յետմիջօրէի ամայութեանց պէս անաղմուկ հեռացայ:

Արդեօք ինչո՞ւ,
 աչքերուս մէջ վրիպած՝
 հայեացքովդ աննկատ,
 վերագտնել կը փորձեմ քեզ տակաւին,
 անմայրամուտ երեկոյեան մը սեմին...

(Թիւ 1, 1996)

ԾՈԾՐԱԿԴԴ Ի ՎԵՐ

 Ծծրակդ ի վեր ձիւնաթոյր ուր կարապներ կ'երագեն,
Պիտ' այս գիշեր չարչարեմ համբոյրներուս մեղեդին...
Ու շրթներուդ ընդմէջէն պիտի հոսին լայնօրէն,
Տագնապահար շշուկներն անտառներու կատարին...:

Պիտի հանդարտ ըլլայ այդ՝ ինչպէս գիշերն, որ կ'իջնէ
Դարպասին մէջ, ուր ձիւնէ թիթեռնիկներ կ'երագեն...
Մինչ կոպերուդ տակ վառուող բաւիղին մէջ լուսեղէն,
Պիտի բանամ ես հոգւոյդ բոլոր դմներն անարգել:

Ու մերկացած օրերու խարխափումէն երբեմնի,
Պիտի քալեմ ընդերկար մինչեւ գիշերն արիւնի...
Մինչեւ հոգիս ան կքի իր մեղքերուն ծանրոյթէն,
Ծծրակդ ի վեր ձիւնաթոյր, ուր կարապներ կ'երագեն:

(Թիւ 11-12, 1975)

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԱԽԱԴՐՈՅԹ



Ես կ'ուզեի,
որ դարերու անանցարգել ուղիով՝
վերապրեինք
նախաբնոյթ դրութեան մեջ ժամանակի,
ուր ամեն կեանք ոգեծուլուէր մեզի հետ՝
իր գոյութեան սկզբնական տարերքին
եւ էութեան նախաստեղծ:

Ես կ'ուզեի,
որ դառնայիր դուն կրկին
աննիւթական թովչանքներուն մեր անցեալ,
ուր դեռ սերը
խորհրդանիշն է անեղ
ոսկեծաղիկ անրջանքի
եւ քնարակիրը տարփոտ
ոգետեսիլ էակներու
նախածնունդ հովուերգութեան:

Ես կ'ուզեի,
որ մնայիր դուն կրկին,
անեղակոյս զեղեցկութեամբ պատմունճանուած՝
շուշանակերպ նոյն տեսքով,
նոյն հմայքով ոսկեզօծ-
եւ մնայինք անհաղորդ
ճակատագրի ամպրոպներէն տրորուած՝
ծիծառներու մահածիծաղ համերգին
ու մոխրակէզ երազներու
անաշխարհիկ կանչերուն
թող ոչ մէկ յուշ ան հալածեր մեզ երբեք՝
այրիացած խղճմտանքի արտասուքով.
Եւ թող բերեր ոչ մէկ երգ
հիւծախտաւոր տենչանքներու
հեկեկանքը աղեխարշ...

Եթե կ'ուզես վերածնիլ
 հոգեվայրին մեջ հաւատքիս՝
 իբրեւ սիրոյ հովտաշուշան,
 վերընծայլ՝
 անցելագեղ ցնորքներուդ վիպական՝
 լոկ բաղձանք մը անբասիր,
 մեր հովուական երազն անդարձ
 իր նախնակերպ վիպայնութեամբ նորաստեղծող՝
 իբրեւ սիրոյ արարչագործ նախանիւթ...

Խոհակերպէ կեանքը քու շուրջ՝
 ողջ դրութեամբն իր ոգեղէն,
 նախամարդու գիտակցութեան նոր բացուած՝
 երկիրն ինչպէս,
 իր մենութեամբը կուսագեղ, անդորրութեամբն հոտեւան,
 ուր դուն կրնաս ենթարկուիլ վերստին
 դէպի անցեալ քեզ փոխարկող՝
 հոգեփոխման հանդիսութեան մը անծէս.
 ուր կը դադրիս թափառելէ
 յուզաշխարհին մեջ անծանօթ հոգիներու՝
 նախանձաբորբ սերերու
 ծածկախորհուրդ ծիծաղով...

Եւ որոնէ կեանքի յղացքն Էական
 ստուերալոյս խոհերուն մեջ
 մայրամտող պահերու.
 Եւ որոնէ անցելադարձ ուղին կեանքիդ՝
 անկումին մեջ տերեւաթափ ժպիտներու
 եւ կարապի յուզումնալար մահերգին,
 որդեգրելով իրավիճակն սկզբնական՝
 երազներու սահմանազանց գոյակերպին,
 որ իր թովիչ վիպայնութեամբ
 նախայուշն է՝
 քու ինքնութեան զգացական հոլովոյթին...

Եւ հոն միայն,
 ոգեկառոյց դրութեան մեջ ժամանակի,
 պիտի գտնէ ամեն երազ՝
 բնակերպարն իր նախկին.

ձերբազատի բառը կրկին՝
 այլասերած ուղեգիծէն մտածումի.
 Եւ մեղսապարտ զգայնութիւնը սիրոյ
 վերափոխուի հին հաւատքի
 լիախորհուրդ սրբութեան...

Եւ հո՛ն միայն,
 պիտի անցնիս հոգեվայրէ հոգեվայր,
 ներզգայով ակնածանքը

ներաշխարհիդ ակունքներէն վերյառնող՝
 առնչութեան մը լուսակերպ.
 Եւ որդեգրես նուիրախոհ բաղձանքներու
 խոհակէտն այն հասարակաց,
 ուր ալ դադրիս փոխարկելէ
 նոր մորմոքը մեղանչական՝
 զգայափոխ մորմոքներուդ հանգիտութեան,
 եղեմայուշ, հին փորձութեամբ վարքագծուած՝
 մեղսահանգոյց սխրանքներու
 երախայրիք փորձարկութեամբ...

Եւ- հո՛ն միայն,
 սէրն ու վիշտը,
 եւ հաւատքն ու փորձութիւնը
 պիտի կազմեն նախանիւթը արարչական
 եւ Էատարրը ծնուցիչ
 տեսլաշաւիղ երկիւղանքով երկնուած՝
 քու Էութեան յարածնունդ առասպելին...

(Թիւ 11-12, 1988)

ՈՐՈՆՈՒՄ

Ո՞ր է երկրորդ ծաղիկը մեր տառապանքին,
բերկրանքն այն հոտեւան,
որ պիտի գար վայելչակերպ յայտնութեամբ,
իբրեւ կերպարն ու ոգին՝
երբեմնի մեր ցնորքներուն բնապաշտ.
Եւ գոյակցէր խայտաբորբ մեր երգերուն՝
նորաբողբոջ իր շունչով,
ցօղաթուրմ իր արցունքով...

Ես կը տեսնեմ զայն կարծես,
վառ տարփանքիս շափրակներով խանձարոյր՝
անրջագէղ իր տեսքով,
որ վերահաս աղուալոյսին հետ կեանքիս
կը հետեւի հոլովոյթին խոհերուս՝
խորհուրդի պէս տեսլայայտ-
եւ կը նայի աչքերուս՝
դեռ չերգուած մորմոքներուս լռութեամբ...

Մերթ կը կառչի ան կարծես
հին յուշերուս խորշակահար ոստերուն՝
անգիտակից յոյգերով.
տազնապելով ինծի հետ՝
իբրեւ աղօթք,
իբրեւ աղերս
եւ հեծութիւն գիշերային.
Եւ իր հեծքին մէջ անգօր,
ես կը լսեմ բաբախումներն գարնանային՝
հին հրճուանքիս ողջակիզուած ձայներուն...

Չայն կը տեսնեմ տեսլադաշտին մէջ մտքիս,
յարափոփոխ վիճակներով մարմնացած՝
իբրեւ կերպարն Էութեանդ
եւ շառաւիղն անցեալիդ...

Կը վերապրիմ պահ մը իրմով,
կրկներեւոյթը ճշմարիտ

անրջանքին մեր մահացեալ
 եւ ձգտումին թեւաբեկ.
 Հաւատքին,
 որ ողջունեց՝ ոչ մէկ ժպիտ ծլարձակ՝
 խորհրդածուլի ածուներուն բերկրանքի-
 Յոյսին,
 որ մնաց միշտ կալանաւորն անիծապարտ՝
 ստուերախոհ պահերու.
 եւ Տարփանքին,
 որ աստղային ոլորտներու մէջ յածող՝
 դարձաւ սիրոյ անօթեւան ուղեւոր...

Ո՛րք է մեր տառապանքի երկրորդ ծաղիկն,
 որ պիտի գար.
 եւ լիաշունչ իր երգով՝
 կենսաշնորհ նոր երանգ մը ընձեռէր՝
 մեր օրերու երանգագուրկ խնդութեան,
 բեւեռելով մեր հոգին,
 մրգահասի խոկումներով օղակուած՝
 հաճոյական նոյն երկունքին պտղաբեր...

(Թիւ 11-12, 1988)

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ԴԵՂԻՆ ԼՈՅՍԱԸ

Աելլա՛ իր նոր բարեկամին հետ թեւանցուկ՝ իջաւ գիշերային գետնայարկ զբօսասրահի օձապտոյտ աստիճաններէն: Նուագի զիլ ձայնն ու կարմիր լոյսերը թրթռացին իր այտերուն վրայ: Արու նայուածքներ զարնուեցան կարճ շրջագետտին քղանցքէն երեւցող գրգռիչ զիստերուն, որոնց Սելլա պատասխանեց անհոգ ժպիտով:

Ձեռքի ու աչքերու մեղմ շարժումներով բարեւեց ծանօթները: Բարեկամը կէս մթութեան մէջ կ'ուզէր գտնել ազատ սեղան մը. բայց Սելլա քաշեց անոր թեւէն.

– Նախ պարենք, Էտտի՛:

Խառնուեցան պարողներու խումբին: Նուագախումբի չորս ելեքտրական կիթառներն ու թմբուկները կը ջանային գերազանցել հինգ երգիչներու ճիչերը: Չբօսասրահի ցած առաստաղը կը ցնցուէր: Չոյգերը կը պարէին ավիրիկեան կշռոյթով պար մը. անհանդարտ շարժումներու բերումով՝ կարճ ու նեղ շրջագետտները աստիճանաբար կը բարձրանային վեր, հրաւիրելով արու նայուածքները:

Պահ մը դադրեցաւ նուագը. Էտտի վերսկսաւ փնտռել ազատ սեղան մը:

– Ուշացաք, ազատ սեղան չմնաց,– ըսաւ սպասեակը,– եթէ կ'ուզէք, նստեցէք աստիճաններուն վրայ, հո՛ն:

Ուրիշ ընտրութիւն չկար: Էտտի ապսպրեց երկու գաւաթ ուխաքի ու խնդրական ժպիտ մը նետեց աստիճաններուն վրայ նստողներուն: Երկու զոյգերու միջեւ բացուեցաւ նեղ անցք մը:

Դարձեալ ելան պարելու: Սելլա՛ եղնիկի գեղեցիկ աչքերը խոշոր բացած նայուածքը կեդրոնացուցած էր դեղին լամբի մը: Ոտքերը մանր ոստումներով տեղբայր կ'ընէին. ամբողջ մարմինը արագ հեւքի մը մէջն էր. ձեռքերը կտրուկ շարժումներով կը բարձրանային ու կ'իջնէին համաչափ: Միայն նայուածքն էր անշարժ՝ գամուած դեղին լոյսին:

Սելլա ժպտեցաւ. դարձեալ հին մտածումը արձագանգեց մտքին մէջ: Դեղին լոյսը տարածուեցաւ ու անցք բացաւ այդ հին դիմագիծին: Տարեց դեմք մը՝ բառատունը հինգ տարիներու փորձառու նայուածքով, ինկաւ իր տասներորդամեայ ժպիտին վրայ. Ռոպէրն էր, պարոն Ռոպէրը, հօրը լաւ բարեկամը, որ երկու տարի առաջ յանկարծ ձգեց իրենց խճողուած քաղաքը ու մեկնեցաւ հեռաւոր երկիր մը: Ինչո՞ւ. հայրն ալ չգիտցաւ պատճառը: Բայց տարբեր էր պարոն Ռոպէրը. կը քալէին միասին գետեզերքի երկար ու լուռ ճամբէն, կը խօսէին չարի ու բարիի մասին: Այն ատեն տասներհինգ տարեկան էր Սելլա. նոր էր մահացած երիտա-

սարդ մայրը՝ երկար ամիսներ հիւժելէ ու տառապելէ ետք անծանօթ հիւանդութեան մը պատճառաւ: Ինք կը մտէր առանձնութեան մէջ ու պետք ունէր սրտակիցի մը տաքութեան: Յայրը...: Կոշտ ու եսասէր մարդ մըն էր ան, անտարբեր կնկան ու աղջկան նկատմամբ: Տառապած էր մայրը ամուսնոյն ամենօրեայ կոշտութիւններուն ու արհամարհանքներուն դիմաց: Իսկ ինք երբեք չէր սիրած հայրը ու անոր ներկայութիւնը իր ամբողջ ծանրութեամբ ճնշած էր սրտին վրայ: Մինչդեռ, զգայուն ու ազնիւ մարդ մըն էր պարոն Ռոպէրը: Սելլա յիշեց այն օրը, երբ յոգնութիւն պատրուակելով մտաւ պարոն Ռոպէրի թելը, իր նորաբոյս կուրծքին սեղմեց անոր արմուկը: Ռոպէր անտարբերութիւն կեղծեց, հեռացուց թելը ու ցոյց տուաւ գետին ջուրերուն վրայ սահող փոքրիկ նաւակ մը...:

Դադրեցաւ երաժշտութիւնը: Դեղին լոյսը փոքրացաւ: Սելլա եւ Էտտի վերադարձան իրենց տեղերը: Նուազախումբը սկսաւ նուազել մեղմ եղանակ մը: Յոգնած մարմիններ գրկեցին զիրար ու սկսան օրօրուհի քնքշութեամբ:

– Պարենք, Սելլա...

– Ո՛չ, Էտտի, կ'ուզեմ հանգստանալ քիչ մը:

Էտտի հետաքրքրութեամբ նայեցաւ շուրջը.

– Թոյլ կու տա՞ս որ պարեն բարեկամուհիի մը հետ.

– ...

Սելլա առանձին դիտեց շուրջը: Ծանօթ շատ տղաք կային հոն, որոնց հետ ունեցած էր արկածախնդրութիւններ: Սկսած էր անմեղ համբոյրէ մը, անցած զբօսասրահներու զիլ նուազներուն եւ գոյնզգոյն լոյսերուն մէջէն, ու փոքրիկ սենեակներու կէս մթութեան մէջ, անոնցմէ շատերու հետ հանդարտեցուցած էր յոգնած ջիղերը... Ի՛նչ միօրինակ էին անոնց դէմքերը. ընտանեկան հինցած ալպոմի մը նկարներն էին կարծեք: Յապա այս Էտտին, որ շուտով պիտի միանար այդ նկարներուն... Բոլորն ալ անցեալի յուշ էին միայն: Բայց, պարոն Ռոպէրը. ան, դարձեալ վերադարձաւ ան՝ իր մոխրագոյն մազերով ու ինքնավստահ ժպիտով: Սելլա յիշեց այն օրը, երբ ցանկապատէ մը վար իջնելու պատրուակով, թելերը փաթթած էր անոր վզին – ցատկած էր վար, ու յետոյ չէր ուզած բաժնուհի, ձեռքերը բարձրացուցած էր անոր ականջներուն ետեւ, շոյած էր ծոծրակը, նայած աչքերուն ու հասկցուցած սրտին տակ աճող ծարաւին մեծութիւնը: Բայց ան քնքշութեամբ հեռացուցած էր զինք՝ բռնած էր ձեռքէն ու միասին վազած էին դէպի կանաչ մարգերը: Ի՛նչ հաճելի պիտի ըլլար համբոյրի մը ծաղկումը մարգագետնի զարնանային գոյներուն վրայ: Բայց, պարոն Ռոպէր՝ երջանիկ ու անհոգ մանուկի մը նման՝ կը վազէր...

Սելլա կոնքին վրայ զգաց իր մօտ նստող մօրուսաւոր անծանօթ երիտասարդին ձեռքը: Չցնցուեցաւ: Երիտասարդին նայուածքները շարունակ կը հետապնդէին իր ժպիտները: Էտտին միօրինակ ու ձանձրացուցիչ էր դարձած: Չընդդիմացաւ տղուն յառաջացող ձեռքերուն...:

Յանկարծ դրացի ձեռքը փախաւ իր մարմնէն: Վերջացած էր մեղմ երաժշ-

տուրթիւնը. Էտտի, վերադառնալէ առաջ, նշմարած էր Սելլայի մտածկոտ երեւոյթն ու մօրուսաւոր տղուն աչքերուն փայլը:

– Երթանք, Սելլա:

* * *

Քառորդ ժամ ետք՝ փոքրիկ սենեակի մը կիսամութին մէջ՝ Սելլա նետեց ինքզինք անկողնին վրայ: Էտտի գոցեց պատուհանները:

Սելլայի համար գաղտնիք չունէին այս միօրինակ բեմադրութիւնները, որոնք կը սկսէին հանուող կօշիկներու բացուող վարագոյրով...: Ժպտեցաւ. դարձեալ պարոն Ռոպերն էր մտեր մտքի Էջերուն: Այո, անձրեւոտ առաւօտ մըն էր. առանձին էր տունը, երբ եկաւ ան: Ինք դուռը բանալէ առաջ՝ քակեց գիշերազգեստին կոճակները. քակեց երկար մագերը...: Որոշած էր. այդ օր պիտի հալեցնէր այդ մարդուն կուրծքին տակ կուտակուած սառը: Պարոն Ռոպեր մտաւ ներս, առաջին ակնարկով իսկ նշմարեց աղջկան կուրծքերուն կէս կլորութիւնները. «առանձին ես», փսփսաց: Ինք չպատասխանեց հարցումին. մօտեցաւ, թելերը փաթթեց Ռոպերի մէջքին, գլուխը դրաւ անոր ուսին. պահ մը սպասեց. անշարժ էր այդ զարմանալի մարդը...: Սելլա հեռացուց գլուխը անոր ուսէն, աչքերը կիսախուփ. կըրքոտ շրթները՝ սպասումի կրակով այրած՝ շարժեցան. «Ռոպեր, համբուրէ զիս... միայն դուն իմաստ ունիս ինծի համար...: Ամբողջութեամբ գրաւած ես սիրտս...»:

Ճանրացած էր շնչառութիւնը: Էտտի կը խածնէր Սելլայի շրթները: Իսկ... պարոն Ռոպերը՝ այդ զարմանալի մարդը՝ մօտեցուց շրթները իր ճակտին ու անհրապոյր համբոյր մը դրոշմեց հոն: Յետոյ, կոճկեց քակուած կոճակները, շոյեց իր երկար մագերը, ամփոփեց զանոնք աջ ափին մէջ ու ըսաւ.

– Այսպէս աւելի լաւ է, Սելլա՛:

Մեկնեցաւ:

Վերջին հանդիպումն էր: Շաբաթ մը ետք լսեց հօրմէն, թէ պարոն Ռոպերը վերջնականապէս մեկնած էր քաղաքէն, դէպի հեռաւոր երկիր մը:

Յիշեց իր ցնցումը. զարմանքը: Ու ահա, այդ հին, անծանօթ, զարմանալի զգացումը, որ ամէն օր կը թրթռայ կուրծքին տակ, կը մեծնայ իր ձանձրոյթին ու միօրինակ կեանքին հետ միատեղ: Այո, կը սիրէր այդ մարդը. միայն ան կ'ապրէր իր մէջ՝ իր հպարտութեամբ, ազնուականութեամբ ու անհասկնալի նայուածքներով...:

Կտրուեցաւ Սելլայի մտածումներու թելը: Էտտի հեռացած էր անկողնէն:

* * *

Կէս ժամ ետք, Սելլա, իր տան առջեւ՝ իջաւ Էտտիի ինքնաշարժէն.

– Վաղը գիշեր պիտի չկարենամ գալ,– ըսաւ,– ժամադրուած եմ ուրիշի հետ: Երբ ազատ ըլլամ՝ կը հեռաձայնեմ քեզի:

Մտաւ շէնքի դռնէն ներս: Մատը դրաւ վերելակի կոճակին ու սպասեց: Նշմարեց չորս նամակներ, որոնք դրուած էին շէնքի պահակին սեղանին վրայ:

Մօտեցաւ. անտարբեր երեւոյթով մը ցրուեց պահարանները: Յանկարծ ցնցր-
ւեցաւ. կապոյտ պահարանի մը վրայ պարոն Ռոպէրի ձեռագրով կար իր անունը:
Առաւ պահարանը: Ո՛հ, երկու տարի է ոչ մէկ լուր, ու ահա յանկարծ...: Պահա-
րանը սեղմեց կուրծքին. չբացաւ: Նախընտրեց իր ննջասենեակի մտերմութեանը
մէջ ըլլալ առանձին իր երագած մարդուն հետ...: Բացաւ յարկաբաժնին դուռը.
հայրը կը քնանար: Մտաւ իր ննջասենեակը. վառեց անկողնին մօտ դրուած լոյսը՝
նստաւ անկողնին ու բացաւ նամակը.

«Սիրելի Սելլա...»

Կարդաց, կարդաց մէկ շունչով: Իր երիտասարդ ուղեղը լեցուեցաւ ծանր
դէպքերով: Նամակին տողերուն մէջէն տեսաւ Ռոպէրը, որ ամուսնացած կնոջ
մը հետ, գաղտագողի կը բարձրանայ պանդոկի մը աստիճաններէն: Պանդոկի
փոքրիկ սենեակին մթութեանը մէջ, սիրոյ երդումներ իզուր կը ջանային ծածկել՝
մտահոգութեան մոխրագոյն ամպերու տակ՝ սեղմուած սրտերը: Մերկ մարմին-
ներ՝ սաւանի մը աշխարհով ծածկուած՝ կը զգային ներկայի փոքր երջանկու-
թեան ծանր հակազդեցութիւնը վաղուան վրայ...: «Սիրեցի այդ կինը, Սելլա,
սիրեցի, ու այդ աղբատիկ պանդոկի գիշերուայ մեղքէն, ուրիշի կնոջմէն ծնար
դուն, ասկէ ճիշդ տասնըութ տարիներ առաջ...»:

Սելլա ճգմեց նամակը ափերուն մէջ: Իր հաւատքի տաճարին աւերակներու
ճիշդ մէջտեղ կանգուն մնացած վերջին սիւնը փշրուած էր: Ռոպէրը... պարոն
Ռոպէրը, իր հայրը... Աստուած իմ...: Հիմա կը հասկնար նայուածքներուն իմաստը:
Բացաւ ճմռթկուած նամակը, տարաւ շրթներուն, հեկեկաց մանուկի մը նման:

«Չուզեցի քու մատաղ սրտիդ մէջ ապրիլ այնպէս, ինչպէս դուն կերտած էիր
զիս: Քու սիրտդ պետք ունէր իր արդար գարուններուն: «Ամբողջութեամբ գրա-
ւած ես սիրտս», ըսիր վերջին օրը: Ձգեցի քաղաքը ու մեկնեցայ: Ահա, այս նամա-
կով կու գամ պարպելու սիրտդ: Տուր ինձի անկիւն մը հոն, ուր ես՝ կծկուած ան-
ցեայի մեղքիս մէջ՝ մնամ ու չխանգարեմ քու իրաւունքդ, որ «Կեանք» կը կոչուի:

«Ես կը մեկնիմ այս երկրէն, դէպի անծանօթ ափեր, դէպի մոռացութեան
գիրկը: Մնաք բարով, Սելլա...»:

* * *

Յաջորդ գիշեր, գետնայարկ զբօսասրահին ժխորին մէջ, Սելլա՝ եղնիկի
խոնաւ աչքերը խոշոր բացած՝ նայուածքը կեդրոնանուցած դեղին լոյսին, կը
պարեր: Տխուր ժպիտ մը ջնջած էր անհոգութիւնը իր շրթներէն ու առանձ-
նութիւնը կ'ուռճանար սրտին մէջ:

Յանկարծ դադրեցուց պարը, սեղմեց մօրուսաւոր նոր բարեկամին ձեռքը, ու
ըսաւ.

– Չիս հեռու տար այս լոյսերէն: Երթանք սենեակդ...

(Թիւ 4, 1969)

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ



ըբ մարմինդ պոռթկայ
լռին
այս իրիկուն
ու կողերդ հրճուանքէն
արիւնոտին

քու խորերէդ երդնուս պիտի
թէ մատներդ գիտեն երգել
գիտեն յուշել դաւադրօրէն
վանկեր քնքոյշ
ու վանկերդ գիտեն դողալ
սարսռանքով գիտեն դողալ
արիւնիդ մէջ

քեզի կ'ըսես
խաչիդ վրայ երդնուս պիտի
թէ շոթներդ
այս իրիկուն գիտեն գգուել գիտեն մատնել
ու մարմինդ վայրենօրէն գիտե սիրել
ու բառերդ սրսփանքով գիտեն լքել

Օ՛ չկարծես
թէ կարօտդ պիտի կրնաս գերեզմանել
այս իրիկուն
գերեզմաններուդ անպաշտպան կուրծքին խովեր խրելով
շաղուելով սերմեր ապականութեան
սննդառութեան շրթունքներ վայրի ի մի բերելով
գուգաւորելով
մենք յօրինեցինք անսահմանելի անթափանցելի անանցանելի
ամբոխակոյտը
մեր մարմիններուն

սառն լռութեամբ
ու համբերութեամբ

մարմինէ մարմին

գաղտնահիւսեցինք բարեխօսութեան չարախօսութեան
 ոստայնը լալիրշ

քեներով խորթին
 մանրախուզեցինք հետքերը նրբին
 անտեսանելի

մտքերով կյօնոտ
 յաւիտենութեան դարձդարձիկ ու թեք արահետներէն
 բերինք նենգութեամբ գարշահոտ ջուրեր
 որպէսզի ապրինք
 եւ ահաւասիկ
 մարմին առ մարմին
 կը դառնանք հողին
 կը գտնենք հիւլէն մեր հին ծնողին
 ծնողները մեր մեզի կը սպասեն
 որպէսզի նորէն քայքայուի հիւլէն
 որպէսզի նորէն բեկանուի հիւլէն
 բջիջներ ծնին անըմբռնելի
 հին
 իրերամերժ
 նիւթերէն
 մարմնի

եւ ծայրէ ի ծայր
 սկսինք նորէն կեանքն այս վիթխարի

իր հին
 ժխորէն
 եւ ծայրէ ի ծայր
 կոյր
 խարխափանքի ափեր երկարենք
 եւ ափն այն ափն այն ափն այն անօթի
 ափն այն որոնենք

որուն կարօտէն
 հուրն այս ամեհի
 խելայեղութեամբ խելայեղութեամբ
 կը հանէ ոտքի
 սերմերն արիւնի
 բարութեան մարմին յարութեան մարմին

խոսքի խորքերէն թող վերընծիւղին հունտեր կատաղի
երդումներ սիրոյ համարձակութեամբ
թող գուգաւորուին
ստինքներ մեծոյ յորդին ծոցերէն
մանուկներ բարի
ոգեւորութեան ճիչերով վայրի
արգանդդ փորեն

բարութեան մարմին յարութեան մարմին
քու թելերուդ մէջ կան մտերմութեան խռովիչ հուրեր
բուրումներ սիրոյ ծունկերդ կ'այրեն
քու ասիւրուդ մէջ կան բժշկութեան խելագար լոյսեր
եւ մատներուդ մէջ դեռ արշալոյսի խունկեր
անանուն
արթնցիր քունէդ արթնցիր քունէդ
գերեզմաններդ փուլ թող գան նորէն
գերեզմաններուդ անպաշտպան կուրծքի շանթեր թող փլին
եւ իր երկունքէն
հողն այս արիւնի
հողն այս արիւնի

զի այս իրիկուն
երբ վերջին լուսնն յոյսիդ ազագուն
կուլ երթայ հողին
երբ կքիս հողին
եւ զայն համբուրես հեզութեամբ անհուն

մանուկներդ մերկ եւ անօթեւան եւ ապօրինի
եւ դրոնք ծնան սերմերէդ սիրոյ
զորս դուն մերժեցիր ապիկարօրէն

մանուկներդ մերկ յանուն իրենց հօր
եւ ի փրկութիւն
գերեզմաններուդ անհանգիստ խորէն
հաւատարմութեամբ
եւ թունդ արիւնով
պիտի որ նորէն
յարութիւն առնեն

(Թիւ 11-12, 1987)

ԱՌՇՆՉՈՒԹԻՒՆ

Նունկի եկուր
 թող մարմինդ խոնարհի
 թող մարմինդ հաւասարի այս հողին
 թող մարմինդ իր հին կոչումը գտնէ
 թող հիւլէներդ փխրին
 թող մկաններդ պարպուին քինախնդիր պրկումէն
 թող մատներդ պարուրէ անշարժութեան մեղեդին
 այս ուշ ժամուն
 գոյութիւնդ պիտի մաքրես իր առօրեայ կեղտերէն
 գոյութիւնդ պիտի լուսա խոկումներէն կիրքերէն
 գոյութիւնդ պիտի բուժես իր արիւնող վերքերէն
 պիտի մաղես գոյութիւնդ իր հնօրեայ մեղքերէն
 գոյութիւնդ պիտի մոռնաս եւ բիբերդ սեւեռես
 վիհերն ի վար արիւնիդ
 այս ուշ ժամուն թիկունքդ տուր այս հողին
 ողնայարդ թող սրսփայ անեութեան գրգիռէն
 ողնայարդ թող խենթենայ հրճուանքէն դիւթանքէն
 այս ուշ ժամուն
 երբ մարմինդ հպի լոյսին եւ նիւթութիւնն իր մոռնայ
 ողնայարդ պիտի լողայ ջուրերն ի վար երագիդ
 պիտի թռի ամպերն ի վեր
 ու ցնդի

(Թիւ 11-12, 1987)

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

ԴԱՐՁԻԴ



նաւօտները հորիզոններէն անդին կը ննջեն,

Իսկ ցերեկները

Մեղկ, անհորիզոն պահեր կը գծեն՝

Փարելու համար

Մթութիւններու

Նախահորիզոն լլկիչ ժամերուն:

Ո՛չ մէկ խնկարկու թող ողջունէ

Չիս,

Ծուխի նման ծլարձակուող

Տիեզերաբաղձն եմ լոկ:

Չոյզ սլաքներու սպասում մը պիրկ

Կ'անդամալուծէ գրեթէ շրջանն Էլեկթրոնիք անգոյ թելերուն,

Որոնք կը գուժեն

Միացումներու,

Ապա վերստին բաժանումներու պահերն ահարկու:

Ես իմ եսիս մէջ կղպուած այնպէս՝

Եւ շուշաններու սպիտակութեամբ

Բազմապատկուող արեւատենչն եմ:

Յապաղումդ արդէն՝

Չքամուող մրուր:

Դարձիդ՝

Մարգարիտներս շռայլօրէն սերմանեմ պիտի

Չգացումներուդ ամենանրբին թուլութիւններուն...

(Թիւ 10, 1984)

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

ԽՈՒՆԿ ՈՒ ԱՐՅՈՒՆՔ



Ասալուստեցայ օրեր գեհեն,
 Տատանուելով իբրեւ նաւորդ,
 Եւ մահուան չափ տխուր էի:
 Գեղեցկութիւնն կը մահանար աստուածներու տաճարին մէջ,
 Եւ մոմերը հրակարմիր, Աստուածամօր նկարին մօտ՝
 Համաչալի թաց բիբերով կը տանջուէին՝
 զիրար կրկնող ցաւերու պէս:

Մրմնջացող խունկերու ճշմարտութեան խորհուրդէն՝
 ճառագայթներ հագարածել կ'իջնեն փոխաբեր Միջերկրական,
 Եւ լեռները լուսաժպիտ
 Կը զարդարուին ալիքներով խնկաբոյր,
 ուր թախիծը կ'ըլլայ ցայգածաղիկ,
 Եւ լոյսը՝ զայթակողութիւն մը սրբագին...

Ո՞ր ես դուն, եւ նայուածքդ հզօր ո՞ր է,
 Ահ, կ'ուզէի չիշել աշտարակներդ երկնաքեր,
 Ուր կը ծաղկէր երբեմնի ճանաչագեղ ցնծութիւնը երկնի,
 Ուր օրհնեալ էր ներթափանցող արարչութեան սէրը,
 Եւ ճանաչումը գոյութեան՝ լուսանուէր...

Ո՞ր ես դուն,
 Եւ խղճմտանքիդ համբոյրն ո՞ր է,
 Ո՞ր է գուրդը.
 Օ՛, խիղճերու գահավիժումն այս մթին
 Լոյսին խաւարումն է կարծես:

Իսկ ո՞ր ես դուն, սէր:

Օրերս ցուրտ են՝ աշնանային մերկութեամբ...

.....

Օ՛, եկուր... եկուր,
Բլուրները, տես,

Եւ համբոյրը ցայգին

Եւ տօներնք ցնծութիւնը

Կը բոցկլտան խոստումներով կանաչներու

անոնց ընդերքներէն
դուրս պիտի բերէ ինչպիսի խոյանք,
եւ քանի՛ նիրհող աստուածներ չքնաղ,
որպէսզի մենք չձանձրանանք

բազինին վրայ սա գերագոյն տուընջեան...

(Թիւ 11, 1979)

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՓՈՂՈՅՑ

*Փ*ողոցը ջերմ էր, փոշոտ, հին: Իրենց զագաթներով իրար գրկող ծամեր, որոնք տեսակ մը հրապոյր եւ խորհրդաւորութիւն ունէին ու կը պաշտպանէին փողոցէն դուրս եկող, թեթեւցած եւ բիւրեղացած հրճուանքներ մատնող անցորդները:

Մարդիկ երկար մտածեցին անտեսուած փողոցին բարեկարգման մասին եւ իւրաքանչիւր բարենորոգում եկաւ բռնաբարելու անոր ազատութիւնը:

Երկինքը ծածկուած էր ամպերով եւ ամրան տաքութիւնը ամպոտ երկինքին տակ խեղդող ներկայութիւն մը կը ստեղծէր:

Մարդիկ հաւաքուած էին դիտելու անպաշտպան փողոցին դէմ սարքուած դաւը: Ծամերը՝ խրոխտ, գեղեցիկ, իրենց չքնաղ գլուխները կացինի հարուածներուն յանձնելով՝ յաջորդաբար գետին կ'իյնային : Մանուկները կը զուարճանային գետին տապալած ծամերուն ճիւղերով, կը պաշտպանէին հոն բոյն շինող շուարած թռչունները: Ծերեր, քարերու վրայ հանգչած, կու լային իրենց անցեալի փլուզումը: Երիտասարդներ անոր երեկի թարմ տերեւներուն մէջ թաքնուած կը տեսնէին իրենց սիրոյ առաջին յոյզերը, եւ բոլորը ատելութեամբ կը դիտէին հետզհետէ մերկացող փողոցը:

Այդ օր փողոցը կորսնցուց իր բանաստեղծականութիւնը եւ դարձաւ հասարակ, բաց, քարացած ներկայութիւն մը. իրեն հետ ցնդեցաւ նաեւ գրաւչութիւնը փողոցային երջանկութեան:

* * *

Սենեակին բաց պատուհանին դէմ կանգնած՝ ան կը դիտէր բարձր շէնքերու մէջ խեղդուած փողոցը:

Արդէն տարիները մաշեցուցած էին զինք:

Քաղաքը բարձրանալով ոտնակոխած էր փողոցը, որուն զուարթ ու թարմ դէմքը արդէն անյիշատակելի իրողութեան մը վերածուած էր:

Քարէ անտարբերութիւն սնուցուած էր ամէն կողմ: Ան եկած եւ բաժնած էր հոգիները: Փոքր խցիկներու վերածուած էին տարածութիւնները, առանձնացած էր ամէն ոք, առանձնացած էր ամէն զոյգ, առանձնացած էր ամէն ընտանիք, եւ քարերը բարձրանալով անմիջապէս գծած էին բաժանման սահմանները: Եւ որքան կը բաժնուէին տարածութիւնները, այնքան մարդիկ իրարմէ, կը դառնային անջատ, ազատ, միայնակ բայց տխուր, որ հետզհետէ կը խորանար անոնց մէջ, եւ հետզհետէ առանձնութիւնը կը կաշկանդէր իրենց ազատութիւնը. անոնք

սարսափած էին եւ ազատութենէն, եւ առանձնութենէն, ու դիտելով ու արհամարհանքով կը դիտէին քարը, որուն վրայ կը բարձրանար ծանր ու տժգոյն քաղաքակրթութիւնը:

Տարիներ առաջ՝ օր մը, ինք կարօտով իջած էր հոն, դիմագրաւելով իր դէմ բացուող պարզ գեղեցկութիւնը, որ կու գար ազատութեան ծոցէն բխող տաք ձայնի մը պէս, լայն հորիզոններու վրայ տարածուող անկեղծ երազներ ներշնչելով:

Յիմա միայն քարեր կային խոշտանգուած, շնչահեղձ փողոցին վրայ, ուրկէ ինք ամէն օր բան մը կորսնցնելով կը հեռանար:

Այսօր տարօրինակ խլորտում մը կար ենթագիտակցութեան խորը, զգայնութեան լարերուն վրայ:

Սպասում մը կար հոն: Աճող եւ դեպի յուսահատութիւն ուղղուող սպասում մը: Ինչպէս ամէն օր, այսօր ալ մինակ էր սենեակին մէջ: Գիշերուան մթութեան ու լռութեան ափին՝ ան առանձին կը դիմագրաւէր կեանքը, որ կը թուէր ըլլալ իր վերջին օրը:

Մօտեցաւ պատուհանին: Քաղաքէն բարձրացող ծուխը ծածկած էր երկինքը այնպէս թանձր, որ կարծես չկար երկինք, չկար գետին, ու բարձր շէնքին միջոցով փողոցը կը կապուէր երկինքին, որ միայն ծուխ էր, գորշ ծուխ, որուն մէջէն կարելի էր նշմարել տուններու աղօտ լոյսերը:

Վարը՝ հեռուէն կը նշմարուէր պատին կռթնած ու իրար գրկած գոյգ մը: Ժամանակը ուշ էր: Այս ժամուն հագիւ թէ գինով մը օրօրուելով քալէր ցերեկուան յոգնութենէն սպառած փողոցին մէջ: Չոյզը անշարժ կեցած էր մայթին վրայ: Մէկը յենած էր պատին, միւսը՝ ափերը ընկերոջ վրայ հանգչեցուցած՝ կը նայէր անորոշութեան:

Եթէ ինք երկար մնար պատուհանին մօտ ու շարունակէր դիտել գոյգերը, անոնք երթալով պիտի մօտենային, պիտի նոյնանային անոնց ձեռքերը, աչքերը, մարմինները, եւ եթէ իջնէր վար, հասնէր անոնց հոգիներուն, հոն պիտի հանդիպէր իրենց առօրեայ միօրինակութենէն փախչող մարդոց:

Յեռացաւ պատուհանէն, զարմանալով, թէ ինչու մարդիկ քարեր չէին պատեր փողոցին մէջ, իրարմով վերացած այդ գոյգին շուրջ:

Փոշոտ սեղանին վրայ նկարներ կային, հարազատներու տժգունած նկարներ, թարմ ու մանկունակ դէմքերով զաւակներ, ժպտուն թոռներ: Պատկերներուն մէջ խորանալով կը փորձէր տեսնել անոնց ներկայ կեանքը՝ փողոցներու արագութեան մէջ քաշկոտուող իրենց մարմինը, վերելակներու սլաքին մէջ վերիվայրող արշաւը, գրասենեակներու ծուխերուն մէջ պայծառանալ փորձող անոնց մտքերը, մարմիններու ջերմութեան մէջ դրսեւորուիլ փորձող սերերը, իրենց հօր հեռաւոր ներկայութիւնը շալկող ծանր ու ցաւագին զգացումը:

Փորձեց կապ մը ստեղծել իր զաւակներուն ու թոռներուն հետ:

Թուղթի կտոր մը, մեքենագրուած հասցեով՝ պահարանի մը մէջ սահած:

Յեռաձայնային արագ զանգահարում մը, ցնցող ու զիլ ձայնի ետին յաւիտեանական պարապուծիւն բացող այդ ձայնը:

Փողոցի մերկացումին չափ անհրապոյր ու չոր կապեր էին անոնք, որ պիտի տանէին զինք դէպի կեանք: Ինք յագեցած էր այդ չոր կապերէն: Յիմա ապրող, մօտիկ սիրոյ մը գիրկընդխառնման կը կարօտէր, երբեմնի այն ջերմ փողոցին պէս շօշափելի դէմք մը պէտք է խլրտար իր դէմ, գունաւորուէր ժպիտով, վառ երջանկութեամբ, փայլող աչքերով ուստոստէր ու անցեալէն աւիշներ փոխանցէր իր ամլացած դէմքին:

Բայց վայրկեանները կը սահէին ու կեանքէն իրեն կը մնար միայն սեղան մը, անկողին մը, աթոռ մը, անխօս նկարներ եւ, ընդհանուր առմամբ, այս բարձր շէնքին մէջ գտնուող սենեակը: Իսկ իր ենթակայական աշխարհին գիրկը՝ երէկի հանգրուանները, որոնք այնքան հեռու էին իր առօրեայ աշխարհէն:

Յիմա տեսակ մը ընդհանուր յոգնութիւն մը կ'երթեւեկէր իր տան մէջ: Յոգնած էր առանձնութենէն, յոգնած ժամերու դանդաղ մաշումէն, յոգնած՝ յիշատակներէն, յոգնած բջիջներուն ծանրութենէն:

Կը զգար, թէ բան մը կը մօտենար իրեն: Դրան ետին կեցած մահը պիտի թակէր իր դուռը վայրկեան մը ետք:

Կը զգար, թէ բան մը կը խլրտար դուրսը: Շէնքին դէմքը համբուրող քամիին հետ ուստոստող մահուան բոյրը կը շրջէր շուրջը ու շունչը հետզհետէ կը տկարանար:

Ներքին պապակ մը ժպտեցաւ իրեն: Ուզեց կենդանանալ վայրկեանի մը համար, փափաքեցաւ, որ մէկը հեռաձայնէ իրեն ու շնորհաւորէ մահուան սպասման այս պահը: Չաւակ մը, թոռնիկ մը, դրացի մը, աստիճաններուն վրայ մլաւող կատուն : Մէկը՝ որ այս տարածուն ու մարդաշատ երկրագունդէն անջատուելով զայ իր ամայի յարկը, շնչէ ջերմութեամբ եւ, ձեռքէն բռնելով՝ առաջնորդէ զինք դէպի մահուան սեմը:

«Արդե՞՞ք երկրագունտը պարպուած է մարդոցմէ», մտածեց ու զգացում մը թաւալելով կազմաւորուեցաւ իր մէջ, մարմինէն սահելով անցաւ ձեռքերուն: Ափերը, պրկուելով՝ վերածուեցան բռունցքի: Ծնաւ ատելութիւնը, հին, երբեմնի իր ճանչցած փողոցը ոչնչացնող ձեռքերուն հանդէպ, եւ քարին հանդէպ, որ ծածկեց փողոցի փոշին: Ատելութիւնը՝ զինք բաժնող, սահմանափակող քարին հանդէպ: Իր սերերէն, յոյզերէն, զգայնութիւններէն ծնած խոր ատելութիւն մը կը խորանար իր մէջ եւ կը կուտակուէր քարին վրայ, զոր կ'ատէր, կ'ատէր հոգիներու հեռաւորութիւնը, փողոցի ամայութիւնը:

Նայեցաւ հալոյ իր կեանքին, որ երկվայրկեանէն կախուած կը ճօճուէր կեանքի ու մահուան անդունդներուն մէջ:

Վայրկեան մը փակեց աչքերը, ու ահա անոնց մթութեան մէջ պատկեր մը պարզուեցաւ իր դիմաց:

...Կարծեց, թէ ոտքի ելլելով կը զարնէր դիմացի դուռը, կը բանային, բան մը

կը փսփսար անոնց, կը փոխանցեր քարին պատմութիւնը, անոր բռնագրօսիկ ներկայութիւնը, եւ տնեցիները դուրս կու գային, միասնաբար կը զարնէին մնացեալ դուռները եւ բոլորը կը հետեւէին իրարու: Բազմութիւնը հետզհետէ կ'աւելնար: Անոնք մերկ ոտքեր ունէին եւ իրենց ափերուն մէջ սեղմուած մուրճերով կը հարուածէին շէնքը: Քարերը մէկ ամ մէկ կը տապալէին: Սանդուխներէն վար իջնելով անխօս, պիրկ ու խոժոռ դիմագիծերով այդ մարդիկը կը շարժէին իրենց ոտքերը դէպի վար, կը քսուէին իրարու եւ տեսակ մը աղմուկ կը լեցնէր շէնքը, ոտքերէն ծնած ու տարածուող ըմբոստ աղմուկ մը, որուն մէջ կը խորտակուէր քարին ձայնը: Վարը՝ անոնք կը շարունակէին հարուածել փողոցը, ուժգին, սըրտաբուխ հարուածներով: Կ'ուզէին խորտակել զայն: Ամէն կողմ կը տարտծուէր խլրտող ու պարող մուրճերու աղմուկը եւ քարերը մէկ ամ մէկ կ'իյնային...: Մարդոց խլրտումով ստեղծուած շփումն ու մօտեցումը գոհունակութեան զգացում մը կը բանար իր դէմքին վրայ: Բաւական յոգնած կը հեռանար աղմուկէն, մինչ ամբոխը կը շարունակէր պարել փողոցին մէջ, քարակոյտերուն վրայ... Անդին, պատանի մը, դէմքը ձեռքերուն մէջ պարփակած կը դիտէր աւերակ փողոցը...: Ծերունին մօտեցաւ պատանիին ու շնչասպառ հարցուց.

– Ի՞նչ կ'ընես:

– Կը մտածեմ,– պատասխանեց պատանին անշարժ:

– Ի՞նչ կը մտածես,– հետաքրքրուեցաւ մարդը, յիշելով իր սեղանին վրայ շարունակ հարազատներուն նկարները:

– Կը մտածեմ, թէ ինչպէ՞ս կարելի է վերակառուցել փողոցը,– ըսաւ տղան ու շարունակեց դիտել աւերակները:

Մարդը նայեցաւ պատանիին, ապա քարին, եւ զգաց, թէ քարին մէջ մաշելով փոքր տղան պիտի հասնէր իրեն, իր առանձնութեան, իր մահուան: Չգաց, թէ հոգիին բիւրեղացումէն բխած ատելութիւնը ծնունդն էր իր ճիւղաւորուած տարիքին: Տեղ մը պիտի դառնար կեանքի շղթան, ու մարդիկ հետաքրքիր աչքերով պիտի փորձէին վերակառուցել փողոցը...

Բացաւ աչքերը: Սենեակին մէջ էր տակաւին: Պատրանք էին աւերակ փողոցը ու պատանին: Նայեցաւ շուրջը, ամէն բան նոյնն էր: Ոտքի ելաւ, վերջնական ակնարկ մը նետեց սեղանին վրայ շարունակ նկարներուն եւ, դուրս ելլելով՝ ծանր քայլերով վերջնականապէս հեռացաւ:

Դուրսը մթութիւնը հետզհետէ կը բացուէր: Քայլեց մինչեւ մօտակայ կայանը, լայնօրէն շնչեց եւ վերջին անգամ փողոցը դիտելէ ետք ուղղուեցաւ դէպի ամայի անտառը, ու ծառի մը շուքին սպասեց մահուան:

(Թիւ 9, 1978)



*Ի. Ասոյեան, Է. Սարաճեան, Վ. Չանոյեան, Ս. Յակոբեան, Պ. Սնասպեան, Բ. Ճինսպաշեան,
Ս. Կիրակոսեան, Ն. Տէր Սարգիսեան, Յ. Պէրպէրեան*



Սարգիս Կիրակոսեան, Պողոս Սնասպեան, Պետիկ Զերկելեան (Պետրոս Զերեան)

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

ԱՐԳԱՆԴ



գայության մատները դողդոջ
Եղինջի նման դեմքիս կը հպին ...:

Պահն է արարման,
Այլ սերմեր չկան.

Արգանդը սիրոյ, գուրգուրանքին հրակէզ
Չնտան է միայն,
Ուր արցունքով ոռոգուած
Մշոյ դաշտերը կ'այրին...:

Ո՛վ պիտի սանձէ ժայթքումը ժահրին,
Որ այսքան տարի աւեր կը գործէ
Մեր տեսադաշտին սահմաններէն ներս.

Թող պատարագի բիլ հոսանքին մէջ
Խնձորեսկի տուներուն տանիքները թեւածեն
Չերթ միջնադարեան տաղերգուներուն
Լարերը այլուան...:

Ինչպէ՛ս, զ՛, ինչպէ՛ս
Կրեմ մարմնիս մէջ այսքան դիակներ,
Որ արքայութեան դռներուն առջեւ կը նեխին այսպէս,
Մինչ յարալէզները, զ՛, իրենց կարգին, կը թունաւորուին
Եւ մարմինս ողջ կը փոխակերպեն մռայլ դամբանի ...:

(Թիւ 10, 1986)

ԲԱՌԸ



աղուց արդեն բնակուած հմայական ցաւերով,
 Կը շրջէի ես անդուլ դիւահարի մը հանգոյն,
 Կը փնտռէի փրկարար բառս բարի,
 Սակայն չէի յաջողեր ճշդել անունը անոր:

...

Բառը ցօղ էր նախապէս՝ իջած դողին մատներուս,
 Դէմքիս թեքուած ծաղիկներու ժպիտ էր այն վայրկեանի,
 Թոթովանքիս շնորհուած գուրգուրանք էր պարզապէս:

Բառը ցոյք էր աղջկայ,
 Բաժակ էր ան հրաշահիւս կակաչի,
 Ապա խաչքար ճաքճաք,
 Մագաղաթի ծուէն էր՝ արիւնիս մէջ թաթախուած,
 Երակներս լափլիզող կրակ էր ան պատուհաս,
 Եւ ջիղերուս ցանցը ցնցող հրապոյր էր Էգերու,
 Որդան կարմիր է եռուն,
 Արեւայորդ հաւատամք էր հեթանոս,
 Հնադարեան մեղեդի,
 Հողի բոյր էր զգլխիչ,
 Յովատակի վրինջ էր ու վարզ էր ան եղնիկի,
 Նենրութ սարի գագաթէն դէպի երկինքն սլացող
 Աստուածային թռիչք էր ան ֆետաներու միածին,
 Ինձմէ ձգուած - զիս կանչող՝ բառը տանջանք էր գուցէ,
 Կոմիտասեան խնկարկում էր խելագար,
 Եւ առ Աստուած ճենճերում էր Նարեկի,
 Շարականի խագերուն մէջ հոլովուող
 Հոգեվառ բառն այդ մախմուր,
 Հոգեհան բառն իմ անգոյ,
 Որուն կարօտ՝ թափառեցայ ամենուր,
 Եւ անձնատուր եսի մթին ծալքերուն՝
 Ես դիմեցի աստղերուն եւ փողոցի լամբերուն...

Բայց ի վերջոյ,
 Անցնող ամէն վայրկեանին դէմ,

Մեռնող մեն մի բջիջիս հետ,
Չասունացման դառնակսկիծ թոպէին,
Ես զգացի ու հասկցայ վերջապէս,
Չամոգուեցայ արդարեւ,
Թէ չգրուած իմ բառն էր ան ահարկու,
Որ թունաւոր նետի պէս
Կ'երթէլէկէր մարմնիս մէջ...

(Թիւ 10, 1986)

ԼՈԳԱՆՔ



ամռակալած պատի պէս
Գանկս ամուր կը փակուի
Կատաղութեանս բոլոր շարժումներուն դէմ տկար...:

Գրակալիս մէջ յանկարծ
Կորիզային հիւլէները կը պայթին,
Մինչ արուեստի անհաշիւ թափուր ճիչեր կը ճեղքեն
Ներբաններս յոգնաբեկ:

Անուրջներու արանքին մէջ կը մխայ
Մահճակալս խարխլած,
Ուր կը կտրեմ մեղքերուս բազկերակը չարչարուած,
Չոր կը յանձնեմ Մաքրութեան
Յմայական ջուրերուն...:

Խիզախութեան վառ ժպիտը հոգիիս՝
Ես կը սպասեմ իմ մահուան,
Որ վերստին արարուիմ
Լոգանքին մէջ խենթութեան...:

(Թիւ 10, 1986)

3. ԳԵՂԱՐԴ

ՄԱՆՈՒԿ

Քնութեան մշտանորոգ այլ յաւիտենական գեղեցկութիւնները դարպասող արուեստագետ ու բանաստեղծ հոգիներ կը գտնուին ամեն ժամականներու մէջ: Բայց քիչեր անոնցմէ ի վերուստ շնորհուած կ'ունենան ստեղծագործող այն տաղանդը, որով կարենան «բռնել» գեղեցկութեան մասնիկը կեանքի խորհուրդէն՝ արուեստի անեղծանելի պարունակով փոխադրելու համար գալիքին: Այդ սակաւ ընտրեալներէն է ՄԱՆՈՒԿ:

Կեանքի վրայ բացուած գմայլահար աչք մըն է, զուարթ լոյսերու եւ տրտում ստուերներու կախարդանքին սիրահար բացառիկ զգայարան մը: Կը բաւէ որ երկնքի կապոյտ փեռեկտում մը մեծնայ անձրեւաթոր ամպերու թխութեան մէջ, դալար ճիւղ մը փթիթներ կապէ սարսռուն, հովի թելերուն տակ վայրենակոծ համանուագի, գունափարթամ երանգապնակի վերածուի ծովը. ու ալ Մանուկը չես գտներ իր աշխատանոցին մէջ: Կը մոռնայ առօրեայ կարիք, կեանքի հաշիւ: Ինք ու նկարահան մեքենան լերան մը կողին են արդէն՝ ամայի դաշտի մը արահետին վրայ, ծառի մը ստուերին տակ: Քաջ որսորդի մը պէս, որ ամենայն զգուշաւորութեամբ ու վարպետութեամբ կը հետապնդէ իր երէն՝ Մանուկ լուռ ու անթարթ կը հետեւի լոյսերէ բռնկած թափառական ամպերուն, կամ կ'որոնէ գարունը ամբողջութեամբ յատկանշող ծաղկափթիթ ոստը: Կրնայ ժամերով նստիլ սեպ ժայռի մը գլխին, հորիզոնին դէմ, սպասելով բարեբաստիկ այն վայրկեանին, երբ լոյսն ու ստուերը ներդաշնակելով իրենց խազը, վաղանցիկ թոպէի մը համար, պիտի գծեն հորիզոնի պաստառին վրայ բնութեան հմայիչ խորհուրդներէն մին: Մանուկ սեղմած է արդէն նկարահան մեքենային կոճակը եւ կորզած, ձրգած է յաւիտենական գեղեցկութենէն մասնիկ մը՝ թակարդը:



Այսպէս է որ ծառերու կանաչ ստուերներէն հոսող գետակի մը ջուրերը բիւրեղեայ խորհուրդի մը մէջ կը շողափայլին, մայրիներու ճիւղերուն հանգչող ձիւնը չնաշխարհիկ աղանձներու երամներ կը կազմէ աշնան մոխ-

րաւներ կը կազմէ աշնան մոխ-



րագոյն երկնքէ մը վար սպրդող ճառագայթներու խուրճ մը ոսկեշող ափսէներ կը ցանէ ծովու մակերեսին: Մաքրատենչ, պայծառացու սիրտ մը կը տրուիէ անոնց ներդաշնակութեան մէջ: Ու ահա այսպէս է որ բնութիւնը երկրորդ անգամ կը գեղեցկանայ եւ նոր յաւերժութեան մը մէջ կը մտնէ Մանուկի լուսանկարներով:

Մանուկ լուսանկարած է ցարդ լոյսի ու գիծի հեքիաթային երկիրը՝ Լիբանանը: Փիւնիկեան այս դարաւոր ծովափին մէկ պատմական անկիւնը ոսկեգօծող վերջալոյսի շողերուն տակ թողլթուած հնամենի պարիսպի մը եւ նաւակներու առթած տրտմանոյշ ու խորունկ պահը յաւերժացնող շքեղ լուսանկարով մըն է որ Մանուկ, Միւնիխի Միջազգային վերջին ցուցահանդէսին, շահեցաւ առաջին մրցանակը, 77 ազգերու վրայ այդ մեծ պատիւին արժանացնելով իր սիրելի երկիրը: Ինչ որ առած էր Լիբանանէն՝ վերադարձուցած էր անոր ամենաբարձր տոկոսով: Այս անգամ՝ նուիրագործեց արդէն իր երախտագիտութիւնը: Եւ վստահ ենք որ կը շարունակէ ապրիլ ու ապրեցնել իր սերը:

Բայց կը մաղթենք որ դուրս գայ մերթ ընդ մերթ այս սահմաններէն: Աշխարհի վրայ կան ուրիշ գեղեցիկ վայրեր ալ, որոնք կը սպասեն արուեստագետի շուն-



չին, վերապրելու համար ուրիշ կեանք մը: Մանուկի լինելութեան հասած ու նոր կարելիութիւններու խոստումով բեռնաւոր արուեստը կրնայ նուաճել նոր գեղեցկութիւններ: Ձեռքի մոզական մեքենան այն հզօր զէնքն է որ զինք կրնայ դարձնել աշխարհակալ:

(Թիւ 1, 1962)

ԳԷՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹ (Զատուած)

9 Օի ձմեռ օրով, շատ կարելոր գործի մը համար, հարկ էր Պէյրուէ իջնել, այն ալ գիշերով:

Պէյրուէ իջնելը, այն օրերուն, դիւրին գործ չէր: Ընկերոջ մը հետ, ընկերակցութեամբը Լեռնայիբանանէն պատասխանատուի մը, կ'իջնէինք Պէյրուէ՝ լեռնային շատ դժուարին ճամբէ մը: Զետաբրբիր էի. պատերազմին պատճառով կեանք առած էր այդ ճամբան, որ իր օժապտոյտ ընթացքով բնաւ հանգստաւէտ չէր: Մինչ կ'անցնէինք Պայսուր անուն գիւղին ծայրէն, մեր ընկերակիցը դիտել տուաւ, որ դիմացէն, Սուք էլ Ղարպէն, *ղանձաւի* վախ կար: Մտահոգիչ բան էր թերեւս, բայց եւ այնպէս կարելի չէր ետ դառնալ, ընդհակառակն՝ պէտք էր աճապարել: Շարունակեցինք ճամբան: Քիչ ետք, ահաւասիկ մեր առջեւ կը փռուէր ինքը՝ Պէյրուէ քաղաքը, Միջերկրականի երբեմնի թագուհին...: Զոն, վարը, օդակայանն էր, ուր կը տիրէր մեռելային լռութիւն ու խաւար: Իսկ ինք, Պէյրուէ քաղաքը, իրիկնային աղջամուղջին մէջ, հագիւ թէ կ'ուրուագծուէր: Զատ ու կենտ լոյսեր հոս ու հոն: Որքան խեղճացած էր չքնաղ քաղաքը: Աստուան իմ, կը նմանէր սատկած վիշապի մը: Ո՛հ, սա իմ ճանչցած Պէյրուէն չէր...

Այդ պահուն չէի գիտեր, թէ ինչ կը մտածէին ընկերակիցներս. սակայն ես մտովի ետ գացած էի. 45 տարիներ առաջ, իբրեւ մանուկ մը, առաջին անգամ ըլլալով հանդիպած էի Պէյրուէին, բայց տարբեր տեղէ մը, տարբեր պայմաններու մէջ: Զանդիպած էի անոր ու անդառնալիօրէն սիրահարուած...

1946ին, ծնողներուս հետ, դիմաւորուած էի Պէյրուէի մէջ: Նոր տարիէն քանի մը օր առաջ եկած էինք հոն, մեր ազգականներուն մօտ: Պատին մէջ, որ փոխադրած էր մեզ, մայրս արթնցուցած էր զիս եւ գոչած.

– Ե՛լ, տղաս, տես, Պէյրուէն է, հասանք:

Դժկամութեամբ արթնցած էի. ինչ Պէյրուէ, լոյսերու ծով: Լոյսէր, լոյսէր, զորս անկարելի էր հաշուել: Նաեւ ծովեզերեայ լոյսեր, որոնք կը տատանէին նաւերուն ու ալիքներուն հետ: Այդ ինչ հրաշք էր: Կախարդական բան մըն էր այդ՝ եւ ես կախարդուած էի, հմայուած:

Զիմա, ուղիղ 45 տարի ետք, Մամըլթէյնէն առաջին անգամ տեսած Պէյրուէս կը փնտմէի, կ'ողբայի...: Կարելի՞ բան էր լոյսերու այդ ծովը այդպէս ցամքեցնել... Զատ ու կենտ լոյսեր աւելի չարագուշակ երեւոյթ մը կը պարզէին: Ողբալի էր իմ Պէյրուէս...

* * *

Իբրեւ մանուկ, Պէյրուժը ինձի համար եղած էր եռանկիւն մը: Օթէլ Լիւքս, Աբրահամենց Երեւանի ֆապրիքան եւ Փաշային խանութը: Մեր գիւղին մէջ, մարդիկ միշտ կը խօսէին Պէյրուժի մասին, բայց խօսակցութիւնները կը դառնային այդ եռանկիւնին շուրջ: Օթէլ Լիւքսին մէջ կ'աշխատէին քանի մը երիտասարդներ. Աբրահամենց Երեւանի ֆապրիքին մէջ, դարձեալ, կ'աշխատէին համագիւղացի երիտասարդներ, իսկ Փաշային խանութը՝ Փաշային խանութն էր: Սա մեր ազգականն էր. գէր մարդ մը, որ միայն մէկ հատիկ աղջիկ ունէր. ամէն ամառ գիւղ կու գար: Իր տունը կից էր մեր տան: Մայիսին իսկ, իր մշակները իր տունէն այլ տուն կը փոխադրուէին, կը մաքրէին տունը ու կը սպասէին Փաշային: Սա իրեն հետ կ'ունենար նաեւ իր աներձագին ընտանիքը, որ ակելի բազմամարդ էր: Եւ մեր տան փակած տունին մէջ կեանք կը լեցուէր: Ամբողջ ամառը գրեթէ թռչուն որսալով կ'անցընէր Փաշան: Թէ զէնքով եւ թէ *տէխպով* թռչուն կ'որսար: Իրեն հետ որսի կ'ելլէին գիւղին երիտասարդները...: Եւ բոլորն ալ բերանաբաց զինք մտիկ կ'ընէին, երբ կը խօսէր Պէյրուժի մասին: Շատ բան կը պատմէր, բայց ինձի համար ըմբռնելի Պէյրուժը կը մնար Օթէլ Լիւքսը, Աբրահամենց Երեւանի ֆապրիքը եւ Փաշային խանութի եռանկիւնը...

Ամէն անգամ, որ մէկը որոշէր Պէյրուժ երթալ, ամբողջ գիւղը ոտքի կ'ելլէր: Եւ մտաբերութենէն մէկ ամիս առաջ իսկ, բոլորը լուր կ'ունենային: Պատրաստութիւնը կանուխէն կը սկսէր: Գալատուրանի ծխախոտ, ձէթ, ռուպ, չամիչ, չոր թուզ, ընկոյզ եւ բելեկ անպայմանօրէն կը տարուէին Պէյրուժ ապրող հարազատներու: Ատկէ զատ, համեմով-պանիրով հաց, ձէթով բոկեղ, բոված սիսեռ, *դաուրնա* եւ հաւկիթ չտանիլ չէր ըլլար: Իւրաքանչիւր ճամբորդ, երբեմն տասնեակ մը կողովներ, մէկ-երկու քուրձ կ'ունենար հետը: Յաճախ այդ կողովներուն մէկ մասը կ'ըլլար դրացիներուն: Յատկապէս հաւկիթը, տունի թարմ հաւկիթ, քանի մը ընտանիքներու կողմէ կը լեցուէր զամբիւղի մը մէջ: Նախ քիչ մը յարդ, ապա շարք մը հաւկիթ, դարձեալ հաւկիթ, եւ այսպէս՝ մինչեւ որ լեցուէր մեծկակ զամբիւղը: Կողովին մէջ կը գծուէին սահմանագիծերը. չորս շարք Մեսրոպին, երեք շարք՝ «Մեր Յովհաննէս»ին, երեք շարք՝ Դանիէլին, երկու շարք՝ Խաչոյին: Սահմանները կը ճշդուէին թուղթի կտորներով:

Վերջին գիշերը կը տապկուէր անխուսափելի *քէօֆթէն*: Իսկ առաւօտուն մեծկակ կտոր մը կարագ, տերեւներով եւ թուղթերով փաթթուած, կը տեղաւորուէր տեղ մը:

Ամէն մարդ երանի կը կարդար Պէյրուժ գացողին:

Վերադարձին՝ անոնք կը փութային բարի գալուստի եւ կը հիւրասիրուէին Պէյրուժի շաքարով: Շատ մօտիկները՝ պանանով կամ նարինջով: Պանանն ու նարինջը մեր գիւղը կը մտնէին Պէյրուժէն եկողներուն միջոցաւ...

Իւրաքանչիւր մեկնող եւ վերադարձող նաեւ կը վարէր նամակաբաշխի պաշտօն: Ծնողներ կը գրէին իրենց պանդխտած տղոց, յայտնելու համար կարօտ,

սեր, նաեւ խնդրելու դրամական օժանդակութիւն: Երիտասարդներ կը գըրէին իրենց ունեցած կարօտին, դժուարութեանց եւ սիրոյն մասին: Կ'երագէին Քեսապ վերադառնալ, թռչուն որսալ, լեռները բարձրանալ...

Ասոնք, եթէ գային, շուտով կը ձանձրանային եւ կը վերադառնային Պէյրուլթ...

* * *

– Պատերազմը վերջացաւ, կնի՛կ, մենք ալ երթանք Պէյրուլթ. թող տղեկ-

նիս տեսնէ սա Պէյրուլթը: Դուն ալ տես: Է՛հ, ես հոն կեանք անցուցած եմ, կեանք:

Հայրս էր: Կ'ուզէր կնոջ եւ զաւկին ցոյց տալ Պէյրուլթը: Հոն ունէինք մեր նշանաւոր Գարուն նենէրը: Ասոր կրտսեր զաւակը կ'աշխատէր Երճիին ֆապրիքը, իսկ փեսան՝ Օթէլ Լիքսի նշանաւոր Յովհաննէսն էր:

Պատերազմը Համաշխարհային Բ. պատերազմն էր: Ես երազի պէս կը յիշեմ անգլիացի զինուորներու գիւղ մուտքը: Եկան ու անցան. իրենց տուները հասան, թէ ոչ, ճկ գիտէ: Գիւղին մէջ ամեն մարդ ուրախ էր, որ պատերազմը վերջացած էր: Շատ բան չէի հասկնար ես պատերազմէն, բայց ամենուն պէս, ես ալ ուրախ էի: Յատկապէս անոր համար, որ Պէյրուլթ պիտի երթայի:

Նոր տարիէն աւելի քան մէկ ամիս առաջ ծնողներս պատրաստութեան սկըսած էին: Ամրան *պաստեղ* եւ խաղողի հիւթով ու ընկոյզով պատրաստած էին *սուճուխ*. ասոնց մէկ կարեւոր բաժինը մէկդի դրուած էր Պէյրուլթի համար: Չոր թուրքին եւ չամիչին ընտիր բաժինները մէկդի դրուեցան: Նուռի թթուի քանի մը շիշեր, մէկ թիթեղ ձէթ, երկու թիթեղ ռուպ լաւ մը ապահովուեցան, որպէսզի ճամբան չթափէին: Մէկի տեղ երկու *սինի* տնական *փախլաւա* պատրաստուեցաւ: Բաւական մեծ քանակութեամբ սիսեռ եւ բելեկ բովեց մայրս: Ղաուրման սառեցած էր կանուխէն: Գիւղին երիտասարդները ամբողջ գիշեր մը ծխախոտ մանրած էին: Վերջին գիշերն ալ կիները հաւաքուած էին՝ քեօֆթէն տապկելու համար:

Յաջորդ առաւօտ կանուխ, երկու էշեր բեռցուեցան եւ զացինք *կարաժ*: Համագիւղացիները մեզ ճամբու դրած էին մինչեւ գիւղին ծայրը: Մինչեւ վերջին



Լուսանկարը՝ Մանուկի

վայրկեան ըսելիքներ կային, դրկուելիք բարեւներ, պատուէրներ եւ նամակներ: Ոմանք մինչեւ կարած հետեւեցան մեզի:

Վարորդը, Գաբրիէլ, բնաւ գոհ չմնաց. պասին տանիքին մէկ կարեւոր բաժինը յատկացուեցաւ մեր զամբիւղներուն:

– Ի՞նչ է, եղբայր, ետ դառնալու միտք չունի՞ք՝ սա որքա՛ն բան կը տանիք հետերնիդ: Գացած տեղերնիդ անապատ չէ *ես...*

Ինչ իմաստ ունէր *շոֆէր* Գաբրիէլին տրտռոցը: Մենք ուրիշէն ի՞նչ ունէինք պակաս: Ինծի համար Պէյրուլթը շուտով հասանելի տեղ մըն էր: Եթէ սա բլուրին ետին չէր, ապա միւս բլուրին ստորոտը ըլլալու էր: Սակայն օձապտոյտ ու նեղ ճամբէն կը սուրար Գաբրիէլին պասը. բլուրները իրարու կը յաջորդէին, բայց Պէյրուլթ ըսուածը դեռ չէր երեւեր:

– Ե՞րբ պիտի հասնինք Պէյրուլթ, մայրիկ:

– Կը հասնինք, տղաս, առաջ Լաթափա պիտի հասնինք: Լաթափան մեր գիւղացիներուն համար արգահատելի տեղ մըն էր. ամէն մարդ քաղաք ըսուածը կը բաղդատէր Պէյրուլթի հետ: Բաղդատած Պէյրուլթի՝ Լաթափան կը կոչուէր ծրտոտ քաղաք:

– Մամա, ե՞րբ պիտի հասնինք ծրտոտ Լաթափա:

– Շատ չմնաց, տղաս, քիչ մըն ալ համբերէ:

Վերջապէս հասանք Լաթափա: Չորս դիս կը դիտէի՝ բազմաթիւ հաւեր տեսնելու համար: Կային հաւեր, բայց ատոնք ամբողջ քաղաք մը ծրտոտ դարձնելու համար բաւարար չէին: Տարօրինակ բաներ եւս կային. ահագին մօրուքով մարդիկ, Մուխթար Պապուկին չափ տարեց, յաճախ ճերմակ մագով, հեծիկ կը բըշէին: Մինչ այդ, ես միայն մէկ հեծիկ տեսած էի: Յոս քանի-քանի հեծիկներ կային: Ինքնաշարժները հապա, այնքան էին: Երկար ու կարմիր վարտիքով կիներ կ'երթային ու կու գային: Լաճեր եւս հեծիկ կը բշէին. իշակառքեր, ձիակառքեր...: Աստուած իմ, ո՞ր էր սա քաղաքին ծիրտը:

Ձեռքէս բռնած՝ մայրս կը հետեւէր հօրս: *Պանքա* պիտի երթայինք: Արդէն, ճամբու տեւողութեան, հայրս քանիցս պահանջած էր վարորդէն, որ չտնտնար, որովհետեւ ինք գործ ունէր պանքան: Սա ինքնին մեծ բան էր, մինչեւ մեր Պէյրուլթէն վերադարձը, անկէ ետքն ալ, գիւղացիները հոլոված էին, որ ճեմսին պանքա գացած էր: Այնքան խորհրդաւոր բան մըն էր որ պանքա ըսուածը: Յոն՝ *Սարրաֆ* Արթինին պանքան ինծի համար նորութիւն էր: Ներսը տաք էր, հակառակ անոր, որ բուխերիկ չկար: Խոշոր սրահին կեդրոնը երկայթէ մեծ սնտուկ մը կար, քովն ալ քիչ մը փայտ: Ուզեցի երկայթէ սնտուկին ինքնութիւնը ստուգել ձեռքերովս: Եւ ահաւասիկ պատահեցաւ տիպարին: Մատներուս ծայրերը այրեցան: Սկիզբը չուզեցի արժանապատուութեանս կերցնել լացը: Բաւական սեղմեցի շրթներս, բայց կարելի չէր: Լացի եւ բաւական աղմկալից: Յսկայ մարդ մը, կարծեմ նոյնինքն Սարրաֆ Արթինն էր, պահ մը աչքերը վերցուց, դիտեց զիս եւ գլուխը օրօրեց:

Յօրս պնդումներուն նայելով, կը կարծեի, որ իր գործը պանֆայեն ներս առնուազն մէկ-երկու ժամ պիտի տուէր: Քանի մը վայրկեանէն տուին երկու խոշոր թղթադրամ եւ դուրս ելանք: Մինչ այդ բազմիցս կրկնած էր, որ Ամերիկայէն մեզի չեք մը եկած էր: Այդ չեքն ալ խորհրդաւոր նորութիւն մըն էր: Թղթիկի կտոր մըն էր, ատոր փոխարէն երկու խոշոր թղթադրամ տուին ձեռքը: Ուրախ էր հայրս. մայրս ալ: Հարիւր թղթոսկի գանձած էին դրամատունէն: Իսկ գիւղացիք եւս հիացած մնացած էին ամբողջ քանի մը ամիս: Քիչ մը հիացու՞նով, քիչ մը ալ նախանձով իրարու կը պատմէին, որ ճեմսին պանֆայեն հարիւր ոսկի առած է եւ Պէյրութ գացած է...

Հագիւ պանֆայեն դարձած, պասը դարձեալ ճամբայ ելաւ: Մինչ այդ, առաջին անգամ ըլլալով այնքան մեծ խանութներ կը տեսնէի: Ինչ ճոխութիւն, ինչ առատութիւն, Աստուած իմ: Քեսապի մէջ կար շուկայ, բայց այդ բոլոր խանութներուն ապրանքները այստեղի մէկ խանութին ապրանքին չէին հաւասարեր: Չէ, իրաւունք չունէին մեր գիւղացիները «ծրտոտ Լաթաքիա» ըսելու...

Հիմա պասը դարձեալ ճամբայ ելաւ: Բլուրներ գրեթէ չկային. ճամբան երկար եւ ուղիղ երիզներէ կը բաղկանար: Օձապտոյտէն ազատած՝ ես ինծի հաշիւ կ'ընէի, թէ ո՞ր որ է, այդ երիզին ծայրը ըլլալու է մեր Պէյրութը: Կը հասնէինք երիզին ծայրը, ակեյի երկար երիզի մը ամօքեւ գտնուելու համար: Պասը ուղղակի կը լափէր ճամբան, բայց Պէյրութ ըսուածը չէր երեւեր:

Հիմա ուրիշ նորութիւն մը կար. ծովը: Մեր աջին էր սա: Կապոյտ ու անսահման ծովը: Այնքան ջուր ուրկէ՞ լեցուած էր հող: Ես ծովուն մասին շատ բան լսած էի, բայց բնաւ տեսած չէի զայն: Ջուրի ամենամեծ մարմինը, որ տեսած էի մինչ այդ, մեր գիւղի նշանաւոր Մուխթար Պապուկին աւագանն էր: Յեխով պատուած պատ մը, որ փոքրիկ ամբարտակի մը դերը կը կատարէր: Աս պատին ետին ջուրը կ'ամբարտուէր: Շաբաթը հագիւ մէկ անգամ կը լեցուէր սա աւագանը, որ հագիւ թէ փոքր սենեակի մը մեծութիւնը ունէր, իսկ խորութիւնը ընկերոջս Կիրակոսին ուսին հագիւ կը հասներ: Կիրակոսին հետ խեչափառ կ'որսայինք հոն: Աւելի ճիշդ՝ ինք կ'որսար, ես կ'ուրախանայի: Այդ էր իմ տեսած «ծով»ս: Իսկ հիմա՝ որքան մեծ էր մեր տեսածը: Գաբրիէլին պասը արագութեամբ կը լափէր ճամբան, բայց ծովը տակաւին չէր վերջանար: Խտիւք չէր հասներ: Տակաւին ակեյի անըմբռնելին կար: Մեր քերականին մէջ, առաջին տառերուն հետ կրցած էի հեզել ն-ա-ւ բառը: Նաւակի նկար մըն ալ կար հոն: Համեմատաբար դիւրին եղած էր այդ բառը հեզելը, բայց հիմա, երբ ծովուն վրայ կը տեսնէի մակոյկներ, չէի կըրնար զսպել զարմանքս:

- Մամա, այս պասէն մեծ չե՞ն ատոնք:
- Այո, տղաս,— կը պատասխանէր հայրս,— մեր գիւղին չափ խոշոր նաւեր կան...
- Ո՞ր են...
- Հոս չեն անոնք. հագիւ ովկիանոսներուն մէջ կրնան քալել...

Այդ բառը թէ՛ անարտասանելի եւ թէ՛ անհիմանայի բան մըն էր...: Մայրս ալ հիացած էր. իր ալ առաջին ճամբորդութիւնն էր սա:

– Տե՛ս, տես, հոն ուռկանով ձուկ կ’որսան...

Գիտէի, որ ձուկը ծովէն կու գար: Համէն աւելի քերականիս մէջի նկարով կը ճանչնայի զայն: Հիմա տարօրինակ բան էր սա մարդոց ըրածը. առանց զէնքի, առանց կարթի ձուկ կը բռնէին...: Շատ ալ չէի հաւատար հօրս...

Ճամբու եզրին նորութիւնները շատ էին, գիւղեր, փոքրիկ քաղաքներ. եւ միշտ ծով...: Դժուար էր այդ բոլորին խելք հասցնել: Լաւագոյնն էր քնանալը: Որքան հաճելի քնանալ մօրս գիրկին մէջ, երբ Գաբրիէլին պասը այնքան հեշտութեամբ էր կ’օրօրէր զիս...

Ժամանակի գիտակցութիւն, որ այդ տարիքիս գրեթէ չունէի, լրիւ կորսուած էր: Մերթ կը բանայի աչքերս եւ հարց կու տայի.

– Հասա՞նք...

– Քիչ մը եւս համբերէ, տղա՛ս, շուտով կը հասնինք:

Մթննալ սկսած էր, բայց տակաւին մայրս եւ հայրս առաւօտէն ի վեր կը յորդորէին՝ «քիչ մը եւս սպասէ»:

– Ահաւասիկ հասանք...

Ես միւս բառին չսպասեցի.

– Պէյրո՞ւթ, – հարց տուի:

– Ո՛չ, տղաս, Թրիփոլի...

Սա թիչ քաղաք էր: Ես կը սպասէի Պէյրութին: Ո՛ւր էր: Պասը կանգ առած էր: Լաճ մը, ահագին *թէխկէ* շալկած՝ պաս բարձրացած էր: Ես այդ *թէխկէ*ներէն կը տեսնէի մեր շուկային մէջ: Երկար Վահանին կամ Չենոբին խանութին մէջ կ’ըլլար: Ձեղունէն կախուած կ’ըլլար շարոց մը: Միայն հիւանդներուն համար կը գընւէր այդ հրաշալի ուտելիքէն: Իսկ թէ մինչեւ հիւանդին հասնիլը քանի՞ միս կը շորորային ձեղունէն եւ կամ քանի՞ հազար ճանճ կը թառէր ատոնց վրայ, Աստուած միայն գիտէր: Իսկ հիմա, լաճ մը շալկած էր տասնեակներով *թէխկէ*, տակաւին իրարու կպած, թարմ ու ախորժելի տեսքով: Հայրս, հասկնալով ախորժակս, առանց իսկ ուզելու, առաւ հատ մը: Հիւանդ չէի եւ *թէխկէ* կ’ուտէի: Միայն ես չէի, գրեթէ բոլոր ճամբորդները կ’ուտէին: Ի՛նչ զարմանայի բան: Շոքէր Գաբրիէլը, փոքրիկ շիշ մը օղի գրկած, բարձրացաւ դէկին առջեւ: Բոլոր յաճախորդները սկըսան տրտնջալ:

– Օհո՛, ակռայի ցաւի համար է...

– Ատոնց ալ ակռայի ցաւը չի վերջանար... Ումպ մը օղի քաշեց գլխուն, մնացեալը նետեց աթոռին տակ:

– Մեզի տեղ հասցուր, յետոյ եթէ կ’ուզես տասը շիշ խմէ...

Թրիփոլիի մէջ ուրիշ կարելոր նորութիւն մը կար: Նարինջ եւ պանանի ողկոյզներ: Այնքան նարինջ, այնքան պանան... հաւատալու բան չէր: Ո՛վ կ’ուտէր այդքան բան: Սա հրաշալիք մըն էր: Ո՛չ միայն խանութներուն մէջ, այլեւ ծառե-

րուն վրայ նարինջ կար: Քերականիս մեջ մեկ հատ նարինջ կար. եթե տակը գրր-
լած չըլլար՝ դժուար թե մարդ հասկնար ատոր ինչ ըլլալը: Իսկ այդ համով-հոտով
բառը հեզելով սորվիլը ինքնին ահագին աշխատանք էր: Եւ հոս, մարդիկ, տղաք,
նարինջներուն, պանաններուն քուլելով կ'անցնէին անտարբեր:

Յիմա գիւղերն ու քաղաքները աւելի շատ էին: Նոյնիսկ ծովը կը ծածկէին տե-
սողութենէս:

Իւրաքանչիւր հարցիս, թէ երբ Պէյրութ պիտի հասնինք, անփոփոխ պատաս-
խանը չէր ուշանար. «Քիչ մըն ալ համբերէ, շուտով կը հասնինք»:

Ճնողական հաւաստիքները այլ բան էին, Պէյրութ հասնիլը՝ այլ: Ստիպուած՝
քունի կ'անցնէի:

– Ե՛յ, տղաս, *թունէլը* հասանք...

«Հասանք»ը լսելով՝ ընդոտ տեղէս ցատկեցի: Իսկապէս խաւար տեղէ մը
կ'անցնէինք: Գաբրիէլն ալ, կարգ մը յաճախորդներու փափաքին տեղի տալով,
մատը դրած էր ճակին վրայ: Շատ քալեցինք, մինչեւ որ դուրս եկանք այդ տե-
ղէն: Մայրս հարկ տեսաւ Աստուծոյ փառք տալ. երեւի մեծ վտանգէ մը ազատած
էինք: Բայց ի՞նչ վտանգ:

Քալեց ու քալեց Գաբրիէլնիս: Ես ընդհանրապէս քունի կ'անցնէի: Ամէն ար-
թըննալուս հարց կու տայի, թէ ո՛ր մնացած էր Պէյրութը: Անխուսափելի պա-
տասխանը նոյնը կ'ըլլար. «Կը հասնինք, տղանս, կը հասնինք»:

Կէս քուն-կէս արթուն վիճակի մեջ լսեցի Պաթրուն, ճիպէյ, ճունի:

Պէյրութը չէր երեւեր ու չէր երեւեր:

(Թիւ 1-2-3, 1994)

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱՔՈՒԱՍԱՐԻՆԱ



ու գաս դժուար՝ ինչպես նշոյլը յոյսի:

Ով իմ ցնորք ապօրինի, գիտեմ... կու գաս
խշրտալէն ժամերու զսպանակին մէջ սառած
եւ քեզի հետ, ընծաներու մահաբեր նաւեր,
նաւեր ատելութեան, նողկանքի:

Իսաւար անհուն: Մահուան բոցեր վիուկակերպ: Ապականած
աւազներուն երազաբաշխ բռնաբարուած հորիզոն, ուր կը շնչես դուն
անշունչ դիակներու հեղուկացող, լաւայացող զառանցանքներ: Ապրիլ...
ինչո՞ւ...կեանքը յամառ է հիմա եւ դուն միակ, վերջին պայմանն ես
կեանքին:

Պէտք է ապրիլ:
Պէտք է ծնիլ գեհենին մէջ այս օտար՝
օտարութիւնը կեանքի, օտարութիւնը մահուան
եւ նողկալի այլանդակումն արիւնի...

Ճո՞վ, անցեալի դիւցազնաշունչ սիրուհի,
երազներու, տեսիլներու կապոյտ շուշան,
անէութեան ու մեր մահուան միջեւ ծագող ընդարձակուող
բուրումներու անմար մատեան, վարդագոյն չես,
եւ նաեւ չեմ ես վարդերու ծովը կեանքի,
իսկ դիցուհիդ սեւազգեստ՝
զինեալներու խրամներուն մէջ բոզացած,
– գեղեցկօրէն գեղեցկացած աւերակ –
մահիճներուն գարշաբոյր մանուկ դեւեր կը ծնի ...

Լոյսեր, լոյսեր, յոգնած լոյսեր,
մեր օրերուն հետ սպառած ջուրերն ի վար
սուզուող, թաղուող երազներու յոգնած խօսքեր:

Լոյսեր, նաւեր, լոյսեր, նաւեր, մահուան գիրքեր,
հիմա պղտոր, խուլ, հաշմանդամ, կոյր ու անկեանք ձեր շողերուն
ձեր շողերուն մէջ կը ծնիմ կեանքի, լոյսի շարականներ...
ու տակաւին՝

իմ իսկ մուլթէն,
իմ էութեան, մեր մթութեան խորխորատէն
քարափն ի դէմ, նաւերն ի դէմ՝
նիզակներու պէս խոյացող ըմբոստութեան փոթորիկներ...

(Թիւ 4, 1977)

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ՝ ՊԵՅՐՈՒԹ ԻՇԽԱՆՈՒՅԻՒՆ

ԵՐԿՈՒՆՔԻ ՑԱԻԵՐ

I

Ժամանակներ անցաւոր
կը խլրտան տեսիլները մոխիրին
մահուան մոխրագոյն պաստառին վրայ

– Գիշերն է այս սկիզբին
թէ ոչ վախճանը լոյսին

ձայներ կը մարին թաց պարիսպներէն
յարալէզներու աչքերու նման

Եւ քաղաքն անդէմ
դուրս կու գայ բոցէն եւ աւերներէն
կը խաչէ մարմինն իր անառագաստ
նենգ արշալոյսի սեւ խաչին վրայ

Մոխիրն է ամպ գնայուն
բոցը՝ լեզու մնայուն

II

Արշալոյսին, Պէյրութը կ'արձակէ արծիւները մոխիրին՝ պարիսպներու
կատարէն եւ մոխրագոյն ժամանակն այս կը կտակէ դամբաններու
մարմարեայ՝ իբրեւ բացուող, անհունացող պատուհան: Չաստուածներու
գիշերն է այս սպիտակ, որ կը ծփայ մեղմօրէն անդրսպիտակ ժամանակի
ջուրերուն: Կը մերձենաս դուն լոյսի ծեսերու լոյս խորհուրդին՝ ինչպէս արծիւ
հրաթել եւ արեւուն տառերով անջրպետը կը քերթես:

Պէյրութ ինչպէս քեզ գրեմ
ես լոյսերով յարուցեալ

Ձայնն իմ մարմին տերունական
հրդեհներէն յափշտակուած տեսիլներու...

III

Մարմին
ով քար անճանանչ
որ կը հակիս ջուրերուդ ծփանքներու խորհուրդին
ես քեզ ինչպէս չարձակեմ

Մարմին
ով ամպ ճամբորդող
ակունքներ կը ծաղկես ավերուս մէջ իմ մթին
քեզ ինչպէս չկանչեմ

Ջուրն իմ կարօտն է ամպին
որ մահն իր ինք կը գուժէ

Իւրաքանչիւր մահուան մէջ
կայ սկիզբ մը ծնունդին
որ կը սկսի...

ԿԸ ԼՌԵՄ ՎԵՐՔԸ ՔԱՐԻՆ

I

Քարին շարժումէն աստղեր կը ծագին
– մեղեդիներ թափանցիկ –

Եւ այիքներն աւազին
գիշերներու աղօթքները կը ծխեն՝
փրփուր – փրփուր սպասում
եւ կը լռեն

Լոյսը գիրն է անհունին
եւ մերկութիւնը մահուան
Շովուկն մակընթացութեան
եւ գիրին տեղատուութեան միջեւ
ա՛լ պատկերներ չեն ծագիր

Լոյսը վերքն է անհունին
եւ հրդեհները կեանքին. . .

II

Պաստառ մը երկդէմ
երկկողմ ամեղծուած
լոյսի եւ մութի միահիւս թնճուկ
զոր ստուերը կը բաժնէ
իր ստուերէն

Աւագն առաջին
յակինթը մաքուր կը յայտնուի թափանցիկ
– լռած երաժշտութիւն –
արծաթ – արծաթ ջուրերուն

Երկրորդը ցեխն է արդէն

Քարեր կակուղ
կ'ըլլան շարժում
կոտորտուող պատարագ
ասուպներու անակնկալ գայթումէն

Օ՛ լռութիւն բեւեռագիր
անանցանելի ներկայութիւն անտանելի

III

Խորը կապոյտ հանդարտութեան
նշան մը կայ անթեղուած
ստուերին մէջ իր մութին

Գիշերները մահամերձ
կը քարանան շնչահեղձ
ասուպներու անկումէն

Կ'արձակեմ լոյսն իմ երկինք
եւ ջահերը հետսուլթեան
դէպի ընդերքը հողին

ԿԱՊՈՅՏ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

I

Գիշերուան բարձրագոյն կէտին
օդը քեզմով կը յղանայ
ծփանքները արեւին

Լուսաստղը
պատուհանն իր կը գոցէ
եւ կը ննջէ մարգերուն մէջ անհունի

Յովը տաֆթարն է անհունին

II

Կը ծաղկի լոյսն արարիչ
տարաշխարհիկ մեղեդիներ թափանցիկ
անեութեան ովկիաններէ հեռակայ

Կը փակեմ աչքս թռչուն
եւ հեթանոս իմ մայր հողին կը մեկնեմ

Ձայնս է ճերմակ
կաթնաճերմակ եղեամներու գինովութիւն
որ ծնունդն իր կը յարդարէ

Օրհնեա՛լ է լոյսը ծիլին

III

Մաղմոսներու պատարագը սպիտակ՝ փրփուր – փրփուր կը ծաւալի
նախադասութիւններ անընթեմնելի: Յրեշտակներու սպիտակ փետուրներ կը
պարեն աչքերուս ձիւներէն մինչեւ պուրակներ կրանիթեայ, որոնց
մահագուշակ տարածքներուն ամպերը պատուհասներ կը տեղան:

Պուրակն ահա կը թաղուի անհորիզոն հողմերուն հետ գիշերուան՝ մահուան
ջուրին տակ գիշեր, որ ոչ մէկ գոյն չի յիշեր, որ ոչ մէկ շունչ չի փրկեր: Ես
կ'այլալիմ ահաբեկ, աճիւններն իմ կը ժողվեմ եւ ժողովի կը կանչեմ

լինելու՞թեան հորիզոններն անամիկ՝ մեր մանկութեան այգիներէն ուխտաւոր
եւ յիշողութեան միգամած հորիզոնին վրայ կ'ըլլամ հարցում եւ տուայտանք:

Ինչպէս փակեմ աչքն իմ թռչուն...

IV

Մեր բակին մէջ հինաւուրց
մարմինդ ահա կը տարածէ յոգնութիւնը տարիներուն
– սաւան ինչպէս –
եւ քայլերուս զնգզնգոցին կը սպասէ

Լռութիւնը կիկլոպեան աչք յաւերժի

Ես կը սուզուիմ մարմնիդ մէջ
– շողեր ինչպէս –
կը հովանամ միսերուդ մէջ առասպել
– կանչեր ինչպէս –

Կ'ըլլամ հեղեղն արեւին
եւ ողջակէզ գինովութիւն

Անապատին ճիշդ կեդրոնը
աղբիւրները ամառնային լայն կը բանան
դուռներն իրենց եւ լուռ կ'այրին
ծարաւէ մը գերիբական

V

Գինովութեան բարձրագոյն աստիճանին
լոյսը քեզմով կը յղանայ
շարժումները արիւնին

Լուսաստղը
պատուհանն իր կը բանայ
եւ կը խուժէ մարգերն ի վար բնութեան

Յովը ձայնդ է բանաստեղծ
որ անհունին երգ երգոցը կը գրէ

Եւ ծառերը կը ծաղկին
ծփանքները արեւին

Օրհնեալ է յոյսը յոյսին...

ԱԶԱՏ ՄՕՏԵՑՈՒՄ

Չորիզոնէ տարաշխարհիկ կը ժամանենք առասպելեան աչքերով, ուր
ցանկութիւնն արեւին փոթորիկներ կը պայթի: Նոճիներուդ արցունքները մեր
կոպերը կ'ակօսեն՝ իբրեւ սերմեր տեսիլքի: Կ'որոնենք աղբիւրները գիշերային
յասմիկներուն, որոնք անհունը կ'օծեն շարժումներու բոյրերով՝ յաւիտեանէ
յաւիտեան: Ոչ մէկ անցում կը հասնի մեր քայլերուն անարեւ:

Աստղ մը – իշխան խելագար – իր մուռ փոսին կը մեկնի...

Չրեշտակներ դուրս կու գան անտառներու խորերէն եւ ամբարներ կը բանան
դուռներն իրենց պղնձեայ, ուրկէ յոյսեր կը ծաղկին՝ ինչպէս կանաչ պատարագ
ժամանակի անտառէն: Դիտեցէք երկփեղկունը մոխիրին եւ յիշեցէք, որ հոն
ոսկի բիւր կայծեր կան անթեղուած: Քեզ կը կոչեն նշոյլ: Կոչեցինք քեզ ոսկի, որ
յասմիկներու ոսկին մահիճդ ի վար յորդի շարժում եւ տերեւ, զեփիւռ եւ արեւ:

Իշխանուհի ընկողմանած մետաքսներու մէջ հեքիաթ, առ կարօտն իմ
ծանրաշուք, բառերն իմ ան՝ անտառներու ստուերներուդ չափ մթին,
ստուերներուդ հրայրքին: Լռութիւնը մահիճիդ միշտ կը լափէ շարժումներու
քամիները բարբարոս ...

Արիւնը գալիք լուռ կը պատրաստուի...

ՊԱՍՏԱՌԻՆ ԴԻՄԱՅ

I

Պաստառ մը լքուած
մուռ մայթին վրայ այս մուռ քաղաքին
կ'երգէ թեւաբեկ գալիքն արեւիդ

(Խաւարներն ինչպէ՛ն կը գահավիժեն
ծուռ արշալոյսին ծործորներն ի վար)

Կատու մը վայրագ
կը ցատկէ ընդոստ շրջանակէն դուրս
– ինչպէս մանկան ճիշդ գիշերուան խորքէն -
եւ լոյսն աւերիդ թունաւոր մոխիր ու բոց կը տեղայ
այս մուշ քաղաքին մուշ մայթին վրայ

Մոխիրն է վերք մշտարթուն
բոցը՝ գալիք անանուն

II

Արտօնում է երբեւիցէ
քաղաքներու քաղաքին մէջ այս մթին
բանալ դուռը երազներուն սարսափահար
եւ թափանցել ծեսերէն ներս արեւին
ուխտաւորի լուսակարկաչ քայլերով

Արտօնում է երբեւիցէ
քաղաքներու քաղաքին մէջ այս մթին
բանալ սիրտը տեսիլներուն այսահար
եւ թափանցել ճիշերէն ներս արիւնին
սիրահարի նորաբողբոջ քայլերով
երբ անդին՝
արեւն է սառած պաստառիդ վրայ
– Օ՛ տարաշխարհիկ երգը արիւնիդ -
ուր սիրուհիիդ ստինքներուն դէմ
պահակ է կանգնած նոյն կատուն անդէմ

Ինչպէ՛ս չմտնեմ
ժամանակէն ներս այրած պաստառին
դուրս շարտելու այդ կատուն վայրագ
որուն աչքերուն հրդեհ կայ հիմա
նախանձ ու հեշտանք
գայրոյթ ու կրակ...

Միամիտ Կոկան
սպաննէ գիս սիրելիս
այդ կատուն ես եմ...

ՕՐՀՆԵՐԳ

Օրհնեալ ես դուն ի կանայս
 – իշխանուհի իմ քաղաք -
 որ գալիքն ես անցեալին

Օրհնեալ ես դուն ի կանայս
 – իմ բազմախոց սիրուհի -
 որ թռիչք ես յաւերժին

Դուն
 իմ կարօտ լուսեղէն
 որ մերկութիւնդ ամօթխած
 արդ կը ծածկես չաստուածներու աչքերէն
 ըսէ ինչպէս ես լռեմ


Օ՛ երգեհոն ինքնաբաշխ
 շարականն ես պատարագին ինքնուրաց

Փառքը մեղրահացին օրհնեալ եղիցի

(Թիւ 7, 1985)

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԲԱԺԱՆՄԱՆ ԳԻԾԸ



ահրամեն տեղ էր:

Յրապարակները, պողոտաները եւ փողոցները դարձած էին սարսափազդու կրկեսներ, ամայի ռազմադաշտեր, ուր մահը կը ծիծաղէր, կը քրքջար, ուր դարանակալ դահիճներ անակնկալի կը բերէին պատահական զոհերը:

Վարձկան նշանառուներ, դիրք բռնած բարձր տանիքներու վրայ, անմեղ անցորդներ կ'որսային: Սպաննելու առիթը երբեմն այնքան հագուադէպ կ'ըլլար, որ բազմաթիւ փամփուշտներ կը հարուածէին նոյն թիրախը:

Բաժանման գիծը թունաւոր օձի մը պէս կ'երկարէր նաւահանգիստէն մինչեւ Յազմիէի բարձունքները եւ իրարմէ կը բաժնէր նոյն թաղին եւ նոյն փողոցին երկու կողմերը:

Յերեկները կարելի կ'ըլլար անցնիլ քաղաքին մէկ կողմէն միւսը՝ նախապէս որոշուած անցքերէ, որոնք կը փոխուէին անհասկնալի պատճառներով:

Գլխաւոր հինգ անցքերէն չորսը միշտ փակ կը մնային: Այդ անցքերուն յարմարագոյնը Ֆուատ Շեհապ արդիական պողոտան էր, որ կ'անցնէր քաղաքի կեդրոնէն: Հոն, սակայն, հակառակորդ դիրքերը իրարու այնքան մօտ էին եւ միջոցը այնքան բաց, որ թղթակիցները զայն կոչած էին «Մահուան դարպասը»:

Կը պատահէր, որ անծանօթ պատճառներով, բոլոր անցքերը փակ կը մնային եւ կ'առնուէին արձակագէտներու եւ թնդանօթներու կրակին տակ: Այն ատեն, բաժանման գիծը կը դառնար կրակէ պատնէշ մը, աւելի անանցանելի եւ մահացու, քան Պերլինի պատը:

Այդ առտու երիտասարդը շատ կանուխ արթնցաւ: Շաբաթը անգամ մը ըստիպուած էր միւս կողմը անցնելու:

Չայնասփիւռի կայանները գէշ լուրեր կը հաղորդէին արեւմտեան շրջանի մասին: Թաղային կռիւներ տեղի կ'ունենային ամէն կողմ:

– Այսօր ճամբաները շատ վտանգաւոր են,– ըսաւ մայրը,– գէշ նախզգացում մը ունիմ: Տղան, Սերոբ, այսօր միւս կողմը մի' անցնիր: Քեզմէ զատ մէկը չունիմ աշխարհի մէջ:

– Մայրիկ, ճամբաները միշտ վտանգաւոր են: Ընելիքս պարտականութիւն է: Այսօր միւս կողմը անցնելու իմ կարգս է: Եթէ մենք՝ երիտասարդներս, քաշուինք մեր տունները, ո՞վ պիտի պաշտպանէ մեր ժողովուրդը: Արդէն միւս կողմը շատ երկար պիտի չմնամ, կ'եսօրին վերադարձած կ'ըլլամ:

Մայրը տխրեցաւ: Գիտէր, որ զաւակը անդորդուելի պիտի մնար:

– Եկ՛ր՛ւր,– ըսաւ,– մեկնելէդ առաջ մէյ մը ճակատդ համբուրեմ:

Երիտասարդը մէջքին կապեց ատրճանակը ու դուրս ելաւ:

Թանգարանին անկիւնը զինեալները կեցուցին զինք: Անոնց մէջ բարեկամներ ունէր:

– Սերորբ,– ըսաւ անոնցմէ մէկը,– այսօր անցքը շատ վտանգաւոր է: Այգաբացէն ի վեր արձակագէնները կրակ կը տեղացնեն անցնողներուն վրայ: Զիարձակարանին առջեւ, երկու հոգի սպաննուեցան իրենց ինքնաշարժին մէջ:

– Առաքելութիւնս շատ կարեւոր է եւ չի կրնար յետաձգուիլ: Պարտականութիւն է: Ինծի ապահով ճամբայ մը ցոյց տուէք:

– Ապահով ճամբայ գոյութիւն չունի: Բայց եթէ առաքելութիւնդ անյետաձգելի է, քեզի ճամբայ կու տանք ձիարշաւարանին մէջէն: Կ’ելլես ետեւի դուռնէն: Եթէ զգոյշ ըլլաս ու վազես պատին քսուելով, կրնաս հասնիլ մինչեւ փլատակ շէնք մը, որուն առջեւ կը գտնուի կանոնաւոր բանակին անցարգելը:

Զիարձակարանը իսկական աւերակ մըն էր: Անոր դարաւոր եղեւինները վերածուած էին հրկիզուած կմախքներու. երբեմնի կանաչ մարգագետնին տեղը կը բուսնէին փուշեր ու տատասկներ: Գնդակներ կը սուրային վերէն վիրաւոր մեղուներու պէս եւ մօտակայ թաղերէն կը լսուէին կրակոցներ եւ պայթումներ:

Յասաւ ձիարձակարանի ետեւի դուռը, որուն առջեւէն կ’անցնէր լայն պողոտայ մը: Միւս կողմէն՝ բարձր շէնքեր չկային, այլ՝ եղեւիններու պուրակ մը, ուր լաւ օրերուն աղքատ ընտանիքներ պարտիզագնացութեան կու գային: Պողոտայի ասֆալթին գորշացած խաւին վրայ, ռումբերը խորունկ վերքեր բացած էին: Անոր երկու լայն մայթերուն վրայ այնքան հող հաւաքուած էր, որ շատ դժուար էր քայլել անոնց վրայէն:

Շրջանը ամայի էր ու լուռ՝ Տէր-Չօրի անապատին պէս: Կարելի եղածին չափ կը քայլէր պատին քովէն, հակառակ անոր, որ մայթին բուսականութիւնը խիտ էր եւ սուր փուշեր կը ծակծկէին միւսերը: Պատը հաստ էր ու բարձր եւ զինք կը պաշտպանէր զրահի մը պէս: Գնդակ մը անցաւ պատին վերէն ու զարնուեցաւ միւս մայթի հողաթումբին:

Այն փլատակ շէնքը, ուր դիրք բռնած էր օրինաւոր բանակի ջոկատ մը, կը գտնուէր հարիւր մեթր անդին:

– Եթէ արագ վազեմ, երկու վայրկեանէն կը հասնիմ հոն,– մտածեց երիտասարդը:

Եիջդ այդ պահուն, գտնուեցաւ լայն ու խորունկ փոսի մը առջեւ, որ կ’երկարէր ձիարձակարանի պատէն մինչեւ պողոտային կէսը: Լքուած կոյուղի մը ըլլալու էր, որ ժամանակին եւ անձրեւներուն պատճառով կքած էր ինքնիր վրայ: Պատը, որուն տակէն կ’անցնէր կոյուղին, փուլ եկած էր եւ ձգած էր քանի մը մեթր լայնքով բացուածք մը, ուրկէ ատեն-ատեն գնդակ մը կը սուլէր: Եթէ փոսը այնքան լայն չըլլար, մէկ ոստումով կ’անցնէր անոր վրայէն: Պետք պիտի ըլլար զայն

շրջանցելու համար հեռանալ պատեն ու ճամբան շարունակել պողոտային մեջտեղէն:

Այն ատեն է, որ սուկեց գնդակը...

Երկինքը, ծառերը, պատը երերացին եւ լռութեան կամարը փշրուեցաւ ապակիէ թմբուկի մը պէս:

Օդը պայծամ էր, եւ արեւը՝ կիզիչ: Անոր նետանման ճառագայթները կը խանձէին քարերը, ծառերը, փոշին եւ անոր տակը ննջող սեւ ասֆալթը, որ կը փորձէր իր լարծուն բագուկներով գրկել կռնակին վրայ պառկած մարդկային կերպարանքը, որ իր անթարթ աչքերով կը դիտէր երկինքը:

* * *

Արեւը անհետացաւ տուներուն ետեւը եւ մութը, յառաջանալով արեւելքէն, ծածկեց լոյսի այդ սաւանը, որ կը վարագուրէր երկինքին հրաշալիքները, եւ գիշերը փոխարինեց ցերեկը:

Կռնակին վրայ պառկած երիտասարդին կիսաբաց բիբերուն պատկերացաւ լուսաւոր կէտ մը:

Այդ կէտը Լուսնթագ մոլորակն էր:

Մայրը, որ կը նայէր դէպի արեւմուտք եւ սիրուհին, որ կը նայէր դէպի արեւելք, տեսան Լուսնթագ մոլորակը, որ ինկած էր իրենց սիրած տղուն ակնակապիճներուն մէջ: Անոնք լսած էին գնդակին սոյլը եւ երկնակամարին փշրուիլը, բայց չէին հասկցած, որ ան ծակած էր իրենց մէկ հատիկին սիրտը:

Յիմա անհուն պարապութիւն մը կը լեցնէր երիտասարդին ակնակապիճները: Ասֆալթին վրայ փռուած անոր մարմինը կը կրէր մարդոց ոճիրներու ամբողջ ծանրութիւնը:

Տունէն մեկնելու պահուն, մայրը համբուրած էր ճակատը, եւ այս եղած էր իրենց մարմնական վերջին հպումը: Յիմա, խեղճ կինը նստած էր պատուհանին առջեւ ու կը սպասէր: Ամբողջ գիշերը, աչքերը յառած Լուսնթագ մոլորակին, իր յոյսին թելերով կը վանէր այն սեւ մղձաւանջը, որ կապարէ ալիքի մը պէս կը խոյանար՝ զինք բանտարկելու համար ունայնութեան ուռկանին մէջ:

Երբ մանուկ էր եւ կը քնանար օրօրոցին մէջ, սրտին զարկերը կը դանդաղէին՝ համընթանալու համար մօր սրտին զարկերուն հետ: Երբ անհանգստանար, կը բաւէր, որ ճիչ մը արձակէ, որպէսզի վերադառնար անոր տաք գիրկը եւ նոյնանար անոր ստինքներուն զանգուածին: Իրենց պորտային հանգոյցը, թէեւ անտեսանելի, զիրենք կը միացնէր այնպէս՝ ինչպէս երբ կը բոլորէր իր սաղմնային կեանքը եւ կը լողար մայրական արգանդին կենսատու հեղուկին մէջ:

Երբ մահացու գնդակը ծակեց երիտասարդին սիրտը, մայրը զգաց ահաւոր բզկտում մը արգանդին մէջ, այն ցաւը, զոր մայրերը կը զգան, երբ կը կտրուի պորտային կապը եւ նորածինը կը բաժնուի իրենց մարմնէն:

Յիմա, սակայն, մայրական գիրկը չէր կրնար պարզել այդ նախածննդային անդորրությունը, որուն մէջ կ'ուզէր կրկին անեանալ: Պէտքը կը զգար աւելի ապահով բոյնի մը, աւելի անհուն արզանդի մը՝ թաղելու համար իր յուսախաբութիւնը, անձկութիւնը, պատրանքները եւ երազները: Մարդուն կեանքը կը սկսի մօր արզանդին մէջ, կը զարգանայ սիրած կնոջ արզանդին մէջ ու կը վերջանայ համայնական արզանդին մէջ:

Միայն մայր հողը կրնար իրեն պարզել այդ նախածննդային անդորրութիւնը, որուն մէջ կ'ուզէր կրկին անեանալ: Ինչո՞ւ մարդ արարածին չէ տրուած ընտրել այն վայրը, ուր պիտի ննջէ յաւիտեան: Ինք միշտ երազած էր թաղուիլ արեւոտ բլուրի մը գագաթը, անմշակ ու կոյս հողի մէջ, ուր մարմինը, տարրալուծուելէ ետք, պիտի վերածուէր մարմարի, հանքածուխի, մետաղեայ հանածոյի, իսկ արիւնը սնունդ պիտի հայթայթէր ծառերուն եւ բոյսերուն եւ կարմիրով պիտի ներկէր անոնց ծաղիկները եւ պտուղները:

Միրուհին այցելութեան պիտի գար այդ բլուրին գագաթը, պիտի խօսէր իրեն հետ, յետոյ ծաղիկներ ու պտուղներ պիտի քաղէր իր հեշտաբեր ձեռքերով եւ ինք պիտի հրճուէր՝ զգալով անոր մատներուն հպումը եւ կենսատու շունչին շոյանքը:

Մինչդեռ այդ փամփուշտը, միսերուն մէջ մխրճուած մետաղի այդ կտորը, զինք նետած էր այդ ամայի պողոտային ասֆալթին գիրկը, որ իր մարմնին կը փաթթուէր անյագ պերճադիճի մը պէս:

Գիշերուան աճող զովութեան հետ, ասֆալթը սկսաւ կարծրանալ եւ իր սեւ զանգուածով գրկեց երիտասարդին մարմինը:

Երբ արելը կրկին նուաճեց երկնակամարը, ասֆալթը կակուղցաւ ու թուլցուց իր ճնշումը: Երիտասարդին ճգնուած միսերը վերագտան իրենց հանգիստը: Լուսնթագ մոլորակին մէջ արտասանած հոգին ատենուան մը համար վերակենդանացուց ուղեղին քարացած բջիջները եւ բիբերուն ոսպնեակին մէջէն սկսան տողանցել սիրելի դէմքեր:

Մօր դէմքը սկսաւ աստիճանաբար փոխարինուիլ կնոջական ուրիշ դէմքով մը, որ իր քոյրը չէր, որովհետեւ երիտասարդը քոյր չունէր: Սլացիկ հասակով, սեւ աչքերով եւ երկար մազերով պարմանուհին, նստած պատուհանին առջեւ, աչքերը յառած դէպի արեւելք, կը սպասէր երիտասարդին ու կը յիշէր անոր խօսքերը.

– «Առաջին անգամը չէր, որ կը տեսնէի քեզ, բայց այդ պահուն է, որ անդրադարձայ գոյութեանդ: Կարծես կու գայիր ուրիշ աշխարհէ մը: Դէմքիդ վրայ կը ծփար խորհրդաւոր ժպիտ մը, որուն միջոցով կը փորձէիր ինձի փոխանցել դարաւոր պատգամ մը:

«Պատկերդ կ'առնէր զանազան երեւոյթներ ապակիին անյատակ թափանցիկութեան մէջ, եւ դէմքդ կ'այլափոխուէր հողմակոծ ամպի մը պէս»:

«Թէեւ անծանօթ մը չէիր ինձի համար, սակայն դժուար չեղաւ ստուգել ինքնութիւնդ: Ռ'վ էիր արդեօք հին օրերուն, երբ հրեշտակները երկինքէն իջնելով կը

դարպասեին աղջիկները: Ո՛վ էիր արդեօք այդ օրերուն՝ հպարտ թագուհի՞ մը, անմերձենալի իշխանուհի՞ մը եւ կամ նուիրական քրմուհի՞ն այդ դիցուհիներուն, որոնց առջեւ ծունկի կու գային աշխարհի բոլոր ժողովուրդները»:

Սակայն արեւը կը շարունակէր թաւալիլ անջրպետին մէջ: Գիշերը յաջորդեց ցերեկին եւ ասֆալթը կարծրանալով իր եբենոսէ բագուկներուն մէջ կը սեղմէր երիտասարդին մարմինը՝ անյագ տարփուհիի մը պէս:

Եւ սիրուհին կը լսէր անոր ձայնը.

– «Ո՛վ կորսուած ու վերագտնուած հրեշտակա: Ահա՛, կանգնած ես դեմս: Սեւ մագերդ կը բուրեն հեշտանք ու անմեղութիւն, սակայն ճակտիդ տակ, տարտարոսի անդունդին չափ մութ աչքերդ սեւ ադամանդներու անտարբերութիւնը ունին:

«Արդեօք մահուան թագաւորութեան մէջ մտնելու համար անհրաժեշտ պիտի ըլլայ խորտակել թարթիչներուդ վանդակամատները:

«Յիման, դուն ու ես կը լեցնենք տիեզերքը, որովհետեւ Արարչութիւնը ամբողջ վերադարձած է իր նախնական վիճակին, սկզբնական քառսին: Եթէ թարթիչներդ շարժես, ծովափին աւազները ադամանդներու պիտի վերածուին...

«Եթէ քեզ գտած չըլլայի, պիտի շրջէի ցամաքամասէ ցամաքամաս, կղզիէ կղզի, պիտի յաղթահարէի ովկիանոսներուն զայրոյթը եւ անապատներուն անծայրածիր սպառնալիքը ու պիտի հասնէի քեզի:

«Աստղը դեռ չյայտնուած՝ ճամբայ ելալ՝ քեզ որոնելու: Տարիներ ամբողջ, մայրամուտէն մինչեւ այգաբաց դիտեցի երկինքը, ուր ծնունդ պիտի առնէիր երկրագունդ իջնելէ առաջ: Անցորդներ ինծի ցոյց տուին այն դղեակը, ուր բնակութիւն հաստատած էիր: Ու ես, արհամարհելով իմաստուններուն խրատները եւ մահուան սաղրանքները, ուզեցի գալ ու միանալ քեզի...

«Յիման, պառկած պողոտային սեւ ասֆալթին մէջ, քեզ կը դիտեմ ունայնութեան անդունդէն, ո՛վ Լուսնթագ, ո՛վ Արուսեակ:

«Ըսէ՛, ո՛վ անմար Աստղս, որ պիտի չմոռնաս զիս, պիտի չմոռնան երբեք, որ ես հիւսեցի գլուխդ զարդարող թագը, որուն գեղեցկագոյն քարերը կարմիր են, ասֆալթին վրայ չորցող արեանս կաթիլներուն պէս»:

* * *

Յերեկները, փողոցներուն անկիւններէն, մարդիկ երկիւղով մատնացոյց կ'ընէին միսի ու ոսկորի այդ անշարժ զանգուածը, որ արդարութեան նժարին մէջ շատ ծանր պիտի կշռէր Վերջին Դատաստանին օրը: Պողոտային այդ մասը վերածուած էր կախարդական շրջանակի մը, որուն գիծէն ներս ոտք կոխելը սրբապղծութիւն պիտի ըլլար: Ո՛չ ոք կը յանդգնէր մօտենալ անոր:

Եւ այսպէս, ժամանակի ընթացքին, երիտասարդին միսերը սկսան բաժնուիլ ոսկորներէն: Թաղին մարդիկը որոշեցին անհետացնել այս անտէր մարմինը, որ ամբաստանագիրի մը ահաւորութեամբ կը խոցէր իրենց խիղճերը:

– Միայն կրակը կրնայ ոչնչացնել այս նեխութիւնը,– ըսաւ ձայն մը:

– Ասիկա նեխութիւն չէ,– ընդմիջեց ճերմակ մօրուքով ծերունի մը,– այս մարմինը մեր անօրէնութիւններուն խորհրդանշանն է: Չայն հրկիզեցէք յարգանքով եւ աղօթքով՝ ինչպէս ընտրեալ ողջակէզ մը:

Բոցերը սկսան լափել ցնցոտիի վերածուած երիտասարդին հագուստները եւ միսերը:

Ճովուն ջուրերը յուզուեցան եւ թեթեւ հով մը փչեց քաղաքին կողմը, հետը տանելով գոհին մարմնէն բարձրացող ծուխը, որ պահ մը այցելելէ ետք այն սենեակը, ուր կը սպասէր այն աղջիկը, որուն ճամբուն մեռած էր երիտասարդը, փոխեց ուղղութիւնը:

Եւ երբ պատուհանէն ծուխը խուժեց ներս, մայրը ոտքի ելաւ, բայց չգոցեց պատուհանը: Ան զգաց, որ այդ ծուխին հետ զաւկին հոգին ներս կը խուժէր, կը վերադառնար իրեն: Եւ որքեւայրի մայրը ազահ ռունգերով ներշնչեց սեւ մշուշը եւ անբացատրելի երանութիւն մը զգաց...

(Թիւ 2, 2001)

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ՄԵՆԱԿԵԱՑ ՈՒ ԼՈՒՌ



Մենակեաց ու լուռ սուրբի մը նման
ձեռքերդ ծալած կուրծքիդ խաչածե
ել ականջներուդ թմբուկին վրայ
թնդանօթներու գոռոցը՝ իբրեւ
այլելուիս նոր՝
կը դիտես հեռուն,

գոյներէն անդին,

ուր հսկայ շէնքեր
հին խաւաքարտէ տուփի մը նման
ապակիի խշոցին հետ

կը ճաթափես:

Մենակեաց ու լուռ շուրթի մը նման
ոտքերդ ծալած Եոկայի տեսքով
ել մագնիսացած աչքերուդ վրայ
ապաստանարանի ժխորը՝ իբրեւ
Գողգոթա տխուր՝
կը դիտես հեռուն,

անցեալէն անդին,

ուր հաւատամքներ
հին երազներու նման վարդագոյն՝
հոգիներու շշուճին հետ

կը մերկացուին:

Մենակեաց ու լուռ երգի մը նման
փէշերդ ծալած գնչուի տեսքով
ել ստինքներուդ պտուկին վրայ
խոնաւցած օդի ջերմութիւնն՝ իբրեւ
անախորժ տրոփ՝


կը դիտես հեռուն,
 ներկայէն անդին,
 ուր նոր համբոյրներ
 ձմրան չծաղկող արեւու նման
 մայրանալու ճամբուն վրայ
 կը մահանան:

Մենակեաց ու լուռ որբի մը նման
 ժպիտդ ծալած Մատոնայի պէս
 եւ շրթունքներուդ կարմիրին վրայ
 չբացատրուող հարցական իբրեւ՝
 մանկութիւն մը ողջ՝
 կը դիտես հեռուն,
 ձայներէն անդին,
 ուր հարազատներ,
 թեւանցուկ ու մերկ ծառերու նման՝
 արդարութեան խարոյկին հետ
 կը մոխրանան:

Մենակեաց ու լուռ ազգի մը նման
 բռունցքդ ծալած Աքիլէսի պէս
 եւ մատնութեան զոհ կրունկիդ վրայ
 սլաքը մահուան՝ հարուածը իբրեւ
 աստուածներու նենգ՝
 կը դիտես հեռուն,
 դարերէն անդին,
 ուր դատապարտներ
 ճատրակի անշունչ քարերու նման
 մատներու մուշ շարժումներով
 կը տապալին:

(Թիւ 7, 1978)

ԳԻՆՈՎԻ ՕՐԱՏԵՏՐ

 րթեւեկը կանգ առած է ավիդ մէջ,
երակներուդ, արիւնիդ,
մինչ ակերակ քաղաքի
յոգնութիւնը կը թանձրանայ
մատներուդ մէջ, ջիղերուդ,
կշտամբելով քեզմով քեզ:

Լճացումը կը յօրանջէ տանդ մէջ,
Էութեանդ, հոգիիդ,
մինչ մոխրացած դէմքերու
մերկութիւնը կը հասուննայ
կոպերուդ տակ, աչքերուդ,
խարանելով քեզմով քեզ:

Լռութիւնը կը նահանջէ այրելով,
բառերուդ մէջ, երգերուդ,
մինչ ականուած ժամերու
գոյութիւնը կը խտանայ
յուշերուդ մէջ, յոյսերուդ,
սպաննելով քեզմով քեզ:

* * *

Աչքերուդ մէջ կը մխայ
անդամայոյծ
ներկայութիւնը վաղուան,
մատները ցուրտ կը դողան.

Զփշրուող
հատիկները անձրեւի
մերկ պատերը կը տաշեն.

Չոյգ մը քայլեր անձանօթ
գիշերային
խորութիւնը կ'ակօսեն,
դուռներուն քով խորտակուած.

Շան դիակ սը
աղբակոյտի դէզին մէջ
շղթային հետ կը լուծուի.

Լռութիւնը
կը քանդուի վերստին
կը դառնայ տարր անհաղորդ

Ու կը ձուլուին
սպասումները թախծոտ
Էութեան մէջ հոգիի,
մինչեւ որ վաղն ըլլայ,
մինչեւ որ վաղն մեռնի:

(Թիւ 5, 1979)

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՎԵՐԱԴԴՐՁ

(Մօրս մահուան Բ. տարելիցին)



Երստին դարձ մը
 Թէ
 Դառնալ – նորէն
 Դէպի անոր որ վայր մըն էր երէկ
 Օղանաւէն դիտուած մանկութիւն մը լոկ
 Որ լոյս ու ստուերի մէջ,
 Տարուբեր կ'ըլլար
 Յեռու-հեռաւոր անծանօթ ու քիրտ
 Արեւանման մոլորակի պէս

.....

Իբրեւ թէ ամերիկեան հիւսիսը
 Վայր մ'է կեանքի-վայելք...
 Անիկա հորիզոնական գիծի վրայ է
 Սիպերիա կոչուած այն միւս վայրին հետ
 Որուն սիւներուն – ճաղերուն ներքեւ
 Յարիւր հազարներ արնաքամ ինկան
 Մարմնի
 Սիրոյ
 Սեռի
 Յոգիի Սառնամանիքի մահուան ծաղիկներուն պէս

.....

Ներձ մայր իմ
 Որ առանց քեզի կը վերադառնամ Լիբանան
 – Ծննդավա յր –
 Ուր մարտեան հովեր
 Տես թէ ինչպէս ականջիս կը փսփսան
 Կորսուած դիմանկարիդ
 Ան-յիշողութիւնը

Ու կր փղձկի սիրտս
Չգոյութեանդ լուռ աստուածներուն պէս
Որոնք վերէն
– Էն բարձրէն –
Քիթս կը հրեն սա պճիկ պատուհանին մէջ
Որպէսզի կապոյտին փրփուրներուն հետ
Ես վերստին հոտուըտամ քեզ

Որպէսզի հանդիպումը մեր
Պէտքութեան տաք ջուրերուն հետ
Ըլլայ վերադարձ
Դեպի վայրը այն
Ուր մենք երկար փնտռեցինք զիրար

(Թիւ 4, 2009)

ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՉԱՆԳՐՈՒԱՆԻ ՄԸ

(Յատուած անտիպ վէպէ մը)



Րամ Պէյրութի գաւակն էր:

Երբեք խորապէս չէր մտածած իր ազգային պատկանելիութեան մասին, ոչ ալ՝ վերլուծած իր զգացումները, հպատակութեան հարցը, տարբերութիւնը հայ եւ իրանանցի ըլլալու: Բայց գիտէր, կը զգար, որ ինք միջերկրականեան մայրաքաղաքին կը պատկանէր: Կը սիրէր հակասութիւններով լեցուն այս քաղաքը:

Չէր ճանչցած այն Պէյրութը, որ իրմէ մէկ սերունդ առաջուան ներկայացուցիչները հայրենաբաղձ կարօտով կը յիշէին, չէր ճանչցած ներկայի այն Պէյրութը, որուն անդորրութեան ու գեղեցկութեան մէջ երգած էին բանաստեղծները, ոչ ալ այն մէկը որ քաղաքագետներ իրենց ճառերուն մէջ արեւելքի եւ արեւմուտքի կապը կ'որակէին:

Այդ Պէյրութը նոր տեսնել սկսած էր երբ պատերազմը սկսաւ: Արամ Պէյրութը ճանչցաւ պատերազմի մէջ, ժուճի որոտներուն տակ, աւերակներու եւ աղբերու կոյտերով ու զինեալներով լեցուն: Պէյրութ՝ յաւերժական պատերազմը:

Բայց, Պէյրութի անցեալ փառքը յիշեցնող քարթ-փոսթալները, որոնք հառաչել կու տային բազմաթիւ մարդոց, քանդուած պանդոկներու լուռ մենութիւնը, աւերակներուն վրայ բարձրացող շինութեանց ձողերը, այս բոլորը Արամին զգացնել կու տային որ Պէյրութը այն չէր, ուր կ'սպրէր, որուն հոգեվարքին ականատես վկան էր արդէն շատոնց: Եւ Արամ կը սիրէր այդ կորսուած դրախտին անիրական հաճոյքները:

Անցնող տարիներու պատերազմը իր անհատնում զինադուլերով, փրկութեան հազարումէկ խոստումներով, հազար անգամ ծնած ու մեռած խաղաղութեան յոյսով, առաւել՝ Արամի համար նուազ հասկնալի ու նուազ կարեւոր ներկայի քաղաքական տուեալներով, ամէն պէյրութցիի հոգիին մէջ զետեղած էր դառն յուսախաբութիւն մը: Եւ հակառակ անոր, հիմա որ համեմատական խա-

ղաղութան շրջան մը կը բոլորէր Պէյրուօթը, Արամ յուսահատօրէն կը փարէր ներկայի խաբուսիկ հաւատքին:

Յասած էր Սանաիը: «Իւնիոն»ի շէնքին ետեւի կողմէն դառնալով ինքզինք գտաւ ինքնաշարժերու լոյսով ողողուած փողոցի մը մէջ: Թեթեւ հով մը կու գար աւելցնելու գիշերուան անուշութիւնը:

Ինչպէ՛ս ժխտել քաղաքակրթութեան բարիքներուն գեղեցկութիւնը: Ինքնաշարժերը սուրալով ետեւ-ետեւի կ'անցնէին, եւ իրենց լուսարձակները դեղին հորիզոնականներ կը կազմէին՝ գիշերուան մթութեան տալով կախարդական հմայք մը: Դեղին լոյսերու զոյգ շարքերը, թեթեւ հովը, փողոցի անցորդներուն մենութիւնը... այդ բոլորը կենդանի ներկայութիւն մը կը զգացնէին, համակարգ մը կը կազմէին, ուր Արամ չէր զգար որ յստակ տուեալներու պատճառակա՛ն տրամաբանութեամբ կաշկանդուած էութիւն մըն էր: Ընդհակառակը, իր գոյութիւնը կենդանի ներդաշնակութիւն մը կը կազմէր: Կ'ըմբռնէր ինքնաշարժերու լոյսը, հովը, մինչեւ իսկ կաթիլ-կաթիլ թափիլ սկսող անձրեւը, որ առաւել հմայք մը կը ստանար երբ ակնթարթի մը համար կ'երեւէր դեղին լոյսի մը ճառագայթին մէջ: Քաղաքը ապրող իրականութիւն մըն էր, անմիջականօրէն ներկայ եւ հասանելի, եւ Արամ կը նոյնանար այդ հարազատութեան հետ: Առանձնանալու բացարձակ ազատութիւն կար հոս, դեղին լոյսի գեղեցկութենէն կարելի էր մինչեւ իսկ բիւրեղութիւն կերտել...

Գիշերուան մութը կը ծածկէ Յամրա փողոցին տգեղութիւնները, եւ վառողմարող բազմաթիւ լոյսերը, որոնցմով այդ փողոցին գիշերային հմայքը կ'իմաստաւորուի, անոր կու տան նոր իմաստ մը, նոր գեղեցկութիւն մը: Այդ պահուն Յամրան ոչ մէկ ձեւով կը տարբերի ժապաւէններու մէջի արեւմտեան քաղաքներու լուսաւոր փողոցներէն: Թէեւ առաւօտեան աշիւթութիւնը մարած կ'ըլլայ, սակայն Յամրան ամայացած չ'ըլլար, չ'ամայանար, այնքան ատեն որ լոյսերու կախարդանքը կ'իշխէ: Առանց առաւօտեան ժխորին կարելի է մինչեւ իսկ որոշ շարժանկարներու սրահներու մէջ ցուցադրուող ժապաւէններուն ձայնը լսել:

Գիշերուան այդ պահուն, Յամրայի մայր փողոցը ժամադրավայրն է առաւելաբար տուն վերադարձող անապարուած անցորդներու, այն պահը երբ գրեթէ բոլոր վաճառատուներու երկաթեայ ձողերուն ետին բանտարկուած կ'ըլլան սպառողական ապրանքները: Արեւմտեան պերճանքին ուշագրաւ ներկայութիւնը արեւելեան Միջերկրականի ափի քաղաքին փողոցին մէջ. ահա թէ ինչու Պէյրուօթը շաղկապ մըն է արեւմուտքի եւ արեւելքի միջեւ: Միւսը՝ արեւելքի երբեմնի քաշողականութիւնը արեւմուտքի համար շատոնց բանականացած եւ իր խորհրդաւորութիւնը կորսնցուցած էր: Եթէ երբեք այն ունեցած էր... Փակ խանութներուն առջեւ, գիշերուան հետ կ'երեւնային շրջուն վաճառորդներուն շարժուն կրպակները՝ թերթ, ծխախոտ կամ քախքէ: Կարծես ցերեկին ամչնալով վաճառատուներու աշխոյժ առեւտուրէն, այդ ողորմելիները գիշերները կու գային իրենց ապրանքները փռելու գոց ցուցափեղկերուն առջեւ, գետինը, օգտուելով անոնց լոյսէն:

Համրայի մեջ այդ պահուն ամենն կենդանի ներկայութիւնը ելեկտրական մեքենաներու խաղավայրերն էին: Բախտախաղի ամենահասարակ տեսակէն մինչեւ տիեզերքի կործանիչ պատերազմները փոքր պաստառի վրայ բեմակա-նացնող այդ մեքենաները անբացատրելի հմայքով դէպի իրենց կը քաշէին մար-դոց եւ կուլ կու տային երկաթէ մէկ լիւրաները որոնց փոխարէն յաճախորդին կը հրամցնէին արդէն շուկայական շրջագայութեան դրուած արհեստագիտական վերջին հնարումներու հաճոյքը, որ կ'ըմբռնէին դարձեալ լոյսերով եւ արուես-տական ձայներով: Թէ մարդիկ ինչո՞ւ կը խաղային, այդ մէկը չէր կրնար հասկնալ պատահական անցորդը, որ եթէ պահ մը ուշադրութիւն ընէր անպայմանօրէն պիտի լսէր փողոցային ամէն տեսակի հայհոյանքներով գունաւորուած եւ անոնց ընկերացող մեքենային անսպառ ձայներով ստեղծուած քսաներորդ դարու քա-ղաքակրթութեան առօրեայի ժխորային համանուագը:

Անոնց կը հակադրուէր Համրայի *քաֆէ-թրոթուար*ներու վեհափառ եւ ար-համարհական ներկայութիւնը: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր իւրայատկու-թիւնը: Քաֆէ տը Փարի-ն ժամադրավայրն է պատկերասփիւռի յայտնի դերասան-ներու, Ուիմփի-ն իր պայծառ ճերմակ լոյսով կը հրաւիրէ ուրախ զբօսնողները, Մոտքայի տժգոյն լոյսը յարմարագոյն վայրն է յայտնի թէ գաղտնի սիրահարնե-րուն:

Էլտորատո շարժանկարի սրահէն անդին Համրայի լոյսերուն կախարդական հմայքը հետզհետէ կը նուագի, եւ գիշերն ու լուսիւնը, երբեմն անբացատրելի կերպով մտահոգիչ, աւելի եւս կը շեշտուին: Այդ շրջանին մէջ, մայր փողոցէն դէ-պի վար ու վեր կը սկսի տարբեր Համրա մը, աւելի լուռ, աւելի կարմիր, աւելի գրգռիչ: Գինետուններու եւ հանրատուններու Համրան է այդ, որուն անմիջական շրջակայքին են պանդոկները:

Ամէն անգամ որ այդ շրջանէն կ'անցնէր, Արամ անբացատրելի վախի մը հետքերը կը զգար: Պատանեկան օրերէն մնացած յիշատակ մը. օր մը, երբ հետա-քըրքութենէ մղուած փորձած էր նայիլ գինետուններէն մէկուն բաց դռնէն ներս, գինով բոզ մը, պատին կռթնած, «հապիպի» ըսած էր իրեն եւ հրաւիրած ներս բան մը խմելու:

Այդ յիշատակը չէր որ իր քայլերը արագացուց: Անձրեւը սաստկացած էր:

Արամ կը բնակէր Վերսայ շարժանկարի սրահին ետեւը գտնուող նեղ փողոցի մը մէջ: Փողոցը հակապատկերն էր տասնեակ մը մեթր անդին գտնուող շրջանին ուր Համրան կը վերջանայ: Ժամանակին բարգաւաճման մեծ ծրագիրներ նախա-տեսուած էին այդ նեղ փողոցներուն համար ալ որպէս կամրջում Համրայի եւ ծովեզերեայ շրջանները տանող ճամբաներուն: Պատերազմը խանգարած էր այդ բոլորը:

Կանոնաւոր կերպով կ'անձրեւէր երբ Արամ մուտք գործեց իրենց փողոցը: Թաղամասին բաժին ինկած ռումբերը այլանդակած էին բնակարանները, կերպա-րանափոխած փողոցը: Քաղաքապետարանը երբեք չէր մտահոգուած փողոցին

մեջ բացուած հսկայ փոսերը գոցելու, ոչ ալ գրեթէ ամեն անձրեւէ յետոյ յորդող կոյուղին նորոգելու: Մուշ ու ամայի փողոցին մէջ իշխողը նեխումի անտանելի հոտն էր ուր կոյուղին ու փողոցի մուտքի աղբակոյտը կը խառնուէին: Աղբահալաքներու ուշադրութենէն երկար ժամանակ վրիպած աղբակոյտը այդ գիշեր անօթի կատուներու եւ առնետներու գրոհին տակ փուլ եկած էր: Գոց տոպրակները պատռուելով առատօրէն գետին փռած էին իրենց պարունակութիւնը: Արամ ուշադրութեամբ առաջացաւ չսահելու համար քիմիական նոր եւ կասկածելի բաղադրութեան ցեխին վրայ կոխելով:

Շրջակայ թաղերուն մէջի բարձր եւ գեղեցիկ շէնքերու բնակիչները ամեն առտու իրենց սպասուհիներուն կը յանձնէին աղբի տոպրակները, որոնք կը բերուէին եւ կը թափուէին աւելի համեստ թաղամասի մուտքի փողոցին ծայրը: Այնպէս ինչպէս մօտիկ անցեալին տարբեր անձինք բազմահարիւր գաղթականներ բերին ու թափեցին այդ թաղին մէջ, հաստատեցին կիսափուլ կամ կիսաւարտ շէնքերու մէջ երբ այլեւս գրաւուելիք պարապ յարկաբաժին չմնաց: Բաւական ժամանակ անցած էր, եւ թաղեցի դարձած այդ ամբոխը չէր տարբերեր թաղի բնակիչներէն, բայց թաղին մնացած էր «գաղթականներու» անուանումը: Արամ կը յիշէր թէ ինչպէս պատերազմի էն առաջին հանգրուանին, սարսափածներու հսկայ բազմութիւն մը խուժեց հոն, սկսաւ գրաւել պարապ մնացած յարկաբաժինները, որոնց տէրերը արդէն հեռացած էին Պէյրութէն: Ունեցածը կորսնցուցած եւ տեղահանուած ամբոխը, յուսահատներու յատուկ վայրագութեամբ եւ իրաւունքով, յափշտակած էր ինչ որ գտած էր, պերճագոյն բնակարանները իւրացուցած եւ իր տառապանքին գոյներով կերպարանափոխած էր՝ կոտորած դռներ, փողոց հանուած թանկարժէք կահ կառասի, եւ պատերուն վրայ բազմատեսակ եւ բազմագոյն լոզունգներ: Այդ բոլորը «գաղթականներուն» թաղին մթնոլորտը կը դարձնէին ճնշիչ: Թաղեցի դարձած տեղահանուածներու ամբոխը իր հետ բերած էր իր տառապանքը, ցատումը, կարծես չէր կրնար բաժնուիլ անոնցմէ:

Արամ վերէն վար թրջուած էր երբ տուն մտաւ, հաճոյքով ներքաշեց աղբի հոտէ գուրկ տան օդը: Սենեակ մտաւ, ինքզինք նետեց աթոռին վրայ: Աչքը ինկաւ եռոտանիին վրայ դրուած մաքուր թուղթին: Անձրեւը կը շարունակուէր: Պատուհանէն դուրս նայեցաւ: Թաղը նոյնն էր:

«Յոս Յամրան կը վերջանայ», մտածեց: «Բայց հոսկէ ալ կրնայ սկսիլ... Յամրան օր մը կրնայ այս թաղին պէս ըլլալ...» Այդ գիշեր չկրցաւ որեւէ նկար յղանայ, թէ կուզ եւ մտովին, Յամրայի գիշերը նկարելու համար ինչպէս ծրագրած էր տուն վերադարձի ճամբուն վրայ:

(Թիւ 3, 2020)



Լուսանկարը՝ Կապրիել Պասիխբոյի

ՐԱՖՖԻ ԱՃԷՄԵԱՆ

Պ.՝ ՍԻՐԵԼԻՍ

Զ կարներդ, սեւ ճերմակ, կը շարունակեն տողանցել մտքիս հորիզոնին՝ անմեղուժեան ժամանակի մը անվերջանալի երթը յուշելով: Երբ անոնց կը նայիմ, կարծես ես ինձի է որ կը նայիմ անցեալի մը ոսպնեակէն, անցեալ մը ուր կամ ու չկամ, եւ ուրեմն կը մնամ միշտ անվերջ փնտռտուքի մը մէջ: Կը փնտռեմ քաղաքիս փողոցներն ու անոր ժամանակները: Ինչ որ կը գտնեմ՝ հոսկէ հոնկէ հաւաքուած կցկտուր յուշ ու պատառիկ, կը լուսարձակեմ յիշողութեանս մուտք բաւիղները լուսաւորելու յոյսով, սակայն անոնք ալ սկսած են կամաց-կամաց խամրիլ ծածկուելու համար 1991ին ոսպնեակովդ դիտուած քաղաքի փլատակներով: Նկարներդ սկսած են գրաւել յիշողութեանս տեղը. անոնց է որ կը հանդիպիմ ամէն անգամ որ ետ կ'երթամ մտքով: Քաղաքակեդրոնի փլատակ շէնքերը, ամէն մէկը ասեղնագործութեան նմոյշի մը վերածուած ու մնացած ժամանակէն դուրս տեղ մը որպէս վկան կորսուած իրականութեան մը: Կը դիտեմ ու չեմ կրնար նայուածքս հեռացնել այդ Էջերէն. տասնհինգ տարուան խօլ պայքար մը քարացած կը յամենայ հրապարակի փողոցներուն մէջ. զինեալները մեկներ են, սակայն շատոնց մոռցուած ֆիլմերու անուններն ու հերոսները դեռ կը սպասեն ծակծկուած *սֆիւլներուն* վրայ որ ընդմիջումը վերջ գտնէ, հանդիսատեսները ետ գան ու ցուցադրութիւնը վերսկսի:

Նկարներդ¹ սակայն ուրիշ պատմութիւն մըն ալ կը պատմեն, միջերկրա-

¹ Ակնարկը կ'երթայ Կապրիել Պասիլիքոյին (1944 - 2013), որ իտալացի քաղաքներու փնտռուած ու աշխարհահռչակ լուսանկարիչ մըն էր, բազմաթիւ ցուցահանդէսներ տուած ու հեղինակ բազմատասնեակ հատորներու: Ան հեղինակն է ամայի փողոցներով քաղաքներու լուսանկարներու շարքերու, սկսեալ իր ծննդավայր Միլանոյի նախկին ճարտարարուեստական թաղամասերու լքուած նկարներէն, որոնց ընդմէջէն ստեղծած էր իր ուրոյն գեղագիտական մօտեցումը քաղաքներու ընդերքին: Նկարած է ընդհանրապէս սեւ-ճերմակ խոշոր տեսախցիկով: Պասիլիքօ մաս կը կազմէր նաեւ յիբանանեան քաղաքացիական պատերազմի աւարտին ֆրանսագիր յիբանանցի հեղինակ՝ Տոմինիք Էտտէի կազմակերպած լուսանկարչական առաքելութեան խումբին, կազմուած վեց աշխարհահռչակ լուսանկարիչներէ (Պասիլիքոյի կողքին կային նաեւ Ժոզէֆ Քուտեյթա, Ռընէ Պուռի, Ռէյմոնտ Տըփարտոն, Ֆուլատ Էլիտուրի եւ Ռոպըրթ Ֆրանք), որուն նպատակն էր փրկել քաղաքին տետողական յիշողութիւնը նախքան զայն ի սպառ վերացնելու կոչուած մեքենաներու ժամանումը: Արդիւնքը 130 նկարներով գիրք մը կ'ըլլայ՝ *Beyrouth Centre-ville* անունով (édition du Cypres, 1992), որ օրին մեծ տպաւորութիւն կը ձգէ եւ որուն տպաքանակին մէկ կարեւոր մասը սակայն հրոյ ճարակ կը դառնայ պահեստանոցային հրդեհի մը հետեւանքով, գիրքը վերածելով փնտռուած առարկայի, եւ ուրեմն քիչերու կողմէ տեսնուած: Պասիլիքօ կը խոստովանի որ Պէյրութ ժամանելէն ետք սկիզբը դժուարութիւն ունեցած է փլատակներուն մէջ կողմնորոշուելու, սակայն օր մը երբ բարձրադասարկէ մը կը դիտէ քաղաքը, կ'անդրադառնայ որ միջերկրական քաղաքները իրար հետ ազգականութիւն ունին, ու շէնքերը իրենք են բուն բնակիչները քաղաքին: Պէյրութի նկարները շրջադարձային դեր

կանեան քաղաքներու պատմութիւն մը, ուր մեկուն անցեալը միւսին ապագան կրնայ ըլլալ: Բոլոր քաղաքները իրարու կը նմանին, մեկուն ճարտարարուեստական փայլուն անցեալի այսօր լքուած ու ամայացած գործարանները կը յուշեն միւսին նախկին բաբախող սրտի կիսափուլ շէնք-քանդակները: Անցեալը կը շարունակուի տարօրինակ բանաստեղծութեամբ մը նկարներու մէջ: Ծիշդ Է, փողոցները մաքրուած են: Տասնհինգ տարուան «կանաչ գիծ»ի փլատակներու արանքներուն աճած վայրի բուսականութիւնը վերացուած է: Դարանակալ նըստած նշանառուները չկան, ոչ ալ օրն ի բուն կորսուած գնդակի անմեղ գոհերը: Յրացանածգութիւնը վերջ գտած է ու թէեւ զենքերը լռած են, ամայի փողոցներուն վրայ ծփացող մթնոլորտը ապահովութիւն չի ներշնչեր: Ըսեր Էին որ կողմերը յոգներ են ու զինեալները իրենց տունները ու գիւղերը վերադարձեր: Սակայն քաղաքին փողոցները կը մնան դատարկ, կարծես կը տատանին իրականի ու անիրականի միջեւ տեղ մը:

Չինեալները, այդ ալ ուրիշ պատկեր: Միտքս Վեհանոյշին² Նաւըրը ու ձեռքին ունեցած «պոնպոն»ն ու «հաթ տակը» կու գան: Ուրիշ նկարիչ³ մը անմահացուցած է կիսաբաց շապիկներով ու ծխախոտը շրթներուն, *բլաշիններ* շալկած այդ կռուողները քաղաքին՝ պատերազմի սկիզբի տարիներուն: Ինչ ահաւոր իտեալիզմ մը կայ այդ նկարներուն մէջ: Հագիւ տասնութ տարեկան երիտասարդ տղաք, դէմքերուն վրայ անսահման լաւատեսութիւն, կեանքը ապրելու կորով ու երագ: Ո՛վ գիտէ քանին մնացին կեանքի սեմին եւ քանին չվերածուեցան իրենք ալ իրենց կարգին փլատակներու՝ կորսուած երագի խլեակներ: Որովհետեւ իսկապէս երագ մըն էր կարծես այդ բոլորը:

կը խաղան անոր նկարչական արուեստին մէջ ու ատկէ ետք Սոլիտեռի հրաւերով Պէրուք կը վերադառնայ քանի մը անգամ, մէյ մը 2003ին, երբ նոր լուսանկարներ կ'առնէ ու կողք կողքի գետնդէրով 1991ի նկարներուն հետ կը հրատարակէ *Gabriele Basilio, Beyrouth 1991(2003)* անունով հատորը (Baldini Castoldi Dalai editore/Solidere, 2003): Ապա կրկին 2011ին, երբ այլեւս անճանաչելիօրէն կերպարանափոխուած քաղաքը անգամ մը եւս նկարելու առիթ կ'ունենայ: Խմբային հատոր մը կը յայտարարուի *Beirut Mission: Photos 2009-2011* անունով (Խմբագիր՝ Նուհատ Մաքսիսի, Steidl/Solidere, 2018), որ կը խմբէ՝ Պասիլիքոյի կողքին, կրկին Ֆուատ Էլխուռիի, ինչպէս նաեւ Ռոպեր Փոլիտորիի ու Քլաիճ Սլուպանի նկարները: Հատորը թէեւ հրատարակչին (Steidl) կողմէ ծանուցուած էր նախ 2014ին, ապա կրկին 2018ին, սակայն գիրքը առ այսօր կը մնայ անգտանելի: Անոր մասին կան միայն իրար հակասող տեղեկութիւններ:

² Վեհանոյշ Թեքեան, «Տեսիլքի եւ արարքի միջեւ», *Ճեղքուած մանրանկար*, Պէրուք, 1977: Տես նաեւ Բաֆֆի Աճեմեան, *Բազին*, թիւ 3-4, 2019:

³ Ռէյմոնտ Տըփարտօն, Ֆրանսացի լրագրող, լուսանկարիչ ու բեմադրիչ, լուսանկարչական Կամմա գործակալութեան հիմնադիրներէն, Մակնուն գործակալութեան նշանաւոր աշխատակից: Որպէս լրագրող-լուսանկարիչ գտնուած է ռազմական բազմաթիւ հանդիսավայրեր, ինչպէս Վիէթնամ, Ալճերիա, Եւայլն, ու նկարները ստացած են բազմաթիւ մրցանակներ: Նաեւ ֆիլմերու բեմադրիչ է: Առաջին անգամ Պէրուքը այցելած էր 1965ին նկարելու համար, ինչպէս ինք կ'ըսէ՝ «Միջերկրականի նոր Սէնթ Թրոփեզը», ապա 1978ին, երբ քրիստոնեայ կռուողներու (մասնաւանդ Ահրար խմբակցութեան զինեալներ, որոնց հետ շրջագայած է բախումներու գիծերուն վրայ) նկարները կը դառնան աշխարհահռչակ:

Կը նայիմ մանկութեան սեփական նկարներուս ու ազգիս ապագայի երազն է, որ կ'արտացոլայ անոնց մէջէն: Ինչ ռոմանթիկ լաւատեսութիւն: Օրէ օր բազմացող դպրոցներ, նեղ ու տժգոյն դասարաններով ու բակերով՝ բերնէ բերան լեցուն աշակերտներով: Ակումբներ, մարզավայրեր, թատերասրահներ, ամբողջ գաղութ մը որ կ'եռայ հայութեամբ ու հայերէնով: Շուկաներ ու զբօսավայրեր՝ ամբողջութեամբ հայ վաճառականներով ու յաճախորդներով յորդոդ: Այդ ամենուն մէջ հասակ նետող երեխայ մը ինչպէս կրնար օտար զգալ ինքզինք: Ծննդավայր ու հայրենիք՝ թէկուզեւ տարբեր անուններով, լիուլի կը համապատասխանէին իրարու՝ տունէն մինչեւ շուկայ, դպրոց, ակումբ ու աւելի անդին, մինչեւ օդափոխութեան վայրերը ու թէկուզեւ ճիշդ էր որ ամեն քայլափոխի կը հանդիպէինք հայերէն չխօսողներու, անոնք կը գտնուէին մեր իրականութեան զուգահեռ ոլորտի մը մէջ՝ քովը, եթէ ոչ դուրսը: Պատերազմը նաեւ այդ երազն էր, որ մէկ օրէն միւսը կը պայթեցնէր: Ո՞րն էր իրականութիւնը: Կ'արթննայինք ընդոստ ու չէինք ուզեր հաւատալ: Երազը քիչ-քիչ կը հեռանար մեզմէ, մինչ մենք ալ աւելի կը կառչէինք անոր, կը կառչէինք անոր բառերուն, ինչպէս ընկղմողը կը կառչի ծփացող որեւէ խլեակի: Տարիներ ետք, երբ պարբերական ցրումը կը շարունակէր անապատէն հասնող *Խամսինին* նման տարտղնել հազիւ տուն-տեղ եղած գաղութները, պիտի հաւաքէինք երազէն ինչ որ ողջ մնացած էր որպէս պատահիկ, ի մի բերէինք՝ կազմելու համար անկախութեան նոր երազ մը, նոր հայրենիք մը: Սակայն տարտղնումը արմատական դարձած էր արդէն ու երազուած համախմբումը հազիւ թէ լրգունգէն անդին պիտի անցնէր, մինչդեռ ետեւ տեւի հասնող ցնցումներն ու պայթումները պիտի շարունակէին երազը եւս հեռացնել մեզմէ, պատճառելով անսահման վիշտ ու յուսախաբութիւն:

Նկարներդ սակայն, սիրելի Պ., երազէ մը աւելին են: «Ինչ կը մնայ երբ ոչինչ մնացած է...» գրեր էր յօդուածագիրը⁴ ակնարկելով պատերազմին ու բարբարոսութեան, երբ քաղաքին ոչ միայն բնակիչները չկան, այլ նաեւ շէնքերը՝ քանդու մի վերջին թափով մը՝ հողին կը հաւասարեցուին: Ահաւասիկ յիշողութեան հարցը: Ինչ կը մնայ երբ ամեն բան կը մոռցուի, երբ մոռցուած ըլլալը ինքնին կը մոռցուի: Այդ չէ՞ վերջնական ողբերգութիւնը մարդ արարածին, հողին վերադառնալու հրամայականին: Քաղաքներն ալ հող կը դառնան, ու անոնց յիշողութիւններն ալ կը ջնջուին, հակառակ որ անունները կրնան դարերով երկարաձգուի: Ուրիշ քաղաքներ կու գան կայք հաստատելու կորսուածին տեղը: Նկարներդ, սիրելի Պ., այդ կորուստն է որ կը պատմեն, ուր շէնքերու խլեակները կանգնած կը մնան միջանկեալ ժամանակի մը մէջ, որպէս վկաները այն ամենուն, որ կար առաջ այդ փողոցներուն մէջ: Փլատակները այդ յիշողութիւնը կրողներն են ու հիմա գիրքիդ էջերէն մեզ կը դիտեն, մենք՝ կորսուածներս, որ կորսնցուցած ենք քաղաքին յիշո-

⁴ *Beyrouth, Basilico et les barbares*, Հոկտ. 9, 2014՝ <https://on-the-battlefield.blogspot.com/2014/10/>: Պլոկի հեղինակին անունը տրուած չէ:

ղութիւնը, եւ ուրեմն կորսնցուցած ենք մենք մեզ: Կը թափառինք անյիշողութեան բաւիղներուն մէջ:

Քաղաքներուն յիշողութիւնը: Այդ է, որ կը պատմեն նկարները: Կարելի է ժամերով թափառիլ անոնց մէջ, երկար նայիլ, դիտել, զմայլիլ, ու յանկարծ դուրս ձեզ կը գտնէք անոնց փողոցներուն մէջ: Հրաշք է: Կը մտնեմ նկարներէն մէկուն մէջ ու կը սկսիմ քալել, պետք է ըսել խարխափիլ՝ փողոցէ փողոց, անցնիլ նկարէ նկար, մտքիս մէջ փորձելով միաժամանակ ամբարել պատկերային յիշողութիւն մը: Նախ սակայն պարապն էր, փլուզումի գործողութեան ձգած պարապը: Տարիներ առաջ էր, երբ օր մը զուգադիպութեամբ տեսած էիր աւերուած քաղաքին հողին հաւասարեցուած՝ դատարկ սիրտը: Վայրը կար. շէնքերը չկային: Ամբողջ մանկութիւնդ մէկ երկվայրկեանի մէջ շոգիացեր էր: Ինչպէ՞ս կարելի էր տարիներով սպասել պատերազմի աւարտին, վերադառնալու եւ այդ փողոցները կրկին տեսնելու յոյսով, քալել կարենալու համար անոր ճամբաներէն, փնտռելով ո՛չ թէ անցեալի յուշեր՝ *նստալժի*, այլ վերագտնելու համար կիսատ մնացած յիշողութիւնդ, փորձելով վերականգնել մտքիդ քարտէսին խոցող բացերը: Այդ բացերը չէին, որ յաճախանքի նման կ'այցելէին քեզ երազներուդ մէջ: Ճամբաները ճուր կը տանէին: Ինչ կար այս դարձուածքէն ետք, կամ այդ խանութին ետեւի փողոցը: Ամեն բան մնացած էր պլլուած մշուշի թանձր թաղանթի մը ետին երբ մէկ օրէն միւսը ճամբաները փակուեր էին ու վերադարձը անորոշ կերպով յետաձգուեր: Դարձեր էինք արեւելք ու արեւմուտք, կտրուած իրարմէ, սկիզբը ժամանակաւոր թուացող խզումով մը, սակայն իրականութեան մէջ վերջնական կերպով բաժնուած իրարմէ, բաժնուած մենք մեզմէ: Կարելի չէր կրկին քալել մանկութեան ճանապարհներէն: Կեանքը կը շարունակուէր: Նոր փողոցներ, նոր պատմութիւններ: Բայց ռմբակոծումներու արձագանգը կը շարունակէր պարբերաբար հասնիլ այդ կողմերէն, ամայացած քաղաքակերպողնի փողոցներէն: Գիտէիր որ փողոցները հոն էին, շէնքերը՝ թէեւ անհասանելի ու կիսափուլ՝ կը մնային տակաւին կանգուն: Իսկ հիմա, պարբերաթերթին էջերը կը բանաս ու քաղաքը չկայ: Կարծես երկիրը կուլ տուած ըլլայ զայն: Քաղաքները ճուր կ'անհետանան: Ռումբը կը պայթի ուղեղիդ մէջ: Յիշողութեանդ փլատակն է, որ անվերադարձ կերպով մեկնած է, գաղտագողի, գիշերով, առանց որ լուր ունենաս ու հիմա կը գտնուիս անկարելի պարապի մը առջեւ: Ինչպէ՞ս բռնել յիշողութեան կորսուած թելը, ինչպէ՞ս յիշել դուն քեզ: Ինչպէ՞ս հասնիլ անցեալին:

Ետքն էր որ յայտնուեցան նկարները: Նախ քու նկարներովդ, սիրելի Պ., այնքան գեղեցիկ ու այնքան տխուր: Քաղաքը կը շարունակէր իր սպիներով վերապրիլ ոսպնեակիդ մէջէն, ու այդ բոլորը այնքան յուզիչ էր, սակայն միաժամանակ յուսադրիչ: Քաղաքը կար, շէնքերը կային, գոնէ նկարներուն մէջ: Բարբարոսները չէին կրցած զայն խլել ու շէնքերը կը շարունակէին կոտտալ իրենց վերքերուն վիշտով: Անոնց վերքերուն մէջէն իսկ կարելի էր տեսնել անցեալի անոնց երազին շողերը:

Ապա եկաւ համացանցը ու բերաւ նկարներու անվերջանալի կծիկները: Ամէն տեղ նկար կար ու ամէն մարդ նկար ունէր: Մինչեւ անցեալ դար երկարող նկարներ, չնաշխարհիկ տեսարաններով, բայց մանաւանդ ազգիդ գաղթականութենէ վերածնունդին հետ համընկնող քաղաքի բարգաւաճման նկարները, խուռներամ փողոցներով: Ամէն տեսակի մարդիկ ու բարբեր կը խաչաձեւէն գիրար, ուր Պըլտեանին հետ պիտի թափառիս փողոց առ փողոց ու գծես մինչեւ Յամրա գացող երթ ու դարձին մանրամասն դիմանկարը⁵: Քարտէսը սկսած էր կամաց կամաց յստականալ մտքիդ մէջ, փողոցները սկսեր էին քակուիլ ու յայտնել իրենց գաղտնիքները, բայց մանաւանդ ճամբաները սկսեր էին տեղ հասնիլ, իրարու կապուիլ: Յիշողութեան անելները սկսած էին պակսիլ ու խզումը կամաց կամաց կը չքանար: Այդ ատեն էր, որ օր մը դուն քեզ ներթափանցած գտար նկարներու աշխարհէն ներս ու սկսար թափառիլ: Փողոցները կենդանացան ու սկսար անոնց մայթերէն քալել, լսել աղմուկը, ճչակները, առնել խայտաբղետ շուկաներէն եկող հոտերը: Քաղաքը իրական էր: Յիշողութիւնդ կը վերագտնէիր, ուրեմն կայիր: Նման փորձառութիւն մըն ալ չէ՞ր միթէ հաւաքական վերապրումի փորձառութիւնը, երբ նոր երկրին վրայ հագցուցինք հինին անունները ու սկսանք ապրիլ որպէս անոր նոր բնակիչները: Կորսուածը կը շարունակուէր մեր կեանքերով, մինչ կը վերածնենք ու կ'ապրէինք ծաղկումի աղուոր փորձառութիւն մը: Երա՛գ էր այդ ամէնը:

Պ.՝ սիրելիս, փողոցներդ մանկութեանս խաղաղալայրը եղան ու երագդ մեր ալ երագը դարձաւ, երբ հաւատացինք հայրենիքներու բազմակիութեան ու ազգային զարթօնքի տեսլականին: Այս տողերը որ կը գրեմ այդ երագին հետեւանքն են, ու ամէն մէկ տողին ետեւ քու ծաղկումիդ ու ընկրկումիդ հետքը կայ: Քեզմով է որ գտանք մենք մեզ ու դարձանք այն ինչ որ ենք այսօր, կանգուն կամ վիրաւոր: Քու ճակատագիրդ մերն ալ եղաւ ու կիսեցինք զայն ցմրուր մինչեւ որ կամաց կամաց նոր անկախացող հայրենիքը սկսաւ գալ դառնալու հաւաքական երագին մեր կիզակէտը, ան ալ իր կարգին վիրաւոր: Փողոցներդ սակայն չեն լքեր յիշողութիւնս: Անոնց յաճախորդն եմ օրն ի բուն, թէեւ ոտքերս կը քալեն աշխարհի տարբեր քաղաքներու փողոցներէն: Սակայն, այնքան ատեն որ կաս նկարներուն մէջ, կաս մեր մտքերուն մէջ, ու երագդ կը շարունակէ վառ մնալ մեր հաւաքական յիշողութեան մէջ: Գիրքդ, սիրելի Պ., այդ է որ կը յուշէ. չկորսնցնել երագը ինչ որ ալ պատահի, ինչպէս որ նկարներուդ մէջ կիսափուլ շէնքերը կը մնան քաղաքին երագին կտակակատարները: Շէնքերը յիշողութիւն ունին, այնքան ատեն որ կան: Հաւաքական յիշագրկումի գործողութիւնը, որ բուն նպատակն էր պատերազմի աւարտին յաջորդած կիսափուլ բայց կանգուն մնացած հազարաւոր

⁵ Գրիգոր Պըլտեանի «Գիշերադարձ» ընդհանուր խորագրով վիպային մեծ գործին գլխաւոր յաճախանքներէն մէկն է գաղթականութենէն մինչեւ պատերազմի սկիզբ հասնող քաղաքին պատկերը ու անոր փողոցները, արուարձաններէն մինչեւ քաղաքակեդրոն ու անդին: Քարտէսին համար, տէն Բաֆֆի Աճեմեան, *Բազին*, թիւ 1-2, 2016:

շենքեր փլելու մոլուցքին, չի կրնար ջնջել նկարներդ: Քաղաքին յիշողութիւնը կը շարունակուի անոնց էջերուն վրայ: Ոչ որպէս միսիթարանք, այլ որպէս շարունակուող յիշողութիւն: Կանք, որովհետեւ կը յիշենք, այնպէս ինչպէս կորսուած երկրին յիշողութիւնը կը շարունակուի մեր մտքերուն ու երազներուն մէջ:

Նկարած քաղաքդ, սիրելի Պ., իմս ալ էր եւ բոլոր քաղաքներէն ուր ժամանակը մեզ նետեց, որոնց մայթերէն քալեցինք ու կայքեր հաստատեցինք պարբերաբար, կը մնայ միակը, որուն փողոցները, շենքերը, խանութները, պատշգամները ու բնակիչները կը շարունակեն երկարաձգուիլ մտքիս ոլորտներուն մէջ ու կը շարունակեն ապրիլ իրենց ուրոյն պատմութիւնները: Ձեռքս կ'երկարեմ դըպնալու համար նկարներու մակերեսին, բայց արդէն միւս կողմն եմ, անոնց մէջ կը քալեմ: Քաղաքս կը շարունակուի անոնց մէջ:

(Թիւ 3, 2020)

ՍՈՆԻԱ ՍԱՆԱՆ

ՔԱՂԱՔ

Պ.ին

|

քաղաքը

փչեց մազերուս մեջ

եւ

եւ

ծերացայ

II

փշուրի ծափ աչքերուս
անծանօթ միշտ մարմինէս
երազի երդիքներուն անհպելի ժամանակը
օղակ կապած ոտքերուս
բոլոր միակ անգամներուն պէս
կ'ընթանամ դէպի հերթումը քաղաքին
ուր դուն
իբրեւ անուն ապահով
մայթերուն վրայ
օտարացած քաղաքին
կը կակազես լեզուիս վրայ
ու չես յոգնիր

III

քաղաք

Կ'անցնիս ինձմէ

եւ չես

IV

սահմանագնաց փոխակերպումը քաղաքին
ես եմ

ցուցամատի մերկ շարժումով
անունս հինգած
կը սղագրեմ հորիզոնին վրայ ամենախոր
ուր
յոզնութեան մէջ պարտուած
դեռ կը ծծեմ
քարերը բիրտ շէնքերուն
փսփսալով անոնց խուլցած յատակին
բոլոր պարիսպները անցած ժամանակներուն

ինչպէս ուզեցի այս ընթացքը դէպի քանդում
հրահրող մերժումը բոլոր մտերմութիւններուս
բայց դուն
շարունակեցիր մազերուս մէջ խոզանակել
փողոցներուն լացը պոռնիկ
յօրանջը ծոյլ սրճարանին
մինչեւ որ
ճամբաներուն աղմուկը
կռթնեցաւ կոկորդիս
եւ քաղաքը
բացուեցաւ ուրացումիս մէջ

ամէն ինչ
ափ մը ուրիշ եւ միակ

V

ըսէք ինծի
օթօները կը մեկնին թէ կը վերադառնան

VI

Քաղաքը կը ջնջուի եւ ջնջումին մէջ ներկայ
գիշերը կը գոցէ շրջանակը անյայտի
պարապի բերնին՝
մարմինս
խոստում տարածութեան,
ուրկէ կը բարձրանայ քարայնացումը քաղաքին
եւ կ'ընդմիջէ մեկնումը ճամբաներուն
բոլոր շէնքերը անցնող տարիներուն տեւողութիւնը կը
բարձրացնեն յարկ յարկ
բոլոր ճամբաները կը տանին դէպի յեղաստեղծումը ներկային
կը փնտռեմ անանուն հասցէ
ըսէ՛ հնծի
– ես եմ բնակիչը տարիներուդ

VII

Կը հանգչի աչքերուս լանջերուն
քաղաքը իր անցեալի մերժումին մէջ հաստատուած
ցուցափեղկերը զեխութիւն մը կը ցոյացնեն
մայթերուն հայելիները նուաճելով
կարծես ապակիի այս արձագանգն ըլլար միակ
իմաստը պատերազմին
որուն համար
ցերեկուան եւ գիշերուան գոլորշին խառնուեցաւ ռումբերու
հրկիզումին

Կը յենիմ մայթեզրի ցօղունին
եւ կը կանչեմ
չարչարուած անունը քաղաքիս

VIII

Եւ ոտքերս ոտքեր չեն առանց քեզի
ոչ ալ ճամբաներդ ճամբայ առանց դոփիւններուն
քայլուածքիս
որ իբրեւ հեւք կը մատուցեմ ես քեզի
բնակելու ախորժակիդ մէջ ցամաք

բաղաբ

Երբ փոխեցիր շպարը անունիդ
երկրաչափական խիզախումդ օտարացուց զիս մայթերէդ
Եւ ես փնտռեցի ծովը
հակադիր խորութիւնը դիմակիդ
որուն ծոցին մէջ խրած
արմատներդ կը տնկուին
յիշողութիւնդ
ջուրերու մոռացութեան խառնելով

IX

քարին ծափը հաւաքելով ոտքերուն տակ
 մարմինս կը փարի ձայնին քաղաքին
 երերացող խօսքը ճամբաներուն շրթունքներս կը ներկէ
 փոշին կը նստի թարթիչներուն
 կը հագնիմ
 գոյնզգոյն ստուերը շէնքերուն
 եւ թելերս
 քաղաքի կամուրջներուն երկարութիւնը կը գրկեն

X

քաղաքը ես եմ

(Թիւ 3, 2020)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ԿԱՅԱՆ

... Մեզի համար՝ դեռ
 հին շոգեկառքը,
 իր կաղնեկարմիր եւ մոխրակապոյտ
 բաժանմունքներով,
 լուռ ճամբայ կ'ելլէ
 ծովափնեայ գիծէն,
 դանդաղ ընթացքով վեր կը բարձրանայ
 լեռնալանջերէն,
 ամեն կայանի
 ճամբորդ փոխելով:

Յոն՝ գիւղացիներ, գիւղագնացներ
 կը ժպտին հանգիստ
 կամ կը գրուցեն:

Յանդարտ ընթացքը հին շոգեկառքին
 կը թմրեցնէ բոլորն անխտիր:
 Մշուշը, քիչ ետք,
 լեռներէն վար պիտի սահի,
 իր ուռկանին մէջ անձայն որսալով
 կղմինտրագոյն շեղ տանիքները՝ գիւղերուն ցրուած
 եւ պիտի ծածկէ
 մոզայիքը համայնքային,
 հակասական ու պայթուցիկ...

* * *

...Դեռ կաղնեկարմիր ու մոխրակապոյտ
 բաժանմունքներով հին շոգեկառքը
 այնտեղ կը սուլէ...
 Անցարգել չկայ իր գնացքին դէմ:
 Գիւղերը տակաւին ամայացած չեն
 մարդկային շունչէն,
 իսկ այս կարմիրը բոսորագոյն չէ –

հերկուած հողին հրաւերն է
միշտ գայթակղալի...

Ցնցուղին տակ արեւի
սարալանջերն ու գիւղերը կը հանգչին:
Կարծես ամէն ինչ գիտես.
կը փորձես խօսիլ,
կը փորձես կանխել աղետը հիւսուող...
Սակայն լռութեան եղանակները կան,
արեան, զենումի եղանակներ եւ
բրտութեան ծէսեր...

Իսկ շոգեկառքը, ինքն իրեն համար,
տեղ մը կը սուրայ... առանց ճամբորդի:
Ահազանգի պէս ճչակը անոր
անվերջ կը սուլէ
խոպան երկրին մէջ,
փշաթելերու, աւազապարկի
կողքին երկարած
սառած աչքերով մարդոց ունկերուն...

(Թիւ 8, 1986)

ՈՂԻՍԵՒՍԻՆ ՅԵՏ

Ահա շենքեր կը բացուին
 կակաչներու պէս բոսոր՝
 հրդեհներ բոցավառ:
 Փողոցներուն ուրուականներ կը շրջին,
 կը շրջանցեն՝ անցարգելներ,
 փշաթելեր գալարուն:
 Կանաչ աղջիկը Լորթայի
 դեռ կը սպասէ իր ասպետին,
 որ չի հասնիր երբեւիցէ,
 եւ գիշերներ կը ճերմկին:


Կը հեռաձայնենք
 հոն ուր տակաւին կը պատասխանեն:
 Ձայնասփիւռը բաց կը պահենք՝ իմանալու՝
 թէ մահը ո՞ր
 սուր մանգաղով՝
 իր ցորեանի
 կարմիր արտը կը հնձէ խուլ...

Բայց, դարանակալ
 բոյրը պահուրտած
 նարնջենիի ծաղկած պուրակին՝
 ծովափէն փչող հովին դաշնակցած
 խոււմբ մը անցորդներ կը զինաթափէ՝
 արթնցնելով հանգչած ապրումներ...

Այլապէս այստեղ այն երկիրն է,
 ուրտեղ ծանօթներ, Ողիսեսին հետ,
 կ'անցնին, շատ յաճախ, երկիրը մահի:
 Երբեմն կու գան՝
 առանց բառերու,
 աչքերով դատարկ կը նային քեզի...

(Թիւ 3, 1997)

ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՀԵՐՈՍԸ՝ ԵՐԵՔ ԳՈՐԾԵՐՈՒ ԸՆԴՄԵՉԷՆ



ր կեանքին հանդէպ վերաբերումներէն ու հակազդեցութիւններէն մեկնած, Շուշանեանի հերոսը այն նոյն պատանին կամ երիտասարդը կը թուի միշտ, որ արտաքին տարբեր կերպարներու եւ կացութիւններու մէջ, կու գայ ինքզինք փնտռելու եւ կամ... ինքն իրմէ խուսափելու:

«Առաջին սերը», «Մթին պատանութիւն» եւ «Սիրոյ եւ արկածի տղաքը» Շուշանեանի գրականութեան մէջ ներկայացուցչական գործեր կրնան նրկատուիլ այս իմաստով: Բոլորն ալ շարժող պատանեկութենէ երիտասարդութիւն երկարող ժամանակաշրջանի մը մէջ, որոշ չափով ինքնակենսագրական բնոյթ ունեցող, երբեմն շարունակական թուացող եւ, երբեմն, ժամանակներու իմաստով՝ խաչաձեւուող կամ իրարու վրայ ինկող (overlapping):

Տուեալ երեք գործերուն մէջ ալ, հետաքրքրական երեւոյթ է իր սիրած աղջկան հետ Շուշանեանի հերոսին յարաբերութիւնը, ուր միշտ ալ յստակ ձգտում մը կամ մղում կը դրսեւորուի, երբ աղջիկը հեռու է կամ բացակայ, եւ մերժում կամ խուսափում մը, երբ ան ներկայ է եւ պահանջկոտ:

Շուշանեանի հերոսին կենսագրութեան հետեւելու համար, հաւանաբար պետք է սկսիլ «Առաջին սերը» վիպակէն, որ կը բացուի այսպէս.

Լապտերին աղօտ ու գունատ լոյսին տակ նստած յիշատակարանս կը թղթատեմ հին օրերու քու դէմքիդ ու փոքրիկ աղջկայ հոգիիդ պատկերը հարազատօրէն կազմելու համար:

... դուն այնտեղ քրոջ մը չափ քաղցր ու գեղեցիկ մայրիկի մը նման բարի ես... : Մեր առաջին հանդիպումը կը տեղաւորուի տխուր ու զարհուրելի շրջանակի մը մէջ: Հայրենի երկինքէն հեռու նետուած արաբական մեծ քաղաքին մէջ՝ ես պզտիկ եմ ու որք՝ միայն տասնհինգ տարեկան, երբ քեզի կը հանդիպիմ (Էջ 69–70):

Ինչպէս հետագային եւս պիտի տեսնենք, Շուշանեանի տիպարին իւրաքանչիւր արարքին պիտի ընկերանայ մեկնաբանութիւնը, երբեմն բացատրելու եւ երբեմն քողագերծելու ճիգով մը: Եւ զարմանալիօրէն, առաջին այս շրջանէն, աղջկան պատկերը կը գուգորդուի մօր եւ քրոջ յատկանիշներուն հետ եւ գուցէ ճիշդ այն պատճառաւ ալ, աղջկան կապուած ֆիզիքական բոլոր ցանկութիւնները կը մերժուին...

Նկարագրուածը որք պատանիի մը սերն է, որ Շուշանեանի շատ մը գործերուն պէս, որոշ ատեն մը ետք, հերոսին յիշողութիւններուն մէջ ձեւ կ'առնէ: Հալեպի որբանոցէն տասնհինգամեայ պա-

տանի մը, որ ընկերներուն հետ ջըրկիրութեամբ օրը կ'անցընէ, տան մը մէջ կը հանդիպի մաքրութիւն ընող ճակատագրակից աղջկան, որուն հանդէպ բռնն սէր մը կը սկսի տածել:

Խորքին մէջ, երեք հանդիպումներ տեղի կ'ունենան այդ տան մէջ. վերջինին՝ տանտիրուհիին վերաբերումին պատճառաւ, տղան իր արժանապատւութիւնը վիրաւորուած զգալով, այդ տունը չի մտնէր, իսկ աղջկան կ'արգիւլի ամբողջ տարի մը դուրս ելլել: Սակայն պատանիի մը համար այդքանն ալ բաւարար է, որպէսզի բռնն սիրով մը կապուի աղջկան եւ երազէ զայն:

Բացակայութեան՝ ցանկութիւնն է.

Այդ վայրկեաններուն անգուսպ ցանկութիւն մը կ'ունենայի քեզ զտնելու, եւ պոռալու, որ կը սիրեմ քեզ. կը սիրեմ մկաններուս ամեն մէկ թելովը եւ մտածումներուս ու երազներուս ամեն մէկ հիւսքովը. կը սիրեմ ամեն ժամ ու ամեն պահ եւ ամեն երկվայրկեան եւ կը մտածեմ վրադ, ուր ալ ըլլամ, ինչ ալ ընեմ: Կ'ուզէի քեզի գալ ու գիրկդ իյնալ ու շորթունքներէդ կախուիլ անժամանակ, անժամանակ գիշերներով (էջ 87):

Երկրորդ հանդիպումէն ետք, դաշտերուն մէջ անձրեւէն ցնցղատապի բռնուելով՝ որբանոցը կը պառկի, ուր աղջիկը կը գտնէ զինք եւ կու գայ այցելութեան: Կը գրուցեն, կը խօսին իրենց ապրումներէն, կը կարդան եւ վերջաւորութեան, երբ աղջիկը կու գայ զինք համբուրելու, ինք իր բերանը կը ծածկէ ձեռքով (էջ 95):

Երրորդ հանդիպումէն ետք, ամբողջ տարի մը չեն հանդիպիր, ոչինչ պակասած է իրենց փոխադարձ սէրէն, կրկին աղջիկն է, որ կը գտնէ զինք: Կը ժամադրուին եկեղեցւոյ մէջ, կ'երթան դաշտերը, կը տեսնեն, որ մեծցած են արդէն եւ կը բաժնուին կրկին:

Յաջորդ հանգրուանը կամ հանդիպման շրջանը երկու տարի ետք է՝ Պոլիս կամ Թուրքիոյ մէկ ծովեզերեայ շրջանը (Ռոտոսթոմ): Այդ շրջանին աղջիկը շարունակ գրած է, բայց ինք չէ պատասխանած, հակառակ իր տածած զգացումներուն:

Ես կ'ուզէի, որ դուն կարենայիր մոռնալ զիս, բախտդ ուրիշի մը հետ կարենալ կապելու համար, ես կը մտածէի քեզի համար, իսկ դուն կը կարծէիր, որ կեանքը իր ամօրեայ հոգերով իմ մէջս մարեց սիրոյ հրդեհը (էջ 105):

Ինչո՞ւ այս խուսափումը, ինչո՞ւ այս հեռացումը կամ այն ճիգը, որ աղջիկը մոռնայ զինք եւ չիյնայ իր ճամբուն վրայ: Բացատրութիւն չունինք կամ բացատրութիւնը կը վրիպի մեզմէ:

Այս շրջանին երիտասարդներ են արդէն եւ արտաքին պայմանները փոխուած են: Աղջիկը մօրաքորոջ հետ է, ինք՝ որբանոցային պատանիի հոգեվիճակէն ու կացութենէն դուրս եկած եւ երբ կը կարծուի, որ իրենց յարաբերութիւնները աւելի հասուն ձեւ պիտի առնեն կամ կ'ենթադրուի, որ դուրս եկած պիտի ըլլայ պատանեկան իտեալական պատկերացումէն կամ միամիտ հակազդեցութիւններէն, կը տեսնենք, որ գրեթէ բան չէ փոխուած:

Այլեւս հերոսին կամ գլխաւոր տիպարէն կը հետեւինք օրագրութիւններուն մէջէն: Շուշանեանին մօտ վարժութիւն մը, որուն աւելի ուշ եւս կը հետեւինք. այսինքն՝ յանկարծ պատումի ընթացքն ու կառոյցը կը խզուի եւ յուշատետրը կու գայ տիպարին ապրումներուն թարգմանը հանդիսանալու:

Սակայն օրագրութիւնը, որուն որոշ էջերը կը տրուին, յստակ ժամանակաշրջաններ կը նշէ. կ'երկարի 25 ապրիլ 1919էն մինչեւ 20 ապրիլ 1920. մօտաւորապէս մէկ տարուան ժամանակաշրջանի մը: Նաւային զբօսանքի մը ընթացքին սկսած այս շրջանը կը խըզւի, երբ հերոսը ուժեղ շարժումով մը կը հրէ զինք համբուրող աղջիկը (էջ 120):

Օրատետրը յաջորդ հանդիպումը կը տանի չորս տարի ետք, 4 օգոստոս 1924, Փարիզ, ուր կը հանդիպին գետնուղիին մէջ: Աղջիկը ամուսնացած է եւ պզտիկ մը ունեցած: Չուգադիպութեամբ մը երեւան կու գայ, որ շաբաթէ մը ի վեր նոյն պանդոկը կը բնակին: Տղան կը ծանօթանայ աղջկան ամուսնին, որ իր խառնուածքով կը յիշեցնէ տղուն նկարագիրը. փոքրիկը կը խայտայ տղուն գրկին մէջ, այն տպաւորութիւնը փոխանցելով, որ կրնար իր գաւակը ըլլալ նաեւ . . . : Անշուշտ սերը անձ է տղուն մէջ եւ տառապանքի վերածուած, սակայն, բնականաբար, նոյնիսկ չի կրնար յարաբերութիւն մը պատկերացնել ամուսնացած կնոջ հետ եւ վերջնականապէս կը բաժնուին:

Արդեօք այս բոլորին տակ կամ հոգեվիճակ մը, որ մեզի համար անթափանցելի կը մնայ: Ինչպէս ալ բացատ-

րենք՝ կան որոշ կեցուածքներ ու նկարագրի կետեր, որոնց աւելի ուշ եւս պիտի հանդիպինք:

Անոնցմէ առաջինը՝ համարձակ, բիրտ, զգայուն, նոյնիսկ քիչ մը փողոցային արտաքինին տակ՝ Շուշանեանի հերոսին վիպապաշտ ու կրաւորական խառնուածքն է, որ իր աշխարհին մէջ փակուած կը մնայ, սպասելով, որ դէպքերը առաջնորդեն զինք: Վերոյիշեալ գործողութիւններուն կամ դիպաշարին մէջ, կը տեսնենք, որ աղջիկն է միշտ նախաձեռնարկը—հիւանդութեան օրերուն՝ իր հասցէն փնտռողն ու զինք հարցնողը, տարի մը ետք նամակով մը զինք գտնողն ու ժամադրուողը, եւ այլն:

Իսկ պատանի թէ երիտասարդ տղուն համար, միշտ գոյութիւն ունի հեռւէն ցանկացող, ապրումներուն անձնատուր ըլլալու, նոյնիսկ քիչ մը մագոխական, հեռուէն տառապելու հոգեվիճակ մը ուր աղջկան ֆիզիքական ներկայութիւնը միշտ կը մերժուի: Յերոսին կեցուածքներուն շարժառիթը խուսափումն ու հեռացումն է—կը հեռանան, առանց որեւէ տեսանելի պատճառի, երբ Յալէպի մէջ են, կը հեռանան երկու տարի ետք եւ, հաւանաբար, պիտի հեռանան միշտ:

Յստակ աշխարհագրական վայրի մը՝ երկրի կամ քաղաքի մը չկարենալ կապուելու հոգեվիճակ, պատասխանատուութենէ (իր սերը ստանձնելու, կեանքին որոշ ընթացք տալու կամ ամուսնանալու) խուսափում, այլ պատճառ: Ինչ ալ ըլլայ շարժառիթը, սիրոյ իտեալականացումն ու աստիճանաբար վերացական իրականութեան մը վերածումը, ֆիզիքական ներկայու-

թեան ջնջումն ու կնկայ պատկերին շարունակական զուգորդումը մօր ու կնոջ պատկերներուն հետ, բաւական բարդ կացութիւն եւ հոգեկան անել վիճակ մը կը ստեղծեն հեղինակին համար, որուն պիտի անդրադառնանք աւելի ուշ:

II

Յոգեկան նման փորձառութիւններէ կամ պատասխանատուութիւններէ խուսափում մը բաւական թափանցիկ կերպով կ'ուրուագծուի «Սիրոյ եւ արկածի տղաքը» անուն գործին մէջ, որ կը բացուի թելադրական հետեւեալ բառերով. «Ուրիշ, ուրիշ Էր կեանքը, երբ ես դատարկապորտ էի...» (Էջ 8):

Այս ըղձական մղումը անցեալին նկատմամբ, որ զանազան դրսեւորումներով կ'արտայայտուի վէպի ամբողջ երկայնքին, մէկ կողմէ անցեալը բանալու եւ պատմելու առիթը կը ստեղծէ (վերլիչումներու ճամբով անցեալ մեկնելու, ժամանակի ուղղութեամբ ետ երթալու), իսկ միւս կողմէ՝ հոգեբանական տուեալ մղումը կը մատնէ՝ վերադառնալու պատանեկան դատարկապորտութեան ժամանակաշրջանին, ուր հոգեկան խորունկ կապեր չկան, հերոսը Երուանդ Ամբարիշտն է, իր փողոցային չարութիւններով եւ «ազատութեամբ»:

Երուանդ եւ Վահրամ այն սկառուներն են, որոնք Պոլսէն մեկնած են Յայաստան՝ հայրենիքի վերակառուցումին սատարելու տրամադրութիւններով եւ հանրապետութեան անկումէն ու խորհրդայնացումէն ետք, Թիֆլիսի եւ Պաթումի ճամբով փախուստ կուտան դէպի Պոլիս:

Վրաստանի խորհրդայնացումին հետեւանքով Թիֆլիս եւս կորսնցուցած է իր հմայքէն շատ բան, սակայն ապրիլ Է, գարուն եւ երկու ընկերներ կ'որոշեն շաբաթ մը անցընել հոն: Թիֆլիսի մէջ Երուանդ կը ծանօթանայ

...սիրոյ իտեալականացումն ու աստիճանաբար վերացական իրականութեան մը վերածումը, ֆիզիքական ներկայութեան ջնջումն ու կնկայ պատկերին շարունակական զուգորդումը մօր ու կնոջ պատկերներուն հետ, բաւական բարդ կացութիւն եւ հոգեկան անել վիճակ մը կը ստեղծեն հեղինակին համար...

Սիրարփիի կամ աւելի կարճ՝ Արփիկի. Երուանդի հանդիպումը իր ուսուցիչներէն Աւետիսեանի հետ, որ, իր կարգին, ծանօթ է աղջկան, պատճառ կը դառնայ, որ սերտանայ Երուանդի եւ Արփիի ծանօթացումը եւ... նոյն շրջանն (cycle) է, որ կը կրկնուի:

Երուանդ՝ Շուշանեանի նոյն պատանի երիտասարդ վիպապաշտ ու կըրաւորական հերոսն է, որ առաջին յանդուգն արտայայտութիւններէն ետք, երբ յարաբերութիւնները կը լրջանան, կը քաշուի իր պատեանին մէջ: Իսկ Արփիկ նախաձեռնող աղջիկն է, որ անգամ մը վստահութիւն տածելէ ետք սիրած տղուն նկատմամբ, չի վարանիր զայն առողջ կերպով դրսեւորել:

Արփիկ կը կարգադրէ, որ Երուանդ Սք. Յարութիւն եկեղեցիի բակին մէջ գիշերելու փոխարէն, Յովնանեան վարժարանին մէջ մնայ, որ աւելի մաքուր է եւ հանգստաւէտ:

Յաջորդ օրը երեկոյեան, կայարանի պատմութենէն ետք կը հանդիպին. աղջիկն է որ կու գայ Յովնանեան իրեն հանդիպելու եւ ... շաբաթ մը մնալու որոշում առած Երուսանդը արդէն վճռած է յաջորդ օրն իսկ մեկնիլ, հեռանալ: Եւ, գրոյցի ընթացքին, երբ համբուրուելու պահը կու գայ, տղան կ'ըսէ.– «Համբոյրով մը սիրտը չեն լռեցներ, Արփիկ»: Յաջորդող էջերուն կամ խօսակցութեան ընթացքին մտերմութիւնը չի պակսիր, ոչ ալ՝ սիրոյ խոստովանութիւնը, տակաւին տղուն գրած բանաստեղծութիւններէն սկսեալ մինչեւ աղջկան ձեռք կարդալու հնարքները կան հոն, սակայն տղան կրկին չ'ուզեր համբուրել Արփիկը եւ վճռական կը մնայ մեկնելու որոշումին մէջ:

Հաւանաբար հոս տեղին է փակագիծ մը բանալ եւ խօսիլ վերը ակնարկը ւած կայարանի դէպքին մասին: Թիֆլիս, իրենց կեցութեան երկրորդ օրը, երբ Երուսանդ եւ Վահրամ փոխն ի փոխ հերթի կը սպասեն՝ Պաթում երթալու տոմսակի համար, Երուսանդ կը ծանօթանայ իր առջեւ կեցած 17ամեայ Հայկանոյ անունով աղջկան հետ, կը մտերմանան եւ երբ իրենց կարգը կու տան Վահրամին եւ աղջկան եղբօրը, միասին պարտէզ կ'երթան: Հետաքրքրականօրէն ամէն ինչ շատ բնական ձեւով կ'ընթանայ եւ ոչ մէկ բարդոյթ կը նկատուի պատահարին մէջ.

Արեւը կ'իյնար իր մագերուն վրայ: Թոյլ տուաւ, որ զանոնք շոյեմ: Ձեռքերս կը դողային իր առատ վարսերուն վրայ: Յետոյ համարձակութեամբ՝ ես սիրեցի նաեւ իր արդէն հասուն ու անուշ

կուրծքերը արագ ու իր խուսափուկ շեշտովն իսկ խռովիչ գուրգուրանքով մը (էջ 52):

Քիչ ետք, բաժնուելէ առաջ, աղջիկը իր մագերէն խուրձ մը կտրելով կու տայ իրեն: Կ'որոշեն շաբաթ մը ետք հանդիպիլ Պաթում, հանրային պարտէզին դրան դիմաց:

Անշուշտ որոշ չափով հակասական է այն պարագան, որ դէպքը կը պատահի այնպիսի ատեն մը, երբ Երուսանդ սիրահարուած է Արփիկի եւ իր բոլոր արարքները կամ կեցուածքները այդ սիրով կը հիմնաւորէ, եւ ապա՝ տղուն խառնուածքէն իսկ մեկնած, դժուար է պատկերացնել, որ ան կը խաբէ Արփիկը կամ Հայկանոյշը, սակայն մէկ կէտ յստակ է, որ յարաբերութիւնները յաջող ձեւով կ'ընթանան, որովհետեւ խորացումի հեռանկար չունին եւ երբ ըզգացական որոշ մթնոլորտ մը ստեղծուած է (եւ Արփիկի հետ կապը խորացած), կ'որոշէ այլեւս աղջիկը չտեսնել, ժամադրութեան չերթալ:

Պաթում: Հեռաւորութիւն: Եւ աղջկան հմայքը տակաւ կը ծաւալի եւ հեռաւորութեան մէջ պահանջի կը վերածուի: Իսկապէս զարմանալի է այն պարագան, որ մտերմութեան մէջ «հոգեկան» կապեր ու խուսափում փընտռող հերոսը, հեռաւորութեան մէջ ֆիզիքական կապի պահանջքը կը զգայ եւ կը տառապի այս իմաստով: Պաթումէն գրուած երկար նամակը (էջ 91էն 99) այս ապրումներուն արտայայտութիւնը կը դառնայ .

...Մագերուս վրայ խառնիխուռն կը զգամ շրթներդ ու ձեռքերս

կ'այրին ահա՛ քու ձեռքերուդ կարօտէն:

...Ան գիտէ, որ կը սիրեմ քեզ ու կը տառապիմ ու կը նախանձի ինծի իմ տառապանքիս համար:

Ամբողջ նամակի ընթացքին յատկանշական է այն պարագան, որ անկախ ցանկութեան ապրումէն, Երևանդ աղջկան համբոյրը կը զգայ իր մագերուն կամ դեմքին վրայ, եւ ոչ թէ ինք կը համբուրէ կամ կը մօտենայ աղջկան պատկերին, այսինքն՝ կրկին կրաւորական տարրն է եւ ոչ թէ ներգործօն տարրը:

Երկրորդ յատկանշական տուեալը տառապանքին տրուած արժէքն է: Անշուշտ դրսեւորուածը բաւական բարդ հոգեվիճակ մըն է եւ, ինչպէս միշտ, վտանգաւոր է զայն մակերեսայնացումի կամ պարզացումի տանի: Յեռաւորութիւնը ազդակներէն մէկն է նաեւ, որ ծնունդ կու տայ տառապանքին, եւ Շուշանեանի վէպին հերոսը եւ հերոսները ընդհանրապէս կարծէք կը գուրգուրան իրենց տառապանքին վրայ: Երուանդ կը տառապի, Վահրամ կը նախանձի Երուանդի տառապանքին եւ այս ապրումը, կարծէք վիպապաշտ պատկերացումով մը, կը գուրգուրուի սիրոյ փորձառութեան, այդ ապրումին մէկ ամենակարեւոր մասը կը դառնայ...

Հաւանաբար այս հոգեվիճակին ծրնունդ տուող պատճառներէն մէկն ալ այն վիպապաշտ պատկերացումն է, որ երջանկութեան կարելի է հասնիլ տառապելով միայն: Սակայն Շուշանեանի հերոսները իրենց հաւաքական կենսագրութեամբ իսկ տառապած պա-

տանիներ ու մարդիկ են արդէն, զրկուած իրենց հողէն, տունէն, ընտանեկան պարագաներէն, մանկութենէն եւ ուրիշ հազար բնական բարիքներէ, տակա-

Շուշանեանի վէպին հերոսը եւ հերոսները ընդհանրապէս կարծէք կը գուրգուրան իրենց տառապանքին վրայ:

Լին ապրած ցեղասպանութեան սարսափելի հոգեկան ցնցումը... եւ հաւանաբար այս պատճառով ալ տառապանքը իրենց հոգեկան կլիմային մէկ անբաժան մասնիկը դարձած է, իսկ Երուանդներու պարագային, տառապանքը յատկօրէն տեղ կ'առնէ իրենց հոգեկան խառն ապրումներուն մէջ եւ սիրոյ ու հեռաւորութեան ամթած ֆիզիքական չխոստովանուած պահանջին հետ կու գայ: Փաստօրէն, երջանկութիւնը շատ մօտ է Երուանդին, իր կեցութիւնը Թիֆլիս, բնական կապը Արփիկի հետ, կ'ապահովէ իր ուսումը եւ ապագայ յարաբերութիւնները, բայց եւ այնպէս, հերոսին իսկ կողմէ փնտռուած այս արժէքները (սիրոյ եւ երջանկութեան որոնում) փաստօրէն կը մերժուին, երբ պատեհութիւնը յարմար է արդէն:

Յերոսի այս պատկերացումին մէջ կարելոր է նաեւ, արտաքին կարծր կերպարի մը պահպանումը: Կարծէք հերոսը նախանձախնդիր է միշտ իր այս կարծր դիմագիծի պահպանումին: Արփիկին յղուած նամակին մէջ Երևանդ պիտի ըսէ նաեւ.

Ես դատարկապորտ եղած եմ միշտ: Հիմա ալ կը զգամ, որ եմ տակաւին... չար, բայց լաւ ընկեր

մը վարժեցուցած էր զիս զինի, մանաւանդ օղի խմելու:

Գիտե՞ս, Արփիկ, ես կը խմեմ կրթով, վայրենութեամբ, մասնաւոր ու բարբարոս հաճոյքով ու տարիքիս անհամեմատ կերպով մեծ ուժով մը տիրելով ինքզինքիս: Կը զգամ բերանս, որ այբով կը հոտի, եւ ատիկա ատելի կը գրգռէ զիս: Բերնիս կու տամ ու կ'երգեմ պոռնկական երգեր (Էջ 95):

Խորքին մէջ, իր անցեալին մասին պատմուած դէպքերը, կիներուն հանդէպ կեցուածքը, եւ այլն, այդ «անզիջող» դիմագիծի շեշտաւորումին կը ծառայեն եւ շեշտաւորումը շատ ալ զարմանալի չէ, որովհետեւ իր արժանապատուութեամբ հիմնաւորած վերաբերումներն ու վարուելակերպը ընդհանրապէս այս դիմագիծի ներկայութեամբ կ'արդարացուին: Իսկ խմիչքի գործածութիւնը, վայրենութիւնը, կիրքը, կնկայ անտեսումը կամ մերժումը՝ առնականութեան կամ կարծրութեան յատկանիշներ կը նկատուին...

Բայց այս կարծրութիւնը արտաքին է եւ կը թողարկէ զգացական փրփուրուն աշխարհ մը, որ վիպապաշտ մօտեցումով հոգեկան ու զգացական ապրումներ եւ արժէքներ կը փնտռէ: Եւ անմիջապէս որ տղան առանձին է, նամակներու կամ օրագրութիւններու մէջ, այսինքն արտաքին կամ հանրային պատկեր մը ցուցադրելու կարիքը չըզգար, իր ներքին կամ զգացական աշխարհը երեւան կու գայ:

Նման արժեչափերով կազմուած աշխարհի մը մէջ (եւ պետք չէ մոռնայ,

որ հերոսները պատանի-երիտասարդներ են, 16-17 տարեկան), ֆիզիքական յարաբերութիւնները ազատ կամ ոչմաքուր նկարագիր մը կ'առնեն տղուն համար: Այս իմաստով կը բացատրուի Պաթումի մէջ հայ կնկան հետ յարաբերութիւնը, որուն անգամ մը Երեւան հանդիպած է եւ որ իր ու ընկերներուն գործը կը կարգադրէ: Եւ երբ կնկան դասաւորումով նման յարաբերութիւն մը կ'ունենան (Էջ 123-124), վիրաւորած ու անպատուած կը զգայ: Այստեղ ապրուածը միմիայն Արփիկի հանդէպ դաւաճանած ըլլալու զգացումէն չի գար, որովհետեւ հոգեկան կապ մը չկայ իր եւ կնկան միջեւ պարզապէս կը զգայ, որ իր դժուար կամ առնական պատկերը բռնաբարուած կամ խանգարուած է կնկայ մը կողմէ...

Վերադառնալով դիպաշարի հիմնական գիծին՝ այն պահէն որ Արփիկին նամակը կը հաղորդէր, որ մայիս 8ին Յովնանեանի աղջիկներուն հետ Պաթում կու գայ մինչեւ հանդիպումը, տղուն ապրումները ատելի ուժեղ խորութիւն մը կ'առնեն: Աղջկան այցելութիւնը վերջին պատեհութիւն մըն է Երուանդին համար Կովկաս մնալու եւ Արփիկի եղբօր օժանդակութեամբ ուսումը շարունակելու, այս իմաստով խորհրդակցած են Աւետիսեանը, Արփիկը եւ Արփիկի եղբայրը, սակայն տղուն հպարտութիւնը կը մերժէ նման կարգադրութիւններ ընդունիլ, նոյնիսկ եթէ ասիկա պատճառ պիտի դառնայ իրենց սիրոյ ընդհատումին:

Նամակէն ետք, օրագրութիւնը այն վայրն է, ուր Երուանդ կը յաջողի իր զգացումները դրսեւորել աղջկան հան-

ղեպ: Անշուշտ, աւելի անկեղծ կամ յանդուգն շեշտ մը կայ օրագրութիւններուն մէջ, որովհետեւ անոնք ոեւէ մեկուն չեն յղուիր: Եւ, բնականաբար, նախապէս ակնարկուած ֆիզիքական ցանկութեան դրսեւորումները հոս տեղ կը գտնեն մէկէ աւելի անգամներ.

Արփիկ, երբ կը նայիմ մութին մէջ քու հասակիդ, մարմինս կը խռովի: Ահա քու հարուստ ու անուշ մարմինդ: Ապերախտ պիտի ըլլայի, եթէ չըմբռնէի անոր բացառիկ գեղեցկութիւնը: Ձեռքս կ'ուզեմ դնել կուրծքիդ վրայ, որ աղւոր ու ամուր պտուղի մը պէս է՝ ծածկուած փափուկ շղարշով մը, ու միւս ձեռքովս գրկել մէջքդ, որ նուրբ է ու քնքոյշ (Էջ 147):

Ոչ թէ անկարելի, այլ քիչ հաւանական տուեալ մը կայ նաեւ հոս, որովհետեւ այս բոլոր ապրումները տածող Երուանդը մէկ երկու օր եւ քանի մը ժամ միայն եղած է աղջկան հետ...: Սակայն Շուշանեանի հերոսները ընդհանրապէս առաջին ակնարկով կը սիրահարին:

Եւ Արփիկ կու գայ: Տոնոց շոգենաւրը հասած է եւ յաջորդ օր գիրենք պիտի տանի Պաթումէն: Կը հանդիպին անգամ մը եւս. տղան կրկին վճռական կը մնայ իր մեկնելու որոշումին վրայ, որովհետեւ՝

– Եթէ մնամ, Արփիկ՛կ, – կ'ըսէի, – կը վախնամ, որ չկարենամ այնպէս սիրել, ինչպէս կը սիրեմ հիմա... իմ մեղքս չէ, Արփիկ՛կ, որ աշխարհը այսպէս խստացուցած է սիրտս, հպարտ, հպարտ... (Էջ 183):

Բացայայտ է, որ Երուանդ չի կրնար ձերբազատուիլ իր հպարտութենէն, որովհետեւ այդ մէկը իր ինքնապատկերացումին գլխաւոր յատկանիշներէն մէկն է, իսկ հաւանաբար աւելի հանգիստ կը գգայ, երբ կը սիրէ... հեռէն եւ առանց ֆիզիքական կապերու եւ այսպէս կը բաժնուին, որովհետեւ տըղան կրկին չ'ուզեր համբուրել աղջիկը:

Գործը կը փակուի օրագրութեան կարճ Էջերով, որոնք կ'երկարին ապրիլ 3էն ապրիլ 14, իրենց հանդիպման թրւականը. շատ հաւանաբար տարի մը անցած է եւ մենք կը կարդանք օրագրի վերջին Էջը, վէպին վերջին պարբերութիւնը.

«Ապրիլ տասնչորս–Ահա՛, Արփիկ՛կ, անունդ կ'արտասանեմ յաղթելով յիմար հպարտութեանս: Յոգնած եմ ու տկար երջանկութենէս: Տե՛ս, կանչեցի քեզ: Ապրիլի տասնչորսն է այսօր: Գրեցի քեզի երկար: Շա՛տ երկար, ինչպէս դուն կ'ուզէիր ու այդ ամբողջ Էջերը կարելի է համառօտագրել երկու բառերով՝ «Արփիկ՛կ, եկո՛ւր...», կը կանչեմ քեզ, ինչպէս բոյնէն՝ պանդուխտ ու թաց հողին վրայ վիրաւոր ինկած Վարուժանը՝ կը կանչէ իր Մարին: «Եկո՛ւր, աղւո՛ր Արփիկ...» (Էջ 193):

Խոստովանութիւնը կարդալով հանդերձ, վստահ չենք, որ հերոսը յաղթահարած է իր հպարտութեան կամներքին դժուարութիւններուն: Երբ Է որ Շուշանեանի հերոսը, ընդհանրապէս, պատանեկան կամ երիտասարդական հոգեբանութեան կամ փորձառութեան մը սահմաններուն մէջ կը

մնայ, սակայն ինչպես նախապես ակնարկություններ եղան, իր ներքին աշխարհին եւ արտաքին պատկերին միջեւ կ'ապրի յստակ հակասություն

Շուշանեանի հերոսը, ընդհանրապես, պատանեկան կամ երիտասարդական հոգեբանության կամ փորձառության մը սահմաններուն մէջ կը մնայ, սակայն... իր ներքին աշխարհին եւ արտաքին պատկերին միջեւ կ'ապրի յստակ հակասութիւն մը

մը, որ գործի աւարտին իր հաւասարակըշտութիւնը չի գտներ:

Եւ «Առաջին սերը» վիպակին մէջ, եւ այստեղ, արտաքին հպարտ տղուն դիմակին տակ կայ փխրուն, գուրգուրանքի կարօտ տղան, որ բանաստեղծութիւններ կամ երգեր կը գրէ, կը տառապի եւ կու լայ...: Փողոցային տղայէն մինչեւ գաղափարական կամ սկզբունքներու տէր այս տիպարը, որ ներքին աշխարհը կը ծածկէ այդ կարծրութեամբ, յստակօրէն իր անցեալին մէջ անարդարուած, վիրաւորուած ըլլալու փորձառութիւններ ապրած է, վերջ ի վերջոյ անկարելի պայմաններէն դուրս եկած վերապրող մըն է, սակայն չի հասնիր փորձառական աշխարհի այն հասունութեան, որ զինք այլեւս դուրս պէտք է բերէ հոգեկան տուեալ հանգոյցներէն, պատճառ դառնայ, որ աւելի բնական ու հասուն կերպով դիտէ կեանքը: Սակայն հոս կան այլ տրւեալներ եւս, որոնց պիտի անդրադառնանք «Մթին պատանութիւն» անուն գործի քննարկման ատեն:

Յոս պէտք է նշել սակայն, որ *Միտոյ եւ արկածի տղաքը* իր դիպաշարով, տիպարներով, արտաքին աշխարհով կամ շրջապատով, Շուշանեանի այն սակաւաթիւ գործերէն է, որ կը մօտենայ վէպի յղացքին: Այնտեղ, առնուազն, հեղինակը իր ներքին աշխարհով կամ հարցերով չի բաւականանար, այլ նաեւ ժամանակաշրջանի մը վրայ կը բացուի: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետութեան եւ խորհրդայնացման օրերուն:

III.

«Մթին պատանութիւն»ը տուեալ հոգեվիճակներուն ու հարցերուն մէկ աւելի հասուն քննարկումն ու գիտակցումը կը բերէ: Գրուած օրագրութիւններու շրջանին (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1942, թիւ 4) այնքան մը, որ պատճառ կը դառնայ օրագրութեան ընդհատումին («Լռութիւնը ինքս ինձ հետ՝ միակ բանաւոր ելքը կը թուէր: Բայց իմացականութիւնը եթէ դադրի գործելէ, հոգիդ կը լռէ՞ միթէ: Խաբելու համար անձկութիւնս, սկսայ գրական աշխատանքի մը՝ «Մթին պատանութիւն»: Բայց քանի կը յառաջանայի՝ վիպակիս կառուցուածքին մէջ, այնքան անձկութիւնս կը մեծնար», նոյն տեղը, էջ 27), որ կը շարունակուի երկին աւարտէն ետք եւ օրագրութեան մթնոլորտին նման ինքնավերլուծումի եւ ինքնագիտակցումի ճիգին մէկ մասը կը կազմէ: Գուցէ այս պատճառով ալ պատանեկան–երիտասարդական անցումի այս հոգեվիճակը աւելի յստակ ձեւով կը տեսնուի հեղինակին կողմէ, որ ընթերցումի նշաններ կամ բանալի-

ներ կը ձգէ վէպի տարածքին (անշուշտ վէպի հասկացողութիւնը պայմանական է հոս):

Վստահաբար յիշեալ բանալիներէն մէկը այն հարցումն է, որ վէպի հերոսներէն ամենէն փոքրին կողմէ կը գրուի –«Ո՞վ էր Եղիպոս թագաւորը ու ինչ ըսել է «Եղիպոս արքային մեղքը», կը հարցնէր Չարեհ» (Էջ 139):

Պատասխանը կը տրուի Բարգէնի ու Արշամի կողմէ, նոյն Էջին վրայ. «Նոյն ընտանիքին անդամներուն միջեւ սեռային արարք տեղի ունեցած պարագային կը գործածեն այս բացատրութիւնը», սակայն տղաքը կ'որոշեն Չարեհին չհաղորդել իմաստը, իսկ այս բացատրութեան քողարկումը որոշ չափով կ'երկարի գործին վրայ ...

Վէպին գլխաւոր հերոսը՝ Բարգէն, Եղեռնէն ետք քանի մը տարի Յալէպ կամ միջին արեւելեան քաղաքներու մէջ թափառելէ յետոյ, հասած է Պոլիս, մեծ մօր ու քեռիներուն տունը, սակայն բացայայտ է իրեն համար իր եւ ընտանեկան պարագաներուն հոգեկան խնդրումը իրարմէ, ինչ որ հաղորդակցութեան անկարելիութեան կը հասնի: Շուտով նոյն տունը կը հասնի նաեւ, մօր կողմէ այլ ազգականուհի մը՝ 25ամեայ Արուսեակը, որ կանխահասօրէն կամ ապօրինի կերպով մայրացած է–դէպք մը, որուն մասին ակնարկութիւն կ'ըլլայ, բայց չի յստակացուիր, սակայն այդ մեղքը կապուած կը թուի ըլլալ ջարդերու խժոժութիւններուն:

25ամեայ այս աղջիկ-կնկան ֆիզիքական հասունութիւնն ու մեղքի շրջարշով մը պատուած ըլլալու պարագան՝ զայն յստակօրէն գրաւիչ կը դար-

ձընեն երիտասարդութեան սեմին թեւակոխած այս պատանիին համար, իսկ այս առընչութեամբ խոստովանութիւնները չեն պակսիր.

Երիտասարդ աղջկան մը, որ ամօթահար մայրութենէ մը ամեն վայրկեան կը տառապէր, կուրծքերուն բեղուն հարստութիւնը (Էջ 27):

Արուսեակի հետ կապուած Բարգէնի բոլոր ապրումներն ու նկարագրութիւնները յստակօրէն ծանրաբեռնուած են սեռային նոյն դողով.

Գարուն կար նաեւ Արուսեակի շարժումներուն մէջ, գարուն կար անոր ձեռքերուն վրայ: Ոտքի ելելու ժամանակ՝ քիչ մնաց անոր կուրծքերը պիտի հպէին իր ծունկերուն: Անոր ճերմակ չփակը պիտի պատմէր կարծես իր երիտասարդութեան լիութենէն (Էջ 33):

Դժուար է ճշդել անշուշտ, թէ միայն տղուն պատանեկան տարիքէն ու աղջրկան յորդ կանացիութենէն կու գայ այս ապրումը, թէ Արուսեակի «ամօթահար մայրութիւն»ն ու մօր կողմէ ազգական ըլլալու պարագան եւս առընչութիւն ունի տղուն տածած զգացումներուն մէջ: Յաւանաբար տուեալ երեք տարրերն ալ կան, որովհետեւ աստիճանաբար գիտակցուած կամ ոչ, ուղղակի կամ անուղղակի միջոցներով, երեք գիծերն ալ աւելի ուշ դրսեւորում պիտի գտնեն: Եւ հաւանաբար այս պատճառով ալ, աղջկան առթած ապրումներուն առընչութեամբ Բարգէնին զգացած յանցանքը պարզապէս պատանի տղու սեռային գրգիռէն չի գար,

այլ միւս տարրերը եւս այնտեղ ներգոյ են: Եւ հեղինակին մեկնաբանութիւնը եւս այս գիտակցութիւնը կը բերէ.

Այդ տարիքին, կրնամր գիտնալ միթէ, իր դեռ անմշակ իմացականութեամբը, թէ նման կալուածքի մը մէջ *ըստ էութեան*, ներգոյակ յանցանք բնաւ գոյութիւն չունի, թէ ընկերային ու այլ օրէնքներու, աւանդութեանց, լուռ դաշինքներու առընչութեամբ միայն մարդկային արարքները կը վերածուին յանցանքի... Կրնամր գիտնալ միթէ, իր դեռ խոսքի հոգւովը, թէ ամէն իրական գորով, նոյնիսկ ապօրինի, կը կրէ իր ներումը ...թէ իրապէս յանցաւոր ըլլալու համար, ի յառաջագունէ պետք է ընդունած ըլլալ այն սկզբունքները, որ կ'որոշեն ու կը պայմանաւորեն այդ յանցանքը (Էջ 29):

Չարդ տեսած ու աքտորէն վերադարձած տղուն համար ամէն օրէնք ու ընկերային ամէն յարաբերութիւն խախտած է արդէն: Ընտանիքը, որ առաջին շրջանակն է այս կառոյցին մէջ, օտարացած է իրմէ եւ անոր օրէնքները (կամ արտաքին յարաբերութիւնները) այլեւս անիմաստ կը թուին, իսկ յանցանքի ըմբռնողութիւնը, հեղինակին իսկ կողմէ, յարաբերական հասկացութիւն մըն է եւ յանցաւոր ըլլալու համար, պետք է ընդունիլ այն սկզբունքները, որոնք «կ'որոշեն ու կը պայմանաւորեն այդ յանցանքը», մինչ այդ սկզբունքները ոչինչ կ'ըսեն տղուն համար...

Իսկ ինչո՞ւ Բարգէնի զգացած ապրումը կամ գորովը կրնայ ապօրինի նկատուիլ ...:

Պարզ է, որ ակնարկութիւնը միմիայն Բարգէնի պատանեկան սեռային խռովքին չի վերաբերիր, այլ ընտանեկան շրջանակի մէջ այս *սասլիմէյշըն* (sublimation) մղումին, որ հատուածին սկզբնաւորութեան յիշուած «Եդիպոս արքայի մեղք»ի (Oedipus complex) շրջագիծին մէջ կ'իյնայ, որովհետեւ Արուսեակ, անկախ մօտ ազգական ըլլալէն, կը նմանի ու կը յիշեցնէ Բարգէնի մայրը...: Այս մասին, սակայն, աւելի ուշ:

Ապօրինի ապրումներու շրջագիծին մէջ կ'իյնայ նաեւ Բարգէնի այն զգացումը, որ կը մտածէ մօրաբորոջ՝ Վերգինի նկատմամբ: Մօր ընտանիքին մէջ, եթէ երկրորդ անձ մը կայ, որուն նկատմամբ համարում կը տածէ Բարգէն (ըսելու համար նուազագոյնը), այդ ալ մօրաբորոյն է, որ որոշ չափով տարեկից եղած է մօր եւ մօր հետ նմանութեան գիծեր ունի:

Մօրաբորոջ նկատմամբ տղուն վերաբերումը միշտ առանցք ունի պատահար մը, որ խորքին մէջ արտաքին դրսեւորումն է այդ կնկան նկատմամբ զգացած խռովքին: Դեպքը կը պատմուի այսպէս.

Ու եթէ դուռները բախել գիտնար, տեղ մը մտնելէ առաջ, գէթ այդ յաւելուածական միջադէպը տեղի չէր ունենար: Ոչ նրբանցքը ոչ ալ առաջին յարկը մարդ կար: Ստիպուած ելաւ վեր: Ու դեպքէն յետոյ մտածեց միայն, թէ գորգերուն պատճառաւ, իր ստանձնածը կրնար չըսուիլ: Պարզութեամբ նընջասենեակին դուռը բացաւ ու քիչ մնաց աղաղակէր, այնքան անակնկալ էր տեսարանը: Մօ-

րաբայրը բոլորովին մերկ՝ հայելիին առջև կուրծքերը կը հոտաւետէր: Չգալով անմիջապէս թէ ինչ տեղի կ'ունենայ՝ գլուխը դարձուց ու մէկէն ճչաց: Իսկ ինք գամւած կեցած էր հող, խորապէս ապշած հոգւոյն խորը, թէ կին մը այնքան գեղեցիկ կրնայ ըլլալ: Ակնարկը կառչած մնաց անոր ճոխ թիկունքներուն, մինչ այն կը ճգնէր ծածկել իր մերկութիւնը, միաժամանակ պոռալով որ դուրս ելլէ: Յեղակարծօրէն ըզզաց, թէ յանցաւոր արարք մը գործելու վրայ էր ու առանց գլուխը դարձնելու փախաւ, իյնալու համար քաղաքի միջօրէին մէջ (էջ 68-69):

Այս քիչ մը երկար մէջբերումը, որքան ալ պատանիի մը մէկ բնական հակազգեցութիւնը նկատուի (երբեք ալ չենք անտեսեր պատանի-երիտասարդին զգացած բնական խռովքը կամ հակազգեցութիւնները Արուսեակին թէ մօրաբորջ Վերգիւնէին նկատմամբ), կնկան մերկութիւնը դիտելու եղանակէն եւ այն զգացումէն, որ «յանցաւոր արարք մը գործելու վրայ էր», կը տեսնենք, թէ մօրաբորջ նկատմամբ տածած խռովքը չգիտակցուած սեռային մղում մը ունի, որ բնականաբար ընկերութեան կողմէ ընտանիքի օրէնքէն դուրս կը ձգուի: Նոյն խռովքը կամ հաճոյքը պիտի զգայ, երբ մօրաբայրը, թեւէն բռնած՝ զինք իրենց տունը կը տանի (էջ 84):

Բացայայտօրէն ազգապղծութեան (incest) ոգեղինացած, *սասկիմէշըն* մըթնոլորտ մը կայ Բարգէնի, մօրաբորջ եւ, մա՛նաւանդ՝ Բարգէնի ու Արուսեակի յարաբերութիւններուն միջեւ:

Նախ՝ Արուսեակի հետ եւ Արուսեակի գրոյցներուն մէջէն Բարգէնի անցեալը կը բացուի եւ աւելի հասուն իմաստ կը սկսի առնել: Անշուշտ մօրաբայրը եւս օգտակար է այս իմաստով:

Անցեալը կը կենդանացնէ մօր պատկերը, ստուերը եւ աստիճանաբար վաղ պատանութիւնը, զգացած առաջին զգացումները աղջիկներուն հանդէպ...: Այս աշխարհի վերաթարմացման մէջ աւելի տեսանելի կը դառնայ իր յատուկ սերը կամ կապուածութիւնը մօրը նկատմամբ:

Արուսեակի եւ իր մօր նմանութեան գծով շատ յատկանշական է ուրիշ հատուած մը: Բարգէն երկնցած է անկողնին վրայ եւ Արուսեակը մօտը կը նստի.

Մորթը ճերմակ էր ու նուրբ հատիկներով: Բերանը բարի էր ու սակաւիկ մը մսեղ: Ու չփակը, ինչպէս միշտ, կ'ուռէր իր երիտասարդ կուրծքերուն շէն լիութեամբ: Քանի կը դիտէր զայն, այնքան զօրութեամբ կը յիշէր մայրը: Անոր աչքերուն խորը՝ փոքրիկ ճիգով մը կրնար նշմարել մօրը անմոռանալի ժպիտը: Ու անոր ձեռքերուն վրայ մօրը գուրգուրանքները կային (էջ 54):

Ճիշդ է, որ գիտակցումը կու գայ ֆիզիքական նմանութիւններու բացայայտումով, բայց ֆիզիքական յատկանիշներու նկարագրութեան ատեն, չեշտըւելով հանդերձ, սեռային խռովքը չի պակսիր, ինչ որ հասկնալի է:

Ասկէ առաջ խօսք եղաւ Արուսեակին նկատմամբ տղուն զգացումներուն մասին: Յստակօրէն պատանիին ապ-

րած սեռային խռովքը, մօր յիշատակին զարթոնումն ու Արուսեակի եւ մօր նմանութեան թուումը զուգահեռ կերպով կը զարգանան...: Այս գիտակցումին նշանները բաւական կանուխէն կան–եկեղեցիին մէջ, երբ Արուսեակի ձեռքը կը բռնէ իր թելը, Բաբգէն աչքերը կը բարձրացնէ եւ իրեն կը թուի, թէ մօր աչքերը կը ժպտին իրեն (Էջ 37):

Անշուշտ, նման հոգեվիճակ մը, անկախ որբի իր թափառումներէն, դժուար պիտի դարձնէ տղուն ներքին աշխարհին բնական փոխանցումը երիտասարդութեան: Որոշ հակազդեցութիւններ կամ վերաբերումներ՝ հաւանաբար տուեալ էոտիփեան հանգոյցներէն կու գան կամ կը մնան դժուար բացատրելի, օրինակ, երբ կ'ըսէ. «Տեսակ մը սրբապղծութիւն էր կարծես մտածել, թէ մարդը կրնայ իր բազուկներուն մէջ սեղմել աղջկան մը մարմինը» (Էջ 76): Նման ապրում մը հասկընալի է գլխաւորաբար այն պարագային, երբ կնկան պատկերը *Եօտիփեան* բարդոյթով կամ ազգապղծութեան անգիտակից մղումով կը զուգորդուի մօր պատկերին հետ իսկ նրման յարաբերութիւններու անուղղակի սարդոստայն մըն է «Մթին պատանութիւն»ը:

Այս իմաստով թելադրական է նաեւ տղոց հարցում-պատասխաններուն մէջէն Օթէլոյի ու Տեգտեմոնայի բաժինը.

...Ո՛վ որ իր սիրածը կը սպաննէ սիրոյ համար՝ արժանի է ներողութեան... Չկրնալով այլեւս յարգել Տեգտեմոնան՝ կրնա՞ր ընդունիլ միթէ, որ աննուաստութեամբ ապրի: Օթէլլօ կ'ուզէր, որ իր երեւա-

կայութեան մէջ Տեգտեմոնա պահէր իր առաջին գեղեցկութիւնն ու մաքրութիւնը: Ու մահն է միայն, որ կրնայ գեղեցիկ պահել մարդկային էակաները (Էջ 187-188):

Ինչո՞ւ մահն է միայն, որ գեղեցիկ կրնայ պահել էակաները: Դժուար է մըտածել, որ հարցը ժամանակի աւերին կը վերաբերի, որովհետեւ վիճարկումը այդ տրամաբանութեամբ չէ զարգացած այստեղ: Հաւանաբար սոյն տրամաբանութեան անգիտակից կամ ենթագիտակից մղումը կու գայ այն իրողութենէն, որ տղուն մայրը մեռած է, ինչպէս մեռած կամ կորսուած են այն բոլոր գեղեցկութիւնները (աշխարհը), որոնք մնացած են անցեալին: Գեղեցկութիւն-մահ այս առնչութեան մէջ կայ նաեւ այն պարագան, ուր բնականաբար կը ջնջուին ֆիզիքական յարաբերութեան եզրերը:

Հաւանաբար այս է նաեւ դրդապատճառը այն կեցուածքին, որ Շուշանեանի տուեալ երեք գործերուն մէջ, ինչպէս տեսանք, հերոսները հեռուէն շատ աւելի դիւրութեամբ կրնան հաղորդակցիլ իրենց սիրած աղջիկներուն հետ, իսկ մտերմութեան պարագային, ֆիզիքական բոլոր յարաբերութիւնները կը մերժուին, կը մերժուի նոյնիսկ համբոյրը: Երուանդ-Արփիկ յարաբերութիւնը լաւագոյն օրինակն է այս վերաբերումին...: Կարելի է նոյնիսկ ըսել, որ կարծէք ֆիզիքական յարաբերութիւնները կ'արատաւորեն հաղորդակցութիւնը եւ միմիայն հեռաւորութիւնը գրաւիչ կը դարձնէ ադ պատկերը, ճիշդ Տեգտեմոնայի պատկերին պէս, որ մահով միշտ գեղեցիկ ու մաքուր պիտի

մնայ, իսկ մահը վերջ ի վերջոյ, հեռաւորութեան այլ եղանակ մըն է, բացարձակ հեռաւորութիւնը:

Յեռաւորութիւնն ու մահը կը դիտենք ազգապղծութեան Էոտիփեան բարդոյթի շրջագիծին մէջ, որովհետեւ այս մէկը հոգեբանական միակ յարաբերութիւնն է, որուն մէջէն կարելի է տեսնել մայր-որդի կապը, ինչպէս եւ, աւելի ուշ, Շուշանեանի հերոսին կապը միւս աղջիկներուն կամ կիներուն հետ, որ միշտ այս առանցքով կը պայմանաւորուի: Այս պատճառով ալ, երբ «Առաջին սերը» անուն գործին սկզբնաւորութեան հերոսը իր սիրած աղջկան մասին կը խօսի պիտի ըսէ. «Դուն այնտեղ քրոջ մը չափ քաղցր ու պզտիկ ու գեղեցիկ մայրիկի մը նման բարի ես» (Էջ70):

Սիրած աղջկան գուգորդումը մօր եւ քրոջ անուններուն կամ պատկերներուն հետ, նոր չէ Շուշանեանի համար, այս բաղդատութիւնը կը կրկնուի գրեթէ ամէն գործի մէջ եւ իւրաքանչիւր հերոսուհիի պարագային, ինչ որ նոյն անգիտակից մղումը կը պարզէ ազգապիղծեան հակումներու, եւ ինչ որ չի կրնար ընդունիլ կամ գիտակցուիլ հեղինակին իսկ կողմէ:

Ինչպէս տեսանք, այս յարաբերութեան ամենէն հասուն, մօտ կամ գիտակից պարագան կը կազմէ Արուսեակի հետ կապը, որ հասկնալիօրէն չի կրնար բնական հունով զարգանայ, այս իմաստով ալ, վէպի վերջին 25 էջերուն յանկարծ կը յայտնուի Արմինէն, որ խորքին մէջ կու գայ փոխարինելու Արուսեակը...: Եւ յատկանշական է այս անցումը. Բարգէն, ընկերներուն՝ Արշամի եւ Չարեհի հետ պտըտած ատեն,

կը հանդիպի Արմինէի եւ ընկերուհիներուն: Արմինէի հանդիպած է իր որբի դեգերումներուն ընթացքին, երբ Արշամի հետ ջրկիրութեամբ կը պարապէին (ի դէպ, Արմինէի հետ պատահած դէպքը գրեթէ ամբողջութեամբ «Առաջին

Սիրած աղջկան գուգորդումը մօր եւ քրոջ անուններուն կամ պատկերներուն հետ, նոր չէ Շուշանեանի համար, այս բաղդատութիւնը կը կրկնուի գրեթէ ամէն գործի մէջ եւ իւրաքանչիւր հերոսուհիի պարագային...

սերը» վիպակի առաջին հանդիպումը կը յիշեցնէ): Ուրեմն Արմինէի հետ զրուցելով կը քալեն եւ ինք կը յիշէ Արուսեակը, անոր պահանջը կը զգայ.

Ո՛ր Արուսեակ, Արուսեակ, կը մըրմընջէին շրթներս, օրն ի բուն ու գիշերն ի բուն անունդ շրթունքներուս վրայ եւ ականարկիդ լոյսը դեմքիս վրայ: Մարմինս կը դողդոջէ անձկութենէ ու հոգիս ծարաւ է ձայնիդ: Իսանձած արտերու պէս կը վառիմ ու արիւնս կը բռնկի սիրոյս սաստկութենէն...: Յուզումս շնչաբեկ կը քալէի ու դեմքիս վրայ կը զգայի Արմինէի ականարկին բաղդութիւնը (Էջ 198):

Այս տոչորումէն կամ պահանջէն ետք, վէպին յաջորդ 16 էջերուն մէջ գրեթէ չկայ Արուսեակը (ինչ որ անտրամաբանական է), եւ Արմինէն կու գայ արագ քանի մը հանդիպումներով այն սերը դառնայ, որ զինք երիտասարդութեան պիտի տանի, հերոսին մթին պատանութիւնը ետեւ պիտի մնայ,

պիտի դառնայ անցեալ, ինչ որ դիւրին լուծում մը կը թուի, հնարք մը Արուսեակի հետ շուրջ 200 էջի վրայ գարգացած յարաբերութենէն դուրս գալու, որովհետեւ այդ կապը ազգապիղծեան մղումներու շրջագիծին մէջ կ'իյնայ: Արմինէի յայտնուումն ու գլխաւոր հերոսուհիին փոխարինումը կարծեք կը հաստատէ նախորդող էջերուն նշուած բոլոր կասկածները, նշանները, եւ կը հիմնաւորէ մօր պատկերէն անջատելու Շուշանեանի հերոսին անկարելի փորձը, անկարողութիւնը:

Խորքին մէջ, տուեալ երեք գործերը՝ «Առաջին սերը», «Միրոյ եւ արկածի տղաքը» եւ «Մթին պատանութիւն»ը, իրենց գլխաւոր տիպարներով, հերոսներով կամ հերոսուհիներով, տիպարներուն գլխաւոր առանձնայատկութիւններով կամ հակադրեցութիւններով կը թուին ըլլալ առանձին բաժինները ամբողջական վեպի մը, որուն գլխաւոր հարցը պատանի հերոսին դժուար անցումն է դեպի պատանութիւն:

Եւ, անկասկած, երեք գործերն ալ, իրենց գլխաւոր գիծերուն մէջ, հեղինակային իմաստով ինքնակենսագրական բնոյթ ունին եւ կը հետեւին հեղինակին կենսագրութեան փուլերուն: Եւ որքան ալ խուսափինք ստեղծագործութեան մը մեկնաբանութիւնը հեղինակի մը կենսագրութեան կապելու փորձութենէն, չենք կրնար այս բաղդատութիւնը չկատարել հոս: «Առաջին սերը» իբրեւ գործողութիւններու շրջապատ ունի Յալեպը, «Մթին պատանութիւն» անուն վեպին պարագային Պոլիս ենք, իսկ «Միրոյ եւ արկածի տղաքը» Պոլիսէն Հայաստան մեկնած սկաուտներն

են, որոնք հանրապետութեան անկումէն ետք կը վերադառնան Պոլիս: Անկախ այս թուականներէն, տուեալ ըստեղծագործութիւններուն մէջ յիշուած այլ թուականները եւս չեն խաչաձեււիր—«Առաջին սերը» վեպին հերոսը Պոլիս է, 25 ապրիլ 1919էն մինչեւ 20 ապրիլ 1920 եւ կը շարունակէ իր կեանքը 1924էն ետք (Փարիզ), ինչ որ կը նշանակէ, թէ երեք գործերուն գլխաւոր տիպարները գրեթէ նոյն օրերուն Պոլիս կը գտնուին... Իսկ վիպական ժամանակի (ժամանակագրութեան) հարցը յաջորդական, ամբողջացնող բնոյթ ունի երեք գործերուն պարագային եւ կը հետեւի հեղինակին կենսագրութեան կամ թափառումներու ժամանակաշրջաններուն:

Անկախ ժամանակային համընկնումէն, նմանութիւններ կարելի է գտնել որոշ դէպքերու պատումներէն, որոնք կը ներկայացուին տարբեր շրջապատներու մէջ, սակայն նոյն տեղէն կու գան: Վերը յիշուած Արմինէի եւ «Առաջին սերը» վիպակի հերոսուհիին հետ հանդիպումները վստահաբար նոյն դէպքը կը պատմեն: Երկու պարագաներուն ալ պատանի հերոսը ընկերոջ հետ է եւ երկու ընկեր կը սիրահարին աղջկան, աղջիկը եւս որք է եւ սպասուհի, երկու պարագաներուն ալ տղաքը ջրկիրութեամբ կը զբաղին եւ աղջիկը զիրենք կը կանչէ՝ տան մէջ մաքրութիւն ընելու համար:

Անշուշտ, նմանութիւնը այս պատահարով չի վերջանար: Երկու պարագաներուն ալ պիտի հանդիպինք ակելի ուշ, Պոլիս: Արմինէի պարագային՝ ան այլեւս կ'ուսանի եւ մօրաք-

րոջ տունը կը մնայ, «Առաջին սերը» գործին հերոսուհին եւս այլեւս մօրաբարոջ տունը կը բնակի...

Սակայն այս աղջիկներուն գլխաւոր նմանութիւնը կու գայ անոնց նկարագիրներու կամ խառնուածքներու նոյնութենէն: Երկուքն ալ աղջիկներ են, որոնք գիտեն Շուշանեանի կրաւորական ու վիպապաշտ հերոսին առընչութեամբ նախածեռնութիւններ անել, կը հետապնդեն, կը փորձեն հասկընալ իրենց սիրած տղան, անկեղծօրէն կը դրսեւորուին եւ սակայն խուսափումներու կը հանդիպին: Արփիկի հետ հանդիպումի պարագաները նոյնը չեն, սակայն Արփիկ եւս նոյն խմորին կը պատկանի—Յովնանեան վարժարան կու գայ Երուանդի մօտ եւ աւելի ուշ մինչեւ «Պաթում կ'երթայ» համոզելու տղան, որ մնայ, սակայն այս վերջինը միշտ հաստատ կը մնայ մեկնումի որոշումին մէջ...

Ամէն պարագայի, ինչպէս իւրաքանչիւր գործին մէջ բաւական մանրամասն պարզեցինք, երեք գործերուն մէջ հիմնական նմանութիւնը գլխաւոր հերոսներու խառնուածքային նմանութիւններէն եւ հակազդելու եղանակէն կու գայ, պարզապէս այն տպաւորութիւնը ձգելով, որ հերոսներուն անունը կը փոխուի, սակայն անունին տակ միշտ նոյն անձը կը մնայ՝ հեղինակը:

Ասկէ առաջ ակնարկութիւն եղաւ Շուշանեանի հերոսին շրջապատէն օտարացումին եւ արտաքին կարծր դիմակին մասին, որ եթէ մէկ կողմէ խուսափումի դիմակ մըն է, միւս կողմէ, սակայն, արտաքին պայմաններու ազդեցութեան հետեւանքն է՝ խառնուած-

քին վրայ: Այս մասին՝ կրկին «Մթին պատանութիւն» գործին մէջ պիտի անդրադառնայ.

Ինչպէ՛ս չէին զգար, թէ ամէն ոք երկրի վրայ իր ընտանիքը ունէր եւ ամէն ընտանիք իր կլիման: Իր ընտանիքը որքանոցն էր այլեւս: Որքանոցը իր ազատութիւնն էր ու իր ուրախութիւնը (Էջ 96):

Սերունդ մը որ այլեւս ընկերային կապերը խզած է անցեալին ու ընտանեկան շրջանակին հետ եւ այլեւս որքանոցը կը զգայ իր ընտանիքը, հոն է այն հոգեկան կլիման, ուր կրնայ ազատ զգալ ու հանգիստ շնչել: Անկասկած որ նման մթնոլորտ մը կամ հոգեբանութիւն մը յստակ բեկում մը կը ստեղծէ որբերու աշխարհին եւ «միւս» աշխարհին միջեւ, ինչ որ կ'անհանգըստացնէ հերոսը եւ պատճառ կը դառնայ, որ կասկածոտ կամ թշնամական հակազդեցութիւններ ունենայ այդ աշխարհին նկատմամբ: Նոյն գործին մէջ պիտի կարդանք.

Այո՛, այդ անտեղի, կաշուն, այդ արհամարհանքով խառն գրութիւնն էր անտարակոյս, որ արիւնս կը պղտորէր ամիսներէ ի վեր: Աքսորի մէջ չէինք գիտեր, թէ ինչ է այդ գթութիւնը (նոյն տեղը, էջ 169):

Խառնուածքով իսկ ըմբոստ երիտասարդի մը համար բնականաբար նման վերաբերում մը պիտի սրեր իր մէջ հակազդելու եւ մերժելու հակումը:

Սակայն այս բոլորէն ետք ո՛ւր կը հասնինք:

Ունինք երիտասարդ մը, որուն ներաշխարհը, իր բոլոր թելերով, կապուած կը մնայ իր ծննդավայրին՝ Ռոտտոթոյի, անոր մարդոց եւ բնութեան: Եւ այդ աշխարհի յանկարծական կորուստը կարծէք կ'ընդհատէ իր ներքին փորձառական աշխարհին զարգացումն ու պատանեկութենէն երիտասարդութիւն (եւ աւելի անդին) անցումը: Այս մէկը կը բացատրէ եւ Շուշանեանի հերոսին վայրի մը չկապուելու կեցուածքը, ե՛լ ըմբոստացումը, ե՛լ կրաւորականութիւնը այլ պարագաներու: Նախապէս յիշուած այլ մեկնաբանութիւններու կողքին այս ծիրին մէջ կարելի է բացատրել նաեւ Շուշանեանի հերոսին վերաբերումը կիներուն նրկատմամբ: Այս առնչութեամբ թելադրական է հեղինակին օրագրութիւններէն քաղուած հետեւեալ հատուածը.

Տարօրինակ մէկը չէի անպայման, այլ մարդ մըն էի, որ մօրը աչքերով կը դիտէ երկիրն ու կիները («Օրագիր», *Հայրենիք* ամսագիր, 1942, թիւ 5, էջ 15)

Այս հաստատումը, անշուշտ, կ'երթայ ամբողջացնելու «Մթին պատանութիւն» անուն վէպին առթիւ Էօտիփեան շրջագիծին մէջ շարժող մեր վարկածները, ինչ որ կը նշանակէ, թէ Շուշանեանի հերոսը բանտարկեալը կը մընայ պատանեկութենէ երիտասարդութիւն անցնող ժամանակաշրջանին, այսինքն՝ բանտարկեալը վայրի մը ուր իր փորձառական աշխարհը կը մնայ գամուած եւ ուրկէ չի յաջողիր դուրս գալ Շուշանեանի հերոսը:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ

ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վազգէն Շուշանեան, «Մթին պատանութիւն», Պէյրութ, 1956:

Վազգէն Շուշանեան, «Մահուան Առագաստը եւ Առաջին սերը», Պէյրութ 1959:


Վազգէն Շուշանեան, «Սիրոյ եւ արկածի տղաքը», Պէյրութ, 1957:

Վազգէն Շուշանեան, «Օրագիր», *Հայրենիք* ամսագիր, յուլիս–օգոստոս 1942-էն մայիս–յունիս 1943:

(Թիւ 1, 1983)

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ *(Հատուած)*

...  յս գիշեր, հաշուեյարդարի ենթարկեցինք մեկը, որ աւելի քան հինգ տարիէ ի վեր, կը զբաղէր ուշադրութեան անարժան բաներով: Ատիկա ծնունդով կը պատկանէր մարդոց այն դասակարգին, որ անգութ հեզութեամբ մը «մտաւորական» կը կոչեն: Ան գծուծ էր ու վատ: Կը սիրէր գէշ հաճոյքներն ու սատիկ ուրախութիւնները: Կուսակից էր ձրի արարքներու ու անընդունակ էր որեւէ մեծ, գեղեցիկ ու հզօր ստեղծագործութեան:

I

– Երբ աշխատելու եւ պայքարելու ժամը հասած է, չյապաղի՛լ այլուրեք յանցաւոր ու պղտոր հաճոյքներու բով: Ծուլութեան հետ մեղսակից չըլլալ բնաւ: Սիրել արագութիւնը՝ մեղկութեան դէմ: Նախընտրել տենդոտ, բուռն ու աշխոյժ գործը՝ յոյլ ու ապահով կեցուածքներէն, յոգնութիւնը՝ հանգիստէն ու պայքարը՝ խաղաղութենէն: Մեր երիտասարդութեան ամբողջ անգթութեամբը երթալ դէպքերուն վրայ եւ մարդոց: Տիրել իրերուն: Կռուի ջերմութեան ու սպասումին մէջ՝ խեղդել վշտի ու տկարութեան բոլոր ձայները:

– Սերը հիմական ու կարեւորութեան արժանի զբաղում մը չէ: Սիրոյ նուիրուած ժամերը կորսուած են առջաւետ, ստեղծագործութեան համար: Երբեք չմոռնալ ասիկա ոեւէ աղջկան ներկայութեան: Հպարտութիւնը, սիրոյ մէջ, համարել օրէնք ու սակաւապիտոթիւնը՝ անհրաժեշտութիւն: Քնքուշ դէմքի մը, մեր մատներով հպած ատեն, երբ մեր մարմնին տենդը կը բարձրանայ՝ մակընթացութեան մէջ եղող ծովի պէս, յիշել որ փխրուն ու ամէ՛ն օր փլոյզ գեղեցկութիւններէն անդին, կան նուիրումներ, որ այլապէս գեղեցիկ են ու ուրիշ գեղեցկութիւններ, որոնց դժուար է մերձենալ եւ որոնց խորհուրդին հաղորդուելու համար հարկ է տառապիլ:

Վայրկեան մը կանգ առաւ, կարծես թոյլ տալու համար, որ նախադասութիւնը կազմուի ու հագնի իր վերջնական տարագը: Իր մտքերու ծփուն ու անորոշ յատակէն, բարձրանան բառեր՝ սահմանուած ու յստակ նշանակութեամբ: Ջղուտ ու խիստ շարժումով մը, ուր կը յայտնուէր իր տենդահար ու յախուռն երիտասարդութիւնը, քակեց փողկապը, բացաւ շապիկը ու ակռաներով խածաւ գրիչը: Յետոյ մնաց մտամոլոր ու շփոթ՝ իր գրած վերջին պարբերութեան առջեւ: Դուրսը աշնան թրջած ու գէշ իրիկուն մը՝ կը սողար պատերուն տակ: Մուլը տակաւ

կը բարձրանար: Միջոցին մեջ՝ տեղատարափի մը սպառնալիքը պահ առ պահ կը մեծնար: Բնութիւնը կը տառապէր լքման ցաւէ: Եւ ծեր, բայց շատ ծեր կասկենի մը, իր դեղին տերեւներով կարծես կ'իյնար ներս, կիսաբաց պատուհանէն:

Յանկարծ, ընդհանուր ու անծայր լռութեան դեմ, շատ անակնկալ ու զարտուղի երգ մը բարձրացաւ, լեցուց փողոցը ու մտաւ պատուհանէն ներս: Չայն խլեց իր աշխատանքի սեղանէն ու զարնուեցաւ երեսին: Հնամենի ու աղկաղկ սիրոյ մեղեդի մըն էր ատիկա. թափառիկ ու մելամաղձիկ բան մը, երգուած ծեր դատարկապորտի մը մաշած, անօթութենէ տառապող ձայնով: Այդ մեղեդին սակայն քնացած բան մը խախտեց իր հոգիին խորը, բան մը՝ որ ոչնչով յատակէն կը բարձրանայ մակերես, օրուան ամեն ժամուն եւ կը նեղէ երիտասարդ մը, աչքերուն առջեւ բանալով հեշտութեան մեծ նկարներ, բան մը՝ որ կը կոչուի.— Սիրոյ ծարաւ:

Անապարանքով վերադարձաւ սեղանին առջեւ ու բաց տետրակին լուսանցքին վրայ՝ աւելցուց հետեւեալը:

— Ուրիշ առթիւ վերադառնալ այս պարբերութեան: Սիրոյ մասին կարելի չէ այս խստութեամբ խօսիլ: Մնաց որ, ամեն պնդում ունի իր տկարութիւնը: Չգուշանալ հապճեպ ու շատ բուռն պնդումներէ: Երիտասարդութիւնը արդարացում չհամարել: Կարելորդ բառերուն գեղեցկութիւնը չէ, այլ ճշմարտութեան թանկ բեկորները՝ զոր ժամանակի կարճ կտորի մը համար կը հագուեցնենք այդ նոյն բառերուն խուսափուկ գրաւչութեամբ: Բառերուն ետին փնտռել մարդը, որ կը տառապի, կը հիննայ իր առօրեայ աշխատանքին վրայ եւ ընդունակ է մեծ բաներ ի կատար ածել: Բառերուն ետին՝ փնտռել արեան տենդ, սրտի բաբախում եւ ստեղծագործ, անկորնչելի զգայնութիւն:

Յետոյ, իր երիտասարդ ու խոշոր գլուխը հակած սեղանին վրայ, վերսկսաւ շարունակել, մինչ նոյն աղկաղկ ու թափառիկ մեղեդին, այլեւս անօգուտ բանի մը պէս կը լուծուէր միջոցին մէջ ու մութը՝ խուլ ու մեծ ալիքներով կը թաւալէր գաւառական անդորր քաղաքին վրայ:

— Ո՛չ լռութիւնը ինքն իր մէջ առաքինութիւն է ու միշտ դրական, ոչ ալ խօսքը միշտ կենդանի գործ: Պարագաներ կան, երբ լռութիւնը կը յայտնէ անկարելիոր քաջութիւն մը ու վայրկեաններ, երբ՝ անկեղծ ու արի խօսքը, ըսուած մեր ձայնին ամբողջ ջերմութեամբը, կը դառնայ ուժեղ միջամտութիւն ու զոհաբերութեան երաշխիք: Կարելորդ, միշտ ընտրել կարենալն է լռութեան ու խօսքի ժամը: Այսուհանդերձ յիշել միշտ, որ լռութեամբ երբեք մեծ բաներ կարելի չէ կառուցանել: Լռութիւնը, ընդհանրապէս, տեսակ մը կրաւորական կեցուածք է ու նաեւ անհրաժեշտ պարապ՝ երբ խօսքը երկարատեւ երկունքով մը կը հասուննայ,

բայց երբեք ներգործական ու երիտասարդ կեանքի արտայայտություն: Տեսակ մը ապաւեն նաեւ ու հանգիստ՝ երբ կեանքը շատ դժուար է ու խօսիլը՝ սպառման, անխուսափելի սպառման համագոր:

– Տենդահար ու ուժգին խանդավառություն մը, խանդավառություն մը՝ որ չի մաշիր, ահա՛ թէ ինչ պետք է, որպէսզի մեր կեանքը չվերածուի սողուն, ծոյլ ու թըշւատ բանի մը: Ապրի՛լ ուժգնութեամբ այն բոյո՛ր ապառնի օրերը ու օրերուն հետ, երբեք չծերանայ, չհիննայ: Ամէն առաւօտ արթննայ, կարծես թէ առաջին օրը ըլլար, գարնան առաջին ամսուն եւ ո՛չ վշտի, ոչ ալ ուրախութեան ժամուն չխանգարել ուրիշները:

– Չսնանի՛լ յիշատակներով: Յիշատակներով՝ որ կա՛մ թունաւոր սնունդ են եւ կամ մեղկացուցիչ ու գարշ ըմպելի, ծխախոտի ծուխ ու կլկլակի ձայն: Չսնանի՛լ նաեւ երազներով, լուսնահար տողոց պէս, հեռաւոր մարգագետիններու վրայ: Նախընտրել կեանքի ամենատկար արտայայտութիւնը՝ լուսնի վրայ անցուած խընդրական խնճոյքներէ:

Բագուկները խաչածեւած՝ լայն ու յաղթական կուրծքի մը վրայ, միտքը՝ աշխոյժ ու զարթուն եւ նայուածքը սեւեռուն՝ ներքին դաշտանկարներու, պայթարի կարելիութիւններու ու ապառնի դէպքերու վրայ, վայրկեան մը կանգ առաւ կրկին, որովհետեւ կը զգար, որ բարդ ու դժուար աշխատանք մը կը կատարուի իր մըտքին խորը, բեղուն գործողութիւն մը: Դէմքին վրայ տաք ու անուշ տենդ մը կար ու ձեռքերը մեղմօրէն կը դողային, վասնզի իր արեան ամբողջ ջերմութեամբը ան կը զգար գրուած բաներուն ամբողջ պատասխանատուութիւնը:

– Ապրիլը նպատակ չէ, ոչ ալ մեր ուրախութիւնը՝ օրէնք: Երջանկութեան որոնումը՝ զուր ու անպտուղ աշխատանք: Պէ՛տք է ապրիլ մեծ իրագործումներու, գերազոյն գոհողութիւններու, գօտեպինդ մարտնչումներու համար: Պէ՛տք է անընդհատ որելէ մեծ կատարումի մը ճամբուն վրայ ըլլալ:

– Աշխատի՛լ: Ծռայլութեամբ տա՛լ, նուիրել՛ կտոր-կտոր այս պզտիկ կեանքը: Աշխատի՛լ տենդի եւ խանդավառութեան մէջ: Մի՛շտ որելէ անյագ տենդ կրել, այս սահմանափակ մարմնին մէջ եւ որելէ ծարաւ, դժուարահաճ ու մեծ ծարաւ, որ կարելի չէ լրիւ գոհացնել: Երբեք աւարտումի մէջ չըլլալ, երբեք չվերջանալ որելէ տեղ, հոս կամ անդին, այլ անընդհատ աճումի եւ ընթացքի մէջ ըլլալ:

– Ցած չխօսիլ, կիսով չարտասանել բառերը, ըսել ուժգնութեամբ ամէ՛ն բան: Կէսխօսքերը, կէս-զայրոյթները, յուզումի կիսերանգները լաւ են քաղբենիներու համար: Կարենալ պնդել, երբ գիտենք, որ իրաւունք ունինք: Վստահութեամբ մեր կոպիտ խօսքը նետել վեճի նժարին մէջ: Ըլլա՛լ ուղղակի, հատուածական, կէս-լու-

ծումներու, իրաւախոհութեանց, փոխադարձ զիջումներու անզիջող հակառակորդ: Չօրութեամբ կռուիլ ու լրիւ ըմբռնել պայքարին գեղեցկութիւնը: Բոլոր ծոյլ խաղաղութիւններուն դիմաց՝ ըլլալ ուխտուած ու քաջ զինուոր: Յաղթանակել:

– Զխորշիլ աղքատութենէն (ասիկա խիստ կարելոր է), ընտելանալ բոլոր գրկումներուն, կարենալ՝ հրաժարիլ կարգ մը իրաւունքներէ, վայելքներէ ու դիւրին ուրախութիւններէ ու ընդունիլ բազմաթիւ կարգապահութիւններ: Կարենալ ծառայել ու սորվիլ ծառայութեան յուզիչ գեղեցկութիւնը: Փոքրիկ զոհաբերութիւններէն անընդհատ բարձրանալ մեծ նուիրումներու: Ըլլալ մարդ մը վերջապէս, որ մակընթացութեան մէջ է: Ըլլալ անընդհատ զօրեղ ձեռքի մը պէս կարկառուն՝ դէպի աղքատութիւնը, տառապանքն ու մանկութիւնը:

– Տկար չըլլալ սակայն: Գթութեամբ կամ բարեհաճութեամբ չխափանել ազնիւ անգթութեան յաղթական ընթացքը: Ունենալ երկու չափ եւ երկու կշիռ ու զօրաւորներու յանցանքներուն առջեւ երբեք չտկարանալ խոտելի գթութեամբ մը: Սորվիլ ատելութեան եւ բռնութեան գեղեցկութիւնը ու երբեք չնմանիլ շրջանառութեան մէջ եղող այն տխուր մտաւորականներուն՝ որ ամէն վատութեան առջեւ որեւէ պատրաստ արդարացում ունին:

– Սիրելի կոպիտ, մկանային, յաղթական աշխատանքը: Անընդհատ յիշել, որ երկմիտ, վտանգաւոր, երկբայելի զէնքեր են գրիչն ու խօսքը: Չանոնք գործածելու ատեն ըլլալ զգոյշ, խիստ, հաւատարիմ մեր ներշնչումներուն ու անողոքելի՝ մեր տկարութիւններուն հանդէպ: Եթէ պատահի, որ մեր ձեռքերը հեռանան ստեղծագործ աշխատանքէ ընդմիջտ՝ ըլլան փափուկ ու սպիտակ, կարենալ արհամարհել զանոնք: Յիշել, որ նման ձեռքերով է, որ ամենավատ արարքները կը կատարուին:

Յետոյ՝ նոյն ջղուտ ու խիստ շարժումով, ուր կը յայտնուէր իր հոգիին ամբողջ տազնապը, տետրակը հրեց անդին, բարձրացաւ ու խոշորաքայլ՝ սկսաւ ճեմել սենեակին մէկ ափէն միւսը: Յանկարծ անդրադարձաւ սակայն, որ ճեմել նման պահերու՝ խիստ պայմանադրական բան մըն է: Շատ մը քաղքենի վէպերու մէջ, շատ մը երիտասարդ տղաք՝ այդպէս խոշոր գլուխ մը կ'առնեն իրենց ափերուն մէջ ու յետոյ կը ճեմեն: Այս մտածումը բաւեց, որ ցուրտ զայրոյթով մը վերադառնայ սեղանին առջեւ ու Էջը փակէ, դառն ու անզուր խօսքով մը:

– Այս բոլորը գեղեցիկ բառեր են միայն: Նաեւ աւելորդ են ու կը մատնեն գէշ ծածկըւած մանկութիւն մը: Ըլլալ յեղափոխութեան պարզ շարքային մը ու չմեռնիլ հանգիստ մահիճի մէջ, թշուառ մանր-քաղքենիի մը նման, ահա՛ թէ ինչ...

(Թիւ 7-8, 1992)

ՎԻԳԷՆ ԹԻԻՖԷՆՔՃԵԱՆ

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՄԵՐԿ ԴԵՄՔԸ

*Je est un autre*¹.

– Arthur Rimbaud

*M*նձաներու պատերուն իր նկարած կամ փորագրած ժայռապատկերներու անյիշատակ ժամանակներէն իվեր, մարդը յար լծուած է իր ներքին եսը շօշափելիօրէն արտայայտելու անդադրում ճիգին: Այդ ժայռապատկերները մեզի կը թելադրեն, թէ մարդուն ապրած բնաշխարհն ու զայն իր հետ բաժնեկցող անասունները զինք կը տպաւորէին ուժեղօրէն. միաժամանակ, եւ աւելի էականօրէն, այդ ներկայացուցչական վերարտադրութիւնները կը մատնեն մնայուն եւ անզսպելի ներկայութիւնը մարդուն մտային պաստառին, այն՝ որուն վրայ կ'ընկալուին, կ'իւրացուին եւ կը մշակուին արտաքին աշխարհի առարկայական իրողութիւններն ու երեւոյթները:

Մարդու մտահայեցողական պաստառը ներքնաբար ապրուող կեանքի մը վառ արտայայտութիւնները կը կրէ: Այդ կեանքը անտեսանելի, բացառաբար միայն մարդուն համար վաւերա-

կան էութիւն մըն է (մէկ ուրիշը չի կըրնար անոր կենդանութիւնը վկայել), որ կը դեզերի բնագանցութեան սահմաններուն վրայ, եւ որ չի հպատակիր մարդկային բանականութեան ու կամքին: Թաքուն, անհերքելի եւ անպարտկելի մղումներ ուժգնօրէն զիրար կը հրմշտկեն, իրենց թէկուզ ժամանակաւոր դիրքերը գրաւելու այդ պաստառին վրայ: Այստեղէն ալ մարդուն մեջ կը ծնի իր ներքին եսը բանականութեան դրոյթներով փաստարկելու պահանջը: Ինչպէ՞ս վստահութեամբ հաստատել, թէ այդ եսը կայ, կը գործէ, կ'արտոյլրլի: ԺԷ. դարուն, Բընէ Տեգարթ կ'առաջադրէր, որ եսին անուրանալի փաստը մտածող միտքն է՝ *cogito ergo sum*²: Անկախաբար իր գոյութենապաշտական եզրերէն, տեգարթեան յղացքը մարդուն կը ծառայէր իբր երաշխաւորական խարիսխ մը, որուն վրայ ան կըրնար հաշտեցնել իր կառավարելի գիտակցութիւնն ու անհնազանդ ներքին եսը, զանոնք ձուլելու համար միակը-

¹ Իր ուսուցչին՝ Ժորժ Իգամպարի ուղղուած 13 Մայիս 1871 թուակիր նամակէն: Տե՛ս Claude Jeancolas, *Les lettres manuscrites de Rimbaud: Commentaires, transcriptions et cheminements des manuscrits, Volume 4*. Paris: Textuel, 1997, p. 384-86.

² “Je pense, donc je suis”: Տե՛ս René Descartes, *Discours de la Methode: Discourse on the Method: A Bilingual Edition with an Interpretive Essay*. Ed. George Hefferman. Notre Dame, Indiana: University of Notre Dame Press, 1994, p. 32-33.

տուր անօթի մը մէջ, որ ի վերջոյ պիտի սահմանէր զինք:

Տեգարթէն ետք, արեւմտեան փիլիսոփայութեան դիտարկումները փաստեցին, որ մենական, կայուն եւ վախճանական ինքնութեան մը պատկերացումները խաբուսիկ են. որովհետեւ՝ կ'առարկէին անոնք, մարդուն եւ իր բնական աշխարհին միջեւ սահմանները լայրծուն են: Մարդկային գիտակցութեան հոլովոյթները, սեռերու դերակատարութեան բարեշրջումները եւ ընկերութեան ուժային կառոյցներու յարափոփոխութիւնները, որոնք յաճախ զիրար կը խաչաձեւեն, շարունակաբար կ'եղանակաւորեն անհատին ինքնութիւնը: Բենպօ կ'ըսէր, *C'est faux de dire: je pense: on devrait dire: on me pense*³: Եսը չի կրնար անկախաբար եւ լոկ ինքնիրմով սահմանուիլ, որովհետեւ մարդը շարունակ ենթակայ է իր ընկերային փոխ-ազդեցութիւններուն եւ կ'ապրի իր յարաբերութիւններու պարունակին մէջ: Այսպիսով, տեգարթեան *cogito*ի միատարր ամբողջութիւնը իր տեղը կը զիջի բազմազան ինքնութեան պատկերացումի մը:

Վազգէն Շուշանեանի *Ալեկոծ տարիները* եսի այդ շերտաւորումներն ու վերի խնդիրներուն ծայքերը պարզող երկ մըն է: Խորապէս գիտակից իր բազմերես ինքնութեան, Շուշանեան իր պատըսպարած եսերու գոյակցութիւնը կ'ամփոփէ հետեւեալ տողերուն մէջ.

Կեանքս սկիզբէն ի վեր հանգչած
է ողբերգական երկուութեան մը
վրայ: Մարմնիս խորը, ինքզինքս

³ Նոյն նամակէն:

ճանչնալէս ի վեր, իրար հրմշտկելով ապրած են առնուազն երկու տարբեր մարդիկ,– գաղափարի անուղղայ ու գրեթէ բիրտ, անտարակոյս բուն զինուորեալն եւ անէական գեղեցկութեանց, անհայելի երազներու անյագ ծարաւին: Այս երկու էակներու պարտադիր կենակցութենէն է որ ծագում առած է այս տարօրինակ կեանքը, որ իմն է: (185)

Իր կառոյցով եւ դիպաշարով, ինքնակենսագրական խորքով այս անաւարտ գործը վէպի մը յատկանիշները ունի: Մուտքին՝ ընդարձակ «Նախաբան» մը, որուն մէջ Շուշանեան կ'անդրադառնայ երկին բովանդակութեան եւ իր ընտրած նիւթերու արծարծման պատճառներուն՝ որ կ'աւարտէ հետեւեալով. «Հոս կը վերջանայ այս երկար նախաբանը՝ գրքի մը, որ գուցէ լոյս տեսնելու բախտին պիտի չարժանանայ» (36)⁴: Յայտնապէս, Շուշանեան չէր նախատեսեր, որ իր այս գործը պիտի հրատարակուէր. այդուհանդերձ, իր գրիչէն յորդած են ավելի քան 560 ձեռագիր էջեր, իրողութիւն մը, որ կը մղէ ընթերցողը խորհրդածելու, թէ ինչո՞ւ գրողը չէ հրաժարած այս երկը շարադրելէ ու զայն խնամքով երկու տետրակներու մէջ արտագրելէ, եթէ ամբողջութիւնը իր արխիւին մէջ մնալու սահմանուած էր⁵: Ամենայն հաւանակա-

⁴ Շուշանեան, Վազգէն. *Ալեկոծ տարիներ*, «Օշական» մատենաշար, Համագայիսի Գանատայի շրջանային վարչութիւն, Մոնթրէալ, 2014:

⁵ Շուշանեանի արխիւը կը գտնուի Երեւանի *Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան*ին մէջ: Այդ արխիւը իր վերջնակայանը հասնելու մասին տէս Շուշանեանի

նութեամբ, Շուշանեան իր այս երկով կը փափաքէր իր քայքայուած կեանքը յաւերժական ամբողջութեան մը վերածել, միտում մը՝ որ կ'արտայայտուի «մերկ դէմքս» տարագով: «Նախաբան»ին մէջ կ'ըսէ.

Եթէ ալեկո՛ծ տարիներու տաք հովին մէջէն՝ սուրալով անցնող մարդու մը կեանքը կը պատմեմ, երբեմն բարեհաճօրէն կանգ առնելով Էն նրբին անձնական յուզումներու վրայ, ցոյց տալու համար Է մահուան դիմաց մերկ դէմքս⁶: Ինչ ճամբաներէ հասած եմ հոն, ուր կը գտնուիմ այժմ, ինչ անձկութիւններ եղած են բաժինըս, ինչ յուզումներ դողահար ձգած են զիս, ինչ խանդավառութիւններ մտրակած են արիւնս, ինչ գաղափարներու բնակարան ընծայած Է գրկանքէն խոնջ մարմինս, – ահա՛ գրքիս կարեւոր նիւթերէն մէկը: (36)

Կարեկցանք թելադրող մտածում մըն Է ասիկա գրողի մը հանդէպ, որ մտրակուած իր վերապրելու պահանջէն, գրած Է մահը անյողդող ու անպաճոյճ դիմագրաւելու կամքէն մըղւած: Այս մասին՝ քիչ ետք:

Վերը ըսի, որ *Ալեկո՛ծ տարիները* յուշագրական սեռին պատկանող՝ բայց վէպի մը յատկանիշերով կառուցուած գործ մըն Է: Այս երկու երեւութապէս հակադիր մարզերը *Ալեկո՛ծ տարիները* կ'օժտեն վէպի արդի մօտեցումներուն յարիր տարրերով: Շուշանեան իր կեանքէն իսկական դրուագներ կը պատ-

մէ եւ իրեն ժամանակակից դէմքեր կը ներկայացնէ, անոնց շարադրութեամբ երկին ինքնակենսագրական խորք մը տալով. միաժամանակ, գործին մէջ կան գրական ստեղծագործութեան (fiction) բնոյթով ամբողջ գլուխներ կամ հատւածներ, որոնք հարցականի տակ կ'առ-

Ալեկո՛ծ տարիները յուշագրական սեռին պատկանող՝ բայց վէպի մը յատկանիշերով կառուցուած գործ մըն Է: Այս երկու երեւութապէս հակադիր մարզերը Ալեկո՛ծ տարիները կ'օժտեն վէպի արդի մօտեցումներուն յարիր տարրերով:

նեն երկին ինքնակենսագրական երակը եւ զայն կը փոխադրեն դէպի յարաբերականութեան ոլորտը, բան մը՝ որ յատուկ Է արդի վիպական գործերուն: Այսպիսով, *Ալեկո՛ծ տարիները* հայելին կը դառնայ անոր հեղինակին եսի անմիաձոյլ բովանդակութեան:

Անկախաբար Շուշանեանի այս երկի կառուցային մտայդացումէն եւ անկէ ծագող անպատասխան հարցերէն, *Ալեկո՛ծ տարիները* միաժամանակ միատարրութիւն կը զգենու, երբ զայն կարդանք իբր ներքին եսի մը արտայայտութիւնը, աւելի ճիշդ՝ իբր եսագրութիւն մը, որ կը լիանայ միայն գործին ամբողջութեամբ: Այդպիսով, գրութիւնը (text) կը վերածուի այդ ներքին եւութեան շօշափելի մարմնին⁷: Շուշանեան ինք կ'ականարկէ այս հոլովութեամբ:

⁷ *Ալեկո՛ծ տարիները* կառուցային հարցերու ամփոփման ծանօթանալու համար, տէն հատորին «Խմբագրական նշմարներ» բաժինը, էջ 14:

նուիրուած «Բագին»ի բացառիկը (1983):

⁶ Թաւ տառերը կու գան ձեռագրէն:

կան ձգտումին, երբ կ'ըսէ. «Փաստօրէն առնուազն երկու տարբեր կեանքեր հորիզոնաբար շարունակուած են մէկ մարմնի մէջ, ստիպելով զիս, որ անընդհատ հաշուի առնեմ մէկը եւ միւսը, ծալլուիմ ինքզինքիս վրայ, հարթեմ ներքին դժուարութիւններս ու մարդոց

Ալեկոծ տարիներուն մէջ, Շուշանեանի եսագրութիւնը արտաքնապէս սահմանագծուած ըլլալով մէկտեղ, իր ներքին բաղադրութեան բազմազանութեամբ (heterogeneity) չի դիմանար շրջապատի ազդեցութիւններու այն ներխուժումին, որ գրողը հակակշռել կը ճգնի:

ցոյց տամ որքան կարելի է միակտուր, ամբողջական, տրամաբանական Էակ մը» (185- 86): *Դառն հացը* գործին մէջ դարձեալ կը վերադառնայ այս սելեռումին. «Կ'ուզէի ճանչնալ գիտուն սիրով մը ներքին մարդը, որ կ'ապրի հետս, ինչպէս մարմնիս ցաւերն ու վերքերը գիտեմ, բայց կեանքը խիստ կարճ է բազմաթիւ փորձառութեանց համար» (348)⁸: Այստեղ անցողակի նշեմ, որ Շահնուր նարկիզական համարած է Շուշանեանի գործերուն յաճախակի ներաշխարհային հայեացքը: «Չեմ սիրեր Շուշանեանը (իր գրականութիւնը) գլխաւորաբար իր *narcissisme*-ին համար» (11)⁹:

⁸ Տե՛ս Սուրբէն Դանիելեան, խմբագիր, *Վազգէն Շուշանեան. Ընտրանի*, «Սփիւռք» գիտաուսումնասիրական կենտրոն, Երեւան, 2010:

⁹ Տե՛ս Սուրբէն Դանիելեան, խմբագիր, *Վազգէն*

Երեւութաբար, ներհայեցողական ուսպնեակով մեկնուած ընթերցում մը կը տանի դէպի տեգարթեան համահունչ եսը, անկարելի գոյավիճակ մը՝ նոյնիսկ Շուշանեանի կենդանութեան, երբ հոգեվերլուծութեան այդ օրերու տիրական վարկածները ինքնութեան բազմադիմութիւնը կը փաստէին: Տակաւին, *Ալեկոծ տարիներու* անաւարտ վիճակէն կը ծնի այլ հարցադրումներու շարք մը. ամենէն առաջ, եթէ գործը Շուշանեանի եսագրութիւնն է, ապա խնդրական կը դառնայ գրողին ներքին եսի ներդաշնակութիւնը: *Ալեկոծ տարիներուն* մէջ, Շուշանեանի եսագրութիւնը արտաքնապէս սահմանագծուած ըլլալով մէկտեղ, իր ներքին բաղադրութեան բազմազանութեամբ (heterogeneity) չի դիմանար շրջապատի ազդեցութիւններու այն ներխուժումին, որ գրողը հակակշռել կը ճգնի:

Այս ներխուժումին մէջ, առաջնակարգ դիրքի վրայ է մահուան անխուսափելիութիւնը: Մինչ մարդը կը ձգտի յաւերժութեան, մահը կը զգտնէ զինք, փորձելով ջնջել իր հետքերն ու ապրումները: 1915-ի Ադէտը իր մորթին վրայ կրած եւ անկէ վերապրած Շուշանեանը, բոլորովին միայնակ, խաթարուած առողջութեամբ եւ ընտանեգուրկ գոյութիւն մը կը քաշքշէր այդ թուականէն ետք.

Վերադարձի առաջին տարիներուն կրնայի անդրադառնալ միթէ, որ աքսորէն հետս կը բերէի խարխուլ առողջութեամբ քայքայուած մարմին մը, հոգի մը որ

Շուշանեան. Ընտրանի, «Սփիւռք» գիտաուսումնասիրական կենտրոն, Երեւան, 2010:

անհանգիստ էր ու անձկայրեաց
 եւ որ կրնար այդպէս մնալ միշտ,
 մինչեւ մահուան սեմը (150-151):

Իր փխրուն եւ եղծանուած առօրեային յանդիման, Շուշանեան կը նախագգայ մահուան յաժուանը իր շուրջ, եւ անոր սպառնալիքին կը հակազդէ իր Էութեան կազմաւորումը փոխով թուղթին յանձնելով: Գրողը չի մաքառիր մահուան դէմ, չի փորձեր նոյնիսկ զայն անտեսել. փոխարէնը, մահը կ'ոչնչացընէ զայն արհամարհելով ու անոր դիմաց պարզելով իր «մերկ դէմքը», խիզախութեամբ մը, որ ներքին եսին գորեղութիւնը կը վկայէ: Տակաւին, քրիստոնէական հաւատամքի երանգ մը կարելի է ընդգծել այդ «մերկ դէմք»ին մէջ, որով ան մահը կը դիմագրաւէ անզարդ համարձակութեամբ, իր եսին բոլոր աշխարհիկ կեղեւներէն ու յաւելումներէն ձերբազատ:

Այլ հայ թէ օտարագգի գրողներու կամ արուեստագէտներու նման, Շուշանեան նաեւ մահուան դիմաց կը ցցէ նոյնքան բուռն—եւ թերեւս ավելի կորովի—գօրութիւն մը, որ մայրական սէրն է: Ֆրանսացի փիլիսոփայ ճուլիա Քրիսթեւա կը բացատրէ, որ մարդիկ մահը երբեմն պարտութեան կը մատնեն, զայն փոխարինելով մայրական սիրով: Իր «Stabat Mater» (1977) յօդուածին մէջ, Քրիսթեւա այս յղացքը կը փաստարկէ իտալացի թոքախտաւոր երաժշտահան ճիովաննի Պաթիսթա Փերկոլեսիի պարագայով: Ըստ մասնագէտներու, Փերկոլեսիի լաւագոյն գործը կը հանդիսանայ «Stabat Mater»ը, որ ան յօրինած է իր մահէն շաբաթներ

առաջ, 26 տարեկանին¹⁰: Քրիսթեւա կ'ենթադրէ, որ Փերկոլեսիի այս գործով յայտնաբերած երաժշտական նորարարութիւնը հաւանաբար կը հանդիսանայ իր անմահութեան մէկ ու միակ երաշխիքը: Փիլիսոփան կ'առաջադրէ, որ մարդը մահուան անհաշտութեան դիմաց կը տեղակայէ մայրական սէրը: «Stabat Mater»ին մէջ, երգիչը կ'աղաղակէ, «*Eia Mater, fons amoris*» (Ողջոյն, մայր, աղբիւր սիրոյ): Այս սէրը, որուն մէկ այլ յայտնութիւնն է երկնային սէրը, կը շարունակէ Քրիսթեւա, թերեւս մարդուն կը յուշէ այն նախնական պատըսպարանը, որ կ'ապահովէ իր մէջ ծուրած երախային ապագան¹¹:

Շուշանեանի պարագային, մայրը՝ Նարիկ Դանիւլեանը իրեն ընկերակից յաճախանք մը կը դառնայ եւ կ'երեւի ամենէն անսպասելի պահերուն: *Անիծեալ տարիներու* «Սիրոյ առաջին գիշեր» գլուխին մէջ, պատմողը կը վերջիշէ իր պատանեկան սեռային յարաբերութիւններէն մէկը, «սիրուն, սեւաչուի, հազիւ քսանմէկ տարեկան այրի» Փայլիկին հետ: Շուշանեանի նման, երիտասարդ կինը կորսնցուցած է իր ընտանիքը, ամուսինը՝ Աղէտին, իսկ զաւակը մահացած: Փայլիկ խանդաղատանքով կը վերաբերի պատանիին հետ, զայն կերակրելով գիշերուան ուշ ժամերուն, նստելով անոր սնարին եզերքը եւ եր-

¹⁰ “Stabat Mater”ը Աստուածամօր ձօնուած ԺԳ. դարէն եկող շարական մըն է, հեղինակը՝ անորոշ: Շարականին տողերը կը պատմեն Մարիամի տառապանքը՝ ի տես Քրիստոսի խաչելութեան:

¹¹ Stéu Toril Moi, ed. “Stabat Mater.” *The Kristeva Reader*, New York: Columbia University Press, 1986, p. 161-86.

գելով հայրենասիրական երգեր: «Փայլիկի ձայնը մայրենի օրօրի մը պէս» (241) կը հնչէ օրուան իր աշխատանքէն յոգնած պատանի Շուշանեանին.

Յուզումնէ դողողուն կը նայէի իր քաղցր ու քրոջական դէմքին: ... Փայլիկի ձայնը կը թափանցէր մարմնէս ներս ու անոր երգերուն բառերը կ'արձագանգէին ականջներուս մէջ: Կէս-բուն կէս-արթուն կարծես կը տատանէի պէկոծ ծովու մը վրայ ու սիրելի դէմքեր կը յայտնուէին գիշերւան խորէն ու մեղմաձայն կը կանչէին զիս, կը խօսէին ինձ (242):

Եսագրութիւնը կը դառնայ շարունակուող հոյովոյթ մը, ինքնահաստատման ճիգը կը ծփայ ու կը ծաղկի, ու թէեւ ներքին ետքի լիանար (անաւարտ գրքին նման), Այլեկոծ տարիները կը մնայ իբր փայլուն վկայութիւն մը հեղինակին սրտին բարախումին, անոր ներքին ետքի բարեշրջուող պատկերացումին:

Երբ անդիմադրելի սիրաբանութիւնը կը սկսի, Շուշանեան դրուագին վերյիշումը մերթընդմերթ կ'ընդհատէ իր մօր յիշատակներով. «անձնատուր կ'ըլլայի յիշատակներու, երագներու: Մեղմօրէն մայրս կը վերադառնար անապատէն ու պարանոցիս վրայ կը զգայի անոր քաղցր շունչը: Բագուկները կը նետէր վզիս ու կը տանէր զիս» (243): Ներսերնդագործութեան վտանգաւոր ծիրը կը յուշեն այս տողերը, բայց Շուշանեան կը շարունակէ աներեր. «Երբեք չկրցայ գիտնալ թէ իրա-

պէս ինչ էր ինձ համար,— մեծ քոյր մը, որ գորովով, սիրով կը փայփայէ քեզ, թէ երիտասարդ կին մը, որուն գեղեցկութիւնն ու իգութիւնը սկսած են խռովել քեզ» (243): Շուշանեանի համար, այստեղ Էականը դրուագին սեռային կողմը չէ, այլ՝ զինք մրճահարող մայրական գուրգուրանքին ու կարեկցանքին յաւերժ բացակայութիւնը: «Բայց քանի անոր անոյշ ու քրոջական ձայնը կը քսուէր դէմքիս՝ այնքան անմխիթարելի ու խորունկ կը թուէր վիշտս, բարձրաձայն կը հեծկլտայի, ամիսներէ ի վեր առաջին անգամ ըլլալով՝ ոտնահարած, կաշկանդուած, զրկուած մանկութիւնս իր վրէժը կը լուծէր» (246): Դուրսը անձրեւը կը տեղայ քաղաքին վրայ, մինչ պատուհանը ծեծող անձրեւին «վլւլք, վլւլք, վլւլք» ձայնը կը թուի յիշեցնել պատանիին անդարմանելի կորուստին հարուածները. եւ ճիշդ այդ պահուն Շուշանեան կը վերակենդանացնէ մայրը.

Ո՛ր ես, մայրիկ: Կարելի է միթէ, որ մեռած ըլլաս: Դեռ մանուկ, դեռ հազիւ արթունքի հասած, դեռ անուշ կուրծքիդ վրայ հեկեկալու ծարաւը ունեցող, դեռ բոլորովին ոսկոր չկապած տղայ մը ձգած ըլլաս այսպէս գիշերուան մը խորունկը: Մինակ, անոք, եղերականօրէն անփորձառու այլ արդէն զարնուած կեանքէն,— այս տարիքը տղայ մը կը ձգեն միթէ տարերքին թշնամութեան, օտար ու անօրէն քաղաքի մը փողոցներուն մէջ: Ո՛ր ես, մայրիկ: Աչքերուդ խորը գորովը կը նմանէր թանկագին քարերու ցուլերուն, ձայնդ խաղաղութիւն կը

պարգեւեր խօլ ու անձկալի հոգ-
ւոյս: Մայր մը կը մեռնի միթէ
բնաւ: Ո՞ր էս, մայրիկ: (246)

Փերկոլեսիի նման, որ կ'երգէ Մա-
րիամին անպարագիծ մայրական սերը
Քրիստոսի խաչելութեան պահուն, Շու-
շանեան եւս կը դիմէ իր մօր՝ սիրաբա-
նութիւնը վերածելով մայրական ներ-
կայութիւնը իր կեանքին մէջ վերաշնչ-
չաւորող կենսագործական արարքի՝
այս անգամ շրջուած ձեւով: Մինչ “Sta-
bat Mater”ին մէջ մայրը կը շարունակէ
ապրիլ իր գաւկին մահէն ետք, Շուշան-
եան կեանքին կը վերադառնայ իր մօր
մահէն վերջ: Այս կէտին մէջ ալ կը կա-
յանայ գրողին յաղթահարումը մահ-
լան: Ի՞նչ փոյթ, թէ մայրը «մեռած էր՝ հե-
ռու հայրենի երդիքէն ու իր վարսերուն
մէջ ո՛չ մէկ ծաղիկ, ո՛չ մէկ խոտի թել
կար»: (245) Երբ սիրաբանութիւնը կ'ա-
ւարտի, Շուշանեան կը խաղաղի: «Գը-
լուխս որքա՛ն թեթեւ էր այժմ՝ իր ճեր-
մակ, լի կուրծքերուն մէջ: Բո՞ւն էի թէ
արթուն: Ծունկերուս մէջ քաղցր տկա-
րութիւն մը կար ու մարմինս թաւշային
ջերմի մը մէջ կը լողար: Սրունքներս կը

զգային մարմնին լեցուն ու ջերմին մը-
տերմութիւնը: Ապաւէն էիր, անկողին
էիր, քուն էիր, առաջին մեղք:– Վլա՛ք,
վլա՛ք, վլա՛ք» (248): Եսագրութիւնը կը
դառնայ շարունակուող հոլովոյթ մը,
ինքնահաստատման ճիգը կը ծփայ ու
կը ծաղկի, ու թէեւ ներքին եսը չի լիա-
նար (անաւարտ գրքին նման), *Ալեկոծ
տարիները* կը մնայ իբր փայլուն վկա-
յութիւն մը հեղինակին սրտին բաբա-
խումին, անոր ներքին եսի բարեշրջ-
ուող պատկերացումին:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ
ԱՂԲԻԻՐՆԵՐ

Calleman, Carl Johan. *The Global Mind and
the Rise of Civilization: A Novel Theory
of Our Origins*. Minneapolis, MN: Two
Harbors Press, 2014.

Mansfield, Nick. *Subjectivity: Theories of the
Self from Freud to Haraway*. New York:
New York University Press, 2000.

The Ultimate Stabat Mater Site.
<http://www.stabatmater.info/english/>.

(Թիւ 3, 2016)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

ՇԱԻԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ՝ ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵՐԺՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԻՆ

Եւարշ Նարդունիի կենդանագիրը կազմելու համար, առաջին տպաւորութեամբ, ունինք կարիքը ընթացիկէն հեռացող գոյներու, երանգներու: «Փարիզի Տոնո» (գործածելով Յ. Օշականի բնորոշումը) խումբին մէջ, ան միւսներէն կը գատորոշուի իր գործին անմիջական, շեշտօրէն ենթակայական նկարագրով, անմիջապէս աչքի զարնող այլազանութեամբ մը, որ ոչ-խորափանց աչքերու կրնայ երեւիլ իբր հմտաբանի, գիտնականի «ինքնատպօթիւն» մը սոսկ. ասոր լծորդուող «մշակութեամբապաշտութիւն» մը՝ ուր կը միախառնուին դասական յունարէնէն մինչեւ երբայերէն շրջագայող ստուգաբանական մարզանքներ, տորոնի մշակութենէն մինչեւ սիստորաբուժական դեղագրերու վերծանումը շօշափող հետաքրքրութիւններ. եւ, հակադրաբար այս բոլորին, որոշ տարփային լիցք ենթադրող (խաբուսիկ, պիտի տեսնենք) զգայաբանականութիւն մը, տարաշխարհիկ հեքիաթի, բանաստեղծականութեան կլիմայ մը, եւ զանոնք պարագրկող դաշնութեան ոլորտ մը. առաջին իսկ ակնարկով բաւական հակասական այս տարրերը միաբերող «նարդեան» (բառը իմս չէ, իրն է...) վաստակի այս պատկերին առջեւ՝ խորաչափող աչքը անմիջապէս հարց կու տայ.– Ինչ աշխարհ կը պառկի, կը պահուի «Ալպոն»էն մինչեւ «Մեղեդիներ, մեղեդիներ», եւ «Բաներ, բաներ»էն մինչեւ «Երուսաղէմ, Երուսաղէմ»:

Դժուարին չէ վերլուծական «ընթերցումը» Նարդեան աշխարհին. վերլուծական ըլլալու ալ պէտք չունի ան՝ բառի Ֆրեօտեան իմաստով, ինչպէս վերլուծական չէր եւ պէտք չունէր ըլլալու նախորդ գլուխը այդ շարքին՝ «Ասպէն Շուշանեան»ը: Ինչպէս այս վերջինը՝ Նարդունիի այս խորաչափում-ընթերցումը եւս կրնայ վերապահումներ արթնցնել հոս կամ հոն. ատիկա շարքի հեղինակը եւ խորաչափման աշխատանքը չի շահագրգռեր, բացի եթէ, անշուշտ, այս դրոյթներուն հակադրուող հետաքրքրական դրոյթներ առաջարկուին: Եղածը սփիւռքահայ գրողներու (այս պարագային՝ Նարդունիի) գործին հոգեբանական-ընկերաբանական լոյսին տակ կատարուած՝ բաւական պարզ ու բացայայտ եզրայանգումներու հասնող դիտարկում մըն է, ծամծմուածէն խուսափիլ փորձող, սակայն զերծ՝ ինքնատիպի ու անտիպի մարմաջ-բարդոյթէն:

Եւ կը բաւէ, ահաւասիկ, քիչ մը ուշադիր աչք մը նետել Նարդունիի գրական վերոյիշեալ երկերուն՝ անդրադառնալու համար անմիջապէս, որ իր մատնանըլաժ կենցուածքներուն մէջէն կարմիր թելի պէս անցնող ու անոնց միութիւնը կազմող գիծը բացարձակ մերժումն է ներկային, այսինքն՝ ներկայ վայրին ու ներկայ ժամանակին: Հետագայ տողերը պիտի ձգտին պարզաբանել, երանգաւորել Նարդեան մերժումին մասնայատկութիւնը՝ յարաբերաբար, ըսենք, Շուշանեանի մը, կամ Համաստեղի մը արդէն բացայայտուած մերժումներուն:

ԱՆՁԻ ԵՐԵՒՈՒԹՎԿԱՆ ՀՈՒՆՎՈՅԹԵՆ ՄԻՆՉԵՒ ՍԵՌԱՅԻՆ ՉՐԿԱԽՏԸ

«Մեղեդիներ»-ու Էջերուն, տեղ մը, Նարդունի շատ դասական ու հետեւաբար շատ խաբուսիկ ստորոգութիւններու մէջ կը ձուլէ իր ներաշխարհային զարգացման ուղեգիծը: Նախ մանուկ՝ Արմաշի երազաշխարհի ծոցին, ան—ըստ իր բնորոշումին—շատ արագ պիտի անցընէ զգայարանական գինովութեան փուլը, բանաստեղծութեան ու աննիւթական սերերու հեւքէն հագիւ շոյուած, եւ յանգի՝ իր գոյութեան երրորդ ու վերջնական հանգրուանին՝ «վարդասպետութիւն փիլիսոփայութեան եւ ախտաբանութեան» («վարդասպետ» բառը հայերէն եզրը կամ տերմինն է՝ լատիներէն «տոքթոր»-ին), դառնայ բժիշկ, հոգեբոյժ, «տերվիշ», եւ դիտել, «մթութիւն հագած» իր մութ սենեակէն՝ «լոյսի առուակի մը մէջ բռնուած մարդիկը»: Նարդունիի գծած այս հոլովոյթը կը կրէ սակայն թերութիւն մը, կենսական թերութիւն մը՝ իր իսկ աչքին...«մթութիւն հագած» ըլլալու թերութիւնը: Եւ հոգեբան, հմտաբան, իմացապաշտ ու սկեպտիկ Նարդունիի մը իրականութիւնը, վերոյիշեալ Էջերուն վրայ անվիճելի թուացող, կաւէ արծանի պէս կը փրշորուի սակայն՝ ոչ թէ խորաչափումի ճիգին դէմ, այլ՝ պարզապէս իրեն հակադրուող ուրիշ իրականութեամբ մը, որ մեզի կը յայտնաբերուի Նարդունիի Էջերուն իսկ մէջ, նոյն հատորին իսկ մաս կազմող: Երբ, օրինակ, վեցամեայ թոռան մը վերածուած, գրագետը կու լայ, ողորբելով հոգին իր մեծ հօր. «Մենծ հայր, մենծ հայր, տես. թռնիկդ հիմա քիչօ մը տանձով է մնացեր...»: Նոյնը, երբ, նոյն հատորին Էջերուն, կը պատմէ մանուկի լացը՝ այս անգամ սեր փնտռող իր սիրտին. «...իմ երեսուն տարուան սիրտու կու լար, կու լար մանուկի մը պէս: Կու լար եւ կ'ուզէր դարձեալ բանաստեղծ դառնալ: Կու լար եւ իր սիրեկանին անունը կը կանչէր»: Միտք-Նարդունին թող ի կարգ հրաւիրէ զայն՝ որքան կ'ուզէ. «Դուն բժիշկ ես, դուն գիտութեան ու փիլիսոփայութեան մարդն ես, արու ու կորովի»: Անօգուտ. «արու ու կորովի» կարծուած սիրտը պիտի մնայ նոյն լացող, նոյն մանուկ սիրտը՝ գրագետին իսկ բառերով հերքելով «գիտութեան ու փիլիսոփայութեան մարդ», «արու ու կորովի» մտքի մարդու մը գոյութիւնը, զայն գեղչել-վերածելով իր...առասպելի հանգամանքին:

Հակադրաբար Շուշանեանի, Շ. Նարդունի պաշտելի միամտութեամբ մը, բարեմտութեամբ մը կ'ըսէ մեզի իր ցաւը, առանց զայն բառակոյտի մը տակ խեղ-

դելու ասիկա եթե բացառենք քիչ առաջ մատնանշուած միտք–Նարդունիի յորդորակները. եթե բացառենք նաեւ հրապարակագիր–չեմ համարձակիր գաղափարախօս բառը գործածել–Նարդունին, որ՝ «ճանկերը լայն բացած»՝ պատրաստ է յարձակելու բանավիճող հակառակորդին վրայ, գայն «գլխու համար»: Եւ որուն քով գաղափարախօս Շուշանեան մը ինքզինք պարտադրող պայծառ ներկայութիւն է անկասկած: Անձնական, ենթակայական գրականութեան մակարդակին է, ըսենք կրկին, որ Նարդեան աշխարհը կ’երեւի մեզի բիւրեղային յստակութեամբ, մանուկի մը արցունքին պէս ջինջ, ըսէր հաւանաբար ինք: Եւ Որբութեան ցաւն է Նարդունիի ցաւը, գլխագիր Որբութեան, «չափահաս Որբ»ին ցաւն է ան: Որովհետեւ մեռած է իր Գիւղը, եւ ակ գիւղ չունի ինք. չունի տուն, չունի հայր ու գերդաստան: Չունի Վայր: Ունի միայն սուգը գիւղին, որբութիւնը իր անձին: Եւ իմաստէ զուրկ չէ պատմագրական այն փաստը, որ Նարդունի ակնառու դէմքն է հանդիսացած արեւմտեան Սփիւռքի որբաշխարհին, ոգին ու մղիչը Չափահաս Որբերու շարժումին:


Ուրիշ ինչ երեւոյթներ կը պարզէ այս Նարդեան տարբերակը որբութեան, չափահաս, անբուժելի որբութեան: Ան, յամենայն դէպս, կ’արտայայտուի, առաջին իսկ ակնարկով՝ կրկին, սեռային լոյսի մը տակ: Այս կալուածի լուսաւորումը կըրկին կու գայ մեզի նոյն «Մեղեդիներ»ու «Փառք Կեռասին» գրութենէն, որ իմաստային մեկնաբանութեան կարիքը չի զգացներ իսկ, այնքան բացայայտ է այլաբանութիւնը: Պատանի՝ հատուածին հերոսը կ’ապրի կեռասով խորհրդանշուող զգայարանական արբունքի վիճակը. իր սիրականին հետ կեռաս կը գողնայ. կեռաս կ’ուտեն, հակառակ «մեծ-մօր» արգելքին: Այս վերջինը պիտի հասնի յանկարծ, ու տեսնէ պատանին՝ աղջիկը գրկած-բարձրացուցած կեռաս քաղելու դիրքին մէջ: Վերջին հատուածը կարելի չէ տալ ակնաբաց բացատրական ու թափանցիկ՝ քան Նարդունին՝ ինքը. կը մէջբերեմ.

- Մեղք է, պտղամոլ:
- Լաւ, եթե թագաւոր եմ. ո՞վ կ’արգիլէ ինձի: Երբ կեռաս կ’ուզեմ, պետք է որ ուտեմ: Ապա թե ոչ թագաւոր չեմ ըլլար:

.....

Ափսոս:
 Յիմա մեծ-մօրս «մեղքին» արգելքը չէ որ գրկած է զիս կեռասէն:
 Ես հիմա թագաւոր չեմ:
 Ես հիմա կեռաս չունիմ: Իսկ նշանածս ալ մեռաւ. ու իմ շրթներուս մէջ կորսուած է համը իր կեռասներուն:
 Ու արիւն կու գայ աչքերէս, կեռասի այս տօներուն:

Կարելի չէ անզգայ մնալ ամբողջ սերունդի մը ողբերգութեան այս պատկերին առջեւ, սեռային զրկախտէն մինչեւ զգացական, մտաւոր-առանց խօսելու ֆիզիքականի մասին–հաշմունքները գացող: Պետք չէ սակայն մոռնալ Շուշան-



Չախեն աջ՝ Կարո Փոլատեան, Շաւարշ Նարդունի, Պօղոս Սնապեան:

Եանի առիթով կատարուած այն հաստատումը, թէ երեց սերունդի մօտ հաշմումի այս զգայնութիւնը մշակութային հոգեբանական պատուաստումով անցած է յաջորդ սերունդին: Եւ այս պատուաստումի «յաջողութիւնը» պարզապէս ախտաբանական վերապրում մը կը յայտնաբերէ, ու նոյնքան ախտաբանական հաճոյացումի մը ծնունդ կու տայ, երկրորդ նոյնիսկ երրորդ սերունդի մակարդակին...:

ՏՈՀՄԱՊՂԾՈՒՄԻ ԵՒ ՏԱՐԱՇԽԱՐՀԻ ՄԻՋԵՒ

Այս է սակայն միակ բացատրութիւնը զրկախտին, հողին կորուսումը, Վայրին ջնջումը միայն: Աքսորն ու օտարութիւնը: Երթալէ առաջ աւելի խորը՝ հարկ է, ամեն պարագայի, հետազօտել այս տարաշխարհը: Հետազօտել. դիւրին է ըսելը: Կարելի պիտի ըլլար, եթէ Նարդունի գրած ըլլար, ապրանք ըլլար Սփիւռքը: Բան մը, որ չէ ըրած ան: Եւ ըստ Էութեան Սփիւռքը «ըսող» նարդեան էջերը այնքան հագուադէպ են, որքան... զիտակցութեան վայրկեանները Շուշանեանի գրական ստեղծագործութեան մէջ, կամ՝ ցաւի ճիչը՝ արեւելեան աշխարհի Որբաշխարհի «կրթուած», «փափկանկատ» ու սկառուտի կեղծ գուարթութիւն ցուցաբերող պատանիներու կոկորդին մէջ: Երբ ճառ չի խօսիր, Նարդունի կ'ընկղմի նախ-աղետեան դրախտի հեշտանքներուն խորը: Երբ դուրս կու գայ անկէ, առանց բանաւերի ախորժներու վրայ արշաւելու, պահ մը կը տեսնենք զինք Տ'Արթուրի սրճա-

րանի ծուխերուն մէջ, եւ կ'ակնկալենք, կը խնդրենք փարիզեան առօրեայի, ի վերջոյ ներկայի ապրում մը. երեք տող՝ եւ Նարդունին արդէն ճախրելով հասած է Սիփանի փէշերուն (տեսած ըլլար գոնէ Սիփանը. Վանեցի ըլլար գոնէ): «Մեղեդիներ»ուն մէջ, կրկին կը սկսի նկարագրութեանը փարիզցի բժիշկի մը սենեակին: Պուտ մը ներկայ կ'ակնկալէք: Ափսոս. Ինտրայի հիանալի սենեակ-ներաշխարհը, ծանօթ իր այլութեամբ, չունի աներկբայ անվայրութիւնը Նարդունիի սենեակին, ուր կայ հօտը իր բոժոժներով, մեծ մայրը իր հարսնութեան շապիկով, հեթանոս տօներն ու կոյսերը օրացոյցին. բայց ոչ փարիզահայու սենեակը: Ոչ՝ *Սփիւռքը*:

Նոյնը, ու աւելիով, օտարի հետ յարաբերութեան հարցին մէջ: Ի յառաջագունէ, Նարդունիի մօտ նկատուած որոշ զգայարանականութիւն մը կրնար մեզ յուսադրել օտարի հետ կարելի յարաբերութեան մը հաշուին. բայց մինչեւ հիմա պարզուածը ատոր ի նպաստ չի խօսիր: Բաւական յստակ է, ընդհակառակն, վախը օտարին, տարբերին, տարաշխարհիկին: Առանց հասնելու, անշուշտ, Շուշանեանի մօտ ծանօթ տազնապանքը ստեղծող ծանրութեան, օտարն ու իր վախը երբեմն՝ կ'երեւին Նարդունիի աշխարհին մէջ: «Մեր գիւղին լճակը» հեքիաթը, սակայն, կը բաւէ մեզի ստուգելու ներկայութիւնը այդ վախին. ու պարզ կ'երեւի, որ ան ներմղուած է իր ստեղծած խուճապին իսկ պատճառով: Պատմութիւնը կը խօսի գիւղին ականակիտ ջուրերուն լիճին մասին, որ սակայն ապականած է ակընթարթի մը մէջ, «*օտար աշխարհէ*» վերադարձող գիւղի տղոցմէ մէկուն բերած ախտին ապականութեամբը: Պարզ է ու ցնցող՝ թելադրանքը հեքիաթին: Օտարը, Միւսը, Տարբերը՝ կ'ապականեն:

Մէկ-երկու անդրադարձ ալ՝ ներկայ աղետին: Լեզուն կորսնցնող, ինքնութիւնը կորսնցնող նոր սերունդի մը ներկայութիւնը կը հաստատուին Նարդունիի կողմէ, սակայն պատահաբար, ի մէջ այլոց:

Վախը, սակայն, օտարին վախն է միայն: Կամ, ուրիշ խօսքով, օտարը միայն «ազգային» իմաստով օտարն է, թէ ընդհանրապէս Օտարը, Ուրիշը...: Կը հակինք երկրորդ պատասխանին՝ աւելի: Կամ, այլապէս, պէտք է ընդգծել, որ Նարդունիի մօտ գոյութիւն ունի նաեւ վախը՝ սեփականին, վախը ինքնութեան. սեռային իմաստով՝ վախը տոհմապղծումին՝ incestին: Օտարը, ըսենք՝ Օտարուհին՝ չեն միայն վտանգի ու կորուսման վայրը: «Մեղեդիներ»ու երկրորդ իսկ հատուածը «*Լճին ժամը*» կը պատմէ ոճիրը հարուստ այն գիւղացիին, որ գեղեցիկ աղջիկը միակ յարմար հարսն էր նկատած իր կտրիճ տղուն, ու պսակած՝ քոյր ու եղբայր: Յարկ կայ աւելցնելու, որ, ինչպէս Տարաշխարհի ախտով լի ապականման հեքիաթին մէջ, հոս եւս անէծք կը սպասէ գիւղին: Եւ եթէ Օտարի ախտը կը ցամբեցնէ գիւղին լիճը, տոհմապղծումի արարքը կը սրբուի միայն անիծեալներու կլանումովը, անհետացումովը՝ լիճի ընդերքներուն:

ՆԱՐԴԵԱՆ ԳՈՐԾԸ՝ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԱԿԱՅԻՆ, ՄԱՀՈՒԲԱՆ

Կարելի է մանրամասնել, խորացնել հպանցիկ այս վերլուծական մատնանշումները: Շատ հեռու պիտի տանեին անոնք վերլուծումն ու վերլուծողը: Այսօր քաղաքացիական հաստատություն համար, որ Տարաշխառի Ախտին ու Մեփականի պղծումին զոյգ վախերը կը խեղդեն ներկայ անհատ դառնալու (այս բանաձևի զոյգ իմաստներով) ամեն կարելիություն՝ նարդեան ներաշխարհին համար: Այսօր քաղաքացիական հաստատություն համար որ բոլոր արտադրությունները Նարդեան այս ներաշխարհին՝ պիտի յատկանշուին իրենց յղացումով՝ Աղետին նախորդող աշխարհին, որ հեքիաթ է՝ անիրական, անչափահաս ու անսեռային: Նարդունիի գործը այս գինը պիտի վճարե՝ իր վաւերականությունը վաստկելու համար. ան վաւերական է իբր հեքիաթ, իբր հնագիտական առարկայ, իբր գեղօր (bibelot): Իբր վկայություն՝ բացակայէն, անհատի նախապատմութենէն, նախ-աղետէն: Ասկէ՝ իր դաշնութիւնը, կշռութային, փոխաբերային իր դասական բայց իրապէս գեղագիտական յատկանիշերը: Բաներ, որոնցմէ գուրկ է, տեսանք, Շուշանեանի աշխարհը: Ասկէ՝ նաեւ՝ նարդեան աշխարհի թափանցիկութիւնը, ըսինք՝ միամտութիւնը՝ իր ցաւը, իր վերքը պոռացած պահերուն: Եւ ասիկա՝ դարձեալ հակադրաբար Շուշանեանի մը: Բայց, ահաւասիկ, այդ ցաւն ու վերքը բացակայութիւն մըն է, չզոյութիւնն է մարդուն՝ որ Նարդունիի բժշկագիտական դասագիրքերն իսկ «չափահաս անհատ» կը կոչեն: Ու ցաւով ու խոր հասկացողութեամբ կը հաստատենք, վերջացնելու համար, որ Նարդունի անհատը չէ վերապրած, անդր-ապրած՝ իր գիւղին մահէն, իր նշանածին մահէն, Ապրիլ ամիսէն անդին: Կեռասի մահէն անդին: Եւ նարդեան գրականութիւնը Էապէս՝ կեանքը ամեն գնով շարունակելու, երկարաձգելու, ապրելու այս անկարելիութեան ողբերգական—սակայն նաեւ ախտաբանական—պատմութիւնն է միայն:

(Թիւ 11-12, 1987)

ԲԱՆԵՐԸ ԿԸ ՄԵՌՆԻՆ

Րկու յուղարկաւորներ փափսացին ետեւի նստարանէն, եւ ինք կորսըն-
ցուց մտածումին թելը: Իրականութեան գայով անդրադարձաւ յանկարծ,
որ երագեր էր երկար, այդպէս հոն ոտքի, երիտասարդ քահանային շըր-
թունքներէն թափթփող տարտամ բառերուն դէմ: Խորանին լոյսերը կը շողային
մշուշախառն կիսամութի մը մէջ, եւ պաղ քրտինք մը ողողած էր քունքերը: Նայե-
ցաւ դէմի սեղանին եւ ըսաւ ինքնիրեն, թէ մայրը մեռած է ահա ու կը պառկի այս
դագաղին մէջ: Նոր սղոցուած տախտակին հոտը մինչեւ թոքերը կ'իջներ:

Մայրը մեռած էր: Բառերը կրկնեց մտովի, հատ-հատ, շրթունքները գրեթէ
շարժելով. բան չհասկցաւ: Իր ներկայութիւնը գրեթէ անիմաստ էր հոն, կը զգար
ատիկա արդէն սկիզբէն ի վեր: Արեւի երիզ մը, պատուհանէն ինկած, կ'երկարէր
նստարաններուն վրայ, կ'անցնէր ոտքին քովէն: Ուզեց կոխկռտել գայն, ոտքը եր-
կարեց. լոյսի երիզը շողաց կօշիկին վրայ, եւ իր մորթը զգաց գաղջ շոյանքը անոր:
Դուրսը արեւ կար անշուշտ: Մինչ մատուռին ստուերները կ'աճէին իր շուրջ. քիչ
առաջուան մշուշը նորէն կը բարձրանար, կը լեցուէր աչքերուն մէջ: Պատկեր-
ներ կ'ըլլային բոլորը, զինք շրջապատողները. դէմքերը, շարժումները կը տարբա-
դադրուէին անորոշին մէջ, եւ աւելորդ բաներու պէս կը ճնշէին իր վրայ, իրենց
հեռաւորութենէն: Անհանգիստ կը զգար հոն ըլլալուն: Իր մարմինին զանգուա-
ծը, միամիտ ու անամօթ, կանգնած երկու նստարանի միջեւ, շփոթահար կ'ըներ
զինք: Մանաւանդ երբ սեւ երիզ մը պատուէր աչքերուն առջեւ լեցուած մշուշը եւ
հասներ իրեն, կամ անօգուտ հեծկլտուք մը զար խանգարելու իր լռութիւնը: Այդ
րոպէներուն յիմարօրէն կը փափաքէր շարժիլ. կենալ բարձր տեղ մը, սա դիմա-
ցի բեմին վրայ, եւ ըսել միւսներուն ինչ որ չէին գիտեր: Կը փափաքէր, ամբողջ
մատուռը լեցնող թելի շարժումով մը, դրկել դուրս զանոնք բոլորը, այդ պատկեր-
ները, իր անտարբերութենէն հալածական. ա՛լ կը բաւէր՝ շարժէին խաղալիկնե-
րու պէս, խաթէին իրենք զիրենք: ՄԷԿԻԿ-մԷԿԻԿ պիտի մարէին այն ատեն լոյսերը
խորանին: Պիտի մնար ինք առանձին՝ միակ իրականութեան հետ. մօրը փտող
մարմինին հետ: Պիտի մնար երկար, սուզուէր անոր տեսիլքին մէջ, մինչեւ–նող-
կանք մը ակռաները սեղմեց հոս–ա՛լ հաւատար, ընդունէր թէ մայրը մեռած էր:
Ցաւագին, բուրբ հեշտանքը նորէն պիտի գար. կու գար ամէն պատրանքէ ետք:
Ան պիտի ողողէր այս անգամ, պիտի խեղդէր իր բոլոր բջիջները: Ա՛լ լիացնէր
զինք: Մահը պատրանք չէր. կարելի էր ապրիլ անով:

* * *

Տկար հեծկլտուք մը ետեւէն, եւ ինքզինք դարձեալ հոն գտաւ, երկու նստարանի
միջեւ, սեղանին դէմ: Չգաց նորէն՝ ճշող ներկայութիւններ իր ետեւ, աւելորդ նայ-
լածքներ. քրտնած, կղպուած դէմքեր: Արեւի գաղջ երիզը դեռ ոտքին վրայ էր, եւ

բահանան չէր վերջացուցեր տարտամ բառերը: Դուրսը արեւ էր անշուշտ, եւ լռութիւն: Կարելի չէր փախչիլ՝ բառերու, դագաղներու եւ ճառագայթ մը արեւի տարօրինակ այդ բանտէն: Մինչ ետեւէն նոյն հեծկլտուքը կը կրկնուէր, եւ անոր ցնցումները կու գային ու կ'անցնէին իր մէջէն: Կը ճանչնար գայն. այդ հեծկլտուքը, այդ ձայնը օր մը իրը եղած էին: Դարձաւ. ան էր, երկու քայլ անդին կեցած: Գետին կը նայէր: Ան էր. դէմքը արդէն այնքան կը նմանէր հեծկլտութիւն. մեղմ, թաց, թրթռուն: «Եւ ըսել, որ գիտցեր եմ սիրել»,– անցաւ միտքէն: Գաղջ բան մը պտտեցաւ ջիղերուն խորը. քիչ մը գուլթ, քիչ մը ավստսանք՝ լեղի-լեղի բարձրացաւ կոկորդին. միայն: Կը բաւէր. անօգուտ էր արդէն: Պէտք էր փախչիլ այդ խեղճ գուլթէն ալ: Նայիլ յուզումէն թրթռացող այդ մարմինին՝ ինչպէս ավելորդ առարկայի մը:

Բայց կարելի չէր մոռնալ. սիրած էր գայն, եւ հիմա կը մնար բանտարկեալը՝ ա՛լ իրը չեղող յիշատակներու: Կրնար զարմանալ միայն. շատ տղետ էր եղած: Ռոտվիտտեւ ոչինչ մեռած էր դեռ կեանքին մէջ այն ատեն. դեռ չէր խոցուած բացարձակներ փնտռող իր խեղճ հպարտութիւնը: Յետոյ մահերը եկեր էին, ինք գտեր էր մեծ հակասութիւնը: Եւ սիրելը մոռցեր էր: Պարզ էր: Բայց միւսը չէր մոռցեր դեռ. ատոր համար ալ հոն էր ահա հիմա, իրմէ երկու քայլ անդին. իր մօրը դագաղին դէմ:

Կրկին նայեցաւ անոր: Թարթիչները կը ստուերէին կարմրած կոպերը. անոնց մեղմ թրթռացումը դեռ կ'երեւէր վիշտին պրկումին մէջ: Գեղեցիկ էր ան, հակառակ դէմքը այրող արցունքին. մարմինին զիծերը շնորհալի էին, կեանքով բաբախուն՝ սեւին ծանրութեանը տակ: «Տասնութ տարեկան,- շարունակեց յուսահատ անտրաբերութեամբ.- ինք ալ տասնութ տարեկան է, եւ դեռ չէ մոռցեր. դեռ գիտէ լալ»: Չէր խղճար. ոչ ալ կը նախանձէր: Գեղեցիկ էր, բայց այնքան փխրուն, այնքան խոցելի գեղեցկութեամբ մը: Կարելի չէր... կարելի չէր հաւատալ անոր. կարելի չէր սիրել...: Նորէն զգաց դառնութիւնը անօգուտ, ցամքած իր գուլթին: Եւ այդ պահուն, ան իր վրայ դարձուց աչքերը: Նոյն ակնարկը. հարցումի, աղաչանքի նոյն արտայայտութիւնը, նոյն հրաւերը: «Ինչ կը սպասէ դեռ ինձմէ», հարց տուաւ ինքնիրեն, մինչ իր անտարբեր յուսահատութիւնը ակռաները կը սեղմէր: Իսկ աղաչող աչքերը նորէն կը խոնաւնային, կ'ողողուէին արցունքով: Աղջկան ուսերը, մարմինը ամբողջ՝ կը ցնցուէին խեղդուած հեկեկանքով, եւ նայուածքը, թրթռուն նայուածքը կարծես կը հարցներ.

– Քիչ մը չե՛ս... լար... մամայիդ համար:

Անիմաստ էր այս բոլորը, մղձաւանջի պէս ցնորական: Կարելի էր քրքջալ միայն, յուսահատի քրքիջով: Ինք կը լռէր. կը մնար հոն, ապիկար ու շփոթ, պարապ ակնարկը յառած անոր սեւ պզտիկ ձեռնոցին, դաստակի տժգոյն մորթին: Կը լռէր: Մինչ այնքան պարզ էր, բացայայտ էր. կարելի չէր լալ ու ապրիլ. կարելի չէր յուզումով թրթռալ ու չփշրուիլ: Այնքան՝ հակասական էր, այնքան պարզ: Իր մայրը... Պատկերացուց գայն, սպիտակած, տգեղած այդ կինը. խեղճ գեղեցկութիւնը անոր, որ թերեւս բոլոր մայրերունն է: Ան գիտցեր էր լալ, եւ ահա մաշեր էր անո-

դոք մաշուճովը քաղցկեղին: Հիւանդութիւնը կերեր էր զայն կտոր-կտոր. ինչ որ մնացեր էր՝ ահա կը պառկէր հոն, դեմը. այլեւս անծանօթ, աւելորդ: Եւ հիմա պետք էր լալ անոր համար: Մայրը մեռած էր, եւ պետք էր լալ անոր համար: Քովի աղջկան մատները թաշկինակը կը սեղմէին ջղաձգօրէն, սեւ ձեռնոցին տակէն: Անոր երիտասարդ մարմինը կը սպառէր արցունքին մէջ: Այնքան խոցելի էր ան. ճիշդ մօրը պէս, արդէն մօրը պէս: Թերեւս բոլոր կիները կը նմանէին անոր. քիչ մը միս եւ արցունք. արցունք մանաւանդ. կարծես հիւթը իրենց մարմինին:

Այպէս, մայրն ալ մեռած էր ուրեմն, վերջինը մահերէն: Իսկ ինք կը մնար հոն, նոյնքան պարապ, անորոշ: Կը սպասէր: Եւ կը թուէր իրեն, թէ մայրը ահա կը մեռնէր սկիզբէն ի վեր, եւ սկիզբէն ի վեր ինք կը սպասէր այդպէս, ուրիշներու կողքին, ուրիշներու վիշտով շրջապատուած: Կը սպասէր այդ տարօրինակ բանտին մէջ, մահուան ու արցունքներու միջեւ տարուբեր: Յետոյ կը մոռնար:

* * *

Ձայները իջան յանկարծ: Լռութիւն: Վերջացած էր: Իր ներսը պտտող խուլ մղումներէն տարուած՝ քայլերը քաշքշեց դուրս, դագաղակիրներուն եւ քահանային ետեւէն: Մարդ մը կը քայլէր իր քովէն, թելը բռնած: Բարեկամ մըն էր: Դրան մէջ՝ կէսօրուան ճերմակ լոյսը բիբերը խոցեց: Պահ մը կոպերը փակեց, մնաց անշարժ. յետոյ քայլեց, յուղարկաւորներու հոսանքին հետ, հողէ արահետներէն: Խճողում կար: Միւսը ձգեր էր իր թելը. կարելի չէր միասին քայլել այդքան նեղ ճամբաներու վրայ: Քալողները կը հպէին իրեն, կը բախէին երբեմն, կը քաշուէին մէկդի: Շատ չէին մօտենար: Մայրը մեռած էր:

Արեւը ահաւոր էր. կ'իյնար ալիք-ալիք անոր լոյսը դաշտին վրայ, խաչերու եւ սիւներու անտառին կուրցնող ճերմակին վրայ: Դաշտը կ'այրէր: Յոգնութիւնը բոլոր զգայարաններէն իր մէջ կը խուժէր: Ծնծոյ մը կը թրթռար օդի բոցերուն մէջ. անհանգստացնող բոյր մը կը բարձրանար խոտերէն: Կրունկները կը ցաւէին եւ արեւը կը ճնշէր մերկ գլխուն: «Յոգնած եմ», - մտածեց. կ'ուզէր նստիլ հողին վրայ, բայց կարելի չէր: Միւսները կը քայլէին: Դագաղը կը քայլէր:

Հողը մուր սրճագոյն էր հոն, ուր կ'եցան. գրեթէ սեւ: Նկատեց, որ փոսը կանոնաւոր փորուած էր: Պէտք էր մօտենալ եզերքի թումբին, եւ սպասել. մինչեւ որ մայրը մեռնէր վերջապէս. մինչեւ քահանային վերջին բառերը վերջանային:

Փոսը ամբողջութեամբ կ'երեւէր եզերքի թումբին վրայէն: Կեցած էին հոն ուրիշներ ալ: Միւսները ետեւն էին, աւելի ցած: Ետեւը տեղ մը՝ անշուշտ զինք սիրող մատներ դեռ կը պրկուէին թաշկինակին վրայ: Ինք չէր լար, թումբին վրայ կ'եցած: Ահա այս մէկը եղբայրն էր. իր մեծ եղբայրը: Պիտի չուզէր նայիլ անոր. յայտնի էր, ան լացեր էր մօրը համար: Հիմա կը հազար ճոնչացող հազով մը: Ինք դեռ կը տեսնէր պատկերը ռամիկ այդ տղուն, մինչ ան նոր կը հասնէր ուրիշ քաղաքէ քանի մը ժամ առաջ: Սեւ բաճկոն մը կը կախուէր անոր կողերն ի վար: Շապիկը քակուած էր, դեմքը՝ աճած սեւ մօրուքով: Այդպէս եկեր էր ան, եւ ինք

զգացեր էր, ամեն անգամի պես, զիրենք բաժնող անջրպետը: Այնքան տարբեր՝ իրմե: «Բան չի գիտեր,- ըսեր էր ինքնիրեն, ամեն անոր հանդիպելուն,- ոչինչ ունի մոռնալիք»: Միւսներն ալ շատ բան չէին գիտեր կարծես...: Ինք էր տարբերը, երեւի, ինք որ *գիտէր*: «Որքան պարզ է ասոնց ուրախութիւնը եւ արցունքը»,– շարունակեց: Եւ շրթունքները կծկուեցան: Ուզեց մոռնալ: Բայց չէր կրնար չտեսնել եղբօր պատկերը: Իմացեր էր ան մօր մահը, նետեր էր կաշի կտրող դանակը սեղանին, հաներ էր արհեստաւորի գոգնոցը, եւ եկեր՝ քիչ մը անոր վրայ լալու: Այդ անբառ, գրեթէ անասնային վիշտին յաճախ հանդիպած էր ինք: Տգէտ սարսափն էր ան՝ կեանքի անծանօթ բաներուն: Տարերային ցաւ մը, առանց լոյսի, մտածումի: Եւ անոր դէմ միշտ ալ խուլ ու գաղտնի բան մը թրթռացեր էր իր մէջ:

Յիմա, եղբայրը կը հազար նորէն. հողի կոշտեր կը գլորէին անոր ոտքերուն տակէն, փոսին մէջ: Հողը թաց էր, անհանգստացնող բոյրերով բեռնաւոր: Արեւը կը մնար անշարժ, տաքէն ճերմկած երկինքի կեդրոնին. ծղրիթներ կային եւ փրսփրսութիւններու ծով մը՝ դաշտին վրայ: Ինք յոգնած էր արեւէն, հողի բոյրով ծանր՝ հողերու այդ կեանքէն: Յոգնած՝ ամբողջ կեանք մը դագաղի մը առջեւ կենալով, մտածելով լալու մասին, սիրելու մասին, մտածելու մասին: Յոգնութեան պահ էր, եւ նախանձեցաւ... Ըլլալ պարզ, տգէտ, եւ լուռ՝ խառնուիլ մեծ զանգուածին, ինչպէս մեռնողները կ'իջնեն վար, կը միանան հողին:

Ծանր, ծանր շարժումով մը՝ եղբայրը ծներ էր գետին. հող կը նետեր գերեզմանի փոսին մէջ: Մեքենաբար նոյնը ըրաւ, մտածելով միաժամանակ, որ մարդ հող չի նետեր մօրը վրայ: Բայց մայրը մեռած էր: Անոր խեղճ հիւանդութիւնը, փտումը՝ իր նետած բուռ մը հողին տակ էին ա՛լ: Մատներուն վրայ հողի հատիկներ կային: Եղունգներուն ծայրերը սեւ էին անոնցմով:

Եւ հողը կը բուրէր: Անոր բերրի հոտը, քրտինքի պէս գաղջ, կը բարձրանար արեւին մէջ, անտեսանելի ալիքներով. ապրող շունչի նման կը թափանցեր իր մարմինին: Եւ իր մէջ բան մը կը բեղմնաւորուէր: Ոտքերուն տակի դագաղը կ'անհետանար ալ. հողը կը գրկեր զայն: Փոսը կը լեցուէր, խոտերուն մէջ բացուած վերքի մը պէս, հողով եւ ծաղիկներով, փոսին մէջ տապալած պսակներով: Անոնց բոյրը կը խառնուէր հողի շոգիներուն, կ'էփէր դաշտին հնոցին մէջ: Օդը ալիք-ալիք կը դողդողար սպիտակ քարերու մակերեսին:

Միւսները կը հեռանային կամաց-կամաց. վերադառնալ պետք էր: Բարեկամ մը բռնէր էր իր թելը, թող տուէր էր. ինք անշարժ կը մնար: Դեռ անծանօթ, կամ արդէն շատոնց մոռցուած զգայութիւններու ալիք մը կը բարձրանար իր մէջ: Կը սպասէր շփոթ, բայց արդէն գրեթէ զինովցած՝ ծանր բոյրերով եւ ջերմութիւնով: Պարզ բան մըն էր հորիզոնէ հորիզոն դաշտը ծածկող այդ տրոփումը. գեղեցիկ էր. իրմէ անդին, իր գոյութենէն անդին անցնող գեղեցիկ մը: Խեղդող շեշտով կրկնեց բառը: Եւ զարմացաւ իր ձայնին, որ յանկարծ բարձր լսուեցաւ ու ինկաւ, պարապի մը մէջ կարծես: Նախնական, աննպատակ յուզում մըն էր դուրսէն իրեն եկող այդ հոսանքը. մերկ ու առանձին նախամարդու տազնապանք մը: Կը

զգար, անորոշ կերպով, որ հարցումի պէս բան մըն էր ինք, այդպէս բոլոր զգայարանքները բացած՝ հեռաւոր արեւի մը տաք կանչին, պարզ բայց անմատչելի բնանկարի մը գոյներուն, հողի մը հսկայ մարմինին, անոր հոտերուն եւ ձգողութեան: Յուսահատ հարցում մը:

Կը մնար հոն: Ափերը, եղունգները դեռ սեւ էին հողով: Մայրը պառկած էր ոտքերուն քով, փոսին մէջ: Մեռած էր: Շուրջը նոյն լայն տրոփումը կը շարունակէր դաշտին վերեւ: Հաստատեց, որ կարելի չէր փախչիլ այդ բոլորէն. եւ անդին միւսները իրեն կը սպասէին թերեւս:

(Թիւ 7, 1964)

ԱՆՈՅՇ ԱԿՆԵՐԵԱՆ

ԿԱՊՈՅՏ ԳԻՇԵՐ

► Ժամ առաջին

Տու չեմ եկած երբեք: Քիչ մը ճնշող է ներսի մթնոլորտը: Մուրթ է եւ կարծես ներկաները հրոսակներու խոււմբ մըն են: Կ'երեւի ես ալ տարօրինակ կը թուիմ իրենց, իմ մաքուր *ճինս*ովս եւ ճերմակ վերարկուովս: Կաշիէ ժաբէթներով, շղթաներով եւ *թաթու*ներով այրեր ու կիներ կը դառնան եւ ինծի կը նային: Ջուրէն դուրս ինկած ձկնիկ եմ հոս, որ ստիպուած է դիմացի քանի մը ժամերուն չկորսնցնել իր շնչառութիւնը:

Կիսամուրթ սրահին մէջ դանդաղօրէն կ'երթամ կը նստիմ աջ պատին տակի սեղանը, որ ամենէն առջեւի սեղանն է: Այս ձեւով գոնէ զիս զննող *թաթու*յազարդ մարդոց աչքերը իմ ետիս կը մնան եւ ես կրնամ սուզուիլ blues երաժշտութեան մէջ, մէյ մը որ նուագախումբն ու երգիչը, որոնց նուագարանները բեմին վրայ իրենց կը սպասեն, յայտնուին եւ զիս փրկեն այս անյարմար վիճակէն:

Բայց հազիւ կը նստիմ աթոռին եւ կը սկսիմ տեղաւորուիլ, սպասեակը կը վազէ մօտս, RESERVED ցուցակ մը կը դնէ սեղանին վրայ, եւ կը խնդրէ որ ուրիշ սեղան նստիմ: Անախորժ կացութիւնս կը կրկնապատկուի եւ ես քիչ մը կարմրած եւ քիչ մըն ալ բարկացած՝ կ'երթամ կը նստիմ քիչ մը անդին: Այս bar-ին մէջ ո՞վ սեղան կ'ապահովէ... ո՛չ ճաշարան է, ո՛չ ալ երգահանդէս, որ սեղան աթոռ ապահովես... վերջ ի վերջոյ blues bar մըն է եղած չեղածը... եւ ինչո՞ւ ա՛յս bar-ը պետք է հանդիպէինք... մասնաւոր բացառիկ բան մը ալ չունի որ յատկանշական ըլլայ—բացի եթէ Վահրամին համար յատուկ նշանակութիւն ունի:

Երբեք առանձին bar չեմ գացած: Նախապէս ընկերներու հետ, իսկ վերջին քանի մը տարիներուն ալ՝ Վահրամին հետ գացած եմ: Բայց միշտ ալ բոլորովին տարբեր եղած են մեր գացած տեղերը: Քիչ մը աւելի լուսաւոր, քիչ մը աւելի բնական տարազներով մարդիկ, եւ բաւական աւելի հանգստաւէտ: Յոս աթոռները կարծր են, առանց բարձի եւ առանց թելերու յենակի: Ո՞րքան երկար կարելի է նստիլ հոս առանց անհանգստանալու: iPhone-ս կը հանեմ պայուսակէս եւ կը սկսիմ վերջին լուրերը կարդայ: Եւրոպայի տնտեսութիւնը տակն ու վրայ է: Թուրքիոյ մէջ երկրաշարժ եղած է եւ տասնեակ հազարաւոր մարդիկ մեռած են: Շէքսփիր գեր-աջակողմեան հռչակուած է...

Վահրամը կ'ուշանայ եւ ես ժամանակ անցընելու համար խմիչք մը կ'ապրսպըրեմ: Խմիչքի բաժակը ձեռքիս՝ ինքզինքս տեղւոյն հետ քիչ մը աւելի յարմար կը զգամ եւ կամաց կամաց կը հանգստանամ: Շուրջս՝ *թաթու*յազարդ մարդիկը

խոււմբ խոււմբ նստած են, իրենց մէջ բաւական ալ կիներ: Կարծես բոլորն ալ իրարու եւ վայրին շատոնց ծանօթ են: Ճիշդ իմ ետեւի խոււմբէս մէկը քիչ անդին գըտնըւող խոււմբէն անձի մը իր սեփական անունով կը դիմէ, «Hey, Tony!», կը կատակէ հայհոյանքներով համեմուած, ամենքը կը խնդան: Ուրիշ մը ապսպրանքներ կը դնէ ուղղակի խոհանոցին, եւ քանի մը հոգի ալ բարձրաձայն կը պահանջեն որ նուազախոււմբը բեմ գայ:

– Not yet!– կը պոռայ մէկը խոհանոցէն:

Ինչ՞ի կը սպասեն այս մարդիկը: Արդէն ժամը ինը անցած է եւ նուազը պետք է սկսի:

Վահրամին ուշացումը սովորական չէ: Չինք ճանչցած օրէս ժամադրութիւնը յարգող եղած է, այն աստիճան՝ որ ամէն անգամ որ տեղ պիտի երթանք եւ ես հինգ վայրկեան ուշանամ, կը նեղուի եւ յաջորդ տասը-տասնըհինգ վայրկեաններուն անտրամադիր կ'ըլլայ: Իսկ եթէ մինչեւ մեր հասնելիք տեղը սիրտը չառնեմ՝ այդպէս ալ կը մնայ... ենթադրաբար. իրականութեան մէջ՝ չեմ գիտեր ինչքան կրնար տելէլ իր անտրամադրութիւնը, որովհետեւ միշտ ալ սիրտը առած եմ եւ տրամադրութիւնը փոխած: Բայց հիմա որ ի՞նք կ'ուշանայ՝ ե՛ս ի՞նչ ընեմ. նեղուած եւ անտրամադիր ձեւանամ իր գալէն ետք: Բայց ես այդպիսի խաղեր չեմ խաղար: Ոչ նեղուած եմ, ոչ ալ անտրամադիր: Ուշացողս կը հասկնայ ուշացողը: Վստահ որ տրամաբանական պատճառ մը ունի եւ պիտի բացատրէ երբ հասնի: Իրեն համար ալ կարելոր է որ այսօր հանդիպինք: Իրականութեան մէջ՝ իրեն համար աւելի կարելոր է:

Բայց հիմա որ կը մտածեմ՝ իրեն հանդիպած առաջին օրս ալ ուշացած էր Վահրամ–թերեւս միակ անգամը մինչեւ այսօր: Թատերական ներկայացման մը փորձին էր, որ առաջին անգամ զինք տեսայ, երբ կէս ժամ ուշ ներս մտաւ: Չհասկըցանք ինչո՞ւ եկած էր այդ օր. իր առաջին եւ վերջին գալն էր այդ փորձերուն: Անկէ ետք անհետացաւ, բայց երկու շաբաթ ետք ինծի հեռաձայնեց եւ սուրճի հրաւիրեց: «Տարբեր ես իմ ճանչցած աղջիկներէս», ըսաւ, հաւանաբար բացատրելու համար թէ ինչո՞ւ ի՛մ թիւս առած էր բեմադրիչէն եւ ոչ՝ օրինակ՝ ներկայացման հերոսուհի Անթուանէթինը, որ blonde էր եւ մեծ կուրծքեր ունէր: Յետաքրքրական տարօրինակութիւն մըն էի ես իրեն համար, ինչպէս կը սիրէր ըսել այդ օրերուն:

Քովի սեղաններէն բարձր խօսակցութիւն, խնդուք եւ կանչեր: Բայց զիս հանգիստ կը թողուն: Ի՞նչ կը կարծէի: Ինծի մօտենալով պիտի սպառնայի՞ն ինծի: Չիս վերէն վար չափչփելէ ետք՝ զիս մոռցած էին արդէն:

Բարձրաձայն խնդուք մը կը լսեմ եւ ներս կը մտնէ vaudeville-եան զոյգ մը: Կիւնը սաստիկ զօրաւոր շարուած, նեղ եւ կարճ սեւ կաշի փէշով, փարթամ կուրծքը բաւական բաց, եւ բարձր կրունկներով. իսկ այրը՝ մուլթ վարդագոյն *գոստիււ* հագած, սեւ շապիկին երեք-չորս կոճակները բաց, եւ գլուխը ածիլուած–զոյգ մը ուրիշ ձկնիկներ ջուրէն դուրս ինկած այս սրահին մէջ:

Կինն է խնդացողը: Այրին թեև մտած կը կանգնի մուտքին եւ կը նայի չորս դին: Սպասեակը վազելով կու գայ եւ գիրենք աջ պատին տակի սեղանը կ'առաջնորդէ, որ ամենէն առջեւի սեղանն է, ուր ես ուզեցի նստիլ...

Ուրեմն այդ սեղանը vaudevilleի այս գոյգին համար ապահովուած էր: VIP՝ են արդեօք:

Ես դեռ իմ զարմանքս չկլլած՝ նուագախումբի անդամները յանկարծ կը յայտնուին եւ կը սկսին բեմը լեցնել եւ պատրաստուիլ իրենց ելոյթին: Ուրեմն ասո՞նց կը սպասէինք որ նուագը սկսէր: Խմիչքս նորոգելու պատրուակով սպասեակը կը կանչեմ եւ կը հարցնեմ թէ ո՞վ են այս մարդիկը:

– They are the owners,– կը պատասխանէ սպասեակը:

Յի՛մա հասկցուեցաւ: Բայց թաթույազարդ խումբերը ինչու չէին հասկցած եւ նուագ կը պահանջէին այս գոյգին գալէն առաջ: Հասկցանք որ ես նոր եմ հոս, եւ անտեղեակ ներքին իրականութեան: Սակայն այս մարդիկը, որոնք իրենց ակումբին պէս կը վարուին հոս, վստահաբար մնայուն յաճախորդներ են: Գիտնալու էին որ պետք է սպասեն այս արքայական գոյգին:

Սպասեակին կը հարցնեմ թէ ինչո՞ւ անհամբեր էին ուրեմն միւսները. չէին գիտեր որ իրենց գալէն ետք պիտի սկսէր նուագը:

– No, no! The band wasn't waiting for them. It just happened that they came at the same time the band was ready to come on stage. And the owners don't come here that often, anyway. Our regulars wouldn't know them.

Երաժշտութիւնը սկսած է արդէն, բայց bluesի շատ չի նմանիր: Bluesի եւ Rockի խառնուրդ մըն է, շատ բարձր, որ ուղեղիս պատերուն կը զարնուի: Ըստ իս՝ տարբեր ոճերու միաձուլում կայ՝ եւ միաձուլում կայ: Այս երաժշտութիւնը երկրորդ տեսակի միաձուլում է. չարմարող եւ կոկորդէն դժուար իջնող:

Ներկայ մարդոց հոս թառիլը հասկցայ. ակումբի նման վայր մըն է հոս իրենց համար: Բայց արդեօք ինչո՞ւ զոյգե՛ր պիտի գան հոս–տէրերուն պարագան կը հասկնամ. բայց այդպէս մը չէ որ սքանչելի երաժշտութիւն կայ: Պիտի գան իրարու միանալո՞ւ՝ թէ իրարմէ բաժնուելու: Երաժշտութիւնը այնքան բարձր է, որ միանալու համար հոս ժամադրուողները շատ բան պիտի չկրնան ըսել իրարու. սիրոյ քաղցր խօսքերը իրենց հմայքը պիտի կորսնցնեն, երբ խօսակցութիւնը ստիպողաբար շատ բարձր ընթանայ: Բայց բաժնուելու նպատակով վերջին անգամ մը տեսնուելու եկողներուն համար՝ այս տեղը հիանալի յարմարութիւն ունի. բաժնուողները ստիպուած չեն զգար խօսակցութեան նիւթ գտնելու որպէսզի բուն նիւթի անախորժութենէն խուսափին. աղմուկը կրնայ ամենայն յօժարութեամբ լեցնել խօսքի բացակայութիւնը, պարապութիւնը:

Կը դառնամ սպասեակը կրկին կանչելու, որ խմիչքս նորոգէ, եւ կը տեսնեմ որ Վահրամ ներս կը մտնէ:

▶ Ժամ երկրորդ

Վահրամ իր գեղեցիկ աչքերը ինձի ուղղած՝

– Շատո՞ւնց հոս ես: Կը ներես ուշացայ,– կ'ըսէ, ճակտիս վրայ համբոյր մը կնքելով:

– Հարց չէ: Հոս հետաքրքրական բաներու ականատես եղայ,– կ'ըսեն:– Բայց նախ ըսեմ որ չհասկցայ ինչո՞ւ հոս ընտրեցիր որ գանք: Երբուրնէ՞ր գիտես այս barը:

– Վերջերս գտայ: Գիտեմ, տարբեր է քու ճաշակէդ: Բայց հետաքրքրական է իր տարօրինակութեամբ:

– Հը՛մ... բայց ճնշող մթնոլորտը եւ շուրջի մարդիկդ կը տեսնե՞ս կոր:

– Կը տեսնեմ կոր: Անվնաս են. իրենց թիկին մի նայիր:

– Գիտեմ, գիտեմ. մէկական փիսիկներ են առիւծի տարագով... ինչ որ է: Ինչպէ՞ս ես:

– Լաւ եմ: Դո՞ւն:

– Ես այ: Քանի մը հատ խմած եմ արդէն:

– Ես ալ բան մը ապսպրեմ:

Քանի մը վայրկեան լուռ կը սպասենք որ սպասեակը գայ:

Սպասեակը կու գայ, Վահրամ իր խմիչքը կ'ապսպրէ եւ կը դառնայ նուագախումբին կողմը:

– Traffic կար ճամբան,– կը հարցնեն:

– Ոչ մասնաւոր: Տասնհինգ վայրկեանէն հոս հասայ,– եւ կրկին կը դառնայ նուագախումբին կողմը:

– Շա՞տ գործ ունէիր:

– Չէ:

Վերջապէս, կարճ դադարէ մը ետք՝ ինձի կը դառնայ.

– Բլէրին քովէն անցայ: Պէտք է զինք հանգստացնէի:

Վահրամին whiskyն կու գայ: Կը խմենք լուռ:

– Դուրսը դեռ կը ձիւնէ՞ր,– կը հարցնեն:

– Հա, բայց թեթեւցած է: Զուտօրոյն վրայ բաւական ձիւն հաւաքուած է: Կ'երեւի բաւական է հոս ես:

– Այսինքն: Շատ չեղաւ:

Չըսեմ որ մէկ ժամէ հոս եմ. շատ անձկանօք կրնամ թուիլ: Վնաս չունի. թող խորհի որ նորէն ուշացայ: Բայց գիտնայի որ նախ Բլէրին քով պիտի երթայ՝ ես ալ իսկապէս կ'ուշանայի: Իմ փոքր ուշացումներս այդ կնոջ պահանջկոտութեան քով ոչինչ են: Վահրամը, սակայն, կը դիմանայ կոր ատոր:

Ամենէն առջեւի սեղանին սեւ կաշի փէշով կինը բարձրաձայն բան մը կ'ըսէ, քիչ մը ջղային: Այրը անմիջապէս ոտքի կ'ելլէ եւ սպասեակը կը կանչէ: Վահրամին դառնալով իր ուշադրութիւնը այդ գոյգին վրայ կը հրաւիրեմ եւ կ'ըսեմ.

– Ըստ երեւոյթի այս barին տէրերն են:

– Օ՛: Չէի գիտեր: Առաջին անգամ կը տեսնեմ զիրենք:

Քանի մը վայրկեան ետք՝ սպասեակը մեծ պնակ մը fish & chips կը բերէ եւ այրը զայն կը տեղադրէ կնոջ դիմաց: Քովի սեղանէն քանի մը հատ թուղթէ անձեռոցներ ալ կ'առնէ եւ կնոջ պնակին քով կը դնէ: Կինը կը սկսի ջղային հանդարտութեամբ ուտել, մինչ այրը իր կողմը յենած՝ իր հետ ցած ձայնով կը խօսի:

– Գիտե՞ս ես ինչ կը կարծեմ,– կ'ըսեմ Վահրամին:– Կարծեմ այս կինը պռոնիկ եղած ըլլալու է ժամանակին, հարուստ յաճախորդներ ունեցած է, որոնք լաւ վարձատրած են զինք, եւ ինք ալ բաւական դրամ մէկ կողմ դրած է: Այդ դրամն ալ այս տեղին վրայ դրած է եւ իր նիւթական ապագան ապահոված է:

– Իսկ մա՛րդը,– Վահրամ կը հարցնէ, չարաճճի ժպիտով մը:

– Մարդն ալ իր սիրածը կամ ամուսինը ըլլալու է: Տեսա՞ր ինչպէս իր շուրջը կը դառնայ կոր: Իր հաճոյակատարն է: Հաւանաբար կինը առանձին չմնալու համար ամուսնացած է իր հետ, որովհետեւ հակառակ որ շատ շարքուած է եւ ոչ պատկառելի հագուած է՝ յայտնի է որ ինք աւելի *sophistiqué* է. նստուածք կեց-լածք ունի:

– Իսկ մարդն ալ գործածուած *ոթօ* ծախողի կը նմանի: Կրնայ ըլլալ որ ճիշդ ես: Կարծես մարդուն համար այս կինը *lottery*էն ելած է. մարդը չի գիտեր կոր ի՞նչ ընէ իրեն հաճելի ըլլալու համար:

Մեր բաժակները իրարու կը զարնենք եւ կը խմենք: Եկած ենք կարելոր բանի մը մասին խօսելու: Բայց դեռ ժամանակը չէ: Երաժշտութիւնը լսենք քիչ մը:

Երգչուհին ֆրանսական հնչումով անգլերէն կը խօսի եւ երկար-բարակ կը բացատրէ թէ ինչ պիտի երգէ հիմա: Եւ կը սկսի երգել անձանօթ երգ մը: Գոնէ ինծի համար:

– Այս երգը գիտե՞ս,– կը հարցնեմ Վահրամին:

– Հա: *Summertime*-ն է:

– *Summertime*-է գատ ամեն ինչի կը նմանի: Բան չէ ձգած երգէն: Բարձր երաժշտութիւնը եւ իր ֆրանսական *accent*ն ալ վրան՝ բան չի հասկցուիր կոր:

– Յաջորդ երգիչը աւելի լաւ կ'երգէ:

– Սպասենք ուրեմն:

Վահրամ բաւական լաւատեղեակ կը թուի այս վայրին մասին: Վերջին երեք ամիսներուն բաւական նորութիւն կուտակած ըլլալու է:

Նոր երգիչ, նոր երգեր եւ ժամը կը սահի:

Ամենէն առջեւի սեղանին զոյգը ոտքի է: Կինը քիչ մը կ'օրօրուի, ինքզինք կը հաւաքէ եւ կը յենի մարդուն, որ իր արմուկէն բռնած զինք տեղ մը կ'առաջնորդէ: Կ'ուղղուի դէպի հանգստարան: Կը լսուի կնոջ բարձր ձայնը, պռոնալով, գանգատելով:

– Շնորհքով զինով է,– կ'ըսէ Վահրամ:– Դուն ալ կ'ըսես, թէ *sophistiqué* է: Հասարակին մէկն է: Դրամը մէկը *sophistiqué* չ'ըներ: Խեղճ մարդը ինչեր կը քաշէ թերեւս իր ձեռքէն:

- Է, դրամի համար ամուսնացողը այդ ամենը պիտի քաշէ, ուզէ չուզէ:
- Once a whore, always a whore.
- Սառած Վահրամին կը նային:
- Ի՞նչպէս կրնաս ատիկա ըսել: Կինը դրամը հաւաքած եւ այդ կեանքէն դուրս եկած է: Դեռ դուն who're կ'ըսես իրեն:
- Չտեսա՞ր վիճակը: Չի բաւեր այդքան խմեր է, ոտքի չի կրնար կոր կենայ, եւ դեռ կը պոռայ կը կանչէ կոր:
- Կարծես դուն հէշ չես գինովցած: Չե՞ս յիշեր Պերճենց տունը...
- Եկուր չվիճինք ուրիշներու համար,– կ'ընդմիջէ զիս:
- Սպասեակը կը կանչէ, ինք իր խմիչքը կը նորոգէ եւ դառնալով ինծի՝
- Քու խմածդ ի՞նչ է:
- Counterpoint:

▶ Ժամ երրորդ

Ամենէն առջեւի սեղանին զոյգը կը վերադառնայ սեղան: Մեր առջեւէն անցած միջոցին՝ կինը մարած աչքերով կը նայի ինծի երկար: Շունչս կը կենայ վայրկեան մը: Ինչքան ցաւ կայ աչքերուն մէջ. ինչքան տխրութիւն: Եւ ինչո՞ւ ինծի նայեցաւ այդպէս. կին-կնոջ մերձեցո՞ւմ, օգնութեան կամչ, անձկութի՞նն աւելի ուրախ օրերու, երբ ինծի պէս ինք ալ կը խմեր առանց ցաւելու, թէ՛ զգուշացում, որ անցաւ պահերը խաբուսիկ են:

- Վահրամ դիմացս նստած՝ կնոջ ետեւէն կը նայի եւ գլուխը կը շարժէ:
- Խղճայի վիճակ,– կ'ըսէ:
- Որո՞ւն համար: Կնո՞ջ թէ ամուսնոյն:
- Երկուքին ալ:
- Յամաձայն:

Ժամը հասած է մեր նիւթին անցնելու:

- Վաղն է ժամադրութիւնը ստորագրելու: Ժամը երկուքին: Փաստաբանը կէս ժամ տուաւ: Խնդրեմ մի ուշանար,– կ'ըսէ Վահրամ:
- Ամէն ինչ կէս-կէս: Տուն եւ դրամ,– կը շեշտեմ:
- Այո:
- Կապոյտ բազկաթոռը ես կ'ուզեմ:
- Լաւ:
- Անկողինը եւ սաւանները քեզի թող մնան: Ես մաքուր մը կը գնեմ:
- Չի պատասխաներ: Բայց շրթունքները կը պրկէ, աչքին ծայրովը ինծի կը նայի, յետոյ խմիչքին:
- Չկրցայ զսպել. չէի ուզեր այդպէս արտայայտուիլ, բայց եղա՛ւ. ըսի: Ասկէ աւելի բարի չեմ կրնար ըլլալ:

– Խոհանոցի իրերն ալ իմս են,– կ'ըսեմ:

– Անշուշտ:

– Վաղը երկուքին, ուրեմն: Առանձին եկուր:

– Շատ լաւ:

Վահրամ ոտքի կ'ելլէ մեկնելու, բայց ճիշդ այդ միջոցին առջեւի սեղանին գոյգը ոտքի է կրկին, բայց այս անգամ այրը կնոջ թեւէն բռնած զինք կը քաշքշէ դէպի դուռ:

– Please don't leave me! Please!– կ'ինը կ'աղաչէ հեկեկալով:

Այրը անտարբեր իր պաղատանքին՝

– Don't make a scene!– կ'ըսէ կտրուկ, հազիւ լսելի ձայնով:

– Why are you doing this? Please, Jerry! You know I love you! I gave up everything for you! Look what you make me wear!

Ճեռին, սակայն, առանց կարեւորութիւն տալու կնոջ խօսքերուն, զինք արդէն մուտքի դուռը հասցուցած է: Կինը յանկարծակի ցնցումով մը թեւը կը քաշէ այրին սեղմումէն եւ խրոխտ կեցուածք մը առնելով՝ մագերը կը շտկէ: Դուռը կը բացուի եւ պաղ հովուն հետ limousineի վարորդ մը ներս կը մտնէ, յատուկ գըլխարկով եւ վերարկուով: Ճեռին տրցակ մը դրամ կը դնէ վարորդին ասիին մէջ եւ բաներ մը կ'ըսէ իրեն: Վարորդն ալ կնոջ բազուկը բռնելով զինք դուրս կ'առաջնորդէ, մինչ կ'ինը Ճեռիին դառնալով բարձրաձայն կ'ըսէ.

– You could have broken up with me privately, you know. Not like this!

Ճեռին հանդարտ իր սեղանը կը վերադառնայ, խմիչքը կ'առնէ սեղանին վրայէն եւ բաժակը քանի մը անգամ ձեռքերուն մէջ դարձնելէ ետք՝ մինչեւ յատակը կը խմէ:

Վահրամ ինծի դառնալով կ'ըսէ.

– Ճիշդ չէինք մենք:

– Գիտեմ: Ճիշդ չէինք սկիզբէն:

Երաժշտութիւնը, որ պահ մը լռած էր, կը շարունակուի:

(Թիւ 4, 2022)

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Արրահամ Ալիքեանին



ուր ճանապարհեդ
Կաթիլ մը թանաք
Որ տուայտած օրերուս համբոյրը
Նեղ ճակատիդ ու հողմին ցրուած մագերուդ
Պակուցումով արարեմ:

Ձիս տար քու ափերուդ
Ուր մեղուներդ պարս առ պարս
Արեւակով վարդերու բերդերէն
Կ'ամենն հմայքը խաղաղութեան աւիշին:

Տերեւ մը գոնէ տերեւ մը միայն
Փակցուր մարմնիս հիւսկէններուն
Որ ապրիմ յոյզովն բերթութեան սաղմին:

Այսօր քու տեսիլքեդ
Ո՛վ բանաստեղծ երբ վիրաւոր տաղերդ
Կ'արտահանեմ աչքերէս
Ու կը պատմեմ քու աքտորդ
Կը տարածեմ անէծքիդ փոսուռան
Երգերուս ու յարուցեալ զայրոյթին մէջ:

Ահա քեզի համար հնձուոր ու անցաւոր խեղճ մունետիկները
Որ հայրենիք կ'օրհներգեն ամէն արեւագալի
Կը մորթուին մէկ-մէկ
Ու արագիլները, անդաւաճան կը վերադառնան
Արբունքիդ օրերը լուսէ
Որ դուն քու մոմ մատներովդ երգես
Ու ըսես
Շղրիթ նորէն եկար բախտս ծաղրելու,
Շղրիթ, նորէն եկար անցեալս խաչափայտի վրայ գամելու:

Ըսէ՛ Ծղրիթ
 Ինչո՞ւ երթը անոր կարմիրով գրեցիր
 Ու այլևոր հասակին տուիր միայն թուք ու մուր
 Ինչո՞ւ սպաննեցիր անոր աչքերուն
 Ամենէն թանկ հայրենիքը խորան, ու սեւ այգին փափաքներուն:
 Չինք պատէ-պատ
 Ու քաղաքէ-քաղաք աքսորեցիր
 Ու անոր հոգիի պատշգամբներուն վրայ
 Ստալիններ շարեցիր
 Որ ան թունաւոր խօսքով մրմնջէր միայն
 Ու արհամարհոտ գոչէր տիւ, գիշեր:

Գոչէր ամէն օր,
 Ու մերթ հառաչէր
 «Ահա ես նորէն ճանչցայ ձեզ, ձեզ, որ բնաւ չիմացաք,
 Թէ ինչու ճամբայ կու տան աներկբայ անցքին գիշերուան դէպի
 լուսածագ,
 Ձեզ, որ գլելով ձեր մուրը մզլած քիրտ ու դիրտի մէջ խտիր չորիք,
 Ինչպէս բզեզն այն, որ ամենուրեք կը թաւայի լոկ քակոր ու թրիք,
 Ձեզ որ ձեր ցրեխ-ցրեխ ցեխերով այնպէս պատեցիք խաչվառ, խաչ ու
 մաչ,
 Որ լուսաւորչի Աստուածն ալ զանգի մը մէջ, լռեց անաւաչ,» ...

* * *

Ինք ձեզ կը ճանչնար
 Որպէս որդին տարագրուած կարաւաններուն
 Որ իբրեւ թէ տունդարձի ելաւ
 Կտոր մը հողի, կաթիլ մը ջուրի հաւատքը պարզած,
 Գունաւոր երկինք ու կապոյտ երդիք
 Կանաչ ճանապարհ որոնելու պէս:

Ճանչցար գոնէ զինք
 Գունաւոր ծղրիթ
 Դուն միջնադարեան լռակեաց միջատ
 Որ երգելու տեղ
 Մոխրացած երկրի ամայութեան մէջ
 Յաճախ յիշեցիր

Որ մինակ էր բանաստեղծը դեռ:
Այո մինակ էր
Շատախօս Ծղրիթ:

Չիս տար անոր ճանապարհով
Մուսայիս տուր կտոր մը խունկ
Կաթիլ մը թանաք անոր մասնատուփէն
Որ ես ալ ծղրիթ աներգ չմեռնիմ
Արիւնոտ դարու փլատակներուն տակ
Դուն գիտես Ծղրիթ,
Երգս պարուրուած իր քողը ունի
Քողին տակ կապոյտ երիզ մը կայ դեռ
Երիզ մը յոյսի
Կարմիր արցունքներ որ ամէն գարնան
Ամէն հեղեղի պիտի բռնկին
Պիտի կարմրին
Իր երգով Ծղրիթ,
Ծղրիթ հեռատես:

Երգը թափանցիկ ու մեհենական
Երգը աստուածաշնչական:

Տերեւ մը գոնէ տերեւ մը միայն
Փակցուր մարմնիս հիւսկէններուն
Որ ապրիմ յոյզովն քերթութեան սաղմին:

Ու մի մոռնար
Որ կաթիլը ապերախտ յոյսին
Կը չորնայ օր մը.
Ու տուայտած օրերուս համբոյրը,
Կը մարի հին ցաւերուն հետ.
Յուշեր կը դառնան խոցերը նախկին
Կը մարին մէկ-մէկ ցաւերը նախկին
Աքսորի երգիչ խոցուած բանաստեղծ
Ու ճակտիդ նարօտին վրայ,
Պայծառ արեւը կը ցոլայ կրկին:

Ու այն ատեն
Քու ափերուդ վրայ

Մեղապարտներու շապիկը հագած
 Ուր մեղուներդ պարս առ պարս
 Յոգի առ հոգի
 Կը լեցուին ահա
 Յոյզի օշինդրով
 Ծունկ-ծունկ քայլելով
 Մինչեւ դատաստան
 Ոտքերուդ առջեւ
 Իւղ ու գինիով
 Կ'օրհնեն բառերուդ
 Թռիչքը անբասիր:

Այսօր քու տեսիլքիդ
 Ո՛վ բանաստեղծ երբ անունդ
 Ամուր կապարի պէս կ'արտահանեմ աչքերէս,
 Պատմելու համար քու աքսորդ ցաւագին:
 Կ'աղօթեմ նորէն
 Այս դժնէ դարուն
 Այս ամենակույ կրակներուն մէջ,
 Գրիչս պարզած իբրեւ վահանակ.
 Աքսորի ողբիդ ցաւը մեղմելու
 Անտուն բանաստեղծ
 Եւ անօթեւան
 Վիրաւոր ռեհան
 Այլիք առ այլիք բացուող տաղարան:

Ընդունէ մեղքս
 Ձայնը սերունդիս
 Ու ներէ անոնց
 Մինչեւ որ լուսնայ գիշերը թախծոտ:
 Ընդունէ աղօթք,
 Ընդունէ կնդրուկ
 Եւ խունկ ու վարդեր
 Իմ մեծ բանաստեղծ
 Վիրաւոր Ռեհան
 Ապրած վերքիդ մէջ
 Փշուրը լոյսի
 Կարիքով միայն
 Պիտի քայլենք դեռ

Երկար համօրէն
Լուսաւոր երագի
Կուժը մեր ուսին
Իբրեւ յետնորդներ
Քու մեծ ցաւերուդ իբրեւ վկաներ:

Իսաչի բարեկամ
Իսաչուած բանաստեղծ
Երանելի սեր
Ու լուրթ արեւի կշիռքով օժտուած
Այսօր յոյզի տեղ
Ու կարեկցանքի
Լոյսի աղօթք բեր մեր երդիքներուն
Որ անձրեւներու ու հողմին գալով անէծք չթափենք
Աստուծոյ սեղանին:

Մեղայ քեզի տէր
Որ բանաստեղծին
Տուիր զոյգ թելեր
Եւ տուիր անթրոց
Եւ տուիր քուրայ:

Յոգւոյ տաճարին յոյս դարձող Բաղեղ
Ու լոյսով ապրող
Բնակող իմ մէջ
Արիւնաշաղախ, Արիւնապատգամ
Եւ բայց ներողի
Վսեմ սքեմը
Յոգիին կապած.
Մինակ բանաստեղծ
Կենացոյ այսօր
Եւ կենացոյ միշտ
Յուր եւ յաւիտեան
Վիրաւոր երգիդ մուսան Է այսօր որ
Յուր եկաւ ինձի
Ու ես երգեցի
Բառերով կարմիր
Կարմիր բառերով
Բայց ոչ անէծքով

Այլ աղօթելով:

Կենացի այսօր
Ապրող Բանաստեղծ:

(Թիւ 2, 2005)

ԱՐՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ

ԲԱՌԱՇԽԱՐՅ

*Օ՛, թարմութիւն,
շնչուած բարձունքներին բառերէն...*



Ա՛ բառերի անդրածին, ես բառերի բնակիչ,
Ինչպէս քամին, որ ունի կապոյտ եզր ու սահման:
Ամենատեղ անձրեւներ մերթ դառնում են ինձ դրկից,
Բայց նիրհիս մէջ իսկ չունեն արեւից գատ հարեւան:

Նայեցէք ինձ դռնից ներս, կառչած նրա բռնակին,
Տեսէք, տեսէք թէ ինչքան եռուզեռ կայ ու տողան
Ամենուրեք հեզ բառեր որպէս մրջիւն-բեռնակիր,
Ինձնից մեկնած՝ դեպի ինձ կրում են ինձ միմիայն,

Գեղորի պէս կախել եմ բարաւորիս բառ-յուռուրթ
Եւ թաղել եմ մաղթանքի բառ-համայիլ իմ սեմին,
Որ բժժանքի գորութեամբ իմ երկիւղն են պարուրում:
Ես՝ աւազի մէջ որուն, սահմաններիս վերձանիչ,
Լուռ երագում եմ, ինչպէս ճամբի եզրին եղելին,
Եւ մերթ բառեր արձակում իբրեւ կապոյտ դեղձանիկ:

* * *

Ես՝ աքսորեալ բառերի, ինչպէս իմ տան ու անուան,
Որ գթառատն է բոլոր անուններից կարեկից:
Դատակնիքն այս իբրեւ աստուածառաք պատուիրան
Խեցու վրայ կոպերիս փորագրել է մի փրկիչ:

Եւ օրինում եմ, փառաւորում, բարեբանում բիւր բերան
Բառի դեմքով յայտնուող տարագրութիւն ու կսկիծ,
Ուր մերթ չուող լորի պէս մինչեւ մահս բնական
Գտնում եմ մահ տարածան անգամ անկեղծ մի սիւքից:

Պիտի ապրեն իմ բախտի խեցեվճիռը, ինչպէս
Աթենացի գորապետ Արիստիդեսը Արդար,
Որի խղճից խոհերն իսկ չեն կորզել հեծք ու ողբեր:

Պիտի ապրեն փրկութեան փառքն այն յոյսով մակարդած,
Թէ դիպուածի մի աստուած, որպէս արմատ ու կորիզ,
Ինձ աւելի կը սուգի ընդերքի մէջ աքսորի:

(Թիւ 5, 1986)



Ձախեն աջ՝ Վահէ Օշական, Պողոս Սևապեան, Արրահամ Ալիքեան:

ԳԷՈՐԳ ԹԵՄԻՉԵԱՆ

ՏԵՂ ՄԸ ԼԵՉՈՒԻՆ ԵՒ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԻՋԵՒ

*Մ*արածուրթին,
 կը խտանան ուր դարեր
 ու ծարաւէ կը բռնկին
 ռուսներուն մէջ երագի՝
 տիեզերքի աչքէն հեռու,
 տեղ մը՝ կաւի կառոյցներուն,
 որոնք յաճախ կը փխրին,
 կառուցուելով կը փոխուին՝
 հասնելու նոր
 շարժումներու
 շնչառութեան:

Տարածուրթին՝ այնքան մօտիկ,
 ուր կը սպասենք՝ սպառելով,
 խոնարհելով,
 չես գիտեր որ լարախաղաց միմոսին
 կամ հերոսին տիկնիկային,
 որ պիտի գայ մեր լեզուին սահմանին մօտ,
 աճուրդներուն, կրկեսներուն մեզի աղմուկը բերէ:

Բառը ինչպէս կը բացուի,
 ինչպէս կը շարժի,
 կ'ըլլայ բջիջներ
 հոսանքներուն մէջ.

Ինչպէս կը պտղի
 ու կը թափանցէ,
 կը տարրալուծէ
 կազերն անկատար մեր այրումներուն՝
 փնտռելով անցքեր,
 ծակտիկներ յոյսի,

մաքառումներու,
 թուղթի բարբառէն՝
 կաւերէն անդին,
 մինչեւ վեր՝ փողոց,
 իբրեւ զօրակոչ
 եւ ժամադրութիւն ...:

Կը նահանջեմ հոն երբեմն,
 գետնուղիներ կը փնտռեմ
 խաւերուն մէջ լռութեան,
 երբ թունաւոր մշուշը զիս պարուրէ
 ամեն անգամ որ շարժիմ
 ելլելու դուրս տոմինոյի ցանցերէն.
 կը նահանջեմ հոն երբեմն,
 գետնուղիներ բանալով
 վար,
 վար՝
 տեղ մը,
 բջիջներուս կորիզին մէջ,
 ուր կ'այցելեն շողեր, ձայներ,
 աբաղաղներ մտերիմ,
 դողին համար զարթնումի:

Տեղ մ'ընդարձակ
 միջեւ
 Լեզուին Շարժումին
 մենք կը շրջինք
 դեզերելով թիւերուն մէջ

ու կը շարուինք
 (կը շարժեն մեզ)
 իրարու քով
 (դէմ դիմաց)
 որբանոցի դրան առջեւ փաթաթուած,
 սպասելով, որ շարժինք,
 կտցահարենք՝
 խածոտելով, արիւնելով մէկգմէկ,
 մինչեւ կաթիլը վերջին,
 (որ դրուած է աճուրդի):

Ինչպե՞ս բանալ սահմանը այս խաղերուն,
դաւադրութեան.
Ինչպե՞ս պատռել դիմակները
թատերական տոտեմներուն
«հակա-մարտող»,
Ինչպե՞ս քակել թնճուկ խաչբառը՝ շինուած
հազարավանկ բառերով՝
երկրագունտի կոնակին
իբրեւ ժառանգ փակցուած:

Տեղ մը միջեւ երկուքիս
քերթուած մը կայ անառակ,
որ կը բացուի մոլորակի մը կանչին՝
ճամբորդելով անվերադարձ պահերուն մէջ
սահմաններու խաղէն անդին,
բառէն անդին՝
տեղ մը պահուած փախուստի ...
Քերթուած բառի,
առասպելի,
(գոր երգեցին կամ ստեցին բանաստեղծներ)
բաց զայրոյթը բազմապատկուող ու խտացող բաներուն,
քարէ լեզուն նախամարդու կրակին,
շարժումներուն,
ոստումներուն կարօտի,
մինչեւ, մինչեւ որ ելլենք
զքիզոֆրէն հաւկիթէն դուրս,
կեղեւէն դուրս կրաքարի կարծրութեան,
քակ՛
քակ՛
քակ՛ կապերը լեզուին...:

(Թիւ 6, 1980)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Ափիւռքի գրականութեան առաջին տասնամեակները կարելի է բնորոշել որպէս արեւմտահայ աւանդութեան աստիճանական ձեւափոխման ու բուն սփիւռքեան գոյավիճակի ցոլացման, անոր համապատասխան գրականութեան մը կերտման ժամանակաշրջանը: Աղէտին անմիջապէս յաջորդած սերունդը (Վերյայտնութեան սերունդը՝ Մինաս Թէօլէօլեանի խօսքերով), մանաւանդ Փարիզ կեդրոնացած, գրական ամբողջովին տարբեր ընկալում մը ցուցաբերեց նախաղետեան գրականութեան նկատմամբ՝ փորձելով օտար գրականութեան հետ շփումով նոր գրականութեան մը հիմնադիրը հանդիսանալ:

Սակայն, Միջին Արեւելքի մէջ տեղի կ'ունենար բոլորովին այլ գործընթաց մը: Հոս, մինչեւ 1915 ստեղծագործած հեղինակներու գրական կենսագրութիւններն ու արտադրանքը, քիչ մըն ալ Աղէտի գունաւորումով, կը ստանային նոր փայլ մը, կը սկսէին ենթարկուելու նոր մեկնութեան ու, կտրուած ըլլալով օտարի հետ շփումներէ (դիտաւորեալ մեկնաբանութեամբ, քանի որ իրենց ակունքին մէջ այդ միջգրութեանական կապը անխուսափելիօրէն ներկայ էր), նոր սերունդին ու անոր գրականութեան սկզբնադրիւրը, սկզբնաւորումը կը համարուէին: Իբր այդ, Աղէտը տեսած, զայն վերապարած ու հազար ու մէկ տանջանքներով Պոլիսէն, երբեմն զանազան աքսորավայրերէն ու շատ անգամ անապատներէն նոր ավեր հասած արեւմտահայ հեղինակները կ'արժանանային այս սերունդի ջերմ ընդունելութեան, կ'ընկալուէին որպէս ուսուցիչներ ու կը վայելէին անվերապահ յարգանք ու համակրանք (որքան որ ատեն-ատեն բանավէճերու առիթներ բանային հետագային): Յակոբ Օշական, Վահան Թէքէեան, Կոստան Չարեան, Լեւոն Շանթ, Արշակ Չօպանեան, անյայտ ու անանուն դեռ ուրիշներ կամ առանց մեծ ազդեցութիւն ձգելով հրապարակէն հեռացածներ՝ կուռքեր էին, նահապետներ... Անոնք ալ իրենց հերթին, իրենց սեփական աշխատութիւններուն կամ ստեղծագործութիւններուն կողքին, կը քաջալերէին, յառաջաբաններ կը գրէին, նիւթական օժանդակութիւն կը ցուցաբերէին, կը գրախօսէին, նամակով կամ հրապարակաւ խորհուրդ կու տային նորերուն: Այս շրջանի գրական սերնդափոխութիւնը այդ տարածքին վրայ խաղաղ անցում մը ապրելով, իր աւարտին պիտի հասներ 1940ականներու վերջերը, երբ հողին դարձած էին գրեթէ բոլոր

դասականները ու ասպարեզը գրաւած էին նորերը: Աւելի քան հետաքրքրական պիտի ըլլար սփիւռքահայ գրականութեան նոր դէմքերուն հետ արեւմտահայ դասականներու յարաբերութիւններուն ուսումնասիրութիւնը եւ անոնց կարծիքները երիտասարդ գրագէտներուն ու վերջիններու ստեղծագործութեան մասին, այսպէսով անուղակիօրէն լուսաբանելով աւագ սերունդին ազդեցութիւնը յետնորդներուն վրայ:

Ըստ մեր ունեցած տեղեկութիւններուն, Կոստան Չարեանի ու Անդրանիկ Ճառուկեանի յարաբերութիւնը կարելի է բաժնել երեք փուլերու, որոնք կը պայմանաւորուին երիտասարդ հեղինակին կողմէ երեք գրագէտին հանդէպ ցուցաբերուած վերաբերմունքով: Առաջին շրջանը կարելի է սկզբնաւորել *Նայիրի* ամսագրի հրատարակութեամբ՝ 1945ին, երբ խմբագիր Ճառուկեանը նոր հաստատուած ամսագրին աշխատակցութեան կը հրաւիրէ Չարեանը: Մինչեւ 1951, այսինքն՝ Չարեանի Պէյրութ այցելութեան թուականը, Ճառուկեանի ու Չարեանի միջեւ նամակագրական կապ մը կը զարգանայ: 1951-1954ին Չարեան ապրած է Պէյրութ, ուր հայագիտութիւն դասաւանդած է տեղւոյն Ամերիկեան Յամալսարանին, ինչպէս եւ «Նշան Փալանճեան» ճեմարանին մէջ: Չարեանի Պէյրութ գտնուած միջոցին Անդրանիկ Ճառուկեան հնարաւորութիւն ունեցած է անձամբ հանդիպելու անոր, զրուցել հետը, անձնական տպաւորութիւններ կուտակել: 1954էն մինչեւ 1963, գրաւոր թէ բանաւոր որեւէ վկայութիւն չունինք, թէ այս թուականներուն որեւէ յարաբերութիւն եղած է երկու հեղինակներուն միջեւ: 1963 եւ 1969 թուականներուն, սակայն, Ճառուկեան Երեւանի մէջ հանդիպումներ ունեցած է Չարեանի հետ:

ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ (1945-1951)

Անդրանիկ Ճառուկեան, Յալէպի մէջ, 1940ականներու սկիզբը փորձ մը կ'ընէ հրատարակելու *Նայիրի* անունով պարբերական մը, քանի մը թիւ վերջ դադրեցընելու համար զայն: 1945 թուականին ան վերստին կը հրապարակէ *Նայիրի*ն, այս անգամ որպէս ամսագիր: Այդ շրջանին թեւ Եւրոպայի ու Միացեալ Նահանգներու մէջ գրական հանդէսներ կը հրատարակուէին, որոնց մէջ հանդէս կու գային ժամանակի սփիւռքահայ ու արեւմտահայ գրողներն ու կուսակցական-հանրային գործիչները, ներառեալ՝ Միջին Արեւելքի մէջ ապրողները, սակայն Միջին Արեւելքի երիտասարդ գրողները իրենց շրջանին ուրոյն բեմը չունէին: Յակոբ Օշականը, ի մասնաւորի, հայկական ականդներու ծաղկման լաւագոյն միջավայրը կը համարէր Միջին Արեւելքը, Յալէպի գլխաւորութեամբ: *Նայիրի* այդ թուականէն սկսեալ մինչեւ 1982, գրեթէ 40 տարի, նախ Յալէպի մէջ որպէս ամսագիր, ապա Պէյրութի մէջ որպէս շաբաթաթերթ, բազում վերիվայրումներով հանդերձ, եղաւ ու մնաց Միջին Արեւելքի գրական սերունդի կարեւոր բեմերէն մին. տարբեր յաճախականութեամբ եւ տարբեր ժամանակաշրջաններուն անոր աշխատակցած

են Յակոբ Օշական, Կոստան Չարեան, Լիկոդոս Սարաֆեան, Արսեն Երկաթ, Շալարշ Նարդունի, Արամ Հայկազ, Համաստեղ, Հրաչ Չարդարեան, Նշան Պէշիկթաշլեան, Եղուարդ Պոյաճեան, Լեւոն Չորմիսեան, Մուշեղ Իշխան, Ժագ Ս. Յակոբեան, Եղուարդ Տարօնեան, Պօղոս Սնապեան, Խոսրով Թիւթիւնճեան, Մինաս Թէօթօլեան եւ բազմաթիւ ուրիշ անուններ, որոնց գումարումը մեծաւ մասամբ սփիւռքահայ գրականութեան ողնայարը կը ներկայացնէ:

Անդրանիկ Ծառուկեանի Կոստան Չարեանին նկատմամբ ցուցաբերած համակրանքին ու յարգանքին անդրանիկ ապացոյցը կարելի է համարել *Նայիրիի* նոր շրջանին բացուիլը Չարեանէ կատարուած արտատպումով մը: Այսպէս, Չարեանի “Ars Poetica”-ն հրատարակուած է *Նայիրիի* նոր շրջանի Ա. թիւի առաջին էջերուն վրայ, խմբագրական հետեւեալ ծանօթագրութեամբ. «ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ, հայ գրականութեան եւ արմենական Ոգիին մեծաձայն շեփորը, որուն «Արուեստ Քերթողական»-ով կը բանանք *Նայիրիի* նոր շրջանը: Այս հուժկու եւ բազմատաղանդ գրիչը հրաւիրած ենք աշխատակցութեան: Կը յուսանք յառաջիկայ թիւերով իրմէ տալ աւելի ընդարձակ եւ անտիպ էջեր: Չարեան այժմ կը գտնուի Ամերիկա եւ մտադիր է, առաջին իսկ պատեհութեամբ այցելել Սուրիա-Լիբանան, ինչպէս կ’իմանանք իրմէ ստացած նամակէ մը»¹: *Նայիրիի* Հոկտեմբեր 1945ի Բ. թիւին մէջ Անդրանիկ Ծառուկեանի ստորագրութեամբ տպագրուած է *Նաւը լերան վրայի* առթիւ գրախօսական մը, որով Ծառուկեան բարձր գնահատելով Չարեանի այս ստեղծագործութիւնը, հանրութեան յանձնարարած է կարդալ զայն ու փոխանցել յաջորդ սերունդներուն²: Այս գրախօսականին տպագրութենէն ետք, Ծառուկեան Օշականէն նամակ մը ստացած է. «Չուշացաւ Օշականին սաստը. «Չտեսութիւն է ըրածդ, գրեց Օշական: Չարեան բառերու կախարդ մըն է ու դուն տարուած ես այդ կախարդանքէն»: Ծառուկեան Չարեանի նկատմամբ ունեցած համակրանքը պաշտպանելու համար պատասխանած է. «Բայց արուեստագետէն ինչ կը պահանջենք եթէ ոչ այն, որ յաջողի մեզ կախարդել»: Այս թղթակցութենէն ետք, երկուքը դէմ առ դէմ հանդիպելու առիթ մը կ’ունենան Օշականի Հայլէպ այցելութեան միջոցին (1947-1948): Ներկայ եղած է նաեւ Եղուարդ Տասնապետեանը: Խօսք բացուած է Չարեանի մասին.

Օշական ջղայնացաւ, եւ ձեռքը բռունցքի վերածած, գոչեց.

– Այդ վեց հարիւր էջերը այսպէս կը քամեն-կը քամեն՝ եւ միայն վաթսուն էջ կը մնայ...

Եւ անմիջապէս յետոյ.

¹ *Նայիրիի*, Սեպտեմբեր 1945, էջ 1-3:

² Այս գրախօսականին յայտարարութիւնը նախապէս կատարուած է Սեպտեմբեր 1945ի Ա. թիւին մէջ. «Իր (իմա՝ Չարեանի. Վ.Ս., U.S.) վերջին երկարաշունչ գործը—Նաւը լերան վրայ—կը գրախօսուի ներկայ թիւով»: Հրատարակուած է սակայն Բ. թիւին մէջ:

– Բայց այդ վաթսուն էջը հայ գրականության անմահ էջերուն մաս կը կազմեն...³:

*Նայիրի*ի յաջորդ՝ Գ. թիւին մէջ, արտատպուած է նաեւ Կոստան Չարեանի «Կոմիտաս վարդապետին (նրա աճիւնը Հայաստան տանելու առթիւ)» հանրա-յայտ բերթուածը, որ առաջին անգամ հրատարակուած էր 1936ին *Հայրենիք* ամսագրին մէջ⁴:

Շարունակելէ առաջ անհրաժեշտ է մատնանշել, որ Չարեանի հանդէպ Ծառուկեանի կեցուածքին մէջ չկար միայն իմացական ու խմբագրական հետաքրքրութիւն մը, այլ նաեւ՝ ստեղծագործական: Արդարեւ, նոյն 1945ին ան կը հրատարակէր հռչակաւոր «Թուղթ առ Երեւան» վիպերգը, գրուած՝ արեւելահայերէն, ուր զգալի էր, ձեւին մէջ, անգիտակից հետեւողութիւն մը Չարեանի գրելաոճին, յատկապէս նկատի ունենալով երկու լեզուաճիւղերուն միջեւ անցումի լարումի մը գոյութիւնը: Միւս կողմէ, Օշական իր «Վկայութիւն մը» հատորին մէջ Թէքեանի ու Չարեանի «ստուերները» կը թելադրէր տեսնել Ծառուկեանի այդ գործին մէջ⁵: Նման վկայութիւն մը ունի նաեւ Անդրանիկ Ծառուկեան, ինչ որ Չարեանէ ազդուած ըլլալու խոստովանութիւն մը կարելի է համարել իր հաշուոյն: Չարեան, Պէյրութ գտնուած միջոցին, կը հարցնէ.

– Էտ քո «Թուղթ առ Երեւանը» որոշ տեղեր կրում է ... Կոստան Չարեանի ազդեցութիւնը...

– Կրնայ ըլլայ: Մեծ պատիւ մը կ'ընէք, պարոն Չարեան: Անբնական չէ որ մէկը կրէ իր սիրած հեղինակին ազդեցութիւնը⁶:

Այնուհետեւ, երկար ժամանակ, Կոստան Չարեանի անունին չենք հանդիպիր ամսագրի էջերուն մէջ, թէեւ ան աշխատակցած է Պէյրութի *Անի* ամսագրին՝ մէկ բանաստեղծութեամբ («Ձի, զարուն եւ Հայաստան»): 1946ի աւարտին Միջին Արեւելքի գրական շրջանակը յուզող կարեւորագոյն խնդիրը կը դառնայ սփիւռքահայ գրողներու համագումար մը նախաձեռնելու առաջադրանքը: Այս առթիւ թեր ու դեմ բազմաթիւ յօդուածներ կը տպագրուին *Նայիրի*ի եւ Սփիւռքի այլ թերթերու ու պարբերականներու մէջ: Նման համագումար մը սարքելու խնդիրը երբ կը յստականայ, գլխաւոր կազմակերպիչներէն Անդրանիկ Ծառուկեանի ստորագրութեամբ մեքենագիր, նոյն բովանդակութեամբ նամակներ կ'առաքուին զանազան երկիրներու մէջ բնակող հայ գրողներուն: Պահպանուած չըլլալով

³ Անդրանիկ Ծառուկեան, *Մեծերը եւ... միւսները*, Պէյրութ, 1992, էջ 282: Օշական *Նաւը*ի մասին նման տողեր ունի նաեւ Յովհաննէս Աւագեանին ուղղուած 23 Ապրիլ 1947 նամակին մէջ. «Նաւը լերան վրայ» վրիպանք մըն է, թէեւ մեր գրականութեան գեղեցկագոյն էջերէն 50-60 մը ունի իր մէջ» (Յակոբ Օշական, *Նամակակնի*, Ա. հատոր, Պէյրութ, 1983, էջ 98-105):

⁴ *Նայիրի*, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1945, էջ 109-111:

⁵ Յակոբ Օշական, *Վկայութիւն մը*, Հալէպ, 1946, էջ 41:

⁶ Ծառուկեան, *Մեծերը*, էջ 273:

հանդերձ, կրնանք ենթադրել, որ նման նամակ մը ստացած է նաեւ Չարեանը, որ այդ թուականներուն կը բնակէր Միացեալ Նահանգներու մէջ: Մեր այս ենթադրութիւնը կ'ամրանայ, երբ, ի շարս այլոց, Չարեանի անունը կը կարդանք համագումարին մասնակցելու հաւանութիւն տուած գրողներու ցուցակին մէջ, որ հրատարակուած է «Նայիրի»ի կողմէ⁷: Միւս կողմէ, Արամ Յայկազի ուղղուած 26 Յունիս 1947 թուակիր նամակին մէջ Ճառուկեան գրած է. «Ամերիկայէն հրաւիրած ենք միայն քեզ, Չարեանը, Յամաստեղը եւ Նուրիկեանը»⁸: Միջին Արեւելքի մէջ այդ թուականներուն ստեղծուած քաղաքական անկայուն իրավիճակը, ինչպէս նաեւ համագումարին շուրջ կարգ մը շրջանակներու կողմէ ստեղծուած բացասական կարծիքը թոյլատու չեն ըլլար, որպէսզի Գաղութահայ Գրողներու Յամագումարը կայանայ⁹: Կոստան Չարեանի Միջին Արեւելք այցելելու առաջին պատեհութիւնը այսպէսով կը յետաձգուի:

Ճառուկեանէն Չարեանին ուղղուած 26 Յունիս 1947 թուակիր նամակ մը պահպանուած է Երեւանի Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ (ԳԱԹ): Այդ նամակը, որ կցուած է այս յօդուածին, հասցեագրուած է ուղղակի Չարեանի Միացեալ Նահանգներու հասցէին¹⁰: Ճառուկեան, նախապէս բազմաթիւ անգամներ, զանազան առիթներով ու տարբեր անձերու ու հասցէներու միջոցով Չարեանին նամակներ առաքած ըլլալու փաստը նշելէ ետք, կը յայտնէ իր հիացմունքն ու համակրանքը գրագետին ստեղծագործութիւններուն նկատմամբ: Կը խնդրէ Չարեանի կենսագրութեան մանրամասները, հետագային կատարելիք ուսումնասիրութեան մը մէջ օգտագործելու նպատակով: Որքան գիտենք սակայն, Ճառուկեան Չարեանի մասին նման աշխատասիրութիւն մը չէ կատարած կամ, առնուազն, չէ հրատարակած: Ճառուկեան «Նայիրի»ի աշխատակցութեան հրաւեր ուղղելու եւ Գաղութահայ Գրողներու Յամագումարի կազմակերպչական հարցերուն շուրջ տեղեկութիւններ փոխանցելու կողքին, պատրաստակամութիւն յայտնած է, Չարեանի ցանկութեան պարագային, առանց վճարումի 60 Էջնոց գրքոյկ մը հրատարակելու հեղինակէն: Անվճար գիրք տպագրելու ուշագրաւ պարագան Չարեանի հանդէպ յատուկ վերաբերմունք ու համակրանք մը կը բացայայտէ: Առ ի համեմատութիւն, կ'արժէ նշել, որ նոյն թուականներուն Արամ Յայկազ դիմած է Ճառուկեանին իր առաջին գիրքը Սուրիոյ մէջ տպագրելու մտադրութեամբ եւ ստացած՝ հետեւեալ պատասխանը. «Գալով հոս տպագրուելուն, շատ գործնական չէ: Այստեղ մենք հիմա բացառիկ մենաշնորհը ունինք աշխարհի ամենէն սուղ երկիրը ըլլալու»¹¹:

⁷ *Նայիրի*, Մայիս 1947, էջ 229-231:

⁸ ԳԱԹ, Արամ Յայկազի ֆոնտ, թիւ 211:

⁹ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Սեւան Տէյրմենճեան, «Գաղութահայ Գրողներու Յամագումարը եւ Ճառուկեան», *Գարուն*, թիւ 10, 2002:

¹⁰ Mr. C. Zarian, 11 W. 42nd St. Room 326, New York 33, NY-USA.

¹¹ ԳԱԹ, Արամ Յայկազի ֆոնտ, թիւ 211:

Չարեանի պատասխանը մեզի յայտնի չէ, բայց *Նայիրի*ի հաւաքածոյի քննութիւնը ցոյց կու տայ, որ ան դրական կերպով ընդառաջած է Ծառուկեանի զոյգ խնդրանքներուն: Առաջին հերթին, հոն լոյս տեսած է «Լարախաղաց» քերթուածը, որ գրուած էր Նիւ Եորք, 1947ին¹²: Իսկ քիչ ետք, սկսած է հրատարակուիլ Չարեանի *Նայիրի*ին տրամադրած անտիպ գործ մը՝ «Սրտի ճանապարհով»¹³: Խմբագրական ծանօթագրութեան մէջ կը նշուի, թէ ապահովուած է Չարեանի աշխատակցութիւնը: Կը կարդանք, թէ Չարեան Միացեալ Նահանգներէն վերադարձած է Իտալիա եւ հաստատուած՝ Յոմ, ուրկէ ամէն ամիս կանոնաւորաբար պիտի աշխատակցի *Նայիրի*ին: Խմբագրութիւնը կը յայտնէ, թէ ան ողջունած է Գաղութահայ Գրողներու Համագումարը եւ յառաջիկայ ամառ պիտի այցելէ Լիբանան, ուր պիտի սարքէ հայերէն ու ֆրանսերէն դասախօսութիւններ՝ գրական նիւթերու շուրջ: Իսկ իր դուստրը՝ իտալաբնակ քանդակագործուհի Նուարոյ Չարեանը, ցուցահանդէս մը կը ծրագրէ բանալ Պէյրութի մէջ¹⁴: Արդարեւ, *Նայիրի*ի այդ տարուան քանի մը թիւերուն մէջ կը հրատարակուի Կոստան Չարեանի «Սրտի ճանապարհով» ստեղծագործութիւնը («Ես կան, կը մնամ»¹⁵, «Օ՛, իմ Յայրենիք»¹⁶):

Նոյն 1947ին, Չարեանի հետ անուղղակի առնչութիւն ունեցող ուշագրաւ պատահար մը կայ. Ծառուկեանի այցելութիւնը Թագուհի Շահնագարին՝ Կոստան Չարեանի առաջին կնոջը: 1947 թուականի աշնան, *Բազմապատկ*ի 100ամեակի հանդիսութիւններուն մասնակցելու նպատակով Ծառուկեան մեկնած էր Իտալիա, ուր օգտուելով առիթէն հանդիպում մը ունեցած է Թագուհի Շահնագարի հետ: Այս տեսակցութեան մասին, հետագային, Չարեանի մահէն ետք, Ծառուկեան ակնարկ մը գրի առած է՝ «Թագուհի Շահնագար» վերնագրով¹⁷, ուր կը պատմուին այս հանդիպման մանրամասները: Յայտնի է, որ Ծառուկեան Չարեանը տեսնելու ակնկալութեամբ չէ այցելած Շահնագարը. արդէն Չարեան այդ տարիներուն կը գտնուէր Միացեալ Նահանգներ եւ Ծառուկեանի այցելութեան յաջորդ օրը պիտի գար Յոմ:

– Անհանգիստ կը թուիք, Տիկին Թագուհի:

– Ինչպէս չըլլամ, տղաս, ինչպէս չըլլամ: Գնտուկ գացին, բերելու: Վաղը հոս են եւ դեռ տունին մէջ ամէն ինչ պատրաստ չէ...

Գացողը ո՞վ է, բերուելի՞քը ով:

(...)

Նուարոյը, իր աղջիկը, ամուսնին հետ Գնտուկ գացած են դիմաւորելու

¹² *Նայիրի*, Սեպտեմբեր-Նոյեմբեր 1947, էջ 441-442:

¹³ *Նայիրի*, Փետրուար 1948, էջ 1-11:

¹⁴ Անո, էջ 11:

¹⁵ *Նայիրի*, Մարտ 1948, էջ 93-96:

¹⁶ *Նայիրի*, Յունիս 1948, էջ 363:

¹⁷ Անդրանիկ Ծառուկեան, «Թագուհի Շահնագար», *Նայիրի*, 8 Մարտ 1970, էջ 4:

համար Կոստան Չարեանը, որ Ամերիկայէն Իտալիա կու գայ նաևով, իր նոր գտած ... ամերիկացի կնոջ հետ¹⁸:

Ճառուկեան իր այս այցելութեան մասին կը խօսի նաեւ աւելի ետք՝ 1983ի «Անցորդը եւ իր ճամբաները» յուշապատումին մէջ, ուրկէ ի յայտ կու գայ, թէ Թագուհի Շահնագարին այցելած է իր դստեր՝ Նուարդ Չարեանին ծանօթանալու նպատակով: Ծառուկեան, թէեւ Ն. Չարեանին հանդիպելու հնարաւորութիւնը ունեցած չէ, սակայն ջերմ տպաւորութիւններով կը խօսի Չարեանի առաջին կնոջ՝ Թագուհիի մասին. «Յրեշտակային» մակդիրը պիտի պատշաճէր իրեն, եթէ վերացական եւ օդային բառ մը չըլլար: Եւ արդէն, պէտք է բառեր փնտռել, կամ ստեղծել, այդ բացառիկ կինը հաւատարմօրէն նկարագրելու համար»¹⁹: Նոյնիսկ զայն կը համեմատէ Չարեանին հետ. «Նժարին մէջ եթէ դնենք Կոստան Չարեանի գրական տաղանդը, եւ միւս նժարին մէջ այս կնոջ սիրտը, ո՞ր մէկը աւելի ծանր պիտի կշռէ արդեօք...»²⁰: Այդ կնոջ նկատմամբ այնքան մեծ կ'ըլլայ Ծառուկեանի համակրանքը, որ չ'ուզեր հանդիպիլ ամերիկացի կնոջ մը հետ ամուսնացած Չարեանին. «Ես, նորօրեայ Տօն Քիշոթ, մտածումով տէր կը կանգնէի դատի մը, ուր, անիրաւեալը ինք դատ չունէր եւ հաշտուած էր կացութեան հետ, բայց ինծի կը թուէր, որ երբ Չարեանը տեսնեմ, պէտք է որ Թագուհիին պոռթկայ իմ մէջէս...»²¹: Այդ հանդիպումէն ետք բարեկամութիւն մը կը հաստատուի Ծառուկեանի ու Շահնագարի միջեւ: Վերջինս, «Թ. Չ.» ստորագրութեամբ, քանի մը յօդուածներով կ'աշխատակցի «Նայիրի»ին՝ «Հայաստանի երաժշտանոցին մէջ Ռոմանոս Մելիքեանի հետ աշխատած օրերէն, քաղցր յուշերով եւ յուզիչ դրուագներով»²²:

Չարեանի Իտալիոյ հասցէին²³ ուղղուած Ծառուկեանի երկրորդ նամակը, որ մեզի հասած է եւ զոր կը հրատարակենք ստորեւ, թուագրուած է 24 Դեկտեմբեր 1948: Յայտնի է, որ Ծառուկեանին ուղղուած 4 Դեկտեմբեր 1948 թուակիրով մը, զոր չենք տեսած, Չարեան իր վրդովմունքը կը յայտնէ կարգ մը հարցերու շուրջ եւ ետ կը պահանջէ «Սրտի ճանապարհով»ին ձեռագիր բնագիրը: Ինչպէս նախորդ նամակին մէջ տեսանք, Ծառուկեան Չարեանէն գիրք մը տպելու պատրաստակամութիւնը յայտնած էր: Չարեանի նամակին հիմամբ կրնանք ենթադրութիւններ ընել երկու գրողներուն միջեւ ծագած վեճին պատճառներուն վերաբերեալ:

¹⁸ Անդ: Ի դէպ, Չարեան իր ամերիկացի կինը «նոր գտած» չէր, քանի որ անոնց մտերիմ կապը կ'երթար մինչեւ 1929 (Վարդան Մատթէոսեան, *Կոստան Չարեանի շուրջ*, Անթիլիաս, 1998, էջ 284):

¹⁹ Ծառուկեան, «Թագուհի», էջ 4:

²⁰ Անդ:

²¹ Ծառուկեան, *Մեծերը*, էջ 289:

²² Ծառուկեան, «Թագուհի», էջ 4:

²³ Mr. C. Zarian, Via S. Vito, 52, Forio d'Ischia – Italia.

Ծառակեանի առաջին նամակէն ետք, որով Չարեանէն գիրք մը տպագրելու պատրաստակամութիւն յայտնուած էր, Չարեան Ծառակեանին ուղարկած պետք է ըլլայ «Սրտի ճանապարհով» ընդարձակ վիպերգը՝ հատորի ձեւով հրատարակուած տեսնելու ակնկալութեամբ: Ինչպէս տեսնուեցաւ սակայն, այս քերթընդուն հատուածներ միայն տպագրուած են *Նայիրի* մէջ: «Իսկ ինչ կը վերաբերի ձեր պօսեմին տպուած հատուածներուն «Նայիրի»ի մէջ, յայտնեմ իսկոյն, թէ առանց առարկութեան եւ մեծ հաճոյքով պիտի ուզեմ վճարել այն գումարը որ պահանջէք»: Ծառակեան մեղմելու համար Չարեանի բարկութիւնը, կու տայ հետեւեալ պատճառաբանութիւնը. «Իմ ամբողջ մտահոգութիւնս եղած էր Չարեանէն էջեր տպել «Նայիրի»ի մէջ»: Ծառակեանի այս բացատրութիւնները մեր ենթադրութիւնը հիմնաւոր կը դարձնէ, թէ «Սրտի ճանապարհով» վիպերգը ուղարկուած էր բացառաբար գրքի մը ձեւով տպագրուելու համար, սակայն պոռնը «ներկայ ծաւալով, եւ մանաւանդ վերջին մասին յաւելումով, կ'ըլլայ կրկինը», մինչդեռ խօսքը 60 էջնոց գրքոյկի մը տպագրութեան մասին էր: Չարեան վրդոված է նաեւ այն պատճառով, որ Ծառակեան անպատասխանի ձգած է նամակ մը. այս առթիւ Ծառակեան գրած է. «Ձեզմէ որեւէ նամակ չեմ ստացած՝ որուն անմիջապէս պատասխանած չըլլամ»: Հաւանական է Չարեանէն անպատասխանի մնացած (կամ՝ Ծառակեանի պատասխանը իրեն չհասած) նամակի մը գոյութիւնը: Այդ նամակով, հաւանաբար, Չարեան առարկութիւն ըրած է «Սրտի ճանապարհով»ին տպագրութեան, քանի որ նշեալ քերթուածի *Նայիրի*-ին մէջ հրատարակութիւնը դադարած կը տեսնենք ամսագրի Յուլիս 1948ի 5րդ թիւէն ետք: Անշուշտ, այս ենթադրութիւնները կրնան հերքուիլ կամ հաստատուիլ այն ժամանակ միայն, երբ երեւան գան Չարեանի Ծառակեանին ուղղուած 4 Դեկտեմբեր 1948 թուակիր եւ այլ նամակները:

Ի դէպ, կ'արժէ նշել, որ Չարեան այս գործը սկսած էր գրել իր հայաստանեան տարիներուն (1922-1924), ինչպէս վկայած է «Անցորդը եւ իր ճամբան»ի մէջ, եւ կը պատկանէր իր փայփայած «համադիւցազներգութեան» սեռին.

Ամէն մի պոռնա կապուած է երկրի հետ, որովհետեւ երկնքից է գալիս:

Գնացքը ճիթմ է, ուստի՝ մեծ թռչունի նման թեւարկում է:

Հայաստանում» պոռնան համայնադիւցազներգական աշխարհագրա-ցումի առաջին արտայայտութիւնն է: Երկինքը եռանկիւնի է, դաշտը ուր եւ պատկերը ծեփուած է խմորի նման²⁴:

Անոր ակնարկած էր 2 Դեկտեմբեր 1944ին, Բենիամին Նուրիկեանին թուարկելով իր գլխաւոր գործերը.- «(...) «Հայաստանում» պոռնան, որի երկրորդ եւ երրորդ մասերը լրացած են հիմա եւ, յուսամ, լոյս պիտի տեսնեն (...)»²⁵:

²⁴ Կոստան Չարեան, *Երկեր*, Անթիլիաս, 1975, էջ 95:

²⁵ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Չարեան եւ Բենիամին Նուրիկեան. նամականի», *Բագին*, 3, 1997, էջ 123:

Առաջին մասը լոյս տեսած էր *Հայրենիք* ամսագրին մեջ, 1925ին²⁶: Իսկ *Նայիրի* մեջ հատուածաբար լոյս տեսած երկրորդ ու երրորդ մասերէն ետք, ամբողջութիւնը անտիպ մնացած է ու այս իսկ պատճառով «համադիւցագներգական» բնոյթին քննարկումը կը մնայ ապագայի գործ: Վազգէն Գաբրիէլեանը հարեւանցի անդրադարձ մը կատարած է.-

(Չարեանի. Վ.Մ., U.S.) տեղը հայրենիքն է, իր գործը՝ երկիրը փառաբանելը: Պատերազմից յետոյ այսպիսի տրամադրութիւնները նրա գործերում աւելի են շատանում: Պատահական չէր, որ 1948 թ. Չարեանը լոյս ընծայեց 1925 թ. գրած «Սրտի ճանապարհով» բանաստեղծութիւնների շարքը, որոնք գրուել էին Խորհրդային Հայաստանում ապրած տարիներին եւ որոնք «նոր կերտուող այս Հայաստանի» մասին հիացումի եւ հաւատի խօսքեր էին²⁷:

Խնդրոյ առարկան վիպերգ էր (պոէմ) եւ ո՛չ թէ «բանաստեղծութիւնների շարք»: Բայց ամենէն կարեւորը այն է, որ կարելի չէ հրատարակուած բաժինները «նոր կերտուող այս Հայաստանի» հանդէպ անվերապահ «հիացումի եւ հաւատի խօսքեր» համարել: Այս իմաստով, բնորոշ է հետեւեալ հատուածը, որ Չարեանի գրականութեան ծանօթ թեմաներէն մէկն է.

Իսկ բանաստեղծը լսում է, ասում.

(...) Կառուցել, այո, հնարել...

Արիւնիդ թափը տալ, հրկիզուել

Դարերով ձեզ սպասող տեսիլքով,

Նոր մարմին որոնող երագով –

Այո, այո, ձեզ հետ են ձեռքերը իմ յուզուած...

Բայց լինել, խորհրդից եւ կամքից պարպուած,

Թիւերի գորշ քանակ, լուռ մի ստրուկ

Ու հոգի յոգնաբեկ՝

Խուզարկուած աչքերով ոստիկան եւ ստրուկ –

Այո երբեք, այո երբեք...

Եթէ մարդ –ստեղծագործ աւիւնից իր գրկուած-

Տէրը չէ իր մտքի, տէրը չէ դնդերի իր լարուած,

Եթէ չէ՝ ըմբոստ երգ դաշնակող,

Արարիչ եւ կերտող,

Եթէ չէ անկաշկանդ արխիտեքտ –

Ո՞ւմ է պետք

Տնտեսուած բանտը այդ պարտադիր երագի

Անուրախ, վշտալի²⁸:

²⁶ Կոստան Չարեան, «Հայաստանում», *Հայրենիք* ամսագիր, Նոյեմբեր 1925:

²⁷ Վազգէն Գաբրիէլեան, *Սփիւռքահայ գրականութիւն*, Երեւան, 1987, էջ 353:

²⁸ Չարեան, «Սրտի», էջ 4:

Կոստան Չարեան աւելի ուշ նաեւ փայփայած է Միջին Արեւելքի մէջ բանաստեղծութիւններու ժողովածու մը տպագրելու ցանկութիւնը: Գահիրէի *Յուսարթ* օրաթերթի խմբագիր Վահան Նաւասարդեանի որդին՝ Բեզլար Նաւասարդեանը, Չարեանին ուղղուած 3 Ապրիլ 1950ի նամակով հաւանութիւն կու տայ հեղինակին այն խնդրանքին, որ իր հատորը տպագրուէր Գահիրէի մէջ²⁹: Հատորը պիտի բաղկանար բանաստեղծութիւններէ³⁰ եւ պիտի ունենար 300-350 էջի ծաւալ³¹: Չարեան ստանալով *Յուսարթ*ի հաւանութիւնը հաւաստող Նաւասարդեանի նամակը՝ նման հատորի մը տպագրութեան շուրջ, օրակարգի կը բերէ երկու տարի առաջ Ծառուկեանի հետ ունեցած իր անհամաձայնութիւնը: Այս մասին կը կարդանք Նաւասարդեանի Չարեանին յղած նամակէն. «Եւ յանկարծ, չգիտես որտեղից, միտքս ընկաւ Ծառուկեանը: Լեղիս պատռեց: Չ՞ որ դուք նրա մասին ձեր առաջին նամակի մէջ գրել էիք. «Այդ Ծառուկեան կոչուած մարդը անկողնէկտ մի անձնաւորութիւն դուրս եկաւ»³²: Չարեան Նաւասարդեանին ուղղուած նամակին մէջ հարցուցած ըլլալու է, թէ ինչո՞ւ Ծառուկեանի նման անձնաւորութիւն մը կայ Յ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ եւ թէ կարելի է նմաններուն «գծի բերել». «Ինչ վերաբերում է Ծառուկեանի նման մարդուն «առնել մեր կուսակցութեան մէջ» դրան ես անշուշտ չեմ կարող հանգամանօրէն պատասխանել, բայց ձեզ անծանօթ չի կարող լինել այն պարագան, որ գաղթաշխարհում չեն վիստում հայ կարող, լուրջ, ճշմարտօրէն հայրենասէր մարդիկ: Այստեղ էլ ի վերջոյ սով կայ: Ունեցածիդ վրայ գուրգուրալը դարձել է սրբազնագոյն պարտականութիւն: Նաեւ «գծի բերելու» միջոցներն էլ այն չեն ինչ որ կը լինէին եթէ մենք ապրէինք մեր ազատ ու սեփական հայրենիքում ուր ունենայինք կառավարութիւն ու պատկան իշխանութիւններ»³³:

Չարեանի եւ Ծառուկեանի միջեւ գրքոյկի մը հրատարակութեան ու «Սրտի ճանապարհով»ի *Նայիրի*ի մէջ տպագրութեան առթիւ ստեղծուած այս տհաճ իրավիճակը պիտի չխանգարէր երկու հեղինակներուն միջեւ ստեղծուած համեմատաբար ջերմ յարաբերութեան, որ հաստատուեցաւ Կոստան Չարեանի Պէյրութ գտնուած տարիներուն եւ հետագային ալ՝ Հայաստանի մէջ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ (1951-1954)

19 Հոկտեմբեր 1951ին Կոստան Չարեան իր ամերիկացի կնոջ ու զաւակին՝ Յովանին հետ, Իտալիայէն կը տեղափոխուի Լիբանան: Այս տեղափոխութիւնը խանդավառութիւն կը ստեղծէ Պէյրութի գրական շրջանակներէն ներս: Մանա-

²⁹ ԳԱԹ, Կոստան Չարեանի ֆոնտ, թիւ 73:

³⁰ Արծրուն Աւագեան, *Կոստան Չարեան. կեանքը եւ գործը*, Երեւան, 1998, էջ 51:

³¹ ԳԱԹ, Կոստան Չարեանի ֆոնտ, թիւ 73:

³² Անդ:

³³ Անդ:

լանդ երիտասարդներ անհամբերութեամբ կը սպասէին ուշացած այս այցելութեան, եթէ նկատի առնենք անկէ առաջ Չարեանի Լիբանան երթալու չիրականացած խոստումները:

Չարեանին դիմաւորելու համար նաւամատոյց փութացած են Անդրանիկ Ճառուկեան, Եղուարդ Պոյաճեան, Մուշեղ Իշխան, *Ազդակ*էն Տիգրան Ոսկունի, մինչ Կարօ Սասունի «որ Եգիպտոս կը գտնուի... կրկին ու կրկին պատուիրած է մեզի որ յայտնենք իր «բանաւոր բացակայի» պարագան»³⁴:

Չարեանի Լիբանան այցելութիւնն ու կեցութիւնը կ'ողջունուին տեղւոյն մամուլին կողմէ: *Ազդակ* օրաթերթի առաջին էջին վրայ լուսանկարով մը կը տպագրուին «Կոստան Չարեանին պատգամը»³⁵, ինչպէս նաեւ «Մեր տեսակցութիւնը մեծանուն գրագէտին հետ» խորագրեալ հարցազրոյց մը³⁶:

Անդրանիկ Ճառուկեանի ոգեւորութիւնը ակնյայտ կ'երեւի նաեւ իր կողմէ երեք տասնամեակ ետք գրի առնուած «Մեծերը եւ... միւսները» շարքէն Կոստան Չարեանին նուիրուած «Անցորդը եւ իր ճամբաները» յուշագրութեան մէջ: «Եկաւ: Եկան: Լիառողջ ու կայտառ, փառաւոր մարդ մը, բարձրահասակ, յաղթանդամ, առիւծի գլուխ մը, սպիտակ առատ մազերով»³⁷: Նաւամատոյցէն զինքը անմիջապէս կ'առաջնորդեն Պէրլուի «Փանսիոն Աննա» պանդոկը՝ «իրենց վերապահուած տեղը»³⁸: Պանդոկէն բաժնուելէ առաջ Ճառուկեան Չարեանին խորհուրդ կու տայ այցելել գրեթէ մահամերձ Լեւոն Շանթին (մահացած՝ 29 Նոյեմբեր 1951ին) ու Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոսին (մահացած՝ 21 Յունիս 1952ին): Ճառուկեանի ընկերակցութեամբ, Չարեան առաջին այցելութիւնը կու տայ Լեւոն Շանթին: Շանթ լսած էր Չարեանի ժամանումը եւ կը սպասէր այս այցելութեան: Չարեան ու Շանթ, Ճառուկեանի վկայութեամբ, կը գրուցեն կենցաղային նիւթերէ: Շանթէն բաժնուելով կ'երթան Անթիլիաս՝ այցելելու Գարեգին Յովսէփեանց կաթողիկոսին: «Աթոռ մը բերած են եւ Չարեան նստած է բարձին կողմը, աւելի մօտէն լսուելու համար Վեհափառէն, որուն ականջը, արդէն ծանր, դժուարութիւն ունի լսելու: Կը խօսին Ամերիկայէն, յուշեր կը պատմեն»³⁹: Չարեան Գարեգին Կաթողիկոսի հետ այս տեսակցութեան մասին պատմած է Վեհափառի մահուան առթիւ գրած իր մահախօսականին մէջ. «Ապա նրան տեսայ Անթիլիասում: Հիւանդ, անկողնում պառկած, ձեռքերը գունաթափուած, այտերը ներս ընկած, փոքրացած, բարձերի մէջ կորած: ...Աչքերը աւելի զարմացած, քան երբեք, խօսքերը՝ շփոթ: Երեխայացած»⁴⁰: Հանդիպման

³⁴ Ճառուկեան, *Մեծերը*, էջ 262:

³⁵ Կոստան Չարեան, *Նաւատունար*, Երեւան, 1998, էջ 464 (հրատարակուած՝ «Պատգամ» խորագրով):

³⁶ Անդ, էջ 635:

³⁷ Ճառուկեան, *Մեծերը*, էջ 262:

³⁸ Անդ:

³⁹ Անդ, էջ 269-270:

Ժամանակ Գարեգին Կաթողիկոս դիմելով Չարեանին կ'ըսէ. «Ինձ մօտ գալու համար վատ առաջնորդ ես ընտրել, Չարեան, երեւի չգիտես թէ նա շէֆ աւագակ է...» (...) ճամբան Չարեանը կ'ուզէ իմանալ շէֆ աւագակին պատմութիւնը»: Խորհրդահայ կուսակցական քննադատ Յրաչեայ Գրիգորեան քանի մը տարի առաջ *Սովետական Հայաստան* ամսագրին մէջ յօդուած մը ստորագրած էր Ծառուկեանի ու *Նայիրի* ամսագրին դէմ՝ Ծառուկեանը կոչելով «շէֆ աւագակ»⁴¹: «Չարեան կը պատասխանէ. «Ոչինչ մարդ»: Բայց չի գիտեր թէ այդ «ոչինչ մարդը» օր մը ինչ փորձանք պիտի բերէ իր ալ գլխուն»⁴²: Այդ օր Չարեան եւ Ծառուկեան կը գրուցեն Գարեգին Կաթողիկոսի մասին, իսկ Ծառուկեան կը պատմէ իր յուշերը Վեհափառէն: Յունիս 1952ին Գարեգին Վեհափառ կը վախճանի: Չարեան իր ցաւակցութիւնը կը յայտնէ հեռագրով մը. «Վեհափառի մահը ամբողջ հայ ժողովուրդը ցնցեց, որովհետեւ նա աւելի ոգի էր, քան մարմին: Կ. Չարեան»: Կը գրէ նաեւ մահախօսական մը՝ «Վեհափառը», որ, յիշեալ ցաւակցական հեռագրին հետ, կը տպագրուի *Հասկի* Գարեգին Յովսէփեանցին նուիրուած բացառիկին մէջ (թիւ 7-8-9, 1952)⁴³:

Ինչպէս բնորոշ է Ծառուկեանի այս յուշապատումին, Չարեան ընդհանրապէս կ'երեւի մտերմիկ կեանքով՝ իր խօսքով, իր պարով, կիներու հետ, կապելաներու մէջ: «Իր գրականութեան հանդէպ մեր հիացումը կը մնայ անաղարտ, բայց մարդը կորսնցուցած է հեռուներէն մեզի ներշնչած հմայքը: Կամաց կամաց կը տեսնենք թէ իր մէջ անհատը հականիշն է իր տաղանդով մեր մէջ կազմուած պատկերին»⁴⁴: Ծառուկեանի ու Չարեանի մտերմութեան մէջ գրչի եղբայրութենէ կամ գրական յարաբերութենէ աւելի ընկերային կամ կենցաղային կապ մը ակնյայտ է, առնուազն՝ Ծառուկեանի յուշագրութենէն փոխանցուած զգացողութեամբ: Չարեան լիքանահայ երիտասարդ գրողներուն կամ մտաւորականներուն հետ ժամանակ կ'անցընէ ոչ այնքան գրական խնդիրներ քննարկելու, անոնց մշակած գրականութեամբ հետաքրքրուելու, որքան Դէյրութի մէջ առանձին չմնալու մտահոգութեամբ: «Եւ սակայն Չարեանը Չարեանն է, մեծութիւն մը»⁴⁵. Ծառուկեան միշտ ալ կը պահէ մեծ յարգանք ու համակրանք թէ՛ Չարեանի անձին եւ թէ անոր գրականութեան նկատմամբ: «Անցորդը եւ իր ճամբաները» պատումը ո՛չ միայն վկայութիւնն է Չարեանի պէյրութեան օրերուն, այլ նաեւ Ծառուկեանի յիշեալ համակրանքին գրաւոր մէկ արտայայտութիւնը:

⁴⁰ Չարեան, *Նախառոմար*, էջ 466-467:

⁴¹ Յրաչեայ Գրիգորեան, «Դաշնակ վարձկանների ծախու օրգանը («Նայիրի» ամսագիր գրականութեան եւ արուեստի, 1947 թ., № 1-2-3-4-5-6)», *Նայիրի*, Օգոստոս-Սեպտեմբեր 1948, էջ 506-512. հմմտ. *Սովետական Հայաստան*, թիւ 6, 1948:

⁴² Ծառուկեան, *Մեծերը*, էջ 271:

⁴³ Չարեան, *Նախառոմար*, էջ 635-636:

⁴⁴ Ծառուկեան, *Մեծերը*, էջ 281:

⁴⁵ Անդ, էջ 283:

Ծառուկեանի վկայութեամբ կը տեղեկանանք Չարեանի Պէյրուքի Ամերիկեան Համալսարանին մէջ դասախօսելու հանգամանքներուն: Այսպէս, համայնքը դիմում մը կը կատարէ Համալսարանի վարչութեան եւ կը խնդրէ, «որպէսզի ամպիոն մը տրուի իրեն, որպէս արուեստներու եւ հայագիտութեան դասախօս»⁴⁶: Այս առթիւ Վահէ Սէթեան «յանձն կ'առնէ, երկու տարուան համար տարեկան երեք հազար տոլար տրամադրել համալսարանին եւ Չարեան կը հրաւիրուի դասախօսելու»⁴⁷: Այս տողերէն յայտնի է, որ համայնքի վարիչներուն ու բարերարներուն ջանադրութեամբ է որ բացուած է հայագիտական ամպիոնը համալսարանէն ներս: Միւս կողմէ Կոստան Չարեան կը գրէ իր պէյրուքեան «Նաւատոմար»ին մէջ. «Վաղը հայերը պիտի ուրանան, որ են ստեղծեցի Հայ մշակոյթի պատմութեան ամպիոնը A.U.B.-ում, որ ինձանից առաջ այս մասին երեւակայել իսկ չէր կարելի...»⁴⁸: Ի հարկէ, այս հաստատումը ճշմարտութեան որոշ բաժին մը ունի, քանի որ Չարեանի ներկայութենէն առաջ, Պէյրուքի մէջ բարձրագոյն կրթութեան տիրացած, անգլերէն դասաւանդելու եւ նիւթին քաջատեղեակ երրեակ յատկանիշներով օժտուած անձ մը չկար, չհաշուելով Չարեանի անմիջական փորձառութիւնը՝ 1946-47ին Նիւ Եորքի մէջ անգլերէն ու ֆրանսերէն լեզուներով հայ մշակոյթի պատմութիւն դասաւանդած ըլլալը:

Ամերիկեան համալսարանի ամպիոնը հետագային պիտի փակուէր սակայն «...գիտեմ թէ Չարեանի ոչ-լուրջ եւ անյարատել ընթացքին պատճառով կորսընցուցինք այդ դարաւոր հաստատութենէն ներս հայագիտական մնայուն ամպիոն մը ունենալու պատեհութիւնը...»⁴⁹: Այս ամպիոնի հիմնադրութեան հարցին, փակումին պատճառներուն եւ Չարեանի դասախօսական ձեռնհասութեան հարցերը, ինչպէս եւ յարակից խնդիրներ, յաւելեալ քննութեան կը կարօտին եւ դուրս են այս յօդուածին նպատակէն: Բայց, այսուամենայնիւ, Ծառուկեանի հաղորդած տեղեկութիւններէն կարելի է եզրակացնել, թէ Չարեան Լիբանան չէր եկած Պէյրուքի Ամերիկեան համալսարանին մէջ դասախօսելու յատուկ առաքելութեամբ, ինչպէս կը գրէ Եուրի Խաչատրեան *Նաւատոմար* հատորի ծանօթագրութիւններուն մէջ («...Կոստան Չարեանն ընտանիքով գալիս է Բէյրութում հաստատուելու, ուր պէտք է դասախօսութիւններ կարդար Ամերիկեան համալսարանում») ⁵⁰:

Չարեան Պէյրուքի մէջ կը մասնակցի նաեւ գրական երեկոյթներու: Իր պատումին մէջ, Ծառուկեան Մաննիկ Պերպերեանին նուիրուած գրական հաւաքոյթի մը նկարագրութիւնը կ'ընէ, որու գլխաւոր բանախօսը ինք եղած է, իսկ

⁴⁶ Անդ:

⁴⁷ Անդ:

⁴⁸ Չարեան, *Նաւատոմար*, էջ 488:

⁴⁹ Ծառուկեան, Մեծերը, էջ 284:

⁵⁰ Չարեան, *Նաւատոմար*, էջ 635:

Չարեանն ալ գտնուած է հանդիսականներուն շարքին, Շահան Պերպերեանի կողքին: Ծառուկեան, իր բանախօսութեան ընթացքին, Մաննիկ Պերպերեանի արձակ բանաստեղծութիւնները վերլուծելու առընթեր անդրադարձ կը կատարէ նաեւ Չարեանի քառուկներուն ու մեջբերումներ կ'ընէ հեղինակի «Սրտի ճանապարհով» քերթուածէն: Այդ առթիւ փոքր վէճ մը կը ծագի Չարեանի ու Ծառուկեանի միջեւ. «Իմ քերթուածս լրիւ չկարդացիր, ուրիշ քառուկներ ալ կան»⁵¹, կը բողբէ Չարեան: Ծառուկեան կը փորձէ պաշտպանուիլ, սակայն Չարեան կը շարունակէ հակաճառել. «Ի՞նչ տեսակէտ... դու ոչինչ էլ չասացիր արձակ բանաստեղծութեան մասին: Ինքն էլ մի արձակ բանաստեղծութիւն կարդացիր, ոչինչ չասելու համար»⁵²: Շահան Պերպերեանի հեղինակաւոր միջամտութեամբ վերջ կը գտնէ այս անհաճոյ կացութիւնը: Չարեան Պէրոլթի մէջ մասնակից կ'ըլլայ նաեւ Պետրոս Դուրեանին նուիրուած գրական հաւաքոյթի մը:

Ծառուկեանին Չարեանի Պէրոլթի տարիներուն վերաբերեալ յիշատակները այսքանով կը սահմանափակուին: Իր յուշատետրէն հասկնալի կը դառնայ, որ Չարեան այնքան ալ տպաւորուած չէ իր պէրոլթեան օրերէն եւ կ'ուզէ ժամ առաջ բաժնուիլ այդ քաղաքէն: 1954 թուականին ան կը լքէ Պէրոլթը՝ երթալ հաստատուելու համար Եւրոպա:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷջ

Կոստան Չարեան եւ Անդրանիկ Ծառուկեան Հայաստանի մէջ կ'ունենան երկու հանդիպումներ. առաջինը՝ հաւանաբար 1963ին, երկրորդը՝ 1969ին:

Չարեան երկար տարիներ բազմաթիւ երկիրներու մէջ տարագիր ապրելէ ետք 1962ին վերջնականօրէն կը փոխադրուի Երեւան:

Ծառուկեան Պէրոլթէն ետք չէր հանդիպած Չարեանին, նամակագրական կապ մըն ալ չէն ունեցած ըստ երեւոյթին. «Շուրջ տասը տարի լուր չունեցայ Չարեանէն, մինչեւ որ օր մը իրար գտանք Երեւանի մէջ»⁵³: Թէ Ծառուկեան, թէ Չարեան այդ շրջանին կը մնային «Արմենիա» պանդոկին մէջ, ուր ալ կը հանդիպէին իրարու: Միասնաբար անգամ մըն ալ կը գրուցեն Հրաչեայ Գրիգորեանին մասին եւ Ծառուկեան Չարեանին կը յիշեցնէ Գարեգին Կաթողիկոսին այցելութեան ատեն իրենց ունեցած գրոյցը՝ 1951 թուականին, եւ «շէֆ աւագակ»ի պատմութիւնը: *Նաւը լերան վրայ*ի երկրորդ տպագրութեան օրերն էին, երբ Հրաչեայ Գրիգորեան խմբագիր կարգուած էր երեւանեան հրատարակութեան, որուն ճակատագիրը ծանօթ է: Ծառուկեան ու Չարեան միասին կը քալեն Երեւանի մէջ,

⁵¹ Ծառուկեան, *Մեծերը*, էջ 285:

⁵² Անդ, էջ 292:

⁵³ Ծառուկեանի ու Չարեանի վերջին հանդիպման մասին ունինք երեք վկայութիւններ. Ա. Ծառուկեան, «Կոստան Չարեան», *Նայիրի*, 28 Դեկտ. 1969, էջ 17. Ծառուկեան, *Մեծերը*, էջ 298-301. Թորոս Թորանեան, *Գիրք որդիական*, Յալէպ-Պէրոլթ, 1980, էջ 161:

կ'այցելեն սրճարան մը, կը խօսին Խորհրդային Չայաստանի գրական կեանքին մասին...

Ճամուկեանի ու Չարեանի վերջին հանդիպումը կը կայանայ 1969ի Մայիսին, Չարեանի մահէն քիչ առաջ: Ալեգարոզ գրագետը արկածի մը հետեւանքով ոտքը կոտրած է, անկողնոյ կը ծառայէ եւ Ճամուկեան, Թորոս Թորանեանի ընկերակցութեամբ, կ'այցելէ իրեն: Կը զրուցեն, Չարեան Կոմիտասին աճիւնները Չայաստան տեղափոխելու առթիւ գրուած իր քերթուածէն քանի մը տող կը գրէ ու կու տայ Ճամուկեանին, վերջինիս խնդրանքով, որպէս յիշատակ: Կը բաժնուին, այս անգամ վերջնական կերպով: Չարեանի մահուան առթիւ, Ճամուկեան *Նայիրիի* մէջ անգամ մը եւս կը տպագրէ 1935 թուականին գրուած ու Կոմիտասին նուիրուած քերթուածը՝ Չարեանի հետ վերջին հանդիպման ժամանակ առնուած ձեռագրին նմանահանութեամբ միասին, ու կը գրէ մահախօսական մը. «Մեծերէն էր: Իրմով՝ Չայ Գրականութիւնը անձանօթ հորիզոններու տազնապը զգաց եւ տարաշխարհիկ ապրումներու սարսուռը: Շատ պիտի գրուի իր մասին, եւ աւելի շատ պիտի կարդացուին իր գործերը»⁵⁴:

Ճամուկեան Չարեանի մահուան առթիւ գրուած այս տողերով գալիքն ալ կը գուշակէր մասամբ, երբ կ'ըսէր, թէ աւելի շատ պիտի կարդացուին իր գործերը, քան թէ պիտի գրուի անոնց մասին: Ու դիպուկ կերպով պիտի բանաձեւէր, 1983ին, անոր կարգավիճակը հայ գրականութեան պատմագրութեան մէջ.

Սփիւռքի կշիռքները հազիւ Շահնուր կամ Ռրբունի կրնան վերցնել: Չարեան կամ Օշական փորձեն՝ կշիռքը կը կոտրի: Անկարողութիւնը տկարութեան վիճակ մըն է, մեղք մը չէ:

Բայց բոլորովին անհասկնալի կը մնայ Չայաստանը, ուր (...) աւելի քան զարմանալի է Կոստան Չարեանի շուրջ այս անտարբերութիւնը, որ քիչ մը կը նմանի «լռութեամբ դաւադրելու» կերպի մը⁵⁵:

Բարեբախտաբար, Չարեանի շուրջ մասնագիտական լռութիւնը խզուած է վերջին տարիներուն, թէ՛ Չայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Պէտք է մաղթել, որ Ճամուկեանը եւս կ'արժանանայ նոյն վերաբերումին:

⁵⁴ Ճամուկեան, «Կոստան», էջ 17:

⁵⁵ Ճամուկեան, Մեծերը, էջ 261-262:

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ⁵⁶

Հայլեպ, 26 Յուլիս 1947

Սիրելի Չարեան,

Բազմաթիւ առիթներով⁵⁷ եւ գանազան հասցէներով գրած եմ ձեզի (ճամբորդի հետ, Վրացեանի միջոցով, «Հայրենիք»ի հասցէով), բայց այս առաջին նամակն է որ կը գրեմ ուղղակի ձեր հասցէին: Հասցէն կը պարտիմ Վրացեանին: Յուսամ թէ այս անգամ աւելի բախտաւոր դուրս կու գայ նամակս եւ կը ստանայ պատասխան մը: Նուազ տաղտուկ պատճառներու համար՝ փորձեմ դասաւորել ըսելիքներս:

1. Հիացող մըն եմ ձեր գրականութեան վրայ: Գիտեմ թէ ճշմարիտ արուեստագէտին համար—մանաւանդ ձեզի համար—այնքան ալ նշանակութիւն չունի՝ թէ ով կը հիանայ իր վրայ եւ ով չի հիանար: Այսուհանդերձ, պարտք էր ինձ գրել ասիկա, մանաւանդ որ «Նայիրի»ի լրիւ հաւաքածոները ապացոյց են ըսածիս: (Ղրկած եմ ձեզի, օրիորդի մը հետ⁵⁸ եւ Ս. Վրացեանի հասցէով):

2. Ձերմապէս կը խնդրեմ ձեզմէ որ փութացնէք ձեռագիր մը՝ «Նայիրի»ի համար, ինչպէս եւ լուսանկար մը: Պիտի ցաւէի, եթէ առաջին կէտով ըրած յայտարարութիւնս... բարեխօսութիւն նկատէիք այս կէտի համար: Շուտով բացառիկ թիւ մը պիտի հրատարակենք եւ կատարեալ հրճուանք մը պիտի պատճառէք ինձի՝ եթէ այդ թիւը բացուի ձեր անտիպ մէկ գործով ու պատկերով: Չանձրացայ... Չարեան արտատպելէ: Այս թիւն իսկ—որ մամուլի տակ է—կը բացուի ձեզմով, անշուշտ, արտատպում:

3. Մեծապէս շահագրգռուած ենք նաեւ ձեր *անձով*: Ձեր այժմու կեանքին եւ զբաղումներուն մասին եթէ քանի մը նօթեր դրկէք՝ երախտապարտ կը մնամ: Կ'օգտագործուին ուսումնասիրութեան մը մէջ:

4. Գրական համագումարի⁵⁹ աշխատանքները առաջ կը տարուին լրջու-

⁵⁶ ԳՎԹ, Կ. Չարեանի ֆոնտ, թիւ 43:

⁵⁷ Այս շրջանին Անդրանիկ Ծառուկեան նամակներ յղած է նաեւ Արամ Հայկազին (26 Յուլիս 1947, ԳՎԹ, Արամ Հայկազի արխիւ, թիւ 211), Համաստեղին (24 Յուլիս 1947, ԳՎԹ, Համաստեղի արխիւ, թիւ 132): Նամակագրութեան տուն տուող պատճառները կազմակերպելի Գաղութահայ Գրողներու Համագումարին մասնակցելու ու *Նայիրի*ի աշխատակցելու հրաւերն էր, ինչպէս նաեւ *Թուղթ առ Երևան* գրքոյկի առաքումը:

⁵⁸ Այս նոյն օրիորդին մասին կը խօսուի նաեւ Համաստեղին ուղղուած 24 Օգոստոս 1947 թուակիր նամակին մէջ (ԳՎԹ, Համաստեղի արխիւ, թիւ 132): Այն Թիւրքիայէն հետ Ծառուկեան *Նայիրի*-ներ ուղարկած է նաեւ Համաստեղին:

⁵⁹ Գաղութահայ Գրողներու Համագումար գումարելու առաջին նկրտումներուն կարելի է հանդիպիլ 27 Սեպտեմբեր-1 Հոկտեմբեր 1946ին կայացած Հայաստանի Գրողներու Միութեան Բ. Համագումարէն անմիջապէս ետք: *Նայիրի*ի մէջ (Յունիս-Սեպտեմբեր 1946, թիւ Ժ.-ԺԹ.) լոյս կը տեսնեն բազմաթիւ յօդուածներ (Անդրանիկ Ծառուկեանի, Մինաս Թէօլեօլեանի եւ այլոց ստորագրութիւններով), որոնք քննադատելով Բ. Համագումարը կոչ կ'ուղղեն Սփիւռքի մէջ եւս գաղութահայ գրողներու միութիւն մը հիմնադրելու եւ այդ ուղղութեամբ կը սկսին համագումար մը կազմակերպելու: Սփիւռքը

թեամբ եւ մինչեւ ամիս մը նախապատրաստական քայլերը առնուած կ'ըլլան: Պաշտօնական հրաւերը կը ստանաք Սեպտեմբերի⁶⁰ մէջ: Անշուշտ որոշ թերթեր դիրք բռնած են եւ ամէն օր կը ցուցադրեն իրենց ... «մտքի թրիքը» (խեղճ Սուրխաթեան...)⁶¹ բայց մեր մամուլը, ամբողջութեամբ, խանդավառ է համագումարով: Կարելի է ըսել, թէ սկսաւ *ժողովրդական* դառնալ համագումարը եւ լայն խաւեր հետաքրքրութիւն ցոյց կու տան:

5. Գրած եմ Վրացեանին – եթէ ուզէք որեւէ հրատարակութիւն ընել այստեղ, սիրով կը ստանձնեմ տպագրութիւնը, առանց որեւէ ծախքի: (Անշուշտ, զանգուլաձեղ գործի մը մասին չէ խօսքը, այլ, «Տատրագում»ին տարողութեամբ գործի մը)⁶²:

6. Անհամբեր՝ կը սպասեմ ձեր... օդային պահարանին: Սիրով եւ յարգանքով՝
Ա. Ճառուկեան

Հալէպ, 24 Դեկտ. 1948

Սիրելի Չարեան,

Այս երկտողը պատասխանն է ձեր 4 Դեկտմբ.ի նամակին, որ ստացայ երէկ: Երբեք չեմ կրնար ես ինծի թոյլ տալ նոյն թօնով պատասխանելու: Կ'ուզեմ ընդգծել միայն, թէ արդար չէ ձեր վրդովումը:

ա. Ձեզմէ որեւէ նամակ չեմ ստացած՝ որուն անմիջապէս պատասխանած չըլլամ: Ընթացիկ քաղաքավարութենէ աւելի, հաճոյք մը ու նոյն ատեն պատիւ մը կը նկատեմ ձեզի հետ թղթակցիլը, հետեւաբար անհետքեր պիտի ըլլար իմ կողմէ նման վերաբերում մը:

բ. Ձեր պօսեմին գալով, կը յիշէք անշուշտ,—ու եթէ պահած էք առաջին նամակս պիտի կրնաք հաստատել—թէ առաջարկս աւելի փոքր ծաւալով գործի մը մասին

այս հարցի շուրջ միասնականութիւն չի ցուցաբերեր: Կարգ մը շրջանակներ հակահայաստանեան նպատակներ կը վերագրեն նման համաժողովի մը եւ կ'արտայայտեն իրենց անհանգստութիւնը: Միջին Արեւելքէն ներս ստեղծուած քաղաքական անկայուն իրավիճակի եւ այլ պատճառներով կարելի չ'ըլլար նման հաւաքում մը, փոխարէնը՝ աւելի սեղմ շրջանակով կը կայանայ Միջին Արեւելքի Հայ Գրողներու Համագումարը 18-20 Սեպտեմբեր 1948ին, Շթորայի մէջ:

⁶⁰ Ճառուկեան 17 Մայիս 1947 թուակիր մեքենագիր նամակներ յղած է Արշակ Չօպանեանին (ԳԱԹ, Չօպանեանի արխիւ, թիւ 3125ա), Ահարոն Տատուրեանին (ԳԱԹ, Տատուրեանի արխիւ, թիւ 65), ինչպէս նաեւ, կ'ենթադրենք, այլ գրողներու՝ որպէս հրաւեր Գաղութահայ Գրողներու Համագումարին: Նման նամակ մը գացած ըլլալու է նաեւ Չարեանին, որուն անունը եւս կը տեսնենք համագումարին մասնակցելու հաւանութիւն տուած գրողներու շարքին (տե՛ս *Նայիրի*, Մայիս 1947, թիւ Դ, էջ 229-231):

⁶¹ Արեւելահայ գրողատ Յարութիւն Սուրխաթեան-Թումանեան (1882-1938)՝ ստալինեան մաքրագործումներու գոհերէն, Թիֆլիսի *Մշակ*ին մէջ քննադատական յօդուած մը ստորագրած է *Մեհեանի* դէմ: Կոստան Չարեան «Անցորդը եւ իր ճամբան» գիրքին մէջ անցողակի նշած է զայն, Սուրխաթեանի գրութիւնը կոչելով «մտքի թրիք» (տե՛ն *Երկեր*, էջ 135):

⁶² Չարեանի *Տատրագումի հարսը* վիպերգը առաջին անգամ տպագրուած է 1930 թուականին, Պոստըն: Կը հաշուէր 68 էջ:

Էր, ոչ ավելի քան 60 էջը: Մինչդեռ իր ներկայ ծավալով, եւ մանաւանդ վերջին մասին յաւելումով, կ'ըլլայ կրկին: Նիւթական հոգը չէ միայն, որ զիս տատամտող կը դարձնէ այս պարագային, այլեւ, այլ մանաւանդ՝ տպագրական ձեր ճաշակին գոհացում չկարենալ տալու մտահոգութիւնը: Շատ գէշ որակով թուղթեր միայն կան այստեղ ու համեմատաբար լաւ թուղթերը անհաւատալիօրէն սուղ են: Ընդհանրապէս լրագրի թուղթ Է որ կը գործածուի: Իսկ ինչ կը վերաբերի ձեր պօժմին տպուած հատուածներուն «Նայիրի»ի մէջ, յայտնեմ իսկոյն, թէ առանց առարկութեան եւ մեծ հաճոյքով պիտի ուզեմ վճարել այն գումարը որ պահանջէք: Ընդհանրապէս, նիւթական հարցերով չէ պատահած, որ վեճ ունենամ որեւէ մէկուն հետ, որովհետեւ ինծի համար նիւթը այնքան արժէք ունի, որքան... նիւթը: Իսկ եթէ ձեր վրդովումը կու գայ այդ հատուածներուն գէշ ընտրութենէն ու գէշ դասաւորումէ մը իմ կողմէ՝ կը ցաւիմ խորապէս: Իմ ամբողջ մտահոգութիւնս եղած էր Չարեանէն էջեր տպել «Նայիրի»ի մէջ: Յամենայնդէպս, կը կարծեմ թէ արդար լուծում մը տրուած կ'ըլլայ այդ խնդրին, երբ պատրաստական եմ *նիւթական* կողմը հատուցանելու եւ *գրական* կողմին համար չքմեղանք ընելու:

Յայտնեմ նաեւ, թէ կարելիութեանս սահմանին մէջ, որեւէ կերպով ձեզի օգտակար ըլլալու փափաքը միշտ կը մնայ մէջս: Եթէ յիշեալ ծավալին մօտիկ գործ մը չունիք, կրնամ փոխանակ ձեզմէ բան մը տպելու, տպել ձեր մասին գրքոյկ մը, Ահարոնեանի ծանօթ ուսումնասիրութիւնը⁶³ կամ կենսագրական այլ գրութիւն մը, նոյնիսկ օտար գրիչներէ, եթէ ունիք: Ջերմ փափաքս Է նաեւ որ կանոնաւորաբար աշխատակցիք «Նայիրի»ին: Կրնաք դուք իսկ որոշել գումարը եւ միջոց մը կը գտնեմ ձեզի փոխանցելու: Այս կողմերը փոթորկած են, ներքին եւ արտաքին պատճառներով: Գրաքննութիւն կայ նամակներու եւ թերթերու: Արտասահմանէն եկած նամակները կ'ուշանան եւ յաճախ կը կորսուին: Պիտի խնդրեմ, որ ինչ ալ դրկէք, անպայման ապահովագրեալ ըլլայ եւ իմ անունովս, փոխանակ «Նայիրի»ի: Նամակատուփը միշտ նոյնն Է – 372:

Միրով եւ յարգանքով՝

Ա. Ճառուկեան

Յ. Գ. Եթէ կը պնդէք պօժմին ձեռագիրը ետ ստանալու մասին, բարի եղէք յայտնելու ու կը դրկեմ ձեզի կամ մատնանշուած հասցէին, Փարիզ:

Յ. Գ. Նամակս սկսայ երեք օր առաջ եւ այսօր փօստ կը յանձնեմ—24 Դեկտմբ.: Կ'ուզէի գիտնալ [2 բառ անընթ.]⁶⁴:


(Թիւ 3, 2002)

⁶³ Աւետիս Ահարոնեանի «Կոստան Չարեան» ուսումնասիրութիւնը տպագրուած է *Հայրենիք* ամսագրի Յուլիս-Յոկտեմբեր 1930ի յաջորդական չորս թիւերուն մէջ (թիւ 9, էջ 57-62. թիւ 10, էջ 109-120. թիւ 11, էջ 36-42. թիւ 12, էջ 40-48):

⁶⁴ Այս յետգրութիւնը գրուած է առաջին էջի լուսանցքին՝ վերէն վար:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ՝ ԻԱ. ԴԱՐՈՒ ԴԻՏԱԼԿԻԼԵՆ


 իմա ոչ միայն կարօտել եմ նախնիքներիս, այլ նաեւ ժամանակակիցներիս, մտավախելով, որ նրանք եւս մի օր նախնիք պիտի դառնան: Հաստափոր հասցեագրքիս անունների մէկ քառորդը գնացել է: Չեմ ջնջել, չեմ կարողացել ջնջել այդ անունները: Միթէ՞ ապրանք են նրանք»:

«Մեր նախնիքների ստուերները» պատմուածքին այս պարբերութենէն եօթը տարի ետք, սփիւռքահայ գրականութեան վերջին յիսնամեակի ընտիր անուններէն մէկը՝ Յակոբ Կարապենցը (1925-1994), այլեւս չկար: Իր անժամանակ մահէն անցած է տասնվեց տարի, ու ան այլեւս դարձած է նախնիք, մնալով հանդերձ ժամանակակից: Ու զինքը կը կարօտնանք այդ զոյգ հանգամանքներով:

Առաջին անգամ ես Յակոբ Կարապենցին հեռակայ ծանօթացայ երեք տասնամեակ առաջ: Մեր ծանօթութիւնը, ափսոս, միշտ պիտի մնար հեռակայ: Տասնըվեց տարեկան պատանի էի «Բուէնոս Այրես հսկայ քաղաքում», ինչպէս գրած էր երբեմնի արժանթինահայ Այիսիա Կիրակոսեանը, ու սկսած էի մխրճուիլ հայ գրականութեան ինքնուրոյն ծանօթութեան մէջ՝ դպրոցական դասագրքային ծանօթութիւններէն անկախ: Նոր կը սկսէի նաեւ հայերէնէ սպաներէն թարգմանական փորձերս: Հայրս *Բազին* ամսագրի ամբողջական հաւաքածոն բերած էր Մոնթեվիտեոյէն, ու հոն էր, որ առաջին անգամ կարդացի Կարապենցէն պատմըւածք մը՝ «Մի մարդ եւ երկու շիրիմ»: Տպաւորութիւնը խոր էր. ահաւասիկ գրող մը, որուն ոճը մերօրեայ էր, որ նոյնիսկ երբ կը խօսէր երէկուան Չարենցի չգոյ գերեզմանին մասին, միշտ կը վերադառնար այսօրուան՝ ճոն Քենետիի գերեզմանին:

Ծնած էր Պարսկաստան, ու 22 տարեկանին հաստատուած էր Ամերիկա: Բայց ո՛չ պարսկահայ գրող էր, քանի որ... պարսկահայ գրականութիւնը հիմնականին բանաստեղծներու գրականութիւն եղած է, ո՛չ ալ ամերիկահայ, քանի որ... ամերիկահայ գրականութիւնը հիմնականին անցեալի պաշտամունքին մէջ սեւեռած էր (ու է, եթէ հաշուենք անզլիազիր հեղինակները եւ զանց ընենք Արամ Յայկազը):

Ո՞վ էր ան: Կարապենցը վարպետն էր պատմուածքին ու նորավեպին, բայց նաեւ ձեռք զարկած էր իր այսպէս կոչած «ժամանակակից վեպ»ին՝ *Կարթագէնի դուստրը* եւ *Աղամի գիրքը*: Առաջինը «օտար» պատմութիւն մըն է՝ Վիտեթնամի պատերազմի նիւթով, ուր նաեւ հայ կերպար մը ներկայ է: Իսկ երկրորդը չափով

մը նոյնպէս «օտար» նիւթ է, քանի որ ամերիկեան թերթերու խմբագիր հայ մըն է գլխաւոր տիպարը: Ու թերեւս *Ադամի գիրքը* լաւագոյն պատասխանը կու տայ քիչ առաջուան հարցումին: Յակոբ Կարապենցի աշխարհագրական վայրը տեղայնացում չէր ճանչնար: Ան հիմնովին սփիւռքահայ գրող մըն էր, որ հայն ու ոչ-հայը, տոհմիկն ու օտարը ինքնատիպ համադրութեամբ կ'ապրեցնէր իր գրականութեան մէջ: Սփիւռքահայ գրողն էր, որ նաեւ կը ներկայացնէր այդ համադրութեան անհաշտ կողմը. *Ադամի գիրքը*ի մէջ, շարունակելով Շահան Շահնուրէն սկսող աւանդութիւնը, Ադամ Նուրեանի սիրուհին՝ օտար Չելտան (թերեւս ակնարկութիւն՝ Ֆրենսիս Սքոթ Ֆիցճերըլտի կնոջ ճակատագրին), ողբերգական ճակատագիր մը ունի:

Սփիւռքը վաւերականօրէն ընդունիլ կը նշանակէ ընդգրկել երկու աշխարհ: Կարապենցի արձակին մէջ հետզհետէ երկու աշխարհներ իրենց հարազատ գոյակցութիւնը գտած էին՝ նիւթերու, հերոսներու, գաղափարներու, ոճի թէ մտածելակերպի առումով: Ան, հաւանաբար, Միացեալ Նահանգներու հայագիր գրագէտներուն շարքին ամենէն աւելի «ամերիկացած»ն էր՝ բառի լաւագոյն իմաստով, իր նիւթերուն բազմազանութեամբ թէ հայկականէն անդին սեւեռուն ու շողորութեամբ: Օր մը, անշուշտ, պիտի գտնուի գրականութեան հմուտ պատմաբան մը, որ խելամտօրէն կարդայ Կարապենցի արձակը ու, նոյն ատեն, անոր ընդմէջէն մեզի ներկայացնէ ամերիկեան գրականութեան ընթերցումներուն բաղդատական ուսումնասիրութիւնը:

Քայլ պահելով ամերիկեան ու համաշխարհային պատմութեան հետ, ան բնականաբար արդիապաշտ էր. իր փորձագրութիւններէն մէկուն մէջ ան ինքզինք իբրեւ «ծայրայեղ արդիապաշտ» տեղադրած է՝ Սփիւռքի գրականութեան երկու իսկական «ծայրայեղականներ» Վահէ Օշականի եւ Գրիգոր Պըլտեանի կողքին: Սակայն, անոր արդիապաշտութիւնը աւելի կապուած էր գրական թեքնիքի ու նիւթի նորոգումին, քան աւանդութիւնը խախտելու ու քանդելու կեցածքին, որ բնորոշ է այդ երկու հեղինակներուն: Կարապենցի գրականութեան մէջ ներկայ են հայկական աւանդական յուզականութեան ու հռետորութեան տարրեր, թեւ ո՛չ մեր գիտցած չափանիշներով. ու անոնց չափաւորութիւնը ընթերցողը չի նեղացներ, այլ յաւելեալ գոյն մը կու տայ անոր:

Արդիապաշտութեան գեղեցիկ օրինակ մըն էր յիշեալ «Մեր նախնիքների ստուերները»ի (ակնարկութիւն ու պատասխան Սերգէյ Փարաճանովի առաջին նշանաւոր ֆիլմի խորագրին «Մեր նախնիներու մոռցուած ստուերներ») մէջ մուտքը Աստղիկ ու Վահագն սիրահարներու գոյգին, որպէս Մանհաթըն ու Պրուքլին ապրող երիտասարդներ, որոնք կը բերեն անցեալի համանուն աստուածութիւններուն սիրաբանութեան ու առասպելի յուշը՝ յետարդիական ամերիկեան ներկային մէջ: Կարճ հատուած մը,

Վահագնը չպատասխանեց: Փոխարէն իր ծովագոյն աչքերը յառեց Աստղիկի սեւաթոյր խոշոր աչքերին, որոնց մէջ անակնկալօրէն իջեւանել էր

գիշերը, ուր հազար վիշապներ էին թաքնուած, սպասելով ամպրոպին: Այժմ Վահագնը տեսաւ Աստղիկին, կապոյտ ջինզի մէջ, կապոյտ ջինզից դուրս, սեւ վարսերի յարաշարժի ջրվեժը, այտերի անհայելի շուաքը, պարանոցի չերգուած բանաստեղծութիւնը, նրա կրծքերի անասելի խռովքը եւ յիշէց, յիշէց վաղնջական առաւօտները խաղողի յուռթի դաշտերում, Սուրբ լեռան ստորոտում, երբ ինչ-որ նահապետ գինովցած փորձում էր ռաբ-ըն-ռոլ պարել:

Ուշագրաւ կէտերէն մէկն է նաեւ, որ Կարապենցը Սփիւռքը որպէս հոգեբանութիւն ու հոգեվիճակ մարմնաւորող հագուագիւտ հեղինակներէն էր, որ արեւելահայերէն կը գրէր: Այսինքն՝ եթէ Սփիւռքի երեւոյթը հիմնականին արեւմտահայ հանրութեան կրած 1915ի Աղէտին հետեւանքն էր, ահաւասիկ գրող մը, որ այդ փորձառութենէն ուղղակի անցած չըլլալով, կը յաջողէր ընդգրկել զայն ու իր գործին առանցքը դարձնել զայն՝ մեր լեզուի այն ճիւղով, ուր սփիւռքեան փորձառութիւնը (թէեւ ժխտելով Սփիւռքը) առաջին անգամ արձանագրած էր նախասփիւռքեան իրավիճակէն եկող ուրիշ ինքնատիպ գրող մը՝ Կոստան Չարեանը:

Գիտակից ըլլալով Սփիւռքի կարեւորութեան, Կարապենց նաեւ գիտակից էր Յայաստանի ներկայութեան, թէեւ անոր հրատարակչականներուն ու մամուլին դռները ամբողջով փակ մնացին իր գրականութեան առջեւ մինչեւ 1990ական թրվականներուն սկիզբը: 1986ի ինքնադատական գրութեան մէջ, ան կը գրէր.

Այդուհանդերձ, Սփիւռքը ինքնանպատակ չէ, չի կարող լինել, թէեւ հասել է մի հանգրուանի, ուր սփիւռքահայ իրականութիւնը հետզհետէ ուրոյն դիմագիծ է ստանում որպէս քաղաքական ոյժ, տնտեսական մակարդակ ու մշակութային գործօն: Թէ որքան պիտի դիմանայ, կախում ունի Յայաստանի դիրքից, հայրենի պետութեան ողջախոհ մօտեցումից: Այլեւս ինքնայայտ ճշմարտութիւն է, որ Յայաստանը շարունակ ներկայ է մեր գիտակցութեան ու ենթագիտակցութեան մէջ:

Տարիներով կարդալէ ետք, 1992ին վերջապէս առիթը եղաւ Կարապենցէն գրութիւն մը սպաներէնի թարգմանելու: Ընկերոջս՝ Յակոբ Կիւլլիւճեանի հետ (այժմ՝ Լոս Անճելըս) այդ տարի հրատարակեցինք կարճատեւ (երեք թիւ) սպաներէն պարբերաթերթ մը՝ Պուէնոս Այրեսի մէջ՝ «Հարաւ» անունով: Առաջին թիւին համար (Յունիս 1992), մտածած էինք բանի մը ցնցիչ գրութիւններ թարգմանել (ինքնագիր ցնցիչ շատ մը այլ բաներու կողքին)՝ մեր քիչ մը շատ պահպանողական ու հայ արդի աշխարհէն քիչ տեղեակ համայնքին աչքերը բանալու համար: Այդպէս էր, որ «Մեր նախնիքների ստուերները»ի Աստղիկի ու Վահագնի սիրաբանութեան հատուածը լոյս տեսաւ իմ սպաներէն թարգմանութեամբ: (Գրագէտին յօդուածներէն սպաներէն նմոյշներ արդէն լոյս տեսած էին ու լոյս տեսան հետագային, բայց ասիկա Կարապենցի գեղարուեստական արձակէն միակ թարգմանութիւնն է ցարդ): Յեղինակը, իմանալով այս թարգմանութեան մասին,

նամակ մը գրեց: Այդպէս սկսաւ աշխոյժ թղթակցութիւն մը, որ տեւեց մինչեւ 1993ի վերջերը, եթէ ճիշդ կը յիշեմ: Վերջին նամակէս ետք, լռութիւն տիրեց: Ու քանի մը ամիս ետք, մահուան բոլորովին անսպասելի ու անհաւատալի բօթը վրայ հասաւ:

Ան ինծի դրկած էր *Երկու աշխարհ* խորագրուած փորձագրութիւններու ժողովածուն, զոր գրախօսած էի *Յարաք* օրաթերթին մէջ, Փարիզ: Այդ յօդուածներէն մէկուն մէջ գրածը կը մնայ գեղեցիկ մաղթանք մը, զոր կը կարծեմ, թէ ինք կրցաւ իրականացնել.

Յիմա ինչ էլ անելու լինենք, միեւնոյնն է, դարը մօտենում է իր վերջաւորութեան: Լաւ կը լինի եթէ մեզ հետ մի բուռ իմաստութիւն տանենք, որպէսզի չասեն թէ սրանք թափառելուց բացի ուրիշ բան չեն անել իրենց կեանքում: Ի վերջոյ պիտի գայ մի օր երբ պիտի ձերբազատուած լինենք հայրենական կարօտախտից եւ պիտի կարողանանք ուղղակի աշխարհի աչքերին նայել:

Որպէս եզրափակում, տեղին կը նկատեմ մէջբերել ուրիշ սիրելի հանգուցեայի մը՝ հայրենի տաղանդաւոր ու վաղամեռիկ գրականագէտ Գրիգոր Յակոբեանի մէկ հաստատումը, Կարապենցի մահէն երկու տարի ետք հրատարակած, որ ըստ իս բաւական ճշգրիտ կերպով կը բնորոշէ գրագետին տեղը մեր գրականութեան մէջ.-

Միանշանակ է, որ Կարապենցը արդի սփիւռքահայ գրականութեան համապատկերում է յատկանշուում առաջնային երկու իրողութիւններով. նրա գրականութիւնը Սփիւռքի գեղարուեստական արձակի պատմական ձեռքբերումների (Յ. Օշական, Մնձուրի, Յամաստեղ, Յայկազ, Շուշանեան, Որբունի) ուրոյնացրած համադրութիւնն է, Կարապենցի արեւելահայերէնը: Սփիւռքում հայերէնի այս դրսեւորման նուաճումն ու հանգըրուանն է միաժամանակ, աւելին ընդհանրապէս սփիւռքահայ գրականութեան պատմութեան մէջ գրողի արեւելահայերէնն է, որ փարատեց արտերկրում արեւելահայերէնով ընտիր գրականութեան ստեղծման տարակոյսը:

Յակոբ Կարապենցի գրականութիւնը 20րդ դարու արտադրութիւն ու վկայութիւնն էր, սակայն ան նուաճած էր 21րդ դար մտնելու իրաւունքը, որ մեր գրականութեան մէջ շատերու տրուած չէ: Վերադառնալ անոր հրատարակուած ու հրատարակելի գիրքերուն՝ հազուագիւտ հաճոյք մըն է, որ հայ ընթերցողը պէտք է շարունակէ փորձել ու ճաշակել առատօրէն:

(Թիւ 1, 2011)

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑ

ՈՎ ԱՍԱՑ ՔԱՂԱՔՆԵՐԸ
ՉԵՆ ՄԵՌՆՈՒՄ

*Մ*րմենեանը պատուհանը բացեց եւ հայեացքը դարձրեց հիւսիսից հարաւ: Քաղաքը ծխում էր վիթխարի, շիջող խարոյկի պէս: Յեռում ծովն էր, տակաւին կապոյտ:

Մերթ ընդ մերթ բուրթ թնդիւններ էին լսում, յայտնի չէ, մերձակայ ո՞ր արուարձանից: Նա այլեւս վարժուել էր աղբի ու դիակների գարշահոտին: Դիմացի տնաշարը խանձուած, անատամ երախի էր նմանում: Նրա դէմքը անդորր էր, գրեթէ քարացած: Նա ուզեց գտնել իր մանկութեան փողոցը եւ փողոցի մտերիմ անկիւնները: Մի սուլոց լսուեց նրա գլխից վեր, կարծես արագաթել բզեզ լինէր: Վերից կրաղիւսի կտորներ թափուեցին ցած՝ փոշու դեղին ամպիկ գոյացնելով միջոցում: Որովհետեւ պատերազմը նախ մարդու մտքում է ստեղծում, ապա նախ եւ առաջ պէտք է մարդու մտքից վերացնել պատերազմը: Այդ գաղափարը այնքան անհեթեթ թուաց նրան, որ զարմացաւ, թէ ինչպէս տարիներ շարունակ կառչած է մնացել այդ մտքին: Ա՛յս է իրականութիւնը, բացարձակ ճշմարտութիւնը, այլ ճշմարտութիւններ չկան, եւ որովհետեւ բոլոր գաղափարները ստացական են, ուստի եւ ենթակայ փոփոխութեան: Պիտի գնալ ու խառնուել կռուին, կարելոր չէ, թէ ո՞ւմ դէմ կամ յանուն ինչի: Պիտի սպանել՝ քանի դեռ քեզ չեն սպանել: Ահա այդպէս, այդքան յստակ ու մեկին: Սենեակի անկիւնից վերցրեց հրացանը: Պաղ փողի մերկութիւնը անցողիկ գրգիռ պատճառեց նրան: Մի պահ փնտռեց կնոջը: Յոգնած էր: Անքնութիւնից ընդարմացել էր նրա մարմինը, սակայն միտքը ասուպի պէս շարունակ պեղում էր խաւարը՝ կտրատելով նրա ենթագիտակցութեան մթին ցանցերը: Նստեց անկողնու եզրին ու պատին նայեց:

Նա յանկարծ անդրադարձաւ, որ երգ չկայ, որ վաղուց է երգ չի լսել: Բթացել է աշխարհը, փախել է երեւակայութիւնը, մարդիկ խրտուխլակների են վերածուել, իսկ առաջնորդները ո՛չ երազ ունեն ո՛չ էլ բանաստեղծութիւն: Ստալինը ապականեց աշխարհը: Նրանից յետոյ տափակացել է մարդկութիւնը, մտել մի անասելի քառակուսիի մէջ եւ ծանձրոյթ է ծամում: Քանի՞ շաբաթ է, քանի՞ ամիս, քանի՞ տարի: Ինչպէ՞ս սկսուեց պատերազմը: Ո՞ւմ որդիներն են սպանուել փողոցներում: Պարոյրը լոկ թղթակից էր: Ինչո՞ւ գնդակահարեցին նրան խորհրդարանի աստիճանների առջեւ: Իսկ միւսները: Այս ինչպէ՞ս պատահեց, որ աներազ մարդիկ տէր դարձան աշխարհին: Տրամաբանութիւն: Ամէն ոք այսօր իրապաշտութեան մասին է խօսում: Պէտք է լինել գործնական եւ գործարար: Կարելոր չէ

նպատակը, այլ շահը, անհատական շահը, ազգային շահը, պետական շահը, իսկ եթե շահը պահանջում է ուրանալ երեկուայ հանդիսաւոր խոստումը, ապա թող ստրկութեան սիւնին գամուեն հաւաքականութիւնները: Կարելորը սակարկութիւնն է: Յոգու, մարմնի, ազգային իրաւունքի ու գաղափարի: Նա զգաց յոգնութիւնը իր արեան մէջ, դարերի կուտակուած յոգնութիւնը, գոյատեւման ահռելի բեռը. քանի օր է աչքը չի փակել, որպէսզի չխզուի կապը գոյականի հետ, ինչպէս գոյացաւ բարոյական ճահիճը, երբ անդին ժողովուրդը կրակէ լեզուների մէջ օրհասական պահեր է ապրում՝ մի այլ տարագրութեան մղձաւանջը աչքերին: Շէնքը նորից դորդաց: Անպատճառ ական է: Անմիջապէս յաջորդեց անդորրը: Միշտ այդպէս է լինում: Լուսամուտի անցքերից փոշին ներս խուժեց, տատանուեց, ձիաւորի կերպարանք ստացաւ:

Շարժանկարի պաստառի ճիշդ մեջտեղում, այնտեղ, ուր հորիզոնն է երկարում, ձիաւորը հանդարտ շարժում էր դէպի արեւմուտք: Ջան Ուէյնն է՝ *բաւուրոյի* իր անբաժանելի տարագով: Լքել է քաղաքների յանցապարտ մթնոլորտը, նուաճել կանաչ դաշտավայրերը եւ այժմ գնում է արեւմուտք՝ նոր կեանքի հետապնդման հեռանկարներով: Վերածնունդին հետեւել է տրամաբանութեան դարաշրջանը, ապա բարեփոխումները: *Բաւուրոյ* տակաւին բարեփոխումների փուլից է անցնում: Վաղուց է *բաւուրոյ* գոյութիւն չունի: Սակայն առասպելը շարունակուում է: Ամերիկացին հաւատում է այդ առասպելին: Նա ուզում է փրկել աշխարհը, առանց ի նկատի առնելու իր սահմանափակումները: Կալիֆոնիականութիւնը բուն է դրել ամերիկեան բոլոր հաստատութիւններում: Ամերիկայի եռեակ համայնապատկերը: Յոյսը անծայրածիր մարգագետիններն են: Վերջին ապաւէնը: Այլապէս քաղաքները անբարոյականութեան բոյներ են: Չարի ու Բարու պայքարը վերջ չունի, յատկապէս շարժանկարներում: Սակայն ինչո՞ւ հերոսները սիրել չգիտեն, ինչո՞ւ չեն մարդանում, ինչո՞ւ չեն լալիս: Ամէն ոք նախապաշարուած է, մասնաւորապէս գաղափարապաշտները: Նրանք, ովքեր մարդկութեան անունից են խօսում: Արուեստի, մաքուր գիտութեան ու առաքինութիւնների: Ես ամէն ինչ կորցրել եմ եւ այլեւս ոչինչ ունեմ կորցնելու: Ես ակելի մաքուր եմ, քան բարոյախօսները: Կը գնամ փողոց ու կը կրակեմ հանդիպածս առաջին մարդու վրայ: Կաֆկայի պէս կը կերպարանափոխուեմ ու երկնքից կախուած միջատի նման ես կը ճօճուեմ աշխարհի գլխին, որպէսզի չասեն, թէ ես քրիստոնեայ եմ, մահմեդական, սեւամորթ թէ սպիտակամորթ: Եթէ պիտի երկրից երկիր փախչեմ, քաղաքից քաղաք, այլեւս ժամանակ չպիտի ունենամ ապրելու: Եթէ մեծ ոստանների ժխորը թողած կուսական անտառներում պիտի փնտռեմ սփոփանքս, այլեւս պատեհութիւն չպիտի ունենամ հասունանալու, ամբողջական մարդ դառնալու:

Արմէնեանը բարձրացաւ: Մենակ էր կիսաւեր շինութեան մէջ: Դրսում պայթիւնները բազմապատկուել էին: Գիտէր, որ կռիւ է, սակայն չէր հասկանում երկրութիւնը: Չգիտէր ո՞ւր է կինը, հարագատները, ընկերները, մտերիմները: Կոր-

ցըրել էր ժամանակի գիտակցութիւնը: Սկզբնական վախին յաջորդել էր ատելութիւնը: Օրեր շարունակ նստել, կարդացել էր իր սիրած բանաստեղծներին եւ հետզհետէ ատելութիւնը ակելի խորացել էր իր մէջ: Սկսել էր ատել աշխարհը: Այնքան ատելութիւն չէր՝ որքան ցասում, անհասկանալի ըմբռնելու անզօր ճիգ: Այլեւս մահը իմաստ չունի, ինչպէս իմաստ չունի կեանքը: Նա մօտեցաւ գրադարակին եւ շօշափեց գրքերը: Ամբողջ երեք ամիս այդ գրքերի հետ էր եղել: Առաջին անգամը լինելով բանաստեղծները սկսել էին խօսել իրեն: Եւ այժմ բանաստեղծները հալածում էին նրան: Կարծես նրանք այս բոլորը ապրել էին: Նա ընտրեց երգերի կապտակազմ մի մատեան ու ծոցը դրեց: Նա կրկին մօտեցաւ պատուհանին: Վարը, դիմացի դարպասի խռռչում թաքնուել էին հինգ հոգի: Երբեմն, նրանցից մէկն ու մէկը դուրս էր ցատկում փողոց, կրակում չորս դին եւ զսպանակային նոյն շարժումներով նահանջում թաքստոց: Յետոյ զրահապատ մի ինքնաշարժ սուրաց փողոցն ի վեր՝ գնդացիային կրակ տեղալով բնակարանների վրայ: Մի մարդ ընկել էր սալայատակին: Արմենեանը դժուարաւ էր շնչում: Պետք է դուրս գալ այս բանտից: Կրակի օղակը հետզհետէ սեղմում էր: Մարտիկներից մէկը՝ գանգրահեր մի պատանի, պագել, խնձոր էր ուտում: Նա մանկան կերպարանք ունէր: Բոլորն էլ մանուկներ էին, «պատերազմ» էին խաղում: Ահա սալայատակի գոհը ոտքի պիտի կանգնի եւ միանայ իր զինակիցներին: Խաղը շարունակում էր, գրոհ, նահանջ, կրկին յարձակում եւ արիւնաթաթախ դիակներ: Ինչպէ՛ս է եղել, որ ինքը չի ըմբռնել իրողութիւնը: Միթէ մանկական խաղ չէ եղածը: Գծից այս կողմ իմս է: Սահման, բանակ ու դրօշակ: Փայլուն կոճակներ, շքանշան, եւ դեռ կարմիր, կապոյտ, կանաչ ու բազմագոյն համազգեստ: Դիմացի համազգեստաւորը մարդ չէ, այլ թշնամի: Ամեն գնով պետք է ոչնչացնել նրան, այրել տունը եւ իւրացնել ունեցուածքը: Մէկը ծծումբի պետք ունի, միւսը քարիւղի, իսկ ամեն պետութիւն յաւելեալ հող է ուզում: Ու մարդիկ յօշոտում են իրար. մանուկները սպանում են միմեանց: Հրէշ մանուկներով է լեցուել աշխարհը: Սպանում ու սպանում են մարդկութեան մանուկները: Յաղթում ու պարտում են բանակները: Մէկ ամ մէկ ընկնում են զինուորները, իսկ վերջում պարտում են բոլորը, որովհետեւ յաղթողն էլ է սպանուել:

Արմենեանը որոշել էր: Տուն չունէր: Տունը փլատակ էր եղել: Ընկել էր կրակի ցանցի մէջ եւ մի քանի ամսուայ ընթացքում ծերացել: Նրա աչքերում այլեւս փայլ չկար: Ակօսուել էր ճակատը, ցցուել այտոսկրները: Շաբաթներից ի վեր տենդի մէջ էր: Երէկ բացել էր պահածոյի վերջին տուփը: Այլեւս մահից չէր վախենում: Կտրուել էր աշխարհից, այլեւս չէր ուզում աշխարհի երեսը տեսնել: Գնալով սահմանները նեղանում են: Մարդիկ այլեւս նոյնը չեն: Ամեն ոք զգուշութեամբ է խօսում: Երբ մի տեղ մարդու իրաւունքները խախտում են, ապա ոտնակոխ է լինում նաեւ իմ իրաւունքը: Բռնութիւնը սկսել է գաղտագողի սողալ տնից տուն, քաղաքից քաղաք, երկրից երկիր՝ առաջին հերթին նստելով մարդկանց մտքի վրայ: Մարդիկ սկսել են տարակուսել: Չպիտի մտածել: Մտածելը վտանգաւոր է:

Բոլոր չարիքների բունը ազատությունն է: Անկցի՝ ազատությունը: Կարելորդ մարդկայնությունն անունից բարձրադասակ ճառելն է: Եթե յաճախ կրկնես սուտը, կը դառնայ ճշմարտություն: Չէ՞ որ ճշմարտությունը մտայնության խնդիր է: Ի՞նչ տարբերություն կ'անի, եթե սեւին սպիտակ ասենք: Վարժության խնդիր է: Վաղը ամեն մարդ սեւը սպիտակ կը տեսնի:

Արմենեանը աշխատեց ձերբազատուել միմեանց խաչածեղ մտքերից, որոնք հոսում էին ակամայ՝ ինչ-որ անկախ, ինքնաբուխ աղբիւրից: Այդ պահին նա ուզում էր հաւատարիմ մնալ մարմնին, որը երկարատեւ լարումից կարծես ինքնադեկ գոյություն էր վերածուել: Սենեակի խառնիճադանճի մէջ մի գլանիկ փնտռեց եւ մէջքը պատին տուած, դարանակայ, սկսեց ծխել: Հիմա նրա աչքերը պղտորուել էին: Նրա ռնգերից ծուխը անէծքի պէս էր դուրս ժայթքում: Սենեակը կիսախաւար էր: Ջարդուած ապակիների տեղ տախտակի կտորներ էին գամել պատուհանին: Վերադիր դամբարան էր իր խուցը: Մերձակայ ու կից փողոցներուն կռիւր տենդագին թափ էր ստացել: Պիտի քանդեն, պիտի աւերեն ու հըրդեհեն ամեն ինչ: Ո՛ր գնալ: Քանի՞ պանդխտություն ապրի հայր: Նա հագիւ էր յիշում Մուսա Լերան իր հորենական տունը: Իր հայրը այդ ազնիւ լեռնականը, աւազների կիզիչ ցերեկը եւ անապատների ցուրտ գիշերը, յետոյ նոր կեանքի աւետիսը, նորից պատերազմ ու պանդխտություն, գաղթակայանների թիթեղեայ ուրւազիծը, հայի անդուլ աշխատանքը յանուն հացի ու լոյսի: Անէ՛ծք իր հայրենիքը քանդողին:

Մի վերջին անգամ նա հայեացքը նետեց սենեակի չորս բոլորը, ապա կիսաւեր տան յարկաբաժինների շարանը կտրելով իջաւ ցած: Այլեւս ուշ է, ճանապարհները փակ են: Լեռներում ապահով է իր կինը: Փողոցի դուռը ամրացուած էր գերաններով: Կանգնեց դրան յետեւ: Պայթիւնները դադար չունէին: Մարդկային ծայն չկար: Միայն գնդակներն էին խօսում: Նրա զայրոյթին փոխարինել էր բուրձ երկընտրանքը: Ինչո՞ւ սպանել: Ես թշնամի չունեմ այս քաղաքում: Այս ի՛նքն քաղաքն է, ի՛նքն փողոցը, ի՛նքն տունը: Այս մարդիկ իմ եղբայրներն են, իմ դրացիները: Կը ճանաչեն ինձ, անպատճառ կը ճանաչեն: Ես զէնք չեմ բարձրացնի իմ եղբայրների դէմ: Նրան թուաց, թէ միջանցքում հայերէն հնչիւններ լսեց, հեռաւոր, մատղաշ ճիչերը իր վաղեմի մանկութեան, երբ յետմիջօրեի թանձր արեւից պատսպարուելու համար ինքը, Քնարը, Սարգիսը, Էլոն, Նազը, Յարությունն ու Նազարը միջանցքի պատից սեւ տախտակ էին խաղում եւ «դպրոց» էին խաղում՝ գրատախտակի ճակատին գրելու «Հ-ա-յ-ա-ս-տ-ա-ն»: Այդ ժամանակ մանուշակ կար միջոցում, անհուն բերկրանք ու սպասումի յաւերժություն: Մանկական ճիչերը բազմապատկուում էին եւ գոյնզգոյն թռուցիկների նման սաւառնում վեր, դէպի առաստաղ, դէպի երկնքի մերձակայ կապոյտը, հասանելի, մանիշակների բացումը...:

Ու մինչ Արմենեանը կիսամութ միջանցքի անկիւններում հեռաւոր օրերի բեկորներն էր հաւաքում, քաղաքը գալարում էր հոգեվարքի հռնդիւններով: Քա-

ղաքի որդիները որոշել էին սպանել քաղաքը: Ու բազմազգի ոստանը կենդանի հրաբուխի պես կրակ էր ժայթքում, արիւն ու լաւայ: Նա այլեւս չէր յիշում: Նրան թւում էր, թէ միշտ այդպէս է եղել: Երբ պատահում էր որ մի քանի ժամով դադարում էր կրակը, կարծես խաթարւում էր նրա զգայարանների համակարգը, նա վախենում էր, որ կորած ժամանակը հեղեղի պէս պիտի յանկարծ լեռնանայ ու իր յորձանքների մէջ խեղդի նրա գիտակցութեան փշրանքները: Շարժուելիս նա զգաց, որ աջ սրունքը ծանրացել է: Մէկը թե՛ նշտրակ էր խրել նրա մտերում: Երբ պատահեց: Նա շօշափեց սրունքը: Թաց էր ոտքը: Արիւնը վերքից իջել, լերդացել էր կօշիկի մէջ: Բայց այդ ինչպէ՛ս պատահեց, որ հողմամրրիկը իր բաշը ցցեց իր քաղաքում, երբ արտաբուստ այնքան խաղաղ էին փողոցները: Ո՛չ, ինձ որեւէ լուր մի յայտնէք, չեմ ուզում լսել, այլեւս յագեցել է ողբի աւազանը, այլեւս պըրկումից քարացել են հոգուս լարերը, թո՛ղ հանգիստ ննջեն մեռելները, ես այլեւս չեմ կարող սփոփել մեռելներին: Հիմա մարդիկ Աստծուն սպանում են եւ փոխարէն գրանիթէ արձաններ են կանգնեցնում հրապարակներում, քանդում են աղօթատեղիները եւ փոխարէն ոսկեղէն տաճարներ են կառուցում՝ ոսկի ծախելու համար: Ծախու է դրուած նոյնիսկ ժողովուրդների կեանքն ու ազատութիւնը: Ո՛չ, ինձ ոչ մի լուր այլեւս, երբ Դանթէի հետ նոր եմ վերադարձել տակաւին շարունակուող ճամբորդութիւնից:

Արմէնեանը գիտէր, որ անվերադարձ է: Պիտի խանձուեն փիւնիկի թելերը, պիտի մոխրանայ մարմինը, որպէսզի իր իսկ մոխիրներից վերածնուի յաւերժական թռչունը: Դրսում տակաւին ոռնում էին գնդակները, ցաք ու ցրիւ, մերթ որպէս համազարկ, երբեմն հատ ու կենտ, սակայն միշտ սպառնալից ու միաժամանակ ընտանի: Նա զերանները մի կողմ հրեց, անջատեց նիզը եւ հանդարտ բացեց դուռը: Մի պահ լոյսը կուրացրեց նրան: Յանկարծ դադարեց կրակը: Մէկը մոզական գաւազանի հարուածով համատարած լռութիւն պարտադրեց: Ամայի էր փողոցը: Մի քանի դիակներ էին աւելացել այս ու այն կողմ: Միջոցը յագեցած էր ծուխի եւ վառօղի հոտով: Հրազէնի լռութիւնը աւելի դաժան էր, գրեթէ անտանելի: Կարծես, ո՛ր որ է պիտի քանդուէր երկինքը եւ շանթ ու մոխիր թափէր քաղաքի գլխին: Նա նկատեց, որ փողոցի խորքում, քառուղու անկիւնում մի քանի սպառազէն մարդիկ գլանիկ էին ծխում: Նա գիտէր, որ դիմացի բնակարանների ամեն մի խոռոչից հրազէնի փողեր էին դուրս ցցուած: Ուրեմն, ճանաչեցին, գիտեն, որ հայ եմ, բարեկամ, չէ՛ որ իմ ընկերներն են, իմ դրացիները, չէ՛ որ միասին ենք շինել այս երկիրը, սակայն չգիտէր ինչ անել: Հրացանը ձեռքին նա կանգնել էր դրան շեմին՝ գունաթափ ու գլխաբաց: Պիտի կտրել ու անցնել փողոցը, յետոյ այլ փողոցներ, կրակի այլ գօտիներ, մահուան այլ հրապարակներ, մինչեւ գետ ապա միջնաբերդը հայութեան: Իսկ եթէ անծանօթ դիրքերում չճանաչեն իրեն: Արմէնեանի աչքն ընկաւ գորշ համայնապատկերի ծայրում բարձրացած հայոց եկեղեցու գմբէթի վրայ, որի խաչը պսպղուն էր, երբ մերթ ընդ մերթ քամին ցրում էր ծանրացած ծուխի ամպը: Խաչը պատռել էր երկնքի կուրծքը եւ ճառագայթ

Եր որսում: Խաչի ներքոյ, ծանր կամարների տակ, ժողովուրդը աղօթում էր: Նա լսում էր համատարած մրմունջը ու երգեհոնի աստուածամերձ աղերսը: Նա զգում էր խունկի բոյրը եւ մոմերի յուսահատ պլպլոցը: Բիւր շրթներից հոգեհանգստեան խօսք էր ասւում Աստծուն: Գուցէ Աստուած չգիտէ: Գուցէ նա շրփոթուել է: Ո՞ր մեռելների մասին է խօսքը: Աստուած ինչպէ՞ս արձանագրի այսքան մահ ու կոտորած: Մի մահ, մի հոգեհանգիստ: Քանի՞քանի՞ մատեաններ են պետք արձանագրելու համար Հայոց Եղեռնը: Թերեւս այլեւս մատեան չմնաց: Մի գուցէ Աստուած յոգնել է: Եթէ քաղաքը մեռնում է, հապա ղվ պիտի հոգեհանգիստ ասի մեռելներին: Այլեւս արիւն չմնաց: Նա թիկն տուեց դրան եւ մի պահ աչքերը փակեց: Անցել էր ոտքի ցաւը, թերեւ էր՝ ինչպէս փետուր: Կոպերի տակ բոսոր էր աշխարհը: Հայոց եկեղեցին ընդարձակուել, դարձել էր աշխարհատաճար՝ իր մարմարեայ վեմերի տակ առնելով ողջ քաղաքը: Լոյսի ծով էր, ժողովուրդների պատսպարան: Ամեն պատուհանից կախուել էր մի ծաղկեպսակ: Այրեր ու կանայք համբուրում էին անծայրածիր խորանի քարը: Մանուկները պարում էին հրեշտակների հետ: Հազար երգեհոն հազար երգ էին երգում: Բախ ու Մահլէր, Կոմիտաս ու Վերդի խօսում էին Աստծոյ հետ՝ մխիթարութիւն հայցելով հոգիներին: Մարդիկ եղբայրացել էին, նրանք միմեանց երես էին համբուրում եւ հասկանում էին իրար: Յայտնի չէր հոգեհանգիստ էր, թէ տօնահանդէս: Յետոյ երգեհոններին միացան հազարահոունչ ձայներ եւ համամարդկային համերգը տարածուեց երկրից երկինք:

Երբ Արմենեանը աչքերը բացեց, չգիտէր վայրկեան էր, թէ յաւիտենականութիւն: Մի քանի քայլ հեռաւորութեան վրայ մէկը տնքում էր: Նրա բերանից արիւն էր բխում: Այլապէս միջոցը յղի էր դաւադիր սպասումով: Լռութիւնը խեղդում էր նրան: Նա անզուսպ պահանջ զգաց ամբողջ ուժով բղաւելու: Փոխարէն կառչեց հրացանին, այնքան ամուր, որ ահա փողը պիտի փշրուէր իր կծկուած ափում: Դեռ առաջին քայլը չէր առել, երբ լախտի մի ահռելի հարուած իջաւ նրա կրծքին: Նա ընկաւ դրան վրայ, ծալուեցին ծնկները, տապալուեց: Քանդուել էր նրա ուսը: Պայթիւնին հետեւեցին այլ պայթիւններ: Մի ակնթարթում վիժեցին գեհեմի դռները եւ կռիւր վերսկսուեց աւելի ուժեղ թափով:

Արեգակը հեղուկացաւ, սկսուեց սկիւրը, կարմիր ծովերը տիեպերային շառաչով բախուեցին իրար, փոշիացան ու լոյսի արագութեամբ սուրացին դէպի անհուն կուգահեռականները: Մոլորակները մի պահ շփոթահար դէս ու դէն ընկան, ասպա պինուորների պէս շարք կանգնեցին խաչմերուկի մէջտեղում: Արեւը բացեց իր թելերը ու կախուեց նրա ճակատի վրայ. կարծես այլեւս ուրիշ տեղ չկար: Սակայն օրը ցերեկով ինչո՞ն են երեւացել աստղերը, չլինի՞ խախտուել է բնութեան օրէնքը: Մի կաթիլ ջուր, որպէսպի կանաչի ծաղիկը, չէ՞ք տեսնում միթէ Քրիստոսի ծարաւը, քանի՞ դար է ինչ՝ Քրիստոսը ծարաւ է, ի սեր Աստծոյ մի կաթիլ ջուր, չէ՞ որ նա էլ իմ ժողովուրդի հետ քայլեց Տէր-Չօրի անսպասուներով: Սակայն ինչո՞ն են ուզում գնդակահարել նրան: Հաւատացնում եմ ձեզ նա անմեղ է, ես գիտեմ

նրան, կարդացել եմ իր գրքերը, նրա անունը Դոստոյևսկի է, նա ժողովուրդների թշնամի չէ, ժողովուրդների թշնամիները գահերի վրայ են, նրանք լարում են որոգայթները, սպա վարդաջուրով լուանում իրենց ձեռքերը: Նա վապում էր դեպի ծովը, փոքրիտ տղան վապում էր դեպի ծովը, սակայն որքան մոտենում էր ծովին, նոյնքան ծովը հեռանում էր նրանից: Հետոստեմ նրա քայլերը ծանրացան, կարծես արճիճճ գնդեր էին կապել նրա ոտքերին, յետոյ նրա վապը քարացավ, ֆրանսիացու արցունքը Փարիզի գրաման ժամանակ, Մուսոլինին գլխիվայր կախուած, Ստալինը դազադում, Հիթլերը պարելիս, վիթթնամցի տղան գնդակահարուելիս, ի սեր Աստծոյ մի կաթիլ ջուր, եթէ աստղերը կանգ առնեն, ո՛ր կը թափուեն, ամենից սպահով տեղը արգանդն է, ես պիտի վերադառնամ իմ մօր արգանդը որպէսպի այլեւս ոչ ոք ինձ չվնասի, որպէսպի չլինի Ապրիլ 24, Բուխենվալդ ու Հիրոշիմա: Հորիվոնները խորանարդերի վերածուեցին, բիւրեղացան, դարսուեցին իրար վրայ ու անաղմուկ ջարդուեցին համաստեղութեան ծիրում, այդ նոյն պահին փողոցի վրայ գնդակները խաչաձեւեցին միմեանց, ծորացին ու տձել խաղալիքների պէս կախուեցին միջոցում: Կանգ առաւ ժամանակը: Ես եմ ժամանակը: Ես եմ տիեպերքի կենտրոնը: Սակայն ինչո՞ւ է կենտրոնը տատանում, ինչո՞ւ են շէնքերը խոնարհում առաջ, այսպիսի բան ես կեանքումս չեմ տեսել: Բեկուեց ժամանակը: ՄԷկը քար նետեց հայելու վրայ ու ծամածռուեց իրականութիւնը: Ամէն մի բեկոր դարձաւ ամբողջութիւն, իր մարմնից անջատուեցին բազմաթիւ էակներ ու հապճեպով իրենց գործին գնացին: Մուսա Լերան յաջորդեց անսպասուր, քաղաքը սեղմուեց իր պատերի մէջ, դարձաւ Երուսաղէմ: Քանի՛-քանի՛ աղջիկներ է սիրել, որոնք անտեղեակ են իր սիրոյն, Օ Երուսաղէմ, Օ Էամերալդա, Օ Ռէբէկա, Օ Սեդա, Օ Բէաթրիս, Օ Բաթով, Օ մայր, Օ արեւածագ լեռների, Օ արեւմուտքը ծովերի, ինչպէ՛ս պատասխանել նրանց, ինչ սսել Դուրեանին, Շոպէնին, Տէրեանին, Շուրերթին ու Պուշկինին, որոնք դեռ ամբողջովին չծաղկած անժամանակ հեռացան, մի կաթիլ ջուր, «Հայաստանը միշտ գրգռել է նուաճողական ձգտումներ ունեցող ազգերի ախորժակը: Հայկական բարձրասնդակի ժողովուրդը միշտ աւարն է եղել այդ ազգերի: Աւելի քան 500 տարուց ի վեր Հայաստանը բաժանուել է երեք մասի: Հնուց ի վեր օտար ցեղեր, մԷկը միւսի յետեւից, մրրիկի պէս անցել են Հայաստանի վրայով: Այն ցեղերը, որոնք ամայի դարձրին Առաջաւոր Ասիան, Հունգարիան, եւ հասան մինչեւ Հոենոս, Ատտիլլայի պէս մարդիկ, որոնք դեռ մնում են մեր յիշողութեան մէջ, ամենաբատմնելի կերպով աւերել են Հայաստանը, ոչնչացնելով ժողովուրդին»: Մի կաթիլ ջուր, եթէ խաչին ու լոյսին փոխարէն մենք էլ աւերէինք ու ջարդէինք, այսօր մենք էլ մեծ պետութիւն կը լինէինք: Կարելորդ տիրե՛լն է, ո՛ւժը, այլապէս արդարութիւն ու միջապգային բարոյականութիւն յիմար խօսքեր են, եթէ ամուր բռնեմ երկնքի կապոյտը, սպա ինձ հետ ոչինչ չի պատահի, որովհետեւ մահը նախ եւ առաջ հոգու մէջ է կատարում, իսկ ես ոչ մի գործ չեմ ուզում ունենաք մահուան հետ: Ինչո՞ւ յարատեւել, ես սպրե՛լ եմ ուզում, հա՛յր, ինչո՞ւ լոկ գոյատեւել, երբ սպրե՛լն է աստղերի պատգամը,

ես այսօր եւ իսկ կը սափրուեմ, մոխրագոյն հագուստս կը հագնեմ ու Մոնայի հետ թատրոն կը գնամ, երեւակայել Կարլ Մարքսին վարսավիրանոցում, Պանը թենիս խաղալիս կամ թէ Մովսէսը Ֆիզարոյի դերում: Երկինքը շառագունեց, մնաց մի հատիկ շաւիղ իր եւ արտաքին երեւոյթների միջեւ, բռնեց շաւիղը եւ հեքիաթային թռչունի պէս սաւառնեց արեւելքից արեւմուտք, հիւսիսից հարաւ, երբ կանգնեց ուկրաինացիների միջեւ՝ Աֆրիկան դարձաւ մի շքեղ շուշան՝ թելերը սիռելով մինչեւ Մոնոլիթի ու Ամապոն: Եթէ երկար մնայ անջրպետում, սպա ժամանակը կ'անցնի իր ոտքերի տակից ու ինքը կը դառնայ անժամանակ, այսպէս ասած՝ անմահ, ինչպէս Չեւս, կարելորդ սակայն պոկուած մնալն է երկրագնտից, միայն թէ՛ երանի մի կաթիլ ջուր լինէր, մի կաթիլ ջուրի համար ես ամէն ինչ կը տայի, նոյնիսկ անմահութիւնս: Ուրեմն այսպէս է պատահել Խաչեալի հետ, իմ ժողովուրդիս հետ, Վարուժանի հետ, Բէքեթի հետ, Չօհրապի հետ, հին ու նոր սուրբերի հետ, ծանօթ ու անծանօթ նահատակների հետ, եկել մի բան ասել ու գնացել են, մեկ թողնելով անպատասխան, իսկ մնացողները տենդահար վերլուծել են, տեսութիւններ ստեղծել ու մեր վրին կապել լուծը, երբ պոհերի մահը աւելի խօսուն է, քան ապրողների կեանքը: Նա բարձրացաւ, սուրացող գնդակները բռնեց, գրպանը դրեց ու թաշկինակով ձեռքերը սրեց: Յայր, դու երբեք չասացիր ա՛յն՝ ինչ ուզում էիր ասել, այսօր, վաղուան ձգեցիր ու չասացիր ա՛յն՝ ինչ ուզում էի իմանալ, երբ քո մի խօսքը կարող էր փրկել ամէն ինչ: Ես այսուհետեւ ինչպէս նայեմ որդուս աչքերին, ինչ ասեմ նրան, երբ չգիտեմ:


(Թիւ 3, 1977)




Պողոս Մնասյան և Յակոբ Կարապետյան

ՇՈՒՇԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ԼՈՒՍՆԱԳՅԻՆ


 րէկ լուսինդ խաւարեցաւ Նիւ-Եորք,
 արգիլուած քաղաք է ինձի
 համարեմ ծայրաբեւեռ
 սփիւռք
 ամերիկեան անապատ անծայր
 ուր հասար երկար տառապանքի սիրուն կեանք
 – օրերդ լուսնէ թափանցիկ –
 տունտեղ չեղանք,
 աքսորեալ եւ գաղթական,
 արեւը մթնեց ամերիկեան գօտիին
 խօսուն արեւելքը կ'ուզես հոս

ԻՂՁ


 աբաթ երեկոյ, Ատլանտեան,
 ովկիանոսին բոսորագոյնը արծաթ
 սեւ ծիածան թռուցիկ ճայ երեխայ
 հոյակապ հին անտառին շատ մօտ՝
 երագիդ աւագուտ պատճենը
 կեանքերու տխրադալուկ խանդավառած
 մորմոք
 ամերիկեան տան մը ներքին փակ երազը կը զգամ
 հիմա
 հոս ովկիանոսին հետ
 սփիւռքահայը որ հայրենիք պիտի երթայ
 (աքսորի եւ տունդարձի օ ապրելու ժամանակ)

 հաւատացող մարդ մը հարազատ մը
 կ'ըղծայ

ՍՓԻԻՌԲ

«Դեպի նոր ու աւելի բարձր ստեղծագործությունը»

–Լ. Շանթ, «Հայ բանասիրությունը»



Էյրություն համար որ մեռաւ կ'ըսեն

ճ քաղցր ու սպանդ

նորել կեանքը նորել գիրը մեր,

հոս, Երեւանի սա սրտին, մէջ

խօսիլ՝ այն ինչ լռած կանք

վաղուան լոյծ սեմը,

թուղթերու Էն սպիտակութեանը վրայ

գրել մշակոյթը. օծութիւնը ընել.

երկիր եւ սփիւռք (խորին հեշտութիւն)

տարբերութիւնը լինել ու գրել

«ինքնամատոյց ու բացարձակ...» վեպին Նագիկը

իբրեւ հայելի մը ծանր անկաշկանդ

անյագուրդ երանգ սա կեանքի պորտին

այսօր

հոս շիրիմը եւ անկէ ետքը

«դեպի նոր ու աւելի բարձր» ստեղծումի մը հաշուոյն

եթէ շփուիլ օրուան փեշերուս,

դարու քղանցքիդ,

եթէ հիմա կ'ապրիս. ո՛վ այրող ամեն.

(Թիւ 3-4, 1990)

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

ՄՈՒԽԻՐԷ ԾԱՌ *(Հատուած)*



ութին մէջէն գտայ բոլոր կորսուած բառերդ ձայներս խեղդուած
 ես ուրուայնամուտ պատմութիւնդ էի
 Գմբէթ որ իր խոշորաբիբ աչքը խրած էր խորութեան հողի
 Միւն՝ ուր երեկոն հանեց պատմութեանքը հիր
 երբ Լեռնաշղթան թաթը գուգառաջ
 գլուխը դրաւ գիշերուան ուսին
 Մենք լոյս աչքերով չտեսանք գիրար
 Երկար հեղձումէ մազապուրծ հիմա
 բոլոր ճիշերդ կարեցի վրաս
 վախիդ լաչակը ուսէս նետեցի
 աղօթքներուդ գլխանոցը մութ հանեցի գլխէս
 աղապատանքի մոմերդ քանդեցի
 եւ արեւափայլ մազերս ձգած ուսերուս կոնքիս
 ահա կը մտնեմ այդ հրէ հրէ,
 եղէզներուն մէջ
 Հալեցուցեր եմ մեր լծորդութեան անկամութիւնը
 Միանգամընդմիջտ հեռացիր քղանցքէս որպէսզի երկնեմ դժուար
 կոչումդ
 Օ ոչ հրաշքը մէկ ակնթարթի ճարպիկութիւն չէ
 հրաշքը կը սկսի այն ակնթարթին երբ կը պարտադրես ինքզինքդ
 ճանչնալ դժկամութիւնդ

Ականջներդ պիտի ցաւին բայց յանցաւոր չեմ
 Հասունցած կարծրացած մթապատ
 փշածաղիկին հիւթը դրի աչքերուս
 ինչի որ դպայ՝ Անապատին մէջ ինկաւ
 Ըսի բոլոր խնամակալներուս որ արիւնս դիւրալոյծ չէ
 մարմնիս հոսքը պիտի կաթի լայրծուն տարածութիւններուն
 ու մնայ անայլայլ անձոյլ
 Կը խօսիմ հազար լեզուներով
 բոլորին վրայ Անապատին համը կը թափառի
 Աչքերս բազմախորշ անցեալի ֆոսֆորներով կը պսպղան

Փշածաղիկին հիւթը դրի աչքերուս եւ սկսայ տեսնել
 Սկիզբը ցաւալի գործողութիւն էր
 քայց ապաքինումը այսպէս կը զարթնի
 Չուզեցի սպասել յիշողութեանս որ կու գար
 կարեայոյզ ու մոլեգին
 պատգամ մը արձակելով դեղնաւուն թախիծ ցանելով չորս դին
 Կ'ուզէի բռնել մագաղաթները յուզահեղձ ու մերկ
 որոնք Երկրիս ուռած հողէն կաթի պէս դուրս կը հոսէին

Անապատը խելագար մայր՝ գրկեր էր քեզ
 Մինչդեռ իր բազուկներէն խլուեր էի հեռու
 արիւնատուութեամբ կը տառապէի
 Ան ինչ վայր է
 ինչի որ հպիմ պատգամ մը կ'արձակէ
 Կ'ուզէր որ ինքզինքս թաղէի մահուան երգերուդ մէջ
 ամեն անգամ որ երգերդ մտիկ ըրի՝ նօսրացաւ արիւնս
 Մի կախուիր քղանցքէս չեմ կրնար բուժել քեզ
 իջիր փոսին մէջ
 Քեզմէ ետք շարունակելը հրաշագործել է
 քեզմէ ետք հրաշագործելն է որ զիս պիտի շարունակէ
 Ժամանակի թունաւոր լաւան ժայթքած է
 քարակտոր եռակտոր անբեկանելի

Պիտի ցաւին ականջներդ քայց յանցաւոր չեմ

Ձայնէս առաջ ճեղքուեցաւ սիրտս

Աստուծոյ պէս խօսեր եմ հետդ ամբողջ հոգիով եւ սրտով
 դեռ ինչո՞ւ
 կեանքիս խորհուրդը կը հարցնես

Երկիր
 ճշմարտութիւնդ աչքերէս մեծ էր երբ ծնայ
 ճշմարտութեանդ հոգին գտայ եւ ոչ թէ մարմինը
 որոնեցի զայն
 հասած արձագանգներու թրթռացումին մէջ
 նրբամոլ ձեւերու անտառներուն մէջ

գոյեղագոյն կիրքերու խարիսխներուն մէջ
 Մինչ այդ Անապատին մէջ
 մշտադող անունդ կը շոյէր բեկումիս կնճիռները
 ոսկորներս մեծցան փշածաղիկներու նման
 գիտէիր որ ողնայարիդ մէջ կարօտիս ծուծը կ'ապրի
 Թող խօսի լռութիւնդ Երկիր
 հիմա որ արիւնլուայ՝ հասեր եմ պողպատին
 ղևր աքսորեմ լալահառաչ բառերը
 Դեռ չեմ գիտեր թէ ղր ջրհեղեղը փարատեցաւ
 Իր նաւը ձգած լեռանս վրայ
 ղևր գնաց խռոված ջրհեղեղը
 Անտառներս քակուեցան մոխրացան
 ղևր ցրուեցիր արմատներս
 Բարկացայ քեզի Աստուծոյ պէս ամբողջ հոգիով եւ սրտով
 դեռ ինչո՞ւ
 կեանքիս խորհուրդը կը հարցնես

Մեռելները կ'ապրին մեր շուրջը ծառացած ձեռքերով
 անոնք տխուր են մեզի համար
 անոնք մեռած կը մնան սխալ պատճառներուն համար
 անոնք կ'ուտեն մեր բառերը եւ կու գան գիշերելու
 մեր մարմիններուն մէջ

Երկիրս ամեն բան կորսնցուց բացի յիշողութենէն

Մենք բոլորս հսկումի մէջ ենք
 Գիշերը լարած է իր երկրաբիւր կնճիթը
 Էսօր դուման է մեր լեռների վրայ
 այսօր փամփուշտ է Անապատին մէջ
 Չին թնդանօթները բացած են իրենց ենթալեզուն
 Ինչու են ստիպուեցայ դիմաւորել լեզուին ամենէն տխրեղծ եւ տափակ ձեւը
 ինչու են պիտի դիտէի տարիներով բեմադրուող եղերախաղը
 մոխրակիր դաշտերը եւ աստղերը կարմիր
 գիտակցելով որ ամբողջ աշխարհի մէջ այսքան կարմիր չեն աստղերը
 եւ հիմա՝ աղմուկը որ դարանակալ ձայներու ոստայնին մէջ կը թփրտայ
 եղկումեղկ լեզուներէն մեղմացած քաղցրագին բարեխառն
 Բացէք վարագոյրները որ տեսնէք այս թունաւոր աղմուկը

Կ'ուզէ որ գերեզմանատուներու կողքին ապրինք
 մեր գինեմոլ հայրերը միմիայն անոր մահուան մասին կը խօսին
 մեր ծոյլ հայրերը անոր լեզուն թանգարանի մը կը վերապահեն
 անվերջ խաչակնքումները փրկութիւն նկատելով
 Մինչ տեղի կ'ունենայ անոր կեանքի ցնցումը
 փոյթ չէ թէ ուր պիտի հասցնէ մեզի Անապատին զօրութիւնը
 Ո՛ր հեռաւոր միայնակ ձեռքերու բանակներն են
 որոնք շինեցին ամուր գիծեր ու այս շղթան
 ուր պիտի ալ խոնջ հանգչի Եղեռնը յարաթաւալ

Յամր ու անձայն կու գան կու գան ծանրաբայլ
 վառօղը՝ իրենց կուղպ բերաններէն հրթիռուած ճիչ
 երբ հոգին կը պարէ եւ մարմինը իր ներքին գալարումը կը կղպէ
 եւ կը բացուին տեսիլները որոնք մեր մանկութիւնը չարչարեցին
 իրար ետեւ շարուած օրերու զարհուրանքը եւ բառերը անդոհին
 պատրանացնոր եւ ինքնահար
 օտարոտի ներքնայարկերուն մէջ հեւընկալ ապաստանած

Յամր ու անձայն եկան եկան նահատակի աչքերով
 ուր կը շնչէին դարերու փոթորիկները
 եկան ոստայնանկեալ մեր պատմութիւնը մատնելու կրակին
 եւ արդարութիւնն էր
 արնագոյն կոպերուն ինկած կայծակի շեղբ
 ուր թանձրացեալ կատաղութիւնը կը սկսի վառիլ
 իրենց սրտի խունկին հետ որ դեռ սրտի չէր վերածուած
 Եւ մենք տեսանք ծուխը պալան պալան
 խաւարի մէջ արձակուած հռնդիւնը
 Մենք մեր պապերուն պէս դիակառքեր չտեսանք
 դիակները մնացին ասպնջական մայթերուն
 Վայրենի ցաւ մը իրենց այտամկաններուն
 մէկը միւսին անցուցին ծածկագիրը եղելութեան
 Նարեկները շարտելով՝ հողին տակը ծածուկ թուղթեր պահեցին

Նորընծայ Սարը շարժող ուխտաւորներ
 անդուռ անցեալներէ ելած
 ուրացուած իրենց իսկ տունէն
 հում եւ արնաշաղախ խռովքներով
 ամրաբազուկ արձակեցին սլաքները կայծակէ
 Ոգեկան որբան ոլորտներէ ետք աղօտած քաղցրութիւններէն զրկեալ

կեանքի մուտքին իսկ ստեղծուած այս խաւարումին
 իրենց արեան հետ յոյսը հոսեցուցին
 Երանաբաղձ եւ լուսանցոյց այդ դէմքերը
 մոմիացած աչքերով այդ դէմքերը ինկած
 իրենց արեան շապիկներուն վրայ ուր կը կպէր յուսափշուր սիրտը ցեղին
 կը տեսնէին կը տեսնէին կը տեսնէին
 աշնան օր մը յանկարծ ծաղկող ծիրանին

Շապիկները արեան սահմանացիր բեկրապատար
 բարձի նման կակուղ եւ ճամբուն պէս կարծր
 Պէտք չունիս բերելու ամոքում աշխարհի սարսափին
 երբ մեր սարսափը վերածուած է հեզնանքի
 տրտմութիւնը՝ զայրոյթի աղետը՝ կշիռքի եւ ցաւը՝ ձայնի
 Կամուրջներ չկան
 մի խուսափիր իրաւին եւ տխուրին հետ ապրելէ
 աշխարհի երեսին շարտէ իր քարոզած մարդկայնութեան շեղակոյտերը
 երբ չի թողուր որ մեր պողպատէ ձեռքերը
 մեր մանուկ ուրախութիւնները շոյեն
 ծնրադրէ արեան երկրատարած շապիկներուն քով
 եւ սորվեցնէր Աստուծոյ
 որ այսպէս է
 երբ Սէրը կեանքէն աւելի մեծ կ'ըլլայ

Ոտքի ելիր
 մենք շփշտակ պիտի նայինք ողբերգութեան աչքին
 անահ ահաբեկման յոյսը հեղելով մեր հոգիին փակ դժոխքէն
 Արտաւազդի քով բանտարկուած ձիերը թառանչ կը քաշեն
 մեր յուսաբեկման աղջամուղջը փարատի պիտի
 կամարներէն եւ աստիճաններէն ոչինչ կը յայտնուի
 Դերդ է որ պիտի պաշտպանէ քեզ պաշտպանէ դերդ

Չզացական ջրհեղեղներէ դուրս թեւարձակ
 Ներքայլումդ դէպի հոգիիդ հեղանուտը
 ուր թաղած էինք ամէն բան որ կատարեալ էր
 այսինքն սեւը ուրկէ կրակը անցած էր
 անձուկ զարհուրագին կաշուն
 Սփիւռք օրհնառաք եւ անիծապարտ
 Լոյսի նման ծննդագօր
 ստուերի պէս սերմնապահ

Լոյսի նման միահեծան
 ստուերի պէս ինքնակոչ
 Ստուերի պէս բաժանելի
 լոյսի նման ինքնասլաց
 Լոյսի նման ընթեռնելի
 եւ ստուերի պէս անտիպ
 Լոյսի նման բազմատարած
 ստուերի պէս ինքնամփոփ
 Լոյսի նման հաւատացեալ
 ստուերի պէս դիւրախաբ
 Լոյսի նման ինքնուղի
 ստուերի պէս հնազանդ
 Լոյսի նման ինքնաբաւ
 ստուերի պէս մակաբոյծ
 Լոյսի նման բազմիմաստ
 ստուերի պէս երկդիմի
 Լոյսի նման յաւերժական
 ստուերի պէս կարճատեւ
 Լոյսի նման ստուերահաճ
 Ստուերի պէս լուսաբաղձ

Մեր երակներուն մէջէն դեռ հողի որքան հոսանքներ պիտի անցնին
 որ հասնի Յողը

Շողաթոյր երկինքին տակ անշնչացած շապիկներ
 մեր հոգիին թանգարաններուն մէջ դնենք
 Դատարաններու մէջ մի շարուիք մտիկ ընելու բռնանուագները
 Դնենք անոնց սուրբ մատնահետքերը
 իրենց տրուած դատավճիռներուն վրայ
 որպէսզի մորթերու եւ ոսկիներու քովնտի սակարանէն
 պահ մը դուրս գայ արդարութիւնը եւ շնչահեղձէ բուն ոճրարարները
 Մատնահետքեր՝ ուր սառած է արիւնը եւ զօրութիւնը կ'ապրի
 քսենք զանոնք մարդկայնութեան
 կորաբամակ կերպարին եւ փորուած հանուած աչքերուն
 Պահպանել այդ սուրբ մատնահետքերը
 որոնք թիթեռնիկներ չբռնած՝ խրեցան Անապատին մէջ
 անոր մահաբեր ախորժին մէջ
 արշալոյսի միջանցքները փնտռելով
 որպէսզի արեւին խիղճը չխաւարի դարձեալ

Ազգի մը հացն է արդարութիւնը եւ ամբողջ ազգս անօթի է
 Դեռ քանի՛ դիակ պիտի գլտորի ապագային մէջ
 Զգօրագոյն սերմերն են որ անձնասպան կ'ըլլան
 ճարճատիւն տարածութեան վրայ՝ անշարժ օրօրոցներ
 չկառուցուած սեմեր չմրոտած կաթսաներ կապարակոծ քերթեր
 ծնողներու հառաչանքներ առանց ձայնաւորի
 ցաւը համր ու ներաբնակ ինչպէս կեանքը հողին
 ինչպէս զաւակի վերադարձի յուսափշրումը
 Մեր անցեալի եւ ներկայի աղաղակները
 հոգիիդ մէջ դիր եւ դուրս մի հաներ աղաղակները ձայնապնակ չեն

Այնպէս ընենք որ մեր զաւակները հաւատան մեզի
 Էջ էջ բանանք Անապատի խորհրդատետորը
 եւ ցոյց տանք լոյսը անհերքելի անհատնելի
 որուն սրափումէն իրենց սիրտը ճեղքուի՛լ գիտնայ
 Ծիրանին եմ ես
 աչքերուդ գոյնը
 Ամրահատիկը նուռի
 ափիդ ջլապինդ
 Միերի սուրն եմ
 տանդ մուտքին կախուած
 Արծիւը կրկնատենդ
 կնքանիչ ճամբուդ
 Եւ ողկոյզն եմ սեւ
 բայց հրացոյլուն համը արեւի
 Արեան շապիկն եմ
 Դեռ մուրագիս չհասած
 Վըրէս խորունկ քուն եկաւ Շողեր ջան
 Եւ Տըլէ Եաման
 ես երգն եմ Երկրին
 պահէ գուրգուրան մինչեւ որ տանիս զիս հետդ Երկիր
 Եւ այս է այս է միակ գոյութիւնդ ամենակեցոյց
 հեղեալ հոգիիդ այսօր եւ վաղը
 առաւօտ լոյսի
 արդար արեգակ
 ամբողջ աշխարհին եւ Տանս վրայ իբրեւ լոյս ծագեմ

(Թիւ 11, 1984)

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

ՏՈՒՆ

Երջերս ստիպուած եղայ «տուն» բառին իմաստը բառարաններու մէջ փնտռել, նախ հայերէն, ապա անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն բառարաններուն մէջ, որովհետեւ կորսնցուցեր էի զայն՝ տունին իմաստը, աւելի ճշգրիտ ըլլալու համար՝ տունին իսկական նշանակութիւնը եւ ուր ըլլալը:

Այլ խօսքով՝ կորսնցուցեր էի տունս: Անտուն էի: Եւ որպէս տուն չունեցող մէկը, «տուն» բառին նշանակութիւնը որպէս հարցադրում, ինքզինք ներկայացուցեր էր միտքիս:

Ինչ է տուն մը: Ո՞ր կ'ըլլայ ընդհանրապէս: Ինչ կը նշանակէ մասնաւորապէս: Կը բաւէ անոր ամբողջական իմաստը գիտնալ-հասկնալը, տուն ունենալու համար, թէ պէտք է ապրիլ զայն, այդ իմաստը, կամ ապրիլ անոր իմաստին մէջ, կամ ապրիլ անոր ֆիզիքական գոյութեան մէջ, հասկնալու եւ ըմբռնելու համար զայն:

Գիշդ սիրոյ պէս. գիտես, կարդացեր ես, այնքան շատ կարդացեր ու լսեր ես, որ կարծեր ես թէ ճանչցեր ես զայն, հասկցեր ես անոր էութիւնը եւ թէ անոր բացակայութիւնը ոչինչ կը նշանակէ զայն հասկնալու քու կարողութեանդ համար: Ու մանաւանդ՝ սիրեր ես: Եւ ասիկա ամենէն վտանգաւորն է:

Բայց երբ ապրեր ես զայն, յանկարծ, կարծես յայտնատեսութեամբ տեսեր ես ու հասկցեր, որ ապրածդ եւ իմացածդ բացարձակապէս կապ չունին իրարու հետ. աւելին՝ իրարու այնքան հակոտնեայ բաներ են անոնք:

Եւ ստիպուած եղեր ես հասուն մարդու ամբողջ կարողութիւնդ ի գործ դնել, ինքզինքիդ բացատրելու համար սերը, որուն գոյութիւնը տարբեր է իր իմաստէն:

Եւ այսպէս՝ «տուն»ը: Ապրեր ես անոր մէջ, առանց իմաստը հասկնալու. ինչ կարիք իմաստ փնտռել բանի մը մէջ, գոր ապրելով իմաստաւորեր ես: Եւ ուրեմն ապրեր ես առանց իմաստը, այլ խօսքով՝ արժէքը հասկնալու:

Եւ հիմա որ ան չկայ ան, հասկցեր ես որ ապրածդ եւ իմացածդ իրարու հետ կապ չեն ունեցած ի սկզբանէ: Յետեւաբար պարտաւոր ես մէկուն պակասը լրացնելու համար, միւսին վրայ դնելու ամբողջ իմաստութիւնդ:

Ստիպուեր ես «տուն» ըսուածը հասկնալու համար – եւ ոչ թէ ապրելու, ատիկա ըրեր ես արդէն վաղուց – բանալ անոր ծալքերը, փնտռել իմաստները, կարենալ ապրելու անոր բացակայութիւնը:

Տուն չունիս, գոնէ «տուն»ին իմաստը իմանաս:

Տուն. պատասպարան, ուր կ'ապրի մարդ արարածը երբ չ'աշխատիր, հոն ուր կը պատասպարուի ցուրտէն եւ տաքէն, շուրջի սառնութենէն եւ ատելութեան տապէն, ժխորի լռութենէն եւ առանձնութեան աղմուկէն:

Ուրիշ:

Հոն ուր մարդ կը սնուցանե իր յոյսերն ու գաւակները, ուր կը կոփե իր կամքն ու ընտանիքին պայքարի ոգին, իր լռութիւնն ու ընտանիքին ձայնը: Եւ հոն, ուր կը թաղէ ի՛ր ձայնը:

Եւ:

Այլ ինչ եւ: Ահա սահկա «տուն» է:

Եթէ սահկա «տուն» հասկացողութեան եզրն է, ձեւաբանումը, ուրեմն... վերջնականապէս անտուն եմ, որովհետեւ:

Ո՛ւր որ ալ գացի բնակիլ, պատերը միշտ ալ ականջ ունեցան, իսկ տունը, որքան հասկցայ, գաղտնարան է, պէտք է ըլլայ:

Տունը նաեւ թռչչի վայր է, տեղ մը ուրկէ ձագերը թռչչէ կ'առնեն. իսկ ուր որ հիմա կ'ապրիմ, թռչողներ ա՛լ չկան:

Ինչ որ կոփեցի, միայն առանձնութիւնս էր, արդէն այնքան անպիտան...

Երդիքէս ծուխը հագիւ ուժ ունի բարձրանալու, որովհետեւ մէկ պնակ պէտք է լեցնել. իսկ կաթսաներս այնքան մեծ են, որ ճաշը կ'այրի կրակին վրայ...

Յիշատակներն ալ, որոնք գրպաններս թխմեր էի, ստիպուեցայ ճամբուս վրայ ցանցնել, վերադարձի յոյսը փայփայելով:

ճամբաներս գեղեցիկ էին. բայց անտուն մարդը կրնա՞յ վայելել ճամբաներուն գեղեցկութիւնը: Շատ շատ՝ կը զգայ չորութիւնը նստարանին, որուն վրայ կը փորձէ քնանալ:

Կը մնար *եռկի* ըլլայ, կամ *սուֆի*:

Ըլլայ եւ անոնցմով իմանալ տարբեր աշխարհներու մէջ լողալու իմաստութիւնը, օրինակ «տուն» գաղափարին, տունի երագին եւ տուն իրականութեան միջեւ:

Յետոյ արթննալ սովամահ:

Տունս գիրքերս էին. բայց անոնք շատ ծանր էին կրելու համար:

Տունս նկարներն էին, որոնք այնքա՛ն մեծ էին եւ այնքա՛ն գեղեցիկ, որ կըրնային բռնաբարուիլ ճամբուն վրայ:

Տունս ճաշերուս հոտն էր, պատերուն փակած հոտը: Պատե՞րը տանէի, ի՞նչ ընէի:

Եւ տունս բարեկամներուս հետ անցուցած ժամերն էր: Հիմա անոնք ալ չկան, ամէն մէկը՝ մէկ անկիւն, ուրկէ՞ գտնեմ-բերեմ որ «տուն»ը տուն ըլլայ:

«Կը ճամբորդենք, պէ՛տք է ճամբորդենք, որովհետեւ միջոցին եւ տարբերութեան մէջ է ստեղծագործութեան գաղտնիքը: Երբ տուն կը վերադառնանք, տունը տակաւին նոյնն է: Բայց բան մը փոխուել է մեր միտքին մէջ եւ ատիկա ամէն բան կը փոխէ մեր շուրջ»:

Տակաւին վերադարձած չեմ եւ նիրվանայի հասնիլ ցանկացողի նման ամէն գիշեր կը խաղամ վերադարձի գաղափարին հետ, տարբերակներ կը փորձեմ, անոնցմէ լաւագոյնը ընտրելով: Առաւօտուն սակայն ոչինչ կը մնայ չոր իրականութենէն անդին՝ տակաւին վերադարձած չեմ:

Վերադարձի կարելիությունը տարօրինակ վախերու կը կապուի, Էութենական վախեր ասոնք, որոնք կը ջլատեն. կարծես ստիպուած, շունչս ետ իր տեղը բերելու համար, մոռացութեան կու տամ «տուն»ը եւ կը լծուիմ անոր իմաստներուն փնտռողքին:

Կը գտնե՞մ:

Ինչո՞ւ համար ամերիկացիք այնքան դիւրութեամբ տուն կը փոխեն. եթէ գործը փոխեց, տունն ալ կը փոխէ եւ կ'երթայ գործին մօտիկ տեղ մը բնակիլ: Ինչո՞ւ այնքան ալ չեն կապուի իրենց իրերուն եւ յաճախ-յաճախ garage sale-երով կը ձերբազատուին անոնցմէ: Մենք է միայն, որ իմաստ կը գտնենք մեր իրերուն մէջ, իմաստ+յիշատակներ+թերեւս-պետք-եղաներ... կը գտնենք, թէ հոն են անոնք սկիզբէն, մեզմէ անոնց գացած ու ծուարած, ինչպէս մենք ծուարեր ենք խրճիթներու մէջ ու յետոյ հասեր ենք դղեակներու, աստիճանին իւրաքանչիւր ոտքը մէկիկ-մէկիկ կոխելով, արիւնելով, բզկտուելով... եւ վերջը, ամենէն վերջը հրուեր ենք պարապի մը մէջ, ուր ոչ ծփալ սորվեր էինք, ոչ լողալ..

* * *

Այս այն տունն է...

Ո՞ր «այն» տունը, այն որ շիներ էր վարպետ Անտոնը, այն որ մնաց դպրոցի առաջին յուշերուս մէջ տեղ մը առանց իմաստի. ոչ Անտոնը ծանօթ էր, ոչ ալ տուն շինելու գաղափարը. տուները կային, կ'ըլլային, միայն բնակիչ պետք էր անոնց:

Թե՛ միւսը, քո՛ւ առաջին տունդ, ուր մեծ-մայրիկիդ հեքիաթները ձեռունին մէջ պահուըտեցան եւ չուզեցին վար գալ, հակառակ որ շա՛տ կանչեցիր զիրենք. մեծ մայրիկդ ալ չկար, բայց հեքիաթները ո՞վ հաներ էր ձեռունը պահելու, չհասկցար:

Դեռ միւսը, այն որ մուտք անկիւն մը ունէր անցքին մէջ եւ ուր վայելեցիր առաջին համբոյրիդ շփոթը ու մտածեցիր՝ ա՛յս է համբոյրը, ա՛յս է եղեր...

Եւ տուներու յուշերուն մէջ կորսուեցան մնացեալ յուշերը, մնաց կարօտ մը անհասկնալի եւ մնաց վարպետ Անտոնին անիմաստ տունը:

Յիմա ճամբաները ինկած տուն կը փնտռեմ:

* * *

Կրիայի պէս կամ խխունջի, տունս մէջս է. վեց հազար գիրքերս, իրենց տեղերով, կողքերով, մէջի նշումներով, գեղանկարներս, որոնցմէ մէկ քանիին ապակիները փշրուեր են, լուսանկարները, որոնք կը սպասեն շունչի, թոռներու զարմացական եւ հիացական կանչերուն, խոհանոցս իր մանր իրերով եւ ջահերս, բոլոր ջահերս, որոնք այնքան հեռուներէն եկած, կը կարծէին նոյնքան հեռուները երթալ..

Ինչպե՞ս տեղ գտայ մէջս այս բոլորը կրելու...


* * *

Տունը հոն է, ուր կը վերադառնանք մեր վերքերը լիզելու, մեր ուրախութիւնը պատերուն կախելու թանկարժէք նկարներու պէս, յետոյ փոխելու, երբ անոնց «նորոյթը» անցնի, կը վերադառնանք տեսնելու թէ ճիշդ ուրկէ՛ է որ կը վերադառնանք եւ ի վերջոյ՝ հաւասարումի բերելու կեանքը իմաստութեան հետ, եւ ընդունելու, քիթը գետին քսելով ընդունելու, թէ կեանք ըսուածը խաղի բերեր է մեզ:

Ու յետոյ քաղցր քունի մը վրայ փակելու մեր աչքերը, ժպիտը դէմքին:

(Թիւ 2, 2019)

ՀԱԼԵ՛Պ ՀԱԼԵ՛Պ


 ողը իմս չէր
 Բայց իմս դարձաւ
 Երբ հոն թաղուեցան պապերս որոնք
 Տիգրանակերտէն ԱՄՆի երագով
 Եկեր էին հոս

Ուր երկինքը լուրթ երագ ցօղեր էր
 Իրենց աներագ ու տազնապահար
 հոգիներուն մէջ

ուր հողը կարմիր ծնունդ տուեր էր
 ցորենին հացին ու քաղցր կեանքի
 հաւատքին անհաս

հողը իմս չէր

բայց իմս դարձաւ
 երբ այստեղ ծնան հանիս մեծ-մայրս
 Խանըմ անունով

Վերանուանուեցաւ
 Չուարթ Գասպարեան

Ու իր պսակին
 Դալուկ ժպիտով ու թելերը վեր
 «լեմունէ ալ լեմունէ» պարեց սրտագին

Լեզուն իմս չէր
 Բայց արձագանգը կը հասներ ունկիս
 Հեռու Անիէն Արքայէն Գագիկ

Եւ մեր պատմութեան հոսող հիւսակէն
 Բազում ձեռքերով հիւսուած ապահով
 Եւ նոյն վաչկատուն ցեղերէն քակուած
 Իսկ ցաւը մերն էր սկիզբէն իմս

Խոշտանգուած հողի եւ հեղուած արեան
Ցաւը իմն էր զի նոյնն էր նման

Այս հողին վրայ
Արեան մէջ կապոյտ
Եւ այս լեզուին մէջ

Վայրը ես էի
Եւ իմն էր վայրը որքան անտառը
հաւատքին անհաս եւ կամ երկինքը եղնիկներուն է

Բայց հրդեհ ինկաւ
Երկինքն ուրացաւ իր զաւակները
որոնք մնացին անհող աներկինք

ու կորսուեցան
իրիկուան լուրերուն
եւ իրականութեան միջեւ տեղ մը

երկնքին հետ
վայրն ալ ուրացաւ մեզ
մենք որ մեր ուսերուն վերցուցեր էինք զայն
ու խնամեր մեր թարթիչներուն շուքովը

Ծիծեռնակները ուշացան ժամադրութեան
ամեն գարնան կէսօրէ ետք
Ժամը չորսին

արձակուող աշակերտներուն
եւ իջնող իրիկուան օրհնութեան հետ

ծակ-ծակ էր երկինքը

ու ծիծեռնակները այն գարնան չհասկցան
թէ ինչո՞ւ չկային «փայտի հրապարակ»ին
զիրենք սպասող մանչերը

եւ ինչո՞ւ չկային զէթուզահիթեր ծախողները

կար միայն մեծ վախազորու յղի լռութիւնը
 – կարծես լռութիւնը էգ ըլլար –
 պատրաստ ամէն պահու արհաւիրք ծնելու

ծակ-ծակ երկնքին տակ
 ծակ-ծակ քարտէս մըն ալ կար
 ուր ոտնաչափ մը տեղ գտեր
 կեցեր էինք
 ծիծառներուն օրհնութիւնը վրանիս

իրենցմէ սորվեր էինք երգել
 մեր գիշերները բերդին շուրջ
 նարկիլէի բոյրով քաղցրացած

այն օրերուն
 ժամանակը մեր ընկերն էր
 մեզի հետ կը ծխէր գիշերներուն խորունկ կապոյտը
 եւ կը զուգերգէր պալլատը հին ասպետներուն
 որոնց անունները
 բերդին դարպասներուն էին դաջուած
 «Ոչ կը մոռնամ
 Ոչ ալ կը յիշեմ ապագան»
 Որ ժամանակին հետ թեւանցուկ
 Փախաւ մեր քաղաքէն
 Ետեւը միայն փոշի ու մոռացում ձգելով

Յիմա երկրին խորը տեղ մը
 Մոռցուած վանքերու կենդանութեամբ կը շնչենք
 Մնչող տատրակներուն գգուանքը մեր ուսերուն

(Թիւ 3, 2013)

ԿՈՐԻԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԳԱՂԹԱԿԱՅԱՆ



րանները լարեցինք,
 մեր վերքերն ու միամիտ աչքը միակ
 անոնց շուքին, անոնց շուքով քնացնելու
 – արեն արդեն ընկղմած էր
 մեր արեան մէջ ճահճացած -
 սակայն մոռցանք մեր ջիղերը վրաններու պէս լարել:

Եւ դաշտերու մէջ խոպան
 նոր ծառ ու խաչ տնկեցինք ու սնուցինք,
 բայց ծառ բնաւ չդարձանք հողերու մէջ անծանօթ:
 Ծակտիկները մեզմէ ոմանց մորթերուն
 չոր քրտինքով խցուեցան
 եւ մենք այդպէս վերածուեցանք թաղարներու ամլարզանդ,
 ուր ծաղիկներ ու բոյսեր
 թարմ օդի ու ոռոգումի սպասումով կը գունատին:

Մենք ուզեցինք ոգնի ըլլալ,
 մեր միսերուն մէջ հազար տեսակ սերմեր ցանեցինք,
 աղօթեցինք, որ այնտեղ հազար տեսակ փուշեր բուսնին,
 բայց լոկ կոտոշ բուսաւ մեր գլխուն վրայ տապահար:

ՈՒ ԵՍ ՄՕՐՍ ԱՐԳԱՆԴԻՆ ՄԷՋ ՄՊԱՍԵՑԻ ԱԲԵԼԻ ԼԱԲ ՕՐԵՐՈՒ...

Անապատին մէջ,
 հեռուն,
 ովասիսներ երգեցին ու զիս կանչեցին,
 բայց ես բնաւ չկրցայ
 խանդավառուիլ ամբողջովին,
 դեր ստանձնել,
 դիմակ փոխել:

ՄԵՆՔ ԱՆԱՊԱՏՆ ՍՊԱՌԵԼՈՒ ԶԱՄԱՐ ԱԻԱԶ ԼԱՓԵՑԻՆՔ,

Կեանքին վայրի մերկությունը
 ժառանգական մեր բառերով ծածկեցինք
 եւ կազմալուծ ջիղերը մեր աղօթեցին
 շղարշապատ սեռանդամին առջեւ այս
 ժամանակին ործեւէգ:

Վրանաքաղաքին մէջ,
 երկնաքերաւոր քաղաքներուն մէջ
 կեանքի քանի մը կաթիլներ հազիւ կրցան թափանցել
 մեր մորթերէն ներս
 կամ դուրս,
 ստիպելով մեզի հարց տալ

ՊԻՏԻ ԿՐՆԱՆՔ ԳԱՂԹՆ ԱՅՍ ԳԱՂԹԻ ՎԵՐԱԾԵԼ:

Գաղթակայաններու մէջ
 մենք լքեցինք ու կը լքենք ամէն բան,
 բացի մեր ներսը ցցուած սապատներէն ուռնացող,
 ուր կը ճչայ պատմություն մը,
 զոր տակաւին չենք հասկնար...

.....

Յանապազօր հացը միշտ
 կը փշրուի մեր մատներուն մէջ գինով
 կամ կը փշրէ ակռաները մեր ազագունն ապակիէ...
 Ես կ'երագեմ ձիեր, որոնք
 սրունքներով մկանուտ,
 երբուծներով հոլանի
 աւազն ու հողը ճնլեն ու բեղմնաւորեն,
 հեռաստանները հմայիչ հմայեն...
 Ես ձիերը կը սիրեմ ու կը վախճամ անոնցմէ...

Ես խաւարը կը սիրեմ ու կը սոսկամ անկէ, ան
 մշուշազգեստ լեռներու եւ կիրճերու շուրջ
 մշուշազգեստ հեքիաթներ կը սփռէ:

ՍԱԿԱՅՆ ԹԵՐԱՃ ՈՒ ԲՈՒԹ ԵՆ ԸՆԿԱԼՈՒՉՆԵՐՍ ԲՈԼՈՐ: ՈՒ ԵՍ
ՄՕՐՍ ԱՐԳԱՆԴԻՆ ՄԷՋ ԿԸ ՍՊԱՍԵՍ ԱԻԵԼԻ ԼԱԻ ՕՐԵՐՈՒ:

Արիւնս գիս կը տանի
դէպի յուշ եւ յուշէն դուրս,
եւ յուշս գիս կը տանի
դէպի հուն եւ հունէն դուրս
իսկ հունս գիս կը տանի
դէպի տուն եւ տունէն դուրս

ու ես կ'ըղծամ արեւուն
մարմինը եւ յիշողութիւնը ըլլայ:

* * *

Ես կը գաղթեմ, որովհետեւ մէջս աստուածներ կը կրեմ,
եւ կը գաղթեմ, որովհետեւ նոր աստուածներ կը ստեղծեմ
եւ կը գաղթեմ, որովհետեւ աստուածներս կը սպաննեմ,
ու կը գաղթեմ, որովհետեւ կը հաւատամ,
որ պիտի աստուածանամ գաղթելով:

Գաղթողն հեզ է ու մեծամիտ,
գաղթողն՝ ասպետ ու սրիկայ,
եւ գաղթողն է ողորմած ու ողորմելի:
Գաղթողն աշխարհը կ'ամփոփէ իր կուրծքին տակ,
եւ աշխարհը զինք չի կրնար ամփոփել:

Ես գաղթիս մէջ բոլոր սերերս կը ջնջեմ.
Ես գաղթիս մէջ բոլոր սերերս կ'ամփոփեմ
գաղթս կ'ուզեմ սիրել, սակայն չեմ կրնար,
կ'ուզեմ գաղթս լքել, սակայն չեմ կրնար.
գաղթս մեծ է, սերս՝ փոքր,
սերս մեծ է, անձս՝ փոքր,
եւ անձս միշտ կը գաղթէ, կը գերանի գաղթիս հետ:
Օր մը աստուած կ'ըլլայ գաղթս, ուրիշ օր մը՝ սատանայ:

(Թիւ 3, 1980)

ՅԱԿՈՒԲ ԿԻԻԼԼԻԻՃԵԱՆ

ԱԶԳ

*Մ*արիներու ընթացքին վարժուեր ես ամեն ինչ հարցադրելու, խնդրակա- նացնելու՝ յատկապէս որոշ ուսումնառութենէ ետք: *Այգ* հասկացողու- թիւնը սակայն երկար ատեն յամառօրէն մնացեր էր խնդրականացնող ակնոցիդ այն կողմը: Իսկապէս, դժուար է տարբադադրել այն, որ մարդ փոքր տարիքէն կը դաւանի ըլլալ, զգալ, աւելի ճիշդը այն որուն կը հաւատայ, նոյնիսկ կը կարծէ գիտնալ որ է՛, մանաւանդ երբ ան կապուած է հօրդ ու մեծ մայրերուդ, հօրեղբայրներուդ եւ հօրաքոյրներուդ անձնական ողբերգութիւններուն եւ ար- հաւիրքներով թրծուած անոնց աշխարհընկալումին: Այս վերջինը քեզի աւան- դուեր է առանց սրբատուփի, առանց պաշտօնական թուղթերու, այսպէս թէ այն- պէս անկիւնէ անկիւն դեգերող անտէր ձայներով. աշխարհընկալում որ կլաներ է հայրենիք, ժողովուրդ եւ ազգ ըսուածները, միաձուլուեր անոնց հետ, վերածուեր միաժամանակ հպարտութեան եւ թուրքին ու օտարին հանդէպ ենթագիտակից երկիւղի, վերաճեր անշրջանցելի պարտականութեան, վերապրումի մը պատաս- խանատու կարգուած ըլլալու յանցապարտ զգացումի, խանդավառութեան, մեծամտութեան, տրտմութիւններու, հիասթափութեան, յուսահատութեան, նաեւ վերադարձներու, օտարութեան ու ատով իսկ կառուցուած սեփական տան: Ու միշտ անոնց մէջ ու շուրջ՝ անզոյս իբրեւ յղացք, անոր ուզած չուզած փակչող ա- ծանցներով եւ պոչերով, սերերով, մոլութիւններով ու մոլորութիւններով, աշխար- հասասան եւ կենսակործան խոտորումներով, ատելութիւններով, այլը մերժող, ջնջող, «մաքրող» եւ անկէ զտող նկրտումներով:

Կը հարցադրես, կը դիտես: Չես ուզեր, տազնապ կ'ապրիս փորձելով համոզ- ւիլ այս ու այն մտածողի տեսութիւններով: Ո՞վ են որ իրենց փողոսկրէ աշտարակ- ներուն էն ծայրը նստած՝ գլխուդ քարոզ պիտի կարդան, ըսեն թէ որն է բարին, որն է չարը, եթէ անշուշտ այդ յղացքներն ալ յարաբերականացման հալոցին մէջ փոխարինուած չըլլան օրուան նորոյթ սա կամ նա մեղմաբանութեամբ: Օրին ապակառուցում հոլովեր ես, հիմա քննադատողական տեսութիւն կը կարդաս, կը բարկանաս, կը զարմանաս, հատումայնութիւններ (intersectionalities) եւ անոնց մասերն ու ճուտերը կը փորձես համադրել եւ չխճճուիլ զաղափարախօ- սական մտասեւեռումներու թնճուկին մէջ, իսկ միւս կողմէ գիտես լռութիւնը որ քուկիներուդ, ընտանիքիդ բաժինն է եւ որ կպչեր է անոնց ու քեզի. կը տեսնես թէ ինչպէս ոչինչը կը պատէ անոնց յիշատակները՝ թեւ թեւի տուած անձնականը զեղչած տրամասութիւններու:

Մեկ բան գիտես. մօրդ նախնիները՝ յիսու՛ն սերունդ, հարի՛ւր սերունդ (կարեւոր է արդեօք) հայրեր, մայրեր, ազգ(ականներ)՝ եկեր են վայրէ մը, ուր այսօր չես արտօնուած այցելել անգամ—վստահաբար կեանքիդ գնով—, եւ ուր՝ Նախիջեւանի, Ջուղայի գերզինուած տարածքին վրայ, անոնց խաչաքանդակ շիրմաքարերն անգամ փոշիացուեր են, ու մարդ բան չէ ըսած, Իւնեսքոն յօրանջեր է, տեսաբանները շարունակեր են հայրիշխանական խորհրդանիշներ տեսնել կանգնած դրօշածողերու, աշտարակներու, բերդպարերո՛ւ թէ բերդերու, թերեւս անգամ՝ կանգնած խաչքարերու մէջ: Ամեն մէկն իր գործին, ամեն մէկն իր խօսքին, դուն ալ բացակայութիւններուդ եւ անկարողութիւններուդ:

Բերդ ըսիր, այդպէս, անկապ, ու ահա գիտակցութեան ծալքերէն ձեռք կը բարձրացնէ յուշերու տետրակ մը: Կապոյտ մելան, նուրբ տողեր: Զօրդ եղբայրը կը յիշէ՝ «Սիսի բերդին կուրծքին հիւսիսային կողմը, Նոր Վանքին՝ հսկայ վանքին— իր դարեվանքով, կաթողիկոսարանով, իր հսկայ պարտեզով—բոլորտիքը տեսակ մը չինական պատերով ընդարձակ թաղ մը: Վանքին հիւսիսային դուռի ճամբան կ'անցնէր հայ թագաւորական պալատին մնացորդին տակէն. այդ դրան առջեւէն եթէ 50 մէթր հեռանաս դէպի հիւսիս, առաջին ընդարձակ, ճերմակ տունը իր առջեւը լեցուն ծառերով...»: Բնչ կը նշանակէ ազգը, ազգականը, ազգայնութիւնը մտածելու, փորձընկալելու տուայտանքներուդ մէջ՝ հօրդ այդ տան մէջ ծնած ըլլալը, Այի աղայի փոխ տուած ձիով ու Մուսթաֆա Էֆենտիէն վարձուած ձիակառքով անոր առօք փառօք ողիսականի երթալը դէպի Գաթմա, յետոյ բոպիկ՝ Մեսքենէ, Տեր Չօր, Զալէպ, փշուր-կտոր ընտանիքով վերադառնալը, խաղալը հազարամեայ փողոցներուն մէջ, ու յետոյ անվերադարձ փոխադրուիլը այլուր, ապրանքի պէս՝ իր տունն ու միւս տունները ուրիշին նուիրած ֆրանսական պետութեան նաւերով, ծովեզերք դրուիլն ու հոն քարայրի մէջ ապաստանիլը, կանգնիլը, ուսում ստանալը եւ ուսուցանելը, կեանք վայելելը, սերնդագործելը, ամեն տարի «Երբ որ բացուին» երգելը՝ «ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա», ու ի վերջոյ ամփոփուիլը 10,000 քիլոմէթր անդին արժանթինեան հողի կտորի մը մէջ: Առանց տեսնելու:

Տետրակի էջերէն եղբայրն է նորէն, որ կը շարունակէ. «Իսկ իրիկնամուտին միշտ դիտած եմ բերդին շուքին առաջանալը, ժամեր շարունակ կէսօրէն յետոյ՝ մինչեւ արեւին մայրը մտնելը. նկատելի, նշմարելիօրէն բերդին շուքը կը յառաջանայ դէպի արեւելք: Երբ շուքը հասնի դիմացի այգիներուն, գնացքը կ'արագանայ, իսկ երբ հասնի դիմացի Տաւրոսին, որ կը կոչուի Սուրբ Կարապետ լեռ, ա՛յլ օրուայ վերջն է»:

Նոյեմբեր է, քսանմէկերորդ դարու քսաներորդ տարին: Գիշերներուդ մէջ քունը հրմշտկելով իրար կը քաշքշեն ազգն ու զէնքը, սերն ու սարսափը, մահն ու երգերը, աղօթքը ծակած գմբէթներէ, մինարէներէ, խոնաւ խրամատներէ, հրասայլերէ, ապաստանարաններէ, վարակաւոր դիմակներէ, տամուկ աչքերէ: Կ'ըսեն՝ կարգը եկեր է Արցախին: Մարդ լուսին հասեր է, Զրատ հասնելու վրայ է, թուային եւ արհեստական միտք կը մշակէ, սեռերը կ'ազատագրէ, յետզադուլթա-

րար տեսութիւն կը բարբառի, իսկ նոյն ատեն այս լեռնցիներուն կ'ըսէ՝ շուքը ձեզի հասեր է, ա՛լ օրուան վերջն է: Որովհետեւ *սպգ* էք ու *այլ* էք:

Ազգ, այլ: Այլեւազգ:

Միաժամանակ քեզ միաւորող ու բաժնող: Ընկալեալ, ենթադրեալ ու բաղձացեալ միութեան եւ տարբերութեան սահմանագիծը որոշող: Կրնամ պատմուիլ անով, պայմանաւորուիլ այդ գիծով, ապրիլ կողքին ու դիմացը անով սահմանուողներու, սահմանափակուողներու բազմութեան: Ազգը եզերագիծ, վերջնագիծ: Ոչ ուզեր ես միւս կողմ անցնիլ, ոչ ալ փափաքեր որեւէ գիծ:

Թերեւս նայուածքի հարց է: Չանցէ սահմանումը եւ կեդրոնացիր առարկայիդ կարողականութեան վրայ: Անունէն անդին՝ կեանքը: Կրնամ պատմուիլ անով, պայմանաւորուիլ, այսինքն ոռոգուիլ, կենսանայ, ընծիւղիլ անոր շունչով:

Ազգն ուրեմն՝ ոչ թէ անուն ու սահման, այլ փորձառութիւն:

Ազգ՝ *գեղեցիկը* ժառանգելու, քո՛ւ գիտցած եւ ուզած ձեւովը ըմբոշխնելու, յետնորդներուդ եւ այլոց փոխանցելու կարողութեան, կարելիութեան, բայց նաեւ իրաւունքին անունը: Ու իրաւունքը ատիկա ընելու այնտեղ, ուր զայն քեզի փոխանցողները ծներ են, եղեր են, մաշեր են, հողացեր են:

Նաեւ, ի վերջոյ, այդ կարելիութիւնը պաշտպանելու իրաւունքին եւ ատոր բարոյականութեան անունը:

Վտարումէն, կորուստէն, վայրիդ չբացումէն ետք՝ նաեւ այդ կորուստին մէջ բնակելու եւ նոյնիսկ հո՛ն հարազատութիւն, մտերմութիւն, գեղեցկութիւն որոնելու ու երբեմն զայն խօսելու անկարելի փորձին անունը:

(Թիւ 3, 2020)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

*Մ*եր խօսքին հիմնական գաղափարը այն է, որ գուտ ազգային գրականության մը յղացքը ժամանակավրեպ է եւ թէ Սփիւռքը, կտրուած հայրենի հողէն ու ցեխէն, խզուած դարակուտակ անցեալի մը բեռէն ու մոլորմէն, ցիր ու ցան եւ անհետք, կատարելապէս կարող է բարձրորակ գրականութիւն մը մշակել որ ըլլայ նաեւ ազգային: Այս իրագործումին համար, Հայրենի Հող կոչուած բարոյական ու իմացական իրողութիւնը անհրաժեշտ չէ, ու կրնայ նոյնիսկ վնասակար ըլլալ:

Նախ՝ ճշդում մը: Գրականութիւն ու մտաւորական յղացքները հոս առնը-

գործութեամբ: Առաջինը, ամենէն կարեւորը, մշակութային, վերացական արժէքներու կենդանի ներկայութիւնն է: Այսինքն, ճշմարտութիւն, գեղեցկութիւն, անկեղծութիւն ու իմացականութեան բոլոր պահանջները գերադասւին պիտի կեանքի, նիւթի, ողորմելի ճառախօսի ու կօշիկի մեծաքանակ վաճառականի մակարդակի արժէքներէն, գէթ մտաւորական ընտրանիին համար:

Երկրորդ ազդակը, օտար ազգեցութիւններու ներկայութիւնն է: Երրորդը՝ բարձրորակ քանի մը միտքերու, ծնունդը: Ու վերջապէս, չորրորդը՝ ժողովուրդ մը, կամ նախընտրաբար գրողին ժողովուրդը:

Ահաւասիկ ուրեմն, չորս պայմանները: Այլ հարց կը ծագի հայրենի երեւակայական հողի մը կամ ազգային կոչուած այլապէս մահկանացու, առնուազն մահամերձ գրականութեան մը: Կ'արժէ քիչ մը աւելի մօտէն քննել իւրաքանչիւրը:

Առաջին տարրը, մշակութային *նօրմ*ներու արժեւորումն է: Գրականութիւնը ոչ ժամանց է, ոչ ալ դեղահատ, որպէսզի շուարած ամբոխներ երանաւետ շօշափելի երջանկութեան մը մէջ թըմրին ու սպասեն մահուան: Այս պարագային՝ դառնան իրենց պապերուն օճա-

...գրական արժէքը աղերս չունի ժողովուրդի ու անոր ղեկավարներու, անոր ախորժակներու արժէքին հետ: ... գրողին համար՝ ամէն բանէ բարձր են ու այս պայմանով միայն ան արուեստագէտ է:

Լաւ են իրենց սեղմ, հայկական իմաստով, մնալու համար նիւթին պարտադրած զգացական շրջագծէն ներս: Եթէ այդ բառերուն տայինք իրենց բուն սահմանումը, նիւթը բոլորովին կը փոխուէր:

Գրականութեան մը գոյութիւնը պայմանաւոր է չորս ազդակներու ներ-

խը ու հոն շարունակեն իրենց մարդ էակի անիծեալ ու անիմաստ գոյութիւնը: Յետոյ, ինչպէս ակնարկեցինք քիչ վերը, գրական արժէքը աղերս չունի ժողովուրդի ու անոր ղեկավարներու, անոր ախորժակներու արժէքին հետ: Կեանք ու արուեստ իրար հակադրուած եզրեր են: Այնպէս որ մտքի արժէքները, գրողին համար՝ ամէն բանէ բարձր են ու այս պայմանով միայն ան արուեստագետ է: Ճշմարտութեան փընտրուած է ան ու անձնական ճակատագիր մը կ'իրագործէ: Կեանքի, ջիղերու եռուզեռին ժամանակաւոր, անհետեւի ու կիսատ բնոյթին դէմ ու անկէ վեր՝ մարդ էակին գերագոյն ճիգն է (կրօնէն ու միսթիսիզմէն զատ) կատարելութեան մը հասնելու: Բազմութիւնները պիտի մուրան ու հայհոյեն, պիտի երագեն ու մեծնան, ուռին, ձգտին փառքի ու անմահութեան, սիրտը դրամի պիտի փոխեն ու հարստանան: Գրագետին համար տարբեր անմահութիւն ու հարստութիւն կայ, մթնոլորտի տարբեր բարձրութեան ան կը շնչէ: Մակարդակներու եւ արժէքներու, այս տարբերութեամբ է, որ կարելի է գրական կեանք ու մշակութային ապրում ստեղծել:

Էլէքթրոնիք այս դարուն ուր մարդիկ ու մշակոյթներ քիթ քիթի նետուած են ու գիտական միտքը մեր քառակուսի արմատներէն բռնած քառակուսի թաղարներու մէջ կը սահմանափակէ, անհրաժեշտ դարձած է շեշտել թէ մշակոյթը ազատագրութեան հազուագիւտ *սօրթի տը սըքուրներէն* է: Այսինքն գրողներ ու մշակոյթներ իրար կռնակ պէտք է տան ու կու տան անկախաբար այն իրողութենէն, որ իմացական

առուտուր մը կայ, գաղափարներու փոխանակութիւն մը կայ առանց որու արուեստ ըսուածը Պնակ մը Կերակուրի խմբագրականի կը վերածուի ու հազիւ փոր մը կը կշտացնէ:

Այնպէս որ, որեւէ ազդեցութիւն, ուրկէ որ գայ ու ինչ մտավիճակ որ փո-

Ինքն իր մէջ կամ անցեալի կարօտին դարձած գրականութիւն մը դատապարտուած գրականութիւն մըն է, որովհետեւ եթէ գաղափարները չնորոգուին, կը հիննան, եթէ զգացումներ չճամբորդեն կը տժգունին:

խադրէ՝ լաւ է: Խօսակցութեան մը ընթացքին, Պրն. Նարդունի կը յայտնէր թէ մեր արդի գրական կեանքին համար, բանագողութեան գնով իսկ եկած օտար ազդեցութիւնը բարեբեր է: Ճայրայեղութիւնը անշուշտ աւելի ցայտուն կը դարձնէ մեր արդի կացութիւնը: Ինքն իր մէջ կամ անցեալի կարօտին դարձած գրականութիւն մը դատապարտուած գրականութիւն մըն է, որովհետեւ եթէ գաղափարները չնորոգուին, կը հիննան, եթէ զգացումներ չճամբորդեն կը տժգունին: Թագաւորական գերդաստաններ ու մեծահարուստ ընտանիքներ որոնք իրար մէջ կ'ամուսնանան, շատ լաւ գիտեն այս իրողութեան ճշմարտութիւնը: Կրօնաբանական պարանոցներու եզրակացնել, թէ մտաւորականութիւն մը որ արտադրական պատճառներով կը մերժէ բացուիլ օտար ազդեցութիւններու՝ կը դաւաճանէ իր կոչումին: Ամէն պարագայի, դոնփակ գրականութիւն մը վախի, ամուսնազն անգիտութեան փաստ է:

Երրորդ պայմանի, բարձրորակ գրողներու մասին շատ քիչ բան կայ ըսելիք: Եթէ գան, կու գան ու կը պարտադրեն իրենց աշխարհահայեացքը ու երկը:

Շատ ավելի բան չունինք ըսելիք ժողովուրդի մասին: Թատրոնէն գատ, գրական բոլոր սեռերը, իրենք կը պա-

...մեզի համար, Սփիւռքը ծովէ ծով ու անկախ իրողութիւն մըն է, տեսակ մը առժամեայ ճակատագիր ու անոր բնակիչները այնքան Հայ են, որքան որեւէ դարու ու հողամասի Հայերը:

րունակեն իրենց *նեղոն-տէթրը*: Չկարողացուի, չհասկցուի, անտեսուի, ուրացուիլ՝ հետեւանքներ են լոկ գրական կեանքին ու չեն կրնար կշիռ ունենալ անոր ծնունդին ու զարգացման մէջ: Փնտռել ու մանաւանդ գտնել արտաքին պայմաններու մէջ պատճառները գրական երկի մը կամ շարժումի մը կորանքին՝ կը նշանակէ չհասկնալ թէ ինչ է գրականութիւնը: Ժողովուրդի մը գոյութիւնը սակայն, կրնայ դրական

Միտքն է, պաղ ու անգուր իմացականութիւնն է, որ տեսական պրկումի, թանսիոնի տակ՝ վառ կը պահէ մշակութային կեանք կոչուածը

դեր խաղայ, հայթայթելով արուեստագետին ազգային *մօթիֆ*ներ, անցեալէն կտակ մնացած ապրումներ հոգեբանական ճշմարտութիւններ, զորս ան կ'օգտագործէ, եթէ պահանջը զգայ կամ

եթէ կը գուգադիպին իր խառնուածքին: Այլ չենք ծանրանար հայրենիքի մը գոյութեան վրայ, որ ժամանակավրէպ յղացք մըն է մեր դարերուն: Գրողը պիտի տայ ինչ որ ունի գանկին մէջ ու եթէ ազգ ու Հայրենիք չեն ներշնչեր զինք, հարցը փակուած է:

Կը հասնինք ուրեմն մեր առաջին եզրակացութեան: Այս չորս պայմաններէն եւ ոչ մէկը անկարելիութիւն է ըսփիւռքի մէջ: Կը հասկցուի անշուշտ որ մեզի համար, Սփիւռքը ծովէ ծով ու անկախ իրողութիւն մըն է, տեսակ մը առժամեայ ճակատագիր ու անոր բնակիչները այնքան Հայ են, որքան որեւէ դարու ու հողամասի Հայերը:

Արդ, ինչ կարելիութիւններ կան այս վերոյիշեալ պայմանները ստեղծելու Սփիւռքի մէջ:

Նախ՝ մտաւորական մթնոլորտի հարցը: Իր անունին արժանի մտաւորականութիւն մը կեանքի ու արուեստի պայքարէն կ'առնէ իր ուժը: Եթէ Սփիւռքի մտաւորականութիւնը իր մեծ մասով գուրկ մնացած է բարձրագոյն կրթութեան մը բարիքէն ու նաեւ չարիքէն, եթէ անոր նիւթական պայմանները շատ փայլուն չեն ու երբեմն ալ ումանց ճակատագիրը 90ական թուականներէն մնացած հոգաբարձուի մը քմայքէն կախուած է, այսուհանդերձ ան կատարելապէս ի վիճակի է ընտրելու իր արժէքները, իմացականը ու հոգեկանը գերադասելու նիւթականէն: Օրինակ մը տանք: Սէր, երագանք ու բնութիւն երգելը, ինքնին, գէշ բան չէ ու եթէ յաջողի՝ արժէք է անկասկած: Պայքար ու պոռթկում՝ կրկին յարաբերական արժէք մը ունին: Բայց մտաւորա-

կան մթնոլորտ չեն ստեղծեր: Միտքն է, պաղ ու անգույն իմացականութիւնն է, որ տեւական պրկումի, *թանսիոնի* տակ՝ վառ կը պահէ մշակութային կեանք կոչուածը: Եթէ Սփիւռքի մտաւորականութիւնը ըմբռնէ այս իրողութիւնը, լծուի տարիներ, սպառող մատենադարանային ուսումնասիրական, պըրպըտումի, դասաւորումի աշխատանքին, իբր նիւթ առնելով մեր վերջին հարիւրամեակի ընկերային, պատմական ու գրական կեանքը, զայն վերագնահատելու համար, կամ ձեռնարկէ օտար մեծ հեղինակներու ու գրական շարժումներու հայացումին՝ այն ատեն կ'ունենաք այդ մթնոլորտը: Անկարելի բան է այս:

Ասոր առաջին հետեւանքը այն պիտի ըլլայ որ պիտի բացուինք օտար ազդեցութիւններու: Պէտք կայ պատմութիւնը վկայ բերելու փաստելու համար այս ճշմարտութիւնը: Հոն ուր մեր մտաւորականութիւնը բաց եղած է ուրիշ մշակոյթներու ազդեցութեան՝ հոն ծաղկած է մեր մշակոյթը—Վենետիկ, Վիեննա, Հնդկաստան, Չմիւռնիա, Պոլիս, Թիֆլիս, Փարիզ: Մինչդեռ հոն ուր գոցած է իր մտքի պատուհանները, հոն ալ ամլացած է—Գաւառ, Հայաստան, Ամերիկա, Պարսկաստան ու Միջին Արեւելք: Այսօր, մեր միակ գաղութը որ գոց ու մուտ սենեակներու մէջ չ'ապաստանիր, Պոլիսն է ու հոն է մեր յոյսը, հոնկէ պիտի ծագի, հեռու կամ մօտ կէսօր մը, մեր գրականութեան նոր վերածնունդը:

Վերստին շատ բան չունինք ըսելիք մեծ արուեստագէտի մը ծնունդի մասին: Կու գայ, կը յուսանք...: Ո՞վ հրաւի-

րատումն դրկեց Արուսեանին, Դուրեանին:

Գալով ժողովուրդին, ան կայ՝ իր թրքախօս բարերարներով ու ֆուլթալիստներով, իր սրտակեղեք վարժապետներով ու ակումբի պահակներով: Կայ զանգուածը, թիւի ու յուզումի հըսկայ շտեմարան: Ու կայ դեռ լեզուն, ապրող ու՝ տագնապող իրականութիւն:

Ուրեմն, չորս պայմանները իրագործելի են, բան մը՝ որ ամբողջութեամբ կախում ունի մեր մտաւորականութեան կամքէն ու պարկեշտութենէն:

Հոն ուր մեր մտաւորականութիւնը բաց եղած է ուրիշ մշակոյթներու ազդեցութեան՝ հոն ծաղկած է մեր մշակոյթը—Վենետիկ, Վիեննա, Հնդկաստան, Չմիւռնիա, Պոլիս, Թիֆլիս, Փարիզ: Մինչդեռ հոն ուր գոցած է իր մտքի պատուհանները, հոն ալ ամլացած է—Գաւառ, Հայաստան, Ամերիկա, Պարսկաստան ու Միջին Արեւելք:

Հասանք վերջին հարցին: Ի՞նչ ադերս կայ այս բոլոր ըսուածին եւ ազգային գրականութիւն ու հայրենի հող յղացքներուն միջեւ:

Ազգային կը կոչենք այն գրականութիւնը, որ ազգի մը զգալու, մտածելու ու գործելու եղանակներուն դրոշմը կը կրէ: Արդ, եթէ Սփիւռքի կը պակսին այսօր ազգ կոչուելու արտաքին պայմանները՝ ան սակայն ժողովուրդ մըն է: Հետեւաբար եթէ ազգային գրականութիւն չենք կրնար մշակել, կրնանք գէթ

հայ գրականութիւն մը ծաղկեցնել հոս ու հոն: Մենք հոն ունինք իրականութիւն մը, հազիւ կորցուած ճակատագրէն ու մենք հայ ենք: Չո՛վ կը խաբենք երբ դարձած հարիւր տարի առաջուայ իրականութեան մը ու անոր ստեղծած

...գրողը եթէ բանէ մը պիտի ներշնչուի՝ այդ պէտք է ըլլայ իր դարը, իր աշխարհը, իր անմիջական ժողովուրդը: Նուագագոյն մտադրութիւնը չունինք օրէնք սահմանելու արուեստի մէջ, բայց համոզուած ենք որ միայն այս ձեւով կարելի պիտի ըլլայ մեզի Սփիւռքը փրկելու...

մարդերուն ու արժէքներուն՝ գրականութիւն մը կը զարգացնենք ու կը յաւակնինք զայն ազգային կոչել: Օրինակ, դառնալ Հայրենիք ու անկէ ներշնչուիլ կարելի բան է: Բայց մենք ծանր կաս-

Հայրենիքն է որ, իր ներկայ պայմաններուն մէջ, իր սնունդը մեզմէ պէտք է առնէ, մեզմէ՝ որ ազատ աշխարհի ազատ մշակոյթին մէջ կ'ապրինք ու կը ստեղծենք: Դժբախտաբար, Սփիւռքը դեռ այդ բարձրութեան ու խորութեան չէ հասած:

կածի տակ կը դնենք այդ ապրումին վաւերականութիւնը, մանաւանդ որ ոչ 19րդ դարու Հայրենիքի ոչ ալ ներկայ Հայրենիքի ոգեկան ու մանաւանդ գրական արժէքները կը գուճադիպին մեր ներկայի զգայնութեան ու ապրումին: Հայրենասիրութիւնը հոյակապ բան է

բայց գրողը եթէ բանէ մը պիտի ներշնչուի՝ այդ պէտք է ըլլայ իր դարը, իր աշխարհը, իր անմիջական ժողովուրդը: Նուագագոյն մտադրութիւնը չունինք օրէնք սահմանելու արուեստի մէջ, բայց համոզուած ենք որ միայն այս ձեւով կարելի պիտի ըլլայ մեզի Սփիւռքը փրկելու, Պոլիսն ու Հայաստանը կորսընցնելէ վերջ: Մնաց որ իրականութեան մէջ, Հայրենիքն է որ, իր ներկայ պայմաններուն մէջ, իր սնունդը մեզմէ պէտք է առնէ, մեզմէ՝ որ ազատ աշխարհի ազատ մշակոյթին մէջ կ'ապրինք ու կը ստեղծենք: Դժբախտաբար, Սփիւռքը դեռ այդ բարձրութեան ու խորութեան չէ հասած:

Հետեւաբար, իր լայն առումով, ազգային գրականութիւն է այն գոր կը մշակեն ազգի մը զաւակները: Իր նեղ առումով, զուտ ազգային բառը գրականութեան մը՝ արժէքը չի բարձրացնէր անպայման:

Եզրակացութիւն: Գրականութիւնը ամէն բանէ աւելի տիեզերքի ամալութեան մէջ նետուած ըմբոստացումի անկաշկանդ ճիգերու գումար մըն է: Կեանքը սակայն համակերպումի ձեռնարկ մըն է, սակարկութեամբ ու ճարպիկութեամբ իրագործուած: Ու բոլորովին տարբեր, հակադիր են կանոնները եղերական այս երկու խաղերուն:

Այս պայմաններու տակ, Սփիւռքը առանց հայրենի հողի ու ազգային հաւաքական, հասարակաց ապրումի, կատարելապէս կարող է գրականութիւն մշակելու: Թէ ո՞ր չափով ազգային կ'ըլլայ այդ գրականութիւնը՝ սահմանումի հարց է: Եթէ Հայ ենք, ուրեմն մեր գրող-

ներու գործը հայ գրականություն կը
կոչուի, որ անկասկած աւելի բան մըն է
բան ազգային գրականությունը: Իսկ ե-
թէ Յայ չենք... հարցը գոյութեան իրա-
ւունք իսկ չունի:

(Թիւ 8, 1964)

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ



Ա սուտ մարդն եմ
 ցուցափեղկի գաճե արձան
 որուն ոչ ոք բարեւ կու տայ
 կարծելով թէ տեղս կայնած
 մէկը կայ
 համեղ պատամ անօթութեան աչքերուն մէջ
 սովը սառած ճերմակ լոյսի ակռաներով
 զիս կը լափեն հազար կողմէն ու կը կլլեն
 բայց չեն գիտեր ինչու քաղցը դեռ կը կրծէ
 ներսը տեղ մը մթին փոսը յատակ չունի
 հուժկու հովը լուռ անդադրում
 կը փչէ:

Անքուն գաղտնի
 էլեկտրոնիկ սեւ աչքն եմ ես
 թանգարանին դուռը գոց էր
 իր բացումին առաւօտէն
 կը դիտեմ
 վանտալներու խելամ գրոհ գիշերին մէջ
 թաղի լաճեր ապակիները կը փշրեն
 ներսը արդեօք գանձեր կամ ն թէ պարապ է
 ոչինչ երբեք հոն չէ մտած չէ պահուրտած
 ես եմ միայն չռած պչնած ու շուարուն՝
 հրաշքի մը երեւումին
 կը սպասեմ:

Անտես անյայտ
 անեութիւն մարդն եմ ես
 անպէտ շքեղ մեծղի ռատար
 հսկայ փարոս՝ գիտակցութեան
 լոյս կու տամ
 տիեզերքի հարթավայրը կը շողշողայ
 բայց ես ներսը մութին նստեր՝ ինչպէս գիտնամ
 ուր է լուցկին զարնեմ կեանքին յանկարծ վառի
 կարելի է ես եմ միակ տեսանելին
 բառերու մէջ խանձարուրուած միակ ողջը՝

խորհրդաւոր կրաֆիթի
կը գծէ:

Ես լրտեսն եմ
ըլլալ բային նրբանցքներուն
կը սթտամ զիս կը փնտռեմ
ո՛վ է ինչ է տեղս անցեր
ու կ'ապրի
կեանքս փախեր ինձմէ ծածուկ վանք մտեր է
ետին թողած անթիւ անդէմ դերանունը
մարդոց մասին իրար ձեռքէ ինչ կը խլեն
յետոյ չկան՝ կարօտներու գիրկը ինկած
մինչ սգաւոր հիւլէները մեծ բակ կու գան՝
ես եմ միայն որ տակաւին կը փնտռեմ:

Անգոյ մարդն եմ
որ չէ եղած ու ակ չըլլար
բանդագուշակ կրկներեւոյթ՝
ամէն ինչի ձեւը առնող
դեւին պէս
ձեր կեանքին մէջ առօք փառօք կը բնակիմ
կը յօշոտեմ ներսէն դուրսէն ձեզ կը պարպեմ
մինչեւ ձեզմէ ուշքի կեղեւ միայն մնայ
ու ներս նայիք բան չգտնէք բացի ինձմէ
որ փոխանցէք մէկզմէկու՝ մինչեւ հասնիմ
անմահութեան դարպասները
ու հատնիմ:

Ոճրագործն եմ
բանտ նետուելիք միակ մարդը
փախստական կը թափառիմ
փողոցներէն ազատ անմեղ
բայց ես եմ մարդոց ցեղին աննախընթաց պատուհասի
ազդանշան տիւ ու գիշեր թակը լախտը
թաղանթներուն ու կոպերուն՝ ճամբայ բացէք
ճշմարտութեան թաքսիներով պիտի սուրամ
պիտի անվերջ ձեզ կոխկռտեմ որ աթննաք –
ապրիլ չկայ առանց մահէն
անցնելու:

Մարդ էակն եմ
 վկայ չունիմ նօտար չունիմ
 բառէ լաստ մը վրան ելեր
 նշան կ'ընեմ բան մը կ'ըսեմ
 թէ ինչպէս
 ես սա մարմնին վարձակալն եմ ու տանտերը
 զիրար գրկած դանակ դանակի ողջ ողջ թաղուած
 վայրկեաններու շաղախին մէջ քար չկտրած՝
 գուցէ յոյս կայ կեանքի ծէսը հեղ մը լարել
 բանալ սիրոյ գաղտագողի ամբարտակը
 ու փորձ ընել մահը չեկած
 ապրելու:

Իսեղճին մէկն եմ
 տաշեղ ցեխոտ՝ սեւ սրինգէն
 ժամանակի գետին ինկած
 խուլ սուրբերու խօլ շուրջպարէն
 կոխկոտուած
 ունայնամիտ եպերելի մեղկ թերածին
 թառատունէն վնտուած լկտի սիդելիս
 օձագալար մեղք ու յանցանք զիս կը հեղձեն
 եղծ շուշփան եմ ժանգոտ սոնակ խորտակ յեսան
 նեխ դոժինքի քաքի ժահս աշխարհ բռներ՝
 ուրիշ կեղերջ ուրիշ լորուստ
 չունիմ ես:

Ես Աստուածն եմ
 որ պիտի գայ ստեղծելու
 լոյսի շողը խաւարին մէջ
 փսփսալու անցաբառը
 իսեղճ մարդոց
 ծուղակ ինկեր՝ ապուշ ապուշ կը ծիծաղիք
 յոյսի յիմար թռուցիկներ բռներ կեցեր
 դաշտերու մէջ տգիտութեան տառապանքի
 մրրիկներու ցաւի ճիչէն ան խուլցեր եմ
 արդէն կոյր եմ լեզուս շատոնց բռնուած է –
 պատգամ չունիմ խրատ չունիմ՝
 ես աւ եմ:

(Թիւ 5-6, 1989)

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ

ԴԻՄԱՊԱՏԿԵՐ ՎԱՅԷ ՕՇԱԿԱՆԻ

Ամեն մարդ իր սեփական աշխարհը կ'արտայայտէ: Նման ձեռնարկ մը կրնայ չհետաքրքրել ուրիշները. բայց մտածել որ անկուրջ է ան՝ սիսայ է: Թերեւս պէտք եղած ճիգը չենք ըրած հեղինակի աշխարհէն ներս մտնելու, թերեւս դատումին անհրաժեշտ հեռաւորութիւնը չէ ստեղծուած տակաւին:

–ՄՈՐԻՍ ՆԱՏՕ

Վահէ Օշական իսկական երեւոյթ մըն է մեր ժամանակակից իրականութեան մէջ: Աւելի քան 15 տարի է ներկայ է գրական կեանքի բոլոր անկիւնադարձերուն, միշտ ուրիշներէ տարբեր, միշտ ինքնիրեն հաւատարիմ: Աւելի քան 15 տարի է ի վեր միեւնոյն ինքնայատուկ մտածելակերպն ու զգայակերպը կը պարզէ եւ հետաքրքրութիւն կը ստեղծէ, կը զարմացնէ, կ'ըմբոստացնէ, ի վերջոյ մերժողական կեցուածք ամառացնելու համար:

Մարդիկ վերապահ են իր գործին հանդէպ, առնուազն սպասողական դիրքի մէջ: Բայց ինք կը շարունակէ արտայայտուիլ, զարմացնել, ջղայնացնել: Յուզիչ հետեւողականութեամբ մը:

Անսովոր ըլլալու, շուարական զարմանք ամառացնելու տրամադրութիւն մը գոյութիւն ունեցած է իր մէջ հաւանօրէն, թերեւս մեկնակէտը եղած է նոյնիսկ իր կերպին: Բայց տարիներու ընթացքին բնաւորութիւն դարձած է ան, խառնուածքի վերածուած, անկեղծ կեցուածքի: Մարդ գիտակից իր կեանքին 15 տարիները չի յատկացներ անտարբեր հաւաքականութիւն մը զարմացը-

նելու միշտ միեւնոյն խռով աշխարհի անդոհանքը դրսեւորելով, յամառօրէն ինքզինք մնայով:

Թերեւս համազգացութեան ու համակրանքի անհրաժեշտ ճիգը չենք ըրած իր աշխարհէն ներս մտնելու համար, հաւանօրէն պէտք եղած հեռաւորութիւնը չէ ստեղծուած, մինչեւ հիմա, դատումի լոյսին տակ առնելու համար իր գործը: «Քաղաք»ի⁽¹⁾ հրատարակութիւնը այժմեական կը դարձնէ ըմբռնումի ճիգ մը: Ժամանակն է թերեւս, երկու անջատ հատորներու եւ բազմաթիւ յօդուածներու տասնըհինգամեայ «հեռաւորութենէն» քննելու Վահէ Օշականի ստեղծագործութիւնը, ընկալումի փորձ ընելու եւ դատումի խօսք ըսելու:

* * *

Իր բոլոր գրութիւններուն եւ յատկապէս «Պատուհան» եւ «Քաղաք» հատորներու խորանկարին վրայ կը փըռլի Վահէ Օշականի դիմաստուերը: Կենդանագիրի մը պէս պարզ չէ ան, հակասական գիծերով բարդացած է եւ ըստւերներով մշուշուած, բայց բաւականա-

⁽¹⁾Վահէ Օշական, «Քաղաք», Ա. հատոր, Պէյրուք, 1963:

չափ յստակ շրջագիծեր ունի, ըմբռնելի է ամբողջութեանը մեջ:

Ամեն ինչի հանդէպ արուեստագետի եւ արուեստասերի վերաբերում ունեցող մենաւորի մը բնապատկերն է ան:

Վահէ Օշական կեանքի եւ արուեստի երեւոյթները կ'ընկալէ ո՛չ թէ միտքով կամ ջիղերով, այլ՝ հոգիի ամբողջ կամոյցով: Տեւական ճակատում մըն է կեանքը իրեն համար. հակադրութիւնը ներքին իր աշխարհին եւ արտաքին իրականութեան: Որեւէ բան կ'ընդունի կամ կը մերժէ՝ ամբողջութեամբ: Ինքզինք ամբողջ կը դնէ նաեւ գրածներուն մեջ՝ ինչ ալ ըլլան անոնք:

Եւ, ի վերջոյ, քերթուած ստորագրէ թէ օտար գրականութեան մը նուիրւած յօդուած, գրողի մը մասին խօսի թէ նկարիչի մը՝ ինքզինք կու տայ ամեն բանէ առաջ, իր ներաշխարհը կը դրսեւորէ, իր տազնապը կ'արտայայտէ:

Այս տազնապը քսաներորդ դարու մարդունն է, հայ մարդունը, բացառիկ սրութեամբ մը զգացուած իր կողմէ:

Բնագանցական է անոր խորքը: Արդէն ամեն ինչ բնագանցական համեմատութիւններ կ'առնէ իր աչքին, քսաներորդ ահաւոր այս դարուն, որ կարծես միաժամանակ մարդու զգեստումին եւ յաղթական կանգնումին վկան է: Վահէ Օշականի համար մարդու եւ աշխարհի մասին այս խոհն է կարեւորը եւ գրականութեան կոչումը զայն արտայայտելն է ամեն բանէ առաջ:

Իրեն այնպէս կը թուի թէ մարդիկ այն չեն ինչ որ պետք էր ըլլային:

Անկարելի մնացորդն ենք հին մարդերու ցեղի մը որ ատենօք երկրագունտի մակերեսին կը շրջէր:

Տեսակ մը բնագանցական կարօտ կայ մեջը՝ նախնական աշխարհի մը, նախնական մարդկութեան մը, սկըզբնական բաներու: Ամեն առիթով կը կրկնէ, յաճախանքէ մը ծնած յանկերգի պէս, թէ պետք է ձերբազատուինք երկրորդական «երկրորդ ձեռքէ» մեր ապրելակերպէն, վերադառնանք հին մարդերու սկզբնական մեծութեան:

Չարմանալի չէ ուրեմն որ այս աշխարհը իրեն թուի ծանծրոյթի վայր մը, ուր մարդ ամենէն տաղտկալի ձեւը հընարած է ժամանցի՝ ապրիլը առանց անհատականութեան, «իր անհամար պատճեններու բազմութեան մեջ»:

Եւ ապրողը մինակ է աշխարհի մեջ, բնագանցական ահաւոր միակութեամբ մը: Ամեն բան ապիմաստ է եւ ունայն եւ իր իսկ կեանքի անիմաստութեան արձագանգը կը բերէ մարդ-էակին: Աստուած «կզակ շարժելու առիթ» է, կրօնը՝ անբաւարար ու քնացնող պատասխան:

Երկու հիմնական տուեալ կայ միայն, որոնք կարելի է որպէս մեկնակէտ ընդունիլ մարդկային արկածախնդրութեան. գոյութեան փաստը եւ գիտակցութիւնը: Գիտակցօրէն պետք է ընդունիլ մարդկային գոյութեան անհեթեթութիւնը եւ նոր սկսիլ կեանքի:

Այս գիտակցութիւնը սկիզբն է հարցադրութեան մը, որ կրնայ ոչ մէկ ելք ունենայ, ոչ մէկ վստահութեան առաջնորդել: Կարեւորը ստացուելիք պատասխանը չէ, այլ հարցումը, որ նուաճում է ինքնին:

Այս ճշմարտութիւնը ընդունելուն մեջն է, ըստ Վահէ Օշականի, մարդու իսկական մեծութիւնը: Մարդ-էակը,

«միակ արժեքը ամպերեն վար ու մանաւանդ վեր», մեծ է, երբ կը գիտակցի իր ճակատագիր ապիմաստութեան եւ կ'ընդունի զայն. բայց ո՛չ փուլ գալու համար անոր ծանրութեան տակ, այլ՝ անգիջող պայքարի մտնելու համար զէնք ժխտող ամեն ինչի դէմ: Այդ ձեւով միայն կրնայ օր մը հասնիլ թերեւս, գերագոյն պահին:

Մարդանալու պահն է այդ,

Մեծդի Այո-ն որ կը խուժէ քեզմէ դուրս

Երբ տոմսակը կը պատռես,

Ու հետիոտն, միս-մինակ՝

Որեւէ տեղ կը քայես:

Ո՛րեւէ տեղ, որովհետեւ արարքը ինքն է կարեւորը, ոչ՝ անոր նպատակը: Նպատակ չկայ արդէն: Լաւագոյն պարագային՝ մարդու գործունէութիւնը կը յանգի «գուտ արարք»ի գեղեցկութեան:

* * *

Այս բոլորը, սակայն, շատոնց ծանօթ են որպէս խոհ ու մտահոգութիւն եւ ատենէ մը ի վեր՝ որպէս գրականութեան նիւթ: Ու Վահէ Օշական պարզապէս մէկ սերունդի ուշացումով ժամանակակից արեւմտեան գրականութեան խընդիրները բերած պիտի ըլլար մեզի՝ եթէ նաեւ ուրոյն աշխարհ մը եւ սեփական խռովքի մը արծագանգը չգտնուէր իր ստեղծագործութեան մէջ:

Վահէ Օշական մեծ տեսանող մըն է ամեն բանէ առաջ, իր սովորութիւնն է սուգուիլ բանդագուշական ներկայութիւններով լեցուն ներքին աշխարհ մը, ուր ձայներ, ձեւեր, պատկերներ իրար կը հրեն անօրինակ շարժումներով:

Հակասական, ցրիւ, յայտնութեան կան բան մը ունի այս աշխարհը, ուրկէ յաճախանքի նմանող պատկերներ անիշխանական թափով մը կը խուժեն դուրս, կը պարտադրուին մտածումին ու գրիչին:

Նկատելի է, որ այս պատկերները կը թելադրուին մեր հանրային կեանքէն (բեմ, բանախօս, որբ, վարժապետ, պատուելի) կամ ալ ֆրանսացի եւ յատկապէս Փարիզի առօրեայէն (*մէթրօ*, «աֆիշ», սրճարան, պերճադիճ եւլն.): Այս տարրերը կը մտնեն սակայն մասնաւոր տեսլաբանութեան մը մէջ, որ բեմը կը նոյնացնէ աշխարհին հետ, *մէթրոն* կամ հանրակառքը՝ կեանքի գնացքին, որեւէ անհատ՝ ներկայացուցչական արժեք ստացած մարդու:

Ամեն անգամ որ գրէ՝ այս աշխարհը խառն ի խուռն կը խուժէ դուրս, կը վերածուի բառի յորձանքի, կը ծաւալի, կը թալալի: Անոր էատարրերը ներկայացնելու համար պէտք է լծուիլ այն աշխատանքին, որ հեղինակի երեւակայածին հիւրինն է. «գիս չորս կողմէն կը հաւաքէ» կ'ըսէ անոր մասին: Չորս կողմէն պէտք է հաւաքել իր ներաշխարհին էատարրերը:

Առաջինը ըմբոստութիւնն է, բացարձակ կնիք կրող ընդվզումը, բնագանցական անիշխանութեան մը անսովոր ծարաւը: «Սուրբ քառսով հաղորդուելու պահանջով», Վահէ Օշական կ'ըմբոստանայ իր լինելութեան դէմ, կ'ընդվզի մարդերուն դէմ:

Ես կը մեռնիմ

Ու կ'երթամ,

Բայց դուք, բայց դուք

Անմահ էք,

Որովհետև չէք ծնած:

Բարկություն այս ճիշդ բացարձակի իր ձգտումին արդիւնքն է: Գործ մարդկության մը գործ գոյությունը չի բաւարարեր զինք: Աւելի բան մը կ'ուզէ, բացարձակ բան մը: Նոյնիսկ անսովոր մեղք մը, ահաւոր ոճիր մը, որ գետնաբարչ առօրեայէն բարձր ըլլայ:

Ասկէ կը ծնի հաւանօրէն իր ներաշխարհին ուրիշ մէկ յատկանիշը՝ սեռային անօրինակ մթնոլորտի մը գոյութիւնը: Սեռային ամէն կարգի պատկերներ կը խճողեն Վահէ Օշականի հոգին. իր տեսլաշխարհի ամէնէն մնայուն բնակիչը պերճադիւրն է, ամէնէն յատկանշական միջավայրերէն մէկը՝ «Քապարէ»ն: Տեսակ մը մոլորեցող, կեղծ-բարոյախօսները գայթակղեցնելու բացայայտ ճիգով, կարծես, կը գործածէ բառերու եւ պատկերներու պաշար մը, որ ուղղակի Աստուածաշունչէն կը հասնի՝ անցնելով ֆրանսացի ժամանակակից կարգ մը գրողներու գործերէն:

Այս բոլորին հետ պետք է յիշել նաեւ ժամանակակիցի պահանջը, որ հիմնական արժէք է հեղինակին համար: Պետք է ժամանակին հետ ըլլայ, ժամանակակիցներուն պէս զգայ, անոնց պէս գրել: Վահէ Օշական չի կրնար իսկ մտածել դասական ձեւով քերթուած մը կամ աւանդապաշտ պատմուածք մը գրելու մասին: Իր ստեղծածը ժամանակակից պետք է ըլլայ կամ չըլլայ բնաւ:

Բայց այս բոլոր արժէքներով՝ գրողը առանձին է իր աշխարհը լեցնող ձեւերուն մէջ: Պետք է ձայն տայ իր մենութիւնը յաճախող ուրուականներուն՝ իր ներաշխարհի բնակիչներուն, դառ-

նութիւնները պոռայ անոնց, հագուագիւտ յոյսերը պատմէ:

Ու տարօրինակ երեւոյթի մը հանդիսատես կ'ըլլանք, այն ատեն. խորքին մէջ իր բոլոր խօսակիցները կը նոյնանան մէկ եւ միեւնոյն կերպարի մէջ, որ Մարդն է: Հայը, այսինքն իր իսկ հոգիի արտաստեղծումը: Եւ խօսակցութեան այս պահանջը կը յանգի ցաւագին անելի մը ինքնիրեն հետ երկախօսելու դառն իրականութեան:

Իր հոգիին մէջ գտած մարդկային եւ հայկական այս արժէքը առարկայական բնոյթ ալ կը ստանայ, կը դառնայ բացարձակի տեղը բռնող արժանիք մը, որ պարագայական իմաստ մը կու տայ առհաւօրէն անիմաստ այս կեանքին:

Սկիզբը անզգալիօրէն, բայց հետըզհետէ շեշտուող գիտակցութեամբ մըն է որ Վահէ Օշական կ'ընդգծէ այս իրողութիւնը: Ու հետզհետէ բնագանցական իր անդոհանքը մեղմող, արւեստագետի մենութիւնը լեցնող արժէք կը դառնայ հայու իտէալը:

Այս իտէալին կը միանան տակաւին ուրիշներ, կը ձուլուին անոր եւ խիտ ու ժականութեամբ կ'արտայայտուին կուռ տարագի մը մէջ.

Հող

Արուեստ

Կիրք (...)

Եւ՝ Դաշնակցութիւն

Կիրքը բացարձակի այն ձգտումն է, որ պայքարի կը մղէ մարդը ո՛րքան ալ անհեթեթ ըլլան կեանքի պայմանները: Ստեղծելու անտեղիտալի պահանջն է նաեւ, մարդը արուեստագետի վերածող ներքին հուրը:

Իսկ արուեստը միակ ուղին է «ան-

ծանօթի հոգիին» տանող ու խաբուսիկ բայց սիրելի միակ միջոցը հաղորդուելու մարդերուն ու իրերուն հետ:

Իսկ հողը հայրենիքն է որ պետք է ճանչնալ:

Լռութեան մէջ նայուածքին

Երբ հայ հոգին,

Կարօտակէզ, անդիմադրելի

Կը նետէ կամուրջ՝ ինձմէ՝

Բոլոր բոլոր ընկերներուս:

Ու դեռ վերջին Յոյսն է, վերջին Պատրանքը այսինքն գերագոյն արժէքը անարժէք կեանքի մը:

Դաշնակցութիւնը, Վահէ Օշականի համար, խտացումն ու զտումն է հայրենիքի այս գաղափարին. ռոմանթիք այն հաւատքը, որ կը զօդէ Յայր անցեալէն եկող դարաւոր հոսանքի մը, կը կապէ գալիքի բոլոր ուժերուն, կը դառնայ կեանքի պատգամ եւ հիմնական նշանակութիւն:

Այս բոլորով է որ կ'արդարանայ «Քաղաք»ի ենթախորագիրը՝ դիւցագներգութիւն: Կանչի վերածուած ամբողջ այս գործը դիւցագներգութիւնն է մարդու, Յայու եւ ստեղծողի եռեակ տազնապը ապրող անձի մը, որ իր հոգիին մէջէն կը բառագրէ ցասումը յաւիտենական մարդուն՝ ժայռն ի վեր արձանացած անսանձ Պրոմէթէոսին:

Դժբախտաբար իժալուր է այս կանչը: Ներքին կարգապահութիւնը եւ ձայնաչափի աստիճանաւորումը կը պակսին անոր:

Եւ ի վերջոյ անգօր է հեղինակը ո՛չ միայն իր ներքին տեսիլքին առաջ, այլ նաեւ արտաքին աշխարհին: Հակասութիւնները կը պառակտեն զինք ներքնապէս, երբ արդէն պառակտուած է

նաեւ արտաքին աշխարհի պահանջներուն եւ ներքին ձայնի թելադրանքներուն միջեւ.

Կ'ըսենք՝

Ու կը լծուինք վերստին

Կեանքն ապրելու արարողութեան:

Պարտութի՛ւն. Այո՛: Բայց նաեւ վերադարձ սկզբնական գիտակցութեան ու ոգիի յաղթանակ: Որովհետեւ շղթաներն ու անգղերը չեն գիտեր որ կը յաղթեն Պրոմէթէոսին, մինչ ինք լրիւ գիտակցութեամբ կ'ապրի ողբերգութիւնը կորսուած ազատութեան:

* * *

Ի՞նչ խոր հաճոյք պիտի ըլլար՝ այս բոլորը արտայայտուած տեսնել արուեստի համապատասխան բժախնդրութեամբ: Մեր առաջ պիտի ունենայինք խորքով ու ձեւով հաւասարապէս հարուստ երկեր՝ բնագանցական խռովքի ծնունդ եւ գեղարուեստական վայելքի ծնուցիչ:

Դժբախտաբար, սակայն, խորքն ու ձեւը խոտոր համեմատութեան օրէնքին կ'ենթարկուին Վահէ Օշականի ստեղծագործութեան մէջ:

Անշուշտ ինք եւ ուրիշներ կրնան առարկել թէ ձեւը երկրորդական է եւ թէ որեւէ գրող ազատ է իր ուզած կերպով արտայայտուելու:

Այո, պայմանով որ այդ կերպը իր ներքին օրինաչափութիւնները ունենայ, զարտուղի ըլլալով ապօրէն չըլլայ նաեւ: Կարելի չէ յաւիտենապէս պատրաստ կաղապարներ պարտադրել ըստեղծագործութեան մը, յաւերժական օրէնքներու մէջ սեղմել զայն: Բայց ամեն երկ իր հետ պետք է բերէ նաեւ իր ձեւը արդարացնող պատճառները:

Վահե Օշականի որդեգրած արտաքին ձեռք, որ քիչ մը ժամանակակից իրապաշտ բանաստեղծությունը կը յիշեցնէ, արտայայտութեան ուրոյն կերպ մը չի կազմեր: Բերթուածին ու արծակին միջեւ եւ յաճախ երկուքը իրարու խառնող արտայայտածեւ մըն է, որուն հիմնական արդարացումը կշռոյթը պէտք է ըլլար, բայց չէ փաստօրէն:

Ընթերցողին ջղայնութիւնը որդեգրուած կերպի անսովոր բնոյթէն կը ծնի: Դեմ ամ դեմ կը գտնուի գրելաձեւի մը, որուն վարժուած չէ: Եւ ինչ որ նոր է, խրտչեցուցիչ է բնականօրէն:

Պէտք է, սակայն, յաղթահարել առաջին այս տպաւորութիւնը, ընտելանալ հեղինակի ոճին. շատ բան աւելի պարզ կը դառնայ, այն ատեն:

Եւ ամէն բան է առաջ՝ գրութիւններու կառոյցը: Առաջին տպաւորութեամբ՝ բանալի մը պէտք է անոնց գաղտնիքը լուծելու համար: Մինչ գաղտնիք գոյութիւն չունի: Կայ միայն տեսանկիւնի եւ դիտելաձեւի հարց մը: Պէտք է «կենայ» որոշ տեղ մը գործը ներսէն տեսնելու, անոր ամբողջ ճարտարապետութիւնը մէկ նայուածքով գրկելու համար: Այս տեսանկիւնը, այս տեղը հեղինակի տեսլաշխարհն է. պէտք է նախ ընտելանալ անոր՝ յետագային կարենալ ըմբռնելի կերպով ընթունելու համար յաջորդական բոլոր ժայթքերը:

Վահե Օշականի գրելաձեւը տարօրինակ ազգակցութիւն մը ունի իր երկրորդ հատորի վերնագիրին հետ. քաղաքի մը նախագիծը կը յիշեցնէ: Հեղինակը ճամբայ կ'ելլէ մայր պողոտայի մը, այսինքն հիմնական մտածումի մը

սկիզբէն: Ընթերցողը կը սպասէ որ նոյն պողոտայէն ալ շարունակէ ընթանալ՝ մինչեւ ըսելիքի վախճանը: Ճամբու ընթացքին կ'ենթարկուի քովնտի մանր փողոցներու՝ լրացուցիչ կամ զարտուղի մտածումներու փորձութեան: Կը մտնէ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ, կը հեռանայ մայրուղիէն, դարձեալ կը մօտենայ, ուրիշ ճամբաներու ճանապարհորդ կը դառնայ: Ի վերջոյ երբ կը վերադառնայ գլխաւոր միտքին՝ մայր պողոտայի կողքին ամբողջ քաղաքը տուած կ'ըլլայ արդէն, մէկ միտքի ետեւէն ամբողջ մտածումը, ողջ ներաշխարհը:

Խոցոտ է նաեւ հեղինակի լեզուն: Վիրաւոր է ան քերականական եւ ուղղագրական սխալներով, կետադրական թերիներով, ֆրանսաբանութիւններով: Կը տառապի տակաւին ուրիշ ցաւէ մը, որ բառապաշարի տարօրինակութիւնն է. բառարանէն նոր ելած բառին քով կայ խօսակցական ամենէն ընթացիկ ըսելակերպը, երբեմն ամենէն անսպասելի խօսքը: Այս բոլորով, սակայն, առողջ ու կենդանի է Վահե Օշականի լեզուն, արտայայտիչ, նկարագրող:

Արտայայտչական խոտորումները ընդհանուր օրէնք չեն սակայն: Գոյութիւն ունին ուշագրաւ յաջողութիւններ, յատկապէս կարճ գրութիւններուն մէջ, որոնք ժամանակակից ազատ քերթուածի լաւ նմուշներու կը վերածեն «Դաշնակցութիւն», «Մարդ», «Ճառ» կամ «Ժամադրութիւն» գրուածքները եւ այնքան ուրիշ հատուածներ երկարաշունչ գործերու մէջ:

Այս պարագային Վահե Օշական կը յաջողի տարածումէ եւ զառաժուց

փրկել հիմնական ըսելիքը, կեդրոնա-
նալ անոր վրայ, յատակացնել անոր կա-
ռոյցը, ներքին ուժականության համա-
պատասխանող տողատումի ձեւ ու
կշռոյթ գտնել եւ այս ամբողջը տալ ան-
սպասելի պատկերներու գիւտերով: Ու
կիրքով: Այսինքն տեսակ մը հոետորու-
թեամբ, որ ներքին համոզումէն կը ծնի
եւ զայն թափով փոխանցող ոգեկան
ուժն է պարզապէս:

* * *

Դատումի փորձով այս գործին մէջ
մխրճուողը կ'անդրադառնայ ի վերջոյ,
որ գործէն աւելի գործողով զբաղած է,
գրուածքէն աւելի՝ գրողով:

Ու բնական է որ այդպէս ըլլայ:

Վահէ Օշականի ստեղծագործու-
թիւնը գրելու ոճէ մը աւելի՝ ապրելու՝ ո-
ճի մը վկայութիւնը կը բերէ: Եւ հիշող է, ան
կը գրէ որպէսզի կարենայ, «փոխանա-

կել իր անձը հայ ժամանակակիցին»
հետ, բայց հաղորդութեան այս փորձը
միակ միջոցն է ինքզինք գտնելու, ինք-
զինք փրկելու:

Սակայն այսքանով պէտք չէ գոհա-
նայ ան: Մտածումը եւ արտայայտու-
թիւնը կարգապահութեան ենթարկելու
յարատել ճիգ մը արուեստի աղուոր
գործեր կրնայ կատակել մեր գրակա-
նութեան: Եւ լաւ կ'ըլլայ որ զարտուղի,
բնագանցական եւ նախնականօրէն
հարուստ այս աշխարհի գանձերը մը-
նան մեր մշակոյթին. մնան՝ արուեստով
ու ճիգով խորացած, գեղեցկացած:

Այն ատեն՝ հեղինակի դիմաստուե-
րով զբաղելու տեղ՝ անյետաձգելի կը
դառնայ ձեռնարկել գործի դիմագիծի
ճշդումին:

(Թիւ 4, 1964)

ԿԱՐԷՆ ԶԱԼԼԱԹԵԱՆ

ՎԱՐՔԷ ՕՇԱԿԱՆԻ ԱՆՀԵԹԵԹԻ ԱՐՁԱԿԸ

Վահե Օշական գոյութենապաշտներշնչումով՝ անհեթեթի գրողն է: Անոր գոյութենապաշտությունը, որ կը սնանի եւրոպական, մասնաւորաբար՝ ֆրանսական յետպատերազմեան մթնոլորտէն, քննադատներու կողմէ յաճախ գրաւած է քննադատներուն ուշադրութիւնը, յատկապէս բանաստեղծական գործերուն պարագային: Ինչ կը վերաբերի անհեթեթին, ըստ Օշականի, անիկա բանականութեան, տրամաբանութեան եւ նոյնիսկ մտածողական կառոյցներէն դուրս է, եւ ըլլալով մշտական սպառ-

ծութիւնը իմաստէն, հաղորդակցելու մեկուսացնող դժուարութիւնը, ինչպէս նաեւ ազատութեան կարելիութեան վրայ դրուած շեշտը, որպէս անյոյս ըմբոստութիւն: Ով որ կը գիտակցի տիեզերքի անհեթեթութեանը՝ աւելի մօտ է մարդկային այս խորագոյն ճշմարտութեան եւ հետեւաբար կ'ապրի աւելի վաւերական կեանք մը: Գրականութիւնը որպէս արուեստ նախ եւ առաջ կոչումն ունի ծառայելու կեանքի ողբերգականութեան լուսաբանումին՝ որ դեգրելով գիտակցութեան բացարձակ դրսութեան տեսանկիւնը, ազատագրուած եւ ազատագրող բարոյախօսական կապանքներէն: Այդ կապանքներուն մասին, Վահե Օշական չէ խնայած իր քննադատութիւնները, վաթսունական թուականներու սկիզբէն «Բագին»ի մէջ հրատարակած իր յօդուածներով: Աւելի ուշ փորձած է անհեթեթի ողբերգականութեան մասին զուտ գրական վկայութենէն անդին մտածել՝ առաջարկելով բացարձակ սէրը որպէս կեանքը տանելի դարձնող տեսլական: Թէ ինչպէ՞ս Օշականի արձակը կը յենի գոյութենապաշտ բնանիւթերու վրայ, բայց կը զարգանայ իւրովի՝ այդ մասին վարի հակիրճ մատնանշումները կը փորձեն գաղափար մը տալ: *Կամուրջ* անտիպ վէպը այս ստեղծագործական

Օշական անհեթեթը կը մտածէ գոյութենապաշտ տեղիքներով, որոնցմէ հիմնականներն են՝ մարդկային լքուածութիւնը իմաստէն, հաղորդակցելու մեկուսացնող դժուարութիւնը, ինչպէս նաեւ ազատութեան կարելիութեան վրայ դրուած շեշտը, որպէս անյոյս ըմբոստութիւն:

նալիք այս վերջիններուն՝ մարդկային կեանքի ողբերգականութեան աղբիւրն է: Օշական անհեթեթը կը մտածէ գոյութենապաշտ տեղիքներով, որոնցմէ հիմնականներն են՝ մարդկային լքուա-

հոլովոյթին կարեւոր հանգրուաններէն մէկն է:

Նախ փորձենք պարզել *Կամուրջ* վէպին տեղը Վահէ Օշականի արձակ գործերու ծիրին մէջ: Յայտնի է որ հեղինակին առաջին հրատարակութիւնը «Պիրատեր Յակոբ» (սեպտեմբեր-հոկտեմբեր 1945) պատմուածքն է, երկրորդը՝ «Սրճարանը»¹ (նոյեմբեր 1946), երկուքն ալ լոյս տեսած Գահիրէի «Յուսարբեր» հանդէսին մէջ: Յետոյ կու գան «Գիշեր» եւ «Վարագոյր» պատմուածքները, որոնք լոյս տեսած են Պէյրութի «Ալօս» գրական հանդէսին մէջ (փետրուար 1955 եւ փետրուար 1958): Ասոնցմէ ետք ունինք նախ՝ «Յայր եւ որդի» անտիպ պատմուածքը, որուն մեքենագրուած բնագիրը «3 յուլիս 1967» թուականը կը կրէ, եւ նոյնպէս անտիպ, բայց մեքենագրուած «Կայարան թիւ չորս» վիպակը՝ «4 մայիս 1968» թուականով: Վերջինս մասամբ լոյս տեսած է «Ահեկան» հանդէսին մէջ (1968, թիւ 34, էջ 69-78): Յետոյ կու գայ «Փախստականը» պատմուածքը (1971), որ աւելի ուշ մտած է նոյն վերնագիրը կրող հատորին մէջ (1987): Եւ վերջապէս՝ «Շղթան» արձակ գրութիւնը, որ լոյս տեսած է «Երիտասարդ հայ» թերթին մէջ (30 դեկտեմբեր 1971, թիւ 46,

էջ 10-12): Ըստ երեւոյթին՝ *Կամուրջ* վէպը (յունուար 1973)² գրուած է վերը նշուած արձակ գործերէն ետք: Անոր գոյութենապաշտ դրոյթներով պայմանաւորուած բովանդակութիւնն ու յատկանշական կառոյցը աւելի յստակ կ'երեւին նախորդ գրութիւններու ընթերցման լուսարձակին տակ:

Օշականի արձակը կը յենի գոյութենապաշտ բնանիւթերու վրայ, բայց կը զարգանայ իւրովի...

Առաջին շրջանի կտորները («Պիրատեր Յակոբ», «Սրճարանը» եւ «Գիշեր») գործեր են, որոնք անհեթեթի խնդիրը գրեթէ չեն շոշափեր: Անոնք մեծապէս կը զարգանան պատումի ներկայ ժամանակով, արտաքին գործողութեան մակարդակի վրայ, մինչ պատմողին ձայնը կամ նկարագրութիւնները քիչ անգամ կը կրեն գոյութենապաշտ երանգներ: Մինչդեռ «Վարագոյր»ը, ըզգայիօրէն աւելի ծաւալուն, եւ «Յայր եւ որդի»ն կը զարգանան յստակ գոյութենապաշտ բնանիւթերով: «Վարագոյր»ը մէկու մը մասին է, որ տարիներու վրայ երկարող նկրտումներէ ետք, երբ կը կարծէ, թէ յաջողութեան հասած է, անկարող կը գտնուի ներկային մէջ իր տե-

¹ «Սրճարանը» գրութիւնը կը կրէ «ՎԱՅԷ» ստորագրութիւնը: Ոճի եւ թեմայի նմանութիւններէն մեկնած, կարելի է եզրակացնել, որ «Պիրատեր Յակոբ»ի եւ «Սրճարան»ի հեղինակը Վահէ Օշականն է: Երկու գրութիւններուն գործողութիւնները տեղի կ'ունենան Պաղեստինի մէջ եւ կը համընկնին հեղինակի Երուսաղէմ ապրած տարիներուն: Յստակ չէ, թէ ինչու երիտասարդ Վահէ Օշականը միայն իր առաջին անունով ստորագրած է այս գրութիւնը: Թերեւս փորձ մըն է ծածկելու կապը հոր՝ Յակոբ Օշականի հետ:

² *Կամուրջի* մեքենագրուած բնագիրն ունի 122 էջ եւ ստորագրուած է «3 Յունուար 1973»: Կայ անոր երկրորդ տարբերակ մը, գոր Օշական ստորագրած է «Սան Ֆրանցիսկո 1988»: Երկրորդ տարբերակը պատճենն է առաջինին որոշ նուագայն փոփոխութիւններով, ըստ երեւոյթին, Վահէ Օշականի ձեռքով կատարուած: Էջագրութիւնն ալ գրեթէ նոյնն է, միայն թէ երկրորդ տարբերակն ունի 123րդ էջ մը հետեւեալ բովանդակութեամբ «1972, Օգոստոս 14, կ'եսօրէ ետք ժամը քսան անց», ինչ որ կարեւոր մանրամասնումն է *Կամուրջ* վէպին համար:

սած խորին անձնական իմաստը բաժնելու ունի մեկու հետ: Իմաստաւորելու այս պահանջը եւ անկարողութիւնը ցոյց կու տան, թէ մարդիկ ինչպէս իրենց կեանքերը անվաւեր կ'ապրին: Պատմութեան բուն գործողութիւնը արտաքին իրադարձութիւններէն չէ բաղկացած, այլ այս ճախողութեան փորձառութեան ընթացքին՝ գիտակցութեան տագնապին կը հետեւի: «Վարագոյր»ի պատմութեան այս ներքին գործողութիւնը կը մատուցէ շարք մը այլ գոյութենապաշտ տեղիքներ, որոնք յաճախ ներկայ են Օշականի միւս գրութիւններու մէջ: Ասոնցմէ առաջնակարգը ազատութեան փորձառութիւնն է, զոր «Վարագոյր»ի հերոսը մասամբ միայն կը կատարէ գիտակցութեան մակարդակին: Կայ նաեւ կատաղի սեռականութիւնը, որ նոյնպէս կը խորհրդանշէ մարդկային մոլորութեանը, երբ ան կեանքի իմաստագրկութեան հետ տակաւին հաշուի չի նստիր: Եւ վերջապէս՝ խորհրդաւոր աչքը, որ գաղտնաբար կը հետեւի եւ գիտակցութեան բացարձակ դրստութիւնը կը խորհրդանշէ: Իսկ «Յայր եւ որդի»ն, արձագանգելով Դոստոյեւսկիին, անհեթեթին կը մօտենայ անմեղ տղեկի մը մահուան պատահարով: Այս ողբերգութեան դէմ յանդիման՝ պատուելի հայրը աղօթքով որեւէ իմաստ փրցնելու անկարող է, ու այդ անկարողութիւնը անհեթեթը քողարկող անվաւերութեան ախտանշանն է: *Կայարան թիւ չորս* վիպակը վերստին ձեռք կ'առնէ անհեթեթը չգիտակցելու պատճառով՝ անվաւեր կեանք վարելու բնանիւթը: Վէպին առանցքային դէպքը կեղոնա-

կան տիպարին կողմէ արթննայն է անհեթեթին, ինչ որ տեղի կ'ունենայ մահացու վտանգի մը դէմ յանդիման, ու տիպարին կու տայ հոգեբանական եւ գաղափարաբանական սովորութիւն դարձած թակարդներէ ազատուած ըլլալու գիտակցութիւնը: Այսպէս ուրեմն՝ վիպակը եւ վէպը, որպէս տարածուն գրական սեռեր, Օշականին կ'ընձեռեն տիպարներու կերպարանափոխումները աւելի մանրամասնօրէն նկարագրելու միջոցը, որոնց յաճախ՝ նոյն այդ տիպարները մասամբ միայն կը գիտակցին կամ կը հասկնան: Սակայն գրականութիւնը՝ անոնց մասին աւելի ընդարձակ վկայութիւն բերելով, իր պարտականութիւնը կը կատարէ եւ միեւնոյն ատեն՝ Օշականեան իրապաշտութեան վերաբերեալ սահմանում մը կը թելադրէ: Ինչ կը վերաբերի «Փախըստականը» պատմութեան, ան հաղորդակցութեան անկարելիութեան եւ մահը դիմագրաւելու բնանիւթերը կը սրէ լկտիութեան եւ գռեհկութեան վայրագ դրուագներով: Եւ վերջապէս կայ «Շղթան», գրութիւն մը որ կը յիշեցնէ *Կամուրջ*ին ոճը. երեք էջնոց, նախադասութեան եւ պարբերութեան բաժանումներէ զուրկ յեղում մըն է, որ մասամբ կը փորձէ նոյնանալ փոքրիկ տղեկի մը դիտանկիւնին, տղեկի մը որ առանց մօր մնացած է եւ որուն հայրը ի վիճակի չէ մօր կորուստը ընդունելու:

Կամուրջ վէպը Օշականեան արձակի վերը նշուած յատկանիշներուն բարդ համադրութիւնը կը հանդիսանայ: Հոս ալ հիմնական գործողութիւնը գիտակցութիւններու մակարդակին կը ծաւալի: Վէպին մէջ գոյութենապաշտ

անհեթեթը աւելի օրկանական կերպով է մանուած արտաքին իրականութեան հանգամանքներուն հետ: Այսպէս՝ ընթերցողը կը մխրճուի 1960-70ականներու Պէյրութի կեանքին մէջ, կտրտըւած տեղեկութիւններ ստանալով ընտանիքի մը անդամներու անցեալէն, առօրեայէն եւ վերքերէն, մարդիկ ու վերքեր մեծապէս թակարդուած են անվաւերութեան ճիրաններուն մէջ: Դերակատարներն են՝ վաթսունոց հայ աշխատաւոր տղամարդ մը՝ երեք զաւակներու հայր, կինը՝ լուռ եւ անտեսուած, նուագագոյն կերպով նկարագրուած վիպողին կողմէ, երեք զաւակները՝ մեծ տղան, երեսունոց, վաճառականի աշխարհահայացքին գոհ, միջնեկ աղջիկը՝ յայտնատեսական ընդունակութիւններով, ամենէն հասուն տիպարը, նոյն ատեն սեռականութենէն ազատագրուած, եւ փոքր տղան՝ գրեթէ պատանի, իտէալապաշտ ու հայրենասէր: Աւելցուցէք ասոր Պէյրութի միջավայրը, դաշնակցական առասպելական մթնոլորտը, ամերիկայէն այցելող գործարար զարմիկը եւ վէպին պարզած պատկերը ամբողջական կ'ըլլայ:

Կամուրջը կառույցով ամենէն կուռն է Օշականի արձակ գործերէն: Անոր արտաքին գործողութեան (որ կը ներառէ պատումի ներկան) տեւողութեան կարճութիւնը ընթերցողի ուշադրութիւնը կ'ուղղէ դէպի գիտակցութեան ներքին ժամանակի անսահմանութեանը: «Բագին»ի այս թիւին մէջ հրամցուած էջերը վէպին սկիզբէն առնուած են եւ կու տան առանձին տիպարներու կեանքերը, վիպելով գիտակցական, մարմնային ապրումներու խիտ

իրականութիւն մը, ու ծփալով ներկայէն անցեալ: Ոճով դժուար ընթեռնելի է ու ընթերցողէն լարում կը պահանջէ. երկարաշունչ եւ ոլորապտոյտ նախադասութիւններ, որոնք մտազուգորդական տրամաբանութեամբ կողք կողքի եկած, անկանխատեսելիօրէն կ'անցնին ժամանակի մէկ խաւէն միւսը:

Կամուրջը կառույցով ամենէն կուռն է Օշականի արձակ գործերէն: Անոր արտաքին գործողութեան (որ կը ներառէ պատումի ներկան) տեւողութեան կարճութիւնը ընթերցողի ուշադրութիւնը կ'ուղղէ դէպի գիտակցութեան ներքին ժամանակի անսահմանութեանը:

*Կամուրջ*էն ետք՝ Վահէ Օշական հրատարակած է պատմութեանը երեք հատորներ՝ *Փահաստականը* (1987), *Թակարդին շուրջ* (1988), *Սերունդներ* (1995), ինչպէս նաեւ *Պատուաստը* վէպը (որպէս շարք «Յառաջ»ին մէջ, սեպտեմբեր-դեկտեմբեր 1995): Առնուազն ութսունականներու կեսերէն՝ ձեռնարկած է նաեւ *Յրուանդան* պատմական վիպաշարքին, ու անկէ կրցած է աւարտել միայն երկու հատորներու մեքենագրուած բնագիրներ, որոնք նոյնպէս անտիպ են: Ըլլալով հանդերձ կայացած եւ կարելոր գործեր, այս գրութիւններէն քիչերը ունին *Կամուրջ*ին ոճային իւրայատուկ սաստկութիւնը:

(Թիւ 3, 2017)

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

ԷՐ



ր հոն առաջ ինձմէ առաջ

Էր

կը սպասէր

կամ թերեւս

կար միայն

հեռակայ

կամ առկախ

կը բախէի անոր կը խուժէր

կարծես հանդիպէինք վերստին

ան

պատին միջեւ ու պատին

Էր շատոնց եւ ես

եւ դուն

ձեռքս կը բախէր անոր

կարծես չըլլար

ու ծեծէի օդին մէջ փախչող պատ մը անմատչելի

որ էր

հպում ու հատիկները պարապին

Էր

գիտես

եւ ձեռքդ որ կու գայ ետ

կ'երթայ սրընթաց

կ'իյնայ կը սպառնիմ անշարժութեամբ

կը գոցէի

աչքերս կը գոցեմ

կը կրեմ

անոր

հեռակայ

եւ առկախ

ծանրութիւնը չբացող

կ'արձակեմ

բռունցքը կ'երթար

կը մեկներ

ուղիղ ընդարձակ կը տաներ մարմինս իր հետ

կ'ուղղուիմ

կը տարածուիմ անհունօրէն

ուշացող ընկրկող ու չհասնող

ուշակորոյս

կը մոռնամ

անոր դէմ

կ'ընդդիմէի անոր մէջ

կը մտնէի դէպի գայն

անոր մարմնի մտերմութեան սառուցեալ

կը կոտրէի թանձրը բացակայութիւնը եկող

կը հատէի

կը թափանցէի խտութենէն խորութենէն անոր

չէր

դէմս

հորիզոն հողէ

անտեսանելի շուք

կը խորէի

դէմքիս շուրջ կը փայլէր անմտանելի

անելանելի

երբեմն

բացուածք էր

ինձմէ առաջ

ճերմակ կը նայի բացէն բազմաթիւ նայուածքը բիւրաւորներու

գրկեալ նայուածքէ

կոթողային

միակերպ

կը նայէր չէզոք

ոչ ոքի

դէմէն անցնող շողերու շուքերու բզզիւններուն

մարմիններու լողագնաց ելեւէջին

ապակիի եւ պահերու փշուրներուն

եւ հերձեր

հաստ ու նիստ հողաժայթքեր ճեպընթաց աղմուկի

թնդանօթող արշալոյսը ասֆալթին

կը բախէին անոր թաղանդին

կը խորէի

Կը ճգմուէի

Կը ճնշէի

հոն

հորիզոն ու բացատ շնչառութեան

Կը կանգնէի անոր սահմանին

Կը փախչէի

Կը զարնէի

Կ'արձակէի զայն ի բաց

տեղափոխելու տանելու գիծը անդին

լռութեան

շունչին դէմ շունչը կտրող դանակը միջոցին

փայլքը առքը անոր

Կը գրոհէի

անդադար կը սուրայի անոր տրեւին դէ մ հողէ

անոր թափանցիկութեան

Կը խորհէի

Էր թերեւս եւ դուն

եւ ես

մոռցուած

կարծես ծանրութիւնը մեռելին լուացուած ու բացակայ

չլացուած

պատնուած մեռելին

անտեսանելի հակաբիբ

ի սպաս աչքին որ սիրէր ի սպառ

սիրէր մինչեւ Էախզում

մինչեւ Էացում

ըլլար հոն

պիտի ըլլար

ապա եւ գիտեմ ըլլար պիտի

ինձմէ առաջ ինձմէ վերջ աւելի անդին

աւելի մօտ

առանց լոյսի

առանց պատկերի

առանց մօտեցման

անելանելիօրէն զիս գրաւող

կոկորդս ի վար

այնքան մօտիկ որ զիս եղաւ

եւ կոչեց զիս

Կը բախիմ

անոր լոյսին անոր գիշերումին անոր անմահութեան
անվեհեր մահին

կը բա

բախէի խօսքին դէմ
եւ անխօսութեան

կը լսեմ

անոր ցերեկը թանձրը որ կու գար
տեղաշարժող ու արշաւող լեռնաձաւալ հողի ալիք օդին մէջ
հողի մակընթացութիւն
ճեպընթաց պատ անմատչելի
անփախչելի

փչող

անխաբ որ էր հոն
առաջ ինձմէ վերջ
թերեւս բնակեցայ փայլիւն մէջ անոր որոտման

(Թիւ 6, 1985)

ԱՐՄԱՏԱԿԻԼ

*Վայրի խոսեր
որ արմատաքին կը խլես հողէն
բանալու համար տեղ ու տարածք:
Վայրը տարածքը չէ սակայն:
Ի՞նչ է վայրը առանց բնակչության*

Մարկ Նշանեանին

Բառերեն մին է այս «արմատախիլ»ը, այնքան ընթացիկ դարձած որ կը թուի անբովանդակ: Այսպէս ամեն անգամ երբ տուեալի մը յաճախակի երեւումը կը յաջողի սպառել կոչող անունը, կը վերածէ հասարակ տեղիքի, նոյնիսկ ու մանաւանդ եթէ հասարակացի մակարդակն է հոն խնդրոյ առարկայ:

Յօրինուած՝ չես գիտեր ինչ անհատական կամ համայնական դէպքի մը համար, գուցէ չարիք մը նշելու, «արմատախիլ»ը կարծէք ոչինչ թելադրող վերապրութիւն մըն է լեզուին մէջ, որուն մակերեսին վրայ կը ծփայ, խլեակի մը պէս, կորսնցուցած իր հիմնաւոր խարխիւր: Իբրեւ այդ կրնայ յայտնուիլ որեւէ տեղ:

Չիմա, թերեւս արդէն շատոնց, բայց աւելի տարտամ, անորոշելի կերպով, տարերային շարժում մը քաղաքացիական պատերազմի, յեղափոխութեան, հալածանքներու, ընդհանուր անապահովութեան՝ ամեն ցեղէ ու գոյնէ մարդիկ, համայնքներ, մշակոյթներ ու լեզու կը խլէ իրենց վաղնջուց կամ ինչ որ իրենք կը նկատեն պատմական բնակչութենէն ու միջավայրէն, կը դարձնէ զանոնք ճակատորոտ՝ արմատահանի մը աներեւոյթ վայրագութեամբ, ինչպէս փոթորիկը քանի մը վայրկեանէն ո՛չ միայն կը քայքայէ ջրամերձ գիւղ ու պուրակ, կը նետէ ծառերը դէպի երկինք, արմատներու խուրձը օդին, այլեւ կը տապալէ բազմադարեան անտառներ, «աչքդ կտրածին չափ»:

Ինչ հարկ խօսելու մաքրապաշտ կամքէն որ կը միտի բնաջնջել բնիկն ու օտարը, անբուժելի ախտն ու արմատական տարբերը: Միշտ զանգուածային, հակաճիւղի եղեռնական ձեռնարկներ կան, նոյնին կրկնորդները, ֆոսֆորով, անօդաչուներով, հրասայլերով, թեքնաբանական բոլոր կարելի եւ անկարելի սարքերով, հարուածող ինչ որ կը նկատուէր, դեռ երէկ, անառիկ: Ինչպէ՛ս վայրերը կը դառնան մէկէն անտեղութիւն որ նենգափոխութիւնը, աս ալ զանգուածային աստիճաններու հասած, պիտի յամառօրէն շարունակէ խորացնել, ամայացումը դարձուցած երեւայակերտ սկիզբի մը առաջին քարը:

Աչալուրջ միտքը, եթէ տակաւին չէ հրաժարած ժամանակակիցը մտածելու հեռանկարէն, կը նկատէ որ հին բառը հանդիպեր է հրաշապէս իր պատկերին եւ մօտեցեր՝ լեզուի ճշմարտութեան:

Խլոււմը, պատահական կամ ոչ, փրթիլը չէ, որով մաս մը ամբողջէն կ'անջատուի: Յոս կը բանի կրաւորականին ու ներգործականին տարբերութիւնը: Կ'ենթադրէ քիչ մը ոլորոդ, խախտող բռնութիւն մը, բիրտ, հաւաքական, քաղաքային, այսինքն՝ ստիպողական ու անարգել ուժ՝ որ հաստատունը կը դարձնէ յեղեղուկ, կը տարագրէ մարդիկը, ստրուկ կամ ենթակայ ցեղ, տարասեռ տոհմ կամ գնչուներու ջոլի, կը տանի այլ տեղ, մինչեւ հնարաւոր տարատնկում, աւելի ճիշդ՝ ապահով բնաջնջում:

Խլոււածը կը դառնայ տարագիր: Յեռու ինքն իրմէ ու բաներէն կը դառնայ խուլ: Կարծես թէ մատները այլեւս երբեք չեն կրնար հալիլ որեւէ հողի առանց յիշելու, փնտռելու նախկինը: Օհ, հնաւանդն ու հնաւուրցը, տոհմապետականը, երկրածնայինը: Նախկինը չկար նախապէս, ի հարկէ, նոյնիսկ երբ դպած էիր. եւ երբ իւլացած ես, այն ատեն կը հանդիպիս նախկին հողին, մատներդ նորին մէջ հինը կը գտնեն, ոչ թէ կը ճանչնան նորը: Յինը՝ իւլումին մէջ: Յինը՝ օտարացուցիչը: Կրնաս զարմանալ, կրնաս անշուշտ կարօտնալ նաեւ անոր: Բայց կարելորդ այն է որ նորը կը մնայ անմատոյց, իսկ հինը՝ բացակայ:

Յիշատակներ, յիշատակներ՝ որ մեզ կը տարագրեն ապառնիէն անցեալ ու անցեալէն մինչեւ խախուտ այսօր մը: Կը դարձնեն անարմատ: Սիմոնուհի Վէյյ, իր *Արմատացում* (L'enracinement) աշխատութեան երկրորդ գլուխին մէջ, «Արմատախլում» վերնագիրով (Le déracinement), երկու էջ հագիւ կը յատկացնէ զանգուածային արմատախլումին, այսինքն՝ իրեն ժամանակակից 1939–40ի Եւրոպայի դէպքերուն, արմատախլում որ տարագրումն է: Ուշադրութիւնը կը կեդրոնացնէ նախ՝ բանուորի, ապա՝ գիւղացիի արմատախլումին վրայ, վերջապէս «Ազգի արմատախլումին» որ կը հասկնայ միայն իբրեւ իր իսկ աւանդութենէն ու արժէքներէն հեռացում պետութեան, քանի ազգը պետութիւն է, մտածողին համար: Չարմանալի բացառում է երեւոյթը, 1940ին Լոնտոն ապաստանած հրեայ քրիստոնէացած կնոջ մը համար, որ իր Աստուածն ալ կը վկայակոչէ պարբերաբար, Ան որ տակաւին մարդկութիւնը չէ լքած: Որով այդ մարդկութիւնը տակաւին բոլորովին արմատախիլ չի թուիր:

Յասկնայի է, հարկ է վերադառնալ սկիզբին, գուցէ անոր որ իսկապէս սկիզբ չունի եւ ճիշդ այդ սկիզբն է, իբրեւ ծագում, որ կը դարձնէ խնդրական: Ծագումը սկիզբը չէ, գլուխն է, պետը, իշխանը, archén իր հակադիրով, այսինքն՝ անիշխանութեամբ:

Արմատէն իւլուածը անջատուած է, կը գտնուի երկու միջոցի միջեւ, որ թող կոչեմ անջրպետ: Խլումով անպայման նորը չէ որ կը յայտնաբերես: Որպէսզի այդ նորը յայտնաբերես պէտք է միջամտէ ժամանակը, այն որ իւլումը ինք կը մերժէ: Խլումը այդ ժամանակն է որ կը պոկէ ինձմէ կամ կը գլանայ ինձի: Ատով սակայն ես կը դառնամ միայն տակակոտոր մէկը՝ կապուած՝ այլուրին, մէկը՝ անուր, մէկը՝ անսահմանօրէն ուրիշ: Յիշողութիւնը կը պահպանէ դէպքը, դէպքը՝ որ այդ յիշողութեան իսկ ծնունդ կու տայ, կը ստեղծէ կարօտ ու կոտտանք, թելադրող

խլումին ու խզումին անկարելիութիւնը, այսինքն՝ նաեւ անոր անվերականգնելիութիւնը: Յիշողութիւնը կը բանի այսօր, հիմա, որ վերբերէ սքողուածը, աս կամ այն ձեւով մնացածը: Իսկ ինչ է մնայը, ինչ կը մնայ որ քերթողները կը հիմնեն եւ առասպելաբան պատումը, այն որ պիտի վկայակոչեմ, կը հիմնէ: Այո, պատումը ձեւ մըն է մտածելու խլումը, մանաւանդ արմատաքի խլումը, ըստ երեւոյթին այն մէկը որ ոչինչ կը թողու ետին:

Ետքայլ մը ուրեմն անհրաժեշտ է այս բառ-փոխաբերութիւնը, այս բայական ածականի գրեթէ ծնունդը բացայայտելու, հնարաւորին չափ, թէկուզ արագ, բողազերծելու համար անոր ներքեւ պահուըտած դէպքը: Ան է որ ցրուած կերպով կը կարդացուի *Բուզանդարան*ին մէջ (Դպրութիւն Դ), չափազանց շահեկան շըրջարկով: Դրուագը ծանօթ է: Ազգայինը կը հեշտանայ ատով: Արշակի եւ Շապուհի հանդիպումը կանխող Էջերուն մէջ, Ներսէս Ա. քահանայապետ կը խրատէ «տիրադոյժ» նախարարները, որ չլքեն իրենց «զբնակ տեարսն» եւ չծառայեն հեթանոսներուն, կը զգուշացնէ. «գուցէ բարկացեալ Աստուածը ձեր, եւ խլիցէ զձեզ արմատաքի, եւ մատնեսցէ հեթանոսացն ի չար ծառայութիւն ստրկութեան...»: *Բուզանդարան*ի անգուզական հեղինակը, որ Աստուածաշունչի հմուտ ընթերցող է, դարձուածքը առած է անկասկած Յովքի գրքի թարգմանութենէն (Դ, 7), ի միջի այլոց: Փոխառութիւնը, ինչպէս միշտ, հիներուն մօտ, ներկան մտածելու համար կ'ըլլայ, զայն արձանագրելու ճշմարտապատում նկատուած աստուածային խորքի մը վրայ: Ուստի՝ փոխառութիւնը կը մտածէ (թոյլ կու տայ մտածելու) արմատախլումին տրամաբանութիւնը, որ անիկա կը սկսի «բնակ տեբերու», ըսենք հայ տիրութեան լքումով: Այս «բնակ տեարսն» բառերուն զուգահեռ՝ կայ «բնակ հողը», որ գրութիւնը կ'առնչէ «հայատակ»ին եւ «հայակողմ»ին: Պարզ չէ որ խլումը կը վերաբերի տարածքին, կեցութեան, հիմին, հաստատութեան, մշակութեան, տեղին հետ յարաբերութեան, մէկ խօսքով՝ մարդկայինի «տարրականին»:

Ներկայիս միայն արմատ նկատուող «բնակ»ը շատ շուտով, Փարպեցիի *Պատմութիւն հայոց*ին մէջ իսկ կը վերածուի բնիկի, «բնիկ տեարսդ»: Ղազար ծանօթ է *Բուզանդարան*ին, որ կը յիշատակէ, թերեւս գիրքը դիմացն է, եւ զայն կը նկատէ «խանգարուած». թերեւս խանգարումներէն մէկն ալ այդ «բնակ»ն է:

Աճառեանը Արմատականին մէջ (միշտ այս արմատը, այս անգամ etymonը, իրաւը, ճիշդը) կը նշէ նման շփոթ, կը ջանայ զանազանել «բնակ»ը «բնիկ»էն, որոնց սակայն երկուքին արմատ է ծառայած հնդեւրոպական «բուն»ը (bhu, bheu), յունարէն physicsին համարժեքը, անգլերէնի մէջ վերապրող իբրեւ «to be, being»: Ըստ երեւոյթին բնակը պարսկերէն տունն է, հայրենիքը, իսկ բնիկը այնտեղ բնակողը: Որով բնակ տեբերը հայրենի տեբերն են, բնակ հողն ալ՝ հայրենիքի հողը, որ *Բուզանդարան*ի պատումով, ինչպէս ծանօթ է, կը բերուի Յայաստանէն, կը թափուի Շապուհի վրանին առջեւ ու կը ծառայէ իբրեւ փորձաքար Արշակի հաւատարմութեան: Յայոց թագաւորը, Շապուհին թեւանցուկ, կ'անցնի օտար հո-

ղեն, կը խեղճանայ, ապա կը կոխէ տափնուած հայ հողի վրայ, կը սկսի յոխորտայ, տիրութիւն խաղայ: Երկու հակադիր հակազդեցութիւնները առնչուած են անշուշտ տակին, հողին, բնակին եւ օտարին: Արդ՝ այդ երկուքն ալ «բուն հող» են, պէտք է ըսել: Ուստի խնդիրը կը վերաբերի բունին իսկ եւ անոր վրան ըլլալ-կոխելուն:

Ամբողջ դրուագի երկայնքին ոտքը, կանգուն մնալը, տիրութիւն ընելը կամ չընելը լծորդուած են բունին: Բնակ հողին վրայ կոխող-քալողը արմատացած է այդ հողին մէջ: Անկէ ելած է: Ինչպէս կը տեսնուի դրուագի աւարտին, այդ հողին մէջ չի թաղուիր: Յաստատունի վրայ կանգուն մնալը ապրելու, կենայտու համարժէք է: Յատկանշական է նաեւ այն որ բունը խօսքի կայուածին է կապուած: Իսկ բունը, գուցէ նախքան ծառի հիմնական մասը նշելը (կամ հակառակը), այսինքն՝ այն հատուածը որ տունկը կանգուն կը պահէ, կը դարձնէ ծառ եւ ոչ սոսկական անհասակ թուփ, ուրիշ բան չէ եթէ ոչ Էացնողը: Յնդերոպական բունը, ըսի վերը, յունարէն ֆիզիքը, Էութեան ըմբռնում մըն է, պահպանուած մեր առասպելին մէջ, ըմբռնում՝ որ Էութիւնը կը հասկնայ իբրեւ կեանք. աճ, փթթում, հասունացում, մնացում եւ անկում, որով նաեւ ժամանակ (Յայտըկեր սպառիչ Էջեր ունի այս մասին իր *Einführung in der Metaphysik*՝ «Բնագանցութեան ներածութիւն» կոչուած դասընթացքին մէջ):

Բուզանդարանի թարգմանութիւններուն մէջ, ինչպէս քիչ մը այլուր, շատ յաճախ բունը կը դառնայ «ճշմարիտ»ին համարժէքը: Ասիկա բոլորին սխալ չի թըլիր, երբ նկատի առնենք որ բունը ճշմարտութեան գետինն է եւ սուտը, ստապատիրը, կեղծը, այդ բունէն հեռացումն է կամ ծածկումը: Ինչ որ կը խռովէ պատումին մէջ, ան ալ Էութեան առնչումն է բնակելուն հետ, այս մէկը հասկցուած այլեւս իբրեւ Էութեան մէջ լինել մը, անով ըլլալ մը, բնաւ անջատ ու հատեալ: Ան որ կը լքէ «բնակութիւնն երկրին» կը դառնայ ոչ միայն ան-բնակ, այլեւ անբուն: Արմատաքի խլումով կը բացուի օտարութեան դուռը: Ասկէ՝ տարագրութիւնը, «ծառայութիւնը հեթանոսներուն» եւ մահը: Եիշդ այս է որ կը գտնենք Ղազար Փարպեցիի *Պատմութիւն հայոցի* առաջին Էջերուն մէջ, երբ Միացեալ Յայաստանի վերջին գահակալ Արշակունին կը լքէ իր հողը: Ղազար բնակը կը փոխարինէ բնիկով. «Չբնիկ տեսարդ մի կորուսել ջանայք»: Շփոթը, ուրեմն, տեղի կ'ունենայ արդէն Ե. դարուն: Տարբերութիւնը թերեւս հիմնական չէ, միայն թէ բնակը նկատի ունի բունի կայուածին մէջ բնակիլը, իսկ բնիկը զայն ունեցողը: Իսկ ան որ կը բնակի բունին մէջ, ըսենք բնօրէն, բնովին, ի բնէ, ինչպէս կ'ըսէ հին լեզուն, կը կրէ կնիքը ճշմարիտին, վաւերականին, անեղծին եւ բոլոր դրական եզրերուն:

Բուզանդարանի արմատէն բիրտ խլումի պատմական պարագան յարացոյց կը դառնայ Փարպեցիի համար եւ անկէ անդին պատմագրութեան մէջ: Մանաւանդ որ վերջին Արշակունի գահակալի մեկնումը կը կրկնուի 428ին, Արտաշէսի գահընկէցութեամբ: Յայտնօրէն ամեն իշխանագրկում ու անկում կը բանի նոյն

յարացոյցի օրինակով: Պատմիչները այդ է որ կը յիշեցնեն, այդպէս կայունացնելով յարացոյցը (Ղազար կը կրկնէ *Բուկանդարանի* դրուագի Էական մասերը, օրինակ Սահակ հայրապետին վերագրելով Ներսէսին, իր հօր, տեսակէտները): Յարացոյցը կայ ոչ միայն կրկնուելու համար, այլ նմանակուելու: Դաւաճան նախարարները գրեթէ նոյնն են: Անպակաս են: Ինչպէս չեն պակսիր աղետալի դէպքերը Ե. դարէն մինչեւ ԻԱ. դար, գրեթէ մինչեւ երէկ կամ այսօր: Յարացոյցն ալ պիտի... իր արմատները արձակէ գաղափարախօսական ոլորտներուն մէջ ու դառնայ մնայուն, բայց չմտածուած ընդհանուր կաղապար: Խլոււմը պիտի առնէ Էութենէն գրկումի նկարագիր, հետզհետէ գաղթողի, պանդուխտի, տարագիրի «օտարացումով»: Արտաքսուող, վտարանդին, հողի Էականութենէն մեկնողը կը բռնէ ոչնչացումի ճամբան:

Բնակ հող ու տէր եւ օտար հող ու տէր անհամադրելի զոյգեր կը դառնան: Ասոնց ետին կը պարզուի Էապէս համայնքի գլուխի, իշխանութեան տարածքը: Իրենք՝ թագաւորին դաւաճանները կը մերժեն ենթարկուիլ իրենց «բնակ տեարն»ին, անոր տիրութեան, գործածելու համար Ե. դարու կիրարկուածը: Կը մերժեն բնակ տիրութիւնը Արշակի իշխանութեան, որ հետզհետէ կը վերածուի իլեակի մը: Անոր բանտարկումը Անյուշ բերդին մէջ, ինչպէս սպարապետ Վասակի մորթին խոտով լնումը կը նշեն գահակալին հիւծումը, պարապ, անինքն գոյութիւնը, օտար հողի վրայ: Դաւաճանները որոշ չափով ան-իշխանականներ են, միշտ պատրաստ ծառայելու մէկ ուրիշ, առհասարակ օտար իշխանի, օտար հողի վրայ: Նշմարելի է անշուշտ ու կարեւոր, որ բունի հենքին վրայ կը մտածուի տիրութիւնը: Ան որ ուժ կու տայ, կը խօսեցնէ, կը «յոխորտացնէ» եւ գահակալը կը զինէ իշխանական յաւակնութիւններով: Ան է իշխանութեան, կրնանք ըսել ինքնիշխանութեան «բնական» հիմունքը:

Մաշտոցեան դպրոցը անտարբեր չէ յարացոյցին հանդէպ: Անիկա ոչ միայն այբուբենի ըմբռնում ունի (բուն հայերէն այբուբեն մը բխելու է բուն լեզուէն իսկ եւ ոչ մէկ այլ լեզուէ, կարծէք պահուած ըլ լար ան լեզուին մէջ եւ դուրս բերուէր), այլեւ այդ այբուբենն ու անոր լծորդ քրիստոնէական վարդապետութիւնը կը մտածէ իբրեւ «անջատման» հոլովոյթ մը: Այսպէս՝ վրացական տառերու ստեղծումով Մաշտոց այդ սնտիապաշտ ժողովուրդը «անջատեալ ի հայրենեաց իւրեանց եւ անյիշատակ ցուցանել»: Ուրիշ տեղ երկրի խուժդուժ լեզուներ խօսողներուն մէջ այբուբենի տարածումով, բարբարոսները «մինչեւ արտաքոյ իւրեանց բնականութեան զերծանել»: Այլ խօսքով՝ այբուբենի տարածումը, վարդապետութեան հետ ու մէջ, բիրտ արարք մըն է՛, որ այդ մարդիկը կ'արտաքսէ իրենց «բնականութենէն»: Այբուբենը, ի վերջոյ, գրեթէ ամբողջովին բանաւոր մշակոյթ ունեցող հասարակութեան մը մէջ, ունի անհանգստացնող ազդում, քանի բնաւ բացայայտ չէ խօսուող բարբառը գրութեան վերածելու արարքը: Այբուբենը ոչինչ ունի «բնական», արդիւնք է մշակող մտքի: Արդէն այստեղ հատում մը կայ «բնական խօսողութեան» ու լեզուին միջեւ: Այբուբենը կը կտրէ լեզուն, երբ

կը գրէ զայն: Երբ զայն կը մեռցնէ (ըստ Պղատոնի): Եւ ասոր համար առասպելը կը պահանջէ որ նշանագիրերը ըլլան «աստուածատուր», գրեթէ անձեռագործ:

Բնականութիւնը, *Վարք Մաշտոցի*ին մէջ զարմանալի բառ մը, ուրիշ շատ մը բառերու նման, որ զայթակողութեան բար են բանասիրութեան համար: Բառը չունի բնաւ ներկայ իմաստը: Արեղեան կը հասկնայ «բնիկ ազգակցութիւն», առանց թափանցելու այդ դարձուածքի խորքին, նշարելով հանդերձ որ բառը անսովոր է: Կորիւն հաւանաբար կը նորաբանէ եւ կը յուշէ բունի հետ կապ, ինչպէս բնակի հետ: Արդ՝ մաշտոցեան դպրոցին համար այդ բնակութիւնը չի վերաբերի միայն աստեղութեան, այլեւ աստուածայինին հետ սրբազան վարդապետութեամբ կապին: Ուրեմն՝ երկրորդ բնակութիւն մը կայ եւ կան բնակ հոգիներ, ինչպէս կային բնակ տէրեր: Իսկ այդ հոգիները խլուած, արտաքսուած են բնակ հողէն, ասոր բնականութենէն (*naturalité*?), գրեթէ բնական բնութենէն պիտի ըսէի, կապուած են մէկ ուրիշ արմատի: Ուստի՝ արմատախլում մը կայ այբուբենի մշակութեամբ եւ արմատացում մը այլուր: Կորիւն չի տար անունը այլուրին: Խորենացի միայն երբ պիտի գրէ *Պատմութիւն Հայոցը*, պիտի փնտռէ ու գտնէ Հայոց սկիզբը-ծագումը, այսինքն «Արմատը»: Պատմագրութիւնը յայտնօրէն թէ՛ առաջին արմատախլում մը կը հաւաստէ, թէ՛ ալ զայն կը բառնայ ուրիշ արմատներու արմատով: Խորենացիի գործողութիւնը ուրիշ արմատացում մը տալու մաշտոցեան ճիգին պատմագրական երեսակն է: Իր Հայկը Նոյի սերունդէն է, այսինքն՝ Ադամի: Արդիւնք աստուածային արարչութեան: Որով երկրածին չի կրնար ըլլալ, այսինքն՝ «բնածին»: Գործողութիւնը թիրախ մը ունի, որ է հերքել երկրածնութիւնը, բնիկութեան արմատը բունին մէջ: Թիրախի առաջին գիծին վրայ կը գտնուի անշուշտ Վահագնը, լոյսէն, ջուրէն, հողէն ծնած աստուածը, որ Վահունիները կը նկատեն իրենց տէրը եւ կը «յաւակնին» որ ան է որ հայոց նահապետը: Այլ խօսքով՝ երկրածնութեան գաղափարախօսութիւն մը կայ, հաւանաբար արդէն Դ.-Ե. դարերուն, որուն կ'արձագանգէ Բուզանդարանի առասպելը, եւ մըրցակիցն է նոր վարդապետութեան: Երկրածնութիւնը անկարելի կը դարձնէր որեւէ աղանական սերում: Երկրորդ եւ այլուր արարչութիւն մը մտածելի չէ միաստուածեան կրօնքի մը մէջ, եթէ ոչ իբրեւ հեթանոսական ստապատում վերապրութիւն: Որով կը հերքուի: Խորենացիի ռազմավարութիւնը կը կայանայ այդ երկրածնութեան կամ բնածնութեան գաղափարախօսութիւնը կազմալուծելու (Վահագնը Մեծն Տիգրանի սերունդէն հերոսի մը վերածելով, չէզոքացնելով Վահունիներու յաւակնութիւնները) եւ լաստակերտելու ամբողջ պատմական պատում մը, որուն մասին գրեր են արդէն: Միշտ արմատ մը: Բունը եւ բնիկը կը զօրեն, բայց անոնք այլեւս հողին մէջ արմատացում չեն նշեր: Էութիւնը բնականը չէ, բնականութիւնը չէ: Լուսաւոր վերինն է. ոչ-բնականը: Հասկնալի է թէ ինչո՞ւ Հայկ նահապետ կը ներկայացուի իբրեւ եկուոր մը Բաբելոնէն, այսինքն՝ արարչութեան ճիւղէն: Կը հետեւի անշուշտ բնակութեան տարբեր հոլովոյթ մը, տեղի, վայրերու հիմնումով, առանց բունի հետ ուղղակի, անմիջական շփումին:

Եթե ծառը ունի արմատ՝ մարդն ալ ունի ոտքեր, գործածելու համար հնամաշ փոխաբերությունը, որ առասպելը կը կազմակերպէ այնքան համակարգային քերթողութեամբ: Ուստի եթէ առաջինը կը պատկանի բնիկին, ասոր խորութեան, ուղղահայեացութեան, բնակութեան, բնօրէն է ինքզինք, երկրորդը կը պատկանի անկայունին, գնայունին ու գաղթին: Անբնութիւն: Անտունիութիւն (անբուն տուն): Տարագրութիւն սկզբնական: Առաջին ասոր կամ երկրորդ, ինչպէս կ'ըսէր պատմիչը, Լաստիվերցի. «պանդխտեցան երկրորդ անգամ եւ եղեն վտարանդիք», դրախտէն դուրս արմատախլումէն ետք, երկրորդ էջ. եւ սկիզբ նորոգ աղէտից: Սրբագնութենէն՝ անսուրբը: Հոգիէն՝ մարմինի բորոտումը, եւ այլն:

Լեզուն թոյլ կու տայ խօսիլ ու մտածել *խլեակ* մը որ աշխարհ մը կը յօրինէ ամեն անգամ երբ կը բարձրանայ ոտքի մատներուն վրայ, հագիւ արմատ նետած (ճատոր փորձությունը) ինքզինք կ'արձակէ վեր, ինքզինք ըլլալու, կարծես լարախաղացի մը նման ուզէր խաղալ ինքզինք կորսնցնելու սխրագին վտանգին, մահուան հետ: Էանայը կարծես խլուիլ մը ըլլար: Ի սկզբանէ: Որով արմատացած ըլլալը, արմատացումը բաւական չեն մտածելու համար մարդուն յարաբերությունը հողին, երկրին կամ պարզապէս եւ ասոր համար անելի խորհրդաւոր, Էութեան հետ: Մաշտոցեան դպրոցը մտածել կու տայ, մանաւանդ երբ ի վերջոյ այբուբենը, այսինքն՝ լեզուն կը վերածէ ոչ միայն ժողովման ազդեցիկ միջոցի, այլեւ գերիվեր վայրի, ինչ որ կարելի է կոչել «խորհրդանշական վայր»: Ան որ հետագային պիտի վերածուի «հոգեւոր հայրենիք»ի, բնակութեան համար անհրաժեշտ: Մինչ այդ՝ տեղի ունեցաւ անջատումը, խլումը, այնքան արմատաքի որ չի մնար որեւէ տակտիք:

«Dichterisch aber wohnet der Mensch», կ'ըսէ բանաստեղծը, որ ճանչցեր էր «գաղթը», անջատումը օտարութեան մէջ: Հայացած՝ տողը կը դառնայ «Բանաստեղծօրէն սակայն մարդը կը բնակի»: Անշուշտ «բանաստեղծօրէն»ը սովորական բանաստեղծութիւնը չէ, գերմաներէն բառը կը թելադրէ խիտ մթութենէն (dicht) բերել հանել դուրս, պատրաստել-կազմել, ինչ որ յատուկ է որեւէ մշակումի որ տարածք կը ստեղծէ եւ բնակութիւնը կը դարձնէ կարելի: Նման «բանաստեղծում» բնակութիւնն իսկ է. բաներուն, բնանկարին դրուիլը հոս, ապրելու համար: Յաճախ մեկնաբանները, Հայտըկերէն սկսեալ բնիկի ու բնականի կողմնակիցներ, կը մոռնան որ այս բնակութիւնը կ'ենթադրէ անջատում մը, տարագրում մը, ասոր մը, ուր հնարաւոր է «գրեթէ» կորսնցնել լեզուն: Որով բնակութիւնը կը սկսի վերադարձով մը, Heimkunft-ով, տունդարձով մը, սակայն այնպէս որ բնակութիւնը իր մէջ կը պահէ գրեթէ-ի տրամաբանութիւնը, լեզուին այլայլումը դուրսէն:

Խլեակը-խուլ Էակ տարուած հոսանքէ մը խելահեղ, երբեմն յետինը Էակներուն, խելագարի պէս կառչող լատափայտին կամ նաւուն, յուսալով հասնիլ որեւէ նաւահանգիստ, ինչպէս գաղթողները Միջերկրականի ալիքներուն մէջ, հրաժարող իրենց բնավայրէն, կտրող-անցնող ամեն սահման, կարծես արդէն չպատկանող գոյութեան ամենէն ստորին իսկ աստիճանին: Փոթորիկէն ետք՝

ծփացող դիակներու սփիւռք մը, սիկիլիական ակազուտներէն ցրուած ափէ ափ, անժայիտ, արեան կարմիր գիծ, մինչեւ մեր երագները. անշուշտ աննայելի որեւէ աչքէ: Ասոր համար՝ պատկերը չի գօրեր, պատկերը՝ որ ինքն իսկ պիտի ըլլար խլուած լռութենէն կամ կապտուած՝ տեսածէր: Պատկերը կ'ուտէ տեսածը: Իսկ ողբը միշտ կարելի է, ինչպէս միշտ անտանելի է կրել սասանած սիրտ մը, նման էն փլած տներ... Եւ սկզբնական աղետը յիշատակելը չի մեղմեր խորտակումի ցաւը, ոչ ալ կը դարմանէ վերքը. սկզբնական աղետը միշտ սկսողն է, յամեցողը, ծածկըւողը, մնացողը որ կը վերադառնայ օր ու գիշեր, քեզ չի լքեր, մանաւանդ երբ չես ուզեր զայն յիշել ու կը խորհիս գերծիլ անկէ, մնայու համար իբրեւ թէ անմաս ամեն վարակումէ: Անոր վերապրող խլեակն ես, քու/անոր արմատը: Յիշելը կը հսկէ արմատախլումի համայնացանցին:

Էանալը թերեւս արձանագրուիլ մըն է այլուր: Տարագրուիլ: Արմատ նետել, ինչպէս կ'ըսէ Սարաֆեան իր յօդուածներէն մէկուն մէջ, առանց բոլորովին կամենայու ատիկա: Գրուիլը կը մտածուի իբրեւ ըլլալ մը որուն կը սպառնայ քարացումը ինչպէս կերպադրումը: Իր բախտը, աւելի ճիշդ անբախտութիւնը:

Այո, կայ լեզուի ճշմարտութիւն մը:

Ատիկա, որեւէ կապ չունի բառարանին, ստուգաբանական ճշգրտութեան, լեզուագիտութեան ու բոլոր «բաներուն», որ կը բանին լեզուին շուրջ ու մէջ, մերթ մակարոյծ մոլախոտի պէս, մերթ լուծողական բաղադրոյթի: Լեզուի ճշմարտութիւնը ներգոյական ալ չէ, ինքնագոյ, որ հոն ընդմտած ըլլար, ծուարած անոր չես գիտեր որ բնիկութեան կամ բնակութեան խորշերուն, ըսենք ենթադրեալ մաշտոցեան աստուածգիտական բարբառին, կարծես թէ այդ նախաւորին մէջ, սկզբնապէս միայն կրէր վաւերի անաղարտ լուսապսակը: Լեզուի ճշմարտութիւնը լեզուականն է, միայն ինք, եկող իր արխիւէն անդին, ամեն շտեմարանէ, ամբարէ, զանձարանէ դուրս, խլուած՝ բոլոր հաւանական կալուածէ ու գետինէ, քանզի չպատկանող անոնց, իբրեւ լեզուին անխառն քերթուածը, յառնող ինքն իրմէ նախադասութեան հետ, որեւէ արտաբերումի, բայց ոչ անոնց մէջ, եւ անշուշտ արդէն բնովին մահկանացու: Լեզուին Է-ն արդէն չեղողութենէն խլուած:

Քերթող մը այդ է որ թերեւս կը խլէ կը հանէ, կը շոպէ պիտի ըսէի լեզուէն, այնպէս մը սակայն որ կարծես կը մնայ հլու, կ'ենթարկուի, կը հպատակի անոր, կը փարի անոր, կը լքէ ինքզինք անոր, առանց բրտութեան, առանց բռնի որեւէ արարքի, տեսակ մը մտաւորական կորզումի, ինչպէս արձանագործը քարի զանգուածին մէջ բանտարկեալ ձեւերը, ձեւերը՝ որ քարինն են, անոր ապաձեւ լեզուն, որով կը դառնայ հիմնովին արմատախիլ, յանուն, ինչ միամիտ յաւակնութիւն տարերա- յին տնօրինութեան, ուրիշ ու աւելի հիմնական խզումի մը: Աբսոր՝ յանգման կէտ:

¹ Այս բրտութեան վրայ շեշտը կը դնէ Մ. Նշանեան իր *Agés et usages de la langue arménienne*, 1989, քանց առնելով պրոբլեմի իսկ բերած արտաբանումի, գուցէ պէտք էր ըսել, ներքին արտաբանումի բըրտութիւնը:

(Թ՛իւ 2-3, 2021)

ԶԱՐԵՀ ՈՐԲՈՒՆԻ

ՄՈՆԻՔ ԿԱՍ ԱՍՖԱԼԹ ԵՐԿՈՒ

Որբունիի այս անտիպ էջերը, որոնք գրուած են անոր կեանքի վերջին տարիներուն, կը հանդիսանան *Հայաստանները* վիպաշարքի ութերորդ հատորի միակ գրուած էջերը: Անոնք մեզի տրամադրուեցան Գրիգոր Պըլտեանի կողմէ: Շարքին առաջին հատորը՝ *Փորձը*, լոյս տեսած էր Փարիզ, 1929ին, որմէ ետք Որբունի շատ երկար սպասած է, աւելի քան չորս տասնամեակ, մինչեւ երկրորդ գիրքին՝ *Թեկնածուն* խորագիրը կրող հատորին լոյս ընծայումը, 1967ին, Պէյրուս: Ապա, ոչ այնքան ուշացումով, քանի մը տարի ետք, 1972ին, Պոլսոյ մէջ, լոյս տեսած է *Ասֆալթը*, եւ *Մովորական օր մը*՝ 1974ին, Պէյրուս: Որբունիի մահէն ետք, 1982ին, Մարկ Նշանեանի «Կամ» հանդէսին մէջ, Փարիզ, կը կարդանք շարքին վեցերորդը՝ *Չի քո է կարողությունը*: Որբունիի արխիւին մէջ ցարդ անտիպ կը մնայ *Հայաստաններուն* հինգերորդ հատորը՝ *Տիգրան*, ինչպէս նաեւ չգրուած եօթներորդ հատորի մը խորագիրը՝ *Նուարդ*, որ կը հանդիսանայ «Տիգրանին զոյգը»:

Տիգրան կրնամ, կրնամ գրել, նոյնիսկ կինս մեռնելէն ի վեր: Կինս մեռաւ: Մօտ երկու տարի է, ըսել կ'ուզեմ Մոնիքին հիւանդութեան սկիզբէն ի վեր մինչեւ այսօր, իր մահէն շաբաթներ ետք: Շատ ճշդութիւն մի հարցնէք ինծի, ուղեղս խաւիծ է: Կ'աղաչեմ: Թաղումէն երկու թէ՛ երեք օր վերջն էր, երկու, կարծեմ երեք, ինչ որ է, ատիկա բնաւ կարելորութիւն չունի, քանի որ ոչ մէկ ամնչութիւն ունի ինծի հետ: Խօսք ըլլայ, բան մը պէտք է ըսել, որեւէ բան կ'ըսենք բան մը ըսած ըլլալու համար: Կարելորը... կարելորը, ինչ պիտի ըսէի, այո, կարելորը... Կաթ ամնելու գացած էի մեր սովորական կաթնավաճառէն: Կաթնավաճառին կրպակը գետեգերքէն աջ կողմը առաջին փողոցին առաջին թիւերէն մէկն է: Կարելորը այդ չէ, կարելորը այն է որ ես կաթ չեմ խմեր եւ կաթ բերելու գացեր էի, կարծես թէ Նիքոլը կամ Մոնիքը, կամ երկուքը մէկ, տունն ըլլային: Բայց ինչո՞ւ վազելով գացի, հեւ ի հեւ, լեզուս բերնէս դուրս ինկած: Վերջը, բանը բանէն անցնելէն վերջ հասկցայ: Ուժգին յուզումի մը նախապատրաստական միջոցներն են եղեր ատոնք: Երբ խանութ հասայ, գիտէ՞ք, գիտէ՞ք ըսի, երկու ձեռքերս վերցուցի զանոնք խանութի միջոցին մէջ ճօճելով, որպէսզի բան մը չըսեն եւ ես կարենամ կոկորդիս մէջ խեղդուող բառերը դուրս հանեմ, մի՛, մի՛, կ'ըսէի եւ անոնք ապշած ինծի կը նայէին, բան գործ ձգած ինծի կը նայէին, մինչդեռ ես կը տապալուկէի, արիւնք բաց՝ ձեռքերս անոնց կողմը երկարած, մի՛ մի՛, կ'աղաչեմ, կ'աղաչեմ եւ յանկարծ բառը դուրս նետուեցաւ գալարումներու մէջէն, կինս... կինս, ըսի ու նորէն ձեռքերս առաջ նետուեցան սաստիկ դողէ բռնուած, մի՛, մի՛, խընդրեմ, ու արցունքը աչքերէս յորդեցաւ ամրան տեղատարափի պէս, փղծկող կոկորդիս մէջէն: Այո, կարելորը, ուրեմն, իմ լացս, իմ փղծկումս էին ուրիշներու ներկայութեան, որպէսզի անոնք իմ վրաս մեղքնան, ախ վախ ընեն եւ ես այդպէ-

սով հաճոյանամ իմ դժբախտութեամբս: Ես ատիկա զգացի վերադարձի ճամբուս վրայ: Չգացի, իմ լացուկոծիս տակ, անոնց խառնուած, զանոնք իրեն դիմակ ըրած, տեսակ մը գոհացում, որ տակաւին չէր համարձակեր իր անունը տալ, տակաւին դողդոջուն էր նորածինի մը պէս: Այդ պահէն սկսեալ սկսայ զսպել հեկեկանքս, ետ մղել, կտրել ու նետել իր արմատէն, բայց անկարելի էր կասեցնել անոր ընթացքը, որովհետեւ հանգուցեային տուայտանքներէն նորանոր պատկերներ թաքնօրէն կը սպրդէին մտքիս լթուած հրապարակը:

Ըսի, կամ գրեցի, հիմա կրնամ գրել: Այո, ահաւասիկ կը գրեմ, կինս մեռաւ, կնոջս մեռնելէն ի վերջ առաջուան ցնցումները չեմ ունենար, կակագումները, լեզուի ջլախտը չեմ ունենար, բայց նոյնը չէ երբ մէկու մը կ'ըսեմ, մէկու մը հետ կը խօսիմ, որովհետեւ խօսելուն մէջ պատասխանատուութիւն մը կայ, խօսիլը հանրային արարք մըն է, անմիջապէս կը փղծկիմ, կը ցնցուիմ, քիթս ու բերանս կը ծամտին ջղագարութենէ բռնուողի մը պէս, ձեռքերս ինձմէ առաջ նետած՝ արգիլելու համար որ խօսիմ, բերաննիմ բանան, մի՛, մի՛, կ'աղաչեմ, բան մը մի՛ ըսէք, մի՛ խօսիք, կը խեղդուիմ:

Տուն վերադարձիս երկու քոյրերը ինծի կը սպասէին ծափ զարնելով, ըսել կ'ուզեմ որ կաթին կը սպասէին, բայց կաթին տրուած պատիւը ես կը քաղէի, այս ինչ աղուոր գառնուկ ես դուն, այս ինչ աղուոր մանչուկ ես դուն, միեւնոյն ատեն կը համբուրէին երեսներէս: Չիս գրկեցին եւ պարեցինք սենեակին մէջ: Նիքոլին հասակը աւելի երկարած էր, մինչեւ ոտքերուն մատները իջած սեւ շղարշէ գիշերանոցով, վզին շուրջը եւ քղանցքներուն՝ սպիտակ նաշխերով զարդարուած, սեւութիւնը քիչ մը ցայտեցնելու համար: Մոնիք իր աչքերուն գոյնով, ծովի ջուրի կանաչով եւ իրիկնային կապոյտով, երկուքին խառնուրդովը, երբեմն մէկը գերազանցելով միւսը, ըստ շրջապատի լոյսի խաղերուն, ինչպէս իր աչքերը, որոնք երբեմն կանաչ, երբեմն կապոյտ եւ երբեմն երկուքին խառնուրդովը մոխրագոյն էին: Կտաւը պարզ բամպակէ էր եւ պատուհանէն սենեակին մէջ թափուող լոյսին անթափանց կը մնար, մինչդեռ Նիքոլին գիշերանոցէն լոյսը կ'անցնէր սեւի վրայ ճերմակ՝ գծելով մարմինը իր ամբողջ նրբութեամբը, բայց բամպակէ կտաւը մարմնին ձեւերը կը հագնէր, մանաւանդ բլրացած կուրծքը, որ երկու բռունցքներու պէս աչքերս կը ծեծէին: Մոնիքն է սակայն որ գրկեցի եւ գետին նետեցի ու ես ալ վրան ինկայ: Մեր ամուսնութեան սկիզբն էր, փողոցին մէջտեղը կանգնեցաւ, սուր-սուր աչքերուս նայեցաւ, կ'ուզեմ որ հիմա ինծի ամուսնու բողի մը պէս պանդոկ տանիս, չէ՛, կ'ուզեմ, մի՛ սկսիր պատճառաբանել, սեպէ թէ ես քու կինդ չեմ, հասարակ բող մըն եմ, միասին «վեր» ելլենք, այսպէս կ'ըսեն, չէ՛, «վեր կ'ելլեն, աղուորս», միամտութիւն մի՛ ձեւացներ, պիտի չըսես թէ բողի մը հետ բնաւ «վեր» ելած չես, առաջ, ո՛վ գիտէ, հիմակ եւս, երբեմն, երբեմն, համ փոխելու համար: Մատը բերանիս վրայ դրաւ, մի՛ խօսիր, բան մի՛ ըսեր, գիտեմ թէ ինչ պիտի ըսես, բայց անուշիկս, այս կողմերը բոլոր պանդոկները զարշելի պանդոկներ են, ես ալ ատոր համար հոս կ'ուզեմ, կ'ուզեմ այդ սենեակներուն խոնաւութեան մէջ

թրծուած այրերուն հոտը ամեն, անոնց թափած սերմին կծու արտաբուրումը շնչել: Մայթին վրայ բազմութիւնը, շատցած, սկսաւ մեզ հրմշտկել: Երթանք, ըսի, բաւական խօսեցանք, հա գացին, հա խօսեցանք, միեւնոյն բանն է, միեւնոյն արդիւնքը կու տայ: Կ'աղաչեմ, Մինասս, Մինես, ինչպէս կը կանչէր քեզի Նիթոյ, կ'աղաչեմ: Ես այստեղները շատ եկած եմ, շատ փորձեցի ամենէն վարէն սկսի, որ ազատիմ քրոջմես, ուրիշներէն եւ ազատեմ քոյրս: Այրին գարշանքը այնքան սուկայի էր մինչեւ քու գալո, իմ հակառակութիւնս քեզի դէմ, որովհետեւ քոյրս կար քու եւ իմ մէջտեղը: Զասկցար: Ձեռքէս բռնէ: Ոչ, դուն առջեւէն պիտի քալես, այդ տեղը քու տունդ է, դուն առջեւէն պիտի քալես, ես ետեւէն քեզի պիտի հետեւիմ: Փայտէ նեղ, դարձողարձիկ սանդուխ մըն էր: Առաջին յարկին վրայ բռնեցի գայն եւ սկսայ հանուեցնել: Ընդդիմացաւ, վախցաւ պոռայլու եւ այսպէս մինչեւ չորրորդ յարկ մես-մերկ Մոնիք մըն էր որ հապշտապ դուռը բացաւ ու ներս մտաւ, շունչ քաշելու ժամանակ չունեցաւ, որովհետեւ արդէն գետինն էր եւ ես ալ վրան՝ իր խորութիւնները չափելով գբաղած: Յանկարծ դրան զանգակը հնչեց: Կաթնավաճառին տղան էր, կաթին շիշը ինծի երկարելով ըսաւ, ձեր կաթը մոռցաք: Ճիշդ այդ պահուն իսկ անդրադարձայ ըրածիս ահագնութեանը: Ինչո՞ւ, Աստուած իմ, ինչո՞ւ: Ինչ պէտք ունէի խայտառակուելու: Ինչ պէտք ունէի այդպիսով գոհ ըլլալու, որովհետեւ գոհ էի, ո՞հ, ինչ գոհ էի: Կը մեղքեցուէի: Կը հասկնամք, վրաս կը մեղքնային: Ինչ որ ալ ըլլայ գոհ էի, այս չէ՛ կարելորդ: Զիմա անոնք ալ գիտէին: Չէի գիտեր թէ ինչ գիտէին, բայց կ'ուզէի գիտնալ թէ ինչ գիտէին: Այո, գիտէին որ ես կիսն խենթի պէս կը սիրէի, չէ՛ որ խենթի պէս վարուած էի իրենց հետ, մի՛, մի՛ խօսիք, բան մը մի՛ ըսէք, պիտի խեղդուիմ: Այսպէսով է որ մեծ համեմատութիւններ առաւ ուրիշներուն գիտնալը: Զիմա կ'ուզէի որ ամբողջ փողոցը գիտնար, ամբողջ թաղը, ամբողջ ականը, ինչու չէ՛ եւ ամբողջ քաղաքը, որպէսզի մեջքս աւելի ծռէի, դէմքս աւելի խճճուած եւ աչքերս արցունքոտ, իբրեւ ժամանակէն առաջ զառամած ծերուկ մը ամեն կողմ երթայի: Այսպէս չէնք ազգովին ալ, ամեն տեղ կ'երթանք, աշխարհքին չորս ծայրերը կը հաստատուինք, մեր հետ պտտցնելով մեր դժբախտութեան պատմութիւնները, ցոյց տալու համար որ մենք բացառիկ էակներ ենք, ուրիշ գաղթականներ ենք, ոչ հասարակ, աղքատութիւնը չէ մեր թափառումներուն պատճառը, մենք ջարդէ մագապուրծ ճողոպրածներ ենք: Միշտ սիրուելու, բայց մեղքեցուելով սիրուելու մեր հակումը: Կը հասկնամ որ մեր դէմքերը տխուր են, ողբ երգական օրէն տխուր, որոնցմէ յաւիտենապէս քաշուած է ժպիտը, ինչպէս հիմա իմ դէմքս, առանց ժպիտի, ժպտելու անկարող դէմքս, անոր բոլոր գիծերը, մկանունքը հաւաքուած են քթիս շուրջ, քարացած, խոժոռ աչքերու վերածելով աչքերս, խորը ինկած աչքերս, արձանի փոս յիշեցնող, պարսպ, եղերականօրէն սեւեռուն աչքերս: Դեռ այս առաւօտ փողոցին մէջ երիտասարդ կին մը, թերեւս աղքատ ուսանողուհի մը ինծի մօտեցաւ, մերթօ ամենելու համար, կ'ըսէր, բայց գլուխս վերցուցի, նայուածքը ինկաւ աչքերուս մէջ ու յանկարծ, երկարած ձեռքն ու նայուածքը ետ քաշելով փախաւ: Աղ-

ջիկը սարսափած կ'երեւար, վազելով կ'երթար եւ ես տեղւոյս վրայ կանգնած՝ գլուխս կախ կը նայէի անոր ետեւէն, ինքզինքէս սարսափած: Աս ինչ եղեր ես, տղաս, ինչ եղեր ես, Մինաս, ըսի ես ինծի: Բարեբախտաբար երկու Մինաս կայ մէջս, ո՛չ, մէկը ներսս, միւսը դուրսը, դուրսինը վրաս կը հսկէ, կը զգաստացնէ զիս, բայց միշտ չէ որ կը յաջողի իր պատգամին մէջ: Կարծեմ թէ կը սկսիմ սիրել դժբախտութիւնս, ինչ կ'ըսեմ, արդէն կը սիրեմ: Մոնիթին երկար հիւանդութեան ընթացքին ան է որ անոր քստմնելի ցաւերը տանելի դարձուց ինծի: Շարունակ փորձանք մը կու գար վրաս, գլուխս պատին կը զարնուէր, ծունկս՝ սուր անկիւնի մը: Անգամ մը չորս ամիս տեւեց ծունկիս ցաւը: Երկու հիւանդ ունէի տունը, կինս եւ ծունկս, որոնք կը խնամէի միս-մինակ, չորս պատերուն մէջ բանտարկուած եւ որոնցմէ ամենէն աւելի ծունկով զբաղած էի, որովհետեւ Մոնիթ կու լար իմ ցաւիս համար, երբ իրեն համար օր մը օրանց կաթիլ մը արցունք չթափեց: Անգամ մի միայն, երբ գողգոթային բարձունքը հասած էր, յանկարծ դեմքը տաժանագին պոստեց, դեմքին մկանները քաշքշեց վերէն վար, ձախէն աջ, խճճեց, մինչեւ որ աչքերէն ժայթքելու պատրաստ արցունքը ետ մղեց, կլլեց ու ճակտին վրայ լոյսի պէս ժպիտ մը բխեցուց: Խնդաց իր տկարութեանը վրայ: Խնդրեմ, խնդրեմ, կ'ըսէր, տոթթոր Պեռնարին գնա, ան մասնագէտ է ասանկ բաներու: Նոյն շրջանին ախորժակս կորսնցուցի: Զաց ըսուածը բերանս չէի կրնար դնել: Միսի, ձուկի մասին խօսք չէր կրնար ըլլալ: Անկարելի էր: Սկսանք դուրսը ճաշել աւելի յաճախ միշտ աւելի սուղնոց ճաշարանները, բայց հետզհետէ աւելի քիչ ուտելով ու աւելի գանելով: Չէ, ախորժակը չէր պատճառը, ախորժակի հարց չէր, բերանս է որ չէր բացուէր, ակռաներս պահակ կանգնած էին բերնիս առջեւ, կը մերժէին ընդունիլ, անոնք բոլորովին անատակ դարձեր էին որեւէ բան ծամելու: Կը ծամէի, կը ծամէի, դուրս կը հանէի պատառը: Ակռաներս մորթագերծ մարդու մը զգայնութիւնը ունէին, ինչ որ իրենց դպեր իրենցմէ հեռու կը վանէին: Լինտերս նոյնպէս կ'աշխատակցէին ատամներուս դժխեմ պատգամին, որուն ուրկէ գալլը յայտնի չէր, մինչեւ որ նշմարեցի թէ Մոնիթ այնքան ալ զրկուած չէր: Վերջը միայն կաթ առնելու ստիպուած էր, երբ ախորժակը կորսնցուց: Մինաս, անօթի եմ, կը պոռար մէկէն այնպէս ախորժակով մը, կարծես թէ ամբողջ խորոված գառնուկ մը կ'ուզէր: Ինչ կ'ուզես, աղջիկս, կ'ըսէի, չուտելով, չուտելէն տունը բան մտած չունի: Կաթ, գաւաթ մը կաթ, կը պոռար իր թաւշային ձայնին մէջէն: Այդ ատեն արդէն շաա հիւանդ էր: Չարիքը սողոսկեր էր մինչեւ ուղեղը եւ անդամալոյծ ըրեր էր զինք: Յետոյ սկսաւ արշաւել, մէկը միւսին ետեւէն, երիկամը, լեարդը. թոքերը գրաւուած էին եւ այլեւս ես չէի կրնար գերազանցել իր թշուառութիւնը: Ահա բառը, ինչպէս ինքնիրենը եկաւ, ձեռքերը վերամբարձ, գերիի մը պէս, իր յանձնուած պահուն, ասիկա անոր համար որ պատահաբար ռազմավարական ոճով արտայայտուեցայ վերջին տողերուն մէջ: Արդ՝ ինչպէս կարելի է գերազանցել մէկը, որ մահուան դուռը հասեր է: Եւ ինչո՞ւ համար գերազանցել, ինչ ընելու համար: Ասաուած իմ, այս ինչ տանջանք է որ կը դնեմ գլխուս մէջ: Այս-

բան տկարացած, նիհարցած, սրունքներս գաւազաններու կը նմանին, իսկ աչքերս խոռոչներու եւ դեռ գոհ եմ որ այսպէս է, բայց այդպէս չէ իրականութեան մէջ: Այդպէս է իմ խելապատակիս մէջ, քանի որ ատով կը տանջեմ իմ մահամերձ կինս: Մինաս, կ'ըսէր անդադար, Մինաս, մանչուկս, եթէ դուն չուտես, ես ալ պիտի չուտեմ: Ողջ ատեն ուտելը պատիժ եղած է այսպէս: Յացը կը ծամէի, կը ծամէի, պսակները թափածի պէս ատամներս կերակուրը դուրս կը նետէին՝ ներսէն զայն ընդունող չըլլալուն համար: Այս ամենուն տակը գաղտնիք մը պահուած է, որ ահա դիմակը առաւ նետեց, ճիշդ այդ պահուս: Մտքիս մէջէն ելած չունի, զամուեր մնացեր է հոն, խոշոր վերքի մը պէս: Վերջին վայրկեանին լաւ մը ձեռքէս բռնէ, կը հասկնամ, ձեռքս սեղմէ քու ձեռքիդ մէջ, խոստացիր, ըսէ կ'երդնում: Գիտեմ, դիւրին բան չէ միս-միսակ անդիի աշխարհը երթալ: Ձեռքը երկու ձեռքերուս մէջ սեղմած էի երբ վերջին շունչը աւանդեց: Նոյն պահուն իսկ տեղէս ցատկեցի ու երկար, երկար ոռնացի մահացու վերք ստացած ամիւծի մը նման: Երկու հիւանդապահուհիները որ կը հսկէին ու կը խնամէին հիւանդը, սարսափած սենեակէն դուրս փախան: Այդ ոռնոցը դեռ այսօր ալ մէջս եւ մինչեւ վերջը մէջս պիտի մնայ:

Երբ կը խօսինք, երբ կը ճաշենք միասին, կը պտտինք կամ կը ճառենք գրականութենէն, ես ունկդիր եմ այդ աղիոգորմ աղմուկին, որ կը շարունակուի անընդհատ, հեծքի մը պէս որ հանգիստ չունի գիշեր ցերեկ, սրտին պէս որ շունչ առնելու ատեն չունի: Իրաւունք ունէին գթութեան երկու քոյրերը: Երբեմն այնպէս կը վախնամ այդ պարտաւորիչ ունկնդրութենէն, որ մտքիս մէջ գիծերու նման պարապուրթիւններ կը կազմուին. բարեբախտաբար անմիջապէս կ'անհետանան: Եթէ պատահի որ այդ գիծերէն մէկը յամառի դիմադրել այդ կեդրոնախոյս ուժին, արդէն իսկ կը կռահեմ թէ ինչ կրնայ ըլլալ իմ վիճակս: Ասկէ աւելի ինչ կրնայ ըլլալ: Ներսը թէ դուրսը նոյն տխրամած, նոյն լացութեամբ դեմքը: Տունն ալ յանկարծ կը փոփոխուի, դեմքս կը տրորուի, բերանս Օի ձեւ առած, ներսէն դուրս կը քշեմ տաժանելի օօժֆ մը եւ անմիջապէս արցունքը ուղիսօրէն կը հոսի ամեն մէկ նոր բան յիշած, մտաբերած ատենս: Տունը ատիկա չէ որ կը պակսի: Ամեն կողմ, ամեն անկիւն ինքն է, ո՛ր կ'ուզես դարձիր, ինքն է, ինքն է սա մտային պատկերը, որ գլխուս մէջէն չի հեռանար, չ'աւրուիր: Իր հետքերը, ո՛ր որ երթամ, ինծի կ'ընկերանան, զիս կը հալածեն: Հագար ու մէկ պատկերներ կը սլքտան մտքիս մէջ, անընդհատ, շարունակաբար, առանց դադարի: Անդամալոյծ՝ ծունկերուն եւ ափերուն վրայ կռթնած չորքոտանիի պէս կ'երթայ կու գայ մէկ սենեակէն միւսը, բան մը ընելու համար, ընելիք բան մը փնտռելով, որպէսզի իմ գործերս քիչ մը պակսին, չյոգնիմ: Յաճախ սոսկայի ձայն մը կը հանէ ողնոսկրներուն ցաւէն, երբ կը շեղի աջ կամ ձախ, քանի որ մարմինը միշտ ուղիղ պետք է պահէ, ցաւէն խուսափելու համար. բայց անկարելի է մտածել շարունակ նոյն բանին վրայ, միտքը կը քնանայ եւ առարկան կը թաղուի մոռացումի մէջ, եւ ահա ցաւատանջ սրտէ մը փրթած աղաղակ մը, որ իմ աղիքներս կը գալարէ ու կը մըռնչեմ ես ինծի, վիրաւոր անասունի մը պէս, իմ խեղճ կնիկս, իմ խեղճ կնիկս:

Հիմա որ կը գրեմ, գրելով տեսակ մը վերածնունդ կը զգամ երակներուս մէջ, բայց ատոր համար պէտք է որ շարունակ գրեմ, քնանալու հարց չկայ, ոչ ալ հանգիստի, ճիշդ այնպէս ինչպէս պատի մը ծակին առջեւ կատուն գլուխը թաթերուն վրայ դրած կը սպասէ մուկին, որ անկէ պիտի անցնի անպայման եթէ չ'ուզեր անօթի մեռնիլ: Պէտք է իլլել, յափշտակել պատկերները, գաղափարները, մղումները, միառումները կամ անոնց ուրուականները, որ կ'անցնին, կ'անցնին մաքիս մէջէն: Ետ գալ չկայ: Ետ գալ չկայ: Ցաւ մը կայ սրտիս մէջ, աարբեր, ուրիշ, անհանգստութիւնը մը որ ցաւի պէս կը զգամ, երբ անոնցմէ ոմանք կը փախցնեն: Ինչո՞ւ ւաւելի արագ չեմ շարժեր գրիչս: Ինչո՞ւ չեմ կրնար: Կատարեալ պատերազմական վիճակ մը ստեղծուած է իմ եւ անոնց միջեւ, առանց պատերազմի յայտարարութեան, մնայուն, տեւական վիճակ մը կռիւի եւ, ինչպէս պատերազմի ատեն, շարունակ կը կատարելագործեմ կռիւի գործիքներս, ւաւելի հեռու ռումբ արձակող հրետանիներս, ւաւելի արագ, հետեւաբար ւաւելի մեծ թուով փամփուշտ նետող զէնքերս, որպէսզի այդ բոլոր փախչող գրութենական նիւթերը գերի բռնեն, չսպաննեն, գրելը մեռցնել չէ, գրելը ապրիլ է, ապրեցնել է, ապրեցնել: Կը գրեմ Մոնիքը կրկին ապրեցնելու համար, ինչպէս գրեցի Նիքոլը ապրեցնելու համար: Հոգեկան եւ մարմնական այս պրկումներէն ազատուելու համար, ես այդպէս կը մաածեմ, յանկարծ կը թմրիմ, քունի մէջ կ'իյնամ եւ բոլոր այդ փախստականները կը վերադառնան: Բունիս մէջ ժամանակը դադրած է, յաղթուած է, ամբողջ աշխարհը մէկ կէտի վրայ ամփոփուած է: Տեղէս կը ցատկեմ, բոլոր այդ առարկաները գրիչիս ծայրովը ճամբարի մը մէջ կը հաւաքեմ, պահապաններ, վերակացուներ կը կարգեմ անոնց վրայ: Վստահութիւնը գիտցուածին չափ չըլլալուն համար է որ երբեմն-երբեմն կ'այցելեմ ճամբարը եւ անհնազանդները կը տանիմ այն վերջնական վայրը, որ գրութիւնս է:

*Հալածուածները – Գիրք Ութերորդ
Փարիզ*

(Թիւ 4, 2016)

ՀՐԱՅՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ

ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄ

“Everyone seems to think that trauma calls for archive... The archive is itself the very trauma it would resolve”¹.

Ռեբեկա Բոմբեյի կրկնակի այս նախադասությունը, որ կը գրու- նրւի հսկայածաւալ ու տպաւո- րիչ այն հատորին մէջ, որ կը կոչուի *Lost in the Archives*, յա- ճախ թիրըմբնուած է, կարծես ան ուզէր դատապարտել կու- տակելու մարմաջը (իրեր, հետ- քեր, ապացոյցներ, փաստա- թուղթեր), կարծես ըսէր՝ թէ շատ յիշելը վատ է յիշողութեան համար: Սակայն արիսիւր յիշո- ղութիւնը չէ: Ան աւելի ճիշդ հա- կառակն է, յիշողութեան ա- ղետն է: Այդպիսի աղետն մը վե- րապրող մը ինքն իրմէ ամբող- ջովին կտրուած է, որովհետեւ կտրուած է նաեւ այն դէպքէն, որ փնթ դարձուցած է վերապ- րող: Ահաւասիկ արիսիւին ա- ռաջին ու Էսկան եպրը: Որպէս հետեւանք, ամէն անգամ որ ո- ղոշակի արիսիւ մը ցուցադրու-

*թեան կը հանենք, վերապրողը կը յայտնուի (ու կ'անյայտանայ) պատկերին ետեւ որպէս այն, ինչ որ է. մեռեալ վկան*²:

Արիսիւը արուեստի ծիրէն ներս թափանցած էր արդէն Տեռիտայի *Mal d'archive*³ առաջ, վիտեօ արձանագ- րութեան մատչելի դառնալուն հետ ու որպէս հետեւանք, թէ՛ որպէս կառուցո- ղական ոճ՝ վաւերագրականի յարաչա- փերը հրմշտկող, թէ՛ որպէս զգուշա- ցում՝ Մեծ եղբոր ձեռք անցած CCTV⁴ի ամէնուրեք հսկող ներկայութեան մա- սին, անոր արձանագրելու ու արձա- նագրուածը պահելու կարողութեան ու կարողականութեան դէմ յանդիման⁵:

² Մարկ Նշանեան, *Which Archive for the Survivor* (Ո՞ր արիսիւր վերապրողին համար), SALT մշա- կութային հիմնարկի Ղալաթիոյ մասնաճիւղին (Իսթանպուլ) կազմակերպած “Empty Fields” (Դատարկ դաշտեր) անունը կրող ցուցահանդէ- սի ծիրէն ներս հեռակայ դրութեամբ վիտեօ դա- սախօսութիւն: Տե՛ս <https://saltonline.org/en/1400/talk-marc-nichanian-which-archive-for-the-survivor>.

³ Ժաք Տեռիտա, *Mal d'archive*, Edition Galilée, Փարիզ, 1995: Հատորին անգլերէն թարգմանու- թիւնը կը կոչուի *Archive Fever*: Հայերէն թարգ- մանութիւն չկայ: Հոս անոր պայմանականօրէն կու տանք *Արիսիւախտ* անունը:

⁴ CCTV կրճատումն է Closed-Circuit Televisionի, որ կը յատկանշուի իրար կապուած ու կեդրոնէ մը ղեկավարուող տեսախցիկներու ցանցով:

⁵ Ամէնուրեք հսկող *վիտեօ-քամերա*ներու մասին առաջին անդրադարձ կատարող արուեստագէ- տը եղած է Julia Scher: Անոր մասին ակնարկը տես այստեղ՝ <https://www.phaidon.com/agenda/art>

¹ «Ամէն մարդ կը խորհի որ traumaն (հոգեխցոյց) արիսիւ կը պահանջէ... արիսիւը ինքն է նոյն այն հոգեխցոյցը, զոր ան կը փորձէ լուծել», առնուած Rebecca Comayի *Lost in the Archives* (Արիսիւնե- րուն մէջ կորսուած) հատորի յառաջաբանէն, Alphabet City, Թորոնթօ, 2002:

2000ականներին ասդին սակայն, Տեռիտայի *Mal d'Archive*-ի հրատարակությունն էտք, արխիվի խնդրականացումն էր ինքնին, որ մուտք կը գործեր արուեստի ոլորտ⁶:

Մեծ գաղտնիք մը չէ նաեւ, որ վերջին յիսուն տարիներուն թանգարանները դադրած են տիրող մշակոյթներու գլուխ գործոցներ ցուցադրելու ծառայող տարածքներ ըլլալէ, որպէս հետեւանք՝ ցուցահանդէսներ համադրող խնամակալներու տուած որոշումներուն ու առած քայլերուն. խնամակալին (curatorial) արարքներ, որոնք հիմնովին խախտած են թանգարաններու նախկին այդ հանգամանքը:

Այս օրերուն, այդ տարածքները կը հանդիսանան շատ աւելի կենդանի ու կենսունակ վայրեր, ուր գործեր կու գան սկսի, զարգանալ, իրենք զիրենք հարցաքննել, շրջապատի հարցերուն միջամտել, զանոնք խնդրականացնել, լուծումներու տեղ նոր հարցեր յարու-

ցանել, եղածները բարդացնել, փոխանակ ծառայելու որպէս վայրեր, ուր կը կազմակերպուին լրումի հասած գլուխ գործոցներու ցուց/ա/հանդէսներ:

Իսկ Մեծ եղբայրներու առատութեան եւ այդ-ոչերու շտեմարաններու գերիշխանութեան այս օրերուն, արխիվի ու արխիվացման արժանանալու չափանիշները, բարեացակամ կամ չարագուշակ, անհեթեթ չափերու հասած են ու մոռնալը մոռցած, մէկ քայլով՝ յանձնըւած ենք Պոտոյարի նախատեսած «ecstasy of communication»-ին (հաղորդակցութեան յափշտակութիւնը)⁷:

Պէտք չէ մոռնալ, որ Տեռիտայի ապակառուցումը արուեստի աշխարհի հարցադրումներէն ներս մուտք գործած էր արդէն ութսունականներէն ըսկըսեալ, *Mal d'archive*-էն առաջ, յատկապէս կատարողական տեսագրութեան (performance video) ու յղացական արուեստի դաշտերէն ներս եւ հոն բեղուն հող գտած:

/articles/2020/january/30/do-you-know-about-juliascher-the-original-surveillance-artist/:

⁶ Տե՛ս *How the Art World Caught Archive Fever* (Արուեստի աշխարհը ինչպէ՛ս բռնուեցաւ արխիվախտով) գրութիւնը Artspace-ի կայքէջին վրայ, յունուար 22, 2014

https://www.artspace.com/magazine/art_101/art_market/the_art_worlds_love_affair_with_archives-51976: «Լուսանկարչութեան միջազգային կեդրոնին մէջ (International Center of Photography) Okwui Enwezor-ի 2008ին կազմակերպած գրգռիչ ցուցահանդէսը, որ կը կոչուէր «Արխիվախտ՝ փաստաթուղթի գործածութիւնը ժամանակակից արուեստի մէջ» (որուն վերնագիրը կը յղուէր ժաբ Տեռիտայի 1995ի զիրքին՝ *Արխիվախտ*), կը բերէր բազմաթիւ արուեստագետներու օրինակները, որոնք արխիվային նիւթեր կ'օգտագործեն իրենց գործերուն մէջ: Պատմական այս ցուցահանդէսին կը մասնակցէին Glenn Ligon-ի, Thomas Ruff-ի, Andy Warhol-ի, Stan Douglas-ի եւ Robert Morris-ի նման արուեստագետներ:

⁷ «Խայտառակութիւնը (obscenity) կը սկսի երբ այլեւս չկայ ո՛չ մէկ ներկայացում, ո՛չ մէկ բեմ, ո՛չ մէկ թատրոն, ո՛չ մէկ խաբկանք, երբ ամէն բան կը դառնայ անմիջականօրէն թափանցիկ, տեսանելի, տեղեկութեան ու հաղորդակցութեան հոմ ու անողոքելի լոյսին ենթարկուած: Կը դադրինք մասնակից ըլլալէ օտարումի տրամին, այլ կը զրտնըւինք հաղորդակցութեան յափշտակութեան մէջ (we no longer partake of the drama of alienation, but are in the ecstasy of communication)», Jean Baudrillard, “The Ecstasy of Communication” փորձագրութենէն, առաջին անգամ անգլերէնով լոյս տեսած 1983ին Hal Foster-ի խմբագրած դարադարձիկ հատորին մէջ, որ կը կոչուի *The Anti-Aesthetic, Essays on Postmodern Culture* (Հակագեղագիտականը՝ Փորձագրութիւններ յետ-արդիական մշակոյթի շուրջ), էջ 130: Փորձագրութիւնը 1987ին հաւաքուած է *L'autre par lui-même* խորագրով հատորին մէջ ֆրանսերէն, Editions Galilée, Փարիզ: Հատորը անգլերէնով լոյս տեսած է *Semiotext(e)*-ի մօտ տարի մը ետք, Լուս Անճելոս, *The Ecstasy of Communication* խորագրով:

(Ըրածս հոս չափազանց անբաւարար յետնաշխարհի մը ուրուագծել եղաւ, անգամ մը եւս դիտել տալու համար, որ առհասարակ ընդունուած եւ ամենուրեք չափանիշ դարձած այդ մօտեցումները հայկական Սփիւռքի ներքին գրոյցներուն մաս չեն կազմեր, հակառակ անոր բնակչութեան ըստւար մասին Արեւմուտքի արուեստի եւ մտաւորական կեդրոնները փոխադրուած ըլլալուն: Մինչ Արեւմուտքի մէջ, արուեստի մօտեցումներուն մէջ յաճախ տիրական են մարքսիստ՝ ձախակողմեանի միտող կողմնորոշումներ, հայկականին մէջ կը յամենան ու գերիշխող կը մնան նախադրամատիրական չափանիշներ: Հանրապետութիւնը իր կարգին ինքն իր հարցերը ունի, ուր կը կարծեմ որ Սովետի գրաքննութենէն ազատագրուիլն ու ազատ շուկան մէկը միւսին հետ կը շփոթուին եւ տակաւին չեն գիտեր ի՞նչ ընել ձեռք ձգուած ազատութեան հետ):

Ուրկէ՞ մուտք գործել արուեստի այս աշխարհէն ներս եւ ինչ ընել հոն:

00:13:40 – 00:13:58⁸

«... հրաւիրուած ենք կատարելու անդրադարձ մը արխիւին վրայ՝ եզակի դէպքի մը առիթով... արխիւի մը թանգարաւ»

⁸ Վայրկեանները կը յղուին Մարկ Նշանեանի դասախօսութեան տեսագրութեան՝ *Marc Nishanian: Which archive for the survivor?* https://www.youtube.com/watch?v=h5LVUJ9W_DA&t=2s:

նային ցուցադրութիւնը: Արխիւը մտած է թանգարան»:

Ներածականի պարբերութեան նըման, այս մէջբերումն ալ կու գայ Մարկ Նշանեանէն, որ 2016ին հրաւիրուած էր Պոլսոյ SALT հիմնարկին կողմէ «Empty Fields»՝ («Դատարկ դաշտեր»)՝⁹

⁹ Յուցահանդէսի գրքոյկը կը բացատրէ, թէ 2015ին, երբ սկսեր են American Board of Commissioners for Foreign Missionsի (ABCFM) ընդարձակ արխիւներու դասակարգումի աշխատանքները, ինչ կը վերաբերի այդ կազմակերպութեան Օսմանեան կայսրութենէն ներս ծաւալած գործունէութեան, յարաբերութիւններուն, եւայլն, զանազան փաստաթուղթերու մէջ ի յայտ կու գան տեղեկութեան բաց ձգուած, պարսպ մնացած տողեր կամ ստորաբաժիններ, տեղեկադաշտեր, որոնք հիմնականապէս կը վերաբերին արեւմտահայութեան ու մասամբ նաեւ յունախօս համայնքներու, որոնք եղած էին կայսրութեան երկայնքին վրայ այդ կազմակերպութեան մատուցած ծառայութիւններու հիմնական նրպաստընկալները: “Certain archival absences bear the traces of Aghed [The Catastrophe], 1915. («Արխիւային որոշ բացթողումներ կը կրեն Աղէտի՝ 1915ի հետքերը»), կը նշէ գրքոյկը (էջ 4) ու ապա՝ “The exhibition takes the archive’s empty fields as its structuring guidelines and suggests that they stand for markers of ontological and epistemological areas of study left blank by the effects of the catastrophe” («Յուցահանդէսը արխիւին դատարկ ձգուած տեղեկադաշտերը կ’որդեգրէ որպէս կառուցային ուղեւիշներ ու կ’առաջարկէ, որ անոնք կը գործեն որպէս Էաբանական եւ իմացաբանական ոսումնասիրութեան դաշտեր յատկանշող նշիչներ, որոնք խոսկան մընացած են Աղէտի հետեւանքով»): Կը շարունակենք գրքոյկի մուտքի բաժնէն բաղուածքը. «Դատարկ դաշտերը առաջին ցուցահանդէսն է որ կը հետաքրքրուի ABCFMի, Օսմանեան կայսրութեան ու Թուրքիոյ մէջ բողոքական միսիոնարական գործունէութեան արխիւներով: Ծրագիրը իրագործուած է գործակցութեամբ SALTի, որ կ’իրականացնէ արխիւը ցուցակագրելու ու թուայնացնելու աշխատանքը, եւ Թուրքիոյ մէջ ամերիկեան հետազոտական հիմնարկին (American Research Institute in Turkey (ARIT)), որ կը հանդիսանայ արխիւին խնամատարը: 2014ին SALTը Մարիաննա Յովհաննիսեանին կը դիմէր որպէսզի ան օգնէ բազմալեզու այս արխիւի դա-

ցուցահանդեսին փիլիսոփայական իր միջամտությունը բերելու, գործը ամբողջացնելու հոլովոյթին մաս կազմելու համար:

Վերլուծումը պիտի սկսի ուրեմն ցուցահանդեսի նախադրեալն, որովհետև հոն թանգարան-խնամակալարուեստ-արխիվ տարածքին վրայ խանգարում մը կը պատահի: Եզակի դեպք մը՝ ինչպես կ'ըսէ Մարկ.

«Ի՞նչ կը պատահի երբ արխիվը կը մտնէ թանգարան: Կը չափուի՞ արուեստին: Իր կարգին կը վերածուի արուեստի: Անկարելի բան: Ուրեմն ի՞նչ է կատարուածը: Արխիվի եւ արուեստի միջեւ սահմանն է արդեօք, որ կը դառնայ պղտոր: Բայց չէինք գիտեր իսկ, թէ երկուքին միջեւ սահման մը կար, այսինքն հասարակաց գիծ մը, թեկուզ բաժանող ու բաշխող, թեկուզ սահմանող ու սահմանադրող¹⁰:

Ինչ է այդ խանգարումը: Վերել յիշած արուեստի շարժումներուս ու ոճերուս մէջ¹¹ արուեստագետն է հեղինակը, հետեւաբար արուեստն է որպէս արխիվ թանգարան մտնողը: Փրոֆ. Յովհաննէս Մանիսաճեան սակայն արուեստագետ չէր: Հայ-գերման ծագումով այս գիտնականը օրին որոշ

սակարգումի գործին, որմէ ետք անոր կը յանձնարարէր կազմակերպել ցուցահանդես մը, որ խորհրդածէր տրամադրութեան տակ գտնուող պարունակութեան ժամանակակից միջամտութեան վրայ (that reflects on the contemporary agency of the available content)»: Գրքոյկը տրամադրելի է https://saltonline.org/media/files/empty-fields_exhibition-pamphlet-1.pdf յղումով:

¹⁰ Մարկ Նշանեան՝ *Պատկեր պատում պատմութիւն, Հատոր 2. Մրցակցութիւններ*, Երեւան, Յովհաննիսեան Ինստիտուտ, 2016, էջ 21:

¹¹ Անուններուն համար տե՛ս ծանօթ. թիւ 6:

հռչակ ունեցած է որպէս բուսաբան ու պաշտօնավարած Մարգուանի Ամերիկեան գոլէճը¹²: Դահիճի ճիրաններէն հագիւ ճողոպրած՝ վերադարձեր էր գոլէճի ամայի շէնքը¹³ ու անոր բոյսերու հաւաքածոյին գրացուցակը պատրաստեր: Այս նախաձեռնութիւնը կը թուի իրականութենէն կտրուած՝ գրեթէ խելագար նախաձեռնութիւն մը, արխիվագրողի մեքենայացած աշխատանք, առանց որեւէ ստեղծագործական նախադրեալի:

SALTի սրահներուն մէջ ցուցադրուածը խնամակալին՝ Մարիաննա Յովհաննիսեանի համադրական աշխատանքին արդիւնքն է: Նշանեան կը մէջբերէ Յովհաննիսեանի հետեւեալ տողը որպէս գիւտ, զայն վերցնելով ցուցահանդեսի գրքոյկի 5րդ գլուխէն, էջ 33. «Այսպէս, Փրոֆ. Մանիսաճեանի խնամակալական այս վերջին արարքը պիտի դառնար իր առաջին արխիվային արարքը»: Այո, սակայն արխիվին դեմ յանդիման կը գտնուինք թանգարանին մէջ:

Պահ մը կայ ուրեմն, ճշգրիտ պահ մը, որմէ ետք արխիվը կը դառնայ արուեստ:

Այս է Մարկին բացած ծրարը:

¹² Anatolia Collegeը Մարգուան հաստատուած էր ամերիկացի միսիոնարներու կողմէ, 1886ին: Ուսումնական ծրագիրը կը բաղկանար չորս տարուան գոլէճի ծրագիրէ եւ ուսանողութիւն ու անձնակազմ բաղկացած էին մեծ մասամբ հայերէ: Անոր ամենէն նշանաւոր ուսանողը եղած է Միսաք Մեծարենց: 1915ին կը փակուի, սակայն շէնքը կը խնայուի: 1924ին կը վերահաստատուի Յունաստան: Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Anatolia_College_in_Merzifon:

¹³ Միացեալ Նահանգներու պատերազմ մտնելէ ետք, հաստատութեան ամերիկացի խնամակալները չէին կրնար շարունակել մնալ հոն:

00:36:07 – 00:38:10

Հասկցանք որ վճռական պահը այն մեկն էր, երբ Մանիսաճեան յաճախանք է հալածուած սելեռուսով մը լծուեր էր ցուցակ պատրաստելու գործին հաւաքածոյի մը համար, որ երբեք այլեւս պիտի չցուցադրուէր: Հասկցանք որ վճռականը այդ վճռական պահուն մէջ ոչ թէ անոր պարունակութիւնն էր, այլ արարքը, արարք մը որ պիտի փոխէր ինքնիր արարքի բնոյթը, կամ փոփոխուող բնոյթը արարքին ինքնակալականէն դէպի արիստայիսի: Ճիշդ այդ արարքի բնոյթի փոփոխութիւնն է որ ցուցադրուած էր ձեր ցուցարահի պատերուն վրան շընորհիւ Մարիաննա Յովհաննիսեանի կատարած ինքնակալական աշխատանքին ու SALTի կողմէ հիւրընկալումին: Ճիշդ այդ արարքի բնոյթի փոփոխութիւնն է որ կը հրաձգուի հանդիսատեսի նայուածքին: Արիստայիսի է որ ունինք այստեղ իր յայտնութեան, իր երեւումի պահուն: Պատերուն վրայ մեր տեսածը ուրեմն բնագիտութեան ցուցակ մը չէ, այլ ցուցակը արդէն իսկ վերածուած արիստայի: Արիստայի վերածուած էր գրուելու իսկ պահուն՝ շարադրումի, կապմատումնային պահուն: Այնպէս որ արիստայիսի բնոյթը, պատերուն վրայ ցուցադրուածը չի գար այդ ցուցակին Ame-

rican Board of Commissioners for Foreign Missionsի արիստայիսի մէջ հարիւր տարի ետք գտնուած ըլլալու հանգամանքէն, պատահած երկու տարի առաջ: Արիստայիսի բնոյթը հոն էր արդէն ի սկզբանէ: Արիստայիսի-ձած-ցուցակը ինքն իր մէջ արձանագրած էր Աղետը այն պահէն իսկ երբ կը յղացուէր ու կը սկզբնաւորուէր: Ասիկա անխուսափելի պայմանն էր հասկընալու համար այն, ինչ կոչեցի ցուցահանդէսին եկակի դէպքը: Արիստայիսի իբրեւ այդ է որ մուտք կը գործէր թանգարան, ինչ որ կը նշանակէ թէ ան ինքն իրեն համար առաջացուցած էր տարածութեան մէջ տեսանելիութիւն մը, ինքզինք հրաձգուցած ժամանակակից տեսողութեան եւ այդ ընելով պատճառ դարձած որ Աղետը պատկերին ետեւ փալիլի ու փայլատակէ:

Նշանեան եզակի այս դէպքին գուգահեռը կը տեսնէ Յակոբ Օշականի Համապատկերով կատարածին մէջ, ուր 10 հատորի 5000 էջերուն վրայ ան գրի կ'առնէր արեւմտահայ գրականութեան 1915ին կանգ առած ողիսականի պատմութիւնը, կը ցուցակագրէր ու մաղէ կ'անցընէր անոր բոլոր գրողներն ու գործերը, եւ անոր կու տար Համապատկեր արեւմտահայ գրականութեան խորագիրը: Այսինքն կը կատարէր նոյն տեսակի արարք մը ինչպէս Մանիսաճեան ու պատկերը կը զետեղէր խորագրին իսկ մէջ. արիստայիսի

աշխատանք մը, զոր մեզի ցոյց կ'ուզէ տալ որպէս համ/ա/պատկեր:

00:50:37 – 00:51:14

Եզակի կը դառնայ միայն եթէ կարենանք արխիւային պատկերներուն մէջ, բոլոր արխիւային պատկերներուն, պատկեր-դարձած-արխիւին մէջ տեսնել ներկայութիւնն ու բացակայութիւնը վերապրողին, հալածող պատկերը վերապրողին: Եզակի կը դառնայ եթէ ամէն անգամ որ պատկերին մէջէն, լուսանկարչական պատկերին ետին ու անդին կարենանք վերապրիլ այն պահը, երբ խնամակալը կը վերածուի արխիւացնողի: Այս էր դասախօսութիւնս:

Ուրեմն ինչ կը թելադրէ Նշանեանի մատնանշած եզակիութիւնը եւ ինչո՞ւ 50 վայրկեան ետք, ներկայացման վերջաւորութեան, զայն կը շրջէ գլխիվայր:

Թելադրութիւնը յստակ է: Տուցահանդէսը համադրող խնամակալին գիտող, որ կ'ըսէր թէ Մանիսաճեանի վերջին խնամակալական արարքը պիտի դառնար իր առաջին արխիւային արարքը, ամբողջանալու համար պէտք ունի տեսաբանին, փիլիսոփային բերելիք միջամտութեան, պէտք ունի անոր բերելիք մտածումի բովէն անցնելու: Արխիւը կայ առաջին պահէն: Սակայն թանգարան մուտքն է, որ որպէս եզակի արարք արխիւը կը վերածէ հալածող պատկերին, ուր կու գայ յայտնուիլ

ու անյայտանալ միաժամանակ վերապրողը: Ասոր կ'ակնարկէ Նշանեան, երբ կ'ըսէ՝ այս էր դասախօսութիւնս: Արխիւը գլխիվայր կը շրջուի դառնալու համար պատկեր եւ ցուցադրուելու որպէս այդ՝ թանգարանի պատերուն վերայ: Այնպէս որ ցուցահանդէսի ծիրէն ներս կազմակերպուած դասախօսութիւնն ու հրաւերը մաս կը կազմեն ցուցահանդէսին որպէս կենդանի գործ, անոր մտածումի, ծաւալման ու ամբողջացման արարումին: Առանց այդ միջամտութեան, արխիւի թանգարան մուտքի լրիւ տարողութիւնը երեւան պիտի չգար: Նշանեան հոն ցուցադրուածը կը վերբերէ որպէս պատկեր, ուր վերապրողը կու գայ յայտնուիլ ու անյայտանալ: Ան է որ կը հսկէ թանգարանի պատերէն:

Արուեստը պէտք ունի այդ միջամտութեան, որպէսզի ինք իր կարգին մտածէ:

Աւելցնենք որ այսօր արուեստի ուսուցման առաջնակարգ ծրագիրները նոյնքան եւ աւելի պահեր կը տրամադրեն ուսանողներու գործերուն ինքն/ա/վերլուծման եւ ինքն/ա/քննարկման՝ որքան աշխատանոցայինին:

00:11:26 – 00:12:12

Ո՞ր արխիւը վերապրողին համար: Այո, ո՞ր արխիւը: Վկայութիւններու հաւաքածոյ մը զուցէ ամերիկեան համալսարանի մը դարաններուն վրայ, լուսանկարներու հաւաքածոյ մը, դիւանագիտական արխիւներու մէջ մեզի համար պահ դրուած

փաստաթուղթեր, կան դահիճներու եւ վկաներու յուշերը, որոնք կը սպասեն պատմաբանի աշխատանքին:

Այո, ընդ արխիւը վերապրողին համար, երբ արխիւացման կարողականութիւնն է որ զիս կը պրկէ ենթակայ ըլլալու կարողութենէն: Եթէ անոր պատճառով դատապարտուած եմ վերապրող ըլլալու առ յաւետ:

Trauma-ն հայերէնով թարգմանեցինք որպէս հոգեխոց, սակայն այդ եզրը անբաւարար է: Trauma-ն յստակ դէպքի մը պահուն՝ թուականին, վարին, պատահարին կը յղուի, ենթակայի անցեալին մէջ հոգին խոցող դէպքի մը կամ դէպքերու, ճակատագրական ցընցումային այն պահուն կամ պահերուն, որոնք դէպքի հորիզոն մը կը կազմեն եւ որ ապրողը կը դարձնեն վերապրող, ան որ պատկերին ետին պիտի յայտնուի ու անյայտանայ, ինչպէս կ'ըսէ Մարկ: Բայց ո՞ր պատկերին ետին եւ ճիշդ ո՞վ է հոնկէ նայողը, նայուածքը որո՞ւն վրայ կը սեւեռէ, մե՞ր վրայ: Գիշդ ո՞ր ժամանակէն կը նայի երբ ներկայի ու անցեալի պահն ու պատահարի ժամանակային տարածքները կորսնցուցած են այլեւս իրենց չափորոշիչ եզրերը: Ի՞նչ կը տեսնէ, ո՞վ է իր տեսած մենքը, իսկ մեր տեսածը իր ալ տեսանկիւնէն տեսնուածն է:

Հոս, դասախօսութեան այս պահուն, Նշանեան փակագիծ կը բանայ, բոլորովին անձնական փակագիծ մը ու կը խօսի մօր մասին, իր մօր, անոր վերապրող դառնալուն, եւ կու տայ զինք

ցկեանս վերապրող դարձուցած դէպքին պատմութիւնը: Խօսքը trauma-ին մասին է, որմէ ետք կրկին հարց պիտի տայ՝ ուրեմն ընդ արխիւը վերապրողին համար, ինչ որ հոս հարցում մը չէ այլեւս, այլ աղաղակ մը:

Վերապրողը, որ շունչ շունչի ետեւէ կը քաշէ բայց չի շնչեր, ինքն իրեն դուրսէն կը նայի, սակայն չի ճանչնար ինքզինք: Արխիւը ճիշդ ինչ լուծում կըրնայ բերել անոր, ինչ դարման:

Առաջին անգամը չէ, որ Մարկ այս տարագումները կը մտածէ գրականութեան ու կերպարուեստի բնաբաններուն ընդմէջէն: Հոս, սակայն, հայուն եւ հայերէնին փորձառութենէն եկածն է, որ կը տեղադրէ օտարի աչքին առջեւ արխիւին արուեստի վերածուելու պահուն իսկ: Հարցերը անոնց առջեւ է, որ կը դրուին: Հոնկէ կը հարցաքննէ ան օտարը:

Կ'ուղղուին նաեւ մեզի, որպէս անհատ ու հաւաքականութիւն որ չի կարդար այլեւս կամ չէ կարդացած երբեք Յակոբ Օշական, ան որ կանուխէն սկըսած էր մտածումի այդ աշխատանքին, հարցերը բերած արուեստի բնագաւառ: Այս է պատճառը, որ Աղէտը գալիքին յատուկ ծածկանունն է:

«Իսկ հիմա, ըսեմ որ *Աղէտը* գաղտնի բառ մըն է դէպքին համար, ի շարս այլ պատճառներու անոր համար նաեւ, որ Յակոբ Օշականի գործը երբեք կարդացուած չէ: Արդե՞ք հասցէագրուած էր ան հայ ընթերցողին: Հասցէագրուած էր գուցէ համայն աշխարհին, քաղաքակիրթ մարդկութեամբ: Չեմ գիտեր: «Երբեք կարդացուած չէ»ն հոս ըսել կ'ուզէ թէ երբեք արժեւորուած չէ որպէս Ա-

դէտին մեզի համար վերածուիլը ընթերցումի հորիզոնի, մեզի որպէս հայեր, որպէս բարեացակամ մարդիկ»¹⁴:

* * *

Օտարը եզակի չէ: Հայն է, որ իր երեւակայականի եզակիէն կը ներկայանայ յոգնակի օտարին: Ձեռնարկը տեղի կ'ունենայ Պոլսոյ պատմական Պանք Օթոմանի շէքի պատերէն ներս, ուր եկած է հաստատուիլ SALT հիմնարկի Ղալաթոյ մասնաճիւղը: Հոն է, որ Մանիսաճեանի արխիւը կը դառնայ արւեստ, Մարիաննա Յովհաննիսեանի խնամակալութեան ներքոյ եւ հոն է, ուր կը հնչէ Մարկի դասախօսութիւնը (թէկուզէ հեռակայ ձեռով՝ *սքայի*ի միջամտութեամբ): Ուրեմն ինչպէս նայիլ թուրքին: Ո՞վ տեսնել հոն: Լոկ օտար մը այլ օտարներու շարքին, կամ «եզակիացնող»ը ինքնին:

Վերապրող, վկայութիւն, վկայ, վկաներ որոնք անկարող են վկայելու, արխիւ, յուշ, յիշողութիւն: Յիշողութեան աղէտը: Վերապրողին արխիւը: Արխիւացումի գործողութեան բերած խաբուսիկ խաբկանքը: Այսինքն բոլոր այն հարցերը, որոնք վերջերս մանաւանդ, հարիւրամեակին շուրջ պիտի դառնային տագնապահար հայ արուեստին ու արուեստագէտին մտասելեռումները, բայց ոչ անոնց մտատանջութիւնները: Խօսքս անշուշտ կերպարւեստի մասին է: Գրականութիւնը զանց կ'ամենեմ, քանի որ հոն կան յար-

գելի բացառութիւններ: Այդ գրականութիւնը սակայն անծանօթ կը մնայ մանաւանդ Արեւմուտք հաստատուած ժամանակակից հայ արուեստագէտին, անոր որ հազիւ հայերէն կը խօսի կամ նոյնիսկ եթէ գիտէ կարդայ, ծանօթ չէ, լսած չէ, կարդացած չէ նիւթին շուրջ հայերէնով գրուածը եւ ուրեմն անկարող է զայն ներառնելու ու մտցնելու փնտռութի իր սեփական բովէն ներս: Գիրը սահման չ'անցնիր ու հոնկէ եկածը արուեստի կերպերուն հետ շփման մէջ չի դրուիր: Դժբախտաբար հակառակն ալ ճիշդ է. արուեստի կերպերէն դէպի գրականութիւն անցքն ալ խրքւած է: Երկուստեք այդ նաւարկութեան մէջ մէկ բացառութիւն կայ միայն եւ կը կոչուի Մարկ Նշանեան:

* * *

ՓՈՒՍԱԼ ԵՉՐԱԿԱՑՈՒԹԵԱԼ

00:50:37 – 00:51:14

Եզակի կը դառնայ միայն եթէ կարենանք արխիւային պատկերներուն մէջ տեսնել, բոլոր արխիւային պատկերներուն, պատկեր-դարձած-արխիւին մէջ տեսնել ներկայութիւնն ու բացակայութիւնը վերապրողին, հալածող պատկերը վերապրողին: Եզակի կը դառնայ եթէ ամէն անգամ որ պատկերին մէջէն, լուսանկարչական պատկերին ետին ու անդին կարենանք վերապրիլ այն պահը, երբ խնամակալը կը վերածուի արխիւացնողի: Այս էր դասախօսութիւնս:

¹⁴ Չրոյց Դաւիթ Գազանճեանի եւ Մարկ Նշանեանի միջեւ՝ «Յեղասպանութեան եւ Աղէտի միջեւ» (“Between Genocide and Catastrophe”), David Kazanjianի եւ David L. Engի խմբագրած *Loss* հատորէն, UC Press, 2003, էջ 128:

Պատկերով, առանց նկարի: Բան մը որ միայն կերպարուեստը կրնայ ընել:

* * *

Թանգարանի պատերէն ներս իրեր պահելու խնդիրներուն մասին արուեստագետ Քրիստիան Պոլթանքսի կը գրէ.

Մոռացութիւնը կասեցնելը, մարդոց եւ իրերու անհետացումին արգելք հանդիսանալը ինծի կը թուէին ազնիւ նպատակներ ըլլայ, մինչեւ որ արագ անդրադարձայ, թէ այս բաղձանքը դատապարտուած էր ձախողելու, որովհետեւ անմիջապէս որ կը փորձենք բան մը պահպանել, զայն կը քարացնենք: Իրերը կրնանք պահպանել միայն կեանքի ընթացքը կասեցնելով: Եթէ ակնոցըս ցուցափեղկի մը ետեւ դնեն, երբեք չի կտրուիր, բայց արդեօք ան կը շարունակուի նկատուիլ ակնոց...: Մէյ մը որ ակնոցը մտնէ թանգարանի հաւաքածոյի մը մէջ, կը մոռնայ իր պաշտօնը, կը դառնայ լոկ ակնոցի պատկեր: Ցուցափեղկին ետեւ տեղադրուած ակնոցս կորսնցուցած պիտի ըլլայ գոյութեան իր պատճառը, իր ինքնութիւնը, իր պատմութիւնը¹⁵:

¹⁵ Kynaston McShine ed., *The Museum as Muse (Թանգարանը որպէս մուսա)*, ցուցահանդէսի հատոր, MOMA, Նիւ Եորք, 1999, էջ.91: Յղումը կու գայ Sue Breakellի “Perspectives: Negotiating the Archive” գրութենէն, *Tate Papers* առցանց պարբերականին մէջ, թիւ 9, Գարուն 2009՝ <https://www.tate.org.uk/research/publications/tate-papers/09/perspectives-negotiating-the-archive>:

Հիմա որ Յովհաննէս Մանիսաճեանի արխիւը այլեւս արուեստ է, կ'ենթադրենք որ այս անգամ որպէս այդ է որ անոր մասնիկները ետ արխիւ պիտի դառնան, մէյ մը որ ցուցահանդէսը հասնի իր աւարտին ու այլ փաստագրութիւններու եւ լուսանկարային վաւերագրերու հետ միատեղ պահ դրուին արուեստի գործերու պահպանման արխիւային օրինաչափութիւնները յարգող պայմաններու տակ՝ *ապիտ* ազուրկ տուփերու մէջ պարուրուած ու չափաւոր կլիմայ պահպանող սարքերով օժտուած շտեմարաններու մէջ պաշտպանուած, Պանք Օթոմանի նախկին համալիրին մէկ անկիւնը:

* * *

Մէկ բառով սակայն՝ ինչ որ ցոյց կը տրուի այս էջերուն մէջ Աղէտին գործիականացումն է, *l'instrumentalisation de la catastrophe*: Գործիականացումը կը կատարուի «ցեղասպանութեան» անունով, *sous le nom du «génocide»*: Աղէտի գործիականացումին վերայ կը բանի իշխանութիւն մը: Ասոնք են գլխաւոր երեք կէտերը: Երկրորդ կէտը են աւելցուցած են¹⁶:

Չունենալ կը նշանակէ որ արուեստը այդ գործիացականացման մեղսակից է: Կը նշանակէ օտարին ներկայանալ յանպատրաստից կերպով, անոր որ այդ տեսակ գործիականացումին հոտը քանի մը մղոն անդիէն կ'առնէ ու

¹⁶ Մարկ Նշանեան, «Արդիական հարցեր, բացայայտ հարցումներ», *Յառաջ*, հոկտեմբեր 11էն նոյեմբեր 7, 1986, Փարիզ:

գիտե, շատոնց մտածած է ատոր մասին ու երեւոյթը մերժած: Ասիկա ի գօրու է հաստատութիւններու, ինչպէս նաեւ արուեստաբաններու եւ տեսաբաններու պարագային: Եւ վնասը երկուստեք է. թէ՛ ներքին գետնի վրայ մանկականացում, infantilization, թէ՛ արտաքին գետնի վրայ խեղճութիւն, ըլլայ Սփիւռքի տարածքին վրայ կամ իր սահմանակցին՝ Յանրապետութեան (Սփիւռքի սահմանը Յայաստանը չէ՞ միթէ):

* * *

Առաջին անգամ Մարկի հետ դեմ յանդիման գտնուած եմ 1994ին, *մոնթաժի* պաստառիս միջնորդութեամբ, Մոնթրէալ արձանագրուած մօտ մէկ ու կէս ժամուան տեսերիզի հուն նիւթը խըմբագրելու ընթացքին: Վահէ Օշականի յիսնամեայ յոբելեանին առիթով ապըսպըրուած վաւերագրականին վրայ կ'աշխատէի¹⁷: Այն ատեն ծանօթ չէր ինք ու չէի գիտեր ինչ ակնկալել: Տասը

¹⁷ Հրայր Անմահունի, *Վահէ Օշական՝ Միջնարար (Vahé Oshagan: Between Acts)*, DVD, Համագային/Կիւլայէնկեան, 2018: Առաջին տարբերակը ցուցադրուած էր 1995ին, Լոս Անճելըս, Վ. Օշականի գրական գործունէութեան յիսնամեակի յոբելեանին: Անկէ կը պակսէր Գրիգոր Պըլտեանի բաժինը, գոր աւելցուցի 2006ին: 2016ին աւելցուցի անգլերէն ենթախորագիրները եւ DVDն հրապարակուեցաւ 2018ին, ցուցադրուելով զանազան քաղաքներու մէջ:

տարի կ'ըլլար որ Լիբանանը ձգած էինք ու ապաստան գտած Սան Ֆրանսիսքօ եւ հոն, չնաշխարհիկ այդ քաղաքին մէջ գտած էինք կրկին սփիւռքեան տժգոյն մեր անկիւնը, եւ ես համոզուած էի որ հայերէնը այլեւս ըսելիք չունէր, աշխարհին հետ կապը կտրուած էր: Մահաբունի մէջ է, կ'ըսէի բարեկամներուս. մէկը պէտք է այլեւս *ֆիշը* քաշէ:

Եւ ահա դեմս ունէի ոչ միայն Վահէի գործերուն արդիական վերլուծում մը, այնպիսի մօտեցումներով, որոնք մինչ այդ միայն անգլերէնով վարժուած էի լսելու, առաւել, նոյնքան եւ աւելի կարելոր, վերլուծող բոլորովին նոր ու թարմ հայերէն մը: Բերանս բաց ինկած էի մէջը: Չարաչար սխալած էի ուրեմն:

Ատկէ ի վեր ոչ մէկ գործ ըրած եմ, վերոյիշեալ նիւթին հետ կապ ունեցող կամ անկախ, որ Մարկին ու իր աշխարհին հետ ուղղակի կամ անուղղակի խօսակցութիւն մը չէ եղած, ըլլայ ասիկա իր գիտութեամբ կամ առանց անոր:

Աշխարհ մը, որուն մէջ երբ իյնաս Է-ուրթեանդ մինչեւ խորերը կը ցնցէ, համոզումներդ տեղահան կ'ընէ եւ եթէ օր մը կարենաս մէջէն ելլել, երբեք նոյնը չես կրնար մնալ:

Նաեւ վերադարձած էի հայերէնին:

(Թիւ 2-3, 2021)

ԴԱԼԱՐ ՇԱՀԻՆԵԱՆ

ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ԲԱՂՁԱՆՔ ՍՓԻՒՌՔԻ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

*Մ*արկ Նշանեանի վերջին մտորումներուն մէջ կեդրոնական տեղ կը գրաւէ մահադիմակը: Այս փոխաբերական յղացքը կը դառնայ կիզակէտ, ուր Նշանեանի տասնեակ տարիներ շարունակ հետապնդած նիւթերը՝ լեզու-վկայ-վկայագրութիւն, ժամանակ-պատկեր-պատում միասնաբար կը կուտակուին ու միաժամանակ կը պարզուին:

Վերջերս, դասախօսական գրոյցներէն մէկուն ընթացքին, ան կ'ակնարկէր տեսողական արուեստի մահադի-

լայ ինքնիր մահադիմակը), խնամակալի միջնորդութեամբ:

Հայկական սփիւռքի մէջ դժուար է անջատել արուեստագէտը վերապրողէն եւ մտածել արուեստի մասին՝ վկայագրութեան սահմանէն դուրս: Եթէ հասկնանք վկայութիւնը իբր ողբալու ժխտում, սփիւռքի արուեստը տեսանելիութեան բաղձանք ունի՞, խնամակալ ունի՞, հետեւաբար, ինչպէ՞ս կրնայ սգալ աղէտը: Տեսանելիութեան անկարելիութիւնն ու խնամակալի բացակայութիւնը պարզելով արդեօք: Եւ աւելի անդին, նման մօտեցում կրնա՞նք մշակել սփիւռքի գրականութեան մասին: Գրականութեան պարագային ի՞նչն է, որ կը համապատասխանէ տեսանելիութեան բաղձանքին կամ արխիւանալու ձգտումին: Իսկ ինչպէ՞ս կարելի է ընդլայնել արխիւանալու քաղաքականութիւնը, երբ կը խօսինք ցրուածութեան մէջ արտադրուած սփիւռքի գրականութեան մը մասին, գրուած՝ վերապրող լեզուով:

Իբր սկզբունք առնենք այն առաջադրութիւնը, թէ գրականութիւնը, եւ մանաւանդ արձակը, կրնայ խօսեցնել աղէտը: Բայց ի՞նչ կը նշանակէ խօսեցը-

Բայց ի՞նչ կը նշանակէ խօսեցնել աղէտը, երբ դէպք մը աղէտալի կը դառնայ հոն, ուր վերապրողին համար փորձառութիւնը կը դարձնէ անխօսելի:

մակ արտադրելու յատկանիշին՝ ըսելով, «Արուեստի գործին մէջ արձանագրուած է սպասումը, սպասումը ինքնիր մէջ է: Արուեստը կը սպասէ խնամակալին, որպէսզի մտնէ թանգարան»: Այսինքն՝ արդի արուեստի պարագային, պատկերը՝ հասնելու համար տեսանելիութեան, պէտք է դառնայ արխիւ (ը-

նել աղետը, երբ դեպք մը աղետալի կը դառնայ հոն, ուր վերապրողին համար փորձառութիւնը կը դարձնէ անխօսելի: Այսինքն՝ եթէ աղետը սահմաններ իբր ըմբռնումի խախտում, եւ հետեւաբար, փորձառութիւնը լեզուի բերելու անկարելիութիւն, գրականութիւնը ինչպէ՞ս կրնայ յաջողիլ աղետը պատկերացնել:

Շման նիւթեր հետապնդող հեղինակներու համար պատասխանը պարզ է: Գրականութիւնը, որ, ի տարբերութիւն պատմագիտութեան, ազատ է ժամանակագրութիւն արտադրելու հըրամայականէն, կրնայ աղետը խօսեցնել՝ ներկայացնելով անոր պատկերացման անկարելիութիւնը: Սոյն մօտեցման ծիրին մէջ աղետը կը տեսաբանուի իբր դեպք մը, որ կը ծաւալի առանց վկայի, քանզի ոճիրը ամբողջութեամբ վկայողը անոր զոհ գացողն է: Իսկ վերապրողը դուրս կու գայ իբր անկատար վկայ՝ կրելով կորսուած վկայութեան բեռը: Ուրեմն միայն գրականութիւն մը, որուն պատումը կը ցուցաբերէ վկայագրութեան միաժամանակ պահանջն ու ձախողութիւնը, յաջողած կը համարուի աղետի փորձառութիւնը պատկերացուցած ըլլալու:

Նշանեան եւս կը սահմանէ աղետը իբր վկայութեան անկարելիութիւն: Բայց, ըստ իրեն, վերապրողը կը համարուի ո՛չ միայն թերի վկայ, այլ մեռեալ վկայ: Վերապրողը կը վերադառնայ իբրեւ մեռեալ, որովհետեւ իր մէջ խորտակուած է կեանքի պայմաններէն առաջնահերթը՝ պատմելու կարողութիւնը, վկայելու հանգամանքը: *Պատկեր, Պատում, Պատմութիւն* գիր-

քի առաջին հատորին մէջ, Նշանեան, բացատրելով աղետի պատահարին բընոյթը, կը գրէ. «Պատումի պահանջը կը ծագի, կ'արտայայտուի օր-ցերեկէն ներս, Աղետի հորիզոնէն ներս, այն Աղետին որ կը հասնի տեսողութեան ու

Գրականութիւնը... կրնայ աղետը խօսեցնել՝ ներկայացնելով անոր պատկերացման անկարելիութիւնը:

վկայութեան մարդուս մէջ, ու մարդը կը դարձնէ մեռեալ վկայ, եթէ չէ մեռցուցած պարզապէս որպէս մարդ» (206): Աղետին փորձառութիւնը կ'ուզէ գտնել իր պատումը, դեպքէն ետք, սակայն ի գուր: Վկայութեան եւ պատումի պահանջը չի կրնար կատարուիլ աղետալի փորձառութեան ընթացքին, եւ ճիշդ անոր համար, ուշացած պահանջը անգործադրելի է վերապրողին համար, որուն մէջ արդէն սպաննուած է վկան:

Մեկնելով վերապրողի սահմանումէն, ըստ Նշանեանի, վերապրող լեզուն ալ նոյնպէս մեռեալ լեզու է: Ուրեմն ի՞նչ

Նշանեան եւս կը սահմանէ աղետը իբր վկայութեան անկարելիութիւն: Բայց, ըստ իրեն, վերապրողը կը համարուի ո՛չ միայն թերի վկայ, այլ մեռեալ վկայ:

կը նշանակէ ունենալ մեռեալ լեզուով գրականութիւն, ինչպէս արեւմտահայերէն գրականութեան պարագան է: Ի՞նչ կը նշանակէ վերապրող լեզուով խօսեցնել աղետը: Նշանեանի համար, վերը եւս նշուած այս հարցումին պա-

տասխանը հետեւեալն է՝ գրականութիւնը կը խօսեցնէ աղետը, երբ գրութեան լեզուն կ'արձանագրէ իր մահը ինքնիր մէջ: Այսինքն՝ երբ լեզուն կը դառնայ ինքնիր մահադիմակը:

Գրական տեսութեան եւ քննադատութեան մէջ, գրական գործի մը կենդանութեան եւ մահուան սահմանը կը բնորոշուի գրութեան թարգմանելիութեամբ: Թարգմանելիութիւն կը նշանակէ, թէ գրական գործեր իրենց մէջ կը պարունակեն ձգտումը դէպի թարգմանութիւն, ուր կայ ապագայ կեանքի մը խոստումը: Այսպէս, թարգմանու-

Գրական տեսութեան եւ քննադատութեան մէջ, գրական գործի մը կենդանութեան եւ մահուան սահմանը կը բնորոշուի գրութեան թարգմանելիութեամբ:

թիւնը երկու ձեւով կը ծառայէ բնագրին՝ թէ կ'ապահովէ գործին յաւիտենականութիւնը, եւ թէ կը կնքէ անոր սպառումը: Պահպանումի եւ սպառումի միջեւ այս վարանումը կը ծագի թարգմանութեան լեզուին եւ բնագրի բովանդակութեան միջեւ նոր ստեղծուած հեռաւորութենէն: Լեզուն կը պարունակէ ժողովուրդի մը ապրելու, մտածելու ձեւի տրամաբանութիւնը: Երբ գրութեան մը բովանդակութիւնը կը մնայ անփոփոխ, սակայն ան կը վերարտադրուի նոր լեզուով, պառակտում մը կը ստեղծուի գործին ամբողջականութեան մէջ: Ըստ այս բանաձեւին, թարգմանութիւնը նմանութիւն կերտող աշխատանք չէ, այլ հակառակը: Թարգմանութեան լեզուն պատկերն է այլ ժողովուրդի,

ժամանակի ըմբռնումի, մշակոյթի (այսինքն՝ բովանդակութեան) համապատասխանող լեզուի մը, եւ կը մնայ հեռու բնագրի պատումի բովանդակութենէն:

Նշանեան կը բարդէ բնագրի լեզուի եւ թարգմանութեան լեզուի բաղդատականը, մտածելով, թէ ինչպէ՞ս կը բարեփոխուի սոյն հաստատումը, երբ թարգմանութիւնը կը կատարուի վերապրող լեզուով: Ան կը գրէ՝ «Բայց լեզուն որպէս հրաշագեղ դիակ գրականութեան մէջ է որ կը յայտնուի, ըլլալով հոն վերջապէս ինքն իր պատկերը, թէ թարգմանութեան մէջ, ինչպէս ըսած էր նոյնանման բառերով 1923ին Վալտեր Բենեամին: ...Յարցումը իմաստ մը ունի անշուշտ միմիայն եթէ հասկցուի, թէ ինչ կը նշանակէ թարգմանել մեռեալ լեզուով մը, մեռեալ լեզուի մը մէջ, ու թարգմանելով՝ զմոսել մեռեալը, յաւերժացնել զայն, վերածել իր իսկ էութեան, կամ իր իսկ պատկերին, երեւցնել ինչպէս որ երբեք չէր երեւցած, իր լման շքեղութեամբ, այսինքն նաեւ որպէս զուտ նմանութիւն» (76): Վերապրող կամ մեռեալ լեզուն, որ արդէն զուրկ է բովանդակութենէ, կը պարզէ բնագրի լեզուն՝ իբրեւ մահադիմակ: Այսինքն՝ մեռեալ լեզուով թարգմանութիւն մը կը յայտնաբերէ, որ լեզու մը՝ իբր նշաններու հաւաքածոյ, ինքնիր պատկերն է արդէն, փոխադարձ նմանութիւն մը, մահադիմակ մը զուտ լեզուի:

Արեւմտահայերէնի պարագային հետաքրքրական պիտի ըլլայ մտածել հակառակ ուղղութեամբ: Ինչպէ՞ս մօտենալ թարգմանելիութեան հարցին՝ նկատի ունենալով մեռեալ լեզուն ո՞չ թէ

իբրեւ թարգմանութեան լեզու, այլ իբրեւ բնագրի լեզու: Կրնամնք բանաձեւել, որ յետեղեռնեան արեւմտահայերէն գրականութիւնը զուրկ է թարգմանելիութենէ, քանի որ հոն բնագրին լեզուն արդէն գիտակից է իր մեռեալ ըլլալուն: Տարբերելով ազգային լեզուներէ, արեւմտահայերէնը՝ իբրեւ վերապրող լեզու, պէտք չունի թարգմանութեան արարքի մը միջնորդութեան, պարզելու համար ինքնիր մահադիմակ ըլլալը:

Բնագրի գաղափարը կը տարբերի գրականութեան ու տեսողական արուեստի ծիրերուն մէջ, սակայն թարգմանելիութեան եւ տեսանելիութեան բաղձանքը բաղդատելով, կարելի է հասնիլ մեր հարցադրումներուն աւարտին: Քսաներորդ դարու արուեստի հասկացողութեան, արուեստի գործի մը անզուգականութիւնը իր պատկերացուցած նիւթին մէջ չէ, այլ ինքիր մէջ՝ իբրեւ բնագիր: Մեքենական արտատպումը թոյլատրած է, որ բնագիրը ունենայ աւելի նիւթական արժէք եւ հետեւաբար՝ նշանակութիւն: Բնագրի տեսանելիութեան բաղձանքը զայն կը յղէ դէպի արխիւայնացում, այսինքն՝ մուտք թանգարան, որպէսզի օժտուի

նշանակութեամբ բնագիր ըլլալու կնիքը կրելով: Խնամակալը անհրաժեշտ մասնիկն է արուեստի գործի մը պատկեր կնքելու, մահադիմակ արտադրելու այս ընթացքին:

Իսկ եթէ գրականութեան մէջ թարգմանելիութիւնն է, որ կը կնքէ գործը իբրեւ պատկեր, գրագետի մը միջնորդու-


Ինչպէ՞ս մօտենալ թարգմանելիութեան հարցին՝ նկատի ունենալով մեռեալ լեզուն ո՛չ թէ իբրեւ թարգմանութեան լեզու, այլ իբրեւ բնագրի լեզու: Կրնամնք բանաձեւել, որ յետեղեռնեան արեւմտահայերէն գրականութիւնը զուրկ է թարգմանելիութենէ, քանի որ հոն բնագրին լեզուն արդէն գիտակից է իր մեռեալ ըլլալուն:

թիւնը պէտք է իբրեւ խնամակալ: Ուրեմն արեւմտահայերէնի պարագային, ուր բնագիրը կը մերժէ թարգմանելիութիւնը, արդեօք առաջադրութիւնը այն է, որ կարիքը չկայ գրագետին:

(Թիւ 2, 2017)

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

ՎԷՊ, ՍԵՌՎԿԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

 Վեպը՝ Որբունիի «Յալած-
լածները» շարքին երրորդ հա-
տորը «Ասֆալթը», նոր լոյս տե-
սած Պոլիս, հրատարակութիւն «Մար-
մարա»ի: Շարքին երկու առաջին հա-
տորներն են «Փորձը» (Փարիզ 1929), եւ
«Թեկնածուն» (Պէյրուք 1967): Այս եր-
կու հատորներուն միջեւ՝ մօտ քառա-
սուն տարուան փոս մը, որուն պէտք է
անդրադառնալ, Որբունիի այսօրուան
արտադրութիւնը կարենալ հասկնալու
համար:

1.- Ասիկա կը պահանջէ սակայն,
որ համակարգային անհրաժեշտ ըն-
թերցումին ձեռնարկելէ առաջ, մեկ-
նինք այդ գործերու մասին ընդհանուր
նշումներէ, գաղափարներէ, որոնք յե-
տոյ միայն պիտի տարրալուծուին, ման-
րամասն ընթերցումներէ ետք դառնան
խնդրական եւ տեղափոխուին իրենց
ընդունուած վայրերէն: Այս ճշդումը
հոս՝ փարատելու կամ առաջունընէ շըր-
ջանցելու համար այն համոզումը, թէ
կրնայ այսօր գրութիւն մը յայտնել
«կարծիք մը» ուրիշ գրութեան մը մա-
սին (ան ալ Որբունիի վեպին), ըսել ա-
նոր շուրջ ճշմարտութիւններ կամ տը-
պաւորութիւններ, առանց ըլլալու միա-
ժամանակ անդրադարձում իր իսկ աշ-
խատանքին վրայ: «Գրադատական»
յօդուածը չի կրնար մնալ նոր լոյս տե-

սած գիրքի մը պարզ վերլուծումը, ոչ ալ
թերութիւններու եւ յաջողութիւններու
մասին վճիռներ արձակելու փորձ մը
(ո՞ր իտեալ նմոյշին համեմատելով): Այլ,
միւս գրութեան (texte) հետ շփման մէջ
մտնելով, անոր հետ խաղալով, որոնում
մըն է գրութեան եւ ընթերցումի նոր
գործողութեան (pratique) մը, հարցադ-
րում եւ կազմալուծում իր իսկ «գիտու-
թեան», շնորհիւ «գրախօսուած» գիրքի
ներքին աշխատանքին: Հոս՝ գրախօ-
սականը եւ բնագիրը անխուսափելի-
օրէն կը միանան, կը խաղան, մէկը միւ-
սով կարելի, ի վերջոյ մէկը միւսին հետ
փոխարինելի (բնագիրը գրախօսական
մը արդէն, իր իսկ մասին, կամ կարելի
գրախօսականներուն մասին):

Ինչո՞ւ Որբունիի վեպերուն առջեւ
«գրադատը» չի կրնար շարունակել
հաստատական ըլլալ, փորձել դրութիւ-
նը բռնել գաղափարներու, եւ տպաւոր-
ութիւններու ցանցի մը մէջ: Դասական
վեպն է (օրինակ՝ դեռ, եւ որոշ վերապա-
հումներով, Շահնուրինը) որ կը ներէ,
կը պարտադրէ իսկ, այդ կեցուածքը ի-
րեն հանդէպ, եւ ասոր պատճառը այն
է, որ ան միշտ իրմէ դուրս ձգած է իր
մեկնաբանութիւնը: Ուզած է ըլլալ
«ուղղագիծ», ճշմարիտ, լայն առումով
իրապաշտ, չմտածելով երբեք ինքզինք
իբրեւ գրութիւն, իբրեւ վեպ: Արդիա-

գոյն վեպը (եթե «վեպ» մակդիրը դեռ կը պատշաճի այս գրութիւններուն), ձերբազատուած՝ իրականութեան մը, առարկայականութեան մը յղելու այս մըտահոգութենէն, կը վերադառնայ ինքն իր վրայ, կը կրկնէ ինքզինք եւ այսպէս կը կրծէ, կը քերթէ ներսէն գրութիւններու վրայ սովորական ամբողջատիրական գործողութիւններու կարելիութիւնը: Այստեղ, ուրեմն, բնագիրին աշխատանքն է, իբրեւ այդ, որ կը հարցադրէ գրախօսականի գիտելիքները իր մասին եւ ընդհանրապէս գրախօսութեան կարելիութիւնը: Գրախօսականի հաստատումները կրնան միայն տեղափոխելի, դանդաղ խոտորումով, մինչեւ գրութեան վերջին տողը: Ասկէ, անշուշտ, դժուարութիւնը ընթերցումին: Երբ գրութիւնս, անցնելով բնագիրէն, կը ստիպուի անոր իսկ թելադրանքով, վերադառնալու ինքն իր վրայ, եւ տեղափոխելու, խոտորելու ինքզինք, այլեւս ես չեմ ո՛չ պատասխանատուն այս շարժումին, ո՛չ ալ զայն դեկավարողը: Գրութիւններու խաղն է, որ կը բռնէ մեզ:

2.— Սկզբնական շրջանին, «Յալածուածները» ուզած է հետեւիլ հայ մարդու մը, կամ հայ Մարդուն ողիսականին: Կեանքը հոս՝ հասկցուած իբրեւ ճամբորդութիւն մը, յամր ներգրաւում նոր աշխարհի մը, գոց՝ նախ եւ որ հետզհետէ պիտի յայտնուի իր այլազանութեամբ եւ հարստութիւններով: Միեւնոյն ժամանակ, հերոս մը պիտի կազմաւորուի անցնելով զանազան փորձերէ, փորձառութիւններէ, մինչեւ որ հասնի որոշ տիրութեան մը: Սկիզբը (սկիզբէն)՝ «Յալածուածները» կը ներկայանայ իբրեւ կազմաւորման վեպ մը, բայց

միայն իբրեւ առաջադրանք. «Փորձը» ներկայացումն է գրուելիք վեպին, որ կրնայ իրապէս գրուիլ սկսիլ, երբ անցքը կատարուի աշխարհի եւ փորձառութեան հունէն: «Փորձը» առաջադրանքն է փորձառութեան եւ անոր վեպին (երկուքը միասնաբար, անբակտե-

Արդիագոյն վեպը (եթե «վեպ» մակդիրը դեռ կը պատշաճի այս գրութիւններուն), ձերբազատուած՝ իրականութեան մը, առարկայականութեան մը յղելու այս մտահոգութենէն, կը վերադառնայ ինքն իր վրայ, կը կրկնէ ինքզինք եւ այսպէս կը կրծէ, կը քերթէ ներսէն գրութիւններու վրայ սովորական ամբողջատիրական գործողութիւններու կարելիութիւնը:

լի. փորձը՝ հասկցուող միայն գրուած-գրուելիք վեպէն, եւ նոյնիսկ իբրեւ վեպ), երկուքն ալ ապագայ: Պատմութիւնն է ուրեմն մէկու մը, որ դեռ չէ ծնած¹, եւ կը տուայտի ձերբազատուելու համար մօրմէն, անցեալէն, աշխարհ գալու համար սեռայինի եւ արհեստի կրկնակ ճամբով («երկուքը մետալի մը երկու երեսները կը կազմեն», Էջ 156²): «Փորձը» ի վերջին Էջերուն, հերոսը կը ձգէ իր ետին անցեալը, մայրը, եւ սեռի-դրամի կրկնակ գողութիւն մը—պղծում մը գործելէ ետք (ձերբազատումը՝ կարելի միայն բռնութեամբ, ապօրինի, կարգերը խախտող, բայց միաժամանակ սահ-

¹ Որոշ նշումներ՝ Գ. Պըլտեանի «30ական թուականներու ֆրանսահայ վեպը» յօդուածէն, դասախօսուած Փարիզ 1972ին եւ դեռ անտիպ:

² Էջերու նշանակումը կը յղէ «Ասֆալթը» հատորին:

մանուած անոնցմէ, հոս սեռ-դրամ զոյգը, եւ պատրաստ՝ նոր կարգի մը յանգեյու. կազմաւորման վեպը կը հետեւի հերոսի մը մինչեւ իր կարգուիլը, սեռ-դրամը-անոնց յարաբերութիւնը կարգաւորող համակարգը (մտնելը), կը մեկնի ան դէպի Փարիզ, մայրաքաղաքը, դառնալու համար նոր մարդ մը, մարդ մը պարզապէս:

3.– «Եւ եղել մարդ», որ լոյս կը տեսնէ 1964ին, «Հալածուածներ»ու շարքէն դուրս, կը լրացնէ ձեւով մը, իր անկա-

***Որբունիի հերոսին կամ հերոսներուն
ոգիսականը կարելի է կարդալ իբրեւ
սեռային ոգիսական մը, մինչեւ
տիրապետում՝ կաշկանդող մղումներուն
վրայ, մինչեւ խորտակում՝
կապանքներուն, եւ լուծում՝
բեւեռումներուն...***

րելի լրումին կը հասցնէ վերը յիշուած առաջադրանքը. անհատական-սփիւռքեան կազմաւորման վեպը գրել-ապրիլ: «Փորձը»ին մէջ արդէն հերոսը Սփիւռքի բնակիչ էր (որոշադրումը կատարուած է Սփիւռքի մէջ ապրիլ փորձող անձի մը յատկանիշներով, մասնաւորապէս փորձերը միջավայրին հետ կապեր հաստատելու համար): Սփիւռքի բնակիչ պարտադրաբար, բայց դեռ առանց պարունակութեան: Ի՞նչ պիտի ըլլայ բնակելու ձեւը: Արմատապէս տարբեր նախկինէն:

«Եւ եղել մարդ». մարդ մը հոս կը ծնի, անցեալի կապանքներէն դուրս, կը դառնայ տարեց վերջապէս, առնելով որոշում մը (հայուհիի մը հետ ամուսնա-

նալու աներեւակայելի որոշումը) եւ հեռանալով մօր եւ օտարուհիի (բացարձակ հարազատի եւ բացարձակ օտարի) կրկնակ եւ փոխադարձ քաշողութենէն: Ծնունդը հոս ազատագրում մըն է ամուսնանալու անկարելիութենէն: Անհատական խնդիր նախ, զոր կարելի է դիտել հոգեվերլուծումի տեսանկիւնէն: Բեւեռում՝ մօր տիպարին վրայ, որ կ'արգիլէ սեռային մօտեցումը մայրը յիշեցնող կիներուն: Հոգեվերլուծական բուժումը. անցք մը մանկութենէն, վերադառնալու համար ներկային, անցնելով կրկին անգամ բեւեռման բոլոր հանգրուաններէն եւ լուծելով այսպէս հոգեբանական հանգոյցները: Ճամբորդութեան կամ կազմաւորումի ձեւ մը (ուր կրկնումը նոյնպէս խօսուած-գրուած է): Եւ Որբունիի հերոսին կամ հերոսներուն ոգիսականը կարելի է կարդալ իբրեւ սեռային ոգիսական մը, մինչեւ տիրապետում՝ կաշկանդող մղումներուն վրայ, մինչեւ խորտակում՝ կապանքներուն, եւ լուծում՝ բեւեռումներուն (մինչեւ որ կարելի դառնայ գիտակից որոշումը, վախէն եւ անձկութենէն ազատագրումը):

Միայն անհատական խնդիր մը չէ սակայն ասիկա: Յ. Բիւրքճեան իր «Սփիւռքահայ հոգեբանական վեպը եւ ենթակայական ճշմարտութեան մը որոնումը» յօդուածին մէջ կը գրէ հետեւեալը. «Եւ եղել մարդ»ը հա՛յ վեպ է, ամբողջ հաւաքականութեան մը Կենսապայմանը թելադրող գործ է... զուտ անհատական հոգեբանութեան սահմաններուն մէ՛ջ իսկ: Թովմասի մը սաղմ- նային կեանքին, սեփական երկունքի ճիգերուն եւ բարդոյթներուն

մեջէն, Որբունի կու տայ «Սփիւռքը՝ անձնականացուած»: Եւ նոյնպէս. «Յայտնոց պատմութիւնը ուրկէ՞ պիտի գայ մեզի, եթէ ոչ հայ ներանձնական մարդուն խորունկ հեռաւորութիւններէ՞: Բայց ո՞ր Սփիւռքը, ո՞ր պատմութիւնը: «Կորուստի» դատապարտուած, (կամ) «փրկութեան» ելքեր փնտռող հիւանդ խմբաւորովմը, եւ անոր երկընտրանքները: Ո՛չ անշուշտ: Թովմասի անկարողութիւնը. սեռայնօրէն *հայուհիի* մը մօտենալու անկարելիութիւն, առնչուած մօր եւ օտարուհիի գոյգ (գուգւած) ձգողութիւններուն: Սփիւռքի «հիւանդութիւնը»՝ յղուիլ «ծագումի» մը, երբ ամեն ծագում «սկզբնականօրէն» օտար է (մայրն ու օտարուհին քով քովի) եւ խորտակիչ (տուայտանքները, բարդոյթները Թովմասի): *Հայոց* պատմութիւնն է այդ խորտակումին պատմութիւնը (սարսափը՝ հայուհիներու մէջ սեռայինի երեւումէն): Այսպէս՝ կազմաւորման վէպը կը խօսի նաեւ Սփիւռքի կազմաւորման եւ ծնունդի մասին, երբ Թովմաս կ'ազատագրուի ծագումի մը մօտենալու պատրանքէն՝ փորձութենէն, եւ միաժամանակ օտարի հրապոյրէն:

Պատմութիւնը եւ «խորունկ հեռաւորութիւնները». կազմաւորման վէպը իբր այդ կ'ենթադրէ այդ խորութիւնները: «Եւ եղեւ մարդ», իբրեւ այդ խորութիւններու թափանցումի փորձ, անհատական-սփիւռքեան վէպը գրելու-ապրելու առաջադրանքին իրագործումն է:

4.— Բայց խորը անմիջապէս մակերեսն է հոս (ամենէն մակերեսայինը):

³ «Բագին», 1966, թ. 6: Ստորագծումը մեր կողմէ:

Հարագատ-օտար գաղափարաբանական հակադրութիւնն է (հակադրելը հաւասար է համակարգուած երկու բեւեռներէն մէկը մերժելու, այսինքն՝ միաժամանակ անոր ձգողութեան մէջ ապրելու), որ կը գործէ հոս եւ կը գծուի Սփիւռքի ամբողջ տարածութեան: Եւ առաջին արդիւնքը այս մակերեսային անդրադարձերու խաղին՝ խորութեան տպաւորութիւն մը ձգելն է: Հոգեբանական խորութիւնները կը ճանչնան միայն Մայրը, սեռայինը, կամ «Մայր-Օտարուհի» անբակտելի գոյգը, որով ծագումը կ'ըլլայ խորտակիչ. ծագումը ենթադրուած է միշտ հոս, թէեւ իբրեւ օտար, եւ ա՛ն կարելի կը դարձնէ անձնական պատմութիւնը իբրեւ հայտնի պատմութիւն: Բայց ի՞նչ դեր կրնայ ունենալ հայուհին, իբրեւ *հայ*, սեռային խորշանքներու կամ «մանկութեան արհաւիրքին յաճախանքի» երկարածը գումին մէջ. յամենայնդէպս ո՛չ հոգեբանական (խորունկ, խորտակիչ): Կէտ մը կայ ուրեմն, ուր հոգեբանական «խոր» իրականութիւն մը ըլլալէ կը դադրի «Մայր-Օտարուհի» գոյգը, ու կը դառնայ պարզ արդիւնք մը, գիծ մը, զուտ հակադրութիւններով կազմուած համակարգի մը մէջ: Գիծեր, հակադրութիւններ, որոնք սկզբնականօրէն սեռային եւ հոգեբանական (ենթակայական) չեն այս պարագային, այլ գրուած ըսուած: Մակերեսը՝ խօսքերուդ էջերու մակերեսն է (հոգեվերլուծական հոլովոյթին մէջ ալ, խօսքերու մակերեսէն՝ խորութեան տպաւորութիւնը, յղումը իրական, «ճշմարիտ» եղելութիւններու): Եւ միակ կարելիութիւնը հոս հարցադրումն է հակադրութեան եւ անոր

ենթադրած գաղափարաբանութեան: Այդ հարցադրումն է, որ կը կատարուի նաեւ «Եւ եղեւ մարդ»ի մէջ, եւ ուրեմն միայն կազմաւորման (անհատական-սփիւռքեան ենթակայական ճշմարտութիւն մը որոնող) վէպ մը չէ այլեւս այս վէպը, այլ արդէն ուրիշ բան:

Երեք մօտեցումները «Փորձը»էն մինչեւ «Եւ եղեւ մարդ» երկարող ճամբուն. հերոսի-Սփիւռքի կազմաւորում, սեռային խորտակումէ մը բժշկում, գաղափարաբանութեան մը հարցադրում: Պէտք է հիմա երեքէն անցընել շրջագիծ մը, որով երրորդը կը վերադառնայ առաջինին. աշխարհի մը բացուիլը այդպէս իբրեւ մարդ կազմուի, կը նշանակէ նախ եւ առաջ հակադրութիւններու զանցումը. պէտք է հասկնալ, որ եթէ այսօր միայն կրնանք գաղափարաբանութեան մը մասին խօսիլ, Որբունիի վէպերուն ամբողջ յորձանքին

...աշխարհի մը բացուիլը այդպէս իբրեւ մարդ կազմուի, կը նշանակէ նախ եւ առաջ հակադրութիւններու զանցումը. պէտք է հասկնալ, որ եթէ այսօր միայն կրնանք գաղափարաբանութեան մը մասին խօսիլ, Որբունիի վէպերուն ամբողջ յորձանքին սկզբնատարրը այդ գաղափարաբանութեան մերժումն է:

սկզբնատարրը այդ գաղափարաբանութեան մերժումն է (հարցադրողին առաջին հակադրութիւնը), փորձը անկէ ազատագր(ու)ելու (հարցադրումը): Առանցքը սակայն կը մնայ սեռայինը, որ կը պահէ իր մէջ եւ կազմաւորումի, եւ հարցադրումի փորձը-հարցը:

Հայկական Հարցը սեռային հարց մըն է:

Ըսինք, որ սփիւռքեան-անհատական կազմաւորման վէպը չէ միայն «Եւ եղեւ մարդ»: Այս է պատճառը շարքէն դուրս գտնուելուն: Չի լրացներ միայն սկիզբի առաջադրանքը, կը յայտնէ ուրիշ բան, եւ կը տանի ուրիշ տեղ: Մակերեսի խաղը, որ կ'երեւի հոս, անկարելի կը դարձնէ կազմաւորման մը պատմութիւնը: Բայց շարքը կը յամառի իր առաջադրանքին վրայ, կ'ուզէ շարունակել նոյն ուղղութեամբ: Իրմէ դուրս կը ձգէ «Եւ եղեւ»ը, շարունակելու անկարելիութեան ապացոյցը, եւ կ'երկարաձգէ ծրագիրը 1967ին լոյս տեսած երկրորդ հատորին՝ «Թեկնածու»ին մէջ, որ ըլլալով հանդերձ կազմաւորման վէպի ծրագրի պնդումը, կ'աւետէ արդէն «Ասֆալթը» յայտնութիւնը:

5.— «Ասֆալթը» կը ներկայանայ իբրեւ երկար մենախօսութիւն մը, զորեւ լած երրորդ դէմքով: Չնչին բացուածք մը արդէն հոս *ես*ին եւ *ան*ին միջեւ, աննշմարելի դեռ, քանի որ ամէն ինչ դիտուած է Մինասի աչքերով, եւ ըսուած են միայն իր իմացածն ու մտածածը: Մնաց որ, այս պզտիկ սահունը երկու դէմքերու կ'արգիլէ եսի մը տիրապետումը, եղելութիւններու եւ վերլիշումներու պատմումով, շարահիւստումով (ինչպէս դեռ «Եւ եղեւ»ին մէջ): Երկրորդ բացուածք մը, կապուած առաջինին. վէպին առաջին կէսը գրուած է անցեալ ժամանակով, երկրորդը ներկայով: Մանրամասնութեան մը առջեւ չենք հոս երբեք: Թերեւս ամենէն կարելորդ. ժամանակի հարցը ել ժամանակի

աշխատանքը Որբունիի վեպերուն մեջ: Կը բաւէ բնագիրը նախորդող երկու գրութիւնները կարդալ («Յառաջաբանի մը տեղ» եւ «Երկու խօսք») հասկնալու համար կարեւորութիւնը այս հարցին, մանաւանդ Փրոլստի «Կորսուած ժամանակի որոնումը» վեպին ներգործօն ազդեցութեամբ: «Ժամանակի հարցը գրականութեան մեջ մեքենական կիրարկում չէ: Քմայք մը չէ: Ինչպէս նաեւ կարծուածին պէս երկրորդական կարեւորութիւն ներկայացնող եզր մը»⁴: Առաջին գրութեան երկու մտահոգութիւններն են 1. Թաւալող ժամանակին դէմ իբրեւ յաղթանակ մը ներկայացնել «արուեստը», որ «ժամանակին խորքը» կը փորձէ «բերել մակերեսին, լծորդել ներկային, որ յաւիտենականութիւնն է, այսինքն՝ անմահութիւնը»⁵ եւ 2. «Թեկնածու»ի (ուրեմն «Ասֆալթը») կառոյցը (ոմանց արտառոց թուող) բացատրել այս ժամանակի հարցով: Խընդիրը հոս «յաջորդականութեան ընկալեալ եւ բուր սովորութեան խախտում»ն է Որբունիի վեպերուն մեջ, որոնք կը ներկայանան իբրեւ ժամանակի կոտորակներու խառնուրդ մը, ուր անհաստատ կը դառնայ դէպքերու յաջորդականութիւնը (երկրորդ գրութիւնը կը վերադառնայ նոյն թեմային. կը քննադատէ «ուղղագիծ ժամանակի գրականութիւնը», որուն համար կարեւորը պատմումն է, եւ կարելի է ան, կարծես հեղինակը տիրէր ժամանակին, դէպքերուն եւ բացարձակապէս գիտնար անոնց կարգը, հետեւանք-

ներն ու ազդակները): «Յառաջաբանի մը տեղ» կը միացնէ երկու թեմաները. կ'ուզէ բացատրել «ժամանակի հոսքի փշրումը» Որբունիի գործերուն մեջ իբրեւ արուեստի կարեւորագոյն իրագործումը. հոսող ժամանակի դէմ յաղթանակը: Յաղթանակ, որ կը դառնայ այսպէս կրկնակ: *ա*. Արուեստը այն է, որ անցեալը կը բերէ, կը լծորդէ ներկային եւ, յիշողութեան ճամբով, կորսուած ժամանակը կը վերգրաւէ, կը փրկէ վերջապէս: *բ*. Արուեստը այն է, որ ժամանակը կը փշրէ, կտոր-կտոր կ'ընէ: Անխուսափելի հատուածումը, քանի որ ժամանակին (վրայ) տիրապետութիւնը կը կայանայ մասամբ անցեալէն կտորներ փրկելու եւ ներկային բերելու լուղորդի աշխատանքին մեջ:

Երկրորդ գրութիւնը կը սկսի խնդրական դարձնել ժամանակի (վրայ) տիրապետութիւնը, կը սկսի քննել փակագիծներու խաղը, խաղ ժամանակի եւ տիրապետութեան միջեւ. «Այս վեպը պէտք է ընդունիլ իբրեւ խաղ մը» (Էջ 18): Յաղթանակի գաղափարն է որ մասամբ կը ցնդի հոս: Վեպը, ժամանակի հատուածումը, նման է «այն խաղին, ...փրծծը, որ կը կայանայ տուեալ պատկեր մը վերակազմելուն մեջ» (Էջ 18): Վեպը այս պարագային՝ դժուար լուծելի «հանելուկ» մը, որ ընթերցողէն կը պահանջէ մասնակցութիւն եւ աշխատանք: Բայց փրծծը խանդ մը միայն: Ընկրկում մը հոս. հատուածումը կու գայ ժամանակի բնոյթէն իսկ, անոր վեպին մեջ ձգած հետքէն: «Վեպը կը սկսի եւ ուղիղ գիծով իր վախճանին կը դիմէ, մինչդեռ մենք գիտենք թէ ուղիղ

⁴ Այս մեջբերումը՝ առաջին գրութենէն, որուն էջադրումը կը պակսի:

⁵ Նոյն:

գիծ գոյություն չունի» (Էջ 20): Վեպը կըրնայ ընթանալ միայն անվերջ վերադարձով նոյն վայրկեանին, նոյն տպաւորութեան վրայ, քանի որ «քանի կը փորձենք խորանալ..., ամեն բան կը բարդանայ...» (Էջ 20), եւ պետք է կրկնել նոյն բառերը, վերադառնալ նոյն կետին, ամեն անգամ քիչ մը եւս խորացնելու համար զանոնք: Այս անվերջ վերադարձը, կրկնումը՝ *սփիռալ* ածել ժամա-

Հեղինակը պետք չէ փորձէ պարապները լեցնել իր մեկնաբանութեամբ, իր դաստիարակչական խօսքերով, պետք չէ քանդէ գրութիւնը իր տրամաբանութեան մէջ:

նակի մը մէջ. «Իրական գիծը պարուրածել (*սփիռալ*) է» (Էջ 20): *Սփիռալ*ը ժամանակի եւ անոր հետեւող վէպին, որ կը վերաբերի ենթակայութեան խորացումին, «խորունկ հեռաւորութիւններու» թափանցումի փորձով:

«Եւ դեռ գիծը գիծ չէ: Գիծը կետերու շարունակութիւն մըն է, մէկ կետէն միւսը պարապ միջոցներ կան» (Էջ 20): Այս վերջին հատուածումն ալ կը գտնէ ինչպէս նախորդը իր բացատրութիւնը հոգեբանական կամ, աւելի ճիշդ՝ յիշողութեան ծիրին մէջ: Հեղինակը պետք չէ փորձէ պարապները լեցնել իր մեկնաբանութեամբ, իր դաստիարակչական խօսքերով, պետք չէ քանդէ գրութիւնը իր տրամաբանութեան մէջ:

Սփիռալ ածել կամ ընդհատուած գիծի այս մեկնաբանութիւնները կ'ենթադրեն խորացումին տակ խորքը եւ հատուածումին համար՝ ամբողջութիւնը: Խորքը միայն կարելի կը դարձնէ

խորացումը, իմաստ մը կու տայ անոր, եւ հատուածումը ամբողջութեան մը հատուածումը միայն կրնայ ըլլալ հոս է տիրողը յիշողութիւնն է դեռ եւ լեցուն, իմաստայից, անկորուստ ժամանակը, այդ ժամանակը ըլլայ ի վերջոյ ուղիղ, պարուրածել կամ կետկիտուած: Յիշողութիւնը, նոյնիսկ եթէ թերի է, կ'ենթադրէ խորքը եւ ամբողջութիւնը յիշելիքին, այսինքն՝ *եսի* մը (ենթակայի մը) կողմէ վերագրաւելիք, վերակազմելիք իրողութիւն մը (ճշմարտութիւն մը):

Պնդելով այս մեկնաբանութիւններուն վրայ, երկու յառաջաբանները կ'ուզեն կատարել անկարելին. պահել շարքը կազմաւորման վէպի գիծին մէջ: Եւ այս մակարդակին միայն կարելի է հասկնալ, թէ ինչ չափով պատմութեան հնարաւորութիւնը եւ «խորունկ հեռաւորութիւնները» կ'ենթադրեն մէկը միւսը: Ժամանակն ու յիշողութիւնն են (հոս անհատական յիշողութեան մը մասին չէ խօսքը) պատմութեան հունը, եւ խորութիւն, ամբողջականութիւն (ենթակայի մը կողմէ վերակազմելիք) իրենց կարգին կը պատկանին յիշողութեան ժամանակին («Փրուստ օգտագործած էր յիշողութեան ժամանակը» կ'ըսէ Որբունի, Էջ 21): Գերագոյն ճիգը զանցելու-պահպանելու համար սկզբնական ուղղութիւնը կարելի է տեսնել *փրծծըլ* խաղի յիշատակութեան մէջ: Վեպը կը փշրէ միայն իրականութիւնը, կը կոտորէ ամբողջական պատկերը, կը ցրուէ զայն *փրծծըլ*ի զանազան կտորներուն վրայ ի պարտականութիւն ընթերցողին վերակազմելու պատկերը ամբողջութեամբ «*փրծծըլ*... որ կը կայանայ

տուեալ պատկեր մը վերակապմելուն մէջ»: Բայց խորութիւնը մէկ կողմէ, եւ միւս կողմէ հոս ամբողջականութիւնը իբրեւ այդ (ամբողջական, տուեալ պատկեր ի մը գոյութիւնը, կարելիութիւնը) չեն քննուիր: Յիշողութեան ժամանակն է, յիշողութիւնը ժամանակին մէջ, ուր կ'ուզէ երկարաձգուիլ: Ժամանակի (վբայ) տիրապետումը:

6.— Գրութիւնն է, որ կը տեղափոխէ մինչեւ հիմա գործածուած բոլոր յընդացքները (կազմաւորում, խորութիւն-ամբողջականութիւն, կամ *փրծծըլ, սիհի-նալ*, կ'ետկիտում): Որքունիի վէպերուն ամենէն ակնյայտ յատկանիշը, անհուն ճիւղաւորումը մտմտանքներու՝ խօսքի մը, նայուածքի, մտածումի մը շուրջ: Երբ Մինաս կը սկսի խօսիլ Նիքոյին իր կաղմաւորման վրայ մեծագոյն ազդեցութիւնը ունեցած կնոջ մը՝ Յորթանսի մասին, Նիքոյ կը պոռայ. «Լռեցէք»: Պարզ բառ մը, որ ունի անմիջապէս իր շարունակութիւնը. «Միրտս կը տորրէք» (Նիքոյի հակումը արդէն Մինասի հանդէպ): Բայց «լռեցէք»էն ետք, ժամանակը կ'ընդհատի եւ տասնեակ էջերու վրայ կու գայ անդրադարձումը այդ բառին, անոր արտասանուելու ձեւին, պատճառած ծերային: Յնչում մը, եւ այդ հնչումին մէջ ամբողջ «ճշմարտութիւն մը» թաքնուած. պէտք է *քակել*, բանալ այդ վայրկեանը, էջերու վրայ տարածել զայն, բառերու երկայնքին: Հոգեբանական խորացում եւ ժամանակի ընդհատում միասնաբար: Խորացումը՝ բառերով, բառերէն, էջերու մակերեսին վըրայ, եւ ժամանակէն դուրս: Կայ դեռ հոս անշուշտ յիշողութիւնը, հոգեբանական երանգաւորումներու իրականու-

թիւնը, որուն իմաստը պէտք է յամրօրէն թափանցել (պէտք է միայն նշել, որ այս կարեւոր վայրկեանը կ'առնէ իր ծնունդը կազմաւորման մասին խօսքէ մը եւ անոր պատճառած հակազդեցութենէն. հակազդեցութիւն՝ կազմաւորման դէմ):

Մակերեսն է, որ յայտնուեցաւ սակայն հոս անմիջապէս: Ընդհատուած ժամանակը, բառերու գիծը, քակելու անհրաժեշտութիւնը: Պատկերներ քով քովի, գծուած, գծուող եւ ստեղծող խորութիւնը. տեսարաններ ամբողջ կ'երեւին այսպէս պաստառներու վրայ նըկարուած պատկերներու պէս, առանց խորքի: Մինաս ապշած կը տեսնէ Նիքոյն ու իր քոյրը մերկ, երկարած կողք կողքի, լքուած բոլորովին, Նիքոյի ձեռքը դեռ քրոջ պորտին վրայ, աճուկի ծալքին մէջ: Պաստառի վրայ գծուած տեսարան մը, նկար մը, որուն մասերը կը նկարագրուին մէկը միւսէն ետք, երկրաչափական հարազատութեամբ սրունքներու, թելերու դիրքերը, ուղղութիւնները—առանց ոչ մէկ մեկնութեան: Չեն ըսուիր բառերը, որ պիտի որոշադրէին քոյրերու յարաբերութիւններու բնոյթը, չեն ըսուիր մա՛նաւանդ Մինասի զգացումները, հակազդեցութիւնները:

Մակերեսի այս խաղերուն հանդիպած էինք արդէն գաղափարաբանական հակադրութեամբ (գծուող նորէն գրութիւններու մէջ-վրայ), որ կը կրկնէ Մայր-Օտարուհի հոգեբանական գոյգը: *Փրծծըլը* նոյնպէս մակերեսի խաղ մըն է, պատկերներ—հարթ տարածութեան մը վրայ գծուած պարզ պատկերներ—կազմող-տարբադադրող: Ժամա-

նակի (վրայ) տիրապետում կ'ըսեինք: Ժամանակի եւ տիրապետումի միջեւ մակերեսի, «վրայ»ի խաղն է հոս, որով նոյն ժամանակը կու գայ երկու անգամ, առաջինը՝ խորքին համար, երկրորդը՝ մակերեսին համար: Ասկէ՝ կրկնումը, երկու ժամանակները. անցեալը (խորքը) գիրքին առաջին կէսին մէջ, ներկան (մակերեսը)՝ երկրորդին: Պարզ խորացումի նպատակով չէ ուրեմն, որ էջ 139Էն սկսեալ, գիրքը կը վերսկսի, բառացիօրէն կրկնելով ինքզինքը եւ ժամանակի փոփոխումով: Մակերեսի խաղն է ժամանակին եւ տիրապետութեան միջեւ, կամ աւելի ճիշդ՝ ժամանակին միջեւ: Տիրապետող-տիրապետողը եսն է, յիշողութեան ժամանակի խորութեան եւ ամբողջականութեան երաշխաւորը (խորութիւնը կը պահանջէ խորացնող-խորհող մը, եւ ամբողջականութիւնը վերակազմող մը): Մակերեսի խաղը խաղ է նաեւ ժամանակի եւ եսի միջեւ, կամ պարզապէս եսին միջեւ, որով եսը կը կորսնցնէ իր խորքը եւ կը սփռուի *փրծծրլի* խորանարդներուն վրայ: կը կորսուի ուրեմն հերոսը, որուն փորձառութեան նկարագրութիւնն ըլլար վէպը, եւ անշուշտ «կորսուած ժամանակը որոնող» հեղինակն ալ: Պատմութիւնը եւ կազմաւորումը ուրեմն՝ արդիւնքներ միայն խաղին:

7.— Նշանակելի եւ նշանաւոր թաքուն ուղղութիւնն է սա՝ «Հալածուածներ»ու շարքին: Կազմաւորման վէպը սակայն իր լրումին հասցնելու առաջադրանքը վերջ չի գտներ ասով, ո՛չ ալ յիշողութեան ժամանակի (վրայ) տիրապետումը, իր խորութեամբ եւ ամբողջ-

ջականութեամբ: Կոտորակները կ'ենթադրեն դեռ ամբողջական պատկեր մը, «տուեալ» եւ «վերակազմել»իք: Բայց Որբունիի գրութիւններուն իսկ մակերեսի խաղը եկաւ խորութեան վստահութիւնը խանգարել: Հիմա պիտի տեսնենք ինչպէ՛ս «Ասֆայթը» աւելի եւս նշանաւոր շարժուածքով մը, ժեսթով մը, կու գայ խանգարել ամբողջական պատկեր մը վերակազմելու կարելիութիւնը, կարելիութեան կամեցողութիւնը:

Կրնանք մենք ալ փորձել պատկեր մը վերակազմել, փորձուիլ ատկէ: Վերակազմել Մինասի պատմութիւնը, Մինասին, որ հեռացած Նիքոլէն այն օրընէ ի վեր, երբ կը հասկնայ անոր կապը քրոջ հետ, կնոջ տղաբերքի գիշերը կը վերադառնայ ու յանձն կ'առնէ հիւանդապահութեան պատասխանատւութիւնը: Բայց, անհաստատ պատճառներով, հոգեվար Նիքոլը կը ձգէ որ ամբողջ գիշերը գալարուի տուայտանքներուն մէջ, առանց ոչ մէկ օգնութեան շարժումի: Յետոյ՝ Նիքոլի մահը, Մինասի տարակոյսները, եւ այլն: Կը բաւէ այսքանը: Կրնանք թերեւս կըտըրտել վէպի էջերը, տեղափոխել կըտրօսները, քով քովի փակցնել, ամբողջական պատկերը վերակազմելու համար, որոշ բացատրութիւններ աւելցընելով ի հարկին (օրինակ, տեղ մը Մինաս կը յիշէ Նիքոլին հետ կատարած իր հեծանիւով արշաւները, Նիքոլի իրմէ անկախ զգացած սեռային գրգռումը, եւ իր հանդուրժող կամ ջղային անհասկացողութիւնը: Ուրիշ տեղ, խուզարկուած, տակն ու վրայ դարձած տըպարանի աղէխարշ տեսարանին առ-

ջեւ, Մինաս կը յաճախուի Մոնիքի հետ իր սեռային յարաբերութիւններուն կրկնուող, երկարաձգուող պատկերէն, որովհետեւ երբ կը տեսնէ նորէն ինքզինք հալածական, ինչպէս եղած է միշտ, իր մէջ Մոնիքի ճիչն է, որ կ'արձակուի անվերջ հպարտութեամբ լեցնելով ամբողջ իր եութիւնը. «Չիս կին ըրիք»: Ճիչը ֆրանսուհիին, եւ ինք դարձաւ մարդ եւ չէ՛ այլեւս հալածական, հալածուած, հայկական անհատնում ողբերգութեան, խեղճութեան մէջ կորսուած հայ պատանի):

Երբ կտրօնները քով քովի փակցունենք եւ իրականութեան, անցուդարձերու, Մինասի հոգեբանական խորութիւններու եւ բարդութիւններու ամբողջական պատկերը վերակազմելու աշխատանքը լրացնենք, կը մնայ մեր ձեռքը մնացորդաց մը: Կը մնան չգործածուած եւ անգործածելի կտրօններ, գորս կարելի է ոչ մէկ տեղ զետեղել: Ոչ թէ որովհետեւ ուրիշ բան կը պատմեն, պատմութենէն դուրս են, կամ՝ անկարելի է մեզի անոնց տեղը որոշել: Այդ պարագային, միշտ կարելի պիտի ըլլար յուսայ, որ աւելի խոր թափանցումով, ուրիշ մեկնաբան մը կարենայ զանոնք ի վերջոյ տեղաւորել: Բայց հոս տեղաւորելու անկարելիութիւնը բացարձակ է: Որովհետեւ այդ կտրօնները աւելորդ են, կ'ըսեն նոյն բանը: Գիտենք, որ Էջ 139էն սկսեալ վէպը տառացիօրէն կը կրկնէ նոյն բառերը, նոյն նախադասութիւնները: Այսպէս, Էջ 41. «Յիւանդը... պոռաց: Կարծես վերջին ճիչը կ'արձակէր ընդմիշտ անեութեան մէջ թաւալելէ առաջ: – Պիտի սպաննէ գիս, Մինէ, պիտի սպաննէ:

Նուզեր դուրս գալ, չ'ուզեր»: Էջ 140. «Յիւանդը... կը պոռայ: Կարծես վերջին ճիչը կ'արձակէ ընդմիշտ անեութեան ծոցը իյնալ է առաջ: – Պիտի սպաննէ, Մինէ, պիտի սպաննէ գիս»: Կը նշմարելի գրեթէ տառացի կրկնութիւնը, ժամանակի ընդհանուր փոփոխութեամբ եւ այլ չնչին փոփոխութիւններով (իյնալէ, թաւալելէ):

Այս կրկնումը կը շարունակուի ընդմիջումներով, յաւելումներով, մինչեւ Էջ 161: Եւ անմիջապէս կը տարբերի հոգեբանական խորացումի կամ յիշողութեան նոյն կետին վրայ վերադարձի Որբունիի սովորական աշխատանքէն: Յոս յիշողութեան խաւերուն չէ, որ կը յղէ կրկնութիւնը, ես մը չէ, որ կը վերադառնայ անցեալի մը վրայ, անկէ յաճախուած, չկրնալով զայն իր հորիզոնէն վանել: Այլ պարզապէս գրութիւնն է, որ կը կրկնէ ինքզինք: Գրութիւն մը կը ներկայանայ, կրկնակ, կրկնուած, եւ աւելորդ կտրօնները կը մնան մեր ձեռքը: Գրութիւնը կտորկտոր, կտտորակուած, բայց կտրօնները, կտտորակները չեն յղեր պատկերի մը ամբողջութեան, քանի որ աւելորդ գրութիւն կայ «իրականութեան» նրկատմամբ, ամբողջականութեան նրկատմամբ: *Փռծծըլ* խաղը խանգարուած է: Գրութիւնն է, որ հոս կը պարտադրէ իր կանոնը եւ ոչ՝ յիշողութիւնը, յիշողութեան ժամանակը, ետը: Գրութիւնը եւ ոչ՝ խոր-ամբողջական իրականութիւն մը, *փռծծըլ*ի ամբողջական պատկեր մը: Հատուածումը հոս չի յղեր ամբողջականութեան (մը):

0.— Կրկնումը ուրեմն՝ ո՛չ խորացումի, ո՛չ ամբողջացումի համար: Կրկնու-

մով՝ յիշողութեան ժամանակէն դուրս ենք: Չկայ ես մը, որուն մէջ արձանագրելի կրկնումը, ընդհակառակն, կրկնումն է, որ կարելի կը դարձնէ եսի միասնութիւնը, ինքնութիւնը⁶: Բայց անիկա է, որ նաեւ կարելի կը դարձնէ կրկնակը, աշխատող սկիզբի եւ հարազատի մէջ-դէմ: Սկիզբը նախ՝ քանի որ սկիզբը կ'երեւի իբրեւ կրկնուած, յողմ իրմէ առաջ արդէն «տեղի ունեցած» ուրիշ-սկիզբի մը⁷: Եւ հարազատի, ծագումի դէմ: Յոս վերստին «Եւ եղեւ մարդ», ուր ծագումի հարցը ենթարկուած է աննախընթաց գործողութեան մը. ըսկիզբը՝ Մայր-Օտարուհի քով քովի, կրկնուած, կրկնակ: Ծագումը (յիշողութեան ժամանակին առնչուած) այստեղ ոչ այլեւս պարզ ծագումը, խորքը յիշողութեան: Ծագումը՝ կրկնակ, հարազատ-օտար: Սկիզբը նորէն՝ կրկնու-

⁶ Յաւիտենական վերադարձը (Նիցէի անվերջանսկիզբ Նոյնի կրկնութիւնը) թաքուն միասնութիւնն է, որ կու տայ ինքզինք տարամերժելով իմ անձնական միասնութիւնս, անձնական ինքնութիւնս, եսին ինքնութիւնը» (Տըլէօզ, «Տարբերութիւն եւ կրկնութիւն»): Անունները, որ կրնան երեւիլ այս բաժնին մէջ պատահական չեն: Որքունիի գործը կ'ընթանայ գուգահեռաբար Ֆրանսայի մէջ այս վերջին տարիներու զարգացած «արդիագոյն» մտածողութեան: Նոյն հարցերը – կրկնումը, հատուածումը - կ'երեւին հոս եւ հոն, օրգանական անհրաժեշտութեամբ: Նաեւ ֆրանսահայ գրականութեան մէջ («Փարիզի դպրոցը») սաղմնային ձեւով:

⁷ Հայը՝ սկիզբէն իսկ կանխուածը: Շահնուրի գործին կարելոր գիծ մը՝ ասիկա: Առաջին անգամը գրութեան մէջ կը տրուի, կու տայ ինքզինք, իբրեւ արդէն տեղի ունեցած ուրիշ անգամներու կրկնումը: Օրինակ՝ «Նահանջ»ի մէջ, Պետրոսի պատմութիւնը կը յայտնուի իբրեւ պարզ կրկնութիւնը՝ իրմէ առաջ եկած հայու մը (Պիպիի հօրը) պատմութեան Նենթին հետ (տես էջ 255): Աւելի եւս նշանաւոր այս տեսակետով՝ «Պոյնուզըները» պատմուածքը, յոյս տեսած «Մենք»ի երրորդ թիւին մէջ:

թիւնը (ինչպէ՛ս նախադասութեան մը մէջ տարագել այս «բուլթ»ը, որ կը մօտեցնէ անհաւասարելիները. սկիզբը՝ կրկնութիւնը նախադասութեան մը, որ ըլլայ ամբողջութեան մը տարագր: Բուլթը կրնայ միայն հաստատել հատուածումը: Բուլթը, փակագիծը ամբողջականութեան եւ խորութեան մէջ–դէմ հատուածումի եւ մակերեսի խաղերը, որոնք ուրեմն գրութենական, կամ նոյնիսկ տպագրական խաղեր են): Կրկնումը կը դնէ կրկնակը, օտարը հարազատին մէջ: Այս է կրկնումի հարցին իսկական տարողութիւնը: Կրկնումի կեդրոնին՝ օտարը՝ խանգարող հարազատը, պարզը, ծագումը:

Քանի որ կը սկսի կրկնելով, այդպիսի եղելութիւն մը ունի նախ պատմումի ձեւը: Իր առաջին անգամը տեղի կ'ունենայ բազմաթիւ անգամներ... Այդ առաջին անգամը արդէն հոսկէ չէ, հոս մը չունի, կ'ընդմիջէ ան պատկանելիութեան մեղսակցութիւնը, որ մեզ կը կապէ մեր բնակչութեան, մեր մշակոյթին, մեր պարզ արմատին... պետք է մտածել որ օտարը միտուած է կրկնումին մէջ⁸:

1.– Հիմա՝ «Ասֆալթը»ի էջ 139էն մինչեւ 161 երկարող այս 23 էջերուն մէջ, վայր մը կայ, ուր յանկարծ երեւութապէս գրութիւնը կը դադորի կրկնելէ: Արդարեւ, էջ 49 եւ 149՝ կը կարդանք. «– Մի՛նէ, ի՛նչ ունիս, հիւա՛նդ ես: Մօտեցի, ինչո՛ւ ոտքի վրայ կեցեր ես» (Հոգեվար Նիթուլն է, որ հիմա կը հոգայ Մի-

⁸ Տե՛ղտա. «Սփռումը» (էջ 324): Այս տողերը՝ Սոլերսի «Թիւեր» վեպին կապակցութեամբ:

նասին վրայ): Եւ կայ ասկէ սկսեալ ճիւղաւորում մը. Էջ 149 «... Անսահման յուսահատութիւն մը իշխած է վրան... Յանկարծ կը հասկնայ...»: Կրկնումի կեդրոնին կը գտնուինք հոս: Եթէ կրկնումը Էականն է իսկապէս այս դիրքին մէջ, եւ եթէ վերնագիրը կապ մը ունի այդ Էականին հետ, ի՞նչ կրնայ երեւիլ Էջ 49 այս հատուածին տեղ, եթէ ոչ— Ասֆայթը: Եւ ի հարկէ. «Նոյն յուսահատութիւնն էր, այն՝ որ ամիսներ առաջ ողողած էր զինքը, ինչպէս հալած ու միացող ասֆայթը ...» Եւ քիչ հեռու (Էջ 50). «...Յին նողկանքը գլխէն վար թափուող հալած ասֆայթէ շապիկի մը նրման»: Ասֆայթը ճանապարհն է, ասֆայթը նողկանքը: Մեկնում՝ Մինասի, նողկանքէն մոռուած: Ամիսներ առաջ, ինչո՞ւ այդ «անսահման յուսահատութիւնը», եթէ ոչ Նիբոլի եւ քրոջ յարաբերութիւնները հասկցած ըլլալէն: Եւ անմիջապէս՝ փախուստը: *Ասֆայթը* (յուսահատութիւնը, փախուստը) *կ'երեւի երկու քոյրերու մերձեցումին առնչութեամբ*: Օրինակ, գիրքի վերջին էջին, երբ Մինաս ասֆայթով ծեփուող ճամբուն վրայ կը տեսնէ Նիբոլը եւ Մոնիքը, որոնք ձեռք ձեռքի, շքեղ հանդերձանքով եւ «հանդիսաւոր քայլուածքով» կը խրին հետզհետէ ասֆայթին մէջ:

Երկու քոյրերու մերձեցումէն՝ Մինասը դուրս, վտարուած: Յուսահատութիւնը հոգեբանական երեւոյթ չէ միայն հոս (եւ ասֆայթը այդ երեւոյթին խորհրդանիշը չէ երբեք), եւ ուրեմն մերձեցումն ալ ուրիշ բան է քան լեսպետանական յարաբերութիւն միայն: Երկու քոյրեր հոս — Նոյնը կը միանայ Նոյնին,

հարազատը հարազատին: Եւ դիտենք ինչպէս ֆրանսահայ վեպին մէջ, ֆրանսուհին բնորոշուած է իբրեւ օտար: Յոս ուրեմն, օտար հարազատներու մերձեցումով, կ'երեւի օտարին հարազատը: Եւ այդ հարազատէն վտարուած է Մինաս: Կը դառնայ ան օտարին օտարը: Վտարումը՝ փախուստ, ճանապարհ: Մինասի հարազատութիւնն է, որ կը ցնդի: Կը մնայ միայն օտարութենէ օտարութիւնը, Ասֆայթը, եւ այդ, ի հարկէ, չէ բնաւ հոգեբանական երեւոյթ:

Ըսինք, որ հարազատ-օտարը (օտարը արդէն հարազատին մէջ, կամ օտարին հարազատը) *կրկնումէն* կը ծնի-կը մեռնի (Նիբոլը եւ իր ու հայուն զաւակը, Նենէթը եւ իր ու հայուն զա-

«Օտարութեան» հետ դէմ դէմի եկող, զայն ընկալելու պատրաստ, ստիպուած նոյնիսկ, ամբողջ սերունդ մը հարկադրուեցաւ իրերու բերմամբ սարելու-մտածելու օտար-հարազատը (օտարը հարազատին մէջ, օտարին հարազատը):

ւակը «Նահանջ»ի վերջին էջէն: Ո՛չ միայն հարազատի խանգարումը, այլ օտարի քայքայումը⁹ նաեւ): Եւ այս է

⁹ «Պոլյնուզլները» պատմուածքին մէջ հայ հրոսպետ մը կը ստիպէ թուրք քոյր եւ եղբայր մը միանալու իր խումբին առջիւ: Յոս նորէն օտար հարազատներու սեռային մօտեցումը, կապուած հոս ալ կրկնութեան (արարքը կը կատարուի կրկնուելով, առաջին անգամ իսկ, կամ կը կրկնէ, կը բազմապատկէ այդ առաջին անգամը): Յոս ալ օտարը կը քայքայուի (կնոջ տառապանքը): Կառուցային համանմանութիւնը որ կ'երեւի ամբողջ այս գրութիւններու միջեւ կ'արժէ ուսումնասիրել աւելի մօտէն:

կրկնումի հարցին ամբողջ տարողութիւնը: Որքունիի գրութիւնը զարմանալի ձեւով կը յարգէ—կը հաստատէ այս օրէնքը—օտար-հարազատը կրկնումին մէջ միտուած—տալով Ասֆայթն իսկ, օտարութենէ օտարութիւնը, իբրեւ կրկնութիւն, դնելով զայն կրկնուածի կեդրոնը:

Վէպ (կազմաւորումը, հոգեբանականը), սեռականութիւն (քոյրերու միացումը), ժամանակ (սկիզբի, ծագումի, հարազատի հարցը), վէպ (կրկնութիւն): Գրութիւններու խաղն է, որ կը բռնէ մեզ:

* * *

«Օտարութեան» հետ դեմ դեմի ելող, զայն ընկալելու պատրաստ, ստիպւած նոյնիսկ, ամբողջ սերունդ մը հարկադրուեցաւ իրերու բերմամբ ապրելու-մտածելու *օտար-հարազատը* (օտարը հարազատին մէջ, օտարին հարազատը): Ուշագրաւը այն է, որ այս առնչութեամբ միշտ *կրկնումը* կ'երեւի:

(Թիւ 6, 1973)

ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ի ԽՆԴԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

(ԵՐԿՈՒ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՌԹԻԲ)

2013 եւ 2014 տարեշրջաններուն Յայաստանի մէջ յաջորդաբար լոյս տեսան նմանօրինակ երկու բառարաններ: Առաջինը Յրաչուհի Փալանդուզեանի Գործնական բառացանկօտարամուտ բառերի հայերէն համարժեքներն է, որ հրատարակուած է «ՀՀ Սփիւռքի նախարարութեան դրամաշնորհով», Երեւան, Էդիթ Պրինտ տըպարանէն, 2013: Երկրորդին հեղինակն է Աւետիք Աւետիսեան, որ 2014ին լոյս ընծայեց Յայերէ նում գործածուող օտար բառերի բառարան խորագրեայ, Երեւան, Անտարես հրատարակչատուն:

Յրաչուհի Փալանդուզեանի բառարանը (ինք պիտի կոչէր բառացանկ) կը բաղկանայ 140 էջէ եւ կ'ընդգրկէ 4100 օտար բառ եւ յապաւում, անոնց թարգմանութիւնը, բացատրութիւնը եւ հայերէն տարադարձումը: Իսկ Աւետիսեանի բառարանը՝ 344 էջ եւ 3400 բառ, որոնք մեր լեզուին անցած են զանազան լեզուներէ:

Կարգ մը տարբերութիւններ կան երկու բառարաններուն միջեւ: Փալանդուզեան կու տայ օտար բառին ուղղակի թարգմանութիւնը, երբեմն քանի մը հոմանիշներով. բառարանը «գիտա-

կան աշխատանք չէ»¹, գործնական է: Իսկ Աւետիսեան աւելի բացատրողական է, կու տայ օտար բառին ծագումը, բառին բացատրութիւնը կամ կը թարգմանէ հայերէնի, երբեմն կարգ մը հոմանիշներով:

Եթէ միացնելու ըլլանք երկու բառարաններուն բառերը, հաւանաբար կ'ունենանք 4500-5000 օտար բառ, որոնք ներխուժած են հայերէնի մէջ՝ կարծէք բերող ներսէն գրաւելու մտադրութեամբ:

Բառարանները կազմողներուն նըպատակը նոյնն է. տալ օտար բառերուն համարժեք հայերէնները եւ ձերբազատիլ օտարամուտ բառերու գործածութենէն: Երկու հեղինակներն ալ իրենց բառարանները կազմած են վերջին շրջանին—Յայաստանի վերանկախացման տարիներուն—ամօրեայ կեանքին, պարբերական մամուլին, պատկերասփիւռին, գեղարուեստական գրականութեան, գիտական հրատարակութիւններու մէջ գործածուած բառերէն²:

Երկու բառարանները կազմուած են հրամայական պահանջէ մը մեկնելով, այսինքն՝ ձերբազատիլ օտար բառերու գործածութենէն այնքան ատեն որ անոնց համապատասխան կամ հա-

մարժեք հայերեն բառերը գոյություն ունին:

Բառարանը կազմողներուն նպատակը եղած է նաեւ հայ խմբագիրներուն, լրագրողներուն, թարգմանիչներուն եւ բանաւոր խօսքի մէջ աշխատողներուն օգնել, որ առանց անելորդ չարչարանքի եւ ժամավաճառութեան, գործածեն համապատասխան հայերէն բառեր: Ասոնք օգտակար եւ գործնապաշտ աշխատանքներ են: Հետեւաբար, երկու բառարաններն այլանմանարարելի են հայ բոլոր խմբագիրներուն—Հայաստան եւ Սփիւռք—լրագրողներուն, ուսուցիչներուն, հրապարակագիրներուն, հրապարակախօսներուն, աշակերտներուն եւ, ինչու չէ, «ընթերցողներու լայն շրջանակներին»³: Այս բառարանները գրեթէ լիովին բաւարարութիւն կու տան բոլորին այլ:

Կրնայ առարկուիլ, որ կարգ մը բառերու հայացումները կամ թարգմանութիւնները լաւ չեն կատարուած: Ասիկա արդարացի առարկութիւն կամ քննադատութիւն է: «Սակայն չնոռանանք, որ բառերը գործածելով են ամբողջում ու արժէք դառնում»⁴: Կար ժամանակ—արեւմտեան կողմն աշխարհի—երբ հրապարակ նետուեցաւ «արեւելում» բառը իբրեւ հայացումը orientation բառին, որուն համար կը գործածուէր—ոմանք մինչեւ հիմա կը գործածեն—«օրիենտացիա» բառը: Այդ օրերուն «արեւելում» բառը լաւ չինչեց ոմանց ականջներուն, եւ բառը քննադատուեցաւ իբրեւ տկար հայացում: Ժամանակի սահմանին հետ սակայն, «արեւելում» բառը սկսաւ ընտելանալ,

որովհետեւ շատ գործածուեցաւ եւ ընդունելի դարձաւ:

Նոյնն է պարագան «գնաճ» կամ «սղաճ» բառերուն, որոնք հայացումն են monetary inflation կամ «ինֆլեացիա» բառին: Եթէ այս վերջինին սահմանումը առնենք, ճիշդ է, որ բառին հարիւր առ հարիւր իմաստը չեն տար «գնաճ» եւ «սղաճ» բառերը, սակայն մեծաւ մասամբ նոյն նշանակութիւնը ունին: Բոլոր պարագաներուն անելի նախընտրելի են «ինֆլեացիա» բառէն: Նոր բառը գործածութեան մէջ դրուելով է, որ կրնայ բարեփոխուիլ եւ ընդունելի դառնայ: Եթէ մէկը առարկութիւն ունենայ որեւէ հայացած բառի նկատմամբ, կրնայ տարբեր բառ մը առաջարկել: Այդպէսով, լեզուն կը հարըստանայ նոր բառամթերքով: Ստեփանոս Մալխասեանց կը հաստատէ. «Լեզուն մտքի արտայայտիչն է բառերի միջոցով՝ ուստի հայերէն լեզուի բառազանծի միատեղ հաւաքումը բովանդակում է այն բոլոր մտքերը, գաղափարները, գործողութիւնները, առարկաները, որոնցմով ապրել է հայ մարդը կամ որոնք մատչելի են եղել նրան անելի քան 1500ամեայ ժամանակաշրջանում, ուրեմն տալիս են ընդհանուր գաղափար նրա կուլտուրական, տնտեսական, բարոյական եւ այլ զարգացման»⁵:

Օտար բառերու հայերէն համարժէք բառեր տալու հարցը տարակարծութեան եւ վեճի դուռ բացած է անցեալին մեր ժողովուրդի երկու հատածներուն միջեւ՝ արեւելահայ եւ արեւմտահայ, յատկապէս անցեալ դարուն: Սիքայել Վարանդեան իր *Հոսանք*

ներ հատորի նախաբանին մեջ երկար բացատրություն տուած է այս հարցին մասին⁶: Ըստ իրեն, այս հարցին մեջ հայությունը կը գտնուի երկու ծայրայեղություններու միջեւ: Արեւելահայերը աւելի հակամետ են օտար բառեր ներմուծելու մեր լեզուին մեջ, իսկ արեւմտահայերը կ'ուզեն օտար բառերը եւ եզրերը հայացնել: Վարանդեան կը հաստատէ, որ հայոց լեզուն, իր ամբողջ հարստութեամբ ու ճկունութեամբ հանդերձ, «անբաւարար է՝ մի շարք գիտական ու փիլիսոփայական գաղափարներ, ինչպէս եւ նոր երեւոյթներ արտայայտելու, թարգմանելու համար»⁷: Առ այդ, Վարանդեան կ'առաջարկէ միջին եզր մը գտնել օտարամուտ բառերու նկատմամբ: Այսպէս, պէտք է մտցնել մեր լեզուին մեջ օտար բառեր, երբ չենք գտներ անոնց համարժէք հայերէն բառերը: Արեւմտահայ մտաւորականութեան մէկ մասը պէտք է հրաժարի իր intransigent հայամուտութեան ու splendid isolation-ի դաւանանքէն եւ հաշտուի օտար բառերու ներմուծման գաղափարին հետ: Միւս կողմէ, արեւելահայ գրողներու մէկ մասը պէտք է հրաժարի կարգ մը օտարամուտ ծայրայեղություններէ եւ հայոց լեզուն ազատէ օտար բառերու աւելորդ ու խուսափելի կուտակումներէն⁸:

Օտարամուտ բառերու նկատմամբ արեւելահայ-արեւմտահայ անցեալ տարակարծությունը սուր կերպով չի ներկայանար մեզի այսօր: Սակայն օտարամուտ բառերու հարցը կը շարունակէ հրատապ հարց մնալ:

Արդեօք կարելի է իւրաքանչիւր օտար բառի համապատասխան բառը

գտնել հայերէնի մեջ: Հաւանաբար: Ինչ կը պատահի եթէ չգտնենք: Այս հարցումը ուղղած է արձակագիր Վարդգես Պետրոսեան 35 տարի առաջ: Ան կը գրէ. «Ունենք անհրաժեշտ բառեր համապատասխան հասկացություններն արտայայտելու համար: Չունենք: [...] Հասկացությունը, երեւոյթը կենցաղ մտնելուց կամ գոնէ նրա հետ պէտք է ստեղծենք այն անուանող բառը. այլապէս եթէ ժողովուրդը սկսում է գործածել ոչ հայերէն բառը, վարժուում է դրան. ապա նոր, հայերէն բառը նրան սովորեցնելը, ետ վարժեցնելը դժուար է. երբեմն «անհնար»⁹:

* * *

Կրնայ ամարկուի, որ օտարաբանությունները նորություն չեն մեր կեանքին մեջ. անոնք գոյություն ունեն ցարական եւ յատկապէս խորհրդային վարչակարգի օրերուն: Արդարեւ, այդ աւտեն, օտարամուտ բառերը կը փոխադրուէին գլխաւորաբար ռուսերէնէն, որ, իր կարգին, կ'առնէր եւրոպական լեզուներէն: Այո, այն աւտեն ալ մտահոգիչ հարց էր ասիկա հայերէնի եւ սփիւռքահայ բազմաթիւ մտաւորականներու համար, որոնք զանազան ձեւերով իրենց բողոքը կը ներկայացնէին այս հարցին բարուք լուծում տալու նպատակով: Այդ օրերուն, եթէ հարցը կը մնար հարց, կը պատճառաբանուէր, որ Հայաստանը անկախ չէ, ազատ չէ եւ ամեն բան կախեալ է Մոսկուայէն: Հիմն...

Փալանդուզեան կը յայտնէ, թէ մեր լեզուին վրայ կը շարունակէ տիրապետող մնալ ռուսերէնի ազդեցությունը:

Այնուամենայնիւ, «արագօրէն իրենց տարածքն են նուաճում նաեւ անգլերէնը, ֆրանսերէնն ու իսպաներէնը»¹⁰: Այսօր ինչ պատճառաբանութիւն պիտի գտնենք արդարացնելու այս բոլորը: Չէ որ այլեւս ազատութիւն եւ անկախութիւն ունինք: Չէ որ խորհրդային արգելքները չկան այլեւս: Համաշխարհայնացումը, ընկերային հաղորդակցութեան միջոցներու ազդեցութիւնը:

Վերջին ժամանակներուն լեզուական հարցերու մէջ շեշտուեցաւ այն իրողութիւնը, որ լեզուն հայրենիք է. այսինքն, հայ լեզուն Հայաստան է: Ինչպէ՞ս կարելի է հայերէնը, տառ եւ բառ, հայրենիք նկատել, երբ շուրջ հինգ հազար օտար բառ, այդ ալ միայն վերանկախացման տարիներուն, ներմուծած են մեր լեզուին մէջ:

Ինչ որ կը նշանակէ, թէ՛ մերօրեայ պայմաններուն տակ, օտար բառերու յարաճուն եւ անհամեմատ գործածութիւնը ակեջի քան մտահոգիչ եւ հրատապ հարց է, որ կը տանի ապահովաբար մշակութային ձուլումի: Եւ ճիշդ ատոր համար է, որ՝ հայերէնը աչքի լոյսի պէս պէտք է պահպանենք եւ անխաթար փոխանցենք յաջորդ սերունդներուն¹¹:

* * *

Եթէ ազգ-պետութիւն ենք—եւ ենք—այն ատեն մեր կրթական, մշակութային եւ գիտական մարգերուն մէջ պէտք է մշակենք որոշ օրէնքներու վրայ հիմնաւորած լեզու մը, որ յաջողի մէկ կողմէ քայլ պահել ժամանակի նորութիւններուն—առանց ստրուկը դառնալու ատոնց—եւ միւս կողմէ չոտնակոխէ ազգային արժէքները:

Այս է թելադրանքը ազգային գաղափարախօսութեան:

1 Հրաչուհի Փալանդուզեան, *Գործնական բառացանկ. օտարամուտ բառերի հայերէն համարժեքներ*, Երեւան, Էտիթ Պրինտ տպարան, 2013, էջ 5:

2 Նոյն տեղ, էջ 3: Նաեւ՝ Աւետիք Աւետիսեան, *Հայերէնում գործածուող օտար բառերի բառարան*, Երեւան, Անտարես հրատարակչատուն, 2014, էջ 3

3 Աւետիսեան, նոյն տեղ, էջ 2:

4 Փալանդուզեան, անդ, էջ 4:

5 Ստեփանոս Մալխասեանց, *Հայերէն բացառական բառարան*, հատոր առաջին, Ա-Ե, երկրորդ տպագրութիւն, Պէյրուք, հրատարակութիւն Սեւան մատենաշարին, թիւ 2, տպարան Սեւան, 1955, էջ [Գ]


6 Միքայէլ Վարանդեան, *Հոսանքներ, հրատարակութիւն ՀՅԴԻ*, ժընեւ, 1910, էջ XX-XXXVI:

7, 8, 11 Նոյն տեղ, էջ XXXV:

9 Վարդգէս Պետրոսեան, *Գրական թերթ*, 19 նոյեմբեր 1982:

10 Փալանդուզեան, անդ, էջ 3:

(Թիւ 3, 2017)



Հրատարակություն՝
Համազգայինի
Կեդրոնական վարչություն